

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ԼՐԱԲԵՐ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ВЕСТНИК
ОБЩЕСТВЕННЫХ
НАУК

HERALD
OF SOCIAL SCIENCES

3(672)

ՍԵՊՏԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ
СЕНТЯБРЬ-ДЕКАБРЬ
SEPTEMBER-DECEMBER

ՔԱՌԱՄՍՅԱ ՀԱՆԴԵՍ, ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1940 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻՑ
ЖУРНАЛ ВЫХОДИТ 3 РАЗА В ГОД, ИЗДАЕТСЯ С НОЯБРЯ 1940 ГОДА
JOURNAL IS PUBLISHED 3 TIMES IN A YEAR, SINCE NOVEMBER 1940

Գլխավոր խմբագիր՝ **ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ**
Խմբագրի տեղակալ՝ **ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ**
Պատասխանատու քարտուղար՝ **ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Խմբագրական խորհուրդ

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ, ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ (խմբագրական խորհրդի նախագահ),
ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ, ԺԱՍՄԻՆ ԴՈՒՄ-ԹՐԱԳՈՒՏ (Ավստրիա), ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ,
ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ, ՎԱԶԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ, ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ,
ՀՐԱԶ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (Նիդերլանդներ), ԱՇՈՏ ՄԵԼԿՈՆՅԱՆ, ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ,
ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ, ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՊԱՏՐԻԿ ՏՈՆԱՊԵՏՅԱՆ (Ֆրանսիա),
ՓԻԹԵՐ ՔԱՌԻԻ (ԱՄՆ)

Главный редактор – **ПАВЕЛ АВЕТИСЯН**
Заместитель редактора – **АРСЕН БОБОХЯН**
Ответственный секретарь – **ГАЯНЭ АРУТЮНЯН**

Редакционная коллегия

ПАВЕЛ АВЕТИСЯН (председатель редколлегии), АРСЕН БОБОХЯН, АРАРАТ АГАСЯН,
ЖАСМИН ДУМ-ТРАГУТ (Австрия), ГАГИК КАЗИНЯН, ВИКТОР КАТВАЛЯН, ПИТЕР КАУИ
(США), ГРАЧ МАРТИРОСЯН (Нидерланды), АШОТ МЕЛКОНЯН, ВАЧЕ ОВАКИМЯН,
ГЕВОРК ПОГОСЯН, РУБЕН САФРАСТЯН, ПАТРИК ДОНАБЕДЯН (Франция),
ЮРИЙ СУВАРЯН, АЛЬБЕРТ ХАРАТЯН

Editor-in-chief **PAVEL AVETISYAN**
Vice-editor **ARSEN BOBOKHYAN**
Responsible secretary **GAYANE HARUTYUNYAN**

Editorial Board

PAVEL AVETISYAN (chairman of the editorial board), АРАРАТ АГАСЯН,
АРСЕН БОБОКHYAN, ALBERT KHARATYAN, VIKTOR KATVALYAN, VACHE HOVAKIMYAN,
GAGIK GHAZINYAN, HRACH MARTIROSYAN (Netherlands), ASHOT MELKONYAN,
GEVORG POGHOSYAN, RUBEN SAFRASTYAN, YURI SUVARYAN, JASMINE DUM-TRAGUT
(Austria), PATRICK DONABEDIAN (France), PETER COWE (USA)

©Լրաբեր հասարակական գիտությունների
©Вестник общественных наук
©Herald of Social Sciences

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Սմբատ Դավթյան – Հայաստանի տարածքի տեղագրական քարտեզագրման պատմությունը և տեղագրական քարտեզների ֆոնդի ստեղծման անհրաժեշտությունը.....	12
Սերոբ Սուջյան, Նանա Ենիկոլոպովա, Ռոզա Գասպարյան – Տնտեսության և ռազմարվեստի փոխկապակցվածությունը Առաջին համաշխարհային պատերազմի օրինակով.....	23
Քնարիկ Ավագյան – Աջակցություն սիրիահայ հայրենադարձների ուսումնակրթական խնդիրներին (2012-2018 թթ.).....	35
Արմենուհի Ղամբարյան – Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցիչ Գ. Պաստրմաճյանի (Արմեն Գարո) գործունեությունն ԱՄՆ-ում 1919 թ. վերջին.....	48
Արմեն Կարապետյան – Հասարակական-քաղաքական համազգային հիմնախնդիրների արտացոլումը «Հորիզոն» պարբերականի էջերում.	61
Մարիամ Հովսեփյան – Հողային հարցի քննարկումը Կ. Պոլսի «Ազատամարտ» և «Ժամանակ» թերթերում (1909-1911 թթ.).....	74
Մարինա Մարգարյան – Պետական կառավարման և հանրային բյուրոկրատիայի քաղաքական դերի փոխակերպումը ժամանակակից հասարակության մեջ. իրավաքաղաքական հայեցակարգը.....	90

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Քնարիկ Սարգսյան – Աշխարհաքաղաքական խոշոր փոփոխություններ Պարսից ծոցի տարածաշրջանում. Չինաստանի վերելքը.....	105
--	-----

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Ալեքսանդր Մանասյան – Կոնֆլիկտի գոյաբանությունը՝ որպես դրա հանգուցալուծման մեկնակետ.....	121
--	-----

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Յուրի Սուվարյան, Միքայել Միքայելյան – Պետության առաքելությունը և ռազմավարական կառավարումը.....	139
---	-----

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Աելիտա Դոլուխանյան – Հայ գրականագիտության փիլիսոփա-մեկնաբանը (<< ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի ծննդյան 100-ամյա հոբելյանին).....	156
---	-----

Կարինե Առաքելյան – Երգիծանքի լեզվաոճական միջոցները Առանձարի «Վշտի ծիծաղ» ժողովածուում.....	168
---	-----

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անահիտ Բեքարյան – Կանադահայ բեմի ստեղծագործական ուժերը. Արփինե Շալճյան.....	178
Մարիաննա Տիգրանյան, Լինդա Սարգսյան – Արցախի ավանդական կատակերգերը.....	188
Միեր Նավոյան – Կոմիտասի կյանքի և ստեղծագործական ուղու «պոլ-սական» շրջանի մեկնարկը.....	207

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լևոն Պետրոսյան, Բորիս Գասպարյան – Քուչակ-2 հնավայրի և հարակից տարածքի բնակվածությունը բրոնզ-երկաթի դարաշրջանում (ըստ 2010 թ. պեղումների արդյունքների).....	234
Արմինե Տիգրանյան – Հաղորդից բռնի տեղահանված արցախահայերի ավանդական կենսընթացի խեղումները.....	255
Քրիստինե Պապիկյան – Արիեստները Հայաստանում՝ ըստ պատմագիր Առաքել Դավրիժեցու.....	273
Անի Սարատիկյան – Սկյութական մշակույթին բնորոշ գտածոներ Փիջուտ դամբարանադաշտից (Լոռի, Հայաստան).....	288
Ամինիա Կանեցյան – Հում աղյուսի օգտագործումը Հայաստանի ուրարտական ժամանակաշրջանի հուշարձաններում.....	299

ԲԱՆԱՎԵՃԵՐ

Արման Եղիազարյան – Երևանի 1724 թվականի ինքնապաշտպանության ժամանակագրության և իրադարձությունների հետևողական աղավաղման փորձերի շուրջ.....	311
--	-----

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Մարգարիտա Խաչատրյան – Արամ Հայկազի նորայայտ նամակները....	343
--	-----

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պետրոս Դեմիրճյան – <i>Անուշավան Զաքարյան, Դավիթ Անանուն. կյանքը և գործունեությունը</i>	354
Սմբատ Դավթյան – <i>Էրիկ Կլավիե և Լյուկ Ստեվան, Հայաստանի ստորգետնյա շտեմարանները, ստորգետնյա ճանապարհները</i>	365
Լիլիթ Արտեմյան – <i>Լիլիթ Երնջակյան, Ալան Հովհաննեսի աշխարհը. Արևելք-Արևմուտք խաչմերուկում</i>	369

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Տորք Դալայան, Հայկ Համբարձումյան – «Էպոս, ինքնություն և մշակույթ»․ միջազգային էպոսագիտական 6-րդ գիտաժողով՝ նվիրված «Սասնա ծռեր» էպոսի ուսումնասիրության 150-ամյակին (11-12 հոկտեմբերի, 2024 թ., Երևան)..... 374

Սամվել Ռամազյան – «Երկու հայրենիքի միջև․ Հունաստանի հայերը Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում․ պատկերներ և վավերագրեր»..... 379

Աստղիկ Մարտիրոսյան – Արժեքավոր ներդրում երաժշտագիտության ասպարեզում․ Կոմիտասի թանգարան-ինստիտուտի նոր տարեգիրքը..... 382

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ

Ալբերտ Խառատյան, Անուշավան Զաքարյան – Գիտության անխոնջ ջահակիրը (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Միքայելյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)..... 386

Արմեն Կարապետյան – Ստեղծագործական նորանոր որոնումների, հետաքրքրությունների ու բացահայտումների կիզակետում (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Խառատյանի ծննդյան 85-ամյակի առթիվ)..... 390

Տորք Դալայան, Լուսինե Ղոնջյան – Վաստակաշատ հայագետ Արմեն Սարգսյան (ծննդյան 75-ամյակի առթիվ)..... 394

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ И ПОЛИТОЛОГИЯ

Смбат Давтян – История топографического картографирования территории Армении и необходимость создания фонда топографических карт.....	12
Сероб Суджян, Нана Ениколопова, Роза Гаспарян – Взаимосвязь экономики и военного искусства на примере Первой мировой войны.	23
Кнаррик Авакян – Содействие армянам – репатриантам из Сирии в вопросе образования (2012-2018 гг.).....	35
Арменуи Гамбарян – Деятельность полномочного представителя Республики Армения Г. Пастрмаджяна (Армен Гаро) в США в конце 1919 года.....	48
Армен Карапетян – Отражение общественно-политических общенациональных проблем на страницах периодического издания «Горизонт».....	61
Мариам Овсепян – Обсуждение земельного вопроса в константинопольских газетах «Азатамарт» и «Жаманак» (1909-1911 гг.).....	74
Марина Маркарян – Трансформация политической роли государственного управления и публичной бюрократии в современном обществе: политико-правовой аспект.....	90

ВОСТОКОВЕДЕНИЕ

Кнаррик Саргсян – Крупные геополитические изменения в регионе Персидского залива: подъем Китая.....	105
--	-----

ФИЛОСОФИЯ И ПРАВО

Александр Манасян – Онтология конфликта как исходная точка его урегулирования.....	121
---	-----

ЭКОНОМИКА

Юрий Суварян, Микаел Микаелян – Миссия государства и стратегическое управление.....	139
--	-----

ФИЛОЛОГИЯ

Аэлита Долуханян – Философ-толкователь армянской литературы (к 100-летию академика НАН РА Сергея Сариняна).....	156
Карине Аракелян – Лингвостилистические средства сатиры в сборнике Арандзара «Смех скорби».....	168

КУЛЬТУРА И ИСКУССТВОВЕДЕНИЕ

Анаит Бекарян – Творческие силы канадской армянской сцены: Арпине Шалчян.....	178
Марианна Тигранян, Линда Саргсян – Традиционные шуточные песни Арцаха.....	188
Мгер Навоян – Начало «константинопольского» периода жизни и творчества Комитаса.....	207

АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ

Левон Петросян, Борис Гаспарян – Заселенность памятника Кучак-2 и прилегающих территорий в эпоху бронзы-железа (по результатам раскопок 2010 г.).....	234
Армине Тигранян – Искажение традиционного образа жизни насильственно депортированных армян из Гадрута.....	255
Кристине Папикян – Ремесла в Армении по данным историка Аракела Даврижеци.....	273
Ани Саратикян – Характерные для скифской культуры находки из могильника Пиджут (Лори, Армения).....	288
Аминиа Канемян – Использование сырцового кирпича в памятниках урартского периода Армении.....	299

ДИСКУССИИ

Арман Егиазарян – О последовательных попытках искажения хронологии и событий самообороны Еревана 1724 года.....	311
--	-----

ПУБЛИКАЦИИ

Маргарита Хачатрян – Нововыявленные письма Арама Айказа.....	343
---	-----

РЕЦЕНЗИИ

Петрос Демирчян – <i>Анушаван Закарян, Давид Ананун: жизнь и деятельность</i>	354
Смбат Давтян – <i>Эрик Клавье и Люк Стеван, Подземные зернохранилища Армении, подземные дороги</i>	365
Лилит Артемян – <i>Лилит Ернджакян, Музыкальный мир Алана Ованеса: на перекрестке Восток-Запад</i>	369

НАУЧНАЯ ХРОНИКА

- Торк Далалян, Айк Амбарцумян** – «Эпос, идентичность и культура». 6-я международная научная конференция, посвященная 150-летию изучения эпоса «Сасна црер» (11-12 октября 2024 г., Ереван)..... 374
- Самвел Рамазян** – «Между двумя родинami. Армяне Греции во время Второй мировой войны: фотографии и документы»..... 379
- Астхик Мартиросян** – Ценный вклад в сферу музыковедения: новый сборник Музея-института Комитаса..... 382

НАШИ ЮБИЛЯРЫ

- Альберт Харатян, Анушаван Закарян** – Неутомимый подвижник науки (к 100-летию со дня рождения академика НАН РА В. Микаеляна)..... 386
- Армен Карапетян** – В эпицентре новых творческих исканий, интересов и открытий (к 85-летию со дня рождения член-корреспондента НАН РА А. Харатяна)..... 390
- Торк Далалян, Лусине Греджян** – Заслуженный арменовед Армен Саргсян (к 75-летию со дня рождения)..... 394

CONTENT

HISTORY AND POLITICAL SCIENCE

Smbat Davtyan – History of Topographic Mapping of the Territory of Armenia and the Necessity to Create a Fund of Topographic Maps.....	12
Serob Sujyan, Nana Enikolopova, Roza Gasparyan – Interrelation of Economy and Military Art with the Example of the First World War.....	23
Knarik Avagyan – Support to the Syrian-Armenian Repatriates in Solving Educational Problems (2012-2018).....	35
Armenuhi Ghambaryan – The Diplomatic Activity of the Plenipotentiary Representative of the Republic of Armenia G. Pasdermadjian (Armen Garo) in the USA at the End of 1919.....	48
Armen Karapetyan – The Reflection of Public and Nationwide Problems on the Pages of "Horizon" Periodical.....	61
Mariam Hovsepyan – The Discussion of the Land Issue in Constantinople's "Azatamart" and "Zhamanak" Newspapers (1909-1911).....	74
Marina Margaryan – Transformation of the Political Role of Governance and Public Bureaucracy in Modern Society: Political and Legal Aspect.....	90

ORIENTAL STUDIES

Knarik Sargsyan – Major Geopolitical Changes in the Persian Gulf Region: the Rise of China.....	105
--	-----

PHILOSOPHY AND LAW

Alexander Manasyan – The Ontology of the Conflict as a Starting Point for Its Settlement	121
---	-----

ECONOMICS

Yuri Suvaryan, Mikael Mikaelyan – Mission of the State and Strategic Management.....	139
---	-----

PHILOLOGY

Aelita Dolukhanyan – Philosopher-Interpreter of Armenian Literature (on the 100 th Anniversary of Academician of the NAS RA Sergey Sarinyan)....	156
Karine Arakelyan – Lingual-Stylistic Means of Satire in Arandzar's Collection "Laughter of Sorrow".....	168

CULTURE AND ART STUDIES

Anahit Bekaryan – Creative Potential of the Armenian Stage in Canada: Arpine Shaljian.....	178
Marianna Tigranyan, Linda Sargsyan – Traditional Joke Songs of Artsakh.....	188
Mher Navoyan – Beginning of the Constantinople Period in the Life and Work of Komitas.....	207

ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Levon Petrosyan, Boris Gasparyan – The Phases of Habitation of the Ku- chak-2 Site and Its Surroundings During the Bronze-Iron Ages (Accord- ing to the results of 2010 excavations).....	234
Armine Tigranyan – The Disruption of the Traditional Way of Life of Artsakh Armenians Forcibly Displaced From Hadrut.....	255
Christine Papikyan – Crafts in Armenia According to the Historian Arakel Davrizhetsi.....	273
Ani Saratikyan – Typical Finds of Scythian Culture From the Pijut Cemetery (Lori, Armenia).....	288
Aminia Kanetsyan – Use of Raw Brick in the Urartian Period Monuments of Armenia.....	299

DISCUSSIONS

Arman Yeghiazaryan – On the Consistent Attempts to Distort the Chronolo- gy and Events of Yerevan's Self-Defense in 1724.....	311
---	-----

PUBLICATIONS

Margarita Khachatryan – Newly Discovered Letters of Aram Haykaz.....	343
---	-----

LITERARY REVIEWS

Petros Demirchyan – <i>Anushavan Zakaryan, David Ananun: Llife and Work</i>	354
Smbat Davtyan – <i>Eric Clavier and Luc Stevan, Underground Grain Storage Facilities of Armenia, underground Roads</i>	365
Lilit Artemyan – <i>Lilit Yernjakyan, The Musical World of Alan Hovhaness: On East-West Crossroads</i>	369

SCIENTIFIC CHRONICLE

- Tork Dalalyan, Hayk Hambardzumyan** – "Epic, Identity and Culture". 6th International Epic Studies Conference Dedicated to the 150th Anniversary of the Study of the Epic "Sasna Tsrer" (October 11-12, 2024, Yerevan)..... 374
- Samvel Ramazyan** – "Between Two Homelands: Armenians in Greece during the World War II: Images and Documents"..... 379
- Astghik Martirosyan** – A Valuable Contribution to the Field of Musicology: the New Yearbook of the Komitas Museum-Institute..... 382

OUR JUBILEES

- Albert Kharatyan, Anushavan Zakaryan** – The Tireless Torchbearer of Science (on the Occasion of the 100th Anniversary of Academician V. Mikaelyan)..... 386
- Armen Karapetyan** – At the Center of New Creative Inquires and Discoveries (on the Occasion of the 85th Anniversary of A. Kharatyan, Corresponding Member of the NAS RA..... 390
- Tork Dalalyan, Lusine Ghrejyan** – Merited Armenologist Armen Sargsyan (on the Occasion of the 75th Anniversary)..... 394

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՖՈՆԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Սմբատ Դավթյան

Տեխնիկական գիտությունների թեկնածու

Վ. Բոյունովի անվան պետական համալսարանի գրոսաշրջության և սերվիսի ամբիոն

ՀՀ, Երևան, Թումանյան 42

Էլ. հասցե՝ srdavtyan@mail.ru

ORCID: 0000-0003-3104-384X

Հոդվածը ներկայացվել է 15.03.2024, գրախոսվել է 16.09.2024, ընդունվել է տպագրության 03.12.2024

DOI: 10.53548/0320-8117-2024.3-12

Ամփոփում

Սկսած XIX դարի 50-ական թթ. մինչև XX դարի 90-ական թթ. իրականացված տեղագրական աշխատանքների շնորհիվ ՀՀ ներկա տարածքը ծածկված է տարբեր մասշտաբների տեղագրական քարտեզներով: Այդ տարիներին ստեղծված քարտեզները կարող են լույս սփռել պատմության և աշխարհագրության բազմաթիվ խնդրահարույց հարցերի պարզաբանման ժամանակ: Մինևն այն տարածքի վերաբերյալ տարբեր ժամանակներում հրատարակված քարտեզագրական տվյալները թույլ են տալիս իրականացնել մոնիթորինգային հետազոտություններ՝ պարզելու բնական և սոցիալական տարբեր երևույթների փոփոխությունները ժամանակի ընթացքում: Սակայն մինչև օրս ներկայացված չէ ՀՀ տեղագրական քարտեզների ստեղծման պատմությունը, բացակայում են ամբողջական տվյալներ քարտեզների մասշտաբների, դրանց ընդգրկման և թերթերի քանակների մասին: Առաջարկվում է ստեղծել ՀՀ տարածքը ծածկող տեղագրական քարտեզների ամբողջական ֆոնդ:

Բանալի բառեր՝ տեղագրական քարտեզներ, Հայաստանի Հանրապետություն, 1 դարից մինչև 10-վերստանոց, 1:25 000, 1:50 000, 1:100 000 և 1:200 000 մասշտաբների քարտեզներ, քարտեզագրական ֆոնդ, 1942 թ. կոորդինատային համակարգ, քարտեզների հրատարակություն:

Ներածություն

Տեղագրական քարտեզները արտացոլում են տվյալ տարածքի ռելիեֆը, բնակավայրերը, ջրագրական և տրանսպորտային ցանցը, բուսական ծածկը, սահմանները և տեղանքի այլ տարրեր: Դրանք բազմաթերթ ստեղծագործություններ են և կազմվում են որոշակի ստանդարտներով (մաթեմատիկական հիմք, միօրինականացված պայմանական նշաններ և այլն): Տեղագրական քարտեզները այլ քարտեզների նկատմամբ ունեն հսկայական առավելություններ՝ դրանք պարունակում են ամփոփ ու օբյեկտիվ տեղեկատվություն

տվյալ տարածքի մասին և հնարավորություն են տալիս իրականացնելու քարտեզաչափական աշխատանքներ:

Տեղագրական քարտեզները կազմվում են տարբեր մասշտաբներով, հիմնականում լայն տարածում ունեն 1:25 000, 1:50 000, 1:100 000, 1:200 000 մասշտաբների քարտեզները, որոնք կարևոր սկզբնաղբյուրներ են աշխարհագրական և պատմական ուսումնասիրությունների համար: Ավելի խոշոր՝ 1:10 000 մասշտաբի և ավելի փոքր մասշտաբների՝ 1:500 000 և 1:1000 000 տեղագրական քարտեզները համեմատաբար քիչ տարածում ունեն: Նախախորհրդային տարիներին կազմված վերստային (1, 2, 5, 10-վերստանոց) քարտեզները նույնպես կարևոր աղբյուրագիտական արժեք ունեն:

Միևնույն տարածքի վերաբերյալ տարբեր տարիներին հրատարակված տարբեր մասշտաբների տեղագրական քարտեզների բովանդակության վերլուծությունը թույլ է տալիս իրականացնել մոնիթորինգային ուսումնասիրություններ՝ պարզելու բնական (գետային ցանց, անտառների և այլ հողահանդակների սահմաններ և այլն) և սոցիալական (պետական և վարչական սահմաններ, բնակավայրերի աճ, ճանապարհային ցանց, աշխարհագրական անվանումներ և այլն) երևույթների փոփոխությունները ժամանակի ընթացքում: Սակայն մինչև օրս ներկայացված չէ Հայաստանի տարածքի տեղագրական քարտեզների ստեղծման պատմությունը, բացակայում են ամբողջական տվյալներ քարտեզների մասշտաբների, դրանց ընդգրկման և թերթերի քանակի մասին: Պատճառներից մեկը դրանց գաղտնիությունն է, որի հետևանքով տեղագրական քարտեզներն ունեցել են սահմանափակ տարածվածություն: Հաշվի առնելով վերոհիշյալը՝ իրականացրել ենք սույն ուսումնասիրությունը՝ ներկայացնելով տվյալներ 1860-1990 թթ. ստեղծված խոշորամասշտաբ տեղագրական քարտեզների վերաբերյալ:

Ընդհանուր տեղեկություններ ՀՀ տարածքի տեղագրական քարտեզների մասին

Առաջին տեղագրական քարտեզները ստեղծվել են XVIII դարում Ֆրանսիայում: Դրանք, ի տարբերություն նախորդ դարերում ստեղծված քարտեզների, ունեին ճշտության բարձր մակարդակ, հենվում էին գեոդեզիական հիմքի վրա, ստեղծվում էին որոշակի կոորդինատային ու բարձունքային համակարգում և ընդունված պայմանական նշաններով: Որևէ տարածք պատկերելու համար օգտագործվում էին բազմաթիվ թերթեր, որոնց համարակալման համար կիրառում էին տարբեր համակարգեր: Տեղագրական քարտեզի յուրաքանչյուր թերթի վրա պատկերվում էր սահմանափակ տարածք:

Հայաստանի տարածքում առաջին տեղագրական քարտեզները ստեղծվել են Ռուսական կայսրության տարիներին՝ 1860-ական թվականներին: Խորհրդային իշխանության տարիներին տեղագրական քարտեզների ստեղծման և թարմացման աշխատանքներն անընդհատ շարունակվել են, որոնց

արդյունքով կուտակվել են տարբեր մասշտաբների տեղագրական քարտեզներ: Մինչև օրս, սակայն, որևէ ամփոփ տեղեկատվություն չկա այդ քարտեզների մասին, ավելին՝ եղած հատուկենտ ուսումնասիրություններն էլ իրարամերժ են¹:

Ներկայումս տարբեր պետությունների արխիվներում և մասնավոր հավաքողների հավաքածուներում Հայաստանի տարածքը պատկերող XIX-XX դդ. տեղագրական քարտեզների քանակը անցնում է մի քանի հազարից: Դրանց հսկայական մասը պահպանվում է Ռուսաստանի Դաշնության Չինված ուժերի գլխավոր շտաբի, ռազմապատմական և այլ արխիվներում, ինչպես նաև հարևան պետությունների համապատասխան կազմակերպություններում (պաշտպանության նախարարություն, արխիվներ, գրադարաններ): Հայաստանի ազգային արխիվում պահպանվող տեղագրական քարտեզների քանակը չի անցնում 150 թերթից²: Դրանք վերաբերում են մինչև XX դարի 20-ական թթ. ստեղծված քարտեզներին: Վստահաբար կարող ենք ասել, որ այդ ժամանակաշրջանին վերաբերող ոչ բոլոր քարտեզներն են առկա ազգային արխիվում: Այդ ժամանակաշրջանին վերաբերող հատուկենտ քարտեզներ կան նաև Հայաստանի ազգային գրադարանում³, ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանում, Մատենադարանում, մի շարք թանգարաններում և այլուր: ՀՀ պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդում պահպանվող քարտեզներն էլ ստեղծվել են 1970-ական թթ.-ից հետո՝ մինչև ԽՍՀՄ փլուզումն ընկած ժամանակաշրջանում: Այսպիսով, 1920-1970-ական թթ. ստեղծված տեղագրական քարտեզների մասին միայն սահմանափակ տեղեկություններ ունենք: Բացի այդ, թե՛ ռուսական տիրապետության և թե՛ խորհրդային իշխանության տարիներին դրանք ունեցել են «Գաղտնի» կամ «Ծառայողական օգտագործման համար» նշագրումները, որի հետևանքով տեղագրական քարտեզները հասանելի են եղել միայն պաշտպանության, գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտի մասնագետների համար: Անգամ ներկայումս պարզ չէ մինչև ԽՍՀՄ փլուզումը ստեղծված տեղագրական քարտեզների օգտագործման կարգը: Օրենսդրական որևէ փաստաթղթում այդ նյութերի մասին որևէ բացատրություն չկա: Դրանցում խոսվում է միայն ներկայումս ստեղծվող նյութերի և տվյալների մասին:

ՀՀ տարածքի տեղագրական քարտեզների վերաբերյալ որևէ համապարփակ ուսումնասիրություն չի կատարվել, որի հետևանքով մինչև օրս պարզ չէ կազմված քարտեզների քանակը, ընդգրկման ծավալները, տարեթվերը: Այս առումով առաջնահերթ խնդիր ենք դրել տարբեր աղբյուրների

¹ Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն 1971, 18, Паффенгольц 1948, табл. III; Справочник по водным ресурсам 1935, приложение.

² Սարգսյան 1986, 171-175:

³ Հայ քարտեզագրական հրատարակությունների մատենագիտություն 2018, 40-44:

(համացանց⁴, գրադարաններ, ակադեմիական կազմակերպություններ, անհատ հավաքորդներ և այլն) ուսումնասիրության միջոցով պարզել ՀՀ տարածքը ծածկող խոշորամասշտաբ տեղագրական քարտեզների քանակը ըստ մասշտաբների, դրանց ստեղծման ժամանակը, համարակալման համակարգը և այլ մանրամասներ:

Հարկ է նշել, որ 1850-1940-ական թթ. վերաբերող քարտեզները գետեղված են Ռուսական աշխարհագրական ընկերության կայքում, որտեղ առանձին բաժիններով ներկայացված են 5 և 10-վերստանոց քարտեզների թերթերը⁵: Բացի այդ, բազմաթիվ կայքերում ներկայացված են 1940-ական թթ. մինչև մեր օրերը հրատարակված տեղագրական քարտեզների առանձին թերթեր: Առանձին կայքեր նաև վաճառում են տեղագրական քարտեզների թղթային և թվային պատճեններ:

Տեղագրական աշխատանքները հիմնականում կատարվել են պատերազմական գործողություններին նախապատրաստվելու ժամանակաշրջանում՝ ռուս-թուրքական, ռուս-պարսկական (1877-78 թթ), Առաջին (1910-1914 թթ.) և Երկրորդ համաշխարհային (1939-1945 թթ.) պատերազմներին նախորդող տարիներին⁶: Այդ ժամանակահատվածներում քարտեզների կազմումը և հրատարակումը կրել են անկանոն բնույթ: Ինդիլը կանոնակարգվել է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ տեղագրական քարտեզի յուրաքանչյուր թերթ, առանձին բացառություններով հանդերձ, թարմացվում էր որոշակի ժամանակահատվածը մեկ անգամ, սովորաբար՝ 7-10 տարին մեկ: Չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ տեղագրական քարտեզները հիմնականում օգտագործում էին ռազմական գերատեսչությունները, և ամենից առաջ դրանք սպասարկում էին այդ կառույցներին, որի հետևանքով սահմանամերձ գոտիները ավելի հաճախ էին թարմացվում՝ ի տարբերություն երկրի խորքում գտնվող տարածքների: Խորհրդային իշխանության տարիներին գոյություն ուներ հրահանգ, համաձայն որի՝ նոր ստացված քարտեզներն ստանալուն պես հին քարտեզները ոչնչացվում էին: Դրա հետևանքով այսօր բազմաթիվ քարտեզներ՝ հրատարակված հատկապես 1940-1970-ական թթ., իսպառ բացակայում են մեր հանրապետությունում, և բազմաթիվ հարցեր, այդ թվում՝ կապված Հայաստանի և սահմանակից պետությունների սահմանների հետ, մնում են չպարզաբանված:

ՀՀ տարածքի տեղագրական քարտեզագրության պատմությունը

ՀՀ տարածքում տեղագրական առաջին տեղագրական քարտեզները ստեղծվել են 1860-ական թթ.⁷: Անցած ժամանակաշրջանում գեոդեզիայի և

⁴ <https://maps4u.lt/>, <https://retromap.ru>, <https://topmap.narod.ru/>, <https://satmaps.info/>

⁵ <https://geoportal.rgo.ru>

⁶ Кудрявцев 1974, 47-56.

⁷ Ազիզյան, Դավթյան 1996, 56-57:

քարտեզագրության ոլորտներում տեղի ունեցած գիտատեխնիկական առաջընթացը նպաստել է տեղագրական քարտեզների որակի և ճշտության անընդհատ բարելավմանը: Եթե մինչև 1920-ական թթ. գերիշխում էին տեղագրական քարտեզագրության (հանութագրման) վերերկրյա (ցամաքային) ձևերը (մենզուլային, աչքաչափական), ապա 1920-ական թթ.-ից հետո այս ոլորտում սկսեցին կիրառվել օդային, իսկ 1970-ական թթ.-ից հետո՝ նաև տիեզերական տեխնոլոգիաներ: 1940-ական թթ.-ից հետո փոխվեց տեղագրական քարտեզների կառուցման մաթեմատիկական հիմքը՝ առաջարկվեց նոր էլիպտիկ և կոորդինատային (1942 թ.) ու բարձունքային (Բալթիկ ծովի) նոր համակարգ, ընդունվեցին քարտեզների թերթերի բաժանման նոր սխեմա և համարակալման կարգ: Փոփոխություններ կատարվեցին նաև ելակետային նյութերի մշակման ոլորտում, լայնորեն օգտագործվեցին նաև դաշտային նյութերի մշակման ֆոտոգրամետրիկ եղանակները: Միաժամանակ, բնագավառի կառավարման ոլորտում՝ տեղի ունեցած զլոբալ փոփոխության հետևանքով (Ռուսական կայսրության հիմքի վրա ստեղծվեց Խորհրդային Միությունը) ձևավորվեցին նոր մարմիններ, որի հետևանքով, պաշտպանական գերատեսչություններից բացի, հանութագրումով և քարտեզների հրատարակումով սկսեցին զբաղվել նաև քաղաքացիական կազմակերպությունները:

Հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքները՝ ՀՀ տարածքի տեղագրական քարտեզագրության պատմության 1860-1990-ական թթ. ժամանակաշրջանում առանձնացնում ենք հետևյալ փուլերը՝ 1860-ական թթ. մինչև 1920-ական թթ., 1920-ական թթ. մինչև 1940-ական թթ. և 1940-ական թթ. մինչև 1990-ական թթ.:

ՀՀ տարածքի 1860-1920-ական թթ. տեղագրական քարտեզները

Հայաստանի տարածքում այսօրվա չափանիշներին համապատասխանող առաջին տեղագրական աշխատանքներն իրականացվել են 1854 թ. սկսած, երբ գեներալ Ի. Խոճկոյի գլխավորությամբ 1847-1853 թթ. ստեղծվեց գեոդեզիական (տրիանգուլյացիոն եղանակով ստեղծված) ցանց: Այդ ցանցը հայտնի է «Անդրկովկասի տրիանգուլյացիա» անվանումով: Գեոդեզիական ցանցի կետերից թեղոլիտով ճշգրիտ հանութագրման էին ենթարկվում ճանապարհները և գետերը, իսկ դրանց միջև եղած տարածքների հանութագրման ժամանակ կիրառում էին աչքաչափական եղանակը: 1860-ական թթ. սկսած՝ կիպրեգել-հեռաչափի կիրառման շնորհիվ զգալիորեն աճեցին հանութագրման տեմպերը, և բարելավվեց քարտեզների որակը, որոնք դարձան ավելի ճշգրիտ, ակնառու և դյուրընթեռնելի: Առաջին անգամ քարտեզների վրա ռելիեֆի գծագրման ժամանակ օգտագործվեցին հորիզոնականները (մինչ այդ ռելիեֆի արտահայտման համար կիրառում էին շտրիխները): Կազմված քարտեզներն ունեին տարբեր մասշտաբներ՝ 1, 2, 3, 5, 10, 20 վերստ և այլն⁸:

⁸ Դավթյան 2017, 78:

1. Մեկվերստանոց (1:42000) քարտեզները ծածկում են ՀՀ ամբողջ տարածքը: Հանութագրման աշխատանքներն իրականացվել են 1873-1912 թթ., իսկ թարմացման աշխատանքները եղել են անընդհատ: Նշված ժամանակահատվածում յուրաքանչյուր թերթ հրատարակվել է նվազագույնը 2 անգամ: Քարտեզների թերթերի համարները նշվել են հռոմեական և արաբական թվերով, օրինակ՝ XXXV-30: Հռոմեական թվերով նշվել են սյունակները (աճման ուղղությունը՝ հյուսիսից հարավ), իսկ արաբական թվերով՝ շարքերը (աճման ուղղությունը՝ արևմուտքից արևելք): Յուրաքանչյուր թերթ արևմուտք-արևելք ուղղությամբ ունի 15', իսկ հյուսիսից հարավ՝ 12' արժեք: Ռելիեֆը տրված է հորիզոնականներով՝ 10 սաժեն հատույթով, կիսահորիզոնականները հիմնականում տրված են լեռների կատարային մասերը արտահայտելու (ընդգծելու) համար: Երկայնությունները տրված են Ֆերրոյի միջօրեականի նկատմամբ: Ճանապարհները, բնակավայրերը, ռելիեֆի առանձին տարրերը (ձորակներ, ժայռեր, քարակուտակումներ և այլն), ջրագրական ցանցը տրված են առանձին պայմանական նշաններով: Բնակավայրերի անվանումների ներքևի մասում տրվում է դրանցում ապրողների ազգային կազմը և տնտեսությունների թիվը: ՀՀ տարածքը պատկերված է մոտ 67 թերթերի վրա:

2. Երկուվերստանոց (1:84 000) քարտեզները կազմվել են մեկվերստանոց քարտեզների հիման վրա, որոնք պարբերաբար թարմացվել են: Քարտեզները հրատարակվել են 1893-1916 թթ., մեծ մասը՝ 3-4 անգամ: Քարտեզների թերթերն ընդգրկել են արևմուտքից արևելք՝ 30', իսկ հյուսիսից հարավ 24' միջակայք: Թերթերը համարակալվել են հռոմեական և արաբական թվերով, օրինակ XX-24: Հռոմեական թվերով նշվել են սյունակները (աճման ուղղությունը՝ հյուսիսից հարավ), իսկ արաբական թվերով՝ շարքերը (աճման ուղղությունը՝ արևմուտքից արևելք): Ռելիեֆը պատկերվել է հորիզոնականներով՝ 10 սաժեն հատույթով: Երկայնությունները տրված են Ֆերրոյի միջօրեականից: Քարտեզները երկգույն են՝ կապույտով տրվել է ջրագրական ցանցը, իսկ սևով մնացած տարրերն են: ՀՀ տարածքը արտացոլվել է այս մասշտաբի 19 թերթերի վրա:

3. ՀՀ տարածքն ընդգրկող հինգվերստանոց քարտեզները (1:210 000) «Կովկասի երկրամասի 5-վերստանոց ռազմատեղագրական քարտեզի» մասն են կազմում⁹: Քարտեզներն ունեցել են մի քանի հրատարակություն: Առաջին հրատարակությունն իրականացվել է 1869 թ. և կազմված է եղել 55 թերթից: Այնուհետև 1871 և 1892 թթ. այն վերահրատարակվել է: 1902-1914 թթ. ընթացքում քարտեզների թերթերը մշտապես թարմացվել են կես, 1 և 2-վերստանոց հանույթների և հետախուզումների նյութերի օգտագործումով, ինչպես նաև ավելացվել է թերթերի քանակը՝ հասնելով 83-ի: Այդ քարտեզները պարբերաբար հրատարակվել են մինչև Երկրորդ համաշխարհային

⁹ Глушков 2007, 392.

պատերազմը: Չնայած քարտեզն ունի բարձր ճշտություն, այնուհանդերձ, դժվարամատչելի տեղանքում (բարձրլեռնային տեղամասեր) առկա են բազմաթիվ բացթողումներ և սխալներ: Քարտեզները համարակալվել են ռուսական այբուբենի մեծատառերով և արաբական թվերով: Ռուսական այբուբենի տառերով նշվել են շարքերը (աճման ուղղությունը՝ արևմուտքից արևելք), իսկ արաբական թվերով՝ սյունակները (աճման ուղղությունը՝ հյուսիսից հարավ): Յուրաքանչյուր տառից և թվից հետո դրվում է կետ: ՀՀ տարածքը պատկերված է 8 թերթի վրա՝ Դ. 7., Դ. 8., Դ. 9., Ե. 8., Ե. 9., Ջ. 8, Ջ. 9., Ջ. 10.: Ռելիեֆը պատկերված է շտրիխներով (նրբագծերով): Տպագրված քարտեզները երկգույն են. ջրագրական ցանցը՝ տրված է կապույտով, մնացած տարրերը՝ սևով: Հանդիպում են նաև եռագույն տպագրված թերթեր, որտեղ կանաչով պատկերվում են անտառները:

4. Տասվերստանոց (1:420 000) քարտեզները հայտնի են 2 տարբերակով՝ եվրոպական Ռուսաստանի 10-վերստանոց հատուկ քարտեզներով և Կովկասի երկրամասի քարտեզներով:

ա) եվրոպական Ռուսաստանի 10-վերստանոց հատուկ քարտեզի հանութագրման աշխատանքները կատարվել են 1877 թ., իսկ թարմացման աշխատանքները՝ 1889 թ.: Բարձրությունները տրված են ֆուտերով՝ Սև և Բայթիկ ծովերի նկատմամբ, ռելիեֆը՝ շտրիխներով: Քարտեզները գունավոր են՝ կապույտով տրված են գետերը, կանաչով՝ անտառները, դարչնագույնով՝ ռելիեֆը, մնացած տարրերը (բնակավայրեր, ճանապարհներ, սահմաններ և այլն)՝ սևով: Երկայնությունները տրված են Պուլկովոյի միջօրեականի նկատմամբ: ՀՀ տարածքը տեղաբաշխված է 3 թերթի վրա՝ 98, 99 և 118: Մինչև խորհրդային կարգերի հաստատումը դրանք ունեցել են 1-2 հրատարակություն:

բ) Կովկասի երկրամասի 10-վերստանոց քարտեզները հրատարակվել են 1847 և 1869 թթ.: Երկու դեպքում էլ քարտեզները հրապարակվել են «Կովկասյան երկրամասի» անվանումով, իսկ թերթերի բաժանման համակարգը և անվանակարգը ունեն միևնույն համարակալումը. ՀՀ տարածքը պատկերված է 4 թերթի վրա՝ Կ. 4, Կ. 5, Դ. 4., Դ. 5:

- 1847 թ. քարտեզները երկգույն են՝ դարչնագույնով տրված է ռելիեֆը, իսկ սևով՝ մնացածը (բնակավայրեր, սահմաններ, ճանապարհներ, պաշտամունքային կառույցներ և այլն): Ռելիեֆի ձևերը ներկայացված են սովերարկումով:

- 1869 թ. հրատարակված քարտեզների (ռելիեֆը՝ շտրիխներով և գունային երանգներով, բարձրության նիշեր չկան, կազմվել է Գաուսի պրոյեկցիայի հիման վրա) համար որպես հիմք են ծառայել 1866 թ. կատարված գործիքային հանույթները: Քարտեզները եռագույն են. կարմիրով տրված են վարչական սահմանները, շագանակագույնով՝ ռելիեֆը, իսկ սևով՝ մնացած օբյեկտները:

ՀՀ տարածքի 1920-1940-ական թթ. տեղագրական քարտեզները

Այս ժամանակահատվածում ՀՀ ներկա տարածքի սահմաններում փոքրածավալ հանութագրման աշխատանքներ են կատարվել (դրանք հիմնականում ընդգրկել են երկրի արևելյան մասերը), իրականացվել է նախկին տարիների քարտեզների հրատարակում: Միաժամանակ, վերստային համակարգը 1923 թ.-ից փոխարինվել է մետրական համակարգով: Տեղագրական քարտեզների կազմման և հրատարակման համար սահմանվել են հետևյալ մասշտաբները՝ 1:25 000, 1:50 000, 1:100 000, 1:200 000, 1:500 000 և 1:1 000 000: Սակայն ընդհուպ 1940-ական թթ. դեռևս վերահրատարակվում էին վերստային տեղագրական քարտեզներ:

Ա. Վերստային քարտեզներ

1. Մեր ունեցած տեղեկությունների համաձայն՝ մեկվերստանի (1:42 000) քարտեզների վերահրատարակություն տեղի չի ունեցել:

2. Երկուվերստանոց (1:84 000) քարտեզները նույնությամբ վերահրատարակվել են 1926 թ.: Քարտեզների տպագրությունն իրականացվել է Ռուստովի քարտեզագրական ֆաբրիկայում:

3. Հինգվերստանոց (1:210 000) քարտեզներն ունեցել են մի քանի հրատարակություն: Վերահրատարակություններն իրականացվել են Ռուստովի քարտեզագրական ֆաբրիկայում 1923-1941 թթ.: Թերթերը տպագրվել են տարբեր տարիների, հայտնի են մինչև 7 անգամ վերահրատարակված քարտեզներ: Քարտեզները եռագույն-քառագույն են՝ ռելիեֆը՝ դարչնագույն, սահմանները՝ կարմիր, անտառները՝ կանաչ, մնացած տարրերը՝ սև:

4. 10-վերստանոց (1:420000) քարտեզները նույնպես վերահրատարակվել են մի քանի անգամ՝ 1921-1936 թթ.: Վերահրատարակվել են միայն եվրոպական Ռուսաստանի 10-վերստանոց հատուկ քարտեզի կազմում ընդգրկված թերթերը, որոնցից մի քանիսը տպագրվել են մինչև 4 անգամ:

Բ. Մետրական քարտեզներ

Մետրական քարտեզներից նշված ժամանակահատվածում հրատարակվել են միայն 1:200 000 մասշտաբի քարտեզներ: 1936-1938 թթ. հրատարակված 1:200 000 մասշտաբի քարտեզները կազմվել են 1872-1913 թթ. 1:42 000 մասշտաբի և 1912-1916 թթ. 1:84 000 մասշտաբի հանութագրման նյութերը 1936-1938 թթ. վերգետնյա եղանակով թարմացնելու մեթոդով: Քարտեզները կազմվել են Մյուֆիինգի բազմակողմանի պրոյեկցիայով: ՀՀ տարածքը պատկերված է 11 թերթի վրա:

ՀՀ տարածքի 1940-1990-ական թթ. տեղագրական քարտեզները

Այս փուլում հրատարակված քարտեզները կազմվել են 1942 թ. կորդինատային համակարգում և Բայթիկ ծովի բարձունքային համակարգում: Քարտեզները կազմելու համար կիրառվել են օդային հանութագրման մեթոդներ, ինչպես նաև օգտագործվել են վերգետնյա եղանակներով ստացված

տվյալների թարմացում: Խոշոր մասշտաբի քարտեզներն օգտագործվել են ավելի փոքր մասշտաբի քարտեզներ կազմելու ժամանակ:

1. 1:25 000 մասշտաբի քարտեզների 1-ին (1941-1955 թթ.) և 2-րդ (1956-1958 թթ.) հրատարակության թերթերն ընդգրկում են ՀՀ ամբողջ տարածքը, իսկ 1978-1981 թթ. հրատարակվածները ծածկում են հանրապետության առանձին տարածքներ (խոշոր քաղաքներ, սահմանամերձ տարածքներ):

2. 1:50 000 մասշտաբի քարտեզներն ունեցել են 4 հրատարակություն՝ 1964-1967 թթ. (ծածկում են ՀՀ ամբողջ տարածքը), 1973-1979 թթ. (ծածկում են ՀՀ ամբողջ տարածքը), 1981-1984 թթ. (ծածկում են միայն խոշոր քաղաքները և դրանց կից տարածքները), 1989-1991 թթ. (ծածկում են հայ-ադրբեջանական սահմանի առանձին մասեր՝ Տավուշ, Սյունիք, Վայոց ձոր):

3. 1:100 000 մասշտաբի քարտեզները հրատարակվել են հետևյալ տարիներին՝ 1942-1943 թթ. (1-ին հրատարակություն, ծածկում է ՀՀ ամբողջ տարածքը), 1965-1967 թթ. (քարտեզները ծածկում են ամբողջ երկրի տարածքը), 1974-1976 թթ. (ծածկում են ողջ երկրի տարածքը), 1981-1985 թթ. (ծածկում են միայն Թուրքիայի հետ սահմանային գոտու տարածքը), 1990 թ. (Ադրբեջանի հետ սահմանի առանձին հատվածներ): Բացի այդ, Հայաստանի հարակից տարածքների քարտեզների ուսումնասիրությունը վկայում է, որ 1942-1965 թթ. լույս են տեսել 2-4 հրատարակություններով համարակալված քարտեզներ:

4. 1:200 000 մասշտաբի քարտեզների հրատարակության տարիներն են՝ 1967 թ. (ծածկում են հանրապետության ողջ տարածքը), 1976-1978 թթ. (ծածկում են մեր երկրի ամբողջ տարածքը), 1984-1985 թթ. (ընդգրկում է միայն հայ-թուրքական սահմանը): Գրականության տվյալների համաձայն՝ Հայաստանի՝ Թուրքիայի հետ սահմանամերձ տարածքները 1942 թ. ապահովվել են 1:200 000 մասշտաբի քարտեզներով:

Եզրակացություններ

Տարբեր աղբյուրներում տեղագրական քարտեզների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ՀՀ ներկա տարածքը ծածկված է խոշորամասշտաբ տեղագրական քարտեզներով, որոնք օբյեկտիվ հիմք են տարաբնույթ հետազոտական աշխատանքների կատարման համար: Դրանք ունեն աղբյուրագիտական մեծ արժեք: Միաժամանակ, հարկ է նշել, որ դրանց մեծ մասը իսպառ բացակայում է ՀՀ-ում, որի հետևանքով ներկայումս համապարփակ ուսումնասիրություններ հնարավոր չէ իրականացնել տարբեր բնագավառների (պատմություն, տոպոնոմիկա, աշխարհագրություն, լանդշաֆտագիտություն, բնակավայրերի աշխարհագրություն և այլն) վերաբերյալ: Բացի այդ, այդ քարտեզների տարածումը սահմանափակված է դրանց գաղտնիության հետևանքով: Նշված ժամանակաշրջանի տեղագրական քարտեզների ամբողջական ֆոնդ ստեղծելու համար առաջարկվում է՝

1) իրականացնել տեղագրական քարտեզների գույքագրում ՀՀ տարբեր կազմակերպություններում՝ պակասող թերթերը պարզելու համար.

2) ՌԴ-ի և Վրաստանի պետական գերատեսչություններից կամ մասնավոր ճանապարհով ձեռք բերել պակասող քարտեզների թվային բարձրորակ պատճենները, հնարավորության դեպքում՝ նաև տպագրական (թղթային) օրինակները.

3) մինչև ԽՍՀՄ փլուզումը հրատարակված քարտեզները գաղտնազերծել.

4) ստեղծել թվային տեղագրական քարտեզների ֆոնդեր որևէ կազմակերպության (ԳԱԱ գրադարան, ազգային գրադարան, ազգային արխիվ և այլն) կայքում:

Օգտագործված գրականություն

Ազիզյան Ա.Ն., Դավթյան Ս.Ռ. 1996, Ռազմական տեղագրաերկրաբաշխական և քարտեզագրական հետազոտությունները Հայաստանի և մերձակա տարածքներում, Հայկական բանակ, N 2, էջ 55-66:

Դավթյան Ս.Ռ. 2017, Տեղագրական աշխատանքների իրականացումը Հայաստանում ռուսական ռազմական գերատեսչությունների կողմից 19-րդ դարի 2-րդ կեսից մինչև 20-րդ դարի 20-ական թթ., Հայաստանի Հանրապետության և Մերձավոր արտասահմանի երկրների տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները, Երևան, «Մեկնարկ», էջ 71-80:

Հայ քարտեզագրական հրատարակությունների մատենագիտություն 2018, Երևան, Հայաստանի ազգային գրադարան, 163 էջ:

Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն 1971, Երևան, ԳԱԱ հրատ., 471 էջ:

Սարգսյան Կ.Ս. 1986, Քարտեզագրական վավերագրերը Հայաստանի պատմության պետական կենտրոնական արխիվում, Բանբեր Հայաստանի արխիվների, N 2, էջ 171-175:

Глушков В.В. 2007, История военной картографии в России (XVIII – начало XX века), Москва, «ИДЭЛ», 528 с.

Кудрявцев М.К. 1974, О картографировании территории СССР, Москва, «Недра», 184 с.

Паффенгольц К.Н. 1948, Геология Армении, М.-Л., гос. изд. геологической литературы, 976 с.

Справочник по водным ресурсам 1935, т. XI, Закавказье, Ленинград, РИО ЦУЕГМС, 938 с.
<https://geoportals.rgo.ru>, Геопортал Российского Географического общества (ներբեռնման օրը՝ 04.03.2024).

<https://maps4u.lt/>, Old maps (ներբեռնման օրը՝ 04.03.2024).

<https://retromap.ru>, Архив карт (ներբեռնման օրը՝ 04.03.2024).

<https://topmap.narod.ru/>, Топографические карты и описания (ներբեռնման օրը՝ 04.03.2024).

<https://satmaps.info/>, Спутниковые карты (ներբեռնման օրը՝ 04.03.2024).

ИСТОРИЯ ТОПОГРАФИЧЕСКОГО КАРТОГРАФИРОВАНИЯ ТЕРРИТОРИИ АРМЕНИИ И НЕОБХОДИМОСТЬ СОЗДАНИЯ ФОНДА ТОПОГРАФИЧЕСКИХ КАРТ

Смбат Давтян

Резюме

Начиная с 50-х годов XIX века и до 90-х годов XX века в результате проведения топографических работ нынешняя территория РА покрыта топографическими картами разных масштабов. Карты, созданные в те годы, могут пролить свет на прояснение многих проблемных вопросов истории и географии. Картографические данные, опубликованные в разное время об одной и той же территории, позволяют проводить мониторинговые исследования для выявления изменений различных природных и социальных явлений. Однако история создания топографических карт территории РА до настоящего времени не изучена, нет полных данных о масштабах этих карт, их покрытии и количестве листов. Предлагается создать полный фонд топографических карт, охватывающий территорию РА.

Ключевые слова – топографические карты, Республика Армения, карты 1, 2, 5 и 10 верстов в дюйме, карты масштабов 1:25 000, 1:50 000, 1:100 000 и 1:200 000, картографический фонд, система координат 1942 г., издание карт.

HISTORY OF TOPOGRAPHIC MAPPING OF THE TERRITORY OF ARMENIA AND THE NECESSITY TO CREATE A FUND OF TOPOGRAPHIC MAPS

Smbat Davtyan

Abstract

Starting from the 50s of the 19th century to the 90s of the 20th century, as a result of topographic work, the current territory of the Republic of Armenia is covered with topographic maps of different scales. Maps created in those years can shed light on many problematic issues of history and geography. Cartographic data published at different times about the same territory makes it possible to conduct monitoring studies to identify changes in various natural and social phenomena. However, the history of the creation of topographic maps of the territory of the Republic of Armenia has not yet been studied; there is no complete data on the scale of these maps, their coverage and the number of sheets. It is proposed to create a complete fund of topographic maps covering the territory of the Republic of Armenia.

Key words – topographic maps, the Republic of Armenia, maps 1, 2, 5 and 10 versts in 1 inch, 1:25 000, 1:50 000, 1:100 000 and 1:200 000 scale maps, cartographic fund, coordinate system 1942, map publication.

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԶՄԱՐՎԵՍԻ
ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Սերոբ Սուջյան

Աշխարհագրական գիտությունների թեկնածու, պահեստագործի գնդապետ
Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության
Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի (ՊԱՀՀ) ռազմարվեստի պատմության
հետազոտությունների կենտրոնի ղեկավար
ՀՀ, Երևան, Կարապետ Ուլենցու 56/6
Էլ. հասցե՝ serob.sujyan@mail.ru
ORCID: 0009-0007-7583-2134

Նանա Ենիկոլոպովա

Պահեստագործի մայոր
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ ռազմարվեստի պատմության
հետազոտությունների կենտրոնի գիտնական-վերլուծաբան
ՀՀ, Երևան, Կարապետ Ուլենցու 56/6
Էլ. հասցե՝ nanaenikolopova@gmail.com
ORCID: 0009-0001-7957-4116

Ռոզա Գասպարյան

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ ռազմարվեստի պատմության հետազոտությունների
կենտրոնի գիտնական-վերլուծաբան
ՀՀ, Երևան, Կարապետ Ուլենցու 56/6
Էլ. հասցե՝ rozadavtyan@gmail.com
ORCID: 0009-0000-6185-6695

Հոդվածը ներկայացվել է 14.10.2023, գրախոսվել է 17.10.2023, ընդունվել է տպագրության 03.12.2024
DOI: 10.53548/0320-8117-2024.3-23

Ամփոփում

Ելնելով XXI դարում գիտության ու տեխնիկայի թռիչքային զարգացմամբ պայմանավորված նոր զինատեսակների, ռազմական տեխնիկայի նորագույն տեսակների առաջացումից, ինչպես նաև եղած զինատեսակների անընդհատ կատարելագործումից՝ կարելի է ասել, որ պատերազմի ընթացքն ու ելքն այսօր է՛լ ավելի մեծ կախվածություն ունեն պետության տնտեսական ռեսուրսներից, դրա ռազմատնտեսական ներուժից: Այս ամենի վառ օրինակն է 2020 թ. Արցախյան պատերազմը, որտեղ նոր սերնդի ռազմական տեխնիկական միջոցների կիրառությունը էապես ազդեց պատերազմի և՛ ընթացքի, և՛ ելքի վրա:

Բանալի բառեր՝ Առաջին համաշխարհային պատերազմ, տնտեսական ներուժ, ռազմարվեստ, ենթակառուցվածքների զարգացում, շարակարգված պաշտպանություն, օպերատիվ արվեստ, մարտավարություն:

Ներածություն

XXI դարում, երբ աշխարհը գնում է գլոբալիզացիայի ճանապարհով, երբ փոխվում է մոլորակի աշխարհաքաղաքական, տնտեսական և ռազմավարական պատկերը, պետության անվտանգության ապահովման հարցերն ավելի սուր բնույթ են ստանում: Անվտանգային խնդիրների լուծումն անմիջականորեն կապված է երկրի տնտեսական և ռազմատնտեսական ներուժի հետ, քանի որ տնտեսությունը բազմակողմանի ազդեցություն է ունենում զինված ուժերի զարգացման, զինված պայքարի ձևերի ու մեթոդների, պատերազմի բնույթի, «տեղայնացման» հնարավորությունների, տևողության, ընթացքի և արդյունքի վրա¹:

Քանի որ գենքի և ռազմական տեխնիկայի նորագույն տեսակների արտադրությունը բավական բարդ գործընթաց է, ուստի դրանց ինքնարժեքը, պահպանման և շահագործման արժեքները հընթացս բարձրանում են, և սահմանափակվում է դրանցով զանգվածային բանակների սպառազինումը: Այս առումով ռազմական կարիքների համար տնտեսական ռեսուրսների որոնումն ու մոբիլիզացումը մեր ժամանակներում դարձել են բոլոր պետությունների համար ամենաբարդ խնդիրներից մեկը: Հետևաբար, ժամանակակից իրողություններից ելնելով, պատերազմին պետության պատրաստ լինելը պայմանավորված է ոչ միայն զինված ուժերի վիճակով, այլև որոշվում են պետության տնտեսության զարգացման մակարդակով և ռազմատնտեսական ներուժով:

Տնտեսությունը բազմակողմանիորեն է ազդում պատերազմի վրա: Այն՝

- պատերազմի նյութատեխնիկական հիմքն է: Արտադրում է գենք և ռազմական տեխնիկա, զինված պայքարի տեխնիկական միջոցներ, կազմակերպում է տրանսպորտի աշխատանքը, մատակարարման համակարգերը, բարելավում է զինված ուժերի գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքները,

- ապահովում է զինված պայքարի միջոցների կատարելագործումը՝ պայմանավորելով ռազմարվեստի զարգացումը,

- գործոն է, որը թաքնված կամ ակնհայտ հակասությունների աղբյուրներ է պարունակում, որոնք հանգեցնում են սոցիալական խմբերի և պետությունների միջև բախումների,

- նաև պատերազմի բաղկացուցիչ տարրերից մեկն է դարձել, քանի որ տնտեսական պայքարի ձևերն ու մեթոդները աստիճանաբար միահյուսվում են զինված պայքարի հետ²:

Իր հերթին պատերազմը տնտեսությանը ներկայացնում է հետևյալ պահանջները.

¹ Гордиенко 2008, 4.

² Викулов, Леонович 2021, 7.

– ապահովել ռազմական ոլորտների և ռազմական գիտահետազոտական աշխատանքների, արդյունաբերության զարգացումն ու մշտական կատարելագործումը,

– պատերազմի դեպքում նախապատրաստել տնտեսության զորահավաքային վերակազմավորումը,

– խթանել կապի և ենթակառուցվածքների զարգացումը,

– բարձրացնել տնտեսության կայունությունը, պատերազմական պայմաններում նրա գործելու կարողությունը,

– ապահովել կառավարման կայունությունը և տեղեկատվության հուսալի ստացումը³:

Անցյալի պատերազմների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, տնտեսության զարգացման ցածր մակարդակով պայմանավորված, մինչև XVIII դարը պատերազմավարության միջոցներն ու եղանակները դարեր շարունակ գրեթե էական փոփոխություն չէին կրել:

XVIII դարում, երբ արդյունաբերության մեքենայացման հետևանքով աշխատանքից զրկվեցին մեծ թվով մարդիկ, հնարավոր դարձավ վերջիններիս ընդգրկել ռազմական ծառայության մեջ: Սա հիմք հանդիսացավ զանգվածային բանակների ձևավորման համար: Նապոլեոն Բոնապարտն էլ, օգտագործելով զանգվածային բանակներն ու ժամանակի հարձակման միջոցները (ծիեր, կենդանի ուժ և հրազեն) և օգտվելով դրանց շարժունակությունից⁴, առաջ քաշեց գլխավոր ճակատամարտի գաղափարը՝ որդեգրելով ջախջախման ռազմավարություն⁵: Այս ռազմավարության հիմքում հակառակորդի կենդանի ուժի ոչնչացումն էր՝ շնորհիվ մեծ ուժերի կուտակման, դրանց տարաշարժունության, հարձակման վճռականության⁶: Օրինակ՝ Սուտերլիցի ճակատամարտում Նապոլեոնին հաջողվեց 73,5 հազար զորքով պարտության մատնել ավստրո-ռուսական դաշնակցային 85,4 հազար զորքին, քանի որ կարողացել էր ճիշտ որոշել գլխավոր հարվածի ուղղությունն ու զորքեր կուտակել հենց այդ հատվածում:

Ռազմարվեստի հետագա զարգացումը կապված է պատերազմի տնտեսական և նյութական հենքի աճի հետ՝ պայմանավորված XIX դարի վերջի և XX դարի սկզբի արդյունաբերական արտադրության աճով:

XIX դարի երկրորդ կեսին Գերմանիայում արդյունաբերական հեղափոխությունը թևակոխել էր վճռական փուլ: 1850-1860 թթ. արդյունաբերական արտադրության աճման հիմքը ծանր արդյունաբերությունն էր: Արագորեն աճում էր գերմանական երկաթուղային ցանցը, որն էլ վճռորոշ նշանակություն ունեցավ 1866 թ. ավստրո-պրուսական (Սադովայի ճակատամարտ)

³ Викулов, Леонович 2021, 7-8.

⁴ Маркс, Энгельс 1956, 506.

⁵ Строков 1967, 22.

⁶ Свечин 2017, 341-343.

և 1871 թ. ֆրանս-պրուսական (Սեդանի ճակատամարտ) պատերազմների ելքի վրա⁷: Հելմուտ Մոլտկեն, օգտվելով ենթակառուցվածքների՝ հեռագրակապի և երկաթուղային զարգացած ցանցի առկայությունից, հրաժարվեց նապոլեոնյան գլխավոր ճակատամարտի ռազմավարությունից. նա ղեկավարվում էր «առանձին գնալ, միասին կռվել» գաղափարով: Այս ժամանակաշրջանում երկաթուղիների լայն կիրառմամբ հնարավոր էր մարդկային մեծաքանակ խմբերը համեմատաբար կարճ ժամանակահատվածում հասցնել ռազմական գործողությունների թատերաբեմ⁸, որն էլ արդյունավետ կիրառեց Հ. Մոլտկեն՝ ծավալելով 420 կմ ռազմաճակատ, որը նորություն էր այդ ժամանակներում: Կարելի է ասել, որ նա հեղափոխություն կատարեց ռազմական արվեստում: Այս պատերազմներում հայտնվեցին օպերատիվ արվեստի սաղմերը:

Ի տարբերություն ֆրանս-պրուսական պատերազմի՝ 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմում ռուսական կողմի պարտության պատճառներից էր արդյունաբերության ու երկաթուղային ցանցի թույլ զարգացած լինելու հանգամանքը: Ռուսաստանը, արևմտյան հատվածում ունենալով մեծաքանակ բանակ, այդպես էլ չկարողացավ պատեհաժամ կենտրոնացնել ուժերն արևելքում: Ի տարբերություն ռուսների՝ տվյալ ժամանակ ճապոնացիներն ունեին զարգացած արդյունաբերություն և տրանսպորտ. բացի այդ, նրանք լավ էին պատրաստվել պատերազմին՝ զարգացնելով ռազմածովային ուժերը: Պատերազմը ցույց տվեց, որ երբ զանգվածային բանակները համալրվում են մեծաքանակ արագաձիգ հրետանային միջոցներով, գնդացիներով, պահուսակավոր հրացաններով, երբ կիրառվում են կապի տեխնիկական միջոցները՝ հեռախոս, ռադիո, հեռագրակապ, մարտական գործողությունները դուրս են գալիս նախկինում ընդունված մարտի, ճակատամարտի սահմաններից: Այսպիսով, ռազմարվեստը զարգացման նոր փուլ թևակոխեց՝ օբյեկտիվորեն ձևավորվեցին բանակային և ռազմաճակատային օպերացիաների տարրերը⁹:

Արդեն Առաջին համաշխարհային պատերազմի (1914-1918 թթ.) նախօրեին գիտության և տեխնիկայի զարգացման մակարդակը օբյեկտիվ հնարավորություններ էր ստեղծել ռազմարվեստի զարգացման համար: Կարծում ենք՝ այս պատերազմի ուսումնասիրությունն արդիական է այն առումով, որ պատերազմի ընթացքը ցայտուն ցույց է տալիս, որ հաղթանակը մեծապես կախված է ոչ միայն ռազմական ղեկավարների ռազմավարական և գործառնական հմտություններից, այլև նրանից, թե որքան արդյունավետ է աշխատում պետության տնտեսությունը: Պատմության մեջ առաջին անգամ

⁷ Ենիկոլոպովա 2022, 114:

⁸ Knox, Murray 2001, 9.

⁹ Строков 1966, 199.

պատերազմի վճռորոշ գործոնը ռազմարդյունաբերական ներուժն էր՝ ազգային տնտեսության ողջ համալիրի անբաժանելի մասը:

Ռազմարվեստի զարգացումն Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում

Առաջին համաշխարհային պատերազմը, տևելով չորս տարի և ներգրավելով 38 պետություն, ընդգրկեց ռազմական գործողությունների ինչպես ցամաքային, այնպես էլ ծովային և օդային թատերաբեմերը: Բազմամիլիոնանոց բանակների առկայությամբ և ռազմական գործողությունների հսկայական տարածքների ընդգրկմամբ Առաջին համաշխարհային պատերազմը ստիպեց հակամարտող կողմերին լարել ողջ մարդկային և նյութական ռեսուրսները: Պատերազմի ժամանակ նոր մարտական միջոցների լայն կիրառումը՝ ծանր հրետանի, գնդացիր, անծուխ վառող, ականանետեր, և պատերազմի երկարատև բնույթը հանգեցրին մարդկային և նյութական մեծ կորուստների: Սակայն հսկայական ռազմաճակատներն անընդհատ համալրվում էին: Սա հնարավոր եղավ իրականացնել զարգացած երկաթուղային ցանցի, արդյունաբերական համալիրի անխափան աշխատանքի և լավ մշակված ֆինանսական համակարգի շնորհիվ:

Առաջին համաշխարհային պատերազմը լավագույնս ցույց տվեց զինված պայքարի, ռազմարվեստի աճող կախվածությունը երկրի տնտեսական հզորությունից և թիկունքի հնարավորություններից¹⁰:

Պատերազմի առաջին արշավանքներն արդեն իսկ ցույց տվեցին նախապատերազմյան ավանդական և կարծրացած հայացքների անհամապատասխանությունը տվյալ ժամանակի պատերազմի բնույթի, վարման ձևերի և միջոցների հետ: Ռազմաճակատներում զորքերի քանակի ավելացումը, ինչպես նաև զորաթևային շրջառումների իրականացման անհնարինությունը 1914 թ. վերջին հանգեցրին պատերազմավարության նոր ձևի: Պարզ դարձավ, որ հակամարտող կողմերի որդեգրած ջախջախման ռազմավարությունն այլևս չէր համապատասխանում ժամանակակից պատերազմի բնույթին, քանի որ բանակներն ունեին բավարար ուժեր և միջոցներ կայուն պաշտպանության ստեղծման համար, իսկ հարձակվող կողմի բանակները սպառել էին կայծակնային պատերազմի համար նախատեսած սպառազինությունը: Հզոր հարվածային միջոցների բացակայության պատճառով պաշտպանությունը հարձակումից ավելի ուժեղ էր: Այսպիսով՝ Առաջին համաշխարհային պատերազմի սկզբում պատերազմող երկրների բանակների ռազմարվեստը կանգնեց առաջացած «դիրքային փակուղու» և դրա ճեղքման խնդրի առջև¹¹: Պետությունները ստիպված էին անցնել հյուժման

¹⁰ Строчков 1974, 594.

¹¹ Воробьев и др. 1961, 161.

ռազմավարության¹², որը պահանջում էր մեծ ռազմատնտեսական ներուժ: Լայնածավալ ռազմաճակատներում բազմամիլիոնանոց բանակների կողմից վարվող պատերազմը պահանջում էր զորքերի՝ մեծաքանակ ռազմամթերքով, ռազմական նոր տեխնիկայով, սպառազինությամբ համալրում: Դիրքային պատերազմի պայմաններում պատերազմի աճող պահանջները հակամարտող կողմերին ստիպում էին մեծացնել արտադրողականությունն ու նվազեցնել ռազմական նշանակության արտադրության ինքնարժեքը¹³: Հետևաբար պատերազմող կողմերը ստիպված էին արտադրության հիմնական ճյուղերը տեղափոխել ռազմական ռելսերի վրա: 1915-1917 թթ. հակամարտող կողմերի արդյունաբերական համալիրները սկսեցին աշխատել միայն պատերազմի համար: Տնտեսության ռազմականացումը հնարավորություն տվեց ոչ միայն համալրելու սպառազինության և ռազմական տեխնիկայի կորուստները, այլև սպառազինության նոր տեսակներով անընդհատ ապահովելու հսկայական ռազմաճակատներում կռվող բազմամիլիոնանոց բանակները:

Կապիտալիստական երկրների, մասնավորապես Գերմանիայի, Ֆրանսիայի, Անգլիայի արդյունաբերության ռազմականացումը շատ արագ տեղի ունեցավ՝ հնարավորություն ստեղծելով իրականացնել անընդհատ համալրում զորքերի կատարելագործված սպառազինությամբ, մարտական նոր մեքենաներով և ռազմական նշանակության այլ միջոցներով: Օրինակ՝ եթե 1914 թ. Ֆրանսիան արտադրել էր 541 ինքնաթիռ, ապա 1918 թ. այդ ցուցանիշը հասավ 24 652-ի, տանկերի քանակը 1916 թ. 100 հատից 1917 թ. դարձավ մոտ 2 հազար հատ, իսկ 1918 թ.՝ 3200¹⁴: Վերոնշյալ ցուցանիշներից ակնհայտ է դառնում, որ պատերազմի ընթացքում ռազմական արտադրությունն անընդհատ աճում էր:

Ելնելով աղյուսակ 1-ում ներկայացված ցուցանիշներից՝ կարող ենք եզրակացնել, որ Ֆրանսիան, Անգլիան և Գերմանիան ռազմաճակատում և թիկունքում պատերազմի ավարտին թեթև ու ծանր հրետանային հրանոթների քանակը մեծացրել էին մոտ 4 անգամ: Տնտեսության ռազմականացմամբ պատերազմի ավարտին հաստոցային գնդացիների քանակը ֆրանսիական և անգլիական զորքերում ավելացավ մոտ 11 անգամ, պատերազմի սկզբում, չունենալով ձեռքի և թեթև գնդացիների արտադրություն, պատերազմի ավարտին արդեն բանակներում դրա քանակը 80 հազար էր¹⁵:

¹² Иминов 2004, 3.

¹³ Павлов 2017, 14.

¹⁴ Мировая война в цифрах 1934, 38, 41.

¹⁵ Мировая война в цифрах 1934, 38, 41.

Աղյուսակ 1

1914-1918 թթ. պատերազմի գլխավոր տերությունների որոշ մարտական միջոցները պատերազմի սկզբին և ավարտին

Սպառազինության տեսակ	ՖՐԱՆՍԻԱ		ԱՆԳԼԻԱ		ԳԵՐՄԱՆԻԱ	
	պատերազմի սկզբում	պատերազմի ավարտին	պատերազմի սկզբում	պատերազմի ավարտին	պատերազմի սկզբում	պատերազմի ավարտին
Թեթև և ծանր հրետանային հրանոթներ	4 500	10 000	1 500	7 000	5 500	15 000
	300	7 500	500	4 000	2 000	10 000
Ականանետ	-	3 000	-	4 000	-	30 000
Ձեռքի և թեթև գնդացիներ	-	70 000	-	10 000	12 000	104 000
Հաստոցային գնդացիներ	5 000	30 000	2 000	50 000	-	-

Պատերազմի ընթացքում բանակներում հրետանու և ծանր գնդացիների քանակի ավելացումը հանգեցրեց զորքերի կրակային հզորության մեծացման: Որպես հետևանք՝ պատերազմի դիրքային փուլում, հրետանային կրակի հզորության ու հեռահարության ավելացմանը զուգահեռ, մեծանում էր պաշտպանության խորությունը՝ հասնելով մինչև 7-8 կմ-ի: Ի տարբերություն նախկին օջախային պաշտպանության՝ այժմ այն բաղկացած էր ինժեներական առումով հագեցած երեք դիրքից. յուրաքանչյուրն իր հերթին ուներ մի քանի հենակետով խրամատների երկու-երեք հոծ գիծ: Պաշտպանության առաջին դիրքը կահավորվում էր փշալարային արգելափակոցներով¹⁶:

Հակառակորդի խոր շարակարգված պաշտպանության ճեղքումը բավական բարդ էր: Առաջացած «դիրքային փակուղուց» դուրս գալու համար 1915 թ. գերմանացիները Իպրոմ թունավոր նյութեր կիրառեցին: Սակայն նույնիսկ պատմության մեջ առաջին անգամ քիմիական զենքի կիրառումը չտվեց ցանկալի արդյունք¹⁷:

Պատերազմի սկզբնական շրջանում հարձակման նախապատրաստման և հակառակորդի պաշտպանություն ներթափանցելու հիմնական եղանակը հրետանու զանգվածային կիրառմամբ հակառակորդի պաշտպանական կառույցների ու կենդանի ուժի ոչնչացումից հետո յուրային զորքերի մուտքն էր առաջացած ճեղք: Դրա համար անհրաժեշտ էր ճեղքման հատ-

¹⁶ Строчков 1966, 235-236.

¹⁷ Лефевьер 1926, 38.

վաճում ստեղծել ուժերի վճռական գերազանցություն¹⁸: 1916 թ. Վերդենի օպերացիայի ժամանակ թեև գերմանացիներին հաջողվել էր ֆրանսիացիների նկատմամբ կենդանի ուժի եռակի և հրետանու յոթնապատիկ գերազանցության հասնել, սակայն նեղ հատվածում (8,5 կմ) առկա միջոցներով մեկուսի ճեղքումը թույլ չտվեց թափանցել հակառակորդի պաշտպանության խորք: Չնայած այդ ահռելի կրակային ներգործությանը՝ գերմանական զորքին հաջողվեց խորանալ ընդամենը 5-6 կմ:

1915-1916 թթ. ռազմական գործողությունների փորձը ցույց տվեց, որ հրետակոծության հետևանքով ավերված ճանապարհները դժվարացնում էին զորքերի արագ մուտքը ճեղքման գոտի: Մինչդեռ այդ ընթացքում, օգտագործելով երկաթուղիներն ու տրանսպորտային այլ միջոցներ, պաշտպանվող կողմին հաջողվում էր արագորեն փակել առաջացած ճեղքը՝ թիկունքից պահուցներով զորքերի համալրմամբ: Բացի այդ, հրետակոծությամբ հնարավոր չէր ոչնչացնել պաշտպանության առաջին դիրքի փշալարային արգելափակոցները, որն էլ կաշկանդում էր հետևակի գործողությունները: Ստեղծված իրավիճակը հանգեցրեց հիմնովին նոր, ինքնագնաց մարտական մեքենայի՝ տանկի ստեղծման գաղափարին, որը կարող էր մեծ արագությամբ ճեղքել պաշտպանական առաջնագիծը և սեպվել հակառակորդի պաշտպանության խորք: Ըստ Ու. Չերչիլի՝ «...տանկերը որոշիչ դեր խաղացին պատերազմի ընթացքի փոփոխության մեջ»¹⁹:

Առաջին անգամ տանկերը կիրառվեցին 1916 թ. սեպտեմբերի 15-ին Սոմմայի ճակատամարտում: Գրոհին մասնակցում էր 32 տանկ: Շուտով բանակներում ձևավորվեցին զրահապատ զորքեր: 1917 թ. Կամբրեյի ճակատամարտում արդեն տանկերը ստացան զանգվածային կիրառում (մոտ 500 տանկ): Առաջին անգամ տանկերը պետք է ինքնուրույն ճեղքեին գերմանացիների ամրացված դիրքերը: Բրիտանական օպերացիայի պլանը հիմնված էր տանկերի՝ առանց նախնական հրետանային պատրաստության, հանկարծակի հարձակման սկզբունքի վրա: Ճեղքումն իրականացվելու էր 12 կմ լայնությամբ գոտում²⁰: Հաջողությունը զարգացնելու համար նախատեսվում էր տանկերի ճեղքումից հետո հեծելազորային կորպուսի զորամուտը մինչև հակառակորդի թիկունք:

Օպերացիայի ընթացքում իրականացված օպերատիվ քողարկման միջոցառումները թույլ տվեցին գաղտնի կենտրոնացնել զորքերի հարվածային խումբը և հասնել հարձակման հանկարծակիության: Սակայն ճակատամարտի փորձը ցույց տվեց, որ միայն մարտավարական ճեղքումը հաջողություն չի ապահովում: Արդեն խնդիր էր առաջացել ճեղքում իրականացնել

¹⁸ Фролов 1981, 67.

¹⁹ Митчель 30.05.2023.

²⁰ Воробьев и др. 1961, 151-152.

հակառակորդի պաշտպանության խորքում և զորաթևերում, որը բրիտանացիներին չհաջողվեց: Թեև բրիտանական 3-րդ բանակի իրականացրած օպերացիան անհաջող ավարտվեց, սակայն այն շատ նորամուծություններ մտցրեց օպերատիվ արվեստում և մարտավարությունում: Բանակի զորաշարվածքում հայտնվեց երկրորդ շարակարգ, որը նախատեսվում էր մարտավարական ճեղքումը զարգացնելու համար: Քանի որ դիրքային պաշտպանության ճեղքումն իրականացվեց հրետանու և ինքնաթիռների ակտիվ աջակցությամբ ուղեկցվող տանկերի զանգվածեղ հարվածով, կարելի է եզրակացնել, որ համազորային մարտի մարտավարության հիմքերը ձևավորվեցին այս ճակատամարտում:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ արդեն ավիացիան վերածվեց զինված ուժերի առանձին զորատեսակի՝ ռազմական գործողությունների ընթացքում ունենալով էական դեր ու նշանակություն: Քանի որ հզոր թիկունքից էր կախված ռազմական գործողություններում հաջողելը, ուստի հակամարտող երկրների զինված ուժերի հրամանատարները ձգտում էին խաթարել թիկունքի աշխատանքները, ապակայունացնել արդյունաբերական բազան և ազգային տնտեսությունը: Այդ խնդիրների լուծման առավել արդյունավետ միջոց էր ավիացիան: Դրա համար էլ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ արդեն ավիացիան կիրառվում էր ոչ միայն օդային հետախուզության իրականացման, այլև հակառակորդի քաղաքական և արդյունաբերական կենտրոնների ռմբակոծման համար: Այդ մասին են վկայում գերմանական ավիացիայի օդային հարձակումները: Օրինակ՝ 1915 թ. ապրիլին գերմանական օդուժը հարվածներ հասցրեց անգլիական ածխահանքերին: Նույն տարվա հունիսին ռմբակոծվեցին Վելինգտոնի, Ջարուի, Թայնի շրջաններում գտնվող մեքենաշինական և քիմիական գործարանները²¹:

Պատերազմի ընթացքում զորքերի տեխնիկական հագեցվածության կատարելագործման, ռազմաճակատների ընդարձակման, կենդանի ուժի պակասի, պահուցների ավելացման ձգտման հետևանքով դիվիզիայում հետևակի քանակը կրճատվեց: Սակայն դիվիզիայի հետևակի կրակային հզորությունը չէր նվազում շնորհիվ զորքերում գնդացիների, հետևակի հրետանային միջոցների, ձեռքի և հրացանային նռնակների մեծաքանակ առկայության:

Նոր զինատեսակների ստեղծմամբ և կիրառմամբ առաջացան մարտական գործողությունների ապահովման նոր տեսակներ՝ հակաօդային պաշտպանություն, հակատանկային պաշտպանություն, հակաքիմիական պաշտպանություն, ինժեներական ապահովում և քողարկում: Ձևավորվեց ռազմական գործողությունների վարման նոր ձև՝ օպերացիա: Եթե նոր զինա-

²¹ Обухович и Кульбака, 07.06.2023.

տեսակների կիրառումը հանգեցրեց նոր զորատեսակների առաջացման, ապա կապի տեխնիկական միջոցների կատարելագործումն էլ դարձավ զորքերի արդյունավետ կառավարման հիմք:

Ամփոփելով կարելի է ասել, որ Առաջին համաշխարհային պատերազմն իր մասշտաբներով և հետևանքներով մարդկության պատմության մեջ նախատիպը չունեցող պատերազմ էր: XX դարի սկզբի այս պատերազմում ակնհայտ է դառնում տնտեսության և պատերազմի փոխկապակցվածությունը: Եթե նախկինում պատերազմին տնտեսական նախապատրաստությունը սահմանափակվում էր խաղաղ պայմաններում և պատերազմի ժամանակ ռազմական ձեռնարկությունների արտադրած պաշարների կուտակմամբ, ապա այս պատերազմը ցույց տվեց, որ երկրի տնտեսությունը պատերազմի ամբողջ ընթացքում պետք է ծառայի ռազմական գործողություններին, քանի որ առաջին մի քանի ամիսների ընթացքում կուտակված զենքի և զինամթերքի պաշարները շատ արագ սպառվեցին՝ պատերազմող կողմերին կանգնեցնելով պատերազմի նախօրեին որդեգրած ջախջախման ռազմավարությունից հրաժարվելու խնդրի առաջ: Հաղթանակի հասնելու համար անհրաժեշտ էր հյուծել հակառակորդին՝ մոբիլիզացնելով երկրի ողջ տնտեսական ռեսուրսները: Պատերազմը ցույց տվեց, որ զինված պայքարի նյութական աջակցությունից էին կախված բանակի մարտունակությունը, պատերազմի ընթացքն ու ելքը²²:

Եզրակացություններ

Ինչպես հայտնի է, պատերազմը պահանջում է հասարակության բոլոր ուժերի մոբիլիզացիա, որը ենթադրում է տնտեսության, պետական իշխանությունների և վարչակազմի, զինված ուժերի և այլ զորքերի համապարփակ վաղաժամ նախապատրաստում: Պաշտպանությանը (պատերազմին) պետության պատրաստման գործում մեծ դեր ու նշանակություն ունի տնտեսական պատրաստվածությունը, հատկապես, վերջին տարիներին մեծ տարածում ստացած հիբրիդային պատերազմների պարագայում: Այսօր, առավել քան երբևէ, ազգային տնտեսությունը պետք է համակողմանիորեն պատրաստ լինի ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական ժամանակ զինված ուժերի անխափան ապահովմանը: Անհրաժեշտ է հետևողականորեն պահպանել ռազմատնտեսական գործունեության հիմնական սկզբունքները, որպեսզի արդյունավետորեն բավարարվեն պետության պաշտպանական, նյութատեխնիկական, ֆինանսական կարիքները:

²² Строчков 1974, 25.

Օգտագործված գրականություն

- Ենիկոլոպովա Ն. 2022, Պաշտպանությանը պետության պատրաստումը որպես հաջողության կարևոր նախապայման՝ ավստրո-պրուսական և ֆրանս-պրուսական պատերազմների օրինակով, Հայկական բանակ ռազմագիտական հանդես, N 2, էջ 108-123:
- Викулов С., Леонович А. 2021, Основы военной экономики, Минск, изд. Белорусский национальный технический университет, 140 с.
- Воробьев В. и др. 1961, История военного искусства, Москва, «Воениздат», 340 с.
- Гордиенко Д. 2008, Взаимосвязь войны, политики и экономики. Основы военной экономики, Москва, 23 с.
- Иминов В. 2004, Эволюция военного искусства в годы Первой мировой войны, Военно-исторический журнал, N 8, с. 2-9.
- Лефевюр В. 1926, Загадка Рейна. Химическая стратегия в мирное время и во время войны, Москва, «Военный вестник», 279 с.
- Маркс К., Энгельс Ф. 1956, Сочинения, изд. 2, т. 7, Москва, Государственное издательство политической литературы, 670 с.
- Мировая война в цифрах 1934, Москва-Ленинград, изд. ОГИЗ, 127 с.
- Митчель Ф. 1935, Танки на войне. История развития танков в мировой войне 1914-1918 гг., Москва, «Госвоениздат», http://militera.lib.ru/science/mitchell_f/01.html (ներբեռնման օրը՝ 30.05.2023).
- Обухович В., Кульбака С. 2000, Дирижабли на войне, Минск, «Харвест», Москва, изд. АСТ, 496 с., <https://goo.su/7tHQvh> (ներբեռնման օրը՝ 07.06.2023).
- Павлов А. 2017, Порох, золото и сталь. Военно-техническое сотрудничество в годы Первой мировой войны, Санкт-Петербург, «РХГА», 532 с.
- Свечин А. 2017, Эволюция военного искусства, Москва, «Вече», 416 с.
- Строков А. 1966, История военного искусства, Москва, «Воениздат», 656 с.
- Строков А. 1967, История военного искусства в 3-х томах, т. 3, Москва, «Военное издательство», 712 с.
- Строков А. 1974, Вооруженные силы и военное искусство в Первой мировой войне, Москва, «Воениздат», 616 с.
- Фролов Б. 1981, Развитие тактики наступательного боя русской армии в Первую мировую войну, Военно-исторический журнал, N 6, с. 65-68.
- Knox M., Murray W. 2001, The Dynamics of Military Revolution, 1300-2050, Cambridge University Press, 203 p.

ВЗАИМОСВЯЗЬ ЭКОНОМИКИ И ВОЕННОГО ИСКУССТВА НА ПРИМЕРЕ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

Серб Суджян, Нана Ениколопова, Роза Гаспарян

Резюме

Учитывая появление новых видов оружия, новейших видов военной техники, а также постоянное совершенствование существующих вооружений, связанное с бурным развитием науки и техники в XXI веке, можно ска-

зять, что ход и исход войны на сегодняшний день стали более зависимы от экономических ресурсов государства, его военно-экономического потенциала. Яркий пример этому – Арцахская война 2020 года, где применение военно-технических средств нового поколения оказало существенное влияние как на ход, так и исход войны.

Ключевые слова – Первая мировая война, экономический потенциал, военное искусство, материально-техническая база, эшелонированная оборона, оперативное искусство, тактика.

INTERRELATION OF ECONOMY AND MILITARY ART WITH THE EXAMPLE OF THE FIRST WORLD WAR

Serob Sujyan, Nana Enikolopova, Roza Gasparyan

Abstract

Based on the emergence of new weapons, the newest types of military equipment, as well as the continuous improvement of the existing weapons because of the rapid development of science and technology in the 21st century, it can be said that the course and outcome of the war today is even more dependent on the economic resources of the state, its military-economic potential. Artsakh war in 2020 is a vivid example of all this, where the use of new generation military technical means had a significant impact on both the course and the outcome of the war.

Key words – World War I, economic potential, military art, infrastructure development, echeloned defense, operational art, tactics.

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍԻՐԻԱԿԱՅ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻ ՌԻՍՈՒՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ (2012-2018 ԹԹ.)

Քնարիկ Ավագյան

Պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4

Էլ. հասցե՝ lira777@yahoo.com

ORCID: 0009-0000-5496-4997

Հոդվածը ներկայացվել է 11.07.2024, գրախոսվել է 19.09.2024, ընդունվել է տպագրության 03.12.2024

DOI: 10.53548/0320-8117-2024.3-35

Ամփոփում

Սիրիահայերի հոսքը Հայաստան առավել զգալի է դարձել հատկապես 2012 թ. հուլիսից սկսած: Նրանք ՀՀ սիյուռքի նախարարություն (այսուհետ՝ ՀՀ ՄՆ) են դիմել ուսումնակրթական տարբեր հարցերով՝ թղթաբանական, երեխաների և երիտասարդների տարբեր ուսումնական հաստատություններ (մանկապարտեզ, դպրոց, քոլեջ, նախապատրաստական, բուհ, մագիստրատուրա) ընդունվելու և կամ ուսումը շարունակելու, մասնագիտական պրակտիկա անցնելու, ուսման վարձը զեղչելու, փոխհատուցելու կամ չվճարելու և այլ հարցերով:

Սիրիահայերի բարձրացրած կրթական խնդիրների լուծման նպատակով ՀՀ ՄՆ-ն մի շարք առաջարկություններ է ներկայացրել կրթության և գիտության նախարարություն (այսուհետ՝ ՀՀ ԿԳՆ): Ի վերջո, իրագործվել են հետևյալ բարեփոխումներն ու աջակցության ծրագրերը: Սիրիահայ երեխաներն ու երիտասարդները մանկապարտեզներ ու դպրոցներ են հաճախել անվճար, իսկ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների վարձերը համաֆինանսավորմամբ հիմնականում հոգացել են ՀՀ կառավարությունը (այսուհետ՝ Կառավարություն), ՀԲԸՄ-ն և «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկությունը, ինչպես նաև սկզբնական շրջանում՝ համահայկական և միջազգային որոշ միություններ ու կազմակերպություններ:

Բացի այդ, Կառավարությունը պետական բյուջեով նախատեսված պահուստային ֆոնդի հաշվին 2012 թվականից ամեն տարի որոշակի գումար է հատկացրել սիրիահայ ուսանողներին ուսումնական տարվա կրթաթոշակներ տրամադրելու նպատակով:

Կառավարության արդյունավետ ծրագրերի շնորհիվ՝ սիրիահայ երեխաների ու երիտասարդների, հետևաբար նաև նրանց հարազատների համար հայրենիքում ստեղծվել են հնարավոր բոլոր բարենպաստ պայմանները՝ սահուն ինտեգրվելու հայաստանյան սոցիալ-մասնագիտական միջավայրին:

Բանալի բառեր՝ Սիրիայի պատերազմ, Սիրիայի հայ համայնք, հայրենադարձություն, կրթություն, մանկապարտեզ, դպրոց, բուհ, ՀՀ սիյուռքի նախարարություն, ուսման վարձ:

Ներածություն

2011 թ. մարտի 15-ից Սիրիայում սանձազերծված պատերազմական թեժ գործողությունների ողջ ընթացքում և հետագայում Կառավարությունը մշտական ուշադրության ներքո է պահել սիրիահայերի խնդիրներն ինչպես Հայաստանում, նույնպես և Սիրիայում:

Սիրիահայերի հոսքը Հայաստան առավել զգալի է դարձել հատկապես 2012 թ. հուլիսից¹: ՀՀ նախագահի հանձնարարությամբ Հայաստանում սիրիահայերի հիմնախնդիրները համակարգել է սփյուռքի նախարարությունը (նախարար՝ Հրանուշ Հակոբյան, 2008-2018 թթ.)²:

Պատերազմի հենց սկզբից ՀՀ ՄՆ-ն լծվել է հայության կարիքները հոգալու գործին: Սիրիահայերի ստվարացող հոսքին զուգընթաց՝ արդեն 2012 թ. ամռանը սփյուռքի նախարարի հրամանով ստեղծվել է սիրիահայերի հիմնախնդիրներով զբաղվող աշխատանքային խումբ՝ ՀՀ ՄՆ աշխատակազմի ղեկավարի՝ Ֆիրդուս Ջաքարյանի գլխավորությամբ, արագ արձագանքման խումբ և թեժ գիծ³:

Սիրիահայերը ՀՀ ՄՆ են դիմել ուսումնակրթական տարբեր հարցերով՝ թղթաբանական, երեխաների և երիտասարդների տարբեր ուսումնական հաստատություններ (մանկապարտեզ, դպրոց, քոլեջ, նախապատրաստական, բուհ, մագիստրատուրա) ընդունվելու և կամ ուսումը շարունակելու, մասնագիտական պրակտիկա անցնելու, ուսման վարձը զեղչելու, փոխհատուցելու կամ չվճարելու⁴ և այլ հարցերով:

Ուսման վարձի փոխհատուցման հարցով շատ սիրիահայերի ուղղորդել են Հայաստանի երիտասարդական հիմնադրամ, կրթությունը շարունակելու հարցով՝ կրթության և գիտության նախարարություն, իսկ մանկապարտեզ ընդունվելու հարցով՝ քաղաքապետարան⁵:

Կրթական ոլորտում ՀՀ ՄՆ-ի օժանդակությունը սիրիահայերին

Սիրիահայերի բարձրացրած կրթական խնդիրների լուծման նպատակով արդեն 2012 թ. հուլիսի 21-ին ՀՀ ՄՆ-ն մի շարք առաջարկություններ է ներկայացրել ՀՀ ԿԳՆ: Ի վերջո, իրագործվել են հետևյալ բարեփոխումներն ու աջակցության ծրագրերը.

ա) ՀՀ բուհերում սովորող Սիրիայի հայազգի քաղաքացիների ուսման վճարը հավասարեցվել է ՀՀ քաղաքացիների վճարին.

բ) սիրիահայ աշակերտների ուսուցման համար Երևանի տարբեր շրջաններում հատկացվել է 3 դպրոց (N 54, 62, 182): Բացի այդ, սիրիահայ աշակերտները կարող էին ուսանել նաև իրենց բնակության վայրին մոտ գտնվող յուրաքանչյուր դպրոցում.

գ) ՀՀ ԿԳՆ և Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության հետ համատեղ ՀՀ ՄՆ-ն սիրիահայերի տարբեր միությունների ներ-

¹ Balkhian Sarkis. The Housing Conundrum: Syrian Armenians in Armenia 2014.

² Համաժողովներ 2017, 1, Ջաքարյան 2018, 570:

³ Պետական քաղաքականություն, <http://www.mindiaspora.am>, Ջաքարյան 2018, 570:

⁴ ՀԱԱ, ֆ. 1786, ց. 2, գ. 9, 10, 11:

⁵ ՀԱԱ, ֆ. 1786, ց. 2, գ. 10, թ. 97, 99, 106, 108, 113:

կայացուցիչներից և սիրիահայ ուսուցիչներից կազմել է սիրիահայ երեխաների կրթական խնդիրներին աջակցելու խումբ.

դ) Կիլիկյան բարեսիրական միության նախաձեռնությամբ, ՀՀ ՄՆ-ի աջակցությամբ և համակարգմամբ, Կառավարության հավանությամբ ծրագրվել և ստեղծվել է Սիրիայի հայկական դպրոցների ծրագրին համապատասխան հատուկ «Կիլիկեան» դպրոցը, որի բացումը տեղի է ունեցել 2012 թ. հոկտեմբերի 9-ին⁶.

ե) դյուրացվել է սիրիահայ երիտասարդների ՀՀ բուհեր ընդունվելու կարգը: Սիրիայում ստացած 12-ամյա կրթության վկայականը բավարար հիմք է ընդունվելու ՀՀ բուհերի առաջին կուրս (առանց նախապատրաստական կուրսեր անցնելու).

զ) լուծվել են Սիրիայի տարբեր բուհերից ՀՀ բուհեր տեղափոխվելու ժամանակ ուսումնական ծրագրերի տարբերությունները հաշվի առնելու, նրանց օժանդակելու և դիպլոմների նույնականացման հարցերը.

է) ՀՀ ՄՆ-ն Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ 2012 թ. հուլիսի 29-ից Երևանի կենտրոնում գտնվող Ստ. Շահումյանի անվան դպրոցում կազմակերպել է արևելահայերենի մեկամսյա արագացված դասընթաց տարբեր տարիքի շուրջ 50 սիրիահայ երեխաների համար⁷:

Մանկապարտեզ

Երևանի քաղաքապետարանի հանձնարարությամբ սիրիահայ երեխաների ընդունելությունը քաղաքի ենթակայության տակ գտնվող մանկապարտեզներ իրականացվել է անվճար հիմունքներով և արտահերթ⁸:

Համաձայն Երևանի քաղաքապետի 2012 թ. սեպտեմբերի 14-ի N 6343-Ա որոշման՝ անվճար մանկապարտեզ հաճախելու իրավունքն ունեին այն սիրիահայ երեխաները, որոնց «ծնողները Երևանում փաստացի բնակվող սիրիահայ քաղաքացիներ են»⁹:

Սիրիահայ երեխաների մանկապարտեզ ընդունվելու դիմումները քննարկվել են առաջնահերթ: 2012-2015 թթ. Երևանի և մարզերի մանկապարտեզներ են հաճախել շուրջ 300¹⁰, 2016 թ.՝ 550 սիրիահայ երեխա, ընդ որում՝ վերջինիցս շուրջ 200-ը ծնվել էին հայրենիքում, իսկ արդեն 2018 թ. վերջին ՀՀ 48 մանկապարտեզ հաճախել է 86 սիրիահայ երեխա¹¹:

⁶ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Ավագյան 2024, 116-130:

⁷ ՀԱԱ, ֆ. 1786, ց. 2, գ. 8, թ. 115-116:

⁸ ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 110, թ. 90: Շարունակվում են սիրիահայերին ցուցաբերվող սոցիալական աջակցության ծրագրերը 2017:

⁹ ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 103, թ. 17-18:

¹⁰ Զաքարյան 2018, 573:

¹¹ Հալաճեան Լենա, Սուրիահայերու Վերամուտը Հայրենիքի Մէջ 2016: Գրիգորյան Նելլի, Անցած տարի Հայաստան է ժամանել 62 սիրիահայ 2019:

Դպրոցներ

Սիրիահայ երեխաների ընդունելությունը ՀՀ հանրակրթական դպրոցներ ևս իրականացվել է անվճար ու արտոնյալ հիմունքներով:

Եթե նախկինում Սիրիայից հայ աշակերտների դպրոցներ ընդունվելու դիմումների արձանագրությունները կազմում էին ՀՀ ՄՆ-ի աշխատակիցները, ապա դիմողների թվի սովորաբար հետ սիրիահայերն իրենք են սկսել լրացնել նախարարության հատուկ կազմած՝ «Հայաստան ժամանակավոր տեղափոխված սիրիահայ երեխաների Հայաստանում կրթության կազմակերպման համար» հարցաթերթիկները: Անձնական հարցաթերթիկում լրացվել են դիմող երեխայի ազգանունը, անունը, հայրանունը, Հայաստանում նրա փաստացի բնակության հասցեն, հեռախոսը, էլ-փոստը, քաղաքացիությունը (կարգավիճակը), տարիքը, դասարանը, ինչպես նաև որ դպրոցներն են նախընտրում հաճախել՝ սիրիական ծրագրով, արևելահայերեն ուսուցմամբ դպրոցներ (առանձնացված նշված են երեքը՝ N 54, 62, 182), ավագ դպրոց արևմտահայերենով, և կամ բնակության մոտ գտնվող որևէ դպրոց (հարկ էր նշել դպրոցի համարը)¹²:

Միաժամանակ, Երևանի քաղաքապետարանն իր մշտական ուշադրության տակ է պահել սիրիահայ երեխաների հարցերը: ՀՀ ՄՆ-ի 2012 թ. նոյեմբեր-դեկտեմբերի տվյալներով՝ Հայաստանի տարբեր դպրոցներում սովորել է ավելի քան 500 սիրիահայ աշակերտ¹³: Իսկ արդեն 2014 թ. սեպտեմբերին ՀՀ դպրոցներում սովորել է սիրիահայ 1.200 աշակերտ, ընդ որում 150-ն առաջին անգամ է հաճախել հայրենի կրթօջախ¹⁴:

2014-2015 թթ. ուսումնական տարվա սեպտեմբերի դրությամբ՝ մայրաքաղաքի 10 վարչական շրջաններում Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող 78 դպրոցների 248 դասարաններում սովորել է 451 սիրիահայ երեխա¹⁵ (ավելի մանրամասն տե՛ս աղյուսակ 1):

Ընդհանուր առմամբ, ներառյալ 2015 թ. Հայաստանի հիմնական (տարրական, միջին) և ավագ դպրոցներում սովորել է շուրջ 1.000 սիրիահայ երեխա¹⁶:

ՀՀ սփյուռքի նախարարի հաղորդմամբ՝ 2016 թ. փետրվարի տվյալներով Հայաստանում սովորել է ավելի քան 2.000 աշակերտ, իսկ 2017 թ. սկզբին մայրաքաղաքի հանրակրթական դպրոցներ է հաճախել ավելի քան 200 սիրիահայ երեխա¹⁷:

¹² ՀԱԱ, ֆ. 1786, ց. 2, գ. 8, թ. 38:

¹³ ՀԱԱ, ֆ. 1786, ց. 2, գ. 78, թ. 46: Ամբողջական տվյալներ. Քանի սիրիահայ կա Հայաստանում, նրանցից քանիսն ունեն բնակարան և աշխատանք 2012, 521, Syrian-Armenian Pupils in Yerevan Schools 2013.

¹⁴ Harutyunyan Arpi. School Barriers for Syrian Armenians 2014.

¹⁵ ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 110, թ. 91:

¹⁶ Զաքարյան 2018, 573:

¹⁷ Հայաստանի ՄԷՋ Ներկայիս Կը Բնակի Շուրջ 16 Հազար Սուրիահայ 2016: Շարունակվում են սիրիահայերին ցուցաբերվող սոցիալական աջակցության ծրագրերը 2017:

Աղյուսակ 1

2014-2015 թթ. ուսումնական տարվա սեպտեմբերի դրությամբ Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցներում սովորող սիրիահայ աշակերտների վերաբերյալ տվյալներ ¹⁸				
№	Վարչական շրջան	Դպրոցը	Դասարանը	Աշակերտների քանակը
1.	Կենտրոն	17	77	195
2.	Արաբկիր	16	69	133
3.	Էրեբունի	8	18	21
4.	Մալաթիա-Սեբաստիա	8	15	20
5.	Նոր Նորք	8	16	16
6.	Շենգավիթ	7	12	14
7.	Աջափնյակ	6	16	19
8.	Քանաքեռ-Զեյթուն	5	16	22
9.	Դավիթաշեն	2	5	6
10.	Նորք-Մարաշ	1	4	5
	Ընդամենը՝	78	248	451

Ընդհանուր առմամբ, արդեն 2018 թ. վերջին ՀՀ ԿԳՆ-ի ենթակայությամբ գործող 115 հանրակրթարաններում սովորել է 646 սիրիահայ: Ընդ որում, հանրապետության 42 հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորել է 176, իսկ Երևանի 73 հանրակրթական ուսումնական հաստատությունում՝ 470 սիրիահայ աշակերտ¹⁹:

Բուիեր

Սիրիահայերի ընդունելությունը ՀՀ բուիեր ևս կատարվել է դյուրացված կարգով²⁰:

Ըստ հաստատված օրենքի՝ սիրիահայերը ՀՀ բուիեր կարող էին ընդունվել սիյուռքահայ դիմորդների համար նախատեսված կարգով: Նրանք պետք է փաստաթղթերը ներկայացնեին ՀՀ ԿԳՆ կամ օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություն: Նրանք կարող էին իրենց նախընտրած ֆակուլտետի նախապատրաստական բաժնում ուսումնասիրել հայոց լեզու և մասնագիտական առարկաներ, ապա տարեվերջին, քննությունները կամ ընդունելության համար նախատեսված առարկաներից հարցազրույցը բարեհաջող հանձնելով, ընդունվել համապատասխան ֆակուլտետի 1-ին կուրս: Սիրիահայ դիմորդը բարձր միավորներ հավաքելու դեպքում կարող էր պետպատվերի շրջանակում կրթությունը ստանալ անվճար²¹:

¹⁸ ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 105, թ. 91-106:

¹⁹ Գրիգորյան Նելլի, Անցած տարի Հայաստան է ժամանել 62 սիրիահայ 2019:

²⁰ Զաքարյան 2018, 573:

²¹ Հաճախ տրվող իրավական հարցերի տեղեկատվական ձեռնարկ 2017, 74-75:

Սիրիայում պատերազմական գործողությունները սկսվելուց հետո ՀՀ սփյուռքի նախարարի առաջարկ-հորդորով Հայաստանում ստեղծվել է ՀՀ բուհերի սփյուռքահայ հիմնախնդիրներով զբաղվող «Սփյուռքահայ ուսանողների խորհուրդ» հասարակական կազմակերպությունը (նախագահ՝ Սամվել Մկոյան): Այն կոչված էր աջակցելու սփյուռքահայ «ուսանողներին այն տարաբնույթ խնդիրների լուծման հարցում, որոնց նրանք առնչվում են Հայաստանում՝ ուսումնական, սոցիալական, իրավական ոլորտներում»²²: Ստեղծվել է նաև ՀՀ բուհերի սիրիահայ ուսանողների խորհուրդը՝ յուրաքանչյուր բուհում համակարգող անդամներով, որոնք զբաղվելու էին հայրենադարձ սիրիահայ ուսանողների խնդիրներով²³:

Հայաստանում սիրիահայ ուսանողների հիմնական խնդիրները կապված են եղել ուսման վարձի, բնակության վայրի, աշխատանքի և լեզվի իմացության հետ²⁴:

2013 թ. կիսամյակի տվյալներով՝ Հայաստանում գտնվող սիրիահայ շուրջ 250 ուսանողի 40%-ը կեցության խնդիր ունեն²⁵:

Բացի այդ, Հայաստանում գործող ավելի քան մի քանի հարյուր կազմակերպություն դիմել է ՀՀ ՄՆ՝ սիրիահայ ուսանողներին աշխատանքի ընդունելու ցանկությամբ: Դրա հետևանքով մեծ թվով սիրիահայ երիտասարդներ և ուսանողներ ապահովվել են տարբեր տեսակի աշխատանքներով (մատուցողից մինչև իրենց մասնագիտություն)²⁶:

2012 թ. սեպտեմբերից Կառավարությունը պետական բյուջեից միջոցներ է հատկացրել սիրիահայ ուսանողների ուսման վարձի փոխհատուցման համար: Այդ նպատակով Կառավարությունը, հանձին ՀՀ ՄՆ-ի, սկզբում «Հայաստան» համահայկական հիմնադրամի, Ամերիկայի «Հայ օգնության ֆոնդի» Հայաստանի մասնաճյուղի, Քուվեյթ պետության և այլն, ապա, ՀԲԸՄ-ի և «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, ՀՀ ԿԳՆ-ի հետ իրականացրել է Սիրիայում ծավալված իրադարձությունների հետևանքով Հայաստան ժամանած և տեղի բարձրագույն ու միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող սիրիահայ ուսանողների վարձավճարների

²² Իր մասնագիտությունից մինչև մատուցող. սփյուռքի նախարարության առաջարկած աշխատանքը սիրիահայ ուսանողին, 2013: Սփյուռքահայ ուսանողների խորհուրդ, <https://hkdepo.am>

²³ Զաքարյան 2018, 575:

²⁴ Իր մասնագիտությունից մինչև մատուցող. սփյուռքի նախարարության առաջարկած աշխատանքը սիրիահայ ուսանողին, 2013:

²⁵ Իր մասնագիտությունից մինչև մատուցող. սփյուռքի նախարարության առաջարկած աշխատանքը սիրիահայ ուսանողին 2013:

²⁶ Իր մասնագիտությունից մինչև մատուցող. սփյուռքի նախարարության առաջարկած աշխատանքը սիրիահայ ուսանողին 2013:

փոխհատուցման ծրագիր²⁷: Յուրաքանչյուր տարի կազմակերպվել է միջին հաշվով 400 սիրիահայ ուսանողի ուսման վարձի փոխհատուցում²⁸:

2012-2013 թթ. ուսումնական տարվանից Կառավարության, ինչպես նաև համահայկական, բարեգործական կառույցների աջակցությամբ փոխհատուցվել է Հայաստան տեղափոխված սիրիահայ ուսանողների ուսման վարձավճարների 50-75%-ը՝ պայմանավորված տվյալ ուսումնական տարվա ընթացքում սովորող սիրիահայ ուսանողների թվով և բարեգործական կառույցների հատկացրած ֆինանսական միջոցներով²⁹:

Հայաստանի բարձրագույն կրթական հաստատությունները ևս արել են իրենց կարելին՝ աջակցելու սիրիահայ մեր հայրենակիցներին: Որոշ բուհեր ներքին կարգով ընդառաջել են՝ զիջելով սիրիահայ ուսանողների ուսման վարձավճարը³⁰:

Հայկական բարեգործական կազմակերպություններն ամենայն պատասխանատվությամբ են մոտեցել սիրիահայ ուսանողների կրթական վարձավճարները փոխհատուցելու խնդրին, քանի որ գտել են, որ Հայաստանում ուսում ստացած սփյուռքահայի համար հայրենիքին կապված մնալու հավանականությունը մեծ է³¹:

Ընկնելով նախորդ տարվա տվյալների վրա՝ ՀԲԸՄ-ն նախատեսել էր 2014-2015 թթ. ուսումնական տարվա համար փոխհատուցել 380 ուսանողների վարձերի 78%-ը կամ յուրաքանչյուրի համար առավելագույնը՝ 600.000 դրամ³² (տե՛ս աղյուսակ 2):

Ներառյալ 2015 թ. կրթական հարցերով ՀՀ ՄՆ է դիմել շուրջ 2.200 սիրիահայ³³:

2017 թ. վերջի տվյալներով՝ Կառավարությունը և տարբեր կազմակերպություններ հոգացել են սիրիահայ 400 ուսանողի ուսման վարձավճարը³⁴ (տե՛ս աղյուսակ 3):

²⁷ ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 111, թ. 74: Հաճախ տրվող իրավական հարցերի տեղեկատվական ձեռնարկ 2017, 76-77: Սիրիահայերին օժանդակություն տրամադրող կազմակերպությունների և ծառայությունների ցանկ 2018, 3, 4, 7, Համաժողովներ 2017, 2:

²⁸ ՀԱԱ, ֆ. 1786, ց. 2, գ. 10, թ. 12, Համաժողովներ 2017, 2:

²⁹ ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 75, թ. 41:

³⁰ ՀԱԱ, ֆ. 1786, ց. 2, գ. 8, թ. 117: ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 113, թ. 59: AUA for Syrian Armenians, <https://aua.am/aua-for-syrian-armenians/>. Իր մասնագիտությունից մինչև մասնուցող սփյուռքի նախարարության առաջարկած աշխատանքը սիրիահայ ուսանողին 2013: Hayastan All-Armenian Fund Continues to Raise Worldwide Support for Syrian-Armenian Community 2013:

³¹ ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 105, թ. 39:

³² ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 111, թ. 74:

³³ Զաքարյան 2018, 573:

³⁴ Avetisyan 2017. Հաճախ տրվող իրավական հարցերի տեղեկատվական ձեռնարկ 2017, 77: Syrian-Armenian Students Will be Given Tuition Support 2017:

Աղյուսակ 2

Համաֆինանսավորող կառույցների կողմից սիրիահայ ուսանողների վարձավճարների փոխհատուցման գումարը (ԱՄՆ դոլարին համարժեք դրամով)		
Համաֆինանսավորող կառույցներ	2014-2015 թթ.	2015-2016 թթ.
ՀՀ կառավարություն	60.000	60.000
ՀԲԸՄ	130.000	160.000
«Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկություն	130.000 ³⁵	160.000 ³⁶
Ընդամենը¹	320.000	380.000

Աղյուսակ 3

Սիրիահայ ուսանողների վարձավճարների փոխհատուցումները տարբեր կառույցների կողմից³⁷		
Տարեշրջան	Ուսանողների քանակը	Աջակցող կառույցները
2012-2013 թթ.	շուրջ 350	ՀՀ կառավարություն «Հայաստան» համահայկական հիմնադրամ
2013-2014 թթ.	շուրջ 400	ՀՀ կառավարություն ՀԲԸՄ «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկություն Քուլվեյթի կառավարություն
2014-2015 թթ.	շուրջ 420	ՀՀ կառավարություն ՀԲԸՄ «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկություն
2016-2017 թթ.	շուրջ 480	ՀՀ կառավարություն ՀԲԸՄ «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկություն ³⁸

2018 թ. գարնանը Հայաստանում իշխանափոխությունից և ՀՀ ՄՆ լուծարումից հետո ևս՝ 2018-2019 թթ. ուսումնական տարում, շարունակվել է իրականացվել Հայաստանի բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բակալավրի կրթական մակարդակում սովորող սիրիահայ ուսանողների համար ուսման վարձավճարների փոխհատուցման ծրագիրը՝ Կառավարության, ՀԲԸՄ և «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության ֆինանսական աջակցությամբ: Ծրագրում ընդգրկվելու համար անհրաժեշտ էր այցելել «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ գրասենյակ և լրացնել համապատասխան հայտը³⁹:

³⁵ ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 105, թ. 39:

³⁶ ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 111, թ. 74:

³⁷ Զաքարյան 2018, 573:

³⁸ Հաճախ տրվող իրավական հարցերի տեղեկատվական ծեռնարկ 2017, 77:

³⁹ ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 75, թ. 41-42:

Հայաստանի բարձրագույն, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սիրիահայ ուսանողներին կրթաթոշակներ հատկացնելու նպատակով Կառավարությունը պետական բյուջեով նախատեսված պահուստային ֆոնդի հաշվին 2012 թվականից ամեն տարի որոշակի գումար է հատկացրել է սիրիահայ ուսանողներին ուսումնական տարվա կրթաթոշակներ տրամադրելու նպատակով: Կառավարության որոշմամբ այդ գումարը տրամադրվել է ՀՀ ԿԳՆ-ին, ինչպես նաև ՀՀ ՄՆ-ին, որպեսզի վերջիններս որպես նվիրատվություն այն տրամադրեն «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ին սիրիահայ ուսանողների ուսման նպատակով⁴⁰: Այսպես, 2013 թ. առաջին կեսի տվյալներով՝ ավելի քան 100 ուսանող ստացել է կրթաթոշակ⁴¹ (տե՛ս աղյուսակ 4):

Աղյուսակ 4

ՀՀ կառավարության՝ սիրիահայ ուսանողներին տրամադրած կրթաթոշակները⁴²	
Ուսումնական տարի	Գումար (դրամով)
2013-2014 թթ.	10.000.000 ⁴³
2014-2015 թթ.	26.160.000 ⁴⁴
2015-2016 թթ.	24.656.000 ⁴⁵
2016-2017 թթ.	20.000.000 ⁴⁶

Եզրակացություններ

Այսպիսով, Հայաստան ժամանած սիրիահայերի կրթական խնդիրները լուծելու նպատակով ՀՀ ՄՆ-ն ՀՀ ԿԳՆ է ներկայացրել մի շարք առաջարկություններ, որոնց շնորհիվ իրագործվել են օգտաշատ բարեփոխումներ ու աջակցության ծրագրեր:

⁴⁰ ՀՀ կառավարության որոշում, «Հայաստանի Հանրապետության Սփյուռքի նախարարությանը գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 1555-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» 2016: ՀՀ կառավարության որոշում, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 10-ի N 1183-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» 2013:

⁴¹ Hakobyan Julia. Middle East Meets Armenia: Armenians Flee Syria for the Motherland 2013.

⁴² ՀՀ կառավարության որոշում, «Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությանը գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» 2014:

⁴³ ՀՀ կառավարության որոշում, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 10-ի N 1183-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» 2013:

⁴⁴ Հաճախ տրվող իրավական հարցերի տեղեկատվական ծեռնարկ 2017, 152:

⁴⁵ ՀՀ կառավարության որոշում, «Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությանը գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1515-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին», 2015:

⁴⁶ ՀՀ կառավարության որոշում, «Հայաստանի Հանրապետության Սփյուռքի նախարարությանը գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 1555-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» 2016:

Արդյունքում, սիրիահայ երեխաներն ու երիտասարդները մանկապարտեզներ ու դպրոցներ են հաճախել ճրի, իսկ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների վարձերը համաֆինանսավորմամբ հոգացել են հիմնականում՝ Կառավարությունը, ՀԲԸՄ-ն և «Գալուստ Կյուպենկյան» հիմնարկությունը⁴⁷, ինչպես նաև սկզբնական շրջանում՝ համահայկական և միջազգային որոշ միություններ ու կազմակերպություններ:

Կառավարության իրականացրած արդյունավետ ծրագրերի շնորհիվ սիրիահայ երեխաների ու երիտասարդների, հետևաբար՝ նաև նրանց հարազատների համար հայրենիքում ստեղծվել են հնարավոր բոլոր բարենպաստ պայմանները սահուն ինտեգրվելու հայաստանյան սոցիալ-մասնագիտական միջավայրին:

Օգտագործված գրականություն

- Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ՀՀ սփյուռքի նախարարության ֆոնդ 1786, ց. 2, գ. 8, 9, 10, 11, 78, ֆ. 1786, ց. 3, գ. 75, 103, 105, 110, 111, 113:
- Ամբողջական տվյալներ. Քանի սիրիահայ կա Հայաստանում, նրանցից քանիսն ունեն բնակարան և աշխատանք, 2012, 21 նոյեմբերի, www.panarmenian.net (ներբեռնման օրը՝ 10.11.2023):
- Ավագյան Բ. 2024, Սիրիական կրթական ծրագրով «Կիլիկեան» դպրոցը Հայաստանում (2012-2013 թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, Երևան, էջ 116-130:
- Գրիգորյան Ն. 2019, Անցած տարի Հայաստան է ժամանել 62 սիրիահայ, 19 հունվարի, <https://www.aravot.am> (ներբեռնման օրը՝ 10.11.2023):
- Զաքարյան Ֆ. 2018, Սիրիայի հայ համայնքի հետ տարուող աշխատանքները (2008-2015), «Սուրիոյ հայերը. Գիտաժողովի նիստեր (24-27 Մայիս, 2015)», խմբ.՝ Անդրանիկ Տազևեան, Պէյրոս, Haigazian University Press, էջ 570:
- Իր մասնագիտությունից մինչև մատուցող. սփյուռքի նախարարության առաջարկած աշխատանքը սիրիահայ ուսանողին 2013, 27 մայիսի, <https://hetq.am> (ներբեռնման օրը՝ 18.09.2023):
- Հալաճեան Լ. 2016, Սուրիահայերու Վերամուտը Հայրենիքի Մէջ, 29 Օգոստոս, <https://hairsnikweekly.com> (ներբեռնման օրը՝ 10.11.2023):
- Հաճախ տրվող իրավական հարցերի տեղեկատվական ձեռնարկ Սիրիայից և հակամարտության վայրերից Հայաստան տեղահանված անձանց համար 2017, հուլիս, Երևան, 158 էջ:
- Համաժողովներ. Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողով 2017, ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի ղեկավար, սիրիահայերի հիմնախնդիրներով զբաղվող աշխատանքային խմբի ղեկավար Ֆիրդուս Զաքարյանի ղեկույցը, «Հայաստանի Հանրապետությունում ապաստան գտած սիրիահայերին տրամադրվող աջակցության վերաբերյալ», 18-20 սեպտեմբերի, <http://www.mindiaspora.am> (ներբեռնման օրը՝ 24.03.2019):

⁴⁷ Hakobyan Julia. Middle East Meets Armenia: Armenians Flee Syria for the Motherland 2013. Հալաճեան Լենա, Սուրիահայերու Վերամուտը Հայրենիքի Մէջ 2016:

- Հայաստանի Մէջ Ներկայիս Կը Բնակի Շուրջ 16 Հազար Սուրիահայ 2016, 11 Փետրուար, <https://horizonweekly.ca> (ներբեռնման օրը՝ 19.10.2023):
- ՀՀ կառավարության որոշում 2013, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 10-ի N 1183-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին», 12 դեկտեմբերի, N 1433-Ն, <https://www.e-gov.am> (ներբեռնման օրը՝ 10.11.2023):
- ՀՀ կառավարության որոշում 2014, «Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությանը գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին», 27 նոյեմբերի, N 1364-Ն, <https://www.e-gov.am> (ներբեռնման օրը՝ 10.11.2023):
- ՀՀ կառավարության որոշում 2015, «Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությանը գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1515-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին», 22 հոկտեմբերի, N 1244-Ն, <https://www.e-gov.am> (ներբեռնման օրը՝ 19.10.2023):
- ՀՀ կառավարության որոշում 2016, «Հայաստանի Հանրապետության Սփյուռքի նախարարությանը գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 1555-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին», 27 հոկտեմբերի, N 1188-Ն, <https://www.e-gov.am> (ներբեռնման օրը՝ 19.10.2023):
- Շարունակվում են սիրիահայերին ցուցաբերվող սոցիալական աջակցության ծրագրերը 2017, 17 փետրվարի, <https://www.pastinfo.am> (ներբեռնման օրը՝ 10.11.2023):
- Պետական քաղաքականություն 2018, http://www.mindiaspora.am/am/petakan_gaxaqakanutyun (ներբեռնման օրը՝ 10.11.2023):
- Զաքարյան Ֆիրդոս, Սիրիայի հայ համայնքի հետ տարուղ աշխատանքները (2008-2015), «Սուրիոյ հայերը. Գիտաժողովի նիւթեր (24-27 մայիս, 2015)», խմբ.՝ Անդրանիկ Տազեսեան, Պէրյուֆ, Haigazian University Press, էջ 569-576:
- Սիրիահայերին օժանդակություն տրամադրող կազմակերպությունների և ծառայությունների ցանկ. Սիրիահայերի և տեղացիների դիմակայունության բարձրացում 2018, Երևան, 41 էջ:
- AUA for Syrian Armenians, <https://aua.am/aua-for-syrian-armenians/> (ներբեռնման օրը՝ 10.11.2023).
- Avetisyan A. 2017, 'I Will Not Go Back' - The Syrians Making a New Life in Armenia, Karo Haroyan. "Osservatorio Balcani e Caucaso", November 13, <https://www.balcanicaucaso.org> (ներբեռնման օրը՝ 19.10.2023).
- Balkhian S. 2014, The Housing Conundrum: Syrian Armenians in Armenia, January 14, <https://armenianweekly.com> (ներբեռնման օրը՝ 10.11.2023).
- 521 Syrian-Armenian Pupils in Yerevan Schools 2013, 21 March, <https://www.tert.am> (ներբեռնման օրը՝ 10.11.2023).
- Hakobyan J. 2013, Middle East Meets Armenia: Armenians Flee Syria for the Motherland, June 1, <https://agbu.org> (ներբեռնման օրը՝ 19.10.2023).

- Harutyunyan A. 2014, School Barriers for Syrian Armenians. Differences in Language and Lesson Content Make It Hard for Refugee Pupils to Keep Up. September 15, <https://iwpr.net> (ներբեռնման օրը՝ 19.10.2023).
- Hayastan All-Armenian Fund Continues to Raise Worldwide Support for Syrian-Armenian Community 2013, June 27, <http://www.armradio.am> (ներբեռնման օրը՝ 10.11.2023).
- Syrian-Armenian Students Will be Given Tuition Support 2017, November 9, <https://news.am/eng/news/420060.html> (ներբեռնման օրը՝ 10.11.2023).

СОДЕЙСТВИЕ АРМЯНАМ-РЕПАТРИАНТАМ ИЗ СИРИИ В ВОПРОСЕ ОБРАЗОВАНИЯ (2012-2018 ГГ.)

Кнарик Авакян

Резюме

Приток сирийских армян в Армению стал более ощутимым особенно с июля 2012 г.

Сирийские армяне обращались в Министерство диаспоры РА по различным вопросам: оформление документов, поступление в различные детско-юношеские учебные заведения (детский сад, школа, колледж, ВУЗ, магистратура) или продолжение учебы, профессиональная стажировка, скидка в оплате или отказ от платы за обучение, компенсация либо невыплата и ряд других вопросов.

В целях решения образовательных проблем сирийских армян Министерство диаспоры РА представило Министерству образования РА ряд рекомендаций, благодаря которым были реализованы необходимые реформы и программы поддержки.

В результате подрастающее поколение сирийских армян посещало детские сады и школы бесплатно, а оплата обучения студентов в высших учебных заведениях финансировалась в основном правительством РА, Армянским Всеобщим Благотворительным Союзом и учреждением «Галуст Кюльпенкян», а также рядом общеармянских и международных союзов и организаций.

Благодаря эффективным программам, реализуемым Правительством РА, были созданы все благоприятные условия для беспрепятственной интеграции сирийских армян в социально-профессиональную среду Армении.

Ключевые слова – война в Сирии, армянская община Сирии, репатриация, детский сад, школа, ВУЗ, Министерство диаспоры РА.

SUPPORT TO THE SYRIAN-ARMENIAN REPATRIATES IN SOLVING EDUCATIONAL PROBLEMS (2012-2018)

Knarik Avagyan

Abstract

The influx of Syrian-Armenians into Armenia has become more significant especially since July, 2012.

The Syrian-Armenians applied to the Ministry of Diaspora RA on various issues: forming applications, admission to various child and youth educational institutions (kindergarten, school, college, university, master's degree) or continuation of studies, professional internship, discount in payment or waiver of fees for education, compensation or non-payment and other issues.

In order to solve the educational problems of Syrian-Armenians, who have arrived in Armenia, the Ministry of Diaspora RA presented a number of recommendations to the Ministry of Education RA, thanks to which useful reforms and support programs were implemented.

As a result, Syrian-Armenian children and youth attended kindergartens and schools for free, and the tuition fees for the students in higher educational institutions were co-financed mainly by the Government of the Republic of Armenia, the Armenian General Benevolent Union and the "Calouste Gulbenkian" Foundation, as well as – in the beginning – some pan-Armenian and international unions and organizations.

Thanks to the effective programs implemented by the RA Government, all possible favorable conditions have been created for the smooth integration of Syrian-Armenian children and youth, and consequently their relatives, into the social and professional environment of Armenia.

Key words – War in Syria, Armenian Community of Syria, repatriation, kindergarten, school, university, Ministry of Diaspora RA, payment for education.

THE DIPLOMATIC ACTIVITY OF THE PLENIPOTENTIARY REPRESENTATIVE OF THE REPUBLIC OF ARMENIA G. PASDERMADJIAN (ARMENGARO) IN THE USA AT THE END OF 1919

Armenuhi Ghambaryan

Candidate of Sciences in History
Institute of History of NAS RA
Yerevan, Marshal Baghramyan 24/g
Email: vanarmin@mail.ru
ORCID: 0009-0005-5102-3725

The article has been delivered on 25.07.2024, reviewed on 11.10.2024, accepted for publication on 03.12.2024
DOI: 10.53548/0320-8117-2024.3-48

Abstract

In early October 1919, a special delegation led by the former Prime Minister of the First Republic of Armenia, H. Kajaznuni, traveled to the United States. The delegation's purpose was not only to appeal to the American government for humanitarian assistance on behalf of the Council of Armenia but also to ensure the resolution of political issues. Among these, recognition of Armenia as an Independent Republic was a top priority among them. A member of the Armenian delegation in Paris, Garegin Pasdermadjian (Armen Garo), the Vice President of the National delegation (of the Western Armenians), functioning in Paris, joined the Republican delegation. He was appointed Plenipotentiary Representative of the Republic of Armenia to the United States charged with assistance to resolve the political matters, mentioned above. G. Pasdermadjian greatly contributed to the success of the Armenian delegation in the USA at the end of 1919, through his consistent diplomatic efforts. Despite the fact that the United States had not yet officially recognized the Republic of Armenia, some progress had been made in terms of economic and humanitarian aid.

Key words – Republic of Armenia, USA, G. Pasdermadjian, R. Lansing, Plenipotentiary Representative, Government, State Department.

Introduction

During the period from January to the summer of 1919, the Armenians gradually realized at the Paris Peace Conference that neither the Allied powers nor the United States were going to show political determination towards the newly formed Armenian Republic. Although in May 1919, the Council of Four had decided to entrust the mandate for Armenia to the United States, it was not in a hurry to respond for several month.

At the same time, the challenging economic, political, and military situation in Armenia led the government to send an official delegation to Europe and the United States in order to seek assistance in these spheres. The delegation, led by Hovhannes Kajaznuni, the first prime minister of Armenia, carried out its activities in

Europe during the summer and autumn of 1919. However, despite all their efforts, they did not achieve significant results and therefore traveled to the United States to approach the American government.

The Kajaznuni's delegation known as the Civil mission was supposed to appeal to the Government of the United States on behalf of the Armenian Council and ask for their help with importing acutely needed food and essential goods¹. As for the military issues and the proposed assistance, another delegation, composed of General Hakob Bagratuni and military commander Andranik Ozanyan, was to arrive in the US to address its authorities separately².

In addition to the main goal of obtaining economic and military support from the United States, H. Kajaznuni had the right to offer solutions to political problems. The issue of recognition of the Republic of Armenia was of paramount importance among these political matters. To resolve this and other political difficulties, Kajaznuni's delegation incorporated Garegin Pasdermadjian (Armen Garo), who had been previously the Vice President of the Armenian delegation in Paris and was appointed now the Plenipotentiary Representative of the Republic of Armenia in the United States³.

The First Steps of Diplomatic Activity in October 1919: Testimony Before the Senate Subcommittee; Presentation of the Memorandum on the Independence of Armenia

On the evening of October 9, 1919, the delegation led by the former Prime Minister of the First Republic of Armenia, Hovhannes Kajaznuni, including G. Pasdermadjian, departed from New York for Washington, where they arrived the same morning⁴. The purpose of their visit was to present the Armenian issues to the American government.

On October 10, 1919, Kajaznuni, as Chairman of the Civil mission of the Republic of Armenia, and G. Pasdermadjian, as the plenipotentiary diplomatic representative of the Republic, stated at the Hearings of the Subcommittee of the Committee on Foreign Relations of the US Senate on the topic "Maintenance of Peace in Armenia". The hearings began on September 27, 1919, following a resolution proposed by Senator John Sharp Williams, that authorized the US Govern-

¹ Information on the formation and activities of the Civil delegation, see: Ղամբարյան 2021, 134-149:

² Information on the formation and activities of the Military delegation, see: Ղամբարյան 2022, 46-55:

³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 395, թ. 1-2, 4-5, 7:

⁴ Ասպարէզ 1919, 17 հոկտեմբերի, Կոչնակ Հայաստանի 1919, 18 հոկտեմբերի, Հայրենիք 1919, 15 հոկտեմբերի, Հովհաննիսյան 2014, 457, Нованнисян 1982, 383, Ованнисян 2007, 279, Махмуриян 2018, 230.

ment to take over the planned Allied assistance for the Armenians and send American troops to Armenia⁵.

The Armenian delegates spoke about the relief and military aid for Armenians, as well as the recognition of their Republic. Pasdermadjian introduced himself as the former Vice President of the Armenian National Delegation in Paris and explained that he was currently serving the diplomatic representative of the Republic of Armenia in the United States.

Agreeing with Kajaznuni's testimony, which was economic in its nature, Pasdermadjian added "Now, that we ask of America is more of moral and economic character than physical only. We have a military force which lacks food, supplies, and munitions. We need only a few thousand American soldiers for their moral effect. They will never have to fight, because the Turks will see that America is for Armenia and they will not fight. We want help for one or two years, until we are organized"⁶. Since the Armenians needed arms and munitions, some supplies, and a few Officers, Pasdermadjian explained to the Subcommittee "We have Officers, but we need, too, the Americans to cooperate with us in everything. We have thousands of soldiers who were in the Russian Army, but we want some American Officers to help reorganize our Army, especially in the technical field"⁷.

He also noted that the small military presence of the US in Batum and Yerevan was highly desirable and would play an important role, simply by being there, as it would leave a lasting impression, especially on the neighboring countries of Armenia. Underlining that the moral effect of the American flag would be great, he said "Our neighbors, the Orientals, are very impressionable"⁸.

The statements of the Armenian delegates played considerable role in shaping the opinions of the members of the Subcommittee. Even the chairman of the Subcommittee, Senator Warren G. Harding (he would be President of the United States since 1921), who has shown a restrained position on Armenian issues, noted that it might be wise to suggest that the government of Yerevan be provided with political recognition, military assistance and financial credit⁹.

After testifying before the Subcommittee, G. Pasdermadjian and members of the civil mission of the Republic of Armenia, accompanied by Senator J.Sh. Williams went to the White House. Alas, but due to health reasons, President Woodrow Wilson was unable to meet with the members of the RA mission. The high-ranking guests

⁵ For Senate Subcommittee Hearings see: Congressional Record 1919, 5067, US NA, RG 256, 867B.00/268, Maintenance of Peace in Armenia. Hearings... 1919, 3-125, Armenian Review 1980, N 4; 1981, N 1, N 2, N 4, Հայաստանը միջազգային դիվանագիտության 1972, 566, Հովհաննիսյան 2014, 447, Ղանբարյան 2022, 24-314, Hovannisian 1982, 435, Ованнисян 2007, 273-281, Махмуриян 2018, 235-264.

⁶ Maintenance of Peace in Armenia. Hearings ... 1919, 112.

⁷ Maintenance of Peace in Armenia. Hearings ... 1919, 112.

⁸ Maintenance of Peace in Armenia. Hearings ... 1919, 113.

⁹ Հայրենիք 1919, 12 հոկտեմբերի:

were received by his secretary J.P. Tumulty. The latter, having conveyed W. Wilson's regrets about the failed meeting, also informed the Armenian delegates about the sympathies of the US president towards the Armenian cause.

For two days, on October 10th and 11th, the Armenian delegates were also received by US Vice President T.R. Marshall, Senate Majority Leader H.C. Lodge and Minority Leader G.M. Hitchcock, Senator W.H. King, and Secretary of State R. Lansing. On October 14 one of the Armenian representatives was also received by the US Secretary of War N.D. Baker¹⁰. The benevolent attitude of the representatives of the highest official authorities of the Great Power, was certainly encouraging. However, during the autumn the United States refrained from taking any steps even in the direction of providing economic aid. As for political and, moreover, military support, there was not even a hint of such readiness. So, at a meeting with the Secretary of State, in response to the Armenian diplomats' proposal to recognize the Republic of Armenia, R. Lansing advised them to submit an official memorandum.

Therefore, the Memorandum entitled "The Republic of Armenia" was prepared under the guidance of Kajaznuni and submitted to the Secretary of State by G. Pasdermajian on 28 October 1919¹¹. Later on, it was presented to the Senate by its member H.C. Lodge¹². On 10 November 1919, the Memorandum was printed as a Senate Document № 151 of the 1st Session of the 66th Congress in a separate booklet¹³.

The document contained brief although rich information about the Republic of Armenia, including both the establishment of independence and the needs of the urgent assistance to the young Republic. The Memorandum noted that in the case of military-political support, together with the economic assistance already received, the Republic of Armenia would be able to take quickly its place among developed countries in a short time; that, having received assistance, the Armenians would be able to ensure their self-defense, as well as, thanks to their hard work and the country's natural resources, they would be able to repay the loans taken; that recognition of the Government of the Republic, in particular by the United States, would be of great importance for the reunification of the Republic of Armenia with Western Armenia and the creation of a Unified and Integral Armenia.

¹⁰ Յառաջ 1920, 10 հունվարի, Կոչնակ Հայաստանի 1919, 18 հոկտեմբերի, 1351, Հայրենիք 1919, 15 հոկտեմբերի, 1919 թ., Հովհաննիսյան 2014, 459, Ованнисян 2007, 281-282, Махмуриян 2018, 264:

¹¹ ՀԱՍ, ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 20-60; Պահակ 1920, 13, 20, 30 հունվարի, Нованнисян 1982, 388, Ованнисян 2007, 281, 286, Հովհաննիսյան 2014, 464-465, Махмуриян 2018, 264-266:

¹² Нованнисян 1982, 465, Ованнисян 2007, 287, Հովհաննիսյան 2014, 465, Махмуриян 2018, 286:

¹³ The Republic of Armenia. A Memorandum... 1919, 1-15.

The Diplomatic Activity of G. Pasdermadjian in November-December 1919: Correspondence with the US Secretary of State R. Lansing

After the submission of the Memorandum by the Armenians, the US authorities did not take any further action to recognize the Republic of Armenia. The State Department and its head, R. Lansing, showed no activity and followed a different course¹⁴. In November-December of 1919 the US Secretary of State was more concerned about the possible deterioration of US-Russian relations. In his letter to Pasdermadjian sent on October 29, 1919, R. Lansing made it clear that any step that could lead to the dismemberment of the former Russian Empire at that time was undesirable for the United States¹⁵.

Proceeding from his substantiation, G. Pasdermadjian, as the plenipotentiary representative of the Republic, began to carry out quite intensive work, informing the US State Department and, in particular, its head R. Lansing about the fateful situation that had once again created for the Armenians. In an official letter to Secretary of State of November 3, 1919, G. Pasdermadjian, referred to the Memorandum of October 28, 1919 on the Armenian Republic and outlined the following additional considerations. First, G. Pasdermadjian noted that the Republic, born out of the ruins of the Russian Empire, was surrounded by enemies, cut off from the civilized world and survived without any help from the friendly great powers. His country was economically ruined, given up to famine and epidemics. However, in spite of all these impediments and thanks to the patriotic and stoical virtues of the people, the Republic was able to continue its existence these seventeen months without any internal trouble. Pasdermadjian stressed "It is worth the while to hear the testimony of American citizens who know the Armenian Government and country during the horrible days when the Armenian peasants, pushed by famine, were obliged to eat human bodies, to satiate their hunger... Any people that could, under these abnormal circumstances, and under apparently unsurmountable difficulties, continue its existence, should be considered as having sufficient vital force and qualities requisite to continue to exist in normal and favorable times, and, if I may be permitted to add, deserves that a helping hand be extended to it to so continue its national existence"¹⁶.

The diplomat wrote in regard to the Lansing's concern "Next to the above, the most important point to be taken into consideration in connection with the recognition of the Armenian Republic is the question or the rights which the Russian state, in the event of its recognition and revival, may claim with regard to the territories now occupied by our Republic"¹⁷.

¹⁴ Կոչնակ Հայաստանի 1919, 18 հոկտեմբերի, Հայրենիք 1919, 15 հոկտեմբերի:

¹⁵ Հովհաննիսյան 2014, 465, Hovannisian 1982, 464, Ованнисян 2007, 286:

¹⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 431, թ. 50-51:

¹⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 431, թ. 51:

Thus, in order to address Lansing's concerns about Russia's interests, Pasdermajian presented several issues for the Secretary's consideration. He emphasized the close and friendly relations that existed at that time between Armenians and anti-Bolshevik Russian organizations and noted that "the Government of General Denikin recognized only the Armenian Republic as de facto government among the newly formed Caucasian Republics"¹⁸. Pasdermajian informed the head of the State Department that the Paris delegation of the Armenian Republic held several interviews with the authorized representatives of royal Russia – members of the Russian Political Conference at Paris, concerning the relations between the Republic of Armenia and future reorganized Russia. The members of the Political Conference stated that they agreed that Russian Armenia be entirely separated from the Russian Empire in order that an independent Armenian State might be formed, comprising the provinces which form the present Armenian Republic and the Armenian vilayets of Turkey and Cilicia¹⁹. They were convinced that "without Russian Armenia the future Armenian State on the southern boundaries of Russia could not exist. On the other hand, the existence of such a Christian State would be in the interests of the future Russia, in order to restrain, any Pan-Turanian movement"²⁰.

As Pasdermajian conveyed, the representatives of the Russian Political Conference "repeated several times that should their consent be asked by the Allies, they are ready to satisfy the desires of the Armenians in forming a united strong Armenian state"²¹. Furthermore, Pasdermajian emphasized that "recently the Russian representatives at Paris informed the Peace Conference that they renounced, in favor of the future Armenian State, those territories of Turkish Armenia, including Trebisond, which, according to the Treaty of 1916, were decided to be given to Russia"²². The Armenian diplomat also mentioned, that from the standpoint of Russian interests they would prefer American protection over the new Armenian State²³.

Based on the current situation and the above circumstances, "also taking into consideration the fact that both the people and the Government of the Great American Republic had a sincere and disinterested desire to extend a helping hand to the small but brave Armenian people in its critical days", as an official representative of Armenia, Pasdermajian appealed as an official representative of Armenia to the US Secretary of State with a request to temporarily recognize

¹⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, զ. 431, թ. 51:

¹⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, զ. 431, թ. 52:

²⁰ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, զ. 431, թ. 53:

²¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, զ. 431, թ. 53:

²² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, զ. 431, թ. 54:

²³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, զ. 431, թ. 53:

the Republic of Armenia as a de facto government over those territories of the Russian Empire²⁴. He requested "with the understanding that the USA and the Allies may, in the future, take the matter under further consideration with legally formed and regularly recognized Russian Government, and, awaiting the decision of the Paris Conference, as regards the annexation to that Republic of those territories of Turkey which for centuries have belonged to the Armenian people by right of its blood and toil"²⁵.

At the end of his letter, the representative of the Armenian government emphasized that they would anxiously await Lansing's response, which would determine the fate of the Republic of Armenia "because it depends on that reply to take the measures which will decide the very existence of the newly formed Armenian State"²⁶.

A week later, on November 10, Pasdermajian sent to the Secretary of State a copy of a telegram, received from the Republic, regarding the acute food situation in Armenia.

Pasdermajian wrote not only to the Secretary of State. He established contacts with many public figures and organizations, petitioned for seed grain, agricultural equipment, clothing and rolling stock²⁷. In mid-October, at the first meeting of the American Committee for Relief in the Near East, in New York, the Armenian problem became the main issue on the agenda. The options for finding a solution to the problem were discussed with the Armenian side and were presented in letters from the Executive committee of the Relief organization to Pasdermajian²⁸.

Thus, the atmosphere in Washington regarding the resolution of Armenia's economic matters looked as if to be in favor of Armenians. This was due to both the Senate hearings and the objective advice and public statements from high-ranking American officials and prominent pro-Armenian figures. On November 11, Pasdermajian impatiently informed the head of the Republican delegation in Paris A. Aharonyan that the US government decided to sell the wheat that Armenians needed²⁹.

Two days later, on November 14, 1919, President W. Wilson wrote to the President of the US Grain Corporation Julius H. Barnes about his awareness of the request of the Yerevan cabinet and, expressing his desire to help the Arme-

²⁴ ՀՍՍ, ֆ. 200, ց. 1, գ. 431, թ. 54:

²⁵ ՀՍՍ, ֆ. 200, ց. 1, գ. 431, թ. 54:

²⁶ ՀՍՍ, ֆ. 200, ց. 1, գ. 431, թ. 54:

²⁷ New York Times 1919, October 5, pt. II, 5, October 12, Կոչնակ Հայաստանի 1919, 25 հոկտեմբերի, 1386-1387, 1 նոյեմբերի, 1403-1404, Հայրենիք 1919, 19 հոկտեմբերի, Ованнисян 2007, 299:

²⁸ US NA, RG. 59, 860J.48/doc. 8, Papers Relating to the Foreign Relations 1934, Vol. II, 821-823, Ованнисян 2007, 299-300.

²⁹ Махмуриян 2018, 176.

nian people and authorized the latter to sell wheat and wheat flour under conditions established by the Grain Corporation³⁰.

As a result of those positive developments, on November 13 Pasdermadjian sent a new letter to R. Lansing, which, in some ways, was more of a demand than a request. Referring to his letter of 10th instant, the representative of RA stated that the matter had come to a point where the very existence of the Armenian people was in jeopardy, and "we, therefore, desire to submit it to you as an eminently humanitarian question, independent of all political or diplomatic considerations"³¹.

Proceeding from the difficult conditions prevailing in the country, Pasdermadjian approached the Secretary of State in his capacity of the official envoy with a bold and open request, representing the actual needs of Armenians. He requested the following:

I. "Food supplies for ten months, beginning with December. We are informed that according to Colonel Haskell the existing supplies will give out in December. After that seven thousand tons of flour will be needed until the new harvest.

II. 53.000 tons of seed to sow in the early spring (wheat, barley and corn) as well as most indispensable agricultural implements to carry out that sowing.

III. Means of transportation and Rolling Stock, so that these articles may be transported from Batoum to Erivan – 1.000 freight cars.

IV. Clothing for 700.000 plundered refugees from Turkey and certain parts of Russia. Most of whom wear today what they had on their backs more than four years ago; also clothing and shoes for thirty thousand troops, most of whom are in rags and barefooted.

V. Pecuniary means for the transportation of the above to Batoum.

VI. An adequate quantity of sugar and milk for children- and of medicine for all.

All the above seem to us as of vital importance"³².

G. Pasdermadjian admitted understanding of the Armenian side that such an important need could not be met by charity organizations and that it was impossible for any Allied European government to provide the necessary assistance. "Our only hope is, therefore, in the United States Government, which alone can save the remnants of our people from starvation"³³. The authorized representative of the Republic gratefully mentioned that it was principally through the 20.000 tons of food stuff loaned to our Republic in May last by the American Food Administration, and through the help of the American Committee for Relief

³⁰ US NA, RG 59, 860J.48/doc.5, Հայրենիք 1919, 29 նոյեմբերի, Ованнисян 2007, 301-302, Махмурян 2018, 273-275:

³¹ ՀԱՄ, ֆ. 200, ց. 1, գ. 431, թ. 56:

³² ՀԱՄ, ֆ. 200, ց. 1, գ. 431, թ. 56-57:

³³ ՀԱՄ, ֆ. 200, ց. 1, գ. 431, թ. 57:

in the Near East, that it was possible for the Armenian people to tide over until now.

The Armenian envoy continued "May we not expect that the noble started by the American Government and people will continue until our people can again stand on their feet? I venture to suggest that if our request meets with your approval, the articles above enumerated might be furnished to us against the bonds of our Republic directly or through loan. In conclusion I take liberty to repeat that we look this whole transaction as having a purely humanitarian character, and that any form of temporary recognition of that de facto Government will not imply that the United States Government is in any way committed as regards its future policy concerning Armenia, Russia or Turkey"³⁴.

G. Pasdermadjian's personal efforts in providing assistance to the Republic have not been in vain. On November 17, Secretary of State R. Lansing, informed the High Commissioner for Transcaucasia, W. Haskell, by special telegram that President Wilson had authorized the Wheat Director and President of the Grain Corporation J. Barnes to sell 35,000 tons of wheat and flour to the Armenian government. The Secretary requested that the High Commissioner inform Yerevan of this decision³⁵.

The Civil mission of the RA in the United States was also notified by the White House and the State Department concerning the supply of flour. H. Kajaznuni and G. Pasdermadjian discussed legal procedures with relevant US authorities. The official correspondence included a letter from Pasdermadjian to President Woodrow Wilson dated November 21, 1919³⁶.

In his turn, Kajaznuni made the Government of the Republic of Armenia know the mentioned above as follows: the United States sold 35,000 tons of flour, and on November 28, the first ship with 8,500 tons sailed from New York to Batum, carrying grain and flour³⁷. According to Kajaznuni, the second steamship with cargo for Armenia was scheduled to leave New York in the first days of December.

However, there were no significant changes in the political landscape either at the end of November or in December. The hearings in the Senate Subcommittee regarding the resolution of J. Sh. Williams did not lead to any further action. In the current situation, the diplomatic representatives of the Republic of Armenia were working on the development of bilateral relations. G. Pasdermadjian, the Plenipotentiary Representative of the Republic of Armenia, was active-

³⁴ ՀՍՍ, ֆ. 200, ց. 1, գ. 431, թ. 58:

³⁵ US NA, RG 59, 860J. 48/5b, Papers Relating... 1934, 824, Махмурян 2018, 175-176.

³⁶ Ованнисян 2007, 302.

³⁷ ՀՍՍ, ֆ. 200, ց. 1, գ. 20, թ. 184-185:

ly involved in these efforts. At that time, he had not yet been granted the status of ambassador, as the United States had not recognized the independence of the Republic of Armenia yet.

The gradual change in the US policy towards Armenia, which was still endured its formation, influenced Pasdermadjian's activities as well, though did not hinder his doings. At the end of December, at the Congress Hall Hotel in Washington, where Pasdermadjian had set up his semi-official diplomatic office, the US Secretary of War Newton Baker gave a reception in honor of the head of the Armenian military mission in the United States, General H. Bagratuni. The Secretary promised to present Armenian petitions to R. Lansing and explained that any action should be approved by the State Department before it could be considered by Congress³⁸.

General Bagratuni's interview with Lansing, which was arranged in a few days thanks to Pasdermadjian's diplomatic efforts, also did not succeed. The Secretary of State upheld the legal position that the United States cannot provide military assistance to a government that has not been yet formally recognized³⁹. Despite the fact that this meeting took place on January 3, 1920, it was already at the end of December that Pasdermadjian had depicted in his report to the government of the Republic of Armenia this official position of the Secretary of State. At the same time, taking as a base new messages from the Prime Minister Khatisian, he prepared a new letter to R. Lansing, which he would convey immediately after Bagratuni's visit. In a letter dated January 7, 1920, the RA envoy requested immediate military assistance and explained its importance⁴⁰. This letter completed the first stage of G. Pasdermadjian's activity as the authorized representative of the Republic of Armenia to the United States at the end of 1919.

Conclusion

During the last months of 1919, the ardent diplomatic efforts in the political sphere initiated by the Plenipotentiary Representative of the Republic of Armenia in the United States G. Pasdermadjian, did not yield significant results. The US government demonstrated restraint in political affairs and did not recognize the newly established Republic of Armenia. Furthermore, it gradually became apparent that the Armenian mandate proposed to the United States had been rejected by American authorities in favor of their willingness to provide only economic and humanitarian assistance. The noted changes, of course, had an impact on Pasdermadjian's political activities, though did not prevent him from taking diplomatic

³⁸ Ованнисян 2007, 285.

³⁹ Ованнисян 2007, 286.

⁴⁰ ЦУ, ф. 200, г. 1, қ. 431, р. 42-43, Махмуриян 2018, 335:

steps. Despite all his diligence, his diplomatic status remained unchanged. G. Pasdermadjian continued to serve as the plenipotentiary representative of Armenia until the end of April 1920, when the US government recognized the Republic of Armenia.

Bibliography

- Ասպարէզ 1919, Ֆրէզնո, 17 հոկտեմբերի, թիւ 584:
- Կոչնակ Հայաստանի 1919, 18 հոկտեմբերի, թիվ 42, էջ 1351, 1353, 1354, 25 հոկտեմբերի, էջ 1386-1387, 1 նոյեմբերի, էջ 1403-1404:
- ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 20, թ. 184-185:
- ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 55-60:
- ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 395, թ. 1-2, 4-5, 7:
- ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 431, թ. 42-43:
- ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 431, թ. 50-58:
- ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 20-60:
- Հայրենիք 1919, Բոստոն, 15 հոկտեմբերի, 19 հոկտեմբերի, 29 նոյեմբերի:
- Հովհաննիսյան Ռ. 2014, Հայաստանի Հանրապետություն, Վերսալից-Լոնդոն 1919-1920, հ. II, Երևան, «Տիգրան Մեծ», 708+8 էջ:
- Ղամբարյան Ա. 2021, Հայաստանի Առաջին Հանրապետության քաղաքացիական առաքելության գործունեությունն ԱՄՆ-ում (1919 թ. վերջ - 1920 թ. սկիզբ), Պատմաբանասիրական հանդես, Երևան, N 3, էջ 134-149:
- Ղամբարյան Ա. 2022, Հայաստանի Առաջին Հանրապետության ռազմական առաքելությունն ԱՄՆ-ում (1919 թ. վերջ - 1920 թ. ամառ), «Регион и мир», գիտավերլուծական հանդես, հատոր ԺԳ, N 6, Երևան, էջ 46-55:
- Ղամբարյան Ա. 2022, Խաղաղության պահպանումը Հայաստանում. լրումներ ԱՄՆ-ի Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովում (27.09.19-10.10.19) աշխատությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 356 էջ:
- Յառաջ 1920, Երևան, 10 հունվարի:
- Պահակ 1920, Բոստոն, 13 հունվարի, թիվ 1, 20 հունվարի, թիվ 3, 30 հունվարի, թիվ 6:
- Вестник архивов Армении 1991, Письма О.М. Качазнуни А.И. Хатисяну, изд. О.С. Баликян, N 3, с. 92-126.
- Махмуриян Г. 1918, Армения в политике США 1917-1923 гг., Ереван, Институт истории НАН РА, 608 с.
- Ованнисян Р. 2007, Международные отношения Республики Армения 1918-1920, Ереван, «Տիգրան Մեծ», 890 с.
- Armenian Review 1980, Vol. 33, N 4, 1981, Vol. 34, N 1, N 2, N 4, Boston.
- Ghambaryan A. 2023, Memorandum on the Recognition of the Republic of Armenia, Submitted by the Special Mission of Armenia to the Government of the United States of America (28 October 1919), «Հայոց պատմության հարցեր», N 2, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., էջ 95-117:
- Hovannisian R.G. 1982, From Versailles to London, 1919-1920, Vol. II, Berkley-Los Angeles-London, 603 p.
- Maintenance of Peace in Armenia. Hearings before Subcommittee of the Committee on Foreign Relations. United States Senate, Sixty-Sixth Congress, First Session on S.J.R., 1919, Washington, 125 p.

New York Times 1919, October 5, pt. II.

Papers Relating to the Foreign Relations of the United States 1919, in 2 Vols., Vol. II, Washington, US GPO, 1934, 913 p.

The Republic of Armenia, A Memorandum on the Recognition of the Government of the Republic of Armenia, Submitted by the Special Mission of the Republic of Armenia to the United States, the Senate of the United States of America, 66 Congress, 1st Session, Senate Document N 151, 1919. Washington, Government Printing House, 15 p.

United States National Archives, Washington D.C.

Record Group 59, 860J.48/doc.5; 5b.

Record Group 59, 860J.48/doc.8.

Record Group 59, 860J.48/doc.11

Record Group 59, 867.00/doc.1007.

Record Group 256, class 867B.00/doc.268.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
Գ. ՊԱՍՏՐՄԱՃՅԱՆԻ (ԱՐՄԵՆ ԳԱՐՈ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՆ-ՈՒՄ
1919 Թ. ՎԵՐՋԻՆ**

Արմենուիի Ղամբարյան

Ամփոփում

1919 թ. հոկտեմբերի սկզբին Հայաստանի Առաջին հանրապետության անդրանիկ վարչապետ Հ. Քաջազնունու գլխավորությամբ հատուկ պատվիրակություն է մեկնում ԱՄՆ: Պատվիրակությունը լիազորված էր ոչ միայն Հայաստանի Խորհրդի անունից դիմելու Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությանը՝ հումանիտար օգնություն հատկացնելու խնդրանքով, այլև քաղաքական խնդիրների լուծումներն ապահովելու իրավունքով: Դրանց մեջ առաջնայինը Հայաստանի Հանրապետության ճանաչման հարցն էր: Այս և քաղաքական այլ հարցերով զբաղվելու համար պատվիրակությանը միանում է Փարիզում ՀՀ պատվիրակության անդամ Գարեգին Պաստրմաճյանը (Արմեն Գարո), որը նշանակվել էր ԱՄՆ-ում ՀՀ լիազոր ներկայացուցիչ:

Գարոն, հանդես գալով բավական ակտիվ դիվանագիտական գործունեությամբ, իր ներդրումն էր ունեցել 1919 թ. վերջին ՀՀ-ի օգտին ԱՄՆ-ում ձեռք բերված հաջողություններում: Ճիշտ է, ԱՄՆ-ն դեռևս չէր ճանաչել Հայաստանի Հանրապետությունը, սակայն տնտեսական, մասնավորապես հումանիտար օգնության առումով որոշակի առաջնթաց էր արձանագրվել:

Բանալի բառեր՝ Հայաստանի Հանրապետություն, ԱՄՆ, Գ. Պաստրմաճյան, Ռ. Լանսինգ, լիազոր ներկայացուցիչ, կառավարություն, պետոդեպարտամենտ:

ДЕЯТЕЛЬНОСТЬ ПОЛНОМОЧНОГО ПРЕДСТАВИТЕЛЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ Г. ПАСТРМАДЖЯНА (АРМЕН ГАРО) В США В КОНЦЕ 1919 ГОДА

Арменуи Гамбарян

Резюме

В начале октября 1919 г в США отбыла специальная делегация во главе с первым премьер-министром Первой Республики Армения О. Качазнуни. Делегация была уполномочена не только обращаться от имени Совета Армении к правительству США за гуманитарной помощью, но и правом обеспечения решения политических проблем. Среди последних приоритетным было признание Республики Армения. Для решения этого и других политических вопросов к делегации присоединяется член делегации РА в Париже Гарегин Пастрмаджян (Армен Гаро), который был назначен полномочным представителем РА в США.

Своей последовательной дипломатической деятельностью Г. Пастрмаджян способствовал успешным действиям США в пользу РА в конце 1919 года. Хотя США к этому времени еще не признали Республику Армения, но определенный прогресс в плане экономической, в частности, гуманитарной помощи был достигнут.

Ключевые слова – Республика Армения, США, Г. Пастрмаджян, Р. Лансинг, полномочный представитель, правительство, Государственный департамент.

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՁԳԱՅԻՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ «ՀՈՐԻՉՈՆ»
ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԷՋԵՐՈՒՄ

Արմեն Կարապետյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4
Էլ. հասցե՝ armenaraqsyanyan@mail.ru
ORCID: 0009-0003-6026-2790

Հոդվածը ներկայացվել է 11.06.2024, գրախոսվել է 19.06.2024, ընդունվել է տպագրության 03.12.2024
DOI: 10.53548/0320-8117-2024.3-61

Ամփոփում

Հայ ազգային հասարակական-քաղաքական կյանքը լավագույնս արտացոլված է արևելահայ հայտնի պարբերականներից մեկի՝ «Հորիզոնի» էջերում: XIX-XX դդ. հայ իրականությունը՝ իր տխուր, անհեռանկար ու տագնապալից դրսևորումներով երևակեց այս լրագիրը ողջ խորությամբ ու ելևէջներով: Թերթի խմբագրակազմն իրատեսական (ոչ ռոմանտիկ կամ երևակայական) վերաբերմունք ցուցաբերեց հայությանը սպառնացող ներքին ու արտաքին մարտահրավերների հանդեպ: Թերթը իր ուշադրության առանցքում էր պահում և՛ արևելահայությանը, և՛ արևմտահայությանը հուզող կենսականորեն կարևոր մտահոգությունները, հարցերն ու խնդիրները:

Երբեք չհեղվելով ճշմարտության սկզբունքներից՝ «Հորիզոնը» փորձեց նոր, թարմ շունչ հաղորդել ազգային կյանքի հոգևոր, բարոյական, տեսական ու մշակութային ընթացքին:

Բանալի բառեր՝ «Հորիզոն» պարբերական, հասարակական-քաղաքական կյանք, ժողովրդական զանգվածներ, ջարդեր և հալածանքներ, Հովհաննես Թումանյան, Աղանա, խմբագրական հոդված:

Ներածություն

XIX-XX դդ. հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական, հոգևոր-բարոյական ու մշակութային կյանքն ու ընդհանուր անցումները լավագույնս արտացոլված է այդ ժամանակաշրջանի հայ պարբերական մամուլի էջերում: Քսաներորդ դարասկզբին Արևելյան Հայաստանում հրատարակվում էին աչքի ընկնող մի քանի պարբերականներ: Դրանցից մեկը «Հորիզոնն» էր, որն ունեցավ նշանավոր խմբագիրներ և աշխատակիցներ: Սույն պարբերականի էջերում արտացոլված է և՛ արևելահայության, և՛ արևմտահայության հասարակական-քաղաքական, տնտեսական, գրական-մշակութային կյանքը: Թերթելով «Հորիզոնի» էջերը՝ ճշգրտությամբ կարելի է վերականգնել այդ ժամանակաշրջանում հայության լայն հատվածներին հուզող մտահոգությունների, անհանգստությունների և տագնապների, հարցերի ու հարցական-

ների այն ներկայանակը, որը լայն հասարակության սրտի տրոփյունն ու շնչառությունն է ի ցույց դրել:

Անկարևոր, երկրորդական կամ ավելորդ ոչինչ չկա այնտեղ: Ամեն մի էջը, յուրաքանչյուր խոսքը, հոդվածն ու ակնարկը բացահայտում են ազգային կյանքի և տարեգրության կարևոր մի դրվագ, մի էպիզոդ, մի շերտ: «Հորիզոնը» անաչառ և աներկյուղ կերպով է ներկայացրել XX դ. հայությանը պատուհասած մարտահրավերներն ու մտահոգությունները, ազգային կյանքի հակասություններն ու ներհակությունները:

Հայ իրականության ճշմարտացի արտացոլումը

1909 թ. սեպտեմբերի 2-ին, կիրակի օրը, Թիֆլիսում լույս տեսավ «Հորիզոն» ազգային, հասարակական, քաղաքական օրաթերթի անդրանիկ համարը: Առաջնորդողում թերթի առաքելության և նպատակների մասին ասված էր, որ այն ասպարեզ է գալիս ժողովրդական լայն խավերի մտավոր հորիզոնը լայնացնելու, նրանց սովորեցնելու, բացատրելու, լուսավորելու վեհ ձգտումներով և մղումներով:

Խմբագրակազմը հայտնում էր, որ ծանր է գործը, և ահռելի՝ պատասխանատվության չափը. «Մենք կոչ կանենք կարճ ուղիով դէպի վե՛ր, դէպի սար բարձրանալու: Այնտեղ, սարի կատարին, փայլում է գիտութեան, լույսի և ճշմարտութեան մաքուր հորիզոնը»¹:

Թերթը լավատեսությամբ էր սկսում իր ուղին, գտնելով, որ առաջիկայում նոր կյանքի հորիզոնն է թևածելու, «դէպի որը յառել է իր հայեացքը և ամբողջ տառապող, վաստակաբեկ ու քրտնաթոր մարդկութիւնը»²:

Սակայն տխրաբեկ, քայքայված և ուժասպառ հայ իրականությունը բուրովին այլ պատկեր էր ներկայացնում: Թերթի հաջորդ համարներում բացվում է արյունաներկ, վշտալից իրականության ճշմարիտ պատկերը: 1909 թ. օգոստոսի 19-ին «Ճշմարտութեան ձայնը» առաջնորդողում թերթն անդրադառնում էր Կիլիկիայի Ադանա քաղաքում կատարված հրեշավոր ոճրագործությանը՝ նշելով, որ «համիդյան արյունկգակաները և սահմանադրական զինվորները համերաշխվեցին և առաջ բերին Ադանայի հայության արյան բաղնիքը»: Բայց դա հերիք չէր: Թուրքական իշխանությունները կատարվածի պատասխանատվության բեռը բարդեցին հայերի վրա: Սակայն եվրոպական մամուլի հետևողական միջամտության և այլ հանգամանքներով պայմանավորված՝ թուրքական կառավարությունը ստիպված էր տեղի տալ և լսել ճշմարտության ձայնը³:

¹ Հորիզոն 1909, թիվ 1:

² Հորիզոն 1909, թիվ 1:

³ Հորիզոն 1909, թիվ 14:

Իսկ մինչ այդ՝ նույն թվականի օգոստոսի 5-ին «Պարտք ունինք տալու» խմբագրականով անդրադառնալով Կիլիկիայում տեղի ունեցած ողբերգական իրադարձություններին՝ պարբերականն ընդգծում է, որ լալահառաչ կոչերը, սրտազեղ աղերսները, շանթալից հրապարակախոսականներն անհետևանք մնացին: Հայ և օտարազգի մամուլի ձայնը ապարդյուն անցավ, ինչպես օդի մեջ դողանջող մի սին հնչյուն:

Ադանան «...իր 20-30 հազար զոհերով կարծես չկարողացավ՝ չենք ասում մարդկության, գոնե հայութեան սիրտը կսկծացնել և նրան ի գործ հրավիրել»⁴: Ըստ այդ խմբագրականում արծարծված դիտարկումների, Ադանայի վերքը «այն վերքերից չէր, որոնք ըստ պատմության կամ օրերի ընթացքում, բուժում են մի կտրուկ անդամահատութեամբ: Նրա բուժումը տարիների գործ է եւ երկար ժամանակի ջանքեր է պահանջում մեզանից»⁵:

«Ազգութիւնների հարցը Թիւրքիայում» հոդվածաշարում քննության են առնվում ազգային փոքրամասնությունների և հպատակ ժողովուրդների իրավունքների ու փոխհարաբերությունների մի շարք հիմնահարցեր՝ առկա մինչև 1908 թ. հեղափոխությունը և դրանից հետո: Թուրքական պետականության վերածննդի համար առաջարկվող ելքը պետական իշխանության ապակենտրոնացումն է. «Նոր չէ դա Թիւրքիայի համար: Վաղուց ի վեր նա ունի Լիբանան, ասորական մանր մելիքութիւններ, այսօր նա ունի արդէն նախկին Կրէտէ, երէկ ունէր ինքնավար Բուլղարիա: ...Ժամանակ է այժմ ըմբռնելու, որ պետք է խելահաս քաղաքական գործիչներն ընդառաջ գնան հասարակական ու պետական այն ձևերին, որոնք, հակառակ իրենց կամքի էլ պիտի իրականանան»⁶:

Դժբախտաբար, վերոնշյալ ուղին չընտրեցին թուրքական նոր իշխանությունները, որոնք հարմար գտան կրկին բնաջնջումի և ցեղասպանության միջոցով լուծել հպատակ ժողովուրդների համակեցության խնդիրները: Թերթը բարձրացնում էր այն խնդիրը, որ ամենևին բարոյական չէ, որ, օրինակ, հինգ միլիոնի հասնող թրքությունը իր տիրապետության ներքո պահի յոթ միլիոն արաբական ազգաբնակչությանը. «Այսօր դա կը յաջողի, որովհետեւ արաբը դեռ կազմակերպւած չէ, բայց վաղը... չէ՞ որ մի օր էլ նա խելքի կը գայ»⁷:

1909 թ. սեպտեմբերի 4-ին «Վաթանը ձեզ կանչում է» հրապարակումը ծանր ու թեթև է անում թուրքահայ գաղթականների վերադարձի խնդիրները, որոնք համիդյան դժնի ժամանակներում ստիպված էին եղել թողնելու իրենց տունը, հողն ու ջուրը և հանգրվանելու Ռուսաստանում և այլ երկրներում:

⁴ Հորիզոն 1909, թիվ 3:

⁵ Հորիզոն 1909, թիվ 3:

⁶ Հորիզոն 1909, թիվ 27:

⁷ Հորիզոն 1909, թիվ 27:

Ըստ թերթի դիտարկումների, երկիր վերադառնալը դարձել է անհրաժեշտություն: «Երկիր վերադառնալ անհրաժեշտ է. սեփական չքատրութիւնը, գաղթականի աղքատութիւնը, կեղտը, սովածութիւնն ու արհամարհված, իրաւազուրկ վիճակը մի-մի խթան են, որոնք նրան հալածում են ցերեկ-գիշեր, որոնք նրան միշտ ասում են - «քալէ՛, քալէ՛ - դէպի հայրենիք, դէպի ծննդավայր»⁸:

Իրատեսական դիրքորոշում երիտթուրքական ռեժիմի հանդէպ

Թերթը թղթակցություններ էր տպագրում՝ ուղարկված Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից: Այսպես, Բաղեշից 1909 թ. հուլիսի 2-ի՝ «Սահմանադրական հալածանքներ» թղթակցության մեջ ասվում էր, որ մխիթարական ոչինչ չկա սահմանադրական կարգի հռչակումից հետո ևս և «դէպի հայերը կրկին նոյն բռնութիւնները, նոյն անարդարութիւնները սովորական ձևով շարունակում են մեր շրջանում շատ քիչ տարբերութեամբ»⁹:

Մեկ այլ՝ Վասպուրականից ուղարկված թղթակցության մեջ նշվում է, որ իրավիճակը գավառներում ավելի լարված ու բարդ է դառնում, երբ մայրաքաղաք Կ. Պոլսում սկսվում են խառնակչություններ սահմանադրական կարգի կողմնակիցների և հակառակորդների միջև: Ի մասնավորի, 1909 թ. մարտի վերջին կայսրության մայրաքաղաքում տեղի ունեցած հայտնի իրադարձությունների ժամանակ Վասպուրականի բնակավայրերում ակտիվացավ հայտնի ավազակապետ Մուսա բեյը, որը «զինած խուլամներով կը շրջէր գաւառներում՝ ահաբեկելով գիւղացոց: Այս բոլորը տեղի կունենային գարնանային աշխատանքի օրերին, երբ վար ու ցանքի ժամանակ էր, և գիւղացիները ստիպած էին փակված մնալ տանը»¹⁰:

«Երկրի վիճակը» խորագրի ներքո ընդգծվում է, որ Թուրքիան հաստատուն ներքին մի քաղաքականություն չունի, որը «հետապնդէր և երկրի կառավարման մէջ մտցնէր որոշ չափով սիստէմ, իրար համապատասխանող կարգեր»¹¹:

Առհասարակ պետք է նշել, որ Թուրքիայի ղեկը ստանձնած ուժի՝ երիտթուրքերի հանդէպ «Հորիզոնի» խմբագրության և նրա հետ աղերսվող շրջանների վերաբերմունքն ու դիրքորոշումը հենց սկզբից եղել է իրատեսական, ռեալ (ո՛չ ռոմանտիկ երանգներով, ինչպէս դա բնորոշ է եղել հայկական մի շարք պարբերականների):

Ընդհանրապէս, թուրք-օսմանյան իրականության խորքերը բացահայտելու առումով, «Հորիզոնի» դիտարկումներն ու վերլուծականները լեցուն էին անչափ ու անթերի ճշմարտությամբ: Նրա հրապարակագիրներն անսխալ

⁸ Հորիզոն 1909, թիվ 28:

⁹ Հորիզոն 1909, թիվ 3:

¹⁰ Հորիզոն 1909, թիվ 5:

¹¹ Հորիզոն 1909, թիվ 23:

կանխատեսում էին ու գուշակում թուրքական իրականության մեջ թաքուն ու բացահայտ ընթացող գործընթացների ուղղություններն ու ուղղվածությունը:

Պարբերականի պատասխանատուները խորապես գիտակցում էին, որ նոր հորջորջվող Թուրքիայում որևէ բան չի փոխվել, մանավանդ ազգային հարցի հետ աղերսվող ոլորտներում: Այսպես, 1910 թ. հունվարի 26-ի առաջնորդողում («Հնձում են, ինչ ցանել են») շրջանառվում է այն տեսակետը, որ Թուրքիայի իշխող ուժի՝ երիտթուրքական ղեկավարների արծարծած ազգայնամոլական մտքերն ու տեսություններն էապես նպաստել են Ադանայի աղետը նախապատրաստելուն. «Կը հասկանայ, վերջապես, սահմանադրական Թիւրքիան, որ ազգայնական բորբոքած կրքերը վար, կործանիչ ղեկավար են աշխարհավարութեան մէջ: Գուցէ ճակատագրի գրքում սահմանաձէ է, որ նոր Թիւրքիան խրատել կարող է միայն պատերազմի դաշտում. Բայց ո՞վ է երաշխաւոր որ այդ դաշտը չի լինի և մի սպանդանոց թիւրքական սահմանադրութեան համար»¹²:

Թերթի էջերում հետզհետե սաստկանում էին տագնապն ու անհանգստությունը արևմտահայերի վտանգված ճակատագրի նկատմամբ նաև սահմանադրական հռչակված կարգերի օրոք. «Մի՞թէ այսպէս պիտի մնայ թիւրքահայի ճակատագիրը մինչև նրա վերջին շունչը: ...մի՞թէ Միթահադեան սահմանադրութիւնն էլ պիտի դառնայ մի նոր 61-րդ յոդաձ»¹³:

Ուշադրությամբ հետևելով ազգային հարցում երիտթուրքերի վարած քաղաքականությանը՝ լրագիրը սթափության կոչ է անում. «Բայց ինչ. երիտասարդ թիւրքերը ինքնավարութիւն, ապակեդրոնացում բառը լսել անգամ չեն ուզում»¹⁴:

1910 թվականին թերթի 27-րդ համարի «Շշուկները» առաջնորդողում վերստին տագնապ է արտահայտվում այն բանի կապակցությամբ, թե իրականում ինչ է կատարվում ասիական Թուրքիայի խորքերում: Սևեռուն անհանգստությամբ շեշտադրվում է այն հանգամանքը, որ կայսրության խորքերում կարող են սկսվել հակասահմանադրական զինված շարժումներ, որոնցից, առաջին հերթին, կտուժեն ու կվնասվեն հայերը: Կիլիկիահայության հետ կատարվածն այլևս կասկած չի թողնում, որ այդպիսին է այս դժբախտ ժողովրդի ճակատագիրը. «Առայժմ մեզ հասնում են դեռ անորոշ շշուկներ... Չարագուշակ է մանաւանդ այն հանգամանքը, որ շշուկները միաժամանակ գալիս են և՛ Տրապիզոնից, և՛ Էրզրումից, և՛ Մալաթիայից, և՛ Մուշից»¹⁵:

¹² Հորիզոն 1910, թիվ 18:

¹³ Հորիզոն 1910, թիվ 15:

¹⁴ Հորիզոն 1909, թիվ 3:

¹⁵ Հորիզոն 1910, թիվ 27:

Անեռուն հայացք արևելահայության կյանքի լուսաբանությանը

Թերթի էջերում ամենայն ուշադրությամբ և աշալրջությամբ արտացոլվում էր նաև արևելահայության կյանքը՝ իր բազմաբնույթ անհանգստություններով, ներքին խռովքով ու տագնապներով:

1911 թ. հունվարի 9-ին «Դեռ վաղ է» վերնագրով նյութը տեղեկացնում էր, որ ազգային կարևորության իրադարձություն է լինելու Սրբ Էջմիածնի նոր գահակալի ընտրությունը:

Եվ ընթերցողներին հետաքրքրում էր, թե ով է պարբերականի գերընտրելի թեկնածուն. «Մեզ թվում է, որ այն ընտրելին, երբ Իզմիրլեանի մահի տպաւորութիւնն այնքան թարմ է մեզ վրայ, վաղաժամ է այդ հարցին որևէ որոշ պատասխան տալը: Ժամանակը ինքը կը հարկադրէ մեզ մեր ընտրելի անունը հրապարակավ յայտնելու»¹⁶: Ըստ պարբերականի, ներկա պահին կարևոր է պարզել զուտ ճշմարտությունը, բանալ հասարակության աչքերը և ցույց տալ այն բոլոր վերքերը, որ հայ կյանքը և հայ հոգին դրել են Էջմիածնական գահի վրա: Ի վերջո, հանգամանքներն այնպես են դասավորվել, որ «...ապագայում Էջմիածնի պետի շահավետ գործունէութեան տեսակէտից ոչ այնքան կաթողիկոսի անհատական յատկութիւններն են գլխաւոր դեր կատարելու, որքան Վեհին շրջապատող մթնոլորտը»¹⁷:

Անշուշտ, հայ իրականությանը բնորոշող է այն դիտարկումը, թե որքան էլ արժանավոր և ընդունակ լինի որևէ կաթողիկոս, միևնույն է, նրա ամենաբարի ու պայծառ ձգտումները չեն կարող իրագործվել, եթե այդ ամենի համար ասպարեզն ու գործելու պայմանները նպաստավոր չեն:

Այդ նույն համարում անվանի գրող և հրապարակագիր Ղազարոս Աղայանը «Ինքնօգնութիւն» փոքրածավալ հրապարակումով կարևոր պատգամ, հորդոր և ուղերձ է հղում պատանի և երիտասարդ հայ սերնդին. «Ինքն իրեն չըպատուողը ուրիշից պատիւ սպասելու իրավունք չունի: ...Մեզ պէս խեղճ ազգերը միայն ինքնօգնութեամբ կարող են զորեղանալ և պահպանել իրանց գոյութիւնը: Դժբախտ ազգերի ամեն մի գիտակից անդամի մէջ շատ զարգացած է լինում ինքնապաշտպանութեան զգացումը: Դրանք դառնում են մի-մի լուսատու ճրագ և լուսաւորում իրանց ազգակիցների առաջադիմութեան ուղին... դէպի ինքնօգնութիւն»¹⁸:

Ղ. Աղայանն ուղղակի խնդրում և հորդորում է կրթվող հայ սերնդին սիրել ու պաշտպանել իրենց ծնող ժողովրդին, իրենց պապերի թողած ավերակները, հայության պատվար Մայր եկեղեցին:

1911 թ. հունվարի 11-ին «Մեծ գործի նախօրեակին» նյութով պարբերականն ազդարարում էր, որ, հայ մեծահարուստ Աթանաս Ժամհարյանի

¹⁶ Հորիզոն 1911, թիվ 4:

¹⁷ Հորիզոն 1911, թիվ 4:

¹⁸ Հորիզոն 1911, թիվ 4:

կտակի համաձայն, Կովկասում գյուղատնտեսական խոշոր դպրոց բացելու ծրագիրը իրատեսական է դառնում, ինչը կարևոր նշանակություն է ունենալու հայ գյուղացիության տնտեսական դրությունը բարվոքելու առումով. «Այժմ, երբ արդեն իրագործում է այդ հոյակապ ձեռնարկությունը, մեր սովորող սերնդի մի խոշոր մասը իրեն կը նվիրի հողին, որի մէջ գտնուում է ժողովրդի փրկությունը»¹⁹:

Թերթն անդրադառնում էր ժողովրդական լայն խավերի շրջանում տարածում ստացած բացասական բարքերի տարածմանը, քննում դրանք ծնող պատճառները և վերացնելու հնարավոր ուղիներն ու տարբերակները: Այսպես, «Փա՛ստ է արդեօք» հրապարակմամբ անդրադարձ է կատարվում հայ գավառական կյանքում զգալիորեն տարածված օղեմոլությունից և դրա ուղեկիցը դարձած խաղամոլությունից ծնվող ու սնվող բարքերին: «Օղին կործանարար ազդեցությունն է արել ու անում է մեր խաւար գաւառներում... սակայն օղու կողքին խաղամոլությունը, այն էլ մի համատարած ախտ՝ այդ նորություն էր»²⁰:

Թերթի խմբագրականներից մեկը տեղական թղթակիցներին հորդորում էր, որ հատուկ ուշադրությամբ շոշափվեն ու արծարծվեն իրենց տարածաշրջանի ընդհանուր և հիմնական կողմերը՝ առանձնացնելով կարևոր եզրահանգումները. «Եւ մեր գաւառները շարունակ մնում են չուսումնասիրած ու մեզ անծանօթ, չնայելով որ ամեն օր համարեա այդ տեղերից պոստը թղթակցութիւններ ու նամակներ է տեղացնում քաղաք»²¹: Օրինակ է բերվում Իգդիր գյուղաքաղաքի շուրջ ստեղծված իրավիճակը. «Իգդիրի կողքին գտնուում է մի ահագին ճահիճ, մոտ 1500 դեսեստին տարածութեամբ, որը բազմաթիւ սերունդների անժամանակ կործանման պատճառ է եղել»²²: Նշվում է, որ եթե այդ ճահիճը մի բանիմաց ժողովրդի կողքին գտնվեր, մի քանի ամսում դրախտի կվերածվեր, բայց թշվառ Իգդիրին այն չի ծառայում որպես բերրի հող, այլև մալարիայի և այլ տարափոխիկ հիվանդությունների բույն է դառնում:

1911 թ. փետրվարի 1-ին թերթի առաջնորդող հոդվածում («Ե՛րբ վերջապէս») անվանի գրող Շիրվանզադեն քննության է առնում գեղեցիկ արվեստների, թատրոնի և գրականության հետևորդների ու երկրպագուների շրջանում լայն տարածում ստացած այնպիսի երևույթ, որպիսին դիլետանտիզմն է: Ըստ նրա՝ դիլետանտներն այն համոզմունքին են, որ գեղեցիկ արվեստների շուրջ ցանկացած ոք կարող է առանց որևէ պատրաստության ոչ միայն դատողություններ անել, այլև դատավճիռներ կայացնել. «Այս

¹⁹ Հորիզոն 1911, թիվ 5:

²⁰ Հորիզոն 1911, թիվ 8:

²¹ Հորիզոն 1911, թիվ 18:

²² Հորիզոն 1911, թիվ 18:

պատճառով այսօր մեր մտաւոր և բարոյական գոյութեան ոչ մի խաւն այնքան չի ապականաւած դիլլետանտիզմ անունը կրող անկոչ հիւրի ներկայութեամբ, որքան արւեստների խաւը, մանաւանդ թատրոնն ու գեղեցիկ գրականութիւնը: Ճշմարտապէս ողբալի է այդ երկու տարրերի բարոյական կացութիւնը հայերի մէջ»²³:

Հայութեան առջև ծառայած նոր մարտահրավերների շուրջ

Թերթի 1911 թ. փետրվարի 4-ի համարում «Գաւառական երեկոյթներ» վերնագրով փոքրիկ ակնարկում Ամենայն հայոց բանաստեղծը՝ Հովհ. Թումանյանը, պատմելով իր անսահման ոգեշնչվածութեան մասին, որ նրան համակել էր Թիֆլիսի ժողովարանում կայացած մշակութային տպավորիչ ձեռնարկի շնորհիվ, նշում է, որ նման ազգագրական ու գեղարվեստական բնույթի հանդեսներով առավել ճանաչելի է դառնում հայ գավառը. «Թող գան իրար ետեւից Արարատը, Շիրակը, Ղարաբաղը, Լոռին, Ջավախքը, Զանգեզուրը, Նուխին, Շամախին, նոյն իսկ Տաճկաստանի գաւառները: Եւ ի՞նչ գեղեցիկ կլինի»²⁴: «Դէպի անդունդ» առաջնորդողում խիստ քննադատություն է հնչում գաղթականական հոգեվիճակ ունեցող և այն արծարծող զանգվածների հասցեին: Նշվում է, որ գաղթականությունը նախ և առաջ հոգեվիճակ է դարձել, և, անկախ երկրում տիրող հանգամանքներից, գաղթել ցանկացողները ձգտում են օրեր առաջ լքել իրենց հայրենի բնօրրանը և հաստատվել հեռավոր Ամերիկայում. «Թիրքիայի սահմանադրութիւնը նույնիսկ չկարողացաւ այդ հոսանքի դէմն առնել, ընդհակառակը, մենք տեսնում ենք, որ սահմանադրութեան հրատարակումից անմիջապէս յետոյ 1909 և 10 թերին ամենից շատ են գաղթել: Թերահաւատութիւնը դէպի իրենց հայրենիքի ապագան անշուշտ մեծ դեր է խաղացել գաղթողների ճակատագրում. այդ թերահաւատութեանը առանձին զարկ տուաւ Ադանայի կոտորածը»²⁵:

Ըստ պարբերականի՝ Ամերիկայի գրավչութեան փայլը այժմ սկսել է հրապուրել նաև ռուսահայ գավառների բնակչութեանը:

Ի դեպ, Ադանայի և ողջ Կիլիկիայի հայութեան ճակատագիրը շարունակ մնում էր պարբերականի ուշադիր հոգածութեան առանցքում:

1911 թ. փետրվարի 9-ին խմբագրական խոսքով և «ազգային անցքեր» ակնարկով «Հորիզոնը» կրկին անդրադառնում էր Կիլիկիայի հայութեան վտանգված ճակատագրին, հուսադրում, որ Թուրքիայի նոր իշխանությունները չեն դառնա արյունակակ Արդուլ Համիդի երկվորյակները. «Համիդին «յաջորդ» լինել չէր նշանակի՝ այն արիւնկակ սուլթանի նման քարոզել

²³ Հորիզոն 1911, թիվ 22:

²⁴ Հորիզոն 1911, թիվ 25

²⁵ Հորիզոն 1911, թիվ 28:

հայերին: Համիդից յետոյ շատ բան լաւացաւ երբեմն դժոխք կոչող երկրամասում: Այդ հանգամանքին գիտակ լինելուցն էր, որ մենք վերապահօրէն նայեցինք Պետերբուրգի հեռ. գործակալութեան տաճ տեղեկութեան վրայ»²⁶:

Իսկ Պետերբուրգի հեռագրական գործակալութեան միջոցով թերթերը լուրեր էին տարածել, թե Ադանայում հայկական նոր ջարդեր են տեղի ունեցել: Բարեբախտաբար, այդ լուրերը իրականութեանը չէին համապատասխանում: Այս անգամ աղետը կանխվել էր: Նույն թվականի ապրիլի 2-ին պարբերականը նորից անդրադառնում է կիլիկիահայության և ողջ արևմտահայության կյանքում ստեղծված իրավիճակին («Հին տենդենց»)՝ նշելով, որ թուրքական դժնի իրականությունը անհնարինության չափ անհնար է վերափոխել. «Սակայն ի՞նչ ենք տեսնում իրականութեան մէջ. Շատերը այն բոլոր գործերից ու մտածումներից, որոնք նախկին ռեժիմի գլխատուր յատկանիշներն էին, այսօր էլ գոյութիւն ունին. - ջարդ, ջարդի սարսափ, հալածանք, իրաւունքների կրճատում, խտրութիւն և այլն, և այլն»²⁷:

Իրավացիորեն ակնարկվում է, որ գավազանի մի հարվածով անհնար է հեղաշրջել դժոխքի վերածված երկրի առօրյա կյանքը, սակայն գոնե այդ հեղաշրջման ու վերափոխումների անկեղծ ցանկության միտումը պիտի շոշափելիորեն տեսանելի լիներ, ինչը որ չկա, չի երևում հորիզոնում:

1912 թ. հունվարի 28-ին «Սկսենք» խմբագրական խոսքը վերաբերում է հայ հասարակության համար հայոց տպագրութեան 400-ամյակի ոգեկոչումն ու տոնախմբությունը կազմակերպելուն: Նշվում է, որ սույն հարցը բարձրաձայնել է Թիֆլիսի հրատարակչական ընկերությունը: Ուրեմն, նախաձեռնությունը լրջորեն պետք է մտահոգի հայ հասարակութանը. «Թող քննեն առաջարկութիւններ, թող մշակի ծրագիր, թէ հայ ժողովուրդը, ի՞նչ պիտի անէ, որպէսզի ինքնաճանաչ մի ժողովրդի նման յիշատակէ իր կուլտուրական կեանքի մեծագույն երեսօյրը»²⁸:

Պարբերականը մեծ ոգևորությամբ կոչ է անում միահամուռ, հավաքական ուժերով գրատպութեան հոբելյանն ընդհանրական և համազգային դարձնել: Հետագայում թերթի էջերում մշտապես անդրադարձ էր լինում սույն հոբելյանի ոգեկոչման կարևորութեանն ու անհրաժեշտութեանը:

Այսպէս, «Յիշատակների նշանակությունը» ակնարկում ընդգծվում է, թե մի ազգ, որը որքան հարուստ է իր անցյալի նշանավոր գործերով ու դեմքերով, այնքան հաճախ առիթ պիտի ունենա ոգեկոչելու հիշատակութեան տոները: Զուգահեռաբար մատնանշվում է ռուսական իրականությունը, երբ այնտեղ տարի չի լինում առանց խոշոր հոբելյանական հանդիսությունների:

²⁶ Հորիզոն 1911, թիվ 29:

²⁷ Հորիզոն 1911, թիվ 70:

²⁸ Հորիզոն 1912, թիվ 19:

Ուրեմն, հայ հասարակությունը ևս պարտավոր է մշտապես ուշադիր լինել իր անցյալի, իր երախտավոր գործիչների նկատմամբ. «Մի ազգ կարող է տոկուն և գործունեայ լինել, երբ նա իր միջից է որոնում ստեղծագործ ինքնություն ոյժ: Իսկ այսպիսի մի ոյժ կարող է կենդանացնող լինել միայն այն դեպքում, երբ ազգի կատարած կուլտուրական աշխատանքը չէ կորչում յետագայ սերունդների համար, չէ մոռացում, այլ, ընդհակառակն, գնահատում է արժանատրապէս, մեծարում է գիտակցաբար»²⁹:

1912 թ. ընթացքում «Հորիզոն» իր էջերում ավելի ու ավելի մեծ ուշադրություն էր դարձնում օսմանյան Թուրքիայում ընթացող քաղաքական գործընթացներին: «Վերակազմութեան նախօրյակին» (1912 թ. փետրվարի 28) հոդվածը տեղեկացնում էր, որ այդ երկրում պառլամենտական նոր ընտրությունների կապակցությամբ սկսվել է քաղաքական եռուն գործընթացների մի շրջան. «Կարելի է կարծել, թէ այստեղ, մանաւանդ Բօսֆօրի ափերում, առեօրեայ կեանքը առժամապէս մոռացված է, և ամեն ինչ տեղի է տւել պառլամենտական պայքարին»³⁰:

Ուշադիր հետևելով թուրքական իրականության մեջ ընթացող զարգացումներին՝ թերթը նշում է, որ այնպիսի բացասական, անմիտ երևույթներ են արձանագրվում օսմանների երկրում, որ բանը հասնում է զավեշտի: Օրինակ, սուլթանական նոր «իրադէտով սահմանում են պատիժներ այն մարդկանց համար, որոնք յանդգնութիւն կունենան այսպէս չապրելու, ինչպես կանոնադրել է իսլամ կրօնը»³¹:

1912 թ. մարտի 21-ի առաջնորդողում թերթը նշում է, որ Թուրքիայի հայության գլխավերևից չի վերանում սպառնացող սուրը: Ակնարկվում է Կիլիկիայի հայությանը սպառնացող վտանգի մասին: Եվ ինչպե՞ս հանգիստ մնա մի ժողովուրդ, որի գլխին մշտապես կախված է սուրը. «Եւ ո՞վ պէտք է հանգստացնէ նրան, կառավարութիւնը: Բայց այդ կառավարութիւնը Պօլսում է, որ ռէվէրանսներ է անում հայերին և յատկապէս նրանց, որոնք կարող են պառլամենտական աթոռների տիրանալ: *Իսկ զաւանտներում կառավարութեան պաշտօնեաները իրանք են ահաբեկում տարածում, իրենք են ուզում առաջացնել կոտորածներ*»³² (ընդգծումը իմն է - Ա.Կ.):

1912 թ. ապրիլի 10-ին «Թուրքական ճգնաժամը» խորագրով հրապարակումը ազդարարում էր, որ թուրք-իտալական պատերազմը հանկարծակի ընդունել է քաղաքական լուրջ ճգնաժամի կերպարանք: Միջազգային լրատվամիջոցները հայտնում էին, որ իտալական նավատորմը ռմբակոծում է Դարդանելլը: Տերությունները անչափ լարված հետևում են Կ. Պոլսի շուրջ ընթացող զարգացումներին, քանզի՝ «եթէ երկրագնդի վրայ կայ մի կէտ,

²⁹ Հորիզոն 1912, թիվ 23:

³⁰ Հորիզոն 1912, թիվ 42:

³¹ Հորիզոն 1912, թիվ 56:

³² Հորիզոն 1912, թիվ 60:

որին ամենքը նայում են նախանձով, բայց որ նախանձողներից ոչ մեկին չպետք է պատկանէ, դա Կ. Պոլիսն է»³³:

Եվ սույն իրականությունը հաստատուն է մի քանի դար շարունակ, ու Բոսֆորի գեղանի ափերին տիրացած թուրքը շատ լավ հասկանում է դա և վստահ է, որ «իրան Կ. Պոլսում լուրջ կերպով անհանգստացնող չի լինի»³⁴:

1912 թ. մայիսի 12-ին թերթը գրում էր, որ Կ. Պոլսի հայերը անասելի հիասթափության մեջ են օսմանյան պառլամենտի ընտրությունների արդյունքներից. «Ոչ ոք հայերի չէ յաղթանակել: Յաղթանակողը եղել է միայն ժէօն-թիւրք կուսակցութիւնը:... այսօր միայն մեր գանգատաւորները տեսնում են որ օսմանեան պարլամենտը իսկապէս ուրիշ բան չէ, բայց եթէ ժէօնթիւրքերի մի կլուք»³⁵:

Իսկ երիտթուրքերի հաղթանակը եղել է բացառապէս համատարած կեղծիքների, ճնշումների ու բռնությունների հետևանքով: Եվ երիտթուրքական իշխանությունը նույնքան միապետական է, որքան սուլթան Համիդինը. «Ուրի՛շ ինչ էիք ուզում որ լինի. Ադանան արդեն ահռելի նախազգուշացում էր: Հիմա եք գանգատում»³⁶:

Եզրակացություններ

Այսպիսով, ինչպես ակներև է շարադրանքից, «Հորիզոն» պարբերականի էջերում, հնարավորին չափ լայն կերպով արտացոլվել են XX դարասկզբին հայ հանրությանը հուզող հասարակական և համազգային մտահոգություններն ու տագնապները: Թերթն արձանագրում էր հասարակական և համազգային հնչեղության երևույթները, նշում դրանք դարմանելու և շտկելու ուղիները: Պարբերականը ոչ միայն արձանագրում էր հասարակական տրամադրություններն ու տրամադրվածությունը, այլև ինքն էր շատ հաճախ փորձում ձևավորել հասարակական կարծիքն ու տրամադրությունները:

Օգտագործված գրականություն

Հորիզոն 1909, թիվ 1:

Հորիզոն 1909, թիվ 3:

Հորիզոն 1909, թիվ 5:

Հորիզոն 1909, թիվ 14:

Հորիզոն 1909, թիվ 23:

Հորիզոն 1909, թիվ 27:

Հորիզոն 1909, թիվ 28:

Հորիզոն 1910, թիվ 15:

³³ Հորիզոն 1912, թիվ 72:

³⁴ Հորիզոն 1912, թիվ 72:

³⁵ Հորիզոն 1912, թիվ 99:

³⁶ Հորիզոն 1912, թիվ 99:

Հորիզոն 1910, թիվ 18:
Հորիզոն 1910, թիվ 27:
Հորիզոն 1911, թիվ 4:
Հորիզոն 1911, թիվ 5:
Հորիզոն 1911, թիվ 8:
Հորիզոն 1911, թիվ 18:
Հորիզոն 1911, թիվ 22:
Հորիզոն 1911, թիվ 25:
Հորիզոն 1911, թիվ 28:
Հորիզոն 1911, թիվ 29:
Հորիզոն 1911, թիվ 70:
Հորիզոն 1912, թիվ 19:
Հորիզոն 1912, թիվ 23:
Հորիզոն 1912, թիվ 42:
Հորիզոն 1912, թիվ 56:
Հորիզոն 1912, թիվ 60:
Հորիզոն 1912, թիվ 72:
Հորիզոն 1912, թիվ 99:

ОТРАЖЕНИЕ ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКИХ ОБЩЕНАЦИОНАЛЬНЫХ ПРОБЛЕМ НА СТРАНИЦАХ ПЕРИОДИЧЕСКОГО ИЗДАНИЯ «ГОРИЗОНТ»

Армен Карапетян

Резюме

Армянская национальная и общественно-политическая жизнь нашла отражение на страницах одного из известных восточноармянских периодических изданий «Горизонт». Редакция газеты объективно оценивала внутренние и внешние вызовы, угрожающие Армении. В центре внимания газеты находились насущные проблемы восточных и западных армян. Своими актуальными публикациями газета способствовала развитию общественно-культурной жизни и пробуждению национального духа и самосознания.

Ключевые слова – «Горизонт», общественно-политическая жизнь, демократические массы, погромы и гонения, Ованес Туманян, Адана, редакционная статья.

**THE REFLECTION OF PUBLIC AND NATIONWIDE PROBLEMS ON THE PAGES OF
"HORIZON" PERIODICAL**

Armen Karapetyan

Abstract

The breathing of the Armenian national social and political life is best reflected on the pages of "Horizon", one of the famous East Armenian periodicals, where the sad, vague, hopeless and alarming reality of Armenia was vividly imagined with depth. The editorial staff of the newspaper showed a realistic, non-romantic or imaginary attitude towards the internal and external challenges threatening Armenia. The newspaper focused on the vital concerns, questions and doubts of Eastern and Western Armenians. Never deviating from the demand and principles of truth, "Horizon" tried to breathe new life into the spiritual, moral, theoretical and cultural process of national life.

Key words – "Horizon" newspaper, public political life, democratic masses, pogroms and persecutions, Hovhannes Tumanyan, Adana, editorial, article.

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ Կ. ՊՈԼՍԻ «ԱԶԱՏԱՄԱՐՏ» ԵՎ «ԺԱՄԱՆԱԿ» ԹԵՐԹԵՐՈՒՄ (1909-1911 ԹԹ.)

Մարիամ Հովսեփյան

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՀՀ, Երևան, Մարշալ Բաղդամյան 24/4

Էլ. հասցե՝ mariamhovsepian@mail.ru

ORCID: 0009-0005-9696-4246

Հոդվածը ներկայացվել է 08.06.2024, գրախոսվել է 19.06.2024, ընդունվել է տպագրության 03.12.2024

DOI: 10.53548/0320-8117-2024.3-74

Ամփոփում

«Ազատամարտ» և «Ժամանակ» օրաթերթերի հրապարակումները հողային հարցի վերաբերյալ օբյեկտիվ ու անաչառ էին: Հոդվածներում առկա փաստերը ստիպում էին կառավարությանը դատական գործեր հարուցել: Ներկայացնում էին հողային հարցի վերաբերյալ հայ և թուրք հասարակական շրջանակների տեսակետները: Ըստ հայերի՝ տարբեր մեթոդներով իրենցից խլվել էին հողատարածքներ, և անհրաժեշտ էր հատուկ հայերի համար գտնել լուծումներ: Թուրքական կողմը պաշտպանում էր հայերի հողերը սեփականացրած քուրդ և թուրք բեկերի իրավունքները: Իշխանությունների կարծիքով՝ հողային հարց ունեին նաև քուրդ և թուրք գյուղացիները. պետությունը պետք է բոլորի համար մեկ լուծում գտներ:

Բանալի բառեր՝ հողային հարց, Արևմտյան Հայաստան, «Ազատամարտ» օրաթերթ, «Ժամանակ» օրաթերթ, Հայկական հարց, արտագաղթ, ունեզրկում:

Ներածություն

Պետականության կորուստը և հատկապես թուրքական տիրապետության ներքո հայտնվելը հայության համար ազգային դիմագիծն ու ինքնությունը, կրթամշակութային արժեքները պահելուն ուղղված չհայտարարված դարավոր պայքարի վերաձվեցին: Թերություններով, զիջումներով, կորուստներով ուղեկցվող այդ գործընթացը դարձավ ապրելակերպ մի կայսրության սահմաններում, որտեղ պետական հատուկ քաղաքականություն էր մշակված ենթակա ժողովուրդների ուժացման, մահմեդականացման, անհրաժեշտության դեպքում՝ նաև ոչնչացման նպատակով¹:

Արևմտահայությունը թուրքական իշխանությունների որդեգրած այդ մարտավարության կիզակետում էր հայտնվել առաջին հերթին իր բնակավայրերի տեղադրության կամ գտնվելու վայրի հանգամանքով: Արևմտյան Հայաստանի գավառներն Օսմանյան կայսրության սրտում էին, իսկ միջազգային ասպարեզում 1878 թվականին Հայկական հարցի ի հայտ գալուց և թուրքական լծից բալկանյան ժողովուրդների ազատագրումից հետո առավել-

¹ Հայոց պատմություն հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը 2000, 163:

լապես սրվել էին հայերի գոյապահպանական խնդիրները: Մինչև դա էլ քրիստոնյաները, այդ թվում՝ հայերը, մահմեդական ազգաբնակչության հետ համեմատած, հավասար իրավունքներ չունեին: Նրանք համարվում էին կարծես թե միայն հարկեր վճարողներ՝ ենթարկվելով պարբերական դարձած բռնությունների, ունեցվածքի թալանի հարևան քրդերի, թուրքերի և մահմեդական այլ ազգությունների կողմից: Ստեղծված պայմանները հազարավոր հայերի ստիպում էին՝

- մենակ կամ ընտանիքի անդամների հետ արտագաղթել,
- չնչին գումարով վաճառել կամ գրավադրել սեփական հողակտորները քուրդ բեկերին կամ պետական բանկերին՝ կուտակված պարտքերը մարելու ակնկալիքով,
- կրոնափոխվել և հրաժարվել ազգային ինքնությունից ու պատկանելությունից:

Այս ամենի հետևանքով արևմտահայությունն աստիճանաբար դարձել էր հիմնականում հողազուրկ կամ ապրում էր որպես վարձու աշխատող իր ապուպայերի հողում: Հիշյալ հարցերի մասին կան գիտական ուսումնասիրություններ, մենագրություններ ու աշխատություններ: Մեր այս հոդվածի ուսումնասիրության շրջանակում կփորձենք ի մի բերել 1908 թվական հուլիսի 10-ին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած հեղաշրջումից հետո Կ. Պոլսում հրատարակված հայկական բարձր վարկանիշ և հակընդդեմ տեսակետներ ունեցած օրաթերթերի մոտեցումները հողային հարցի վերաբերյալ, քանզի դրանք ձևավորվել էին հասարակության տարբեր շերտերի տրամադրություններից և ակնկալիքներից: Թվարկենք այդ մոտեցումներն ամփոփող մի քանի հարցադրում.

- արևմտահայերը գիտակցո՞ւմ էին հողային հարցի պատճառներն ու հետևանքները.
- հողային հարցն օրինական ճանապարհով կամ դատարանների միջոցով հնարավո՞ր էր լուծել Օսմանյան կայսրությունում.
- դատարան դիմելու համար հայ գյուղացիներն ունեի՞ն համապատասխան փաստաթղթեր.
- հայերի հողերը յուրացրած քուրդ կամ թուրք բեկերը չունեի՞ն այդ հողակտորների սեփականատերերը լինելու վկայականներ.
- հայերի հողերի յուրացմանը նպաստած պետական համակարգը կկայացնե՞ր արդարացի որոշումներ և հողային հարցին համակարգված լուծում կտա՞ր.
- իրականության հետ առերեսում կա՞ր արևմտահայերի շրջանում:

«Ազատամարտ» և «Ժամանակ» օրաթերթերի մոտեցումները հողային հարցում

«Ազատամարտ» և «Ժամանակ» օրաթերթերը հաճախ էին անդրադառնում հողային հարցին:

- «Ազատամարտը» շաբաթը մի քանի անգամ էր գրում հայերից արվող հողագրավումների, դրանց առնչվող հայ-քրդական՝ մեծավ մասամբ հայերի սպանություններով ավարտվող վեճերի, դատական քաջքուկների, այդ ոլորտում պետական ապարատի անգործության մասին:

- «Ժամանակը» երկու-երեք շաբաթը մեկ էր անդրադառնում հողային հարցին:

- «Ազատամարտը» թեման լուսաբանում էր տարբեր ժանրերով՝ լուր, թղթակցություն, ռեպորտաժ, վերլուծական հոդված, հարցազրույց, խմբագրական հոդված:

- «Ժամանակը» հիմնականում վերլուծականների, երբեմն էլ կարճ լուրերի միջոցով էր այդ թեման ներկայացնում ընթերցողներին:

- «Ազատամարտն» ու «Ժամանակը» պետական քաղաքականության հետևանք էին համարում արևմտահայության հողագրկման և դրան հաջորդող հայերի արտագաղթի երևույթները, որոնք անդառնալի էին և նպաստում էին իրենց բուն հայրենիքից հայերի հեռանալուն:

- Ի տարբերություն չեզոք պարբերական «Ժամանակի»՝ ՀՅԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթ «Ազատամարտն» արտահայտում էր նաև կուսակցության տեսակետները հողային հարցում, որոնք սկզբնապես (1909-1910 թթ.) պարունակում էին խնդրի լուծման որոշ հույսեր երիտթուրքերի խոստացած ազգերի իրավահավասարության շրջանակում, իսկ հետագա տարիներին արդեն հակառակն էին պնդում:

- «Ազատամարտն» ավելի շատ հակված էր հողային հարցի լուծման հետևյալ տարբերակին. կարելի էր դիմել դատարան և շահել, եթե հայ գյուղացին ձեռքին ունենար իր հողի սեփականության վկայականը:

Այս երկու օրաթերթերի հրապարակումները հավաստում էին, որ Օսմանյան կայսրությունում 1908 թվականի հուլիսի 10-ին տեղի ունեցած հեղաշրջումից հետո արևմտահայությունն սկսել էր հավատալ, թե նախկին հայահալած քաղաքականությանը վերջ էր տրվելու, թե լսելի էր լինելու քուրդ և թուրք բեկերի կողմից թալանվող ու հարստահարվող հայ գյուղացիների բողոքի ձայնը: «Ազատամարտում» բազմաթիվ ռեպորտաժներ ու լուրեր կային արևմտահայ այս կամ այն գյուղից, երբ հերթական հողագրավումից հետո ողջ գյուղը կամ մի քանի գյուղերի բնակիչներ գնում էին, ասենք, Վան կամ Մուշ և խնդրագրով Կ. Պոլսի հայոց առաջնորդարանից պահանջում դիմել կառավարություն, որ արդար լուծում տար խնդրին: Բերենք օրինակներ: «Ազատամարտը» խմբագրականներից մեկում հիշատակում էր Խոյթի շրջանում քրդերի ոճրագործությունները հայերի նկատմամբ, ինչպես նաև

հողային վեճի ժամանակ մի քանի հայերի՝ քրդերի կողմից կյանքից զրկվելու փաստը²: «Այս պահուս Խոյթի ամբողջ շրջանը սարսափի և ահուդողի մեջ է: Երկրագործ ժողովուրդը, թողած դաշտային աշխատութիւնները, թողած հունձքն ու կալը, խուճապի մատնուած, լեցուած է Մուշի և Պիթլիսի դաշտերը»³, - կարդում ենք թերթում: Շատախցիների պայքարն էլ էր համառ: Երբ 1909-1911 թվականներին մայրաքաղաք ուղարկված նրանց բողոքագրերը, անհիմն համարվելով, ոչ մի դրական պատասխան չեն ստանում, հայ գյուղացիները մեծ բազմությամբ 1911 թվականի գարնանը գնում են Շատախի կենտրոն Թաղ գյուղ, այնտեղ բողոքի ակցիա են անում, և այդ ամենի հետևանքով ի վերջո 1913 թվականին կառավարությունը որոշում է պատժել նրանց հարստահարիչ քուրդ Շաքիր աղային⁴:

Հայ գյուղացիների բողոքներն իրավացի էին բազմաթիվ պատճառներով, թեև հազվադեպ էին լուծումները լինում հոգուտ նրանց: Պատճառաբանությունը հիմնականում այն էր, որ դիմումատու հայը վաճառել էր հողը ինչ-որ քուրդ բեկի կամ որևէ հարուստ թուրքի, ուստի իրավունք չունեի վերջինների դեմ հայցով հանդես գալու: Մեկ այլ հանգամանք նույնպես շահարկվում էր. հայ գյուղացին պարտքով գումար վերցնելու դիմաց քուրդ կամ թուրք բեկին վարձակալության էր տվել իր հողը և չէր կարողացել գումարը վերադարձնել ու հողն էր զիջել՝ պարտքի փոխարեն: Թուրքական դատարաններում հրաշալի գիտեին, որ իրականում հայ գյուղացին ճարահատյալ էր ստորագրել հողի առք ու վաճառքի փաստաթղթի տակ, որը դարձել էր հաղթաթուղթ պետական կառույցների ձեռքին՝ արևմտահայությանը իրավատիրությունից զրկելու և խորամանկորեն, մտահղացված քայլերի միջոցով Արևմտյան Հայաստանից դուրս մղելու համար:

Հայկական բնակավայրերում, տեղաբնիկների արտագաղթին զուգահեռ, իշխանությունները մշտապես բերում-լցնում էին Եվրոպայից փախած մահմեդական վերաբնակիչների, որոնք մեկ գիշերվա ընթացքում անմիջապես իրենց համար կացարաններ էին պատրաստում, հետագայում նաև տեղավորվում էին գյուղերից հեռացած հայերի տներում՝ յուրացնելով ունեցվածքն ու հողերը⁵: Օրինակ՝ «Ժամանակ» օրաթերթում տպագրված տեղեկագրերից մեկում ներկայացվում էր, թե իշխանություններն ինչպես էին Բալկաններից եկած մուսուլման փախստական գաղթականներին տեղավորել փաստաթղթերով Արմաշի վանքին պատկանող հողերում ու անտառներում, որտեղ նրանք արագորեն տներ էին շինել, արտեր էին մշակել և փորձել էին յուրացնել այդ ամենը⁶: Վանքի ներկայացրած բողոքն սկզբում

² Ազատամարտ 1911, թիվ 601 («Վեճին արմատական լուծում է հարկավոր»):

³ Ազատամարտ 1911, թիվ 601 («Վեճին արմատական լուծում է հարկավոր»):

⁴ Հայ ժողովրդի պատմություն 1981, 508:

⁵ Հայոց պատմություն 2015, 39:

⁶ Ժամանակ 1910, թիվ 514 («Արմաշի հողային խնդիրը»):

պետական քննիչներն ապօրինի էին համարել, բայց պատրիարքարանի խնդրանքով Հակոբ Համամջանի կազմած 15 էջից բաղկացած տեղեկագրում 1910 թվականին կարողացել էին ապացուցել, որ ունեին այդ հողերի սեփականության իրավունք: Թերթը, սակայն, նշում էր, որ դա հարցին լուծում չէր տալիս, քանի որ պատրիարքը դեռ պետք է խնդրագրով դիմեր բարձր իշխանություններին, որ այդ հողատարածքի տիրապետման համար Արմաշի վանքին չպարտադրեին վճարել մի քանի հազար ոսկու չափով հարկ⁷:

«Ազատամարտի» ու «Ժամանակի» խմբագրակազմերը քաջատեղյակ էին հողային հարցի պատմությանը: Բավական է հիշատակել, որ դեռևս սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդի օրոք հայ գյուղացիներից բռնազավթել էին 26.185 կտոր վարելահող, 2501 տուն, 1190 այգի, 1066 շինություն, 460 մարգագետին, տասնյակ վանքեր ու եկեղեցիներ⁸: Ագրարային պետական այս քաղաքականությունը շարունակվեց իթաիհատական և իթիլաֆական իշխանությունների տարիներին ևս: Այս կապակցությամբ «Ազատամարտը» գրեց, որ թուրքական իշխանությունները հիմնվում են նախ՝ այն հանգամանքի վրա, որ հողային հարցը դիտարկվում է համապետական տնտեսական բարեփոխումների տիրույթում և ոչ թե որպես միայն հայերի համար առանձնացված խնդիր, ապա՝ դատարանների կայացրած որոշումների վրա, որոնք էլ վճիռներ կայացնելիս քրդերի կամ թուրքերի ներկայացրած հողային սեփականության վկայագրերն էին հիմք ընդունում: Արևմտահայության համար նման մոտեցումը անընդունելի էր, քանզի տվյալ պարագայում հայ գյուղացին իր օգտին որևէ լուծում չէր կարող ստանալ:

Պետական համակարգը վաղօրոք էր այդ ունեզրկման ծրագիրը մտահղացել ու գործադրել: Այն շարունակվեց ընդհուպ հայերի գրեթե ամբողջական դուրսմղումը Արևմտյան Հայաստանից: Մեծ եղեռնից հետո Թուրքիայի Հանրապետությունում ընդունված մի շարք օրենքներով կոտորածներից փրկված հայերին արգելվել էր վերադառնալ իրենց բնօրրան հայրենիք: Ողջ մնացածները (հիմնականում կանայք, աղջիկներ, երեխաներ) բռնի իսլամացվել, թրքացվել կամ քրդացվել էին: Հողային հարցը, արևմտահայությունից յուրացված ունեցվածքի և գույքի վերադարձի կամ դրանց արժեքի փոխհատուցման պահանջի հետ, հոդս էր ցնդել: Հետագա երկարատև տասնամյակների ընթացքում հայ ժողովուրդը սկսում է պահանջատիրական պայքար՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դրա հետևանքների վերացման նպատակով: Այն շարունակվում է առ այսօր, թեև առավելապես հայկական սփյուռքի կառույցների ջանքերով: Հայանպաստ որոշումների հասնելու համար թերևս կարևոր է գիտակցել, որ Հայաստան պետութ-

⁷ Ժամանակ 1910, թիվ 514 («Արմաշի հողային խնդիր»):

⁸ Հայ ժողովրդի պատմություն 1981, 499:

յունը պետք է զբաղվի այդ խնդիրներով, իսկ դրա համար այն պետք է հզորանա, ունենա դիվանագիտական աշխատանքում հմտացած մասնագետների բույլ, կարողանա օգտվել միջազգային հարմար իրավիճակներից, որ Հայկական հարցը համապարփակ արծարծվի և լուծում ստանա միջազգային կոնվենցիաների ու փաստաթղթերի հիման վրա:

Թվում է, թե անիրականանալի է այս ամենը հողային հարցի առումով: Չէ՞ որ անգամ մինչև Մեծ եղեռնը արևմտահայերից շատերը չունեին հողերի սեփականության վկայագրեր, իսկ ունեցողների մեծ մասը բռնագաղթելիս չկարողացավ իր հետ վերցնել: Գերդաստաններով կամ ընտանիքներով սպանված հայերի ունեցվածքի հարցն էլ Թուրքիայում պետականորեն փակվել է: Բազմաթիվ նրբություններ կան այստեղ, և արևմտահայերի ժառանգների համար հողային հարցը կապվում է նրանց նախնիներից խլված ունեցվածքի վերադարձի կամ դրա գումարային փոխհատուցման հետ: Բացի այդ, հողային հարցը ցեղասպանությունից հետո կորցրել է իր անհատական բնույթը՝ վերածվելով համահայկականի ու համազգայինի: Այն այդպիսին գրեթե դառնում էր 1913-1914 թվականներին, երբ արևմտահայերն աստիճանաբար սկսել էին գիտակցել, որ անհատապես պարտվում են դատարաններում, և իրենց հողային հարցերով միաժամանակ պետք է զբաղվեն թե՛ օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորները, թե՛ հայկական կուսակցությունները, թե՛ Կ. Պոլսի արևմտահայոց պատրիարքարանը: Հունի մեջ ընկնող այս արդարացի իրավական գործընթացը, սակայն, մնաց կիսատ՝ ավանդվելով հայոց հաջորդ սերունդներին: Հողային թնջուկի շարունակականությունն ապահովելուն, անկասկած, կօզնեն նաև ժամանակի արևմտահայ մամուլում առկա հազարավոր վավերագիր փաստերն ու փաստաթղթերը, որոնց միջոցով կարելի է կազմել անգամ թղթածրարներ՝ դրանք ընդգրկելով ապագայում թուրքական իշխանություններին ներկայացվելիք պահանջատիրական հայցադիմումների մեջ: Այս տեսանկյունից կարևոր են մասնավորապես Օսմանյան կայսրության մայրաքաղաքում 1909-1915 թվականներին լույս տեսած «Ազատամարտ»⁹ և «Ժամանակ»¹⁰ օրաթերթերի հրապարակումները հողային հարցի վերաբերյալ, որոնք օբյեկտիվ են ու անաչառ: Երկու պարբերականի աշխատակիցները կարողացել են զերծ մնալ սուբյեկտիվ գնահատականներից, որն այն օրերի համար բավական դժվար էր, քանի որ նրանք գրեթե բոլորը գյուղերում, ըստ երևույթին, ունեցել են հողային խնդրին բախվող հարազատներ: Օբյեկտիվ լինելուն կարող էր խոչընդոտել հատկապես պետական խստացված գրաքննությունը: Նշենք, որ նաև այս թերթերի հոդվածների, վերլուծա-

⁹ «Ազատամարտը» ՀՅԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթն էր: Լույս է տեսել Կ. Պոլսում 1909-1915 թվականներին:

¹⁰ «Ժամանակը» չեզոք պարբերական էր: Հրատարակվում է Կ. Պոլսում (այժմ՝ Ստամբուլ) 1908 թվականից առ այսօր:

կանների, լուրերի և ռեպորտաժների պարունակած հարյուրավոր փաստերի ճնշման տակ էին կառավարական օղակները հաճախ տեղի տվել կամ դատական գործեր հարուցել: «Ազատամարտն» անգամ ունեցել է թուրքերենով բաժին, որտեղ ներկայացնում էր մտահոգիչ դեպքեր ու մերժելի իրողություններ երկրի տարբեր ոլորտներից, որոնց շարքում հողային-տնտեսական հիմնախնդիրներն առաջնային էին¹¹:

«Ազատամարտի» և «Ժամանակի» լուսաբանումները կոնկրետ օրինակներով

«Ազատամարտը» հողային հարցին անդրադարձել էր «Գավառային կյանք», «Հայկական կյանք», «Խաբրիկներ երկրեն» խորագրերի տակ և խմբագրականներում: Առանձնահատուկ էր 1909 թվականին օրաթերթում տպագրված «Պետական վերանորոգությունն ու հողային հարցը» վերնագրով հինգմասանի հոդվածաշարը: Դրա հեղինակ Ատոմը (Հարություն Շահրիկյան) կարծում էր, որ հեղաշրջումից հետո երիտթուրքական կառավարությունը երկրում պահպանել էր ավատականությունը, որի հետևանքն էին տնտեսական բոլոր խնդիրները և մասնավորապես հողային հարցը¹²: Նա նշում էր, որ հողային հարցի լուծմանը մեծապես խանգարում էր Աբդուլ Համիդ Երկրորդի օրոք հիմնված ավատական Քրդստանը¹³: Սուլթանը ոճիր էր համարել «Հայաստան» բառի օգտագործումը և եվրոպացի աշխարհագրագետների օգնությամբ քարտեզների վրա այդ բառը փոխարինել էր տվել «Քրդստան» բառով: «Ասով ենթադրուեցաւ, թէ ջնջուած է պատմութենէն Հայաստանը: Արաբիա, Ալպանիա, Մակեդոնիա պատմական անունները յիշելն ու յիշատակելը երբեք վնասակար չէ համարուած օսմանեան պետութեան, Թուրքիոյ ամբողջութեան համար, բայց խղճուկ Հայաստանը իր պատմական բառով անուանելը վնասակար է համարուեր, որովհետեւ այդ անունը իրեն հետ կցուած ունէր բարեկարգութեան հարցը»¹⁴, - եզրակացնում էր Ատոմը: Այսպիսով՝ Հայկական հարցի դեմ ուղղված պետական քաղաքականության հետևանքով արևմտահայությունը դառնում էր քուրդ ավատապետերին ենթակա՝ զուրկ բոլոր իրավունքներից, դատապարտված

¹¹ «Ազատամարտի» թուրքերեն բաժինը բացվել էր 1911 թվականի մարտի 12-ին՝ թիվ 525-ից սկսած: Այն գետնովում էր թերթի առաջին էջի աջ հատվածում:

¹² Ազատամարտ 1909, թիվ 118 («Պետական վերանորոգությունն ու հողային հարցը», մաս առաջին):

¹³ Ազատամարտ 1909, թիվ 119 («Պետական վերանորոգությունն ու հողային հարցը», մաս երկրորդ):

¹⁴ Ազատամարտ 1909, թիվ 119 («Պետական վերանորոգությունն ու հողային հարցը», մաս երկրորդ):

ապրելու աղքատ ու անապահով կյանքով և մարելու սեփական հողի դիմաց կուտակած պարտքերը¹⁵:

«Ազատամարտ» օրաթերթում պարզորոշ արտահայտված էին հողային հարցի վերաբերյալ հայ և թուրք հասարակական շրջանակների տեսակետները: Ըստ այդմ՝ եթե հայերը գտնում էին, որ իրենցից տարբեր մեթոդներով խլվել են հողեր, կամ տեղի էր ունեցել հողագրավում, և անհրաժեշտ էր հատուկ հայերի համար գտնել լուծումներ, ապա թուրքական կողմը պաշտպանում էր հայերից յուրացված հողերի «օրինական» տերերի՝ քուրդ աշիրեթապետների և բեկերի իրավունքները՝ պնդելով, որ հողային հարց ունեին նաև քուրդ ու թուրք գյուղացիները, և պետությունը պետք է բոլորի համար մեկ լուծում գտներ¹⁶:

1911 թվականին, անդրադառնալով Խոյսթի շրջանում հողավեճի ժամանակ քրդերի կողմից ութ հայի սպանության հանգամանքներին, «Ազատամարտը» կենտրոնական կառավարության անգործությունն էր համարում հողավեճերի ու հողագրավումների պատճառը. «Կը հրաւիրենք զայն, որ իր պարտքը կատարէ: Իրաւագրկուած հայերը շնորհ չեն ուզեր, առանձնաշնորհում չեն խնդրեր, այլ՝ արդարութիւն և իրենց իրաւունքը»¹⁷:

«Ազատամարտը» թարգմանաբար արտատպել էր թուրքական «Սապահ» թերթի այն խմբագրականը, որտեղ ներկայացված էին թուրք մտավորականների տեսակետները հողային հարցի վերաբերյալ¹⁸: Այնտեղ շեշտվում էր, որ հողային խնդիրը միայն մեկ ցեղի՝ հայությանը չէր վերաբերում, այլ այն համընդհանուր էր իր բնույթով¹⁹: «Ազատամարտը» նկատում էր. «Պէտք չէ մոռնալ սա ճշմարտութիւնն ալ, թէ ամէնէն աւելի անիրաւուածը այս բռնութեան և յափշտակութեան գործին մէջ է՝ և կը մնայ հայ ժողովուրդը»²⁰:

«Ազատամարտը» խմբագրական հոդվածով պատասխանել էր նաև օսմանյան խորհրդարանի չափավոր ու ազատական խմբակցության «Մաթպուաթ» պաշտոնաթերթի խմբագրականին, որտեղ մեղադրում էին հայերին, որ նրանք անշնորհակալ են եղել Արևելյան Անատոլիայի հայաբնակ նահանգներում (այսինքն՝ Արևմտյան Հայաստանը նրանք համարում էին Օսմանյան կայսրության արևելյան մաս, որտեղ կային հայերով բնակեցված բնակավայրեր և ոչ թե բուն հայկական բնակավայրեր - Մ.Հ.) երիտթուր-

¹⁵ Ազատամարտ 1909, թիվ 119 («Պետական վերանորոգությունն ու հողային հարցը», մաս երկրորդ):

¹⁶ Ազատամարտ 1911, թիվ 485 («Հայ ժողովուրդը և հողային վեճը»):

¹⁷ Ազատամարտ 1911, թիվ 601 («Վեճին արմատական լուծում է հարկավոր»):

¹⁸ Ազատամարտ 1911, թիվ 604 («Հողային հարցը»):

¹⁹ Ազատամարտ 1911, թիվ 604 («Հողային հարցը»):

²⁰ Ազատամարտ 1911, թիվ 604 («Հողային հարցը»):

քերի կողմից նրանց տրված առանձնաշնորհումների համար²¹: Նշվում էր, որ վերաբերմունքը հայերի նկատմամբ փոխվել էր նրանց՝ երիտթուրքական հեղափոխության մասնակցության և ՀՅԴ-ի հետ իթթիհատականների կնքած համագործակցության շնորհիվ: Ասվում էր, որ մասնավորապես արևմտահայությանն ամենից շատ մտահոգող հողային հարցը կառավարությունը որոշել էր լուծել ոչ թե դատարանների, այլ վարչական ապարատի միջոցով՝ հողավեճերի ժամանակ տեղում իբրև թե հայերի օգտին որոշումներ կայացնելով: Երկուսուկես տարվա ընթացքում (1909-1911 թթ.) քուրդ և թուրք գյուղացիներն սկսել էին դժգոհել այդ ոչ իրավահավասար վերաբերմունքի համար, և թուրքական իշխանությունները որոշել էին այլևս դադարեցնել հայերի հանդեպ լոյալ վերաբերմունքը, որն էլ հայկական կուսակցությունների, օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների, արևմտահայոց պատրիարքարանի խոր դժգոհությունն էր առաջացրել²²: «Ազատամարտը» հակընդդեմ հողվածում պատասխանեց, որ հողային հարցը մահմեդականների ու քրիստոնյաների միջև չէր ծագել, այլ այն պետական քաղաքականության հետևանք էր: Թերթը գրում է, որ համիդյան վարչակարգի տարիներին օրենքից դուրս ձգված հայ ժողովուրդը հեղաշրջումից հետո հույս ուներ, թե իր հանդեպ գործված անարդարությունները և հատկապես հողագրավումները կվերանային: Կառավարության տված խոստումը, թե հողային վեճն իր արդար լուծումը պետք է գտներ, այդպես էլ չիրագործվեց: Թալանչի բեկերն ավելի համարձակ էին սկսել գործել: Նրանք անպատիժ սպանում էին բողոքող հայ գյուղացիներին: Թերթը հարցնում էր, թե հեղաշրջումից հետո, երբ կարճ ժամանակով հայերից չզանձեցին հպատակության համար նախատեսված տուրքը, երբ Ադանայի հայերի կոտորածը չտարածվեց հայաբնակ մյուս բնակավայրերի վրա, արդյո՞ք կարելի էր պնդել, որ հայերն առանձնաշնորհ վիճակում էին հայտնվել թուրքական կառավարության հրահանգով²³:

«Ազատամարտը» 1912 թվականին փաստում էր, որ հողային հարցի չլուծված մնալը հանգեցրել էր Արևմտյան Հայաստանի հարստահարությունների խնդրի վերաբացմանը²⁴: Թուրքական իշխանությունները հայերին սկսել էին մեղադրել պետության մեջ պետություն ստեղծելու պահվածքի և պետական մարմինների դեմ շարունակ բողոքելու համար²⁵: Թերթն այդ մեղադրանքներին հակափաստարկներով էր պատասխանում: Հողվածագիր

²¹ Ազատամարտ 1911, թիվ 622 («Արևելյան Անատոլի մեջ հողային խնդիրը և հայոց վայելած բացառիկ դյուրությունները»):

²² Ազատամարտ 1911, թիվ 622 («Արևելյան Անատոլի մեջ հողային խնդիրը և հայոց վայելած բացառիկ դյուրությունները»):

²³ Ազատամարտ 1911, թիվ 622 («Արևելյան Անատոլի մեջ հողային խնդիրը և հայոց վայելած բացառիկ դյուրությունները»):

²⁴ Ազատամարտ 1912, թիվ 786 («Տագնապալից շրջան մը հայկական կյանքին համար»):

²⁵ Ազատամարտ 1912, թիվ 786 («Տագնապալից շրջան մը հայկական կյանքին համար»):

Ն. Փափագյանը նշում էր, որ հողավեճերի պատճառով քրդերն արևմտահայերին սպանում էին ոչ միայն Արևմտյան Հայաստանում, այլև Օսմանյան կայսրության հայաբնակ գրեթե բոլոր բնակավայրերում: Ավելացնում էր, որ ներքին գործերի նախարարությունից հայկական պարբերականներին կոչ էին անում չչափազանցնել նման լուրերը, «որոնք կրնան քիւրտ և հայ յարաբերութիւնները ցրտացնել, քրտական ապստամբութիւն յարուցանել և հայկական կոտորած յառաջ բերել»²⁶: Համադրելով հրապարակի վրա առկա փաստերը՝ Ն. Փափագյանը եզրակացնում էր, որ առաջիկա տարիներին հողային թնջուկը դժվար թե լուծվեր հոգուտ իրավագուրկ արևմտահայության²⁷:

«Ժամանակ» օրաթերթի հեղինակները հողային հարցի թեմայով իրենց հրապարակումները և վերլուծականները զետեղում էին պարբերականի առաջին էջում, իսկ «Հայկական լուրեր» խորագրի ներքո տեղ էին գտնում այդ խնդրին առնչվող կարճ լուրերը: Խմբագրակազմը հակված էր հիմնավոր փաստերի զուգադրման եղանակով ուսումնասիրել հողային հարցի պատճառները: Ըստ նրա՝ խնդիրը չէր լուծվում կառավարության կամքով: Երբ օսմանյան խորհրդարանում Մուշից ընտրված հայ պատգամավոր Գեղամ Տեր-Կարապետյանը (Մշո Գեղամ) այցելել էր Արևմտյան Հայաստանի մի շարք բնակավայրեր առկա խնդիրների մասին տեղեկանալու նպատակով, այնքան էր զայրացել, որ վերադառնալուն պես հանդիպել էր ներքին գործերի նախարար Թալեաթ փաշային²⁸: Թալեաթը լսածից «զարմացել» էր, իսկ թերթը դա կեղծ էր համարում. իրականում ինչպե՞ս կարող էր նա չիմանալ, որ արևմտահայ գավառում ոչինչ չէր փոխվել հեղաշրջումից հետո: Ե. Սրմաքեշխանյանը գրում էր. «Գեղամ կ'ըսէ, թէ Տարօնի մէջ բռնապետական բարքերը միահեծան կը տիրեն, թէ հեռաւոր շրջաններուն մէջ անկարելի էր հասկնալ, որ Սահմանադրութիւն կայ, կեանքի, ինքքի, պատուի ապահովութիւն կայ: Փոփոխութիւնը այնքան չնչին է, որ գրեթէ աննշմարելի է»²⁹:

«Ժամանակը» 1910 թվականին անդրադարձել էր հողային հարցի լուծման ուղղությամբ ազգային ղեկավար մարմինների աշխատանքներին: Թերթը կարևորել էր հատկապես Ազգային ժողովի վարչության, հողային և խառը հանձնաժողովների մշակած ծրագրի կենսագործման անհրաժեշտությունը: Այդ երեք մարմինները Բ. Դռանն էին ներկայացրել քրդերի և այլոց կողմից հայերից բռնագրավված հողերի ցանկը: Հողային հանձնաժողովն այդ յուրացված հողերը բաժանել էր վեց խմբի.

- եկեղեցապատկան,

²⁶ Ազատամարտ 1912, թիվ 786 («Տազնապալից շրջան մը հայկական կյանքին համար»):

²⁷ Ազատամարտ 1912, թիվ 786 («Տազնապալից շրջան մը հայկական կյանքին համար»):

²⁸ Ժամանակ 1909, թիվ 322 («Աչքով տեսնելու է»):

²⁹ Ժամանակ 1909, թիվ 322 («Աչքով տեսնելու է»):

- գյուղացիներից գրավված,
- քաղաքաբնակներին պատկանող,
- համիդյան ջարդերից հետո պարտքի կամ փոխառության դիմաց վերցված,

- քսան տարվա վաղեմություն ունեցող,
- գումարային չնչին արժեքով հողեր³⁰:

Թերթը տեղեկացնում էր, որ այդ շրջանում թուրքական իշխանությունները փորձել էին կեղծ խոստումներով և առավելապես թղթի վրա մնացող որոշումներով հանգստացնել հայերին: Դրանցից մեկի մասին ներքին գործերի նախարարն էր տեղեկացրել Բ. Դուռ գնացած հայոց Ազգային ժողովի պատվիրակներին: Երբ նրանք մատնանշել էին, որ հողային գրավումներին վերջ չտալու հետևանքով բազմաթիվ հայեր ստիպված արտագաղթելու էին իրենց հայրենի երկրից, նախարարը նրանց հանգստացրել էր՝ հայտնելով, թե կառավարությունը կարգադրելու էր, որ հողից զրկված հայերին վերադարձվեր յուրացված հողակտորի կեսը, իսկ մնացած հատվածի համար էլ պետությունը փոխհատուցում էր վճարելու³¹: Այս և հայկական այլ պարբերականների հրապարակումները վկայում էին, սակայն, որ թուրքական իշխանությունների հիշյալ կարգադրությունը մնացել էր առկալի:

«Ժամանակը» տպագրել էր օսմանյան խորհրդարանի՝ 1910 թվականի վերջին ընդունած՝ Սահմանադրությունից հետո իրենց մայր հայրենիք վերադարձող հայերից գրավված հողերի մասին նոր օրենքը, որը նույնպես իր նախորդների կամ հաջորդների պես մնացել էր միայն թղթի վրա³²: Հիշյալ օրենքի համաձայն՝ 1908 թ. հուլիսի 10-ից առաջ օտար երկիր գնացած ու վերադառնալ ցանկացող արևմտահայերը բաժանվում էին երեք խմբի, իսկ նրանց հողերի վերադարձի հարցը թողնվում էր սեփականության թղթերով դրանց տիրացածների խոհին: Նշվում էր ևս մեկ հանգամանք. օսմանահպատակությունից զրկված հայերի հողերը պետությունը հիմնականում աճուրդով վաճառել կամ նվիրել էր ներգաղթյալ մահմեդական փախստականներին³³:

«Ժամանակ» օրաթերթը չէր բավարարվում օսմանյան խորհրդարանի և կառավարության՝ հողային հարցի լուծման նպատակով ընդունած որոշումները, օրենքները և կարգադրությունները հրապարակելով: Թերթը կարևորում էր հատկապես օսմանյան խորհրդարանում հայ պատգամավորների ու ընդհանրապես ազգային կուսակցությունների գործունեությունը՝ այս ոլորտի բարեփոխումների համար: Հիշատակենք 1912 թվականի համապետական ընտրությունների օրերին պարբերականի էջերում տպագրվող

³⁰ Ժամանակ 1910, թիվ 478 («Հողային խնդիրը»):

³¹ Ժամանակ 1910, թիվ 452 («Անատոլիի հողային խնդիրը»):

³² Ժամանակ 1911, թիվ 686 («Նոր օրենք»):

³³ Ժամանակ 1911, թիվ 686 («Նոր օրենք»):

կոչերը և հրապարակումները, որոնցից կարելի է առանձնացնել «Օսմանյան հայ երեսփոխանները ի՞նչ պիտի ընեն» վերնագրով ռեպորտաժը Կ. Պոլսի հայոց Ազգային ժողովի այն նիստից, որտեղ բոլոր կուսակցությունների ներկայացուցիչները ներքին համաձայնություն էին տվել պատրիարքարանի այն պահանջին, թե ընտրվելուց հետո հայ ժողովրդի համար կարևորություն ներկայացնող հարցերում, այդ թվում՝ հողային հարցին առնչվող, պետք է միասնաբար պաշտպանեին նրա շահերն ու իրավունքները՝ անկախ կառավարության կամ իթթիհատի հետ իրենց կնքած հուշագրերից կամ ձեռք բերած պայմանավորվածություններից³⁴:

Եզրակացություններ

Ամփոփելով մեր այս ուսումնասիրության արդյունքները՝ կարելի է փաստել հետևյալը.

- Հողային հարցն իր կարևորությամբ գրեթե չէր զիջում Հայկական հարցին, որի վկայությունն «Ազատամարտ» և «Ժամանակ» օրաթերթերի 1909-1911 թվականների հավաքածուներում առկա հարուստ վերլուծական ու փաստական նյութն է:

- Երկու պարբերականի խմբագրակազմերը գիտակցել են, որ առանց հողային հարցի լուծման չէր լուծվելու Հայկական հարցը: Այս մոտեցմամբ էր պայմանավորված օրաթերթերի կողմից հողագրավումների փաստերի արձանագրումը. կլինեին դրանք անհատական, համայնքային, թե եկեղեցապատկան: «Ազատամարտի» և «Ժամանակի» աշխատակիցները հասկանում էին, որ, ըստ փաստաթղթերի, հողագրկման ու դրանից բխող արտագաղթի հետևանքով հայերից դատարկվող Արևմտյան Հայաստանը և Օսմանյան կայսրության նախկինում հայաշատ բնակավայրերն այլևս իրենցը չէին համարվելու, քանի որ վարկերը և պարտքերը մարելու պատճառով դրանք յուրացվել էին կա՛մ քուրդ ու թուրք մեծահարուստների, կա՛մ երկրագործական բանկի³⁵, այն է՝ պետության կողմից, որն էլ դրանք վաճառել կամ նվիրել էր մահմեդական փախստականներին:

- Եթե «Ազատամարտը» չէր հավատում, որ պետական մարմինները ցանկանում էին լուծել հողային հարցը հօգուտ հայերի, ապա «Ժամանակը» հավատում էր դրան և հույսը դնում էր տարիներ շարունակ բացվող ու փակվող հողային հարցի քննությամբ զբաղվող պետական հանձնաժողովների աշխատանքի վրա, թեև միևնույն ժամանակ համամիտ էր «Ազատամարտի» այն տեսակետին, թե չպիտի բացառել հայոց ազգային կառույցների ներուժն այդ թնջուկի լուծման գործում:

³⁴ Ժամանակ 1912, թիվ 1006 («Օսմանյան հայ երեսփոխանները ի՞նչ պիտի ընեն»):

³⁵ Համբարյան 1979, 56:

• «Ազատամարտը» գրեթե մշտապես կոչ էր անում պանդուխտ հայերին վերադառնալ հայրենիք, փորձել միասնական ուժերով պայքարել հողերին վերատիրանալու կամ առնվազն ոչ որպես իրենց հողի սեփականատեր այնտեղ ապրելու համար:

• Այս պարբերականների հրապարակումներից պարզ էր դառնում այն կենաց-մահու պայքարը, որը, մի կողմից, հայությունն էր սկսել իր բռնազավթված հողային կամ ապրելու իրավունքը պաշտպանելու համար, մյուս կողմից՝ թուրքական իթթիհատական կամ իթիլաֆական իշխանություններն էին բիրտ ու խորամանկ մեթոդներով վարում Հայկական հարցից մեկընդմիջտ ազատվելու նպատակով: Այդ պայքարում թուրքական կողմն ի վերջո եկավ այն հետևության, որ հողային ու Հայկական հարցերը կարելի էր լուծել հայերին ոչնչացնելով կամ վտարելով իրենց բնօրրանից՝ օրենքներով նրանց զրկելով թե՛ ունեցած նախկին սեփականություններից, թե՛ երբևիցե վերադառնալու իրավունքից, թե՛ չհիմնավորված փաստերով հայերին հանիրավի հռչակելով դավաճաններ, որոնք «սպառնում էին» թուրքական պետության անվտանգությանը:

Եզրակացություններ

Այսօր պետք է փաստել, որ իրականում թուրքական իշխանությունները չկարողացան փակել Հայկական հարցը, որն այլ բովանդակություն և պայքարի նոր որակներ է ստացել: Պետք է նաև փաստել, որ արհեստավարժ իրավագետների, փաստաբանների և դիվանագետների ջանքերով դժվար, բայց անհնար չի լինելու հայության համար նպաստավոր աշխարհաքաղաքական հանգամանքներ առաջանալու պարագայում հասնել ժամանակին անարդարացիորեն արևմտահայերից խլված ու յուրացված, սակայն պատմականորեն նրանց իրենց նախնիներից ժառանգված հողային հարցի հայանպաստ լուծմանը, թեկուզ մասնակիորեն ու ոչ միանգամից: Այս խնդրում անելիք ունեն Հայաստան պետությունն ու հայկական սփյուռքի բոլոր կառույցները: Ազգային միասնական շահի գիտակցման բացակայությունը, որի մասին անկեղծորեն գրում էին քսաներորդ դարասկզբին «Ազատամարտ» և «Ժամանակ» օրաթերթերը, արդեն 1910 թվականին ունեցել էր իր բացասական հետևանքները, որը հայության համար պետք է դաս լինի մշտապես: «Մեր նկարագրին ամենէն տխուր կողմը եղաւ մեր ներքին երկպառակութիւնը: Երբ միշտ գործօն ու ժիր հայատեսցութիւնը մահասարսուռ հարուածը կշռեց անգամ մըն ալ, դարձեալ չկրցանք ամփոփուիլ մեզի նման կոտորակուած ազգի մը վայել սահմաններուն մէջ»³⁶, - կարդում ենք «Ժամանակ» օրաթերթի խմբագրականներից մեկում, որտեղ նաև նշվում էր, թե հայերի սերունդները թեև տեսնում էին նախորդների սխալները, բայց

³⁶ Ժամանակ 1910, թիվ 682 («Ազգային իրականությունը»):

«նոյնը կը կրկնեն»³⁷: «Ազատամարտը» հայերի երկպառակությանն այդքան մեծ դեր չէր տալիս՝ հավատալով, որ ազգային առողջ ուժերի բախումը կամ պայքարը տալու էր դրական պտուղներ: Թերթը կարծում էր, որ Արևմտյան Հայաստանը «սի՛րտն է այս պետության», որ հիվանդացել էր հողային հարցի չլուծվելու պատճառով³⁸: Կյանքը ցույց տվեց, որ թուրքական իշխանությունները ոչ թե բուժեցին, այլ փոխեցին այդ հայկական սիրտը թուրքականով կամ քրդականով:

Թուրքական նախկին և ներկա իշխանությունները հրաշալի գիտակցում են, որ հայրենիքից բռնությամբ հանված և ժամանակավորապես հայրենագրված հայության սիրտը որտեղ էլ լինի, միևնույն է, մագնիսական ուժով ձգվում է դեպի հարազատ եզերք՝ միաձուլվելու իր երկրային մարմնին: Պարզապես պատմական հայրենիքի մի փոքր հողակտորի վրա վերակերտված հայոց պետականության մերօրյա դրսևորումն է նաև անհրաժեշտ աչքի լույսի պես պահպանել՝ ուղղելով նախկինում նկատված և գրանցված սխալներն ու թերացումները: Չէ՞ որ պանթուրքական նկրտումները դեռ շարունակվում են, և հայությանը կրկին ցանկանում են դուրս մղել իր հայրենի երկրից: Հիշատակենք 2023 թվականին տեղի ունեցած Արցախի հայաթափումը: Թուրքական այդ հայակործան ծրագրի դեմն առնելու գործում կարելի է հաշվի առնել նաև XX դարի տասական թվականներին Օսմանյան կայսրության մայրաքաղաքում լույս տեսած «Ազատամարտ» և «Ժամանակ» օրաթերթերի տեսակետներն ու առաջարկները հայրենիքի, պետականության, հողային և Հայկական հարցերի մասին: Նրանք հայերի հանդեպ թուրքական իշխանությունների որդեգրած քաղաքականությունը ճանաչել էին ներսից: Ճանաչել էին, բայց ուշացումով, ինչ-որ առումով՝ ոչ ամբողջապես, քանզի կկարողանային հասկանալ, որ 1915 թվականով սկսված ցեղասպանական գործողությունը համիդյան ջարդերի պես կիսատ չէր մնալու, այլ հայկական ներկայությունից զրկելու էր ջրառատ, բերրի հողերով, բարձրաբերձ լեռներով, աննման սարերով, առվաշատ ձորերով, ծառազարդ այգիներով ու թավ անտառներով, բնապաշարներով հարուստ Արևմտյան Հայաստանը:

Նկատի պետք է ունենալ նաև այն հանգամանքը, որ դարեր առաջ պետականությունը կորցրած հայ ժողովուրդը և նրա մի մեծ հատվածը համարվող արևմտահայությունն իրավական առումով այլևս տանտեր չէր համարվում, այլ դարձել էր այդ կայսրության հպատակ և իրավագուրկ բնակիչ: Օսմանյան կայսրությունն ու դրա իրավահաջորդ Թուրքիայի Հանրապետությունը մասնավորապես Արևմտյան Հայաստանի տարածքներն ու դրանց վրայի շարժական ու անշարժ գույքը համարում են իրենց պետությանը

³⁷ Ժամանակ 1910, թիվ 682 («Ազգային իրականությունը»):

³⁸ Ազատամարտ 1911, թիվ 592 («Անատոլուն սի՛րտն է այս պետության»):

պատկանող սեփականություն, որն իրենք ինչպես կուզեն, այնպես էլ կունօրինեն, մանավանդ որ մինչև Հայոց ցեղասպանությունը և դրա ընթացքում (1915-1923 թթ.) արևմտահայերից տարբեր մեթոդներով և եղանակներով հիմնականում խլվել ու յուրացվել էին հողերի ու գույքի սեփականության վկայականները: Ահա այսպես խճճված է արևմտահայության հողային հարցի թնջուկը:

Այս հարցի արդարացի լուծումը թերևս, կապվում է տնտեսապես ուժեղ և անկախ Հայաստան պետություն և ազգային իշխանություններ ունենալու կարողության հետ: Երբ Հայաստանի և սփյուռքի համատեղ ջանքերը կուղղվեն Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության իրողության ճանաչման և դրա հետևանքների ու վնասների փոխհատուցման նպատակին, այդ շրջանակում, հավանաբար, կլուծվի նաև արևմտահայերի ժառանգների հողային փոխհատուցման խնդիրը: Ինքս մշեցու թոռնուհի եմ և ուզում եմ ապրել իմ հայրենի Ծղակ գյուղում, որտեղից 1915 թվականին բռնությամբ վտարել են պապիկիս ու նրա գերդաստանի անդամներին՝ գաղթի ճանապարհին սպանելով հարազատներիցս շատերին: Ցեղասպանությունից փրկվածներն իրենց զավակներին ու թոռներին են փոխանցել հայոց պահանջատիրության անմար կրակը:

Օգտագործած գրականություն

Համբարյան Ա. 1979, Երիտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (1908-1914), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 312 էջ:

Հայ ժողովրդի պատմություն 1981, հ. 6, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1052 էջ:

Հայոց պատմություն 2015, հ. 3, գ. 2, Երևան, «Զանգակ», 759 էջ:

Հայոց պատմություն հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը 2000, Երևան, «Զանգակ», 488 էջ:

Ազատամարտ, Կ. Պոլիս, 1909, թիվ 118, 119, 1911 թիվ 485, 592, 601, 604, 622, 1912 թիվ 786:

Ժամանակ, Կ. Պոլիս, 1909, թիվ 322, 1910, թիվ 452, 478, 514, 682, 1911, թիվ 686, 1912, թիվ 1006:

ОБСУЖДЕНИЕ ЗЕМЕЛЬНОГО ВОПРОСА В КОНСТАНТИНОПОЛЬСКИХ ГАЗЕТАХ «АЗАТАМАРТ» И «ЖАМАНАК» (1909-1911 ГГ.)

Мариам Овсепян

Резюме

Публикации газет «Азатамарт» и «Жаманак» по земельному вопросу были объективными и беспристрастными. Опубликованные в них факты

вынудили правительство возбудить судебные дела. Материалы этих газет представляли взгляды армянских и турецких общественных кругов по земельному вопросу. Армяне считали, что власти Турции прибегали к разным методам присвоения земель армян, и в этой связи указывали на необходимость поиска путей решения данного вопроса. Турецкая сторона защищала права курдских и турецких беев, владевших землями армян. По мнению властей, земельный вопрос был актуален также для курдских и турецких крестьян, посему государство должно было найти решение для всех.

Ключевые слова – земельный вопрос, Западная Армения, ежедневная газета «Азатамарт», ежедневная газета «Жаманак», Армянский вопрос, эмиграция, экспроприация имущества.

THE DISCUSSION OF THE LAND ISSUE IN CONSTANTINOPLE'S "AZATAMART" AND "ZHAMANAK" NEWSPAPERS (1909-1911)

Mariam Hovsepyan

Abstract

The publications of the "Azatamart" and "Zhamanak" dailies on the land issue were objective and impartial. The facts presented in their articles prompted the government to initiate court cases. These periodicals conveyed the perspectives of both Armenian and Turkish public circles on the land issue. Armenians believed that lands were taken from them by various methods and that specific solutions were needed for them. In contrast, the Turkish side defended the rights of the Kurdish and Turkish beys who owned Armenian lands. According to the authorities, Kurdish and Turkish peasants also faced land issues, and the state should find single solution for all parties involved.

Key words – land issue, Western Armenia, "Azatamart" daily, "Zhamanak" daily, Armenian question, emigration, dispossession.

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ
ԲՅՈՒՐՈՎԿՐԱՏԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ.
ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Մարինա Մարգարյան

ԵՊՀ քաղաքագիտության ամբիոն
ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 1
Էլ. հասցե՝ mmargaryan@ysu.am
ORCID: 0009-0002-6904-7467

Հոդվածը ներկայացվել է 12.06.2024, գրախոսվել է 09.09.2024, ընդունվել է տպագրության 03.12.2024
DOI: 10.53548/0320-8117-2024.3-90

Ամփոփում

Պետական քաղաքական կառավարման հայեցակարգի տեսական զարգացման խնդիրները մշտապես եղել են հետազոտողների ուսումնասիրության կենտրոնում: Պետական կառավարումը հիերարխիկ համակարգ է, որը ներառում է երկու հիմնական բաղադրիչ՝ հանրային քաղաքական կառավարում և պետական վարչական կառավարում: Պետական քաղաքական կառավարումն ընդհանուր առմամբ նշանակալի պետական քաղաքական որոշումների ընդունման մակարդակն է, իսկ հանրային վարչական կառավարումը՝ նման որոշումների իրականացման մակարդակն է՝ քաղաքական ակտերի կատարման մեջ վարչական ակտերի ընդունման միջոցով: Այս ոլորտները սերտորեն կապված են փոխգործակցության և փոխադարձ ազդեցության մեջ:

Բանալի բառեր՝ պետական կառավարում, պետական քաղաքական կառավարում, վարչական կառավարում, բյուրոկրատիա, քաղաքացիական ծառայություն, գործառնական գործիքակազմ, պետական կառավարման արդյունավետություն:

Ներածություն

Պետական քաղաքական կառավարման ուսումնասիրությունը քաղաքական իշխանության և բյուրոկրատիայի փոխազդեցության տեսությունների համատեքստում քաղաքական գիտության կարևոր ոլորտներից է: Այս աշխատությունը խորանում է հիերարխիկ համակարգերի մեջ, որոնք ներառում են պետական քաղաքական և պետական վարչական կառավարումը՝ ուսումնասիրելով դրանց փոխկախվածությունը և փոխադարձ ազդեցությունը:

ՀՀ-ում պետականաշինության գործընթացների գիտական հիմնավորման անհրաժեշտությունը ենթադրում է կառավարչական գործունեության արդյունավետության բարձրացում: Հիմնվելով դասական տեսությունների և ժամանակակից վերլուծությունների վրա՝ նպատակ ունենք համապարփակ պատկերացում տալ այն մասին, թե ինչպես են ընդունվում և իրականացվում քաղաքական որոշումները, և ինչպես են բյուրոկրատական կառույցները ազդում և հակազդում այդ որոշումների վրա:

ՀՀ պետական-քաղաքական կառավարման տեսական հիմքերը

Հայկական պետականության կառուցման շարունակական գործընթացները պահանջում են պետական և քաղաքական կառավարման կատարելագործման, կառավարչական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակի գիտական հիմնավորում:

Պետության զարգացման համար ընդունված քաղաքական և կառավարչական որոշումների վերիֆիկացման հիմքը դրանց գիտական մշակվածության աստիճանի ուսումնասիրումն է՝ տեսական և դրա հայեցակարգային մոտեցումների շրջանակներում:

Խոսելով պետական-քաղաքական կառավարման տեսության մասին՝ անհրաժեշտ է որոշակիացնել ընդհանուր կատեգորիալ ապարատը: Ելակետ ընդունելով այն հայեցակարգային մոտեցումը, որ պետությունը հասարակությունների քաղաքական համակարգի կենտրոնական և հիմնական ինստիտուտն է, պետական կառավարումը սահմանվում է որպես քաղաքական առաջնորդության և կառավարման մեխանիզմների և գործադիր իշխանությունների գործունեության միջոցով հասարակության վրա համակարգային ազդեցություն: Քաղաքական կառավարումն իրականացվում է սահմանադրորեն ձևավորված քաղաքական իշխանության ինստիտուտների շրջանակներում՝ ընտրված պաշտոնյաների կողմից, գործադիր իշխանությունը ներկայացնում է պետական կառավարումը բոլոր մակարդակներում:

Պետական կառավարումը, որոշ վերապահումներով, կարող ենք սահմանել որպես համակարգ, որը ներառում է երկու հիմնական բաղադրիչ՝ պետական քաղաքական կառավարում և պետական վարչարարական կառավարում: Որպես մեր հետազոտության նպատակի մի մաս՝ հիմնական ուշադրությունը սևեռված է պետական քաղաքական կառավարման վրա: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ պետական կառավարումը բարդ համակարգ է, որի տարրերը, չնայած իրենց ողջ անկախությանը, սերտորեն փոխգործակցում են և փոխազդում միմյանց վրա:

Պետական քաղաքական կառավարման էական հատկանիշը նրա ներկայացուցչական բնույթն է, որն արտահայտվում է նրանում, որ ժողովուրդը իշխանության և քաղաքական կառավարման իր իրավունքը իրացնում է՝ դելեգացնելով իր ներկայացուցիչներին:

Արդյունավետ պետական կառավարման համակարգը պահանջում է երեք կառուցողական տարրերի ամբողջություն, որոնցից առաջինը քաղաքականության մշակման և համակարգման ոլորտում ուժեղ կենտրոնական կառավարությունն է, որն էլ հենց պետական կառավարման ուղեղն է: Քաղաքական ուժերը ձևավորում են իրենց ծրագրերը, որոնք ներկայացվում են ռազմավարական առաջնահերթությունների տեսքով:

Երկրորդ տարրը ծառայությունների մատուցման համակարգն է: Շուկայական տնտեսության պայմաններում բոլոր տեսակի ծառայությունների մատուց-

ման հիմքը մրցակցությունն է, իսկ պետության խնդիրը այդ դեպքում բոլոր մասնակիցների համար բարենպաստ քաղաքական պայմանների ապահովումն է:

Երրորդ տարրը անձնակազմի իրավասություններն ու շահագրգռվածությունն են: Այստեղ առաջնային է արդյունավետ կառավարչական մեխանիզմների առկայությունը ինչպես կադրերի ընտրության, նրանց կարիերայի, այնպես էլ խրախուսման գործում:

Պետական կառավարման համակարգի մի շարք երկրների փորձը ցույց է տալիս, որ գործադիր իշխանությունը ժամանակակից հայեցակարգմամբ, իր առաքելությամբ և լիազորությունների շրջանակով խիստ սահմանափակ է: Այս առումով առավել արդյունավետ է կառավարչական գործառույթների ապակենտրոնացումը, այն է՝ դրանց պատվիրակումը ստորին մակարդակի գործադիր մարմիններին:

«Սահմանադրությունը սահմանում է, որ կառավարությունը իր լիազորությունները ստանձնում է Սահմանադրությամբ և օրենքներով: Կառավարության կառուցվածքը և կառավարության գործունեության կարգը կառավարության ներկայացմամբ սահմանվում են օրենքով:

«Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքով սահմանվեցին կառավարչական հիմնարկները, որը հնարավորություն տվեց տարանջատելու կառավարչական գործառույթները պետական այլ գործառույթներից: Կառավարչական գործառույթների դասակարգումը՝ ըստ քաղաքականության մշակման, կանոնակարգման, մշտադիտարկման և համակարգման, ծառայությունների մատուցման խմբերի, հնարավորություն տվեց սահմանելու նախարարությունների, ինչպես նաև այլ պետական մարմինների կարգավիճակն ու կառուցվածքը:

Կառավարության գործունեության ապահովման պետական մարմինների հաջորդ խումբը կառավարությանը, վարչապետին և նախարարություններին առընթեր մարմիններն են:

Կառավարությանը ենթակա մարմինն ապահովում է կառավարության քաղաքականության՝ օրենքով իրեն վերապահված առանձին ուղղության իրականացումը, ինչպես նաև աջակցում է իրեն վերապահված ուղղության շրջանակներում կառավարության քաղաքականության մշակմանը: Կառավարությանը ենթակա մարմիններն են՝

- 1) Անշարժ գույքի կադաստրի կոմիտեն.
- 2) Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեն.
- 3) Պետական եկամուտների կոմիտեն.
- 4) Վիճակագրական կոմիտեն.
- 5) Քաղաքաշինության կոմիտեն.
- 6) Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը.
- 7) Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը.
- 8) Կրթության տեսչական մարմինը.

9) Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը.

10) Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը.

11) Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը¹:

Վարչապետին ենթակա մարմինները գործում են նաև ազգային անվտանգության, ոստիկանության և պետական վերահսկողության ոլորտներում: Մինչդեռ նախարարությանը ենթակա մարմինը գործում է նախարարությանը վերապահված գործունեության ոլորտի շրջանակներում և ապահովում է նախարարության իրավասությանը վերապահված գործունեության ոլորտի առանձին ուղղությունների իրականացումը²:

«Սահմանադրությունը ամրագրում է պետական կառավարման՝ օրենքով ստեղծված բոլոր մարմինների գոյությունը, իսկ 2008 թ.-ից կառավարության կառուցվածքը սահմանվում է նաև առանձին օրենքով: Այս դրույթը մեկ քայլ առաջ է հանրային իշխանության ապակենտրոնացման ուղղությամբ: Ընդ որում, «Շ գործադիր իշխանության կառուցվածքի վերլուծությունից երևում է, որ այն հիմնականում ապակենտրոնացված է հորիզոնական կառավարական մարմինների միջև: Դա հերթական անգամ փաստարկում է այն մտեցումը, որի համաձայն՝ պետական քաղաքական կառավարումը՝ որպես ընդհանուր առմամբ նշանակալի պետական քաղաքական որոշումների կայացման ոլորտ, և պետական վարչական կառավարումը՝ որպես վարչական ակտերի ընդունմամբ քաղաքական ակտերի իրականացման ոլորտ, չպետք է հակադրվեն: Այս երկու ոլորտները սերտորեն կապված են՝ փոխգործակցելով և փոխազդելով միմյանց հետ: Կառավարման այս ոլորտների փոխազդեցությունը դիտարկելիս հանրային խոսույթից դուրս է մնում դրանց հիերարխիկ կառուցվածքի իմաստը:

Սակայն թե՛ տեսական, թե՛ քաղաքական իրականության մեջ գոյություն ունի գործադիր իշխանության մարմինների ենթակայություն քաղաքական իշխանության մարմիններին: Իրենց ժողովրդավարական բնույթով վերջիններս կառավարում են ժողովրդի անունից և իրենց շահերից ելնելով: Իսկ վարչական մարմինների ենթակայությունը քաղաքականին իրականացվում է օրենքի, ինչպես նաև քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանության անհրաժեշտությունից:

Պետական կառավարման քաղաքական նշանակությունը նաև նրանում է, որ ընտրված ՏԻՄ վարչակազմը միայն օրենքների բառացի կատարման սուբյեկտ չէ: Նրանք մշակում են օրենքների կատարման մեխանիզմներ, վարում են դրանց իրականացման սեփական քաղաքականությունը, նրանց

¹ «Վ կառավարության պաշտոնական կայք» <https://www.gov.am/am/bodies-under-government/>

² Տե՛ս «Շ օրենքը «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=120920>

տրվում է որոշակի ազատություն՝ ընդունելու նորմատիվ ակտեր, մասնակցելու օրինագծերի մշակմանը և այլն:

Քաղաքացիական ծառայության պաշտոնյաները՝ իրենց գործառույթային իրավունքներից և պարտականություններից ելնելով, քաղաքական կառավարման ակտիվ սուբյեկտներ են: Իրենց իրավասության ուժով պետական կառավարման մարմինների գործադիր գործառույթների իրականացումը տեղի է ունենում իրավապահ քաղաքականության շրջանակներում:

Պետական-վարչական կառավարման սուբյեկտները օրենսդրական և կարգավորող ակտերի կատարման ժամանակ իրենց հայեցողությամբ գործելու իրավունք ունեն, որը նրանց թույլ է տալիս հարմարեցնել հանրային քաղաքական կառավարման քաղաքականությունն ու գործելակերպը՝ որպես ազդեցություն հասարակության վրա:

Այսպիսով, պետական քաղաքացիական ծառայողը, բացի վարչական գործառույթներից (կադրային քաղաքականության իրականացում, հրամայական, ոչ կոլեգիալ բնույթի հրահանգներ և այլն), իրականացնում է նաև քաղաքական գործառույթ՝ ենթաօրենսդրական ակտերի ընդունում, վարչական կանոնակարգեր, ենթակա անձնակազմի միջև պետական քաղաքականության առաջնահերթությունների մասին իրազեկման աշխատանքներ, որոշակի արժեքների իրականացման համար «համախոհների» թիմի ձևավորում և այլն:

Պետական կառավարման կարևոր բնութագրիչ հատկանիշներից է նրա տեղեկատվական և վերլուծական աշխատանքների, նախագծման, կանխատեսման, հաշվարկի, մոնիթորինգի, վերահսկման, պլանավորման և այլնի ոլորտներում գործառնական որակավորումն ու կառավարչական մակարդակը: Այս ոլորտում գործադիր իշխանության կողմից օգտագործվող գործառնական գործիքակազմը կարևոր նշանակություն ունի կառավարության ռազմավարական քաղաքական որոշումների իրականացման հաջողության համար, որը, ի վերջո, կախված է նորարարական զարգացումների ընդունման որակից և արագությունից:

«Ա պետականության հետագա զարգացումը մեծապես կախված է պետական քաղաքական և պետական վարչական կառավարման հարաբերություններից:

Ինչպես արդեն նշվել է, իշխանության ճյուղերը պետք է լինեն դինամիկ հավասարակշռության մեջ, սակայն այնպես է ստացվել, որ XX դարի վերջին՝ «Իշխանության վերափոխման ժամանակաշրջանում, իշխանության հիմնական կենտրոնը տեղափոխվեց դեպի գործադիր իշխանության մարմիններ: Հետևաբար երկրի ապագայի պլանավորումը, զարգացման նպատակներն այսօր ձևակերպելու հարցերը այն պաշտոնյաների ձեռքին են, որոնք չեն կարողանում և չեն ցանկանում հավակնոտ նպատակներ սահմանել երկրի ապագա ուղու համար, քանի որ այդ ժամանակ այդ նպա-

տակներին հասնելու խնդիրները լուծելու և դրանց իրականացման համար պատասխանատվությունն իրենք են կրելու: Ակնհայտ է, որ պետական կառավարման նման վիճակը անարդյունավետ է և հանգեցնում է պետության և նրա տնտեսական, քաղաքական և սոցիալական ինստիտուտների զարգացման դանդաղեցմանը³:

Նման իրավիճակում անհրաժեշտ է պետության համար քաղաքական նշանակության տեսանկյունից գիտականորեն հիմնավորել ռազմավարական պլանավորման համակարգի կատարելագործման խնդիրը, մշակել քաղաքական իշխանության և պետական կառավարման մարմինների միջև իրավասությունների բաշխման ալգորիթմներ, ապահովել պետական կառավարման վիճակի մոնիթորինգի և գնահատման կազմակերպչական և կարգավորող համակարգ: Պետական քաղաքական կառավարման խնդիրը պետական վարչական կառավարմանը, այսինքն՝ գործադիր իշխանությանը հիերարխիկ և էպետ ենթակա մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված գործիքակազմերի կազմակերպումն ու իրավական հաստատումն են:

Քաղաքական իշխանության և բյուրոկրատիայի փոխգործակցությունը

Աշխատության մեջ առաջ քաշված նպատակների գիտական հիմնավորումը մշակելու համար անհրաժեշտ է դիմել դասական տեսություններին, որոնք դիտարկել են սոցիալական գործընթացների պետական կարգավորման արդյունավետության չափանիշները: Դրանցից մեկը բյուրոկրատիայի տեսությունն էր, որն ունի մի քանի ուղղություն և մոտեցում: Հարկ է նշել, որ նորմատիվ իրավական աղբյուրներում գործադիր իշխանության մարմինների համակարգը սահմանվում է «քաղաքացիական ծառայություն» և «պետական ծառայություն» հասկացություններով, իսկ սոցիոլոգներն ու քաղաքագետները կիրառում են «բյուրոկրատիա» եզրույթը:

Դիտարկենք բյուրոկրատական դասակարգը քաղաքական տեսանկյունից: Եթե հետևենք հայտնի տրամաբանական շղթային, ապա կարող ենք արձանագրել, որ պետական քաղաքական կառավարում իրականացնող օրենսդիր և ընտրովի մարմինները ձևավորում են երկրի պետական վարչական կառավարում իրականացնելու նպատակով գործադիր մարմինների կառուցվածքը: Կառավարչական տարբեր գործառույթներ իրականացնելու համար գործադիր իշխանությունը ստեղծում է պաշտոնյաների ապարատ (բյուրոկրատիա), որի նպատակն է աշխատել ի շահ քաղաքական ընտրովի մարմիններ ձևավորած քաղաքացիների: Այսպիսով, օրենսդիր մարմնի անդամներին ընտրելիս քաղաքացիները բյուրոկրատիայից կախվածության

³ Rahman 2018, 1140.

մեջ են ընկնում: Բայց պաշտոնյաներ նշանակելու մեխանիզմը նրանց կախվածության մեջ է դնում ոչ թե ընտրողից, այլ վերադասից:

Բյուրոկրատիան նյութական արժեքներ չարտադրող շերտն է և իր եկամուտը ստանում է իր գործունեության արդյունքի վաճառքի հետ անմիջականորեն չկապված աղբյուրներից: Այսպիսով, ելնելով իր դիրքից՝ բյուրոկրատիան իր գործունեությունն իրագործելիս չի ուղղորդվում քաղաքացիների շահերի պաշտպանությամբ, այլ նպատակաուղղված է օրենսդիր և գործադիր իշխանությունների բարձրագույն ապարատի շահերի իրագործմանը⁴: Սա խոսում է այն մասին, որ բյուրոկրատիան ընտրողների ու քաղաքական գործիչների հետ սեփական շահը մեծացնելու ուղիներ է փնտրում⁵:

Առաջին անգամ «բյուրոկրատիա» տերմինը (ֆրանսիական *բյուրո* - գրասենյակ և հունական *kratos* – իշխանություն) շրջանառության մեջ դրեց XVIII դ. ֆրանսիացի տնտեսագետ Վ. դը Գուրնեն՝ միապետի իշխանությունը իրենց գործունեությամբ սահմանափակող պաշտոնյաների ապարատը բացասաբար ներկայացնելու նպատակով: Բայց Մ. Վեբերի հետագա հետազոտություններում, խոսելով բյուրոկրատիայի մասին, բացասական իմաստը դուրս է մղվում:

Բյուրոկրատիայի տեսության հիմնադիրը XIX դարի գերմանացի սոցիոլոգ Մ. Վեբերն է, որն իդեալականացրեց բյուրոկրատիան՝ որպես առանց սեփական հավակնությունների՝ ժողովրդի կողմից ընտրված քաղաքական տերերի հավատարիմ ծառայող: Բյուրոկրատիան իրականացնում է քաղաքական դասին օբյեկտիվ տեղեկատվություն մատակարարելու, օրենքների կիրառման և ընտրողներին հանրային հատվածի ծառայություններ մատուցելու խնդիրները⁶:

Այնուհանդերձ, ավելի կարևոր է հասկանալ հանրային ծառայությունների մատուցման տարբեր ձևերի նկատմամբ հանրային վերաբերմունքի աստիճանը, քանի որ պետական մարմիններն իրենց ուժը, օրինականությունը և քաղաքականությունը հաջողությամբ իրականացնելու կարողությունը, ի թիվս այլոց, ստանում են աջակցող հասարակությունից⁷:

Բյուրոկրատիայի տեսակը, որը նկարագրել է Մ. Վեբերը, վերագրել է իշխանության ռացիոնալ-լեգալ տեսակին՝ օգտագործելով դրա ձևավորման ամենաարդյունավետ միջոցը: «Ճշգրտություն, արագություն, միանշանակություն, գործի իմացություն, հետևողականություն, տակտ, միասնականություն, խիստ ենթակայություն, շփման նյութական և մարդկային ռեսուրսների ծախսերի նվազեցում. սա այն ամենն է, ինչը արագացնում է բյուրոկրատական համակարգ»⁸: Քաղաքականության հաջող իրականացումը պա-

⁴ Filgueiras, Palotti, Testa 2023, 4.

⁵ Howlett 2009, 76.

⁶ Масловский, Битэм 1997, 170.

⁷ Meier, Bohte 2006, 284.

⁸ Кезин 2002, 270.

հանջում է, որ քաղաքացիները մտածեն՝ ծառայությունների մատուցումն արդարացի է⁹: Քաղաքական ինստիտուտների նկատմամբ բացասական վերաբերմունքը ևս զգալի ազդեցություն ունի քաղաքականության իրականացման վրա, և այդտեղից հարց է ծագում՝ արդյո՞ք քաղաքացիների ենթարկվում են պետական իշխանությանը¹⁰:

Վերերը բյուրոկրատիան դիտարկում էր որպես մարդկային կառավարման մեքենա, որն աշխատանքի արտադրողականության բարձր մակարդակով ամենաարդյունավետ մեխանիզմն է: Բյուրոկրատական մեքենայի արդյունավետությունը, ըստ Վերերի, բյուրոկրատիայի սեփական կողմնակի շահերի բացակայության, նպատակին հասնելու լավագույն ճանապարհը տանող միջոցների կիրառման մեջ է. կատարողական կարգապահությունը ենթակա չէ առաջնորդի սուբյեկտիվությանը և անցողիկ ավանդույթների ազդեցությանը¹¹: Բյուրոկրատիայի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է կանոնների հատուկ համակարգի և ենթակայության և հաշվետվությունների հիերարխիկ կառուցվածքի կիրառմամբ:

Վերերյան իդեալական բյուրոկրատիայի տեսակը ներառում է հիերարխիկ կառուցվածք՝ լիազորությունների և պատասխանատվության ոլորտների հստակ տարանջատումներով, որտեղ որոշումները հիմնված են հստակ կողմնորոշված կանոնների վրա և կայացվում են անաչառ, իսկ քաղծառայողները հավաքագրվում են ըստ իրենց կարողությունների և ունեն փորձագիտական պատրաստվածություն¹²: Հետևաբար, վերերյան բյուրոկրատիան նկարագրում է, թե ինչպես են կազմակերպվում պետական վարչակազմերը և ինչպես պետք է տարբերվեն արդյունքների վրա կենտրոնացած հասկացություններից, ինչպիսիք են «պետական կարողությունները» կամ «կառավարման որակը»: Արդյո՞ք վերերյան բյուրոկրատական կազմակերպությունն ունենալը նպաստում է «լավ արդյունքների», ներառյալ լավ կառավարումը, ի վերջո՝ դրանք են էմպիրիկ հարցերը¹³:

Բյուրոկրատական համակարգի առավելություններն են նրա ապանձնավորված բնույթը և ռացիոնալ հիմքի վրա կառուցված կազմակերպչական կարգապահությունը: Սակայն վերը թվարկված առավելությունները պահպանվում են միայն քաղաքացիական ծառայողների ապաքաղաքական վիճակի առկայության դեպքում:

Ապաքաղաքականությունը կօգնի պահպանել ապարատի շարունակականությունը, երբ փոխվի քաղաքական ղեկավարությունը: Բյուրոկրատիայի քաղաքական կողմնակալությունը կարող է խոչընդոտ դառնալ նորընտիր

⁹ Hibbing, Theiss-Morse 2001, 115.

¹⁰ Gibson et al. 2003, Hibbing, Theiss-Morse 2001, Hurwitz, Peffley 2005, Skolnick, Fyfe 2001.

¹¹ Johansen 2023, 229.

¹² Weber 1978, Economy and society: An outline of interpretive sociology. University of California Press.

¹³ Dahlström, Lapuente 2017, 9.

քաղաքական իշխանության նկրտումներին: Այս դեպքում անխուսափելի պետք է դառնա կա՛մ ապարատի ամբողջական փոխարինումը «սեփական թիմով» (որը կարող է հանգեցնել կառավարման փլուզման), կա՛մ իշխանության իրական լծակների փոխանցումը նախկին ապարատի կազմին:

Մ. Վեբերի ռացիոնալ բյուրոկրատիայի տեսության գաղափարակիցներից և դրա զարգացնողներից էին Ռ. Բենդիկսը¹⁴, Ա. Գոուլդները¹⁵, Մ. Կրոզեն¹⁶, Ս. Լիպսեթը, Ռ. Մերտոնը¹⁷ և այլք: «Ռացիոնալիստները» կարծում էին, որ բյուրոկրատիան գիտատեխնոլոգիական առաջընթացի դարաշրջանում հասարակությանը բնորոշ երևույթ է: Քաղաքացիական ծառայողների աշխատանքային պարտականությունների հստակ սահմանումը թույլ է տալիս վերացնել սուբյեկտիվ գործոնը՝ որոշումների կատարումը սեփական հայեցողությամբ, և թույլ է տալիս վերահսկել պաշտոնյաների մասնագիտական իրավասությունների համապատասխանությունը իրենց պաշտոնական դիրքին:

Պետական կառավարման տեսաբաններից Կ. Մարքսը կառավարման գործընթացում բյուրոկրատիայի դերի մասին հակառակ քաղաքական հայացքներ ուներ: Եթե Վեբերը պահպանում էր արժեքային-չեզոք դիրքորոշում պետական վարչական ապարատի գործառույթների վերաբերյալ, ապա Մարքսը կարծում էր, որ պաշտոնյաներն ապրիորի քաղաքականապես ներգրավված են որպես դասակարգ, հետևաբար այդ պատճառով քաղաքական իշխանության փոփոխության դեպքում անհրաժեշտ է պետական մեքենայի ոչնչացում:

Կ. Մարքսը նշում էր, որ պաշտոնյաները «յուրացնում են» պետական կառավարումը՝ փոխարինելով ընդհանուր շահերին ծառայումը՝ ծառայելով մասնավորին: Բյուրոկրատիան իրեն համարում է պետական մեքենայի գործառնման վերջնական նպատակ՝ «ֆորմալ» նպատակները լրացնելով սեփական բովանդակությամբ, որը խոչընդոտում է «իրական» նպատակների իրականացումը և պետական խնդիրները վերածում կղերականի: Բյուրոկրատիան անջատված է հասարակական կյանքից, որը հանգեցնում է պաշտոնյաների կամայականությունների աճին, երբ նրանք իրենց կարիերայի աճն են ունենում: Պետական պաշտոնյաները կարծում են, որ կոմպետենտության մենաշնորհ ունեն. դա վկայում է պետականամետ մտածողության բացակայության մասին:

Բյուրոկրատիայի տեսության ժամանակակից գիտնականները նշում են, որ քաղաքացիական ծառայողների վարչական էլիտան ձգտում է ինքնուրույն որոշումներ կայացնել և ոչ թե իրականացնել քաղաքական իշխանու-

¹⁴ Lipset, Bendix 2018, 309.

¹⁵ Gouldner 1980, 528.

¹⁶ Крозье 2011, 195.

¹⁷ Merton 1963, 563.

թյունների ընդունած որոշումները, որը վկայում է գործադիր իշխանության քաղաքականացման մասին¹⁸:

XX դարի կեսերին բյուրոկրատիայի տեսությունը մշակել են հանրային ընտրության դպրոցի կողմնակիցները, որը ստեղծել են Գ. Թալոքը և Դ. Բյուքենանը¹⁹: Հանրային ընտրության տեսությունը ռացիոնալ ընտրության տեսության զարգացումն է, որն առաջարկում է անհատների՝ որպես ռացիոնալ և եսասեր ակտորների քաղաքական վարքագիծը դիտարկել տնտեսական տեսանկյունից: Օրինակ՝ ընտրություններում քվեարկելը (հանրային ընտրություն) տեղի է ունենում նույն կերպ, ինչ տնտեսական իրավիճակում. անհատն առաջնորդվում է սեփական շահերով: Պրոֆեսիոնալ մենեջերների՝ հանրային շահերը սեփականով փոխարինելու ձգտումը Գ. Տալոքն անվանել է պաշտոնյաների բյուրոկրատական ապարատի պաթոլոգիա: Այս պաթոլոգիան դրսևորվում է, օրինակ, քաղաքական ռազմավարության ինվերսիայի մեջ՝ պաշտոնյայի կարիերայի աճն ապահովելու նպատակով:

Է. Դաունսը համակարծիք է Գ. Թալոքի հետ և նշում է, որ իշխանությունների՝ հանուն պաշտոնյաների կարիերայի հավակնությունների և անձնական շահերի քաղաքական որոշումների խեղաթյուրումը պետական կառավարման ապարատի քանակի ավելցուկային աճի և սեփական «քաղաքական տարածքն» ընդլայնելու ցանկության պատճառ է²⁰:

Է. Դաունսի առաջարկած բյուրոկրատիայի մոդելը կոչվել է պլյուրալիստական (բազմակարծության վրա հիմնված)՝ դրա գործադիր կարգապահության փոփոխականության պատճառով: Պաշտոնյաները քաղաքական իշխանություններից ստացված տեղեկատվությունը մեկնաբանում են խեղաթյուրելով՝ ելնելով սեփական շահերից, իսկ քաղաքական գործիչների ընդունած որոշումներն իրականացվում են տարբեր կերպ՝ կախված բյուրոկրատների նախասիրություններից: Քաղաքական խնդիրների լուծման նոր ուղիների որոնումը ևս փոխկապակցված է պաշտոնյաների շահերի հետ: Է. Դաունսն ընդգծում է ուռճացած բյուրոկրատական ապարատի կողմից որոշումների կատարման նկատմամբ որակյալ վերահսկողություն իրականացնելու անհնարինությունը. որքան մեծ է կազմակերպությունը, այնքան վատ կլինի ղեկավարության՝ աշխատակիցների գործունեության նկատմամբ վերահսկողությունը: Պետական բյուջեի ընդունման վրա դրա պահպանման ծախսերի մաքսիմալացման համար բյուրոկրատիայի ազդեցության մասին գրել է Վ. Նիսկանենը²¹:

¹⁸ Комаровский и др. 2019, 407.

¹⁹ Buchanan, Tullock 1999, 36.

²⁰ Downs 1966, 185.

²¹ Niskanen 1968, 297.

Քաղաքական որոշումների կայացման գործում բյուրոկրատիայի դերի մասին նշել է Է. Մորոզովան՝ առանձնացնելով հասարակության քաղաքական կառավարման վրա վարչական իշխանության ազդեցության հետևյալ ուղիները.

- գործադիր մարմինները քաղաքական իշխանության որոշումներն իրականացնելիս մշակում են իրենց գերատեսչական նորմերը.
- վարչական մարմինները տեղեկատվական և վերլուծական նյութեր են տրամադրում քաղաքական որոշումներ կայացնող պետական մարմիններին.
- մասնագիտական կառավարչական գիտելիքները պաշտոնյաների կողմից օգտագործվում են որպես իշխանության ռեսուրս.
- բարձր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների մասնակցությունը քաղաքական որոշումների կայացմանը.
- օրենքների և քաղաքական որոշումների մեկնաբանում և այլն²²:

Բարձրագույն իշխանությունների ընդունած քաղաքական որոշումների կատարման վրա նման ակտիվ ազդեցությունը հակված է բյուրոկրատիան վերածելու ինքնուրույն և ակտիվ քաղաքական ուժի: Դառնալով ազդեցիկ քաղաքական դերակատար՝ բյուրոկրատիան չի սահմանափակվում իր սեփական կորպորատիվ շահերն իրականացնելու գործունեությամբ: Այն ընդլայնում է իր լոբբիստական ազդեցությունը և հաճախորդներ ձեռք բերում, նաև՝ անօրինական սեկտորում: Խոշոր արդյունաբերական և ֆինանսական խմբերի շահերի հետ բյուրոկրատների շահերի կոռուպցիոն միաձուլումը հանգեցնում է պետության քաղաքական համակարգի օլիգարխացման:

Հանրային ընտրության տեսության կողմնակիցների տեսակետները կարող ենք ամփոփել այսպես. կառավարության կարգավորումն անարդյունավետ է, քանի որ բացակայում են արդյունավետությունը բարելավելու խթանները, որոնք առկա են շուկայական հատվածում, բայց բացակայում են պետական հատվածում: Այսպիսով, մասնավոր հատվածը հասարակության համար լավն է, պետականը՝ վատը: Բայց քանի որ պետական կառավարման ապարատի իսպառ վերացումն անհնար է, պրակտիկայում անհրաժեշտ է ներմուծել շուկայական կառավարման տեխնոլոգիաներ:

Հանրային ընտրության հայեցակարգի քննադատները նշում են, որ տեսության շատ դրույթներ հստակ չեն արտացոլում իրավիճակի իրական դրությունը: Օրինակ՝ քաղաքական ղեկավարությունը լիովին կախված չէ գործադիր մարմինների մատուցած տեղեկատվությունից: Ներկայումս գոյություն ունի տեղեկատվական, վերլուծական, խորհրդատվական կառույցների և տեղեկատվական նոր տեխնոլոգիաների բավական մեծ ընտրություն, որոնք հնարավորություն են տալիս առկա հասարակական խնդրի մասին օբյեկտիվ պատկերացում կազմելու:

²² Комаровский и др. 2001, 170.

Պետական կառավարման մարմինների ապարատի «դեմոնիզացման» դեմ մեկ այլ ծանրակշիռ փաստարկն էլ այն է, որ անհիմն է այն պնդումը, թե պետական ապարատի հիմնական խնդիրն է ապահովել սեփական կորպորատիվ շահերը՝ պայմանավորված նրա գործունեության նկատմամբ արդյունավետ վերահսկողության գործիքների բացակայությամբ: Նման օպերացիոնալ չափման գործիքներ գոյություն ունեն. դրանց կիրառումը պահանջում է քաղաքական կամք պետական և քաղաքական կառավարման դերակատարների կողմից:

Իշխանության քաղաքական և վարչական ճյուղերի հարաբերությունները հայրենական արդի հետազոտական թեմաներից են: Պետություն-հասարակություն հարաբերությունների համատեքստում ստեղծվել են պետական քաղաքական և պետական վարչական կառավարման փոխազդեցության մոդելներ:

Օրինակ, ուշագրավ է արդիականացման տեսության հեղինակներից Շ. Էյզենշտադտի առաջարկված մոդելը, որը նկարագրում է գործադիր և քաղաքական իշխանության սուբյեկտների միջև փոխգործակցության տարբերակները տարբեր հասարակություններում՝ ավանդական, անցումային և ժամանակակից²³:

Ավանդական հասարակության մեջ բյուրոկրատիան կողմնորոշված է դեպի կառավարությունը, քանի որ այն քաղաքական իշխանության լիակատար իշխանության ներքո է. բացակայում է կորպորատիվը, պետական պաշտոնյան կառավարող դասի և պետության՝ ի դեմս բարձրագույն իշխանության ծառայողի դերում է (ավանդական մոդել): Ժողովրդավարությանն անցման շրջանում, երբ բյուրոկրատիան արդեն դուրս է եկել ավտորիտար վերահսկողությունից, սակայն դեռևս լիարժեք չի անցել քաղաքացիական հասարակության վերահսկողության տակ, պարփակված է իր մեջ, ապահովում է սեփական շահերը քաղաքական և իրավական վերահսկողության բացակայության պայմաններում, բարձրաստիճան պաշտոնյաները կենտրոնացած են անձնական հարստացման վրա, ծաղկում են նեպոտիզմը և կոռուպցիան, կառավարումը հիմնականում ֆորմալ բնույթ է կրում (անցումային մոդել): Ժամանակակից հասարակությունը բյուրոկրատիային կողմնորոշում է դեպի հասարակության շահերը, քաղաքացիական ծառայողները անկախ են քաղաքականությունից, ենթակա են կառավարությանը, սոցիալապես և իրավականորեն պաշտպանված են, հասարակության կողմից վերահսկվում են (արդիականացման մոդել):

Պետական քաղաքական և պետական վարչական կառավարման մարմինների փոխգործակցության մեկ այլ մոդել առաջարկել է Ֆ. Ռիգսը²⁴, որ

²³ Eisenstadt 2001, 35.

²⁴ Riggs 1993.

համակարգել է ըստ պաշտոնյաների կուսակցական պատկանելության և նրանց քաղաքական կողմնորոշման համակցության իրավիճակները: Քաղաքացիական ծառայությունը կարող է լինել կուսակցական, բայց ցածր ու խիստ քաղաքականացված, կամ կարող է կուսակցական չլինել՝ նույնքան ցածր ու խիստ քաղաքականացված: Գոյություն ունեն քաղաքական և վարչական կառավարման պետական մարմինների (քաղաքական իշխանություն և բյուրոկրատիա) փոխգործակցության նաև այլ մոդելներ:

Այսպիսով, կարելի է անդել, որ երկրում հանրային և քաղաքական կառավարման արդյունավետության բարձրացման ռազմավարական և գործառնական գործիքների հետագա զարգացման համար առկա է տեսական լայն հիմք, որը կարիք ունի դրա կիրառական կիրառման քաղաքական կառավարման պրակտիկայում:

Եզրակացություններ

Եզրափակելով, կարող ենք փաստել, որ պետական քաղաքական և պետական վարչական կառավարման բարդ հարաբերությունները առանցքային դեր են խաղում կառավարչական լանդշաֆտի ձևավորման գործում: Ուսումնասիրությունն ընդգծում է քաղաքական ղեկավարության և բյուրոկրատական կատարողականի միջև հավասարակշռված փոխգործակցության պահպանման անհրաժեշտությունը՝ արդյունավետ պետական կառավարում ապահովելու համար: Բյուրոկրատիայի և հանրային ընտրության տեսությունները արժեքավոր պատկերացումներ են տալիս այս փոխազդեցության դինամիկայի վերաբերյալ՝ ընդգծելով համակարգի ներուժը և մարտահրավերները: Քանի որ ՀՀ-ն շարունակում է զարգացնել իր պետականաշինության գործընթացները, այս հետազոտության արդյունքները հիմնարար շրջանակ են առաջարկում ռազմավարական պլանավորման, քաղաքականության իրականացման և ընդհանուր կառավարման արդյունավետության բարելավման համար: Այս տեսական հասկացությունների շարունակական վերլուծությունն ու կիրառումը էական նշանակություն կունենան ապագա քաղաքական և վարչական մարտահրավերներին դիմակայելու համար:

Օգտագործված գրականություն

- ՀՀ օրենքը «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=120920> (ներբեռնման օրը՝ 11.05.2024):
- ՀՀ կառավարության պաշտոնական կայք՝ <https://www.gov.am/am/bodies-under-government/> (ներբեռնման օրը՝ 11.05.2024):
- Восленский М.С. 1991, Номенклатура. Господствующий класс советского общества, Москва, «Прогресс», с. 624.
- Кезин А.В. 2002. К33 Менеджмент: теории управления организациями: учеб. - методич. пособие, Москва, «Гардарики», с. 270.

- Комаровский В.С., Сморгунов Л.В., Анохин М.Г., Ачкасов В.А., Быков В.П., Волкова А.В., Гаман-Голутвина О.В., Грибанова Г.И., Елисеев С.М., Зотова З.М. и Курочкин А.В. 2019, Политико-административное управление, с. 407.
- Крозье М. 2011, Современное государство-скромное государство. Другая стратегия изменения. Социология власти, (2), с. 189-200.
- Масловский М.В., Битэм Д. 1997. Бюрократия, пер. с англ. М. Масловского. Социологический журнал, (4), п. 165-185.
- Buchanan James and Gordon Tullock 1999, The Collected Works of James M. Buchanan, Vol. 3, The Calculus of Consent: Logical Foundations of Constitutional Democracy. Indianapolis: Liberty Fund, p. 361.
- Cornell A., Knutsen C.H., Teorell J. 2020, Bureaucracy and Growth, Comparative Political Studies, 53 (14), p. 2246-2282.
- Dahlström C., Lapuente V. 2017, Organizing Leviathan: Politicians, Bureaucrats and the Making of Good Government, Cambridge University Press, 262 p.
- Downs A. 1966, Bureaucratic Structure and Decision-making, Santa Monica, CA, Rand Corporation, 185 p.
- Eisenstadt S.N. 2001, The Vision of Modern and Contemporary Society, Identity, Culture and Globalization, Brill, p. 25-47.
- Filgueiras F., Palotti P., Testa G.G. 2023, Complexing Governance Styles: Connecting Politics and Policy in Governance Theories, SAGE Open, 13 (1), p. 1-19.
- Gibson J.L., Caldeira G.A., Spence L.K. 2003, Measuring Attitudes toward the United States Supreme Court, American Journal of Political Science, 47 (2) p. 354-367.
- Gouldner A.W. 1980, The Coming Crisis of Western Sociology, New York, Basic Books, 528 p.
- Hibbing J.R., Theiss-Morse E. 2001, What is it about Government that Americans Dislike? Cambridge, Cambridge Univ. Press, 279 p.
- Howlett M. 2009, Governance Modes, Policy Regimes and Operational Plans: A Multilevel Nested Model of Policy Instrument Choice and Policy Design, Policy Sciences, 42, p. 73-89.
- Hurwitz J., Peffley M. 2005, Explaining the Great Racial Divide: Perceptions of Fairness in the U.S. Criminal Justice System, The Journal of Politics 67 (3), p. 762-783.
- Johansen A.G. 2023, Caring for the Bureaucracy, In: Lydahl, D., Mossfeldt Nickelsen, N.C. (eds), Ethical and Methodological Dilemmas in Social Science Interventions, Springer, p. 225-239.
- Meier K.J., John Bohte 2006, Politics and the Bureaucracy, 5th ed. Boston, MA, Cengage Learning, 284 p.
- Merton R.K. 1963, Bureaucratic Structure and Personality, Social Forces, 18(4), p. 560-568.
- Niskanen W.A. 1968, The Peculiar Economics of Bureaucracy, The American Economic Review, 58(2), p. 293-305.
- Rahman M.S. 2018, Bureaucracy and Politicians Relations, In: Farazmand, A. (eds) Global Encyclopedia of Public Administration, Public Policy, and Governance, Springer, p. 1138-1146.
- Riggs F. 1993, Fragility of the Third World's Regimes, UNESCO: United Nations Educational, Scientific and Cultural Organization. France (Retrieved from <https://policycommons.net/artifacts/10589225/fragility-of-the-third-worlds-regimes/11494294/> on 11 May 2024. CID: 20.500.12592/j9kd7wh).
- Skolnick J.H., Fyfe J.J. 1993, Above the Law: Police and the Excessive Use of Force, New York, Free Press, p. 242.

Weber M. 1978, *Economy and Society: An Outline of Interpretive Sociology*, University of California Press, p. 1469.

ТРАНСФОРМАЦИЯ ПОЛИТИЧЕСКОЙ РОЛИ ГОСУДАРСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ И ПУБЛИЧНОЙ БЮРОКРАТИИ В СОВРЕМЕННОМ ОБЩЕСТВЕ: ПОЛИТИКО-ПРАВОВОЙ АСПЕКТ

Марина Маркарян

Резюме

Развитие концепции государственно-политического управления всегда было в центре внимания исследователей. Государственно-политическое управление и государственно-административное управление представляют собой иерархическую систему госуправления, где политическое управление государством является наиболее важным уровнем государственного управления. Административное управление, с другой стороны, определяется как уровень реализации политических решений, принимаемых в государственных органах власти путем принятия административных актов, направленных на их исполнение. Кооперация и взаимовлияние этих областей имеют решающее значение для их взаимоотношений.

Ключевые слова – государственное управление, государственное политическое управление, административное управление, бюрократия, государственная служба, оперативные инструменты, эффективность государственного управления.

TRANSFORMATION OF THE POLITICAL ROLE OF GOVERNANCE AND PUBLIC BUREAUCRACY IN MODERN SOCIETY: POLITICAL AND LEGAL ASPECT

Marina Margaryan

Abstract

The development of the concept of state-political governance has always been the focus of attention of researchers. Public administration is a hierarchical system, comprising public-political administration and public-administrative administration. State-political management involves making significant state political decisions, while state-administrative management entails implementing these decisions through administrative acts in fulfillment of political ones. These spheres are interconnected and are mutually influencing each other.

Key words – public administration, political governance, state governance, bureaucracy, civil service, operational instruments, state governance efficiency.

MAJOR GEOPOLITICAL CHANGES IN THE PERSIAN GULF REGION: THE RISE OF CHINA

Knarik Sargsyan

Institute of Oriental Studies, NAS RA
Marshal Baghramyan 24/4, Yerevan, RA
Email: Kn.sargsyan.yasu@gmail.com
ORCID: 0009-0006-3567-279X

The article has been delivered on 10.08.2024, reviewed on 07.10.2024, accepted for publication on 03.12.2024
DOI: 10.53548/0320-8117-2024.3-105

Abstract

China has emerged as a dominant economic player in the Gulf region, demonstrating a proactive policy in the region. China's expanding economic and political involvement in the Gulf region indicates the successful application of Chinese soft power and the growing interest of the region's states towards Beijing. The Gulf Cooperation Council (GCC) states have shown keen interest in China's long-term economic investments. Chinese investments entered the region when these countries aimed to diversify their economies as part of national development visions. The GCC countries have achieved significant progress within the framework of the "One Belt One Road Initiative".

Among the most pressing issues in the Persian Gulf are internal contradictions, rivalries and confrontations, which have long been typically manipulated and exploited by external actors. This reality has not been adequately evaluated from a political standpoint within the region, which can be devastating to the region. China is also attractive to the GCC countries due to its non-imposition of political prerequisites. China's long-term involvement in the region can be supplemented by additional tools, including mediation initiatives. Over time, China has become a balancing force for the region due to its "soft power" and economic capabilities.

Key words – GCC, China, Qatar, "soft power", geopolitics, security, international relations.

Introduction

With the expansion of its national and regional interests and the acquisition of global dimensions in its foreign policy and economic strategy, China has begun to assume responsibility for the fate of various regions, albeit with reservations¹. One of the effective tools for realizing China's foreign policy goals is "soft power", whose arsenal includes China's cultural values. For China, cultural "soft power" is essential for strengthening international and national influence².

¹ Bergsten 2022, 10.

² CPC Central Committee Bimonthly. Enhance China's Cultural Soft Power.

Beijing actively uses public diplomacy to project the influence of "soft power" on international platforms, form a positive image, and promote the realization of its interests and goals³. In the ideological and political propaganda of China's public diplomacy, the "Chinese Dream" put forward by Xi Jinping in 2012 is at the forefront, the main components of which are a solid and prosperous state, democracy, national revival, and rejuvenation of the Chinese nation⁴. Xi Jinping's "Chinese Dream" concept became the ideological basis for the "New Silk Road" or "Silk Road Economic Belt" and the "21st Century Maritime Silk Road" initiative⁵. In 2016, the New Silk Road strategy was officially renamed "One Belt One Road" and enshrined in the PRC constitution⁶.

China's principle of non-interference is a crucial element of its national security policy. However, it should be noted that the Chinese principle of non-intervention policy, the rejection of foreign military presence and the development of mutually beneficial economic and trade relations as the main issues are no longer sufficient for China's security policy and vital interests⁷.

Many countries in the Middle East, whether US allies or not, see China as a counterbalance to Washington's influence in the region. They share with Beijing a common desire to limit US global dominance and Western influence in their domestic affairs.

On January 13, 2016, Chinese President Xi Jinping published the first fundamental official document reflecting China's interests in the MENA, the "White Paper" or "1+2+3" Strategy⁸. "1" is the primary goal of energy cooperation, "2" is the construction of infrastructure, plus trade and investment facilitation, and "3" refers to the joint development of new technologies in the fields of atomic energy, renewable energy and satellite. It is thus clear that energy security is a key aspect of the Chinese approach to the Middle East, with infrastructure, trade and investment forming the "wings" of China's strategy⁹. Although the "1+2+3" policy is considered primarily a geoeconomic rather than a geopolitical strategy, China officially recognises that the region's infrastructure and economic development goals are intertwined with long-term political and security plans. As the first document outlining China's strategy for the Arab world, it states that achieving China's core objectives in the region requires greater engagement, reaffirming China's political will to establish peace and stability in the Middle

³ Sayama 2016, 9.

⁴ BBC News. What Does Xi Jinping's China Dream Mean?

⁵ Chaziza 2020, China-Bahrain, 71.

⁶ European Foundation for South Asian Studies 2019, 3.

⁷ Dorsey 2017, 1.

⁸ Haenle P. Xi's Vision for China's Belt and Road Initiative. Carnegie Endowment for International Peace.

⁹ Garlick, Havlová 2020, 88.

East¹⁰. Another element of China's "soft power" toolkit is mediation diplomacy. Beijing appears as a peacekeeper in managing conflicts, crises and other security events in the Middle East, offering "mediation for peace"¹¹. Economic direction is vital in China's "soft power" strategy and is carried out mainly through investment attraction. Unlike the US, China has promoted its investment programs worldwide without imposing political conditions, which has become a tool of Chinese "soft power" in modern times¹².

The Rise of China in the Gulf: Main Trends

China's relations with the GCC countries have expanded significantly in recent years, covering bilateral geopolitical, economic, trade, energy and security interests. China has become one of the most essential extra-regional economic partners of the region's countries. The intensifying China-US rivalry creates more opportunities for regional powers to maneuver politically. China engages in strategic hedging in the region, which allows it to take advantage of the US security umbrella in the region and the interests of regional countries to forge ties through trade and investment. It is a mistake to assume that this approach is neutral¹³. Of course, the GCC countries do not expect that China's foreign policy under Xi Jinping will soon become a struggle to overthrow the US from the position of the guarantor of the security of the Gulf. The rise of China and its growing economic and trade ties to the region could give the Gulf states greater leverage to pressure the US into a more substantial commitment to their security, regime stability, and regional agendas¹⁴.

In recent years, Chinese cultural "soft power" has become another important aspect of cooperation with the Gulf countries. Beijing has increasingly emphasised Chinese language instruction at the MENA, building dozens of Confucius institutions. In addition to the Confucius Centers, Beijing works to establish and expand Chinese language and culture departments at various universities, funds the establishment of Chinese cultural institutions, and sponsors multiple Chinese cultural events in these countries¹⁵.

Foreign investments are essential for realizing the GCC countries' national visions. There is a strong connection between these programs and the BRI. Many leaders in the Gulf openly create an economic system beyond Washing-

¹⁰ Almeida M. China's 'Marshall Plan' for the Arab World. Arab News.

¹¹ Sevilla 2017, 89.

¹² Fulton 2019, 7.

¹³ Fulton 2020, 493.

¹⁴ Fulton 2019, 13.

¹⁵ Бребдани 2022, 36-37.

ton's control¹⁶. An interconnected network of industrial parks and ports established by Chinese companies in some Gulf countries could challenge US dominance in the Gulf region¹⁷.

Although China and the US may agree on some basic regional principles, namely stability and free navigation in the region, competition between these powers will likely intensify, which is also due to the increase of GCC-China cooperation in the technological domain. The "Digital Silk Road" is vital to the Gulf countries. China's growing high-tech capabilities are deepening cooperation with GCC states, rapidly growing their digital governance platforms. For these states, technology-based enterprises, artificial intelligence and "smart cities" are the main attractions of China's expanding digital footprint¹⁸.

The GCC banking and financial system is integrated into the emerging Redback Zone, where banking and financial transactions are based on the Chinese yuan as the international currency. The yuan is already used to settle financing non-cash payments between some Gulf countries and China¹⁹. In April 2015, the Industrial and Commercial Bank of China launched the Middle East's first center for clearing transactions in the Chinese yuan in Qatar²⁰.

On July 10, 2018, the 8th Ministerial Meeting of the China-Arab States Cooperation Forum was held in Beijing, resulting in the "Declaration of Actions on China-Arab States Belt and Road Cooperation"²¹. During the meeting, Chinese Foreign Minister Wang Yi noted that for the progress of economic relations between China and Arab states, it is important to combine the construction and operation of four Chinese industrial parks in Egypt, UAE, Saudi Arabia and Oman with neighboring ports, including the Khalifa Port in Abu Dhabi, the port of Djibouti and Port Said in Egypt to provide industrial park-port connectivity²².

Investment cooperation is one of the pillars of Chinese "soft power"²³. China invests heavily in projects critical to implementing the BRI in the Gulf region. A vivid example of this is the "Huawei Duqm" port development project, one of the joint projects of the BRI and "Oman Vision-2040"²⁴. Duqm port will be available for military use and logistical support. Chinese influence could extend

¹⁶ Chaziza 2020, China-Bahrain, 80.

¹⁷ Chaziza 2019, 52-53.

¹⁸ Ehteshami 2023, 8.

¹⁹ Saidi N. The Gulf Should Pivot East and Build the "New Silk Road", HuffPost.

²⁰ Hollingsworth J. Why Qatar Matters to China, in Spite of Gulf Isolation, South China Morning Post.

²¹ Fulton J. For China, the Belt and Road run through the Middle East. South China Morning Post.

²² Xinhua. Wang Yi: China and Arab States Should Jointly Forge the Cooperation Layout Featuring "Industrial Park-Port Interconnection, Two-Wheel and Two-Wing Approach.

²³ Fulton 2020, China in the Persian Gulf, 496.

²⁴ Asian Infrastructure Investment Bank. Oman: Duqm Port Commercial Terminal and Operational Zone Development.

beyond the Gulf to East Africa and Pakistan through this port²⁵. The construction of the new business center "Silk City" or "Madinat al-Harir" in Kuwait is also being financed within the framework of the BRI. It will become a regional trade and finance hub, connecting the Gulf with Central Asia and Europe. As part of the Silk City development plans, Kuwait signed an agreement with Huawei in July 2018 to implement the intelligent cities strategy in Kuwait²⁶. The above projects are some of the many projects that China is financing in the Gulf.

In December 2022, the first China-GCC Summit was held in Riyadh. One of the first areas of cooperation discussed during the summit was approving a joint action plan for 2023-2027 to strengthen the existing strategic partnership between the Gulf countries and China in the economic, political and cultural fields. Xi Jinping has expressed his desire to establish a China-Gulf Forum on the Peaceful Use of Nuclear Energy. The other topics discussed during the summit were security and stability and the priority of restoring international peace through mutual respect and cooperation²⁷.

Sino-Qatari Relations: from Constructive Ties to Strategic Partnership

Sino-Qatari ties have strengthened significantly in recent years. China's perception of its relations with Qatar is delineated in its understanding of the regional order in the Middle East. It shows its assessment of the geopolitical factors in Gulf countries. The diplomatic and economic aspects of Qatar-China relations are well institutionalized. China considers Qatar an essential partner in promoting the BRI, especially its economic and geographical components, which are important in creating China-GCC free-trade zones. Relations between the two countries have experienced steady development in the political, economic, communication, trade and investment, energy, financial and cultural spheres²⁸. China is Qatar's largest trading partner. In 2021, the trade volume between the two countries reached more than 17 billion dollars²⁹.

The Qatar National Vision-2030 (QNV-2030) envisages development in four interrelated areas: human, social, economic and environmental³⁰. Beijing views Qatar as an essential partner in advancing the BRI project, emphasizing Qatar's economic and geopolitical power, which is vital in establishing the GCC Free Trade Area³¹. The two sides want to strengthen the connection between the BRI

²⁵ Chaziza 2019, 49-51.

²⁶ Chaziza 2020, China's Strategic Partnership, 510.

²⁷ Arab News. China and GCC Natural Partners for Cooperation. Chinese President Xi Jinping Tells Riyadh Summit'.

²⁸ Santhosh P. Qatar Seen Playing a Key Role in China's Belt and Road Plan. Gulf Times.

²⁹ The Observatory of Economic Complexity. China (CHN) and Qatar (QAT) Trade.

³⁰ Chaziza 2020, China-Qatar, 83.

³¹ Chaziza 2020, China-Qatar, 79.

and the QNV-2030 strategy in the following areas: energy, infrastructure, financial investment and high technology³². Only in June 2023, China's exports to Qatar amounted to 329 million dollars, and from Qatar to China - 1.39 billion dollars³³. The historic visit of Qatari Emir Tamim to China in November 2014 played a crucial role in establishing the Sino-Qatari strategic partnership. The visit ushered in a new era of cooperation between the two countries³⁴. China signed a strategic partnership agreement with Qatar in 2014³⁵. In the same year, Qatar signed an agreement to establish the "BRI Joint Investment Fund" with China³⁶.

As mentioned, the Middle East's first center for clearing transactions in the Chinese yuan was launched in Qatar. The center aims to provide local financial institutions access to the yuan, promote wider cross-border use, and expand opportunities for increased trade investment between Beijing, Doha and regional countries³⁷. When Qatar was chosen as the 2022-FIFA World Cup host, China Railway Construction won the contract to build Lusail Stadium³⁸. It is noteworthy that the Qatar crisis played an important role in the deepening of Sino-Qatari relations. China took advantage of the Qatar-Gulf crisis to improve its trade and economic position in Doha. Deep Sino-Chinese cooperation during the crisis helped to avoid diplomatic and economic isolation. In January 2017, Qatar launched the first regular direct connection between Hamad Port and Shanghai³⁹. In April of the same year, the "Qatar Chamber" and the "China Council for the Promotion of International Trade" signed an agreement to deepen cooperation between the two sides⁴⁰.

In September 2018, state-owned «Qatargas», the world's largest liquefied natural gas producer, signed a 22-year contract with "PetroChina International" to supply China with about 3.4 million tonnes of liquefied natural gas per year⁴¹.

The state visit of Sheikh Tamim bin Hamad Al-Thani to China in January 2019 drew a roadmap for developing the strategic partnership between the two countries in the political, economic, investment, energy, technology and security sectors⁴². Financial investments and cooperation in high technologies are new

³² Silk Road Briefing. China's Belt & Road Initiative and Qatar.

³³ The Observatory of Economic Complexity. China (CHN) and Qatar (QAT) Trade.

³⁴ Chaziza 2020, China-Qatar, 83.

³⁵ Fulton 2019, 4.

³⁶ Reuters. Qatar's Wealth Fund to Launch \$10 Billion Investment Fund with China's CITIC.

³⁷ Hollingsworth J. Why Qatar Matters to China, in Spite of Gulf Isolation, South China Morning Post.

³⁸ Reuters. China Railway Construction Corp Wins Qatar World Cup Stadium Contract.

³⁹ Silk Road Briefing. China's Belt & Road Initiative and Qatar.

⁴⁰ Chaziza 2020, China-Qatar, 84.

⁴¹ Chaziza 2020, China-Qatar, 91.

⁴² Xinhua. China, Qatar Agree to Deepen Strategic Partnership.

growth points in Sino-Qatari relations. The "Qatar Free Zones Authority" is one of the promoters of implementing the BRI in Qatar, opening doors for investors in Qatar and China. In 2019, the "Qatar Free Zone Authority" signed four separate memorandums with the "China Council for the Promotion of International Trade", the "Xiamen Free Trade Zone", the "Shenzhen cross-border e-commerce association" and the "China Harbor Engineering Company" within the framework of the BRI⁴³. "Huawei" actively supports the development of ICT professionals, the prime example of this is Huawei's "Seeds for the Future" educational program in Qatar. Qatar's National Vision-2030 emphasizes digital transformation as an important pillar for a sustainable digital economy of the future⁴⁴.

The meeting of foreign ministers of the two countries on March 30, 2022, highlighted the continued support to ensure the synergy of the BRI and QNV-2030. The parties agreed to strengthen cooperation in energy, industry, culture, education, sports and other fields⁴⁵. The two countries' common economic and strategic interests drive the security partnership with Doha. In November 2022, "Sinopec" and "Qatar Energy" signed a 27-year long-term LNG purchase and sale agreement. Earlier that year, Qatar Energy signed five deals for North Field East (NFE), including six LNG trains that will ramp up Qatar's liquefaction capacity to 126 million tons per year by 2027 from 77 million⁴⁶. This deal shows how China is becoming increasingly important in the global LNG market as it seeks to fuel its manufacturing base while transitioning away from more carbon-intensive fuel sources, such as coal. Moreover, at the same time, this deal demonstrates the growing role of Chinese energy companies in the Middle East. The LNG supply deal, which guarantees Chinese LNG imports until the 2050s, has moved Qatar closer to China. Its entry into the Gulf energy sector is part of a multifaceted engagement strategy to expand its economic and geopolitical footprint⁴⁷. In June 2023, CNPC and Qatar Energy signed a second major gas supply deal, under which China will purchase 4 million tons of LNG annually from Qatar. CNPC will also acquire a 1.25 per cent stake in Qatar's North Field East LNG project expansion⁴⁸.

Qatar has generally been agile in pursuing its competing geopolitical ambitions between East and West. Doha also manages its delicate position between

⁴³ Shoeb M. Belt & Road Initiative to Bring Qatar and Mideast Closer to the World: QFZA Chief. The Peninsula.

⁴⁴ Teletimes International. Huawei Opens a New State-of-the-Art Office in Qatar.

⁴⁵ Xinhua. Wang Yi Meets with Qatari Deputy Prime Minister and Foreign Minister Sheikh Mohammed Bin Abdulrahman Al Thani.

⁴⁶ Reuters. Qatar seals 27-year LNG deal with China as competition heats up.

⁴⁷ Dargin J. What's at Stake in the Massive China-Qatar Gas Deal, Carnegie Endowment for International Peace.

⁴⁸ China Daily. CNPC inks 27-year deal with Qatar.

Iran and Saudi Arabia in a concerted effort not to antagonize either side unnecessarily⁴⁹. The relative decline of US hegemony and China's growing influence in the Gulf may affect the Sino-Qatari strategic partnership. Qatar firmly maintains its strategic alliance with the US but seeks to protect its country from regional crises or threats from power rivalry⁵⁰.

The vital factor in China-Qatari relations is maintaining a delicate balance in the complex major power competition and rivalries. Doha's welcome of China's rising impact in the Persian Gulf is also connected with Doha's inclination to assume a more significant role in the region to enhance its diplomatic maneuverability. Sino-Qatari relations are based on shared complementary economic and strategic interests, such as synergizing the implementation of BRI projects with the Qatar National Vision-2030.

China's Balancing Role between Saudi Arabia and Iran

In April 2016, Saudi Arabia announced its National Vision-2030 plan, officially presented at the G20 Summit in Hangzhou, China⁵¹. At the first meeting of the China-Saudi Arabia High-Level Committee in Beijing on August 31, 2016, the Chinese and Saudi sides signed an agreement to establish a joint venture in Jizan Basic Industrial City⁵². The parties established a high-level joint committee to facilitate the alignment of the OBOR and the "National Vision-2030"⁵³. During the meeting of the Saudi Arabia and China leaders in March 2017, President Xi officially expressed his support for implementing Saudi Arabia's "National Vision-2030"⁵⁴. Among the well-known projects in this framework is the \$500 billion smart city, the Saudi metropolis of Neom on the Red Sea coast⁵⁵.

Saudi Arabia-China energy cooperation includes the plan to build nuclear reactors based on the Sino-Saudi agreement, which should be operational by 2032⁵⁶. One of China's naval maintenance facilities in the region is the port of Jeddah in Saudi Arabia⁵⁷. The Chinese Navy and the Royal Saudi Navy held the three-week Blue Sword naval exercise in November 2019 at the King Faisal Naval Base⁵⁸.

⁴⁹ Dargin J. What's at Stake in the Massive China-Qatar Gas Deal, Carnegie Endowment for International Peace.

⁵⁰ Chaziza 2020, China-Qatar, 82-83.

⁵¹ Chen et al. 2018, 364.

⁵² The State Council of the PRC, China, Saudi Arabia Ink Cooperation Deals.

⁵³ Chen et al. 2018, 369.

⁵⁴ Chen et al. 2018, 367.

⁵⁵ Fulton 2020, China-Saudi Arabia, 522.

⁵⁶ Garlick, Havlovn 2020, 12.

⁵⁷ Sun D. China's Soft Military Presence in the Middle East. Middle East Institute.

⁵⁸ Liangxiang 2020, 14.

In 2022, at the first China-Gulf Summit held in December, Saudi Arabia and China signed a comprehensive strategic partnership agreement that includes a series of deals and memoranda of understanding. Xi Jinping's warm welcome starkly contrasted the chilly atmosphere surrounding US President Joe Biden's visit to the kingdom earlier this year⁵⁹.

As for relations with Iran, they are stable and based on the solid foundations of shared opposition to US hegemony in the Middle East, mutual economic interests and security cooperation. Tehran uses the "Look East" policy to promote its regional and military power to counter US power in the Gulf region⁶⁰.

The "China-Iran Comprehensive Strategic Partnership" was approved by the administration of President Hassan Rouhani in June 2020⁶¹. The agreement includes plans to develop several ports in Iran within the framework of the BRI, such as "Bandar-e-Jask", where having a base would not only allow China to control the US Navy's Fifth Fleet based in Bahrain but together with ports in Djibouti and Gwadar, could increase China's position in Indo-Pacific region⁶².

The China-Iran 25-year cooperation agreement was signed in 2021, on March 27, during the visit of the Chinese Foreign Minister to Tehran. The document's need was first discussed in 2016 during the visit of Chinese President Xi Jinping to Iran⁶³. From 2016 to the signing day, the document went through a whirlwind of long diplomatic work. The document's content was not published; only some clarifications were presented⁶⁴. A few months before the signing, a document appeared on the Internet, presented as a draft of a 25-year comprehensive cooperation program. After the publication of the project, it became known that China would establish free trade zones in Maku in northwestern Iran, Abadan, and Qeshm Island. The launch of the 5G system in Iran, deepening cooperation in non-oil sectors and other areas of bilateral cooperation are planned. The document also points to the deepening of military cooperation⁶⁵.

Sino-Iranian ties will undoubtedly transform the region's political landscape in favour of Iran and China, reducing the influence of the US relatively. The above agreement provides an excellent opportunity for the two countries to se-

⁵⁹ CNN. Saudi Arabia and China Will Align on Everything from Security to Oil, but Agree Not to Interfere on Domestic Issues.

⁶⁰ Foreign Policy. Iran's Pact with China is Bad News for the West.

⁶¹ Foreign Policy. China Won't Rescue Iran.

⁶² Al Jazeera. What the New Iran-China Partnership Means for the Region.

⁶³ The Diplomat. What's in the China-Iran Strategic Cooperation Agreement?

⁶⁴ The New York Times. China, with \$400 Billion Iran Deal, Could Deepen Influence in Mideast.

⁶⁵ Fassihi F., Myers L., Defying U.S. China and Iran Near Trade and Military Partnership. The New York Times.

cure their economic interests through cooperation. It offers strategic leverage to expand its influence in the Middle East region and out⁶⁶.

In July 2023, Iran became a full member of the Shanghai Cooperation Organization. SCO members emphasized the need for a peaceful settlement of existing differences between countries and noted that unilateral economic sanctions are incompatible with international law. The organisation's countries called to increase the share of transactions in national currencies⁶⁷.

China's expanding presence in the Gulf has led to Beijing's determination to become more involved in regional security and politics. In 2022, during the first China-GCC summit, Xi Jinping urged the Gulf countries to join GSI to "maintain regional peace and stability through joint efforts"⁶⁸.

The next important step for China in establishing itself in the Gulf region is a mediation mission as a tool for GSI implementation, which will contribute to the growth of Beijing's influence in the Gulf. In this regard, regulating relations between Saudi Arabia and Iran was a turning point in the Gulf.

On March 10, 2023, Saudi Arabia and Iran issued a joint statement on the normalization of relations with the mediation of China, citing that an agreement had been reached between the Kingdom of Saudi Arabia and the Islamic Republic of Iran. The statement reflects the intentions of both countries to restore diplomatic relations and reopen their embassies and representations, as well as to respect the sovereignty of states and not to interfere in the internal affairs of states. In addition, the two sides agreed to cooperate in economy, trade, investment, technology, science, culture, sports and youth⁶⁹. China presented itself as a "reliable friend of both countries", keeping an equal distance from both^{70 71}.

In this sense, the Saudi-Iranian deal sets a new precedent in China's foreign policy, with Beijing taking on the role of an international mediator. The China-brokered Saudi-Iran deal, equivalent to the US-led Abraham Accords to cement peace in the Middle East, is another manifestation of the rivalry between Beijing and Washington.

⁶⁶ Maqsood et al. 2023, 91.

⁶⁷ Lucente A. Iran's Membership in Shanghai Cooperation Organization Further Aligns It with Russia, China. *AI-Monitor*.

⁶⁸ The Diplomat. The Global Security Initiative: China's New Security Architecture for the Gulf.

⁶⁹ Jash A. Saudi-Iran Deal: A Test Case of China's Role as an International Mediator. *Georgetown Journal of International Affairs*.

⁷⁰ Farouk Y. Riyadh's Motivations Behind the Saudi-Iran Deal. *Carnegie Endowment for International Peace*.

⁷¹ The two regional rivals have held talks in Oman and Iraq in the past two years. They could have chosen any country to achieve their ultimate goal but decided on China shortly after Xi Jinping's recent visit to Saudi Arabia.

Chinese mediation would give Beijing greater prestige as a global player that resolved a complex conflict in such a seething region. The deal is a diplomatic victory for China amid waning US influence in the Middle East.

Conclusion

The successful implementation of the Chinese "soft power", including China's increasing economic and political role in the Gulf region indicates the GCC countries growing interest towards Beijing. The GCC countries are interested in China's long-term economic investments. On the other hand, China has avoided the direct confrontation with the USA. Beijing realizes the US dominance in security and military spheres. Meanwhile, China has sought to fill other vacuums without causing tension, which is a testament to Beijing's prudence. The Chinese investments came when GCC countries were seeking to reduce their hydrocarbon dependency and diversify their economies as part of national development programs. The study shows that the GCC countries have progressing engagement in the Belt and Road Initiative.

Beijing still has to overcome many stages in the Persian Gulf region. The next one is the mediating mission. One of the most crucial problems in the Persian Gulf is internal contradictions, competition and confrontation, which, for a long time, as a rule, has been manipulated and used by external actors, including the United States. This reality has not been given an adequate political assessment in the region. It had a destructive role for the region, increasing the division. China is attractive to GCC countries because Beijing does not impose political preconditions. The most sensitive problem for the countries of the Gulf in recent decades has been the confrontation with Iran and the anti-Iranian attitude of the USA.

Looking ahead, we can say that while China is concerned about its interests in the region, it is likely to follow its gradual and cautious pace of engagement and avoid a major confrontation with the United States. All these developments point to the reshaping of the security architecture in the Persian Gulf, where China's influence is strong, based on multilateral cooperation. Beijing can become a competitive and viable but not dominant power in the region.

Bibliography

- Al Jazeera. What the New Iran-China Partnership Means for the Region, <https://www.aljazeera.com/opinions/2020/8/6/what-the-new-iran-china-partnership-means-for-the-region> (02.02.2024).
- Almeida M. China's 'Marshall Plan' for the Arab World. Arab News, <https://www.arabnews.com/node/1338856> (04.02.2024).

- Arab News. 'China and GCC Natural Partners for Cooperation. Chinese President Xi Jinping Tells Riyadh Summit, <https://www.arabnews.com/node/2213751/amp> (downloaded 04.02.2024).
- Asian Infrastructure Investment Bank, Oman: Duqm Port Commercial Terminal and Operational Zone Development, Project Implementation Monitoring Report no. 13, Reporting period from 10/2021/ to 3/2022, https://www.aiib.org/en/projects/details/2016/approved/_download/project-implementation-monitoring-report/July-2022/Oman_P000013_Duqm-Port-Commercial-Terminal-and-Operational-Zone-Development.pdf (downloaded 20.02.2024).
- BBC News. What does Xi Jinping's China Dream mean?, <https://www.bbc.com/news/world-asia-china-22726375> (downloaded 22.02.2024).
- Bergsten F. 2022, *The United States vs. China* (1st ed.), Cambridge, Polity Press, p. 384.
- Chaziza M. China's Approach to Mediation in the Middle East: Between Conflict Resolution and Conflict Management. Middle East Institute, <https://www.mei.edu/publications/chinas-approach-mediation-middle-east-between-conflict-resolution-and-conflict> (downloaded 03.03.2024).
- Chaziza M. 2019, The Significant Role of Oman in China's Maritime Silk Road Initiative. *Contemporary Review of the Middle East*, Vol. 6, Issue 1, p. 44-57.
- Chaziza M. 2020, China's Strategic Partnership with Kuwait: New Opportunities for the Belt and Road Initiative. *Contemporary Review of the Middle East*, Vol. 7, Issue 4, p. 501-519.
- Chaziza M. 2020, China-Bahrain Relations in the Age of the Belt and Road Initiative. *The Institute for National Security Studies*, Vol. 23, Issue 4, p. 68-83.
- Chaziza M. 2020, China-Qatar Strategic Partnership and the Realization of One Belt, One Road Initiative, *China Report*, Vol. 56, Issue 1, p. 78-102.
- Chen J. et al. 2018, Aligning China's Belt and Road Initiative with Saudi Arabia's 2030 Vision: Opportunities and Challenges. *China Quarterly of International Strategic Studies*, Vol. 4, no. 3, p. 363-379.
- Chhabra T. et al. 2020, *Global China: Regional Influence and Strategy*. Brookings, <https://www.brookings.edu/articles/global-china-regional-influence-and-strategy/> (downloaded 10.03.2024).
- CNN. Saudi Arabia and China Will Align on Everything from Security to Oil, but Agree Not to Interfere on Domestic Issues, <https://edition.cnn.com/2022/12/09/middleeast/china-xi-jinping-saudi-arabia-policy-intl/index.html> (downloaded 11.03.2024).
- CPC Central Committee Bimonthly. Enhance China's Cultural "soft power", http://en.qstheory.cn/2020-11/13/c_607602.htm (downloaded 17.03.2024).
- Dargin J. What's at Stake in the Massive China-Qatar Gas Deal, *Carnegie Endowment for International Peace*, <https://carnegieendowment.org/2022/12/29/what-s-at-stake-in-massive-china-qatar-gas-deal-pub-88696> (downloaded 18.03.2024).
- Dorsey J. 2017, China and the Middle East: Venturing into the Maelstrom. *Asian Journal of Middle Eastern and Islamic Studies*, Vol. 11, Issue 1, p. 1-14.
- Ehteshami A. 2023, China's Grand Vision and the Persian Gulf. *Istituto Affari Internazionali*, 20 p.
- European Foundation for South Asian Studies 2019, China's 'String of Pearls' Exhibits the Dragon's Great Game of Loans and Debts, 9 p., <https://www.efsas.org/China's%20String%20of%20Pearls%20exhibits%20The%20Dragon's%20Great%20Game%20of%20Loans%20and%20Debts.pdf> (downloaded 04.04.2024).

- Farouk Y. Riyadh's Motivations Behind the Saudi-Iran Deal. Carnegie Endowment for International Peace, <https://carnegieendowment.org/2023/03/30/riyadh-s-motivations-behind-saudi-iran-deal-pub-89421> (downloaded 08.04.2024).
- Fassihi F., Myers L., Defying U.S., China and Iran Near Trade and Military Partnership. The New York Times, <https://www.nytimes.com/2020/07/11/world/asia/china-iran-trade-military-deal.html> (downloaded 14.04.2024).
- Foreign Policy. Iran's Pact with China Is Bad News for the West, <https://foreignpolicy.com/2020/08/09/irans-pact-with-china-is-bad-news-for-the-west/> (downloaded 18.04.2024).
- Foreign Policy. China Won't Rescue Iran', <https://foreignpolicy.com/2020/12/18/china-wont-rescue-iran/> (downloaded 18.04.2024).
- France 24. Saudi Embassy Resumes Operations in Iran after Seven Years, State Media Reports, <https://www.france24.com/en/asia-pacific/20230809-saudi-embassy-resumes-operations-in-iran-after-seven-years-state-media-reports> (downloaded 20.04.2024).
- Fulton J. For China, the Belt and Road run through the Middle East, South China Morning Post, <https://www.scmp.com/news/china/diplomacy-defence/article/2155258/china-belt-and-road-run-through-middle-east> (downloaded 20.04.2024).
- Fulton J. 2019, China's Changing Role in the Middle East. Washington: Atlantic Council, Rafik Hariri Center for the Middle East, 28 p.
- Fulton J. 2020, China in the Persian Gulf: Hedging under the US umbrella. Routledge Handbook of Persian Gulf Politics, Chapter 36, p. 492-505.
- Fulton J. 2020, China-Saudi Arabia Relations Through the "1+2+3" Cooperation Pattern". Asian Journal of Middle Eastern and Islamic Studies, Vol. 14, no. 4, p. 516-527.
- Fulton J. 2021, China between Iran and the Gulf Monarchies. Middle East Policy, Vol. 28, p. 203-216.
- Gallagher A. et. al. What You Need to Know About China's Saudi-Iran Deal. United States Institute of Peace, <https://www.usip.org/publications/2023/03/what-you-need-know-about-chinas-saudi-iran-deal> (downloaded 20.04.2024).
- Garlick J., Havlová R. 2020, China's "Belt and Road" Economic Diplomacy in the Persian Gulf: Strategic Hedging amidst Saudi-Iranian Regional Rivalry. Journal of Current Chinese Affairs, Vol. 49, Issue 1, p. 82-105.
- Haenle P. Xi's Vision for China's Belt and Road Initiative. Carnegie Endowment for International Peace, <https://carnegieendowment.org/2017/05/09/xi-s-vision-for-china-s-belt-and-road-initiative-pub-69890> (downloaded 28.04.2024).
- Hollingsworth J. Why Qatar Matters to China, in Spite of Gulf Isolation, South China Morning Post, <https://www.scmp.com/news/china/diplomacy-defence/article/2097206/why-qatar-matters-china-spite-gulf-isolation> (downloaded 28.04.2024).
- Jash A. Saudi-Iran Deal: A Test Case of China's Role as an International Mediator. Georgetown Journal of International Affairs. <https://gija.georgetown.edu/2023/06/23/saudi-iran-deal-a-test-case-of-chinas-role-as-an-international-mediator/> (downloaded 02.05.2024).
- Liangxiang J. 2020, China and Middle East Security Issues: Challenges, Perceptions and Positions. Brussels: Istituto Affari Internazionali, 22 p.
- Lucente A. Iran's Membership in Shanghai Cooperation Organization Further Aligns It with Russia, China. Al-Monitor, <https://www.al-monitor.com/originals/2023/07/irans-membership-shanghai-cooperation-organization-further-aligns-it-russia-china> (downloaded 05.05.2024).

- Maqsood A. et al. 2023, Iran-China Deal: Geostrategic-Balancing Against US. *Pakistan Journal of Social Research*, Vol. 5, Issue 1, p. 86-93.
- Mills A., El Dahan M. Qatar seals 27-year LNG deal with China as competition heats up, *Reuters* 21, <https://www.reuters.com/business/energy/qatarenergy-signs-27-year-lng-deal-with-chinas-sinopec-2022-11-21/> (downloaded 07.05.2024).
- Ministry of Foreign Affairs of the PRC. Wang Yi: China and Arab States Should Jointly Forge the Cooperation Layout Featuring “Industrial Park-Port Interconnection, Two-Wheel and Two-Wing Approach”, https://www.mfa.gov.cn/eng/wjb/zzjg_663340/xybfs_663590/xwlb_663592/202406/t20240606_11386399.html (downloaded 10.05.2024).
- Reuters. China Railway Construction Corp Wins Qatar World Cup Stadium Contract, <https://www.reuters.com/article/us-soccer-worldcup-qatar/china-railway-construction-corp-wins-qatar-world-cup-stadium-contract-idUSKBN13N1HV/> (downloaded 11.05.2024).
- Reuters. Qatar’s Wealth Fund to Launch \$10 Billion Investment Fund with China’s CITIC, <https://www.reuters.com/article/business/qatar-s-wealth-fund-to-launch-10-billion-investment-fund-with-china-s-citic-idUSKBN0100QT/>(downloaded 12.05.2024).
- Saidi N. The Gulf Should Pivot East and Build the “New Silk Road”, *HuffPost*, https://www.huffpost.com/entry/the-gulf-should-pivot-eas_b_5010038 (downloaded 12.05.2024).
- Santhosh P. Qatar Seen Playing a Key Role in China’s Belt and Road Plan, *Gulf Times*, <https://www.gulf-times.com/story/614255/qatar-seen-playing-a-key-role-in-chinas-belt-and-road-plan> (downloaded 12.05.2024).
- Sayama O. 2016, China’s approach to “soft power”. Seeking a Balance between Nationalism, Legitimacy and International Influence. *Royal United Services Institute for Defence and Security Studies*, 18 p.
- Sevilla H. 2017, China’s New Silk Route Initiative: Political and Economic Implications for the Middle East and Southeast Asia. *Asian Journal of Middle Eastern and Islamic Studies*, Vol. 11, Issue 1, p. 83-106.
- Shoeb M. Belt & Road Initiative to Bring Qatar and Mideast Closer to the World: QFZA Chief. *The Peninsula*, <https://thepeninsulaqatar.com/article/04/11/2019/Belt-Road-Initiative-to-bring-Qatar-and-Mideast-closer-to-the-world-QFZA-chief> (downloaded 15.05.2024).
- Silk Road Briefing. China’s Belt & Road Initiative and Qatar, 21/11/2022, <http://silkroad2021.org/index-1918.html> (downloaded 15.05.2024).
- Sun D. China’s Soft Military Presence in the Middle East. *Middle East Institute*, <https://www.mei.edu/publications/chinas-soft-military-presence-middle-east> (downloaded 15.05.2024).
- Teletimes International. Huawei Opens a New State-of-the-Art Office in Qatar, <https://teletimesinternational.com/2023/huawei-qatar-udc-tower-pearl-island/> (downloaded 16.05.2024).
- The Diplomat. The Global Security Initiative: China’s New Security Architecture for the Gulf, <https://thediplomat.com/2023/05/the-global-security-initiative-chinas-new-security-architecture-for-the-gulf/> (downloaded 01.03.2024).
- The New York Times. China, with \$400 Billion Iran Deal, Could Deepen Influence in Mideast, 27/3/2021, <https://www.nytimes.com/2021/03/27/world/middleeast/china-iran-deal.html> (downloaded 04.04.2024).
- The New York Times. Defying U.S., China and Iran Near Trade and Military Partnership, <https://www.nytimes.com/2020/07/11/world/asia/china-iran-trade-military-deal.html>
- The Observatory of Economic Complexity. China (CHN) and Qatar (QAT) Trade, <https://oec.world/en/profile/bilateral-country/chn/partner/qat> (downloaded 18.05.2024).

- The State Council of the PRC. China, Saudi Arabia Ink Cooperation Deals, http://www.xinhuanet.com/english/2016-08/30/c_135645729.htm (downloaded 18.05.2024).
- Tiezzi Sh. What's in the China-Iran Strategic Cooperation Agreement? The Diplomat, <https://thediplomat.com/2021/03/whats-in-the-china-iran-strategic-cooperation-agreement/> (downloaded 20.05.2024).
- Xin Zh. CNPC inks 27-year deal with Qatar. China Daily, <https://www.chinadaily.com.cn/a/202306/22/WS6493884ea310bf8a75d6b29c.html> (downloaded 20.05.2024).
- Xinhua. China, Qatar Agree to Deepen Strategic Partnership, <http://en.people.cn/n3/2019/0201/c90000-9543132.html> (downloaded 22.05.2024).
- Xinhua. Wang Yi Meets with Qatari Deputy Prime Minister and Foreign Minister Sheikh Mohammed Bin Abdulrahman Al Thani, https://www.mfa.gov.cn/mfa_eng/wjzbhd/2023/t20220331_10658031.html (downloaded 22.05.2024).
- Бребдани А. 2022, Культурная мягкая сила Китая в арабском мире, «Казачество», N 63 (6), с. 35-41.

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՇՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՐՍԻՑ ԾՈՑԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ. ՉԻՆԱՍՏԱՆԻ ՎԵՐԵԼՔԸ

Քնարիկ Սարգսյան

Ամփոփում

Չինաստանը Պարսից ծոցի տարածաշրջանում դարձել է գերիշխող տնտեսական դերակատար՝ գործուն քաղաքականություն վարելով տարածաշրջանի երկրների հետ: Չինաստանի տնտեսական և քաղաքական հարաճուն դերը Ծոցի տարածաշրջանում վկայում է այս երկրներում չինական փափուկ ուժի հաջող կիրառման մասին, ինչպես նաև ի ցույց է դնում նրանց հետաքրքրությունը Պեկինի նկատմամբ: Ծոցի համագործակցության խորհրդի (ԾՀԽ) երկրները հետաքրքրված են Չինաստանի երկարաժամկետ տնտեսական ներդրումներով: Չինական ներդրումները եղան այն ժամանակ, երբ այս երկրները ձգտում էին դիվերսիֆիկացնել իրենց տնտեսությունը՝ որպես ազգային զարգացման ծրագրերի մաս: Նրանք գրանցել են մեծ առաջընթաց «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության շրջանակում:

Պարսից ծոցի երկրների ամենակնճռոտ խնդիրներից են ներքին հակասությունները, մրցակցությունն ու դիմակայությունը, որոնք երկար ժամանակ է, ինչ շահարկվում և օգտագործվում են արտաքին դերակատարների կողմից: Այս իրողությունը համարժեքորեն չի գնահատվել տարածաշրջանի քաղաքականության տեսանկյունից, և դա կարող է կործանարար լինել ԾՀԽ-ի համար: Չինաստանը գրավիչ է նրանց համար նաև այն առումով, որ այն քաղաքական նախապայմաններ չի պարտադրում: Չինաստանի երկարաժամկետ ներգրավվածությունը այստեղ կարող է համալրվել այլ գործիքակազմով՝ ներառյալ միջնորդական նախաձեռնությունները: Ժամանակի ընթացքում Չինաստանը դարձել է տարածաշրջանի համար հավասարակշռող ուժ՝ շնորհիվ իր «փափուկ ուժի» կիրառման և տնտեսական հնարավորությունների:

Բանալի բառեր՝ ԾՀԽ, Չինաստան, Կատար, փափուկ ուժ, աշխարհաքաղաքականություն, անվտանգություն, միջազգային հարաբերություններ:

КРУПНЫЕ ГЕОПОЛИТИЧЕСКИЕ ИЗМЕНЕНИЯ В РЕГИОНЕ ПЕРСИДСКОГО ЗАЛИВА: ПОДЪЕМ КИТАЯ

Кнарик Саргсян

Резюме

Китай стал доминирующим экономическим игроком в регионе Персидского залива, демонстрируя проактивную политику в регионе. Расширяющееся экономическое и политическое участие Китая в регионе Персидского залива указывает на успешное применение китайской «мягкой силы» в регионе и растущий интерес государств региона к Пекину. Страны Совета сотрудничества арабских государств Персидского залива (ССАГПЗ) проявили большой интерес к долгосрочным экономическим инвестициям Китая. Китайские инвестиции стали поступать в регион, когда эти страны стремились диверсифицировать свою экономику в рамках концепции национального развития. Страны Персидского залива добились значительного прогресса в рамках инициативы «Один пояс, один путь».

Среди наиболее острых проблем в Персидском заливе следует отметить внутренние противоречия, соперничество и конфронтацию, которыми уже давно манипулируют и эксплуатируют внешние игроки. Эта реальность не получила адекватной оценки с политической точки зрения внутри региона, что может иметь разрушительные последствия для региона. Китай привлекателен для стран Персидского залива еще и тем, что не навязывает политических предпосылок. Долгосрочное участие Китая в регионе может быть расширено дополнительными инструментами, включая посреднические инициативы. Со временем Китай превратился в балансирующую силу для региона благодаря своей «мягкой силе» и экономическим возможностям.

Ключевые слова – ССАГПЗ, Китай, Катар, мягкая сила, геополитика, безопасность, международные отношения.

ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

ԿՈՆՖԼԻԿՏԻ ԳՈՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԴՐԱ ՀԱՆԳՈՒՑԱԼՈՒԾՄԱՆ ՄԵԿՆԱԿԵՏ

Ալեքսանդր Մանասյան

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ
ՀՀ, Երևան, Բաղրամյան 24/6
Էլ. հասցե՝ manasyan-a22@mail.ru
ORCID: 0009-0007-5971-6184

Հոդվածը ներկայացվել է 03.10.2024, գրախոսվել է 06.11.2024, ընդունվել է տպագրության 03.12.2024
DOI: 10.53548/0320-8117-2024.3-121

Ամփոփում

Զինված հակամարտությունների¹ արդար կարգավորման մեխանիզմները չեն կարող իրագործվել առանց հասկանալու առանձին դեպքերի ու փաստերի քողի տակ գտնվող դրա խորքային, գոյաբանական պատճառները: Որպես դրանց կարգավորման իրատեսական մեխանիզմ կարող է ծառայել հիմնախնդրի նվազագույն իրավական փաթեթը, որը ներառում է այն փաստերն ու փաստաթղթերը (այդ թվում և իրավական), որոնց շուրջ հակամարտող կողմերը տարածայնություններ չունեն: Ցանկացած հակամարտության գոյաբանական վերլուծությունը ենթադրում է սոցիալական ուժի՝ որպես դրա ըմբռնման բանալի երևույթի սահմանումը: Այդ համատեքստում տեսական կարևորություն է ձեռք բերում արևմտյան և արևելյան (չինական) արդի երկու իրարամերժ սոցիալ-քաղաքական մոդելների համեմատությունը: Դիտարկվող գաղափարներն ու դրույթները բանալի կարող են լինել Ի. Կանտի «Դեպի հավերժական խաղաղություն» աշխատության համարժեք ըմբռնման համար:

Բանալի բառեր՝ կոնֆլիկտի կարգավորման նվազագույն իրավական փաթեթ, տնտեսական մարդ, քաղաքական մարդ, սոցիալական ուժ, սոցիալական ուժի բաղադրիչներ, արևմտյան մոդել, չինական մոդել:

Ներածություն

Անչափ խորն է իմացության տեսության, բարոյագիտության, գեղագիտության մեջ Իմանուիլ Կանտի թողած հետքը, որի ծննդյան 300-ամյակը

¹ Հոդվածում «հակամարտություն» և «կոնֆլիկտ» հասկացությունները օգտագործված են դրանց իմաստների որոշակի տարբերության հաշվառումով: «Կոնֆլիկտը» ավելի լայն հասկացություն է, որով նպատակահարմար է նշանակել հարաբերություն, որի կողմերը գտնվում են անհամաձայնության, տարամիտման, հակադրության, հակասության, առճակատման մեջ: Կոնֆլիկտի ամենասուր ձևը (հաճախ նաև ասվում է՝ բարձրագույն ձևը) պատերազմն է: Սակայն հասկացությունների գործածության պրակտիկան ցույց է տալիս, որ զինված բախումների դեպքում ևս դիմում են «կոնֆլիկտ» հասկացությանը՝ մանավանդ եթե վեճը գտնվում է խաղաղ կարգավորման փուլում, երբ միջնորդների ջանքով կամ առանց դրա կողմերը համաձայնվել են հաստատել հրադադար:

լրացավ այս տարի²: Բավական է ասել, որ փիլիսոփայության այդ ոլորտների մերօրյա շատ ուսումնասիրություններ նրա կողմից փիլիսոփայական օրակարգ բերված հիմնահարցերի հունում են ծավալվում: Այն, որ իմացության տեսության մեջ Կանտի ներդրումը հետագայում գնահատվել է որպես այդ ոլորտում նրա կատարած կոպեռնիկոսյան հեղաշրջում, թերևս ամենից դիպուկ ձևով է ներկայացնում գերմանացի իմաստասերի մեծությունը: Ջուստ փիլիսոփայությունից բացի, Կանտը նաև հայտնի է արեգակնային համակարգի ծագման մասին առաջադրած վարկածով, որ գիտության պատմության մեջ մնացել է «Կանտ-լապլասյան վարկած» անվանմամբ:

Մեծ իմաստասերի հետաքրքրությունների դաշտում են եղել նաև քաղաքականության հրատապ հարցերը: Ամենից հաճախակի հիշատակվող առաջին անգամ 1794 թ. հրատարակված «Դեպի հավերժական խաղաղություն»³ աշխատությունն է: Գործը գրվել է այն ժամանակ, երբ եվրոպական մայր ցամաքում ժամանակակից իմաստով ազգային պետությունների և կայսրությունների ձևավորումը մտել էր ավարտական փուլ: Դա ուղեկցվում էր հեղափոխություններով ու չընդհատվող պատերազմներով, ինչը շատ էր անհանգստացնում եվրոպացի մտածողներին: Պատմաբանները հավերժական խաղաղության գաղափարը վերագրում են մարշալ Մաքսիմիլիան դե Սյուլիլին (1560-1641), որը Հենրիխ Նավարսկու օրոք գլխավորել է ֆրանսիական կառավարությունը: 1713 թ. նման գաղափար է առաջադրել նաև ֆրանսիացի հոգևորական Սեն Պիեռը իր «Հավերժական խաղաղության հաստատման նախագիծ» վերտառությամբ գործում, որում նա առաջադրել է ստեղծել եվրոպական պետությունների դաշնության կամ համադաշնության նման կառույց, մոտավորապես այնպիսին, ինչպիսին մերօրյա եվրոպական միությունն է: Գաղափարը հետաքրքրել է նաև Ժան-Ժակ Ռուսոյին, որը 1751 թ. հանդես է եկել թեմային առնչվող՝ «Դատողություններ Հավերժական խաղաղության նախագծի մասին» վերնագրով հատուկ հոդվածով: Ռուսոն թերահավատությամբ է ընդունել գաղափարը՝ վստահ, որ պետությունների ուժային հավասարությունը միայն կարող է խաղաղության իրատեսական հիմք լինել: Կանտը նույնպես այդ կարծիքին էր: Սակայն նա դրանով չի սահմանափակվել:

Դիտարկումներ Կանտի «Դեպի հավերժական խաղաղություն» աշխատության մասին

Գլխավոր նորույթը, որ իմաստասերը բերել է այս հարցում, համընդհանուր խաղաղության ապահովման վերաբերական ու ներպետական պայման-

² Հոդվածն անդրադարձ է Կանտի «Դեպի հավերժական խաղաղություն» աշխատության մեջ արձարծված հարցերին՝ կոնֆլիկտների փիլիսոփայական իմաստավորման արդիական խնդիրների լույսի տակ:

³ Кант 1994, 6-55.

ների ստեղծումն է: Երկու դեպքում էլ ենթադրվում էր իրավունքի դերի բարձրացում: Հատուկ իրավունքներով վերաբեռակա միջազգային հաստատության ստեղծման վերաբերյալ Կանտի այդ հղացումը XX դարասկզբին իրագործվել է Ազգերի լիգայի ձևով, որին որպես շարունակություն այսօր գործում է ՄԱԿ-ը: Պատերազմների կանխման ներառական պայմանների հարցում առաջ անցնելով իր ժամանակակիցներից՝ Կանտը գտնում էր, որ այդ դերը կարող է կատարել լոկ հանրապետականության ձևաչափով գործող քաղաքացիական հասարակությունը: Գաղափարն իր ավարտուն տեսքը, ըստ Կանտի, պիտի ստանա քաղաքացիական հասարակության իրավաքաղաքական կերպն ընդունած հանրապետությունների դաշնության մեջ:

Կանտի աշխատությունը գրված է նախագծի ձևաչափով ու դրան համապատասխանող լեզվով: Բավական է աչքի անցկացնել աշխատության ենթավերնագրերը՝ համոզվելու համար, որ դրանք ըստ էության համընդհանուր բնույթի այն առաջարկների ու մեխանիզմների մասին են, որ կարող են հնարավոր դարձնել խաղաղության ապահովումը: Ահա դրանցից մի քանիսը՝ «Ոչ մի խաղաղության պայմանագիր այդպիսին չպետք համարվի, եթե դրա կնքման ժամանակ թաքուն պահպանվում է ապագա պատերազմի հիմքը»⁴, «Մշտական բանակները ժամանակի ընթացքում պետք է լրիվ վերանան»⁵, «Պետական պարտքերը չպիտի օգտագործվեն արտաքին քաղաքական գործերում»⁶ և այդպես շարունակ: Դրանցում կարելի է տեսնել լավ առաջարկներ, կարելի է նաև դրանք համարել հավերժական խաղաղության կանխապայմաններ, պահանջներ կամ միջոցներ: Բայց ինչպես նախորդ մտածողների պարագայում է, այդ առաջարկներն էլ բավարար կերպով ապահովված չեն իրագործման մեխանիզմներով: Ասվածը բնավ ստվեր չի գցում խաղաղության ապահովման մեխանիզմների գաղափարի վրա: Մեր խոսքը դրանց իրագործման իրատեսական պայմանների ու մեթոդների մասին է:

Օբյեկտիվ չափանիշների մեթոդը կոնֆլիկտների կարգավորման գործընթացում և նվազագույն իրավաքաղաքական փաթեթի գաղափարը

Մեր օրերում էլ միջազգային կոնֆլիկտների կարգավորման համար մասնագետները դիմում են խնդրի կարգավորման հաջորդական քայլերի ու մեխանիզմների առաջադրման մեթոդին: Ռ. Ֆիշերն ու Ու. Յուրին «Ճանապարհի դեպի համաձայնություն կամ բանակցություններ առանց պարտության»⁷ գրքում առաջարկել են բոլոր կոնֆլիկտների համար կիրառելի օբյեկտիվ չափանիշների մեթոդը՝ միջնորդից պահանջելով ցուցաբերել անկողմ-

⁴ Кант 1994, 6.

⁵ Кант 1994, 8.

⁶ Кант 1994, 9.

⁷ Роджер Фишер и Уильям Юрий 2001, 45-53.

նակալություն ու անշահախնդրություն: Ղարաբաղյան հակամարտությանը նվիրված իմ գործերում պահանջի ձևով առաջադրված այդ գաղափարը ինքս փորձել եմ կոնկրետացնել իրագործելի մեխանիզմի տեսքով: Դրա էությունն այն է, որ միջնորդը պետք է որպես բանակցային գործընթացի մեկնարկային հարթակ ձևավորի կոնֆլիկտին վերաբերող փաստերի ու փաստաթղթերի (այդ թվում և՛ իրավական) փաթեթ, որի շուրջ կողմերի միջև առկա է համաձայնություն: Նման հարթակի ձևավորումը իրատեսական է և իրագործելի, եթե, իհարկե, միջնորդը անշահախնդիր է և հակված է դրան: Փաստերի ու փաստաթղթերի այդպիսի փաթեթը, որը առավելագույնս արդյունավետ կարող է դարձնել բանակցային գործընթացը, անվանել եմ **նվազագույն իրավաքաղաքական փաթեթ**⁸:

Ղարաբաղյան հակամարտության դեպքում նման փաստեր ու փաստաթղթեր կան (այդ թվում և իրավական բնույթի), և դրանք հնչեցվել են Ստեփանակերտի ու Բաքվի կողմից: Միջնորդը ցանկության դեպքում կարող էր դրանք դարձնել համաձայնության մեկնարկային հարթակ ու շարունակել ընդլայնել այն: Նվազագույն իրավաքաղաքական փաթեթը, որքան էլ բովանդակայնորեն համեստ լինի, ունի համաձայնության հարթակն ընդլայնելու ներուժ: Այն միաժամանակ արգելափակում է կեղծիքների մուտքը արդեն համաձայնեցված դրույթների դաշտ: Մեկ օրինակ. Բաքուն 1991 թ. օգոստոսի 30-ի «Ադրբեջանական Հանրապետության անկախության վերականգման մասին» հռչակագրով⁹, և հոկտեմբերի 18-ի «Ադրբեջանական Հանրապետության անկախության մասին սահմանադրական ակտով»¹⁰ հակամարտության սկիզբ է հայտարարել 1918 թիվը: Ստեփանակերտը դեմ չէր դրան և «Լեռնային Ղարաբաղի անկախության մասին Հռչակագրում»¹¹ փաստը արձանագրել է ԼՂՀ-ի հռչակման օրինականության իրավական փաստարկների շարքում: ԵԱՀԿ-ն ոչ միայն չի նկատել դա, այլև ակտիվորեն հակազդել է դրան՝ հակամարտության սկիզբ ընդունելով 1988-ը: Բայց դրանից հետո էլ ԵԱՀԿ-ն անտեսել է նաև 1988-1991 թվականների սկզբունքային իրավական ու քաղաքական փաստերը: Այստեղ մենք չենք անդրադառնա դրան, քանի որ ԵԱՀԿ-ի նման վարքի շարժառիթները առանձին վերլուծության նյութ են:

Կոնֆլիկտների գոյաբանական հիմքերի կարևորության մասին

Որքան էլ իրատեսական լինեն կոնֆլիկտի կարգավորման մեխանիզմներն ու սրանց իրագործման մեթոդները, դրանք ընդհանրապես կարող են

⁸ Манасян 2012, 32.

⁹ Декларация «О восстановлении государственной независимости Азербайджанской Республики». Газета «Бакинский рабочий», 30 августа 1991 г.

¹⁰ Конституционный акт о государственной независимости Азербайджанской Республики». Газета «Бакинский рабочий», 7 ноября 1991 г.

¹¹ Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарии 2008, 866.

շրջանցել հիմնախնդրի խորքային պատճառները, ինչպես դա եղել է վերը հիշատակված դեպքում: ԵԱՀԿ-ն իր առաջարկություններում խնդրի պատճառներին ընդհանրապես չանդրադարձավ: Հետևանքը եղավ այն, որ Բաքուն ստացավ կոտորածներով հարցը «կարգավորելու» իրավունք: Ցեղասպանության վտանգի տակ ԼՂՀ-ի ժողովուրդը դիմեց զանգվածային ելքի: Մոսկվան, որ խաղաղապահ ուժեր ուներ Արցախի Հանրապետությունում, և Եվրոպան, որի իրավասության տակ էր հակամարտության կարգավորումը, հանդուրժեցին դա: Հարցի լայնորեն հայտնի իրավական հիմքերին հակառակ՝ նրանք գտնում էին (և դեռ գտնում են), թե իբր Արցախը Ադրբեջանական Հանրապետության (Ադր.Հ) տարածք է: Խնդիրն այն չէ միայն, որ հենց իրավական հիմքերով Արցախը չի պատկանում Ադր. Հ-ին: Կա ավելի ծանր մեղք, որ գործել են հակամարտության կարգավորմանն առնչվող միջազգային կառույցներն ու պետությունները: Եթե նույնիսկ Արցախը պատկաներ Ադր.Հ-ին, Բաքվի կողմից Արևելյան Անդրկովկասի, Հյուսիսային Արցախի և Նախիջևանի հայության ցեղասպանությունը չէր կարող դիտվել նրա ներքին գործը: Միայն դա բավարար էր, որ նա պատժվեր, և նույնիսկ առանց հիմնախնդրի իրավական հիմքերին անդրադառնալու ճանաչվեր ԼՂՀ-ի անկախությունը: Բայց դրա համար այդ փաստերը և հակամարտության նախընթաց պատմությունը, որտեղ գտնվում են դրա պատճառները, պետք է տեղ ունենային նրա կարգավորման հիմքերում:

Ակնհայտ է, որ կոնֆլիկտի պատճառները տրված չեն դրանց հարուցած դեպքերի մակերեսին: Այդ պատճառների իմացությունը, որը կոնֆլիկտի առարկայի ու բնույթի ըմբռնման պարտադիր պայման է, ձեռք է բերվում սկզբունքորեն այլ մեթոդով: Դա առանձին փաստերի քողի տակ նրա գոյաբանական հիմքերի բացահայտման մեթոդն է: Որքան խորքային են կոնֆլիկտի՝ բացահայտված և կարգավորման գործընթացում ներառված գոյաբանական հիմքերը, այնքան ավելի պարզ է դառնում ճշմարտությունը դրա իրական պատճառների մասին, այնքան ընդլայնվում է բացատրություն ստացող փաստերի դաշտը: Կանտը համաձայն կլինե՞ր այս դատողություններին, չնայած չի դիմում *կոնֆլիկտի գոյաբանություն* եզրույթին և խորհուրդ է տալիս արխիվներում գտնել նախկին գժտությունները, որոնք անտեսվում են պայմանագիր կնքողների կողմից: Այդ մասին նա խոսում է իր աշխատության հենց առաջին հատվածում, որ վերնագրված է՝ «Ոչ մի խաղաղության պայմանագիր այդպիսին չպիտի համարվի, եթե դրա կնքման ժամանակ թաքուն պահպանվում է ապագա պատերազմի հիմքը»¹²: Մեր հարցադրումը պատճառների մասին այլ է և ենթադրում է դրանց որոնումը քաղաքակրթական, քաղաքական ու սոցիալ-տնտեսական այն իրողությունների ընդերքում, որոնցում հայտնված են հակամարտող կողմերը: Խոսքը կոնֆլիկտի գոյաբա-

¹² Кант 1994, 6.

նական հիմքերի մասին է, որոնց կարևորության հիմնավորումը սույն հոդվածի գլխավոր նպատակներից է:

Սոցիալական ուժի մասին

Իբրև ակնհայտ մի բան՝ հաճախ է նկատվում, որ ժամանակակից աշխարհում բախումները ծավալվում են կոնֆլիկտային մրցակցության երեք հարթակներում: Դրանք ազգերի /էթնոսների/, պետությունների ու քաղաքակրթությունների կոնֆլիկտային մրցակցության հարթակներն են¹³: Միջազգային կոնֆլիկտների մեծ մասը իրոք տեղավորվում է վերը առանձնացված հարթակներում կամ անուղակի կապվում է միջազգային հարաբերությունների այդ սուբյեկտների հետ: Բայց կա մեկ այլ գլոբալ բնույթի կոնֆլիկտ, որը դուրս է մնում տեսադաշտից: Դա տնտեսական մարդու և քաղաքական մարդու կոնֆլիկտն է (հարցը առաջին մոտարկմամբ արժարժել ենք «Տնտեսական մարդու և քաղաքական մարդու հակամարտությունը որպես դարաշրջանի գլխավոր հակասություն»¹⁴ և «Սեփականությունը, գիտելիքը և հավատքը որպես ուժի և իշխանության աղբյուրներ»¹⁵ հոդվածներում: Կոնֆլիկտում/պատերազմում բախվում են ուժեր և ստորև **սոցիալական ուժ** հասկացությունը մեզ համար կլինի այն բանալին, որը, կարելի է ասել, բացում է կոնֆլիկտի/պատերազմի «գոյաբանության դռները»: Մենք ելնելու ենք այն գաղափարից, որ ինչպես ֆիզիկական ու կենդանական աշխարհներում, այնպես էլ սոցիալական աշխարհում ուժը օժտված է իր ազդեցության դաշտը կառուցարկելու գոյաբանորեն նախաստեղծ հատկությամբ¹⁶: Իր այդ ատրիբուտով այն ներկայանում է որպես այդ աշխարհների գոյաբանական ընդհանրություն¹⁷: Հասարակական գործընթացներում ուժը, բնական է, ֆիզիկական ու կենդանական աշխարհներում գործառող ուժերից տարբեր դրսևորում¹⁸ ունի: **Սոցիալական ուժ** եզրույթը կոչված է արձանագրելու այդ

¹³ Վերազգային ֆինանսատնտեսական հսկաները նույնպես օժտված են ահռելի ուժով: Բայց ավելի խորը դիտարկումները կարող են պարզել, որ նրանց տերը այս կամ այն պետությունը կամ ազգն է: Պետք է հաշվի առնել, որ դրանք կարող են «մաքուր ձևով չներկայանալ»: Նույն հակամարտության դաշտում կարող են միահյուսվել ազգային, պետական և քաղաքակրթական շահեր ու շարժառիթներ:

¹⁴ Մանասյան 2020, թիվ 1, 8-21:

¹⁵ Մանասյան 2020, թիվ 4, 11-31:

¹⁶ Պատահական չէ, որ, ինչպես նշվեց վերը, զինված բախումները տեղի են ունենում պետությունների, ազգերի և քաղաքակրթությունների կոնֆլիկտային մրցակցության դաշտերում: Դա բացատրություն ունի: Բանն այն է, որ դրանք գլոբալ դաշտի՝ առավել նշանակալից ուժով օժտված դերակատարներն են:

¹⁷ «Դրևերումներից մեկը» արտահայտությունը այստեղ պատահաբար չի ընտրված: Հնարավոր է, որ լինեն մեր կողմից առանձնացված երեք աշխարհների գոյաբանորեն այլ, ավելի խորքային ընդհանրություններ, որոնք ունենան էվրիստիկ ավելի մեծ ներուժ: Առայժմ մենք ուժ երևույթի մեջ ենք տեսնում գոյաբանորեն սահմանային/ամենախորը այդ ընդհանրությունը:

¹⁸ Տիեզերքում գործում են առավելապես ձգողականության, վանողականության և միջուկային ուժերը, որոնք և պայմանավորում են գալակտիկաների կառուցվածքը, դրանցում տիեզերական

առանձնահատկությունը: Ի տարբերություն բնագիտության և տեխնիկական գիտությունների, որտեղ ուժը մեզ հայտնի իր գրեթե բոլոր դրսևորումների համար ճշգրտված է՝ ընդհուպ մինչև դրանց չափման քանակական միավորների հաստատումը, հասարակագիտության մեջ եզրույթի լայն կիրառությանը հակառակ՝ այն սովորաբար օգտագործվում է որպես այլաբանություն, թևավոր խոսք կամ ինքնին հասկանալի մի բան: Օրինակների պակաս չկա՝ «Ուժն է ծնունդ իրավունք», «օրենքի ուժ», «կամքի ուժ», «փաստարկի ուժ», «ոգու ուժ» և այլն: Հասարակագիտության մեջ ուժը տեսական համակարգ ներառելու հայտնի փորձ է կատարել Մարքսը՝ ֆորմացիաների մասին իր ուսմունքում ներմուծելով *արտադրողական ուժեր* հասկացությունը: Դրանք, ըստ Մարքսի, առաջնային են արտադրական հարաբերությունների՝ այն բազմափ նկատմամբ, որի վրա բարձրանում է հասարակության իրավական ու քաղաքական վերնաշերտը: Բայց Մարքսի ուսմունքում ևս սոցիալական ուժը չի գտել իր իրական նշանակությանը համարժեք տեղ, չնայած նա բազմաթիվ առիթներով դիմել է *ուժ* հասկացությանը և նույնիսկ օգտագործել *սոցիալական ուժ* հասկացությունը՝ այն նույնացնելով արտադրողական ուժերի հետ: «Սոցիալական ուժը, - գրում է Մարքսը, - այսինքն՝ բազմապատկված արտադրողական ուժը... այն բանի հետևանքով, որ ինքը՝ համատեղ գործունեությունը առաջ է գալիս ոչ թե կամավոր կերպով, այլ տարերայնորեն, տվյալ անհատներին ներկայանում է ոչ թե որպես իրենց սեփական միացյալ ուժը, այլ ինչ-որ օտար, նրանցից դուրս կանգնած մի իշխանություն...»¹⁹: **Սոցիալական ուժը հասարակական գործունեության սուբյեկտի՝ իր կամքը մի այլ սուբյեկտի պարտադրելու կամ ուրիշ սուբյեկտի պարտադրանքին հակադրվելու/դիմադրելու ունակությունն է:** Սահմանման մեջ ներակա ձևով առկա է սոցիալական ուժի և իշխանության ներքին կապը: Դա փաստում է *պարտադրել* բառը: Սոցիալական ուժը իշխանածին գործոն է և հետևաբար՝ իշխանության անկապտելի հատկություն: Հենց այս միտքն է ընկած հասկացության վերը տրված սահմանման մեջ: Դրա կրողը սոցիալական գործունեության սուբյեկտն է (անհատ, խավ, դասակարգ, ազգ, կուսակցություն, պետություն և այլն), բայց ոչ արտադրության միջոցները կամ գործիքներն են, որոնք հասարակական հարաբերություններից դուրս սոսկ նյութական առարկաներ են:

Ցանկացած փոխազդեցություն թե՛ բնության, թե՛ հասարակության մեջ ենթադրում է ուժի առկայություն: Պարտադրանքի, իշխանության, տիրապետության բոլոր երևույթները սոցիալական ուժի իրավաքաղաքական ներկայացումներն են հասարակական հարաբերություններում: Ինչպես ամեն մի

մարմինների շարժումը: Կենդանական աշխարհում (ասենք՝ գայլերի ուսմունքում կամ առյուծների ընտանիքում) ֆիզիկական ուժն է որոշում, թե ով գլխավորը:

¹⁹ Տե՛ս Մարքս, Էնգելս 1972, 813:

Ֆիզիկական մարմին օժտված է իր զանգվածին համապատասխան ձգողականության ուժով, այնպես էլ հանրություններն են օժտված այլ հանրությունների վրա ազդելու, դրանց վրա իշխելու կամ դրանց պարտադրանքին հակադարձելու մեծ կամ փոքր սոցիալական ուժով: Անգործունակ, չերևացող ուժեր չկան ո՛չ բնության, ո՛չ հասարակության մեջ²⁰: Մարդկանց մեծ ու փոքր հանրությունները փոխազդեցության մեջ գտնվող կոլեկտիվ սուբյեկտներ են, որ ձևավորում են որոշակի սոցիալական ուժադաշտ՝ այդ սուբյեկտների տարբեր «կշիռներով»²¹, այլ սուբյեկտների վրա ներազդելու միմյանցից տարբեր կարողականությամբ և հասարակական կառուցում գրաված տեղով: Ակնհայտ է, որ իրականում կոնֆլիկտները տեղի են ունենում այս կամ այն սոցիալական ուժով օժտված սուբյեկտների միջև՝ պատերազմների, դասակարգային պայքարի, խռովությունների և այլ ձևերով: Պայմանականորեն ասած՝ դրանք անձնավորված կոնֆլիկտներ են՝ իրենց հայտնի հերոսներով ու առաջնորդներով, այն դեպքում, երբ, ասենք, վերը հիշատակված արտադրողական ուժերի ու արտադրական հարաբերությունների կոնֆլիկտի «հեղինակը» պատմական օրինաչափությունն է, որում անհատ մարդկանց արված հղումներ չկան՝ չնայած հենց նրանց մասնակցությամբ է իրագործվում դրանց զարգացումը: Պատմական օրինաչափությունը անդեմ ուժի ձևով է իր հորձանուտն առնում ողջ հասարակությանը, և մարդիկ ու հանրությունները տարբեր հանգամանքների բերումով «պատմության գետում» հայտնվում են տարբեր տեղերում:

Սոցիալական ուժի աղբյուրների մասին

Սոցիալական գործունեության սուբյեկտի ուժի իրավական արտահայտությունը հասարակության քաղաքական կարգի աստիճանակարգում նրա զբաղեցրած տեղն է: Դա ճիշտ է և՛ անհատների, և՛ կուսակցությունների, և՛ հաստատությունների (մանավանդ քաղաքական հաստատությունների) համար: Առանցքային հարցը, որ ասվածի կապակցությամբ ծագում է, այն է, թե որոնք են սոցիալական ուժի աղբյուրները: Եվ իրոք, եթե կա սոցիալական ուժ, այն պետք է ունենա գոյացման/ձևավորման իր աղբյուրը: Դրանց իմացության կարևորությունը, ինչպես նշել ենք, պայմանավորված է ակնհայտ փաստի ձևով տրված այն իրողությամբ, որ սոցիալական ուժով է որոշվում անհատի կամ կոլեկտիվ սուբյեկտի կարգավիճակը հանրային հարաբերու-

²⁰ Ուժը՝ որպես երևույթ, առաջնային է իշխանության նկատմամբ այն իմաստով, որ այն գոյաբանորեն նախորդում է իշխանությանը: Չի կարող լինել իշխանություն, որն օժտված չէ ուժով: Պետությունն ինքը սոցիալական ուժադաշտի սուբյեկտ է, որին ժողովուրդը օժտում է օրինական ուժով՝ հրապարակային գործադրման իրավունքով: Պետության պարագայում ավելի, քան որևէ այլ դեպքում, ակներև է դառնում ուժի և իշխանության խորքային, գոյաբանական միասնությունը:

²¹ Միջազգային հարաբերություններում լայնորեն կիրառվող *ուժերի բալանս* հասկացությունը դրա ամենացայտուն օրինակներից է:

թյունների համակարգում: Որքան մեծ է անհատի, խմբի կամ ընդհանրապես որևէ հանրության սոցիալական ուժը, այնքան մեծ է նրա ազդեցության դաշտը, իշխանության հավակնելու կամ իշխանության մեջ հայտնվելու նրա հնարավորությունը: Պարզ է, որ միայն սոցիալական ուժի աղբյուրների բացահայտմամբ կարելի է նրա մասին թևավոր խոսքերից ու աֆորիզմներից անցնել երևույթի առարկայական նկարագրությանն ու տեսական իմաստավորմանը, հանգամանք, որ սկզբունքային բնույթ է ստանում այստեղ առաջադրվող գաղափարների հիմնավորման համար: Դրանցում գլխավորն այն է, որ **սեփականությունը, հավատքը և գիտելիքը պատմականորեն եղել և մեր օրերում էլ մնում են սոցիալական ուժը ձևավորող գլխավոր գործոններ**: Սեփականությունը սոցիալական ուժի աշխարհիկ ու նյութական, իսկ հավատքը և գիտելիքը սոցիալական ուժի ոչ նյութական (հոգևոր) աղբյուրներ են: Նրանց ընդհանրությունն այն է, որ երեքն էլ հանրութաստեղծ ներուժ ունեն: Մարդիկ կարող են միավորվել նաև այլ շարժառիթներով՝ շահ, նպատակ և այլն: Բայց սեփականությունը, հավատքը և գիտելիքը առանձնանում են իշխանության հետ իրենց անմիջական առնչությամբ: Ավելին՝ շահ, նպատակ և հանրութաստեղծ նման այլ գործոններ ածանցված են դրանցից²²:

Չափելի՞ է արդյոք սոցիալական ուժը

Սոցիալական ուժ եզրույթի տեսական արժեքը կախված է այն հարցի պատասխանից, թե այն ենթակա՞ է արդյոք չափման: Հանրության սոցիալական ուժի չափելի բնութագրերից մեկն այն զանգվածի մեծությունն է, որ համախմբվում է այս կամ այն դավանանքի կամ քաղաքական նախագծի (գաղափարախոսության) շուրջ: Խորհրդարանական կամ նախագահական ընտրություններում հաղթող կուսակցությունը կամ նախագահի թեկնածուն փաստորեն այն սոցիալական ուժի կրողն է, որը որոշվում է ընտրապայքարում իր թեկնածությունը պաշտպանող զանգվածով: Այլ սուբյեկտների վրա ազդելու Վատիկանի կարողականությունը չափելի է նաև կաթոլիկ հավատացյալների քանակով, իսկ կուսակցության սոցիալական ուժը նրա քաղաքական ծրագիրն ընդունողների քանակն է (կուսակցության անդամներ և համախոհներ): Սրանք սոցիալական ուժի դիտարկելի ու չափելի դրսևորում են: Բայց միշտ չէ, որ սոցիալական ուժն ունենում է ակնառու և հեշտ չափելի դրսևորում: Այն կախված է նաև հանրույթի (դասակարգի, կուսակցության և այլն) կազմակերպվածությունից, միասնությունից, գաղափարական հասունությունից, որի

²² Շահ հասկացության լայնորեն հայտի սահմանումը, ըստ որի, շահը գիտակցված պահանջմունք է, հաստատում է դրա ածանցված լինելը գիտակցությունից (գիտելիքից): Նույնը վերաբերում է նպատակ հասկացությանը:

առկայությունը, չափման հետ կապված դժվարությունից անկախ, սովորաբար ակնհայտ է լինում²³:

Այլ կերպ է սոցիալական ուժի ձևավորմանը մասնակցում գիտելիքը (գիտությունը): Ընդ որում, «այլ կերպը» վերաբերում է ոչ միայն գիտելիքին (գիտությանը) ընդհանրապես, այլև դրա երկու ոլորտներին, մի կողմից՝ բնագիտությանը և տեխնիկական գիտություններին, մյուս կողմից՝ հասարակագիտությանը: Բնագիտության ու տեխնիկական գիտությունների դերը սոցիալական ուժի ձևավորման գործընթացում հանգում է բնության ընդերքից այն ուժերի «արդյունահանմանը», որոնք, դրվելով արտադրության միջոցներում ու գործիքներում, բարձրացնում են աշխատանքի արտադրողականությունը, որը չափելի է: Բնագիտական/տեխնիկական գյուտը սոցիալական ուժի աղբյուր է դառնում առաջին հերթին այդ միջոցների ու գործիքների սեփականատիրոջ համար: Տնտեսական մարդը երբեք դեմ չի եղել դրան, քանի որ իրենն են և՛ արտադրության միջոցները, և՛ գործիքները, և՛ գործադրման արդյունքները:

Մեր օրերում շատ տարածված է այն միտքը, որ XXI դարի պատերազմները լինելու են գիտելիքների համար²⁴: Դա էլվին Թոֆլերի՝ «Գիտելիքն ու իշխանությունը տեղեկատվական հասարակության մեջ» ինտրիգային ոճով գրված գրքի գլխավոր գաղափարն է: Հատկանշական է, որ նման դատողություններում հաճախ նկատի է առնվում բնագիտական ու տեխնիկական գիտելիքը, երբ հասարակագիտական գիտելիքը պակաս դեր չունի: Եթե բնագիտական գիտելիքի խնդիրը բնության ուժերի պեղումն է դրանք արտադրության մեջ ներդնելու համար, ապա սոցիալական գիտելիքի ներդրման դաշտը հասարակական գիտակցությունն է՝ դրա միջոցով մարդկանց (խավերի, դասակարգերի, կուսակցությունների, ազգերի և այլ հանրությունների) համախմբումը որոշակի գաղափարների, հանրային նախագծերի շուրջ: Դրանք ուժի աղբյուր են դառնում, երբ դառնում են մարդկանց «գիտակցության սեփականությունը»: Ազգային-քաղաքական նախագծերի հեղինակը հասարակագետն է, քանի որ գիտական է ինքը խնդիրը: Իսկ դրանց գլխավոր պատվիրատուները ներկայացուցչական ժողովրդավարության պայմաններում, բնականաբար, կուսակցությունները պետք է լինեն, քանի որ նրանք իշխանության համար պայքարում դրանցով են ներկայանում ընտրազանգվածին: Այսպես թե այնպես, բնագիտական ու տեխնիկական գիտելիքի՝ որպես

²³ Հընթացս նկատենք, որ սոցիալական ուժի նյութական բաղադրիչները հեշտությամբ տրվում են չափման (պետության հզորության այնպիսի բաղադրիչներ, ինչպիսին են տարածքը, բնական պաշարները, ազգաբնակչությունը, բանակը՝ իր զինատեսակներով և տնտեսությունը, ենթակա են վիճակագրական/քանակական վերլուծության ու գնահատման) այն դեպքում, երբ սոցիալական ուժի այնպիսի բաղադրիչներ, ինչպիսին հավատքն ու գիտելիքն են, դժվար են ենթակվում քանակական ու համեմատության նկարագրության:

²⁴ Էլվին Թոֆլերի 2006, 84:

սոցիալական ուժի աղբյուրի պատվիրատուներն ու գնորդները ակնհայտորեն շատ են, քան սոցիալական գիտելիքի պատվիրատուներն ու գնորդները:

Սեփականության՝ որպես սոցիալական ուժի աղբյուրի մասին ավելի հանգամանալից: Ո՞վ է տնտեսական մարդը

Այժմ թեմայի առանցքային հաջորդ հարցի մասին: Սոցիալական ուժի նշված երեք աղբյուրներից պատմականորեն առավել նշանակալից դերակատարություն է ունեցել սեփականությունը՝ սոցիալական ուժի նյութական, աշխարհիկ այդ գործոնը: Դա պայմանավորված է նրանով, որ մարդն իր ծագումնաբանությամբ կապված է բնության՝ իր գոյատևման հիմքի հետ: Բնությունից տրվող նյութական բարիքները՝ որպես իր անձնականն ու սեփականն ունենալու պահանջ, անանց է և պատմականորեն նախորդել է հոգևոր պահանջունքներին՝ որպես մարդու ֆիզիկական գոյության կանխապայման: Նախնադարյան համայնքի կողմից որևէ տարածքի՝ որպես բնական բարիքների հայթայթման իր տեղի (իրեն պատկանող տեղի) պաշտպանությունն է, ամենայն հավանականությամբ, վերածել սեփականության գիտակցված գաղափարի: Տարածքի մեծությունը, բերք ու բարիքով առատ լինելու, պաշտպանվելու համար տեղանքի հարմարությունը համայնքի մոտ անկասկած պետք է ձևավորելին բնության այդ հատվածը որպես իրենը պաշտպանելու գաղափարը: Ստրկատիրության շրջանում բնության իրերի նկատմամբ սեփականության այդ գաղափարը նոր որակ ձեռք բերեց՝ սեփականությունը դարձնելով սոցիալական հարաբերությունների որոշիչ գործոն: Սեփականատիրոջ «իշխանությունը» նյութական իրերի նկատմամբ հասարակական գործընթացներում փոխարկվեց սոցիալական ուժի՝ դառնալով իշխանության գործոն սեփականագուրկ մարդկանց նկատմամբ: Հողի և արտադրության գործիքների՝ սեփականատիրոջը պատկանելու իրողությամբ նրանն են դառնում բարիքների աղբյուր լինելու՝ հողի ներուժն ու արտադրության գործիքներում ներդրված աշխատանքային էներգիան, որը պահանջվել է դրանց պատրաստման համար, և որը բազմիցս վերարտադրվում է դրանց օգտագործման ընթացքում: Հողի մեջ առկա և արտադրության գործիքների մեջ ներդրված էներգիան սեփականության հարաբերություններում նյութական երևույթից վերածում-դառնում է սոցիալական ուժ՝ ապահովելով սեփականատեր փոքրամասնության իշխանությունը սեփականագուրկ մեծամասնության վրա: Սեփականությունը դառնում է սոցիալական ուժի, ուրեմն և իշխանության աղբյուր²⁵, որով ամենախոշոր ստրկատերը դառնում էր պետության գլուխ: Նույնը տեղի է ունեցել ավատատիրության շրջանում, երբ ճորտատիրական տերությունների թագավորները, որպես կանոն, ամենախոշոր

²⁵ Երևի թե այս համատեքստում իշխանության ֆենոմենը դառնում է հասկանալի և կորցնում է իր առեղծվածային բնույթը, ինչպես հաճախ որակում են այն:

հողատերերն ու ճորտատերերն էին լինում: «Տնտեսական մարդ» **ասելով՝ մենք հասկանում ենք հասարակական հարաբերությունների այն սուբյեկտին է, որի սոցիալական ուժի (և ուրեմն՝ իշխանության) աղբյուրը մասնավոր սեփականությունն է**²⁶: Սա միայն ստրկատիրական և ֆեոդալական հասարակություններին չի վերաբերում: Սեփականությունը սոցիալական ուժի և իշխանության աղբյուր է մնացել նաև կապիտալիզմի պայմաններում: Սակայն XVII-XVIII դարերի բուրժուական հեղափոխությունները էականորեն փոխեցին դեպի իշխանություն տանող տնտեսական մարդու ճանապարհը: Այս փաստը բացատրություն է պահանջում:

Տնտեսական մարդը ներկայացուցչական ժողովրդավարության պայմաններում

Ֆեոդալիզմի ընդերքում տնտեսության ոչ ագրարային հատվածում ձևավորված երրորդ դասի էլիտան՝ բուրժուազիան, դեռևս մինչև իշխանության նվաճումն էր դիրքեր գրավել վարչական համակարգի տարբեր օղակներում, քանի որ նրա մոտ էր կենտրոնացած սեփականության (իմա՝ ազգային հարստության) մեծ մասը: Վաղ թե ուշ այդ հանգամանքը օրակարգային պիտի դարձներ երկրի իշխանության հարցը: Այդ գործընթացը առաջինը սկսվեց Անգլիայում XVII դարում, իսկ Ֆրանսիական մեծ հեղափոխությունը ազդարարեց ֆեոդալիզմի դարաշրջանի ավարտը Բաստիլի գրավմամբ, որի գրոհին երրորդ դասը գնաց միասնաբար՝ «Եղբայրություն», «Ազատություն», «Հավասարություն» կարգախոսներով: Նրա միասնությունը, սակայն, երկար կյանք չունեցավ: Դեռևս անգլիական պանծալի հեղափոխությունից (1688-1689 թթ.) առաջ էր պարզ դարձել, որ նոր կարգերում իշխանության հարցը չի կորցնի իր սրությունը: Հավասարարների, անկախականների ու ռոյալիստների կոնֆլիկտը Անգլիայում, 1789 թ. Բաստիլի գրավմանը հաջորդած արյունալի իրադարձությունները Ֆրանսիայում խոսում են այն մասին, թե հեղափոխություններից հետո ինչ դժվարին ժամանակներ է ապրել Եվրոպան, մինչև տնտեսական մարդը կարողացել է հասնել իր սոցիալական ուժին համարժեք քաղաքական կարգի հաստատմանը: Գլխավոր խնդիրը տնտեսական մարդու համար այն էր, որ ներկայացուցչական ժողովրդավարության պայմաններում քաղաքական հավասարության «մեկ քաղաքացի՝ մեկ քվե» բանաձևը իշխանությանը տիրանալու ավելի մեծ հնարավորություն էր ընձեռում սեփականազուրկ զանգվածին, քան իրեն: Իշխանության տանող ճանապարհը նոր պայմաններում անցնում էր «համաժողովրդական ընտրությունների մաղով», և տնտեսական մարդը ինչ-որ կերպ պետք է այդ համակարգը հարմարեցնէր իրեն՝ քաղաքական հաստատություններում ապահովելու համար իր դիրքերը:

²⁶ Այս ըմբռնումների համատեքստում *մասնավոր սեփականատեր* և *տնտեսական մարդ* հասկացությունները հոմանիշներ են:

Պատահական չէ, որ հեղափոխություններին նախորդած ու հաջորդած խառնակ ժամանակների «գլխավոր անձը» դարձավ բանակը: Տնտեսական մարդուն հաջողվեց լուծել իր առջև դրված խնդիրը՝ զանազան արգելքներով ու ցենզերով (բնակության ցենզ, ունեցվածքի ցենզ, կանանց ընտրական իրավունքից զրկում և այլն) սահմանափակելով աշխատավորական զանգվածի մասնակցությունն ընտրություններին: Բայց նույնիսկ ներկայացուցչական ժողովրդավարության նման խեղված կարգը խաղաղություն չտվեց նոր հասարակությանը: Մեծ հաշվով՝ իշխանությունը, այո՛, գտնվում էր տիրապետող դասակարգի՝ բուրժուազիայի (հավաքական տնտեսական մարդու) վերահսկողության տակ: Սակայն դա չէր նշանակում, որ վերանում են շուկայական մրցակցությամբ պայմանավորված կոնֆլիկտները այդ դասակարգի ներսում: Այդ պայմաններում ողջ ազգի անունից հանդես եկող և նրա ընդհանրական շահը ներկայացնող ընտրված իշխանությունը (իմա՝ քաղաքական մարդը) ձեռք է բերում որոշակի ինքնուրույնություն տնտեսական մարդուց, որն իր խնդիրները լուծելու համար այսպես թե այնպես պետք է առնչվեր իշխանության հետ: Անխուսափելիորեն ծագող կոնֆլիկտում տնտեսական մարդու սոցիալական ուժի աղբյուրը մնում էր իր սեփականությունը, այն դեպքում, երբ իշխանության մեջ հայտնված քաղաքական մարդը կարող է և սեփականություն չունենալ, բայց ավելի հզոր սոցիալական ուժի տեր լինել ընտրություններում ստացած քվեների շնորհիվ: Նոր տեսակի այդ սոցիալական կոնֆլիկտը արևմտյան քաղաքակրթությանն ուղեկցում է բուրժուական հեղափոխությունների հաղթանակի շրջանից մինչև մեր օրերը: Դրան զոհ են գնացել ԱՄՆ-ի մի քանի նախագահներ: Եթե 2024-ի հուլիսի 13-ին Թրամփի դեմ մահափորձը հաջողվեր, նա կլիներ հաջորդը:

Տնտեսական և քաղաքական մարդու հակամարտության գլոբալ բնույթը սոցիալիզմի իրողության պայմաններում

Մասնավոր սեփականության վրա հենված կապիտալիստական ցանկացած երկրում տնտեսական մարդը կոնֆլիկտի մեջ է և՛ շուկայում իր մրցակիցների, և՛ քաղաքական մարդու հետ: Բայց բուրժուական հեղափոխություններից շատ չանցած՝ նրա գլխավոր հակառակորդը դարձավ **եղբայրության, ազատության ու հավասարության** կարգախոսներով հին կարգերը գրոհած և հեղափոխության արդյունքներից հիասթափված բանվոր դասակարգը: Ինքնակազմակերպման որոշ շրջանից հետո նրա ելույթներն աստիճանաբար ուղեկցվեցին քաղաքական պահանջներով: Բանվորական շարժումները տեսության կարիք ունեին, և դա շատ չուշացավ: 1848 թ. լույս տեսած՝ Մարքսի և Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը»²⁷ խորհրդանշական դարձավ այդ գործընթացում: Նրա հեղինակները վստահ

²⁷ Մարքս, Էնգելս 1972, 123-177:

էին, որ կապիտալիզմի կործանումն ու պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը անխուսափելի են, և որ կոմունիստական հասարակության մասին իրենց ուսմունքը բանվորի ձեռքին վերածվելու է «մատերիական ուժի»: «Իրավունքի հեգեյան փիլիսոփայության քննադատության շուրջ» հոդվածում (1844 թ.) Մարքսը այդ միտքը բանաձևում է հետևյալ կերպ՝ «...տեսությունը դառնում է մատերիական ուժ, հենց որ տիրում է զանգվածներին»²⁸: Որոշակի այլաբանություն պարունակող այդ դրույթը (միայն որպես այլաբանություն կարելի է հասկանալ «տեսությունը դառնում է մատերիական ուժ» միտքը) հասկացությունների մեր համակարգում կծնակերպվի հետևյալ կերպ՝ հենց որ տեսությունը տիրում է զանգվածներին, այն համախմբում է նրանց որոշակի նպատակի շուրջ և դարձնում հզոր սոցիալական ուժ: Պարզ է, որ հանրութաստեղծ իր հատկության շնորհիվ է գիտելիքը փոխարկվում սոցիալական գործընթացների գործոնի: Ակնհայտ է նաև, որ ամեն տեսություն չէ, որ կարող է համախմբել լայն զանգվածներին: Այն պետք է հասկանալի ու գրավիչ լինի նրանց համար և իրատեսական՝ իրագործման առումով: Ըստ Մարքսի, անդասակարգ հասարակության մասին իր ուսմունքը իրագործելի պետք է դառնար կապիտալիզմի զարգացման որոշակի փուլում՝ արդյունաբերապես զարգացած եվրոպական երկրներում միաժամանակ: Սկզբունքային այդ դրույթը վիճարկեցին ռուս բուլշևիկները՝ գտնելով, որ իմպերիալիզմի փուլում կապիտալիզմի անհամաչափ զարգացումը թույլ է տալիս հեղափոխությամբ անցնել սոցիալիզմին կապիտալիզմի ամենաթույլ օղակում, որը, ըստ նրանց, Ռուսաստանն էր: 1917 թ. նրանք գրավեցին իշխանությունը և խորհրդային կարգեր հռչակեցին Ռուսաստանում: ԽՍՀՄ-ում սոցիալիզմը պատմության փորձությանը չդիմացավ: Սակայն դարավերջին նրա տապալումը բնավ չի նսեմացնում իրադարձության համաշխարհային պատմական նշանակությունը:

1917 թ. պատմության մեջ առաջին անգամ հաստատվեց մի հասարակարգ, որտեղ մասնավոր սեփականությունը իշխանության աղբյուր չէր: Այդ իմաստով, ԽՍՀՄ-ը քաղաքակրթական նոր երևույթ էր, որը, շատ մասնագետների կարծիքով, տապալվեց ոչ թե սոցիալիզմի գաղափարի անհիմն լինելու, այլ երկրի ղեկավարության ապաշնորհության (իսկ որոշների կարծիքով՝ ուղղակի դավաճանության²⁹) պատճառով: Վճռական փաստարկը, որ այդ տեսակետի կողմնակիցները բերում են, Չինաստանն է, որը դարձել է մոլորակի թիվ մեկ տնտեսությունը: Բացառելով սոցիալական ուժի (ուրեմն և իշխանության) աղբյուր լինելու մասնավոր սեփականության դերը³⁰, Չինաստանը պահպանում է սոցիալիզմի հիմնարար բնութագիրը և բացառիկ ճկունություն է ցուցաբերում սեփականության ձևերի բազմազանության հարցում՝

²⁸ Маркс и Энгельс 1955, 422-428.

²⁹ Տե՛ս, օրինակ, Майкл Бешлоос, Строуб Тэлботт 2012:

³⁰ Դա ցայսօր սրբության սրբոց է մնում արևմտյան քաղաքակրթության մեջ:

ապահովելով տնտեսական աննախադեպ վերելք: Թե՛ արևմտյան, այսպես կոչված, դասական կապիտալիզմի երկրներում, թե՛ Չինաստանում իրենց ընտրությունը կապիտալիզմի ու սոցիալիզմի միջև համարում են անշրջելի: Ժողովրդավարության, արդարության, ազատության ու մարդու իրավունքների իդեալների իրականացման հարցում ամեն մեկը համարում է, որ մարդկության ապագայի տեսակետից իր ընտրությունն է ճիշտ: Ակնհայտ է, որ, ի դեմս դասական Արևմուտքի ու Չինաստանի, պատմությունը գործ ունի քաղաքական ու տնտեսական կարգի անհամատեղելի մոդելների հետ՝ պայմանավորված դրանցում սեփականության հաստատության արմատական տարբերությամբ: Պարզվում է, որ տնտեսական մարդու և քաղաքական մարդու կոնֆլիկտը, որ մինչև Ռուսաստանում սոցիալիզմի հաստատումը կապիտալիզմի ուղուն կանգնած երկրների համար սոսկ ներպետական, ներագգային երևույթ էր, դրանից հետո ընդունել է գլոբալ բնույթ և այդպիսին մնում է մինչ օրս: Բնավ պատահական չեն ԱՄՆ-ից հնչող այն ձայները, որ իրենց գլխավոր թշնամին Չինաստանն է: Պատահական չէ նաև, որ, այսպես կոչված, Կոլեկտիվ Արևմուտքին հակադրվող երկրների՝ БРИКС միավորման հիմնադիր երկրներից մեկը Չինաստանն է, որն այդ հարթակում հետամուտ է քաղաքական բազմաբևեռ աշխարհի հաստատմանը: Ի տարբերություն БРИКС-ի, հասունացող գլոբալ կոնֆլիկտում Կոլեկտիվ Արևմուտքը քաղաքակրթորեն ավելի միասնական է՝ պայմանավորված սեփականության և իշխանության հարցում նրա երկրների ընդհանրությամբ: Այլ է БРИКС-ը, որտեղ համախմբվում են Կոլեկտիվ Արևմուտքի «գաղութատիրական կեցվածքից» դժգոհ, միմյանցից խիստ տարբեր պետություններ (մեծ մասը, այսպես կոչված, գլոբալ հարավից), որը նրա գոյությանը առայժմ տալիս է իրավիճակային բնույթ: Եվ դա է նրա թույլ կողմը: Դժվար չէ կանխատեսել, որ БРИКС-ի ներսում շուտով օրակարգային կդառնա ընդհանուր, ավելի խորքային շահերի փնտրտուքը՝ կայուն դարձնելու համար նոր միությունը: Այդ գործընթացներում փորձաքար է ՌԴ - Ուկրաինա պատերազմը, որը քաղաքական նկատառումներով դիտվում է առավելապես պետությունների կոնֆլիկտային մրցակցության դաշտում: Դժվար է կանխատեսել, թե ինչ ընթացք ու ավարտ կունենա այն, և թե БРИКС-ի հակաարևմտամետ երկրները ինչպես կընդունեն պատերազմի այս կամ այն արդյունքը: Պարզ է մի բան. բոլոր դեպքերում (անկախ БРИКС-ի ճակատագրից) Չինաստանը կմնա Կոլեկտիվ Արևմուտքի գլխավոր ախոյանը գլոբալ մրցակցության հարթակում, և դրա պատճառը այդ քաղաքակրթությունների գոյաբանական անհամատեղելիությունն է՝ չնայած կողմերը խուսափում են այդ փաստը դարձնել հանրային խոսույթի առարկա:

Արևմտյան ու չինական մոդելների քաղաքակրթական հակամարտության ինտրիգն այն է, որ ո՛չ մեկում, ո՛չ մյուսում չի հաղթահարվում կոռուպ-

ցիան: Եվ պատմական մարտահրավերը, որին ընդհարվել է հասարակագիտությունը, այդ խնդրի լուծումն է: Հարցը, որը տեսությունից պատասխան է պահանջում, այն է, թե հնարավո՞ր է արդյոք այնպիսի մոդել, որում քաղաքական մարդու կամայականությունը տնտեսական մարդու նկատմամբ բացառվի, ինչը անհմաստ կդարձնի քաղաքական իշխանությունը ժողովրդավարության քրդի տակ գրավելու՝ տնտեսական մարդու անզուսպ մղումը³¹ արևմտյան մոդելում (որ արդեն կայացած փաստ է), իսկ արևելյան մոդելում կապահովի տնտեսական մարդու ազատ գործունեությունը: Դա կթուլացնի այդ մոդելների գոյաբանական հակասությունը, կվերացնի կոռուպցիայի շարժառիթները թե՛ մեկում, թե՛ մյուսում և թույլ կտա աշխատել նրանց մերձեցման այլ հարցերի վրա: Եվ դա այն է, ինչ պետք է արվի հավերժական խաղաղության կանտյան (և ոչ միայն կանտյան) գաղափարի իրականացման ճանապարհին: Քանի դեռ չի գտնվել տնտեսական մարդու և քաղաքական մարդու հակամարտությունը մեղմելու սոցիալ-տնտեսական ու քաղաքական գործիքակազմ, այն կմնա ապագա կոնֆլիկտների գլխավոր աղբյուրը:

Քննարկվող թեման անմիջական կապ ունի Հայաստանում XX-XXI դարերի իրադարձությունների իմաստավորման հետ: Ակնհայտ է, որ մեզանում հենց հիմա ծավալվող գործընթացները իրենց իրական բնույթին համարժեք իմաստավորում կարող են ստանալ միայն դարաշրջանի այդ հիմնական հակասության դիտակետից: Հակառակ դեպքում դրանք կներկայանան բացատրություն չստացող և ուրեմն չըմբռնված սոցիալական քառտիկ իրարանցումների տեսքով:

Եզրակացություններ

Ուժը համակարգաստեղծ բնածին գործոն է թե՛ ֆիզիկական, թե՛ կենդանական աշխարհներում, թե՛ հասարակության մեջ, որտեղ նրա գործառումը որոշարկելուն է ծառայում *սոցիալական ուժ* եզրույթը: Այդ հասկացությամբ նշանակվում է սոցիալական սուբյեկտի՝ այլ սուբյեկտներին իր կամքը պարտադրելու կամ այլ սուբյեկտների պարտադրանքին հակադարձելու կարողականությունը: Սոցիալական ուժի՝ որպես երևույթի տեսական ըմբռնումը կապված է դրա աղբյուրների բացահայտման հետ: Ողջ պատմական փորձը հաստատում է, որ այդ աղբյուրները հանրութաստեղծ իրենց ունակության շնորհիվ հանդիսանում են **սեփականությունը, գիտելիքը և հավատքը**: Մասնավոր սեփականությունը՝ որպես սոցիալական ուժի աղբյուր, այդ դերը կատարել է ստրկատիրական, ֆեոդալական հասարակարգերում և շարունակում է այն կապիտալիզմի պայմաններում, որտեղ սեփականությունը այժմ

³¹ Արևմտյան մոդելում վերջին հարյուրամյակի ընթացքում տնտեսական մարդուն հաջողվել է տարբեր ձևերով գրավել քաղաքական իշխանությունը: Արևմտյան քաղաքական մարդը տնտեսական մարդն է՝ քաղաքական մարդու կոստյումով:

էլ ուժի և իշխանության աղբյուր է: Չինական սոցիալիզմը փորձում է ապացուցել, որ տնտեսական վերելք կարելի է ապահովել նաև մի հասարակարգում, որտեղ սեփականությունը իշխանության աղբյուր չէ: Արևմտյան և չինական սոցիալ-քաղաքական մոդելները իրենց գոյաբանական հիմքերի տեսակետից անհամատեղելի են: Դժվար չէ կանխատեսել, որ հեռանկարում դրանց հակամարտությունն է որոշելու գլոբալ զարգացումները:

Օգտագործված գրականություն

- Էլվին Թոֆլեր 2006, Գիտելիքն ու իշխանությունը տեղեկատվական հասարակության մեջ, Երևան, «Զանգակ», 84 էջ:
- Մարքս Կ., Էնգելս Ֆ. 1972, Ընտիր երկեր, հ. 1, Երևան, «Հայաստան», էջ 813:
- Մանասյան Ա. 2020, Տնտեսական մարդու և քաղաքական մարդու հակամարտությունը որպես դարաշրջանի գլխավոր հակասություն, Վէմ հանդես, N 1, էջ 8-21:
- Մանասյան Ա. 2020, Սեփականությունը, գիտելիքը և հավատքը որպես ուժի և իշխանության աղբյուրներ, Վէմ հանդես, N 4, էջ 11-31:
- Бешлосс М., Тэлботт С. 2012, Измена в Кремле. Протоколы тайных соглашений Горбачева с американцами, Москва, «Алгоритм», 351 с.
- Декларация «О восстановлении государственной независимости Азербайджанской Республики». Газета «Бакинский рабочий», 30 августа 1991 г.
- Кант И. 1994, Собрание сочинений в 8 т., т. 7, Москва, «Чоро», 495 с.
- Конституционный акт о государственной независимости Азербайджанской Республики. Газета «Бакинский рабочий», 7 ноября 1991 г.
- Манасян А. 2012, Карабахский конфликт. Минимальная папка политико-правовых фактов и документов, Ереван, авторское изд. (գիրքը երկլեզու է՝ ռուսերեն՝ 38, իսկ անգլերենը՝ 32 էջ ծավալով):
- Маркс К., Энгельс Ф. 1955, Соч. т. 1, Москва, «Государственное издательство политической литературы», 698 с.
- Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарии 2008, т. I, Москва, «Кругъ», 944 с.
- Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарии, т. II, Москва, «Melihowo», 479 с.
- Роджер Ф., Уильям Ю. 1990, Путь к согласию или переговоры без поражения (перевод: А. Горелова), «Наука», 78 с.

ОНТОЛОГИЯ КОНФЛИКТА КАК ИСХОДНАЯ ТОЧКА ЕГО УРЕГУЛИРОВАНИЯ

Александр Манасян

Резюме

Механизмы справедливого урегулирования вооруженных конфликтов не могут быть задействованы без понимания их глубинных онтологических причин. В качестве реализуемого механизма урегулирования конфликтов нами предлагается создание минимального правового пакета проблемы, содержащего касающиеся конфликта факты и документы (в том числе и правовые), относительно которых мнения конфликтующих сторон не расходятся. Анализ онтологических оснований конфликта предполагает определение понятия *социальная сила* как ключевого феномена их понимания. В этом контексте обретает особую теоретическую важность сравнение двух конфликтующих социально-политических моделей – западной и восточной (китайской). Рассматриваемые идеи и понятия могут стать ключом к адекватному пониманию труда И. Канта «К вечному миру».

Ключевые слова – минимальная правовая папка урегулирования конфликта, экономический человек, политической человек, социальная сила, составляющие социальной силы, западная модель, китайская модель.

THE ONTOLOGY OF THE CONFLICT AS A STARTING POINT FOR ITS SETTLEMENT

Alexander Manasyan

Abstract

Mechanisms for the fair resolution of armed conflicts cannot be implemented without understanding their deep ontological causes that are hidden behind the veil of individual events and facts. A feasible mechanism for resolving conflicts could be the creation of a minimum legal package of the problem, containing facts and documents related to the conflict (including legal ones), regarding which the opinions of the conflicting parties do not differ. Analysis of the ontological foundations of the conflict assumes the definition of the concept of social force as a key phenomenon of their understanding. In this context, the comparison of Western and Eastern (Chinese) conflicting socio-political models acquires particular theoretical importance. In this context, the comparison of Western and Eastern (Chinese) conflicting socio-political models acquires particular theoretical importance. The ideas and concepts under consideration can become the key to an adequate understanding of I. Kant's work "Towards Eternal Peace".

Key words – Minimum legal folder for conflict resolution, Economic man, Political man, Social force, Components of social force, Western model, Chinese model.

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Յուրի Սուվարյան

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր
ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների
բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղդասարյան 24
Էլ. հասցե՝ suvaryan@sci.am
ORCID: 0009-0000-7908-9949

Միքայել Միքայելյան

Տնտեսագիտության դոկտոր
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Գրիգոր Լուսավորչի 15
Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարանի կառավարման ամբիոն
ՀՀ, Երևան, Թումանյան 42
Էլ. հասցե՝ mmigayelyan@mail.ru
ORCID: 0009-0008-7476-1883

Հոդվածը ներկայացվել է 25.11.2024, գրախոսվել է 27.11.2024, ընդունվել է տպագրության 03.12.2024
DOI: 10.53548/0320-8117-2024.3-139

Ամփոփում

Պետության առաքելությունն է ազգաբնակչության բարեկեցիկ կյանքը և երկրի անվտանգությունն ապահովելը: Այդ առաքելությունը լիարժեք կատարելու նպատակով անհրաժեշտ է բոլոր բնագավառների համար ունենալ գիտականորեն հիմնավորված ռազմավարական ծրագրեր:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն երկրները, որոնք ճիշտ են ըմբռնել և կիրառել երկրի և (կամ) դրա առանձին ոլորտների ու բնագավառների զարգացման ռազմավարությունները, մեծ հաջողություններ են արձանագրել:

Քաղաքական անկայությունը ձեռք բերելուց հետո Հայաստանը ձեռնամուխ եղավ տնտեսության վերակառուցմանը՝ չունենալով զարգացման որևէ ծրագիր: Դրա պատճառով տնտեսության բոլոր ոլորտները անկում ապրեցին, իսկ ազգաբնակչության կենսամակարդակը խիստ վատթարացավ: Ռազմավարական ծրագրերի մշակման և դրա իրականացման առումով առանձնապես մեծ առաջիադաշտում չեն արձանագրել հետագա տարիներին նախապատրաստված և «կյանքի կոչված» ռազմավարական փաստաթղթերը:

Հետագա տարիներին մշակված և կյանքի կոչված ռազմավարական ծրագրերը թերի են և չեն համապատասխանել դրանց նկատմամբ ներկայացվող պահանջներին: Մասնավորապես, արհեստական բանականության դարաշրջանում տնտեսական ռազմավարությունը պետք է համապատասխանի տնտեսական ու տեխնոլոգիական զարգացման պահանջներին:

Բանալի բառեր՝ պետության առաքելություն, ռազմավարական ծրագրեր, ռազմավարական փաստաթղթեր, ռազմավարական կառավարում, տնտեսական ռազմավարություն, տնտեսության վերակառուցում, ռեսուրսներով ապահովվածություն:

Ներածություն

Պետությունը հին աշխարհից մինչև մեր օրերը գործող կարևորագույն հասարակական-քաղաքական ինստիտուտներից է, որն ավելի քան 5 հազար տարի¹ ուղղորդել է մարդկային քաղաքակրթության զարգացման ընթացքը: Անկախության հրապուրիչ գաղափարը, լինելով պետականության հիմքում, որոշ ժողովուրդների հնարավորություն է ընձեռել բարձր տեմպերով զարգացնել տնտեսությունը, գիտությունը, երկրի ռազմաքաղաքական հնարավորությունները և որոշիչ դեր կատարել ոչ միայն տարածաշրջանում, այլև ողջ աշխարհում: Պատմատնտեսագիտական դիտարկումներով՝ աննախադեպ հաջողությունների են հասել այն պետական կազմավորումները, որոնք պետության առաքելությունից բխող հիմնավոր ու երկարաժամկետ ռազմավարությամբ կառավարել են երկիրը՝ կարևորելով հատկապես գիտության նվաճումների օգտագործումը՝ այդպիսով նպաստելով մարդկային քաղաքակրթության զարգացմանը, որը միշտ ուղեկցվել է գիտական հեղափոխություններով: Օրինակ, 12 հազար տարի առաջ տեղի են ունեցել հողագործության հեղափոխությունը (բույսերի մշակումը և կենդանիների ընտելացումը), գրի, դրամի և կրոնների առաջացումը, իսկ վերջին հինգ դարերի ընթացքում մարդիկ աստիճանաբար եկան այն համոզման, որ գիտական հետազոտություններում ներդրումներ կատարելով կարելի է ավելացնել իրենց կարողությունները²: Պատմաբան Յա.Ն. Հարարիի մի ուշագրավ արձանագրման մեջ ևս մատնանշվում է գիտության հույժ կարևորությունը. «Գիտնականները իմպերիալիստական ծրագրերի համար ապահովել են գործնական գիտելիք, գաղափարախոսական արդարացում ու տեխնոլոգիական սարքեր, առանց որոնց եվրոպացիներին հազիվ թե հաջողվեր նվաճել աշխարհը»³:

Սույն հոդվածում փորձ է արվում դիտարկել պետության առաքելության շրջանակում ռազմավարական կառավարման անհրաժեշտությունը, արդի առանձնահատկությունները և արդյունավետությունը, որոնք չափազանց կարևոր են Հայաստանի պետականության ամրապնդման ու զարգացման համար:

Պետության առաջացման և առաքելության մասին

Պետությունը, որպես առանձին ինստիտուտ, ինչպես վկայում են պատմական փաստերը, առաջացել է հասարակության զարգացման որոշակի

¹ Տե՛ս Հարարի 2020, 13:

² Հարարի 2020, 13, 306:

³ Հարարի 2020, 369:

փուլում՝ նախնադարյան համայնական հասարակարգի քայքայման վերջին շրջանում: Իսկ մինչ այդ հասարակական հարաբերությունները կարգավորողը եղել են որոշակի տարածքում համակեցությանը ապրող ցեղախմբի (կամ միավորված արյունակից ցեղերի) նահապետի և (կամ) ցեղապետների իշխող խոսքը, առաջադրանքը և թելադրանքը, ցեղի (կամ միավորված ցեղերի) ժողովը, ինչպես նաև սովորույթի ուժը:

Պետության ծագման և դրա գործառույթների խնդիրները դիտարկվել են աստվածաբանական, բնական-իրավական ու դաշինքային, բռնության և օլիգարխիական տեսություններում, որոնց հայտնի հեղինակներն են Թ. Աքվինացին (1225-1274), Թ. Հոբսը (1588-1679), Զ. Լոկը (1632-1704), Ժ.ժ. Ռուսոն (1712-1778), Պ. Հոլբախը (1723-1789)⁴:

Պետության դերին անդրադարձել են նաև Ֆիզիոկրատների և դասական դպրոցի ներկայացուցիչները⁵: Ֆ. Քենեի կարևորել է պետության գործադիր իշխանության գործառույթների դերը երկրի զարգացման մեջ:

Գերմանական դասական փիլիսոփայության (սուբյեկտիվ իդեալիզմի) հիմնադիր Իմանուիլ Կանտը պետությունը բնութագրել է որպես բազմաթիվ մարդկանց միավորում, որը ենթակա է իրավական օրենքների: Իսկ այդ օրենքները, ըստ Կանտի, պետք է բխեն ողջ ժողովրդի միասնական կամքից⁶: Յուրաքանչյուր երկրում գոյություն ունի երեք իշխանություն՝ գերագույն իշխանություն՝ ի դեմս օրենսդրի, գործադիր իշխանություն՝ ի դեմս տիրակալի (կառավարչի) և դատական իշխանություն՝ ի դեմս դատավորի⁷:

Տնտեսագիտական հանրագիտարանում պետությունը ներկայացված է հետևյալ սահմանմամբ՝ «Պետությունը իշխանության ապարատ է, որը հասարակության գործերը կառավարող և իշխող դասակարգի (կլանի, սոցիալական խմբի, դասակարգային ուժերի միավորման կամ ամբողջ ժողովրդի) շահերը իրացնողն է, որի մեջ իր արտացոլումն է գտնում նաև հասարակության քաղաքական ուժերի հարաբերակցությունը»⁸:

Մեկ այլ բնորոշմամբ՝ «Պետությունը հասարակության քաղաքական կազմակերպման եղանակ է, որն օժտված է օրինական իշխանությամբ ու

⁴ Մանրամասն տե՛ս Теория государства и права 2001, 51-98, Чиркин 2001, 23:

⁵ Ֆիզիոկրատների դպրոցի հայտնի ներկայացուցիչ Ֆ. Քենեի կարծիքով, պետության կարևորագույն խնդիրներից պետք է լինի մրցակցության համար ազատ և անսահմանափակ պայմանների ապահովումը: Ըստ նրա՝ իշխանությունը պետք է լինի միասնական և անաչառ իր որոշումներում և գործողություններում. հետևաբար, այն պետք է կենտրոնանա մեկ կառավարչի ձեռքում, որը միայնակ կունենա գործադիր իշխանություն և իրավասություն՝ խրախուսելու քաղաքացիներին ենթարկվել օրենքներին, պաշտպանել յուրաքանչյուր քաղաքացու իրավունքները մյուս քաղաքացիներից, պաշտպանել թույլերին ուժեղներից, կանխել անօրինական ձեռնարկումները և ճնշել պետության ներքին ու արտաքին թշնամիներին, տե՛ս Кенэ 1960, 504.

⁶ Кант 1965, 233.

⁷ Кант 1965, 234.

⁸ Экономическая энциклопедия 1999, 127.

նպատակաուղղված է որոշակի տարածքում հանրության ընդհանուր նպատակների իրագործմանը և անվտանգության ապահովմանը»⁹:

ՌԴ բարձրագույն տնտեսագիտական դպրոցի համաշխարհային տնտեսության ամբիոնի վարիչ Վ.Պ. Գուտնիկի կարծիքով, ուժեղ պետությունը որոշվում է ոչ թե մեծ հարկեր հավաքելու և այնուհետև մեծ ծախսեր կատարելու կարողությամբ, այլ այնպիսի տնտեսական կարգեր ստեղծելու և պահպանելու ունակությամբ, որոնց դեպքում հարկաբյուջետային բեռը կլինի նվազագույն չափով, քանի որ պետության վրա դրված են միայն հասարակական նվազագույն խնդիրներ, իսկ մնացածները արդյունավետորեն լուծվում են առանց նրա մասնակցության¹⁰:

Այսպիսով, պետությանը բնորոշ են մի շարք հատկանիշներ: Նախ և առաջ, այն ինքնիշխան տարածքային միավոր է (իր ենթամիավորներով), ունի պետական իշխանություն, որը կոչված է կազմակերպելու, կարգավորելու և անհրաժեշտության դեպքում վերահսկելու այդ տարածքում բնակվող ազգաբնակչության և գործող տարբեր կառուցվածքային սուբյեկտների գործունեությունը՝ հաշվի առնելով դրանց շահերի ներդաշնակեցումը: Ընդունում է օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր: Պաշտպանում է այդ սուբյեկտներին արտաքին ունեցություններից, ապահովում է դրանց իրավունքների պաշտպանությունը երկրի ներսում և իրականացնում իր առաքելությունից բխող այլ գործառույթներ (եկամուրների ձևավորման աղբյուրների ու մեթոդների և ծախսման ուղղությունների որոշում, այլ պետությունների հետ հարաբերությունների կարգավորում ու դրանց գերակայությունների հստակեցում և այլն):

Վերոհիշյալ գործառույթներն իրականացնելու համար պետությունը ստեղծում է պետական մարմիններ, որոնց թվաքանակը, գործառույթների շրջանակը, կառուցվածքը և դրանց իրացումը կախված են այն ռազմավարությունից, որն ընտրել է որոշակի ժամանակահատվածի համար: Այդ ռազմավարությունները ժամանակի ընթացքում, այն է՝ դրված խնդիրները լուծելուց կամ չլուծելուց (թերի լուծելուց) հետո կարող են փոփոխվել:

Ինչպես երևում է վերոհիշյալ բնութագրումներից, հասարակությունը պետությանը պատվիրակել է որոշակի գործառույթներ, որոնց միջոցով բավարարում է իր պահանջները (տնտեսական, սոցիալական, քաղաքական, անվտանգային և այլն): Դրանցով պայմանավորված՝ պետությունը որոշակի տարածքում ունի ինքնիշխանության բացառիկ իրավունք, որում կարևոր դերակատարում ունի հարկադրանքի ինստիտուտը: Այդ գործառույթների թիվը և դրանց իրականացման ծավալները կախված են այն ռազմավարությունից, որը որոշակի ժամանակահատվածում դրված է պետական գործա-


⁹ Սուվարյան, Միրզոյան 2013, 13:

¹⁰ Гутник 1997, 320.

ռոյթներն իրացնող իշխանությունների առջև: Միաժամանակ, կիրառված ռազմավարությունները ոչ միշտ են ապահովում նպատակադրված արդյունքները: Վերջինները կախված են մշակված ռազմավարության հիմնավորվածությունից, այն իրականացնողների մասնագիտական գիտելիքներից, կարողություններից, հմտություններից, իրականացման ժամանակահատվածից, առկա ռեսուրսներից և այլ գործոններից:

Պետության գործառոյթները և դրանցից բխող բոլոր խնդիրները պայմանավորվում են դրա՝ որպես հանրային կարևորագույն ինստիտուտի առաքելությամբ, որը կարող է ներկայացվել հետևյալ գծապատկերով (գծ. 1):

Գծապատկեր 1. Պետության առաքելությունը և ռազմավարական խնդիրները



Ռազմավարական կառավարում. մեթոդաբանությունը և միջազգային փորձը

Իսկ ի՞նչ է ռազմավարությունը. «Ռազմավարությունը՝ իբրև գիտագործնական լայնորեն կիրառվող հասկացություն, ծնունդ է առել գործարարության ոլորտում և ռազմական գործում: Յուրաքանչյուր կազմակերպություն ստեղծվում է որոշակի առաքելության իրականացման համար, ըստ այդմ՝ հետապնդելով որոշակի նպատակներ և ձգտելով լինել մրցունակ ու ստանալ եկամուտներ (շահույթ): Գործարարությունը (նաև ռազմական գործը) կարճաժամկետ գործողություն չէ, այն ենթադրում է կատարել ներդրումներ, թողարկել արտադրանք (ծառայություններ), իրացնել այն, ունենալ հաճախորդներ, շուկայում նկատվել որակյալ արտադրանքով, մրցունակ գնով և ապահովել կայուն ու երկարաժամկետ եկամտաբերություն: Հետևաբար՝ անհրաժեշտություն է գործարարության գործողությունների երկարաժամկետ ծրագրավորումը՝ հստակեցնելով կազմակերպության առաքելությունից բխող ռազմավարության նպատակները, գնահատելով պահանջը ռեսուրսների նկատմամբ և շուկայական մրցակցային չափանիշները (որակ, գին, պահանջարկի կառուցվածք և այլն)»¹¹:

Ռազմավարության մշակումն ու իրագործումը առավել կարևոր են պետական իշխանությունների (որպես երկրի մասշտաբով կազմակերպական ամբողջության) համար: Յուրաքանչյուր երկիր պետք է ունենա զարգացման նպատակ, և դրան հասնելու ռազմավարական հայեցակարգեր ու ծրագրեր:

Այսպիսով, ռազմավարությունը, դիտարկվելով իբրև երկրի և առանձին կազմակերպությունների զարգացման փիլիսոփայություն, հաշվի է առնելու անցյալի զարգացման փորձը, օրինաչափությունները, ներքին և արտաքին միջավայրերի փոփոխությունները, արտահայտելու է իր մրցակցային նպատակները, գործողությունների և ռեսուրսների բաշխման գերակայությունները: Կախված ռազմավարության առարկայից՝ այն կարող է լինել տնտեսական, սոցիալական, գիտատեխնիկական, անվտանգային, քաղաքական, տարածքային և այլն¹²: Ի տարբերություն առանձին կազմակերպությունների, երկրի ռազմավարությունը այդ բոլոր ենթառազմավարությունների հանրագումարն է: Այդ առումով պետության ռազմավարական կառավարումը չափազանց կարևոր է, և դրան չի կարելի փոխարինել կարճաժամկետ հատվածում իրավիճակային կառավարումը:

Պետության ռազմավարական կառավարումը անհրաժեշտաբար պետք է ընդգրկի նվազագույնը 5-10 տարվա ժամանակաշրջան՝ ծրագրային հստակ ու հիմնավոր առաջադրանքներով՝ հիմնավորված մարդկային, նյութական ու ֆինանսական ռեսուրսներով:

¹¹ Սուվարյան 2022, 155-156:

¹² Սուվարյան 2020, 21:

Այն երկրները, որոնք ճիշտ են ըմբռնել և կիրառել երկրի և (կամ) դրա առանձին ոլորտների ու բնագավառների զարգացման ռազմավարությունները, մեծ հաջողություններ են արձանագրել: Օրինակ, «ծանր արդյունաբերության առաջնահերթության» տնտեսական քաղաքականության շնորհիվ արևմտյան շատ երկրներ XIX դարի վերջին հասնել են տնտեսական զարգացման նոր մակարդակի: Մինչդեռ Չինաստանում 1950-1970-ական թվականներին տարված նույնարժեքային քաղաքականությունը ծախսողվել է: Այդ քաղաքականությունը հանգեցրել է երկրի տնտեսության ճյուղային կառուցվածքի անհավասարակշիռ վիճակի: Ըստ չինացի պրոֆեսոր Զ. Լինի, Չինաստանը ծանր արդյունաբերության թռիչքածև զարգացմանը փորձել է հասնել արտադրության գործոնները նախկին մակարդակին թողնելով¹³:

Դաս քաղելով սեփական սխալներից՝ Չինաստանը հետագայում հաշվեկշռված ռազմավարություն է կիրառել: Արդեն 1978-1998 թվականներին համախառն ազգային արդյունքի հավելածի տեմպը կազմել է 8%¹⁴: Գլոբալ մրցակցության առումով, երկրի իշխանությունը նպատակադրել է 50 տարվա ծրագիր իրականացնել՝ առաջին 10 տարում (2000 թվականից սկսած) կրկնապատկել իր ՀՆԱ-ն, արդեն XXI դարի կեսին ավարտել տնտեսության արդիականացումը և հարուստ ու հզոր դեմոկրատական պետություն կառուցել¹⁵: Դա նշանակում է, որ առաջին տասը տարում ՀՆԱ-ի միջին տարեկան հավելածի տեմպը պետք է առնվազն 7% լիներ¹⁶: Այդ ցուցանիշը 2010 թվականին փաստացի գերազանցվել է մոտ 2.5 անգամ: Նշանակում է՝ այդ ցուցանիշի առումով առաջին տասը տարում գործող իշխանությունը կարողացել է ռազմավարական ծրագիրը մեծ հաջողությամբ իրականացնել:

Չինաստանի հաջողության գրավականներից մեկը ոչ միայն ռազմավարության ճիշտ մշակումն ու իրացումն է եղել, այլև՝ արտասահմանյան ֆինանսական միջոցների օգտագործումը¹⁷: Արդեն 80-ական թվականների վերջին տնտեսության մեջ տարեկան 20-25 մլրդ դոլար էր ներդրվում (գլխավորորապես սփյուռքից)¹⁸:

Այլ է վիճակը ՌԴ ռազմավարական ծրագրերի մշակման ու իրականացման գործընթացներում: Խորհրդային իշխանության փլուզումից հետո դրանք երբեմն «աչքի են ընկել» սիրողական մակարդակի (տնտեսական ու սոցիա-

¹³ Տե՛ս Мальцев 2014, 146-147:

¹⁴ Китай: 20 лет политики реформ и открытости 1999, 14.

¹⁵ Китай: 20 лет политики реформ и открытости 1999, 14.

¹⁶ Փաստացի, 2000 թվականին Չինաստանի ՀՆԱ-ն եղել է 1211.3 մլն դոլար, իսկ 2010 թվականին՝ 5878.3 մլն դոլար (տե՛ս The Global Competitiveness Report 2011-2012; World Economic Forum Geneva, p. 148, https://www3.weforum.org/docs/WEF_GCR_Report_2011-12.pdf, <https://cyflowiki.org/wik>

¹⁷ Ռազմավարական ծրագրերի մշակման ժամանակ հարկավոր է նաև հաշվի առնել և՛ արտաքին գործոնները, և՛ այլ գործոններ:

¹⁸ Чабан 1995, 46.

լական ոլորտներին առնչվող) մշակումներով՝ կարևորելով միայն «ինչ անելու» անհրաժեշտությունը՝ չներկայացնելով այն կառուցակարգերը, որոնք «ինչ անելուն կենդանի շունչ կհաղորդեն»:

Ինչպես խրուշչովյան ժամանակներում էր, ուշադրությունը բևեռված էր առավելապես ինչ անելու, քան ինչպես անելու վրա: Այսօր նույնպես շեշտը դրվում է ռազմավարական խնդիրները ձևավորելու, այլ ոչ թե դրանց լուծման ուղիները որոշելու վրա: Ըստ էության, շարունակում է խախտվել նպատակի և դրան հասնելու միջոցների միասնականության կանոնական սկզբունքը: Այն փոխարինվում է «մտահոգող» սկզբունքով, որի պատճառով խնդրի ձևակերպումը դառնում է ինքնանպատակ¹⁹:

Շատ դեպքերում երկրների զարգացման ռազմավարական նպատակները և դրված խնդիրները ներդաշնակեցված չեն: Օրինակ, «Մինչև 2030 թվականն ընկած ժամանակահատվածում Ռուսաստանի Դաշնության ազգային զարգացման նպատակների մասին» ՌԴ նախագահի՝ 2020 թվականի հուլիսի 21-ի № 474 հրամանագրով սոցիալական և տնտեսական ոլորտներին հասցեագրված առաջադրանքները հակասական և հասարակությանը մոլորեցնելու տպավորություն են թողնում: **Նախ**, վերոհիշյալ հրամանագրի հրապարակման պահին ՌԴ-ում համավարակը նոր էր թափ առել, և հայտնի չէր, թե այն ինչ ծավալի վնաս էր հասցնելու երկրի տնտեսությանը:

Երկրորդ, հրամանագրի 2-րդ կետի «դ» ենթակետի համաձայն՝ բնակչության եկամտների կայուն աճի տեմպը և կենսաթոշակային ապահովման մակարդակը պետք է ավելացվեն առնվազն սղաճի չափով²⁰: Այսինքն, իրական ՀՆԱ-ն կմնա գրեթե նույն մակարդակին: Հետևաբար, նախագահի հրամանագրի նույն ենթակետի մյուս՝ երկրի ՀՆԱ-ի աճը համաշխարհային միջին տեմպից բարձր պահելու առաջադրանքը (մակրոտնտեսական կայունության պահպանման դեպքում) հակասում է նախորդ առաջադրանքին²¹:

Վերոհիշյալից ելնելով՝ արժանահավատ չեն թվում նաև տնտեսությանն առնչվող առաջադրանքները, մասնավորապես՝ հիմնական կապիտալին ուղղվող ներդրումների կամ ոչ հումքային ու ոչ էներգետիկ ապրանքների արտահանման իրական աճը (2020 թվականի համեմատ առնվազն 70 տոկոս)²²: Այս ամենը վկայում է, որ վերոհիշյալ ռազմավարական ծրագիրը (մինչև 2030 թվականն ընկած ժամանակահատվածի) թերի է մշակված և գիտականորեն հիմնավորված չէ: Առավել ևս, որ այդ ծրագրում ներկայաց-

¹⁹ Ст'ю Губанов 2020, 3:

²⁰ Դա նշանակում է, որ սղաճը կարող է գերազանցել ամենաշատը 1-2 տոկոսային կետով:

²¹ Փաստացի, մակրոտնտեսական կայունությունը խախտվել է 2020 թ. համավարակի և 2022 թ. գարնանից առ այսօր ընթացող ռուս-ուկրաինական պատերազմի պատճառով:

²² О национальных целях развития Российской Федерации на период до 2030 г. 2020, 3-5.

ված չեն այն կառուցակարգերը, որոնք պետք է ապահովեն վերոհիշյալ ցուցանիշների կատարումը:

Ուզմավարական կառավարման արդյունավետության բարձրացման փորձերը ՀՀ-ում

Ընդհանուր առմամբ՝ ուզմավարական կառավարումը հանրային կառավարման արդի պայմաններում դրսևորվում է հետևյալ առանձնահատկություններով.

➤ Իշխանության ձգտող հասարակական-քաղաքական ուժերը երկրի պառլամենտի (կամ նախագահի) ընտրություններին ներկայացնում են իրենց քաղաքական ու սոցիալ-տնտեսական ծրագիրը:

➤ Ընտրություններից հետո հաղթած քաղաքական ուժի (ուժերի) ծրագիրը դառնում է օրենսդիր մարմնում հաստատված սոցիալ-տնտեսական ուզմավարական ծրագիր և պետական բյուջե:

➤ Այնուհետև իրականացվում է ծրագրի ռեսուրսային ապահովման, մոնիտորինգի և հետադարձ կապի սկզբունքով անհրաժեշտ ճշգրտումների միջոցով նախանշված ծրագրային գաղափարների կատարման ապահովումը:

Անդրադառնանք նաև անկախացումից հետո Հայաստանի Հանրապետությունում պետականաշինությանն առնչվող տնտեսական քաղաքականությանը և ուզմավարական ծրագրերին:

Անկախացումից հետո Հայաստանը, հետևելով ՌԴ-ի օրինակին, ձեռնամուխ եղավ տնտեսության վերակառուցմանը՝ չունենալով զարգացման որևէ ծրագիր (կամ նույնիսկ հայեցակարգ)²³: «Այդ ժամանակաընթացքում տնտեսական կյանքը գերազանցապես ընթացել է կոնկրետ իրադրության կողմից թելադրվող հապշտապ որոշումների, Ռուսաստանի Դաշնության տնտեսական քաղաքականության հաճախ անհարկի կրկնօրինակման և հատկապես՝ արևմտյան ֆինանսական կազմակերպությունների երաշխավորությունների հիման վրա: Սա փորձերի, անխուսափելի սխալների, դրանց հաղթահարման ճիգերի, տառապանքների ճանապարհ է, որը աշխարհի ոչ մի երկրի հաջողություն չի բերել, այլ ընդհակառակը, հանգեցրել է լուրջ տնտեսական դժվարությունների ու սխալների»²⁴:

Արդյունաբերական ձեռնարկությունների զգալի մասի (հատկապես միութենական նշանակության) արտադրական կարողությունները գործում էին խիստ թերբեռնված: Կտրուկ անկում ապրեցին (1996 թ. 1990 թվականի համեմատությամբ) գյուղատնտեսությունը (ներառյալ՝ մթերումները), ընդ-

²³ Ինչպես արդեն տեսանք, Ռուսաստանի Դաշնության ուզմավարական ծրագրերը (դրանց մի մասը) և առանձնապես չեն «փայլել» գիտական հիմնավորվածության առումով և դրանց կենսագործման արդյունքներով:

²⁴ Սուվարյան 1996, 65:

հանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառությունը (մոտ 14 անգամ), էլեկտրական էներգիայի արտադրությունը (1.8 անգամ) և արդյունաբերության մեջ դրա սպառումը (4.6 անգամ), ապրանքների ու ծառայությունների արտահանումը (9.3 անգամ) և ներմուծումը (1.15 անգամ) և այլն (տե՛ս աղյուսակը):

Չնայած բնակչության դրամական եկամուտների աճին, թռիչքաձև է աճել սպառողական գների ինդեքսը (բազմապատիկ անգամ²⁵): Խորհրդային տարիներին գործազրկություն չունեցող հանրապետությունը քաղաքական անկախություն ձեռք բերելուց հետո դարձել է գործազրկության բարձր մակարդակ ունեցող երկիր (1994 թվականին ունեցել է 91.8 հազար, 1996 թ.՝ 159.3 հազար գործազուրկ) (տե՛ս աղյուսակը): Այս ամենի հետևանքով կտրուկ բարձրացել է աղքատության մակարդակը:

Աղյուսակ

« 1990-1996 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման մի քանի ցուցանիշ²⁶»

	Ցուցանիշների անվանումը	1990	1993	1994	1995	1996
1	2	3	4	5	6	7
1	Աշխատունակ տարիքի բնակչ., հազ. մարդ	1974,5	2056,3	2073,3	2094,8	2122,0
2	Տնտեսության մեջ զբաղվածների միջին տարեկան թիվը	1630, 1	1543,3	1487,6	1476,4	1435,6
3	Պաշտոնապես գրանցված գործազուրկներ (տարեվերջին), հազ. մարդ	—	102,6	91,8	131,7	159,3
4	Պաշտոնապես գրանցված գործազուրկներ, %-ներով տնտ. ակտիվ բնակչության մեջ	—	5,3	6,6	6,7	9,3
5	Բնակելի տների ընդհ. մակերեսի գործարկումը, հազ. քմ	1460	370	26,4	370	26,4
6	Ընդհ. օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառությունը, մլն տ-կմ	6463	534	463	534	463
7	Պետական բյուջեի եկամուտները, մլն ռուբլի	4143	197953	29496	197953	29496
8	Պետական բյուջեի եկամուտները, %-ներով ՀՆԱ-ի նկատմամբ	41,2	23,3	15,8	23,3	15,8
9	Պետական բյուջեի ծախսերը, մլն ռուբլի	3578	4371	22656	298017	40832

²⁵ 1992-1995 թթ. 1 ք. մ բնակտարածքի ամսական բնակվարձն ավելացել է 1000 անգամ, 1 անձի խմելու ջրի ամսական վարձը՝ մոտ 67 հազար անգամ, 1 անձի հաշվով կենցաղային աղբի տեղափոխությունը՝ ավելի քան 48 հազար անգամ և այլն (տե՛ս Միքայելյան 2005, 178):

²⁶ Աղյուսակը կազմված է «Վիճակագրական տարեգիրք» (1998 թ.) ժողովածուի պաշտոնական թողարկման 1995-1996 թվականների՝ 10-13, 38-39, 119, 177, 193, 209, 224, և 241 էջերի տվյալների հիման վրա:

10	Պետական բյուջեի ծախսերը, %-ներով ՀՆԱ-ի նկատմամբ	35,6	27,4	36,5	35,1	21,8
11	Բնակչության դրամական եկամուտները, մլն դրամ	8,0	395,0	93,7	289,3	434,3
12	Բնակչության դրամական ծախսերը, մլն ռուբլի	6,9	250,1	84,9	274,5	423,6
13	Ապրանքների և ծառայությունների սպառողական գների ինդեքսը, նախորդ տարվա նկատմամբ, %-ներով	107,8	1922,9	5062,7	276	118,5
14	Էլեկտրական էներգիայի արտադրությունը, մլն կվտ/ժ	10377,4	9531.8	9020.5	6311,1	5673.3
15	Էլեկտրական էներգիայի սպառումն արդյունաբերության մեջ, մլն կվտ/ժ	3559,7	3495.4	1955.0	752,4	772.6
16	Ներմուծում, մլն \$,	655,4	86,0	188.3	339,9	568.0
17	Արտահանում, մլն \$	2001,5	1171.2	108,1	156,2	215,5
18	Ապրանքների և ծառայությունների սպառողական գների ինդեքսը, %-ներով նախորդ տարվա նկատմամբ	107,8	1922,9	5062,3	276	118,5
19	Սննդամթերքի գնումների բաժինը ընտանեկան բյուջեի ընդհանուր ծախսերի մեջ, %-ներով	44,3	53,8	67,9	70,0	64,7
20	1 ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի միջին տարեկան փոխարժեքը	—	—	300,77	405,78	414,78

Ռազմավարության մշակման և դրա իրականացման առումով առանձնապես մեծ առաջնադասում չեն արձանագրել հետագա տարիներին նախապատրաստված և «կյանքի կոչված» ռազմավարական փաստաթղթերը: Դրանք չեն բավարարել այդպիսի փաստաթղթերի մշակման պահանջները²⁷:

ՀՀ կառավարությունը 2003 թվականից սկսած՝ յուրաքանչյուր տարի ընդունում է միջնաժամկետ ծախսային (եռամյա) ծրագրեր (ՄԺԾԾ)²⁸: Գործող կառավարությունները մշակել և հաստատել են գործունեության համար հնգամյա ծրագրեր²⁹, ընդունվել են երկու հեռանկարային ծրագրեր, և ամեն տարի ընդունվում ու Ազգային ժողովում հաստատվում է պետական բյուջեն:

Փորձենք համադրել 2021-2026 թթ. կառավարության ծրագրի, 2020-2022 թթ. ՄԺԾԾ-ի, ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի և պետական բյուջեի մի քանի ցուցանիշ և ռազմա-

²⁷ Այդ պահանջների վերաբերյալ տե՛ս Մարկոսյան, Մաթևոսյան, Մարկոսյան 2024, 95-96:

²⁸ 2017-2019 թվականի ծրագրից հետո ՀՀ կառավարության կայքէջում ամրագրվել է 2020-2022 թթ. ծրագիրը, որից հետո այդ կայքէջում, չնայած ընդունվել են, բայց դեռևս եռամյա ծախսային ծրագրեր չեն ներառվել:

²⁹ Յուրաքանչյուր նոր իշխանություն ընդունում և հաստատում է իր գործունեության ծրագիրը:

վարության դիտակետով գնահատենք, թե ինչպես են համընկել այդ ծրագրերի համապատասխան ցուցանիշները:

Միջնաժամկետ ծրագրով՝ կառավարության հիմնական ռազմավարական գերակայությունները սահմանված են ՀՀ ազգային ժողովի հավանությանն արժանացած՝ կառավարության ծրագրով: Վերը նշված փաստաթղթի համաձայն, կառավարությունն առաջիկա տարիներին առավել կարևորել է պետական բյուջեի ծախսային մի շարք գերակայություններ: Մասնավորապես, համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ-ի) նկատմամբ պետական բյուջեի եկամուտների հարաբերության ցուցանիշը 2020-2022 թթ. պետք է տատանվեր 24.5%-24,7%-ի սահմաններում: Հիմք ընդունելով պետական բյուջեի եկամուտների կանխատեսումային իրական ծավալները՝ կառավարությունը ծրագրել էր 2020-2022 թթ. ծախսերի միջին տարեկան մակարդակը պահպանել ՀՆԱ-ի 26.8%-26.9%-ի սահմաններում: Ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալները միջնաժամկետի վերջում պետք է հասցվեին ՀՆԱ-ի 43%-ին³⁰ (այս և այլ ցուցանիշները տե՛ս գծ. 2-ում): «ԿԲ կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականությանը համահունչ կանխատեսվում է գնաճի տեմպերի աստիճանական արագացում և միջնաժամկետի վերջում կայունացում գնաճի թիրախի կենտրոնական 4% մակարդակում»³¹:

ՀՆԱ-ի նկատմամբ արտահանման 43%-ի ապահովումը (2018 թ. փաստացի 37.5%-ի դիմաց) խիստ կասկածելի է, քանի որ այդ դեպքում 4 տարվա ընթացքում ՀՆԱ-ի միջին տարեկան հավելվածի տեմպը պետք է կազմեր 13%, իսկ արտահանման ծավալները՝ առնվազն 18.5% (կապիտալ ծախսերն ավելանալու էին ընդամենը 5.5 տոկոսային կետով):


Եթե նկատի ունենանք, որ արտահանման և ներմուծման հիմնական ծավալներում զգալի տեսակարար կշիռ ունեն թանկարժեք քարերը և մետաղները³², ապա այդ փաստը չի վկայում արտահանման կառուցվածքի բարելավման մասին: Իսկ ծրագրում չի էլ նշվում, թե ինչ միջոցառումների շնորհիվ էին արագացված տեմպերով ավելանալու արտահանման ծավալները: Փաստացի, 2022 թվականին «արտահանում - ՀՆԱ» հարաբերակցությունը կազմել է ընդամենը 27.77%:

³⁰ Այս ցուցանիշը նախատեսված է բարձր աճի սցենարի դեպքում, իսկ ՄԺԾՄ-ով այն 41.4% է (տե՛ս Հայաստանի Հանրապետության 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, էջ 15, <https://www.gov.am/files/docs/3502.pdf>):

³¹ Հայաստանի Հանրապետության 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, <https://www.gov.am/files/docs/3502.pdf>, էջ 16 (մեջբերումը բառացի է արված: Ի դեպ, արտահանման ծավալն ամբողջությամբ չէ, որ ՀՆԱ-ի մաս է կազմում, հետևաբար ձևակերպումը պետք է լինի ոչ թե ՀՆԱ-ում, այլ՝ ՀՆԱ-ի նկատմամբ):

³² Նախորդ տարվա համեմատ 2022 թվականին զգալիորեն ավելացել են ադամանդե քարերի, ոսկերչական իրերի ու ոսկու փոշու արտահանման և ներմուծման ծավալները (համապատասխանաբար հասնելով՝ 940 և 653 մլն դոլարի):

Գծապատկեր 2. ՄԺԾԾ-ի և փաստացի 2020-2022 թթ. մի քանի ցուցանիշ



Գծապատկեր 2-ից երևում է, որ ՀՆԱ-ի նկատմամբ միջնաժամկետ ծրագրով նախատեսված պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և դրանց փաստացի ցուցանիշները գրեթե համընկնում են: Զգալիորեն թերակատարվել են ներմուծման և արտահանման ցուցանիշները (համապատասխանաբար՝ 7.5 և 12.2 տոկոսային կետերով): Կառավարության փաստացի պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ զգալիորեն ցածր է ՄԺԾԾ-ով նախատեսվածից³³:

Հեռանկարային զարգացման 2014-2025 թթ. ռազմավարական ծրագրով նախատեսվել է ՀՆԱ-ի նկատմամբ ներմուծման ու արտահանման ծավալները հասցնել համապատասխանաբար՝ 43 և 33 տոկոսի: Մինչդեռ միջնաժամկետ ծրագրով այդ ցուցանիշները զգալիորեն բարձր են եղել (2021 թ. համապատասխանաբար՝ 9.6 և 7.1 տոկոսային կետերով)³⁴:

Ըստ կառավարության 2021-2026 թթ. ծրագրի՝ 2026 թվականին աղքատությունը կրկնակի կրճատելու և գործազրկության մակարդակը 10%-ից նվազեցնելու համար Հայաստանի Հանրապետությանն անհրաժեշտ է, որ ՀՆԱ-ի միջին տարեկան հավելաճի տեմպը 7%-ից բարձր լինի³⁵:

Աղքատության մակարդակը 2020 թվականին փաստացի եղել է 27, իսկ 2022 թվականին՝ 24.8%: Հինգ տարում աղքատության մակարդակը կրկնակի կրճատելու համար (13,5%-ային կետով) միջին հաշվով յուրաքանչյուր

³³ Պետք է նկատի ունենալ, որ 2022 թվականին նախորդ տարվա համեմատ սղաճի հավելաճի տեմպը կազմել է 8.6%, իսկ դրամի նկատմամբ դոլարի փոխարժեքը նախորդ տարվա համեմատ նվազել է՝ կազմելով 86.5%:

³⁴ Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, էջ 59, <https://www.gov.am/files/docs/1322.pdf>

³⁵ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր (2021-2026 թթ.): ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363 - Ա որոշման հավելված, էջ 21:

տարի պետք է այն առնվազն 2.7%-ային կետով կրճատել: Մինչդեռ առաջին երկու տարում այն փաստացի կրճատվել է 2.2%-ային կետով:

Այսպիսով, եթե քաղաքական անկախացումից հետո իրականացված ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման քաղաքականությունը ապահովված չի եղել ռազմավարական ծրագրով, ապա հետագա (մասնավորապես վերջին տասը տարիների) ծրագրային փաստաթղթերով «ապահովված» ծրագրերը լիարժեք գիտական հիմնավորում չունեն: Առավել ևս, որ վերոհիշյալ ռազմավարական փաստաթղթերում առկա չեն ռեսուրսներով (ներառյալ՝ ֆինանսական և կադրային) ապահովվածության հիմնավորումներ:

Ընդհանրացնելով շարադրվածը՝ հարկ է նշել, որ ռազմավարական կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առաջին հերթին անհրաժեշտ է կարևորել դրա գործիքակազմի նպատակային գործադրումը՝ ծրագրային ցուցանիշների կանխատեսման գիտական հաշվարկներով հիմնավորումը (ներառյալ՝ ռեսուրսներով ապահովումը), դրա կատարման նկատմամբ մշտադիտարկման, անհրաժեշտ ճշգրտումների և խթանման կառուցակարգերի գործադրումը, կառավարման օպտիմալ կառուցվածքի ստեղծումը (որն առանձին քննարկման թեմա է):

Չափազանց կարևոր են պետության առաքելության ապահովման գործում գիտության նվաճումների ներդրումը, նորամուծական տեխնոլոգիական զարգացման ապահովումը, մինչդեռ հանրապետության տնտեսությանը բնորոշ է ծառայությունների ոլորտի ուղղվածությունը, աննշան է գիտատար արտադրանքի բաժինը ՀՆԱ-ում: Ավելին՝ տնտեսական ռազմավարության և գիտական քաղաքականության միջև չկան ուղղակի փոխառնչություններ: Ըստ էության՝ ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքը չի համապատասխանում արհեստական բանականության դարաշրջանում տնտեսական ու տեխնոլոգիական զարգացման պահանջներին: Թույլ է տնտեսության միջազգային մրցունակությունը, ինչը դրսևորվում է արտաքին առևտրի՝ մեզ համար ոչ բարենպաստ կառուցվածքում:

Եզրակացություններ

Պետության առաքելությունը ազգաբնակչության բարեկեցությունը և երկրի անվտանգությունն ապահովելն է: Ժամանակակից պայմաններում վերոնշյալ առաքելությունը լիարժեք իրագործելու և երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է բոլոր բնագավառների համար ունենալ գիտականորեն հիմնավորված ռազմավարական ծրագրեր:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն երկրները, որոնք ճիշտ են ըմբռնել և կիրառել երկրի և (կամ) դրա առանձին ոլորտների ու բնագավառների զարգացման ռազմավարությունները, մեծ հաջողություններ են արձանագրել:

Անկախացումից հետո, չունենալով զարգացման որևէ ծրագիր (առավել ևս՝ ռազմավարական), Հայաստանը ձեռնամուխ եղավ տնտեսության վերակառուցմանը: Այդ ժամանակահատվածում (1991-1996) տնտեսական կյանքը գերազանցապես ընթանում էր կոնկրետ իրադրության կողմից թելադրվող հապշտապ որոշումների հիման վրա: Արդյունաբերական ձեռնարկությունների զգալի մասի (հատկապես միութենական նշանակության) արտադրական կարողությունները գործել են խիստ թերբեռնված: Կտրուկ անկում են ապրել գյուղատնտեսությունը, ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառությունը, էլեկտրական էներգիայի արտադրությունը և արդյունաբերության մեջ դրա սպառումը, ապրանքների և ծառայությունների արտահանումն ու ներմուծումը և այլն:

Չնայած բնակչության դրամական եկամուտների աճին, բազմապատիկ անգամ աճել է սպառողական գների ինդեքսը: Գործազրկությունը դարձել է երկրի սոցիալական վիճակը բնութագրող ցուցանիշ: Կտրուկ բարձրացել է աղքատության մակարդակը:

Ռազմավարական ծրագրերի մշակման և դրա իրականացման առումով առանձնապես մեծ առաջխաղացում չեն արձանագրել հետագա տարիներին նախապատրաստված և «կյանքի կոչված» ռազմավարական փաստաթղթերը: Կառավարության՝ երկրի զարգացման, հեռանկարային զարգացման ռազմավարական և միջնաժամկետ ծախսային ծրագրերի շատ ցուցանիշներ չեն համապատասխանում միմյանց կամ արժանահավատ չեն: Տնտեսական ռազմավարության և գիտական քաղաքականության միջև չկան ուղղակի փոխառնչություններ: Արհեստական բանականության դարաշրջանում տնտեսական ռազմավարությունը պետք է բավարարի տնտեսական ու տեխնոլոգիական զարգացման պահանջները:

Օգտագործված գրականություն

- Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1998, Երևան, «Զանգակ-97», 520 էջ, <https://armstat.am/file/doc/99506968.pdf> (ներբեռնման օրը՝ 07.11.2024):
- Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր (2021-2026 թթ.): ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363 - Ա որոշման հավելված:
- Հայաստանի Հանրապետության 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, <https://www.gov.am/files/docs/3502.pdf> (ներբեռնման օրը՝ 07.11.2024):
- Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, էջ 59, <https://www.gov.am/files/docs/1322.pdf> (ներբեռնման օրը՝ 07.11.2024):
- Հարարի Յա.Ն. 2020, Sapiens: Մարդկության համառոտ պատմություն, Երևան, «Newmag», 512 էջ:
- Մարկոսյան Ա., Մաթևոսյան Է., Մարկոսյան Մ. 2024, Ազգային և տնտեսական անվտանգության ապահովումը ռազմավարական պլանավորման համատեքստում, Հանրային կառավարում, N 1, էջ 87-101:

- Միքայելյան Մ.Վ. 2005, Տնտեսական մրցակցության և մենաշնորհների պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, «Նահապետ», 253 էջ:
- Սուվարյան Յու.Մ. 1996, Ռազմավարական կառավարում. մեթոդաբանությունը և արդի հիմնահարցերը, ԵրԺՏԻ, Երևան, «Տնտեսագետ», 152 էջ:
- Սուվարյան Յու., Միրզոյան Վ. 2013, Հանրային կառավարման տեսություն և պատմություն, Երևան, «Գիտություն», 368 էջ:
- Սուվարյան Յու.Մ. 2020, Կառավարման տեսության արդի հիմնախնդիրներ, Երևան, «Գիտություն», 162 էջ:
- Սուվարյան Յու.Մ. 2022, Ռազմավարության և կազմակերպանման կառուցվածք, Լրաբեր հասարակական գիտությունների, N 3, Երևան, էջ 154-172:
- Губанов С. 2020, К вопросу о целевых задачах развития России и способе их решения, Экономист, N 7, с. 3-7.
- Гутник В. 1997, Государство и экономика: гармония возможна, но почти недостижима. Об учебнике Л.Г. Ходова, Основы государственной экономической политики, 320 с.
- Кант И. 1965, Сочинения в 6-ти томах, т. 4, ч. 2, Москва, 478 с.
- Кэне Ф. 1960, Избранные экономические произведения, Москва, «Экономика», 504 с.
- Китай: 20 лет политики реформ и открытости 1999, Проблемы теории и практики управления, N 5, с. 14.
- Мальцев А. 2014, Прошлое и будущее китайской экономики (О книге Дж. Ё. Лина «Демистификация китайской экономики»), «Вопросы экономики», N 5, с. 143-153.
- О национальных целях развития Российской Федерации на период до 2030 г. 2020, Экономист, N 8, с. 3-5.
- Теория государства и права 2001, под ред. проф. Марченко М.Н., Москва, «Зеркало», 624 с.
- Чаба Л. 1995, Политико-экономические основы стратегии реформ: сравнение опыта Китая и стран центральной и восточной Европы, Вопросы экономики, N 12, с. 50-53.
- Чиркин Б.Е. 2001, Государственное управление, Москва, «Юрист», 320 с.
- Экономическая энциклопедия 1999, науч. - ред. совет изд-ва «Экономика», Ин-т экон. РАН; гл. ред. Л.И. Абалкин, Москва, 1055 с.
- The Global Competitiveness Report 2011–2012; World Economic Forum Geneva, p. 148 https://www3.weforum.org/docs/WEF_GCR_Report_2011-12.pdf (ներբեռնման օրը՝ 07.11.2024):

МИССИЯ ГОСУДАРСТВА И СТРАТЕГИЧЕСКОЕ УПРАВЛЕНИЕ

Юрий Суварян, Микаел Микаелян

Резюме

Миссия государства – обеспечение благополучной жизни населения страны и ее безопасности. Для реализации этой миссии необходимо иметь научно обоснованные стратегические планы по всем направлениям.

Исследования показали, что те страны, которые правильно поняли и применили стратегии развития страны и/или ее отдельных секторов и областей, добились больших успехов.

После обретения политической независимости Армения приступила к экономическому восстановлению без какого-либо плана развития. В связи с этим во всех отраслях экономики произошел спад, а уровень жизни населения страны сильно ухудшился. В плане разработки стратегических планов и их реализации существенного прогресса в подготовленных и «призванных к жизни» стратегических документах в последующие годы не произошло.

Стратегические планы, разработанные и реализованные в последующие годы, являются неполными и не отвечают предъявляемым к ним требованиям. В частности, в эпоху искусственного интеллекта экономическая стратегия должна соответствовать требованиям экономического и технологического развития.

Ключевые слова – миссия государства, стратегические планы, стратегические документы, стратегическое управление, экономическая стратегия, реконструкция экономики, обеспеченность ресурсами.

MISSION OF THE STATE AND STRATEGIC MANAGEMENT

Yuri Suvaryan, Mikael Mikaelyan

Abstract

The mission of the state is to ensure the well-being of the population of the country and its security. To fully implement this mission, it is necessary to have scientifically based strategic plans in all areas. Research has shown that those countries that have correctly understood and applied the development strategies of the country and/or its individual sectors and areas have achieved great success.

After gaining political independence, Armenia embarked on economic recovery without any development plan. As a result, all sectors of the economy experienced a decline, and the standard of living of the country's population deteriorated significantly. In terms of developing strategic plans and their implementation, there was no significant progress in the strategic documents prepared and "called to life" in the following years.

The strategic plans developed and implemented in subsequent years are incomplete and do not meet the requirements set for them. In particular, in the era of artificial intelligence, economic strategy must meet the requirements of economic and technological development.

Key words – state mission, strategic plans, strategic documents, strategic management, economic strategy, economic reconstruction, availability of resources.

ՀԱՅ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱ-ՄԵԿՆԱԲԱՆԸ
(ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի
ծննդյան 100-ամյա հոբելյանին)

Անլիտա Դոլուխանյան

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայ հին և միջնադարյան գրականության և
նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն
ՀՀ, Երևան, Տիգրան Մեծի 17
Էլ. հասցե՝ aelita.dolukhanyan@gmail.com
ORCID: 0000-0001-9526-9464

Հոդվածը ներկայացվել է 31.10.2024, գրախոսվել է 20.11.2024, ընդունվել է տպագրության 03.12.2024
DOI: 10.53548/0320-8117-2024.3-156

Ամփոփում

Հայ գրականագիտության և գրաքննադատության արևելյան հատվածում այդ գիտաճյուղը վերջնական ձևավորված տեսք ստացավ անզուգական Միքայել Նալբանդյանի շնորհիվ՝ հատկապես Պերճ Պոռոջյանի «Սոս և Վարդիթեր» վեպի կրիտիկայով և Ղազար Փարպեցու՝ մարզպան Վահան Մամիկոնյանին ուղղված հոշակավոր «Թղթի» մեկնաբանությամբ:

XX դարի երկրորդ կեսին և XXI դարասկզբին հայ գրաքննադատությունը եվրոպական ու ռուսական գրականագիտության ու գրաքննադատության հետ զարգանում էր համընթաց: Այդ առաջընթացի մեջ էր հայ գրականագիտությունը՝ երևան բերելով նշանավոր դեմքեր ու խիստ ինքնատիպ մեկնաբանություններ:

Այդ ժամանակահատվածի գրականագիտական ու գրաքննադատական մտքի դասականներից էր Սերգեյ Սարինյանը:

Բանալի բառեր՝ Սերգեյ Սարինյան, Իմանուիլ Կանտ, փիլիսոփայություն, Գրիգոր Նարեկացի, հրապարակախոսություն, ազգ, գրաքննադատություն:

Ներածություն

Երջանիկ են այն մտավորականները, որոնք ստեղծագործում են իրենց ի վերուստ տրված կոչման համեմատ: Նրանք, իրոք, ստեղծում են խիստ ինքնատիպ գործեր, հիմնում նոր ուղղություն և ունենում հետևորդներ: Այդ երջանիկներից է ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը, որը XX դարի երկրորդ կեսին և XXI դարի սկզբին հայ գրականագիտական միտքը հարստացրեց տաղանդավոր մտքին հատուկ բազմաթիվ գրքերով ու մեծաքանակ հոդվածներով:

Սերգեյ Սարինյանը նաև այն երջանիկներից էր, որ գրեց մինչև վերջին շունչը՝ համաքայլ ընթանալով գրականագիտության շարունակական փո-

փոխությունների հետ՝ զարմանալիորեն ունենալով հստակ ու թարմաշունչ մտածողություն:

Երբ վերընթերցում էի Սարինյանի գրքերն ու հոդվածները նրա 90-ամյակի առթիվ հոդվածը պատրաստելիս, ուշադրությունս գրավեց գրականագետի թեկնածուական ատենախոսության հետ կապված հետևյալ արժանահիշատակ փաստը. պաշտպանության ժամանակ գիտական աստիճաններ շնորհող խորհրդի կազմում էին մեր ազգային մեծերը՝ Ավետիք Իսահակյանը, Մարտիրոս Սարյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Հրաչյա Աճառյանը, Արա Սարգսյանը, Արսեն Տերտերյանը, Գրիգոր Ղափանցյանը: Հանճարեղ արվեստագետ Երվանդ Քոչարը, լսելով ու հիանալով Սերգեյ Սարինյանի՝ պաշտպանության ընթացքում տված պատասխաններով՝ նրան անվանում է «Իմ Մեդիչի»: Հայտնի է, որ Մեդիչիների ընտանիքը Ֆլորենցիայի ու Տոսկանայի տերերն էին և Վաղ Վերածննդից մինչև XVIII դարը մեծ դեր են կատարել Իտալիայի քաղաքական, գրական և մշակութային կյանքում: Նրանց ընտանիքն է հիմնել Եվրոպայում առաջին գիտությունների ակադեմիան: Մատենոյի այս որակումը Սերգեյ Սարինյանը հիշել է ողջ կյանքում և այն ունեցել որպես ուղեցույց¹:

Բնությունից օժտված լինելով գրականագիտական մեծ տաղանդով՝ Սարինյանը նաև անձանձիր ընթերցող ու հետազոտող էր: Նա ուսումնասիրել է XIX և XX դարերի հայ մամուլը, փիլիսոփայական կարևոր հետազոտությունները: Նա հետևում էր փիլիսոփայության վերաբերյալ լույս տեսնող ամեն մի կարևոր աշխատության՝ թե՛ ռուսերենով և թե՛ հայերենով:

Սարինյանն իր ապրած ժամանակաշրջանի հայ գրողների ուշադիր ընթերցողն ու գնահատողն էր: Նա նաև առաջնակարգ գրաքննադատ, էր՝ երբեմն անողոք: Գրականագիտությունը համարում էր մարդկության և ընդհանրապես հասարակական կյանքի համար կարևոր գիտաճյուղ, և այդ գաղափարը հաստատում էր իր աշխատություններով:

Ռուս միջնադարյան գրականության փայլուն գիտակ ու տեսաբան, ակադեմիկոս Դմիտրի Լիխաչովը մի առիթով գրել է. «Դասական ստեղծագործությունների իմացությունը, դրանց արժեքը գնահատելու հմտությունը, նրանց ներքին գեղեցկությունն ու կատարելությունը զգալը կրթվածության պարտադիր նախապայման են»²: Այդ անհրաժեշտ կրթվածությունն առկա է Սերգեյ Սարինյանի բոլոր ստեղծագործություններում:

Գրականության փիլիսոփա մեկնիչը

Կյանքի վերջին տարիներին Սարինյանը թեմատիկ համակարգմամբ հրատարակեց «Հայոց գրականության երկու դարը» խորագրով յոթ ծա-

¹ Հայ գրաքննադատության դասականը 2014, 15-16:

² Лихачев 1987, 3.

վալուն հատորները: IV հատորում գրականագետը զետեղել է այն կարևոր հոդվածները, որոնք նշանավորում են «Գրականության փիլիսոփայությունը»:

Գրականության և փիլիսոփայության կապը հաստատվել է դեռ անտիկ աշխարհում ու դրա վառ ապացույցն է Արիստոտելի «Պոետիկա» աշխատությունը: Արիստոտելի կարծիքով, պոետական արվեստը բացարձակ ձևով ծնել են երկու պատճառներ, ու երկուսն էլ բնական են: Չէ՞ որ կրկնօրինակելը հատուկ է մարդկանց մանկությունից. չէ՞ որ մարդիկ դրանով են տարբերվում մյուս էակներից, ամենից շատ են օժտված նմանակելու ընդունակությամբ և նույնիսկ առաջին հմտությունները ձեռք են բերում նմանակելու ճանապարհով³:

Հին աշխարհի մեծագույն մտածողներից Պյութագորասը ամենից շատ սիրել է Հոմերոսի պոեմներն ու հիմները և հատուկ տրակտատ է գրել Հոմերոսի պոետիկայի մասին ու այդ բանաստեղծի գործերը հանձնարարել է ուսուցանելու համար⁴:

Ֆրանսիացի լուսավորիչ փիլիսոփաները, որոնցից մեկն էր Վոլտերը, որի գրական գործերն այսօր էլ կարդացվում են հետաքրքրությամբ, մեծ տարբերություն է տեսնում մարդու և տիեզերական ոգու միջև: Նա համոզված է, որ աշխարհաստեղծումը գլխավորել է ոչ այնպիսի բանական արարած, ինչպիսին ինքն է, որովհետև ինքը չի կարող ստեղծել անգամ տիզ, ուրեմն նշանակում է՝ այս աշխարհը բանականության ստեղծածն է՝ էականորեն գերազանցող իր խելքը⁵:

Մարդու և տիեզերքի խնդիրը մշտապես հուզել է Սարինյանին, ու այդ կապի շուրջ ստեղծված գրականությունը նրա հետաքրքրությունների կենտրոնում է եղել:

2003-ին է գրվել «Ինչ է գրականության փիլիսոփայությունը» հոդվածը: Դրանում նա փաստում է, թե կա պատմության փիլիսոփայություն, գեղարվեստի փիլիսոփայություն, թվում է, թե չկա գրականության փիլիսոփայություն, մինչդեռ այն կա:

Սարինյանը մեծապես օգտվել է ֆրանսիացի գրող, գրաքննադատ, փիլիսոփա, պատմաբան, արվեստի տեսաբան Իպոլիտ Տենի (1828-1893) «Գեղարվեստի փիլիսոփայությունից»՝ միաժամանակ այն համադրելով գերմանացի փիլիսոփա, Իմանուիլ Կանտի հետևորդ Ֆրիդրիխ Շելլինգի (1775-1854) գեղարվեստի փիլիսոփայության հետ: Շելլինգը համոզված էր, որ միայն արվեստն է օգնում մարդուն ձեռք բերելու իսկական ազատություն⁶:

³ Аристотель 1984, 648.

⁴ Пифагор 2004, 205.

⁵ Вольтер 2004, 651.

⁶ Փիլիսոփայական բառարան 1975, 323:

Սարինյանը դիմում է նաև անգլիացի պատմաբան, սոցիոլոգ Հենրի Բոքլի (1821-1862) որոշ դրույթներին՝ հայ դասական գրականության մեջ փիլիսոփայական գաղափարները բացահայտելու համար: Բերում է Րաֆֆու «Խաչագողի հիշատակարանից» Քավոր Պետրոսի կերպարի օրինակը: Քավոր Պետրոսն ուներ նախանձելի բանականություն «և ընդունակ էր հասարակական օգտավետ գործունեության, ականա դարձել է խաչագող, չարության փիլիսոփա, մաղձի թունավոր նետերն ուղղելով այն հրեշին, որ կոչվում է մարդկություն, և որը նրան դարձրեց հանցագործ»⁷:

Գրականության և պետության կապին է վերաբերում 2003-ին գրված «Ինչ կապ կա գրականության և պետության միջև» հոդվածը:

Այդ կապը կար դեռևս հին Հունաստանում: Արիստոտելը իր աշխատություններում հաճախ է մեջբերումներ կատարում հատկապես Հոմերոսի «Իլիականից»: «Իլիականը» ամենից ավելի վառ պատկերներով է ներկայացնում չարի ու բարու, արդարի ու անարդարի պայքարը: Արիստոտելն ասում է, թե գրականությունը ի վիճակի է արտահայտելու, թե ինչն է օգտակար, և ինչը՝ վնասակար, նույն կերպ և ներկայացնել, թե ինչն է արդար, և ինչն է անարդար. «Մարդկանց այդ հատկությունը նրանց տարբերակում է այլ կենդանի էակներից. միայն մարդն է ընդունակ ընկալել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են բարին և չարը և այլն: Իսկ այդ բոլորի ամբողջությունը կազմում է ընտանիքի ու պետության հիմքը»⁸:

Սարինյանն իրավացիորեն պնդում է, թե հայրենիքը նույն պետությունն է՝ իր մշակութային արժեքներով: Ու XXI դարի հայ փիլիսոփա գրականագետը ևս դիմում է Հոմերոսին. «Կամ փորձենք Հունաստանն անջատել Հոմերոսից, և նա կդիմազրկվի, կտրոհվի, կկորցնի իր անունը՝ այնքան նույնարժեք են Հունաստան-Հոմերոս խորհրդանիշները»⁹: Սարինյանը հիշեցնում է, որ Պուշկինին Դոստոևսկին համարել է Ռուսաստանի պետական բանաստեղծը¹⁰:

Պուշկինը լայն չափերով ռուս գրականություն բերեց իր ժողովրդի բանահյուսությունը: «Սալթան թագավորի հեքիաթը» պոեմում, գրված 1831-ին, նա չի մոռանում պահպանել հեքիաթին հատուկ երջանիկ ավարտը և վկայում է, թե ինչ որ նկարագրում է, ինքը տեսել է և մասնակից եղել.

Я там был, мед - пиво пил-

И усы лишь обмочил¹¹.

⁷ Սարինյան 2004, 12:

⁸ Аристотель 1984, 379.

⁹ Սարինյան 2004, 20:

¹⁰ Սարինյան 2004, 20:

¹¹ Пушкин 1980, 703.

Իսկ նույնպես բանահյուսական հիմքով գրված «Ռուսլան և Լյուդմիլա» պոեմի նախերգում հիշեցնում Ռուսաստանի ոգին, որն իրեն ներշնչել է պոեմը գրելու.

Там русский дух, там Русью пахнет¹².

Ահա այս ճշմարտացի տրամաբանությամբ Սարինյանը Հայոց պետականությունը նույնացնում է Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունների և Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» անմահ վեպի հետ¹³:

Սարինյանը հայ գրականության XIX և XX դարերի եզակի հետազոտողն էր, սակայն նա չէր կարող անդրադարձ չկատարել հանճարեղ Գրիգոր Նարեկացու ստեղծագործությանը: Իր ուսումնասիրությունը գրել է 2003-ին, երբ նշվեց «Մատեան ողբերգութեան» երկի ստեղծման 1000-ամյա հոբելյանը: Նա իր զեկուցումը կարդացել է Փարիզում Նարեկացուն նվիրված գիտաժողովի ժամանակ: Զեկուցումն ունի խիստ ինքնատիպ վերնագիր՝ «Նարեկը-անվերժանելին»: Այս հոդվածում տեսնում ենք Գրիգոր Նարեկացի փիլիսոփա-բանաստեղծի խիստ ինքնատիպ մեկնություն: Շատ նշանավոր միջնադարագետներ Նարեկացու երկի մեկնությունը «ոչ վերջացեալ գտանին»: Նույն կերպ մտածում է նաև Սարինյանը: Ինչպես երևում է նրա հոդվածից, գրականագետը Քրիստոսի և քրիստոնեական կրոնի վերաբերյալ բազմապիսի գրականություն է կարդացել: Ծանոթ է Մոսկվայում բնակվող ռուս հոգևորական Ալեքսանդր Մենի՝ Քրիստոսի անձին և ուսմունքին տված ուշագրավ բացատրություններին, որոնք տպագրվում էին Մոսկվայի կարևոր թերթերում: Նաև Դավիթ Անհաղթի ու Գրիգոր Նարեկացու նման գիտե, թե չկա «ավելի երանելի և վայելուչ նպատակ, քան ըստ մարդկային կարողության Աստծուն նմանվելը»¹⁴:

Շատ տեղին է նկատել գրականագետը, թե Աստվածամոր գեղեցիկ պատկերը «Մեղեդի ծննդեանի» մեջ բոլորովին էլ չի հակասում Նարեկացու պատկերացումներին: «Իմ կարծիքով, - գրում է Սարինյանը, - Նարեկացու «Տաղերում» չկա բնության ու կյանքի ընկալման որևէ պատկեր, որ հակասի քրիստոնեական կրոնի աշխարհայեցությանը, և բացարձակապես աշխարհայացքային որևէ խզում չի կարելի գծել «Մատեան ողբերգութեան» և «Տաղերի» միջև»¹⁵:

Փիլիսոփայական ամուր հիմքով ու հիմնավորված տրամաբանությամբ է գրված «Մտավորականությունը և արդի ազգային շարժումը» հոդվածը (1991): Նրանում կարդում ենք. «Մեր ազգային երազանքի մշակման գործում

¹² Пушкин 1980, 434.

¹³ Սարինյան 2004, 20:

¹⁴ Դավիթ Անհաղթ 1980, 80:

¹⁵ Սարինյան 2004, 31:

մեծ ավանդ դրեց հայ գրականությունը...»¹⁶: Այդ ազգային զարթոնքը նախապատրաստել էին Անդրանիկը, Ֆիդայիները, եղեռնի հուշարձանը, Արցախ-դարաբաղյան խնդիրը, Հայ դատը, Հայոց ցեղասպանությունը, Պատկանյանը, Շանթը, Ահարոնյանը, Չարենցը, Բակունցը, Սևակը և այլն¹⁷:

2004-ին է գրված «Ազգերը և ազգայնականությունը գիտական նոր մեկնաբանմամբ» հոդվածը, որն անգլիացի հասարակագետ Էռնեստ Գելների «Ազգերը և ազգայնականությունը» գրքի ծավալուն գրախոսականն է: Այդ հզոր գիրքը նախատեսված էր աշխարհի քաղաքագետների, սոցիոլոգների, պատմաբանների և մարդաբանների համար: Գելները մարդկության պատմության մեջ կարևորում էր գրագիտության և հոգևոր դասի ծնունդը: Այդ գրքում խոսք կար նաև հունական և հայկական ազգայնականությունների մասին, և դրանք լայն չափերով կապված են եղել այդ երկու ազգերի՝ օսմանյան լծի տակ տառապելու պատճառով¹⁸:

Գելների գիրքն ուղղված է գլոբալիզացիայի դեմ, որովհետև մարդկության փորձն ապացուցում է, որ ամեն ազգ պետք է ունենա իր պետությունը: XXI դարում գրվել են նաև ուրիշ հակագլոբալիստական գրքեր: Դրանցից մեկը լույս է տեսել Բելգրադում (2017 թ.) և կոչվում է «Я обвиняю молчание»: Հեղինակը Ռադիվոյե Պեշիչն է՝ Միլանի համալսարանի՝ սանսկրիտի և էտրուսկերենի նշանավոր մասնագետը: Նրա «Винчанское письмо» մեկ այլ աշխատության մեջ թվարկվում են այն ժողովուրդները, որոնք Քրիստոսի ծնունդից առաջ ունեցել են իրենց սեփական գիրը: Հայերը, ըստ այդ ցուցակի, գիր ունեցել են Քրիստոսի ծնունդից առաջ 1400 թվականին, ավելի վաղ քան չինացիներն ու փյունիկեցիները: Այդ ցուցակում ընդհանրապես չկան ոչ թուրքերը և ոչ էլ ադրբեջանցիները¹⁹:

Պեշիչը ցավով նշում է, թե Լոնդոնում նստած մեծահարուստների մասունական մի խումբ գլոբալիզացիայի անվան տակ ոչնչացնում է փոքրաքանակ, սակայն քաղաքակիրթ ազգերին. «Դա ստի թագավորություն է, որը դեմոկրատիայի անվան տակ աշխարհին բերում է դժբախտություն»: Գրքում բառացի ասվում է. «Նոր ուտոպիաները տանում են դեպի նոր, առավել դաժան բռնության: Ուրիշների ազատությունը շահագործողները նրանց վրա դնում են իրենց սկզբունքները, այսպես կոչված՝ անհատի ազատության տեսքով: Այդպես բռնակալները իրենց վրա են վերցնում ազատարարների դերը ու աշխարհը տանում են դեպի նոր սիստեմի ստրկություն»²⁰:

¹⁶ Սարինյան 2004, 44:

¹⁷ Սարինյան 2004, 44:

¹⁸ Սարինյան 2004, 69:

¹⁹ Пешич 2017 (Я обвиняю молчание), 174-175.

²⁰ Пешич 2017 (Винчанское письмо), 120.

1989-ին է գրվել «Լևոն Շանթի ազգային ծրագիրը» մեծարժեք հոդվածը: Սարինյանը Լևոն Շանթի պաշտամունք ուներ ու երբեմն Կիլիկյան հայկական թագավորությանը վերջին ճիգերով պահպանող պետական այրերին համեմատում էր իր հետ:

Շանթը դեմ էր ազգությունների վերացմանը, և դա համարում էր դաժան մի ցնորք, միասեռության ու միաձևության մի գորշ երազանք, որ հասկանում է բազմազանության ու բազմազեղության բնական օրենքին²¹:

Միքայել Նալբանդյանի կյանքին ու գործին շատերն են անդրադարձել: Սակայն Սարինյանի գնահատականները խիստ սպառիչ են: Նալբանդյանի մասին նա գրում է «Ազատության առաքյալը» հոդվածում՝ գնահատելով գրաքննադատին, բանաստեղծին, արձակագրին և հրապարակախոսին: Նալբանդյանը համոզված էր, որ տիեզերքը նախաստեղծ է, որին ներհատուկ են փոփոխման ու նորոգման, ծագման ու զարգացման իր հարաշարժ օրենքները: Ահա այսպիսի սպառիչ գնահատական է տվել Սարինյանը Միքայել Նալբանդյան երևույթին. «Դժվար է մի անհատի կարողությունների և կարճատև կյանքի տևողության մեջ տեղադրել մտավոր ու հասարակական գործունեության այն համատեղումները, որ յուրահատուկ էր Նալբանդյանին»²²:

Սարինյանը հայ պատմավեպի անցած ուղու քաջ գիտակներից էր: Կարդացել էր ոչ միայն հայ դասական պատմավեպերը, այլև մեր օրերի այն բոլոր գրողների ստեղծագործությունները, որոնք գրված էին պատմական թեմատիկայով: Նա հմտորեն է ներկայացնում պատմական թեման հայ գրականություն բերած Ռաֆֆու և Մուրացանի համապատասխան գործերը, շեշտում այդ գրողների՝ պատմությունից ծնված փիլիսոփայությունը:

Հետաքրքիր ձևով է մեկնաբանված «Խենթը» վեպի գլխավոր հերոսի՝ Վարդանի ինքնախոստովանությունը:

Գրականագետը հիմնավորում է, թե ինչու Մուրացանն իր գյուղափրկիչ ռոմանտիկական պատրանքները փոխարինեց ճշմարիտ առաքյալներ չտեսնելու հոռետեսությամբ:

Արտակարգ և պատմականորեն ճշգրիտ է մեկնաբանված Մուրացանի «Անդրեաս երեց» վեպը. «Անդրեաս երեցը Մուրացանի իդեալն է և արտահայտում է ազգային գոյափիլիսոփայության նրա սկզբունքները, ըստ որի, պետք է դիմագրավել բռնությանը, ունենալ կամք և տոկունություն դիմադրելու թշնամու վայրագություններին, ընդվզելու բռնավորի կամայականությունների դեմ և անհրաժեշտության պարագայում ընդունելու նահատակությունը»²³: Լիովին իրավացի է գրականագետը, երբ փաստում է, թե գրականագիտությունը «Անդրեաս երեց» վեպը վերագրել է Մուրացանի հետա-

²¹ Սարինյան 2004, 77:

²² Սարինյան 2004, 93:

²³ Սարինյան 2004, 141:

դիմական աշխարհայացքի վրիպանքին և գրեթե անտեսել նրա գրական արժեքը:

«Անդրեաս երեցի» նյութը Մուրացանը վերցրել է Առաքել Դավրիժեցու պատմությունից՝ «Տեր Անդրեաս քահանայի նահատակության մասին» (ԻԷ) գլխից²⁴: Ցավոք, Մուրացանը ծանոթ չէր և չէր էլ կարող ծանոթ լինել հայ գրականության նոր վերածննդին նպաստող Սյունյաց Մեծ անապատի նշանավոր գործիչ Ներսես Մոկացու՝ Անդրեաս երեցին նվիրված պատմական շատ գեղեցիկ գանձին²⁵: Անդրեաս երեցը նահատակվել է 1617-ի նոյեմբերի 18-ին, ու Ներսես Մոկացին «գանձը» գրել է դեպքի թարմ ազդեցության տակ: Նա Անդրեաս երեցին համեմատում է Վարդան Մամիկոնյանի և Ավարայրի հերոսամարտի այլ նահատակների հետ, որոնք զոհվեցին հանուն հայրենիքի²⁶:

Իր մի հոդվածում Սարինյանը Սիամանթոյին իրավացիորեն անվանում է՝ «Հեղափոխության Նարեկը»²⁷:

Սարինյանը նաև առաջնակարգ հրապարակախոս էր ու խիստ կարևորում էր հրապարակախոսության դերը հասարակական կյանքում: Նա պահանջում էր սթափ և անկողմնակալ գնահատել իշխանության դերը ազգի կյանքում. «Ի՞նչ է իշխանությունը: Թվում է՝ հասկացությունն այնքան հասկանալի է, որ կարող է մատչելի լինել նույնիսկ մտավոր միջակությանը: Այնինչ իշխանությունը մի ամբողջ գիտություն է, արվեստ ու ռազմավարություն, որ զբաղեցրել է գրեթե բոլոր երևելի մտածողներին, գիտնականներին, փիլիսոփաներին, պետական գործիչներին, գրողներին, հոգեբաններին»²⁸:

Նա սահմանել է արդի գրականության հետազոտական հիմնական ուղղությունները՝ բնագրագիտություն, գիտական կենսագրություն, գրականության տեսություն, գրականության պատմություն: Նրա կարծիքով, ազգային չափանիշի հարցը ստեղծագործական նոր խնդիրներ է առաջադրում գեղագիտությանը²⁹:

«Գրական թերթում» Սարինյանը հաճախ է անդրադարձել ժամանակակից գրողներին՝ Լևոն Խեչոյան, Գուրգեն Խանջյան, Արմեն Մարտիրոսյան, Նորայր Աղայան և ուրիշներ: Նորայր Աղայանին որակելով որպես հոգեբան գրող՝ գրականագետը եզրահանգում է. «Այս տեսակետից «Դավայաթաղ», «Ապոկալիպսիս», «Թաղման թափոր» գրքերը վերջին տասնամյակի իրադարձությունները պատկերող սյուժեներ են, իրականության մղձա-

²⁴ Դավրիժեցի 1988, 278:

²⁵ Ներսես Մոկացի 1975, 190-200:

²⁶ Ներսես Մոկացի 1975, 193:

²⁷ Սարինյան 2004, 173:

²⁸ Սարինյան 2004, 187:

²⁹ Սարինյան 2004, 220:

վանջի հոգեբանական պողոթնումը սեքսուալ ու սեռաբանական աֆեկտի մեջ ներսուզվելու այլաբանական լուծումներով»³⁰:

Խիստ ինքնատիպ է Արմեն Մարտիրոսյանի «Մազե կամուրջ» պատմավեպին տրված գնահատականը: Վեպում Հայաստանի կյանքն է՝ հետադարձ հայացքով և փորձ՝ բացատրելու, թե ինչու կործանվեց հայ Բագրատունիների իշխանությունը: Կործանվեց, որովհետև չէին ապավինում ռազմական ուժին և անտեսում էին խաչը: «Հայոց պետականությունը և մազե կամուրջը»: Շատ հետաքրքիր վերնագիր է ընտրել Արմեն Մարտիրոսյանը: Զրադաշտական ավետական գրականության մեջ բացատրվում է, թե ինչ է մազե կամուրջը: Երբ մարդու հոգին մահվան պահին անջատվում է մարմնից, ապա նրան սպասվում է մեծ փորձություն: Եթե մեռնողը մեղքեր է գործել իրական, տեսանելի կյանքում, ապա, երբ նրա հոգին անցնում է մազե կամուրջով, այն մարդու մազի չափ նեղանում է, և հոգին ընկնում է դժոխք: Իսկ եթե հոգին արդար է, ապա մազե կամուրջը լայնանում է, և հոգին գնում է դրախտ³¹: Գրականագետի եզրահանգմամբ, Արմեն Մարտիրոսյանը «Մազե կամուրջ» վեպն ավարտում է հոռետեսորեն. «Ոչ ոք այսքան դաժանորեն չի ընթերցել Հայոց պատմությունը: Ավելի հոռետեսություն կա այստեղ, քան լինելության վերջավորված գաղափար, և դա թերևս արդի կացության անորոշ վիճակի արձագանքն է աշխարհաքաղաքական բարդ ու անկռահելի անցուղիներում»³²:

Սարինյանը Ավետիք Իսահակյանին անվերապահորեն հանճար էր համարում և այդ երևույթը տեսնում էր հենց նրա առաջին բանաստեղծություններում: Նա բացատրում է, թե ինչու ծնվեց Վարպետի «Աբու-Լալա Մահարի» պոեմը:

Հետաքրքիր է, որ 1935 թվականի ապրիլից մինչև 1939-ի օգոստոսը, ավելի քան չորս տարի, Իսահակյանը չի տպագրել ոչ մի բանաստեղծություն: «Կարծես անլուր էր դարձել սֆինքսի հարցումին՝ «կյանքի ու մահվան» և իր էության առեղծվածի մասին, որի պատասխանը պիտի լիներ «Մեր պատմիչները և մեր գուսանները» պատմափիլիսոփայական ասքը, և որը Հայոց պատմության վերարժեքավորման նախերգանքը եղավ կոմունիստական իմպերիայի գաղափարական փականքներում»³³:

«Պատմավեպի սահմանը» հողվածը գրախոսություն է Վահրամ Մարտիրոսյանի «Հանուն խաչի ծայտվածները» պատմավեպի, որ նկարագրում է XII դարի Կիլիկյան Հայաստանին բաժին հասած թուրք-սելջուկյան ցեղախմբերի հարձակումները:

³⁰ Սարինյան 2004, 259:

³¹ Արտա Վիրապ, Նամակ 1958, 51:

³² Սարինյան 2004, 271:

³³ Սարինյան 2004, 297:

XIX դարավերջի գրաքննադատ, հրատարակիչ ու հասարակական գործիչ Գրիգոր Արծրունին բարձր էր գնահատում Րաֆֆու պատմավեպերը: «Անգամ պատմավեպերում Րաֆֆու նպատակն է եղել ներկայացնել այնպիսի տիպեր, որոնք մի հայտնի հասարակության մեջ չկան, որոնք ցանկալի թե լինեին այդ հասարակության մեջ»³⁴:

Նկարագրելով վեպում պատկերված Կիլիկյան հայկական թագավորության քաղաքական բարդ կյանքը՝ գրականագետը եզրահանգում է. «Մարդիկ իրենց կենցաղը դարձնում են արվեստ՝ ապագային թողնելով իրենց գոյության առասպելը»³⁵:

Գրականագետը վեպի մեջ տեսնում է արդիական հնչեղություն՝ XXI դարի հայ պետականության գոյության ու ապագայի տեսանկյունից:

Կյանքի ու մահվան, բարոյականության և անբարոյականության, չարի և բարու, հոգու և մարմնի, ազգայինի ու ապագայինի խնդիրները ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի գրվածքներում ունեն «սիստեմատիկ և կանոնավոր մեթոդաբանություն»: Դրանք լիովին համապատասխանում են նրա սիրելի գերմանացի փիլիսոփա Իմանուել Կանտի (1724-1804) հետևյալ պահանջին. «Ինչ վերաբերում է այդ ուսմունքի մեթոդին (չէ որ ամեն գիտական ուսմունք պետք է լինի մեթոդական, այլ կերպ շարադրանքը կդառնա խառնաշփոթ), ապա այն նաև պետք է լինի ոչ հատվածային, այլ սիստեմատիկ, եթե միայն առաքինության մասին ուսմունքն իրենից ներկայացնում է գիտություն»³⁶:

Եզրակացություններ

Սերգեյ Սարինյանն իր գրականագիտական գործունեության առաջին քայլերից հանդես է եկել սեփական ասելիքով, որի շնորհիվ նրա մեծաքանակ գրականագիտական ստեղծագործությունը լինելու է մնայուն նաև հետագայի գրականության պատմության համար:

Սարինյանի բազմագիտակությունը պայմանավորված է և՛ ի վերուստ նրան տրված օժտվածությամբ, և՛ հիացմունք առաջացնող տիտանական աշխատասիրությամբ:

Ապագայի հայ գրականության պատմաբանը կարող է մեծապես օգտվել Սարինյանի հետազոտություններում եղած դրույթներից:

Իր գիտական սկզբունքներում նա անզիջում է ու շարունակ մտածում է հայ գրականության, նաև գրականագիտության ապագայի մասին:

Սարինյանը փիլիսոփա-գրականագետ է և հատկապես քաջատեղյակ է XIX և XX դարերի համաշխարհային փիլիսոփայության հիմնական դեմքերի աշխատություններին:

³⁴ Արծրունի 2009, 361:

³⁵ Սարինյան 2004, 306:

³⁶ Кант 1999, 878:

Առասպելականը և միջը, ըստ Սարինյանի, դեռ շարունակում են ապրել հայ գրականության մեջ՝ ընդունելով նոր ձևեր:

Գիտնականը ստեղծել է գրականությունը փիլիսոփայական դիտակետից հետազոտելու իր դպրոցը, ունի խիստ ճանաչելի սեփական ոճը և բազում հետևորդներ:

Օգտագործված գրականություն

- Առաքել Դավրիժեցի 1988, Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարազ Առաքելյանի, Երևան, «Սովետական գրող», 590 էջ:
- Արծրունի Գրիգոր 2009, Գրականություն, արվեստ, գեղագիտություն, Հոդվածների ժողովածու, կազմող և խմբագիր՝ Յակ.Ի. Խաչիկյան, Երևան, «Գիտություն», 557 էջ:
- Արտա Վիրապ, Նամակ, Յուշտի ֆրիան 1958, պահլավերեն բնագրից թարգմանեց և ծանոթագրեց պրոֆ. Ռ.Թ. Աբրահամյանը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 165 էջ:
- Դավիթ Անհաղթ 1980, Երկեր, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ս.Ս. Արևշատյանի, Երևան, «Սովետական գրող», 327 էջ:
- Հայ գրականագիտության դասականը (նվիրվում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանին) 2014, Հոդվածների ժողովածու, Երևան, «Լուսակն», 111 էջ:
- Ներսես Մոկացի 1975, Բանաստեղծություններ, աշխատասիրությամբ՝ Ա.Գ. Դոլուխանյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 208 էջ:
- Սարինյան Սերգեյ 2004, Հայոց գրականության երկու դարը, Երևան, «Տիգրան Մեծ», 635 էջ:
- Փիլիսոփայական բառարան 1975, Մ.Մ. Ռոզենտալի խմբագրությամբ, Երևան, «Հայաստան», 467 էջ:
- Аристотель 1984, Сочинения в четырех томах, т. 4, Москва, «Мысль», 829 с.
- Вольтер 2004, Философские повести, философские письма. Статьи из «Философского словаря», Москва, изд. НФ «Пушкинская библиотека», 749 с.
- Кант И. 1999, Основы метафизики нравственности, Москва, «Мысль», 1457 с.
- Лихачев Д.С. 1997, Избранные работы, Ленинград, «Художественная литература», 494 с.
- Пешич Р. 2017, Я обвиняю молчание, Белград, «Пешич и сыновья», 183 с.
- Пешич Р. 2017, Винчанское письмо, Белград, «Пешич и сыновья», 272 с.
- Пифагор 2004, Золотой канон, фигуры эзотерики, Москва, «Эксмо», 441 с.
- Пушкин А.С. 1980, Избранные сочинения в двух томах, том первый, Москва, «Художественная литература», 814 с.

ФИЛОСОФ – ТОЛКОВАТЕЛЬ АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЫ (к 100-летию академика НАН РА Сергея Сариняна)

Аэлиита Долуханян

Резюме

С самого начала своей литературоведческой деятельности Сергей Саринян проявил себя как яркую личность со своими взглядами на литературу,

и в силу сказанного его многочисленные литературоведческие работы будут иметь непреходящее значение и для будущего литературоведения.

Эрудиция С. Сариняна обусловлена также его богоданным дарованием, равно как и вызывающим восхищение титаническим трудолюбием.

Историк будущей армянской литературы может воспользоваться положениями, нашедшими место в его исследованиях.

В своих литературоведческих принципах он непреклонен и непрестанно размышляет о будущем армянской литературы и литературоведения в том числе.

С. Саринян – литературовед-философ, который был знаком с работами главных представителей мировой философии XIX-XX вв.

Легенды и мифы, по мысли С. Сариняна, продолжают жить в армянской литературе, принимая новые формы.

С. Саринян создал свою школу исследования литературы с точки зрения философии. Он всегда имел узнаваемый стиль и множество последователей.

Ключевые слова – Сергей Саринян, Иммануил Кант, философия, Григор Нарекаци, публицистика, нация, цензура.

**PHILOSOPHER-INTERPRETER OF ARMENIAN LITERATURE
(on the 100th Anniversary of Academician of the NAS RA Sergey Sarinyan)**

Aelita Dolukhanyan

Abstract

From the very beginning of his literary studies, Sergey Sarinyan showed himself to be a bright personality with his own views on literature, and due to this fact, his numerous literary works will have lasting significance for the future of literary studies.

S. Sarinyan's erudition is also due to his God-given talent, as well as his admirable titanic diligence.

The historian of the future Armenian literature can use the provisions that have found a place in his research. He is adamant in his literary principles and constantly reflects on the future of Armenian literature and literary studies in particular.

S. Sarinyan is a literary scholar and philosopher who was familiar with the works of the main representatives of world philosophy of the 19th-20th centuries.

Legends and myths, according to S. Sarinyan, continue to live in Armenian literature, taking on new forms.

S. Sarinyan created his own school of literary research from the point of view of philosophy. He always had a recognizable style and many followers.

Key words – Sergey Sarinyan, Immanuel Kant, philosophy, Grigor Narekatsi, journalism, nation, censorship.

ԵՐԳԻԾԱՆՔԻ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՌԱՆՁԱՐԻ «ՎՇՏԻ ԾԻԾԱՂ» ԺՈՂՈՎԱԾՈՒՈՒՄ

Կարինե Առաքելյան

Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
ՀՀ, Երևան, Գրիգոր Լուսավորչի 15
Էլ. հասցե՝ karine.arakelyan.2016@mail.ru
ORCID: 0009-0001-2073-7021

Հոդվածը ներկայացվել է 12.12.2024, գրախոսվել է 16.12.2024, ընդունվել է տպագրության 03.12.2024
DOI: 10.53548/0320-8117-2024.3-168

Ամփոփում

Արևմտահայ իրականությունը ծնունդ տվեց երգիծաբանների, որոնք իրենց ուրույն տեղն ու անուրանալի վաստակն ունեն հայ գրական անդամատանում: Նրանցից մեկը Առանձարն է՝ Միսաք Գույումճյանը (1877-1913): 1905 թ. լույս է տեսել նրա «Վշտի ծիծաղ» ժողովածուն, որը ներկայացնում է Երկրի հայության կյանքը Օսմանյան բռնատիրության ժամանակ, հայերի բարքերն ու տառապանքը՝ համեմված երգիծական տարրով: Երգիծանքը դրսևորվել է տարբեր կերպ՝ հումոր, զվարթախոսություն, հեգնանք և այլն: Առանձարի ստեղծագործությունը գաղափարական, գեղագիտական և այլ արժանիքներից զատ, առանձնանում է մատչելի, սակայն գեղեցիկ ու պատկերավոր լեզվով, որին խիստ նպաստել են պատկերավորման լեզվական միջոցների առատությունը, դրանց ճիշտ ու տեղին կիրառությունը: Փոխաբերությունները, համեմատությունները, հակադրությունները և այլն խոսքը հարստացրել են տարբեր նրբերանգներով, օժտել այլաբանական նշանակությամբ, դրան հաղորդել երգիծական բնույթ, որը, կախված ասելիքի առանձնահատկություններից, դրսևորվել է տարբեր կերպ՝ հումորայինից մինչև կծու հեգնական: Ուշադրության են արժանի նաև հնչեցրանգն ու դադարը և դրանք արտահայտող կետադրական նշանները, որոնք հաճախ խոսքին հաղորդում են խորը ենթատեքստ, երգիծաստեղծ են ու պատկերաստեղծ: Առանձարի պատմվածքներում հականիշներն ունեն լայն գործածություն և ուրույն ռճական դեր: Հականիշները կարևոր մասնակցություն ունեն հակադրությունների կազմության մեջ, որը ռճական զորեղ արտահայտչամիջոց է և երգիծական խոսքի կարևոր բաղադրիչ:

Բանալի բառեր՝ Առանձար, երգիծանք, խոսք, ռճ, փոխաբերություն, համեմատություն, հակադրություն:

Ներածություն

Հայ երգիծաբանությունն ունի դարերի պատմություն, հարուստ ավանդույթներ ու խորը արմատներ: Իր ծավալային, ժանրային, բովանդակային բազմազանությամբ այն առկա է մեր գրականության ամենավաղ շրջանում, հայ պատմիչների երկերում և իր աննահանջ երթը շարունակում է ցայսօր: Հայ երգիծաբանական գրականությունն իր զարգացման գագաթնակետին է հասել XIX-XX դարերում, հատկապես արևմտահայ երգիծաբանության կարկառուն ներկայացուցիչների՝ Հակոբ Պարոնյանի և Երվանդ Օտյանի շնորհիվ: Բացի դրանցից, արևմտահայ իրականությունը ծնունդ տվեց այլ երգիծաբանների, որոնք իրենց

անուրանալի վաստակն ունեն հայ գրական անդաստանում: Նրանցից մեկը Առանձարն է՝ Միսաք Գույումճյանը: Թեպետ Առանձարի ստեղծագործությունը ծավալային առումով մեծ չէ, սակայն, ինչպես նկատել է գրող Ստեփան Զորյանը, նա «օժտված է եղել կյանքը և մարդկանց սուր աչքով դիտելու և դիտածը պատկերավոր լեզվով ու հունորով վերարտադրելու համակրելի շնորհքով, չափի զգացումով»¹: Առանձարը գրել սկսել է վաղ հասակից, անդրանիկ գրական ստեղծագործությունը՝ «Նորավեպին նորավեպը» պատմվածքը, տպագրվել է Թիֆլիսի «Մուրճ» ամսագրում 1901 թ.:

Բարդ ու դժնդակ ժամանակներ էին հայության, հատկապես արևմտահայության համար: Արևմտյան Հայաստանը գտնվում էր Թուրքիայի գերիշխանության ներքո: 1876-ից իշխանության գլուխ անցած սուլթան Աբդուլ Համիդ II-ը վարում էր բացարձակ բռնության քաղաքականություն: Օսմանյան Թուրքիայի տարածքում ապրող հպատակ ժողովուրդների, հատկապես քրիստոնյանների, մասնավորապես հայերի վրա գործադրվող ճնշումներն օրավուր աճում էին: Ոստիկանների կամայականությունները հասնում էին ծայր աստիճանի, շատերը հարկադիր մեկնում էին պանդխտության: Այս դժոխային իրականությունն էլ դառնում է Առանձարի նկարագրության ու սուր քննադատության առարկան մի շարք պատմվածքներում: Առանձարը չէր կարող իր պատմվածքները տպագրել Պոլսում՝ գրաքննության ու հալածանքների միջավայրում, այդ իսկ պատճառով նախընտրում է թիֆլիսահայ համեմատաբար ազատ մամուլը: Առաջին իսկ հրատարակությունները գրավում են ընթերցողների, հատկապես մտավորականների ուշադրությունը: Ստեփան Զորյանը վկայում էր, որ անձամբ է լսել ժամանակակիցներից, թե ինչպես էին Առանձարից պահանջում պարոնյանական երկեր, «սպասում, որ նա կփոխարինի Պարոնյանին» (3): Ցավոք, նյութական ծանր վիճակը ստիպում է Առանձարին թողնել գրականությունը և նվիրվել մանկավարժությանը: Տաղանդավոր գրողն իր մահկանացուն կնքում է երեսունվեց տարեկան հասակում: Առանձարի ստեղծագործությունը, գաղափարական, գեղագիտական և այլ արժանիքներից զատ, առանձնանում է մատչելի, սակայն գեղեցիկ ու պատկերավոր լեզվով: Գրողը հմտորեն ու տեղին կիրառել է փոխաբերություն, համեմատություն հակադրույթ և այլն:

Փոխաբերություն

Գեղարվեստական գրականության մեջ պատկերավորման լայն կիրառություն ունեցող միջոց է փոխաբերությունը, որը հաճախ է հանդիպում նաև երգիծական խոսքում: Ընդգծվել է, որ «փոխաբերությունը սահմանվում է որպես թաքնված համեմատություն, որն իրականացվում է մի առարկան անվանելով մյուսի փոխարեն և դրանով ի հայտ բերելով երկրորդին բնորոշ որևէ էական հատկանիշ»²: Այսպիսի ակնառու օրինակի հանդիպում ենք «Բուրդի վաճառա-

¹ Առանձար 1947, 5: Այսուհետև այս գրքից կատարվող մեջբերումների էջերը կնշվեն շարահարանքին կից՝ փակագծերի մեջ:

² Арнольд 1973, 146:

կանություն» պատմվածքում: 1895 թ. Պոլսի հայկական թերթերը գրում են «տնտեսական տագնապի» մասին, որը հայության կյանքում դրսևորվում է միանգամայն «ինքնատիպ» կերպով: Անձանոթ հաճախորդների խուժանը սրբել-տարել էր հայ առևտրականների խանութներում եղած հնարավոր ամեն ինչ, ապրանքների հետ նաև որոշ խանութայինների: Վերջինների ճակատագրից խուսափած երջանիկներն սկսել էին ապրել խնայողությունների հաշվին: Շատերը հայտնվել էին ծանր վիճակում, որի նկարագրության ժամանակ գրողը գործածում է նաև ոճական մեծ դեր ունեցող կախման կետերը, որոնք ընթերողին նախապատրաստում են ճիշտ ընկալելու դրանց, հաջորդող փոխաբերաբար կիրառված «ծոմ պահել» արտահայտությունը. «Մեծ մասը այն հայերուն, որոնք կրցեր էին «տնտեսական տագնապեն» գեթ զլովսնին ազատել՝ շնորհիվ վեհափառ սուլթանին իրենց թզենիներուն տակ պառկած ունեցողը պատրաստեն կուտեր, չունեցողը... *ծոմ կպահեր*» (30):

Փոխաբերության վառ օրինակ է *դոնբասցեք* բառի կիրառությունը «Հոգու համար» պատմվածքում: Բառը պատկանում է հայերենի հին կամ գրաբարյան շերտին. այսպես էր կոչվում «Ծաղկազարդի երեկոյան եկեղեցու վարագույրը բացելու արարողությունը»³: Այս «կարգը ունի Տիրոջ Երկրորդ գալստյան, աշխարհի վախճանի և Ահեղ դատաստանի խորհուրդը»⁴: Բառը պատմվածքում կիրառված է լիովին այլ համատեքստում՝ առաջացնելով «վշտի ծիծաղ», ավելի ճիշտ՝ վշտի դառը ժպիտ: XIX դ. Օսմանյան կայսրությունում հայկական կոտորածները, հաջորդում էին միմյանց: Ծանր հարվածների ենթարկված ժողովուրդը մշտապես զգում էր հոգածության կարիք, իսկ ունևոր խավը հիմնականում անտարբեր էր: Անտարբերությունը կոտրելու առաքելությունն էին ստանձնել մի խումբ եռանդուն երիտասարդներ, այդ թվում՝ պատմվածքի հերոսը: Արդյունքը, սակայն, տրվում էր շատ մեծ դժվարությամբ, և այս իրավիճակով պայմանավորված՝ հերոսի հոգեկան տվայտանքը հեղինակը բնութագրում է հետևյալ կերպ. «Անցյալին մեջ հաճախ կատարած եմ այս կյանք մաշող *դոնբասցեքի* արարողությունը և շատ անգամ կրածս բարոյական տառապանքներեն ուժաթափ, քանի մը օր անկողին ինկած ու մեծամեծ երդումներով ուխտած եմ ալ չկոխել ազգային գործունեության այդ ճյուղին վրա» (96):

Փոխաբերության առանձին տեսակ են դարձվածներն ու դարձվածային կապակցությունները. «Սրանք երկու և ավելի բառերի այնպիսի միություններ են, որոնք ամբողջությամբ առած մեկ փոխաբերական իմաստ են արտահայտում»⁵:

Դարձվածները հաճախ են դրսևորում երգիծաստեղծ ու ոճաստեղծ հատկություններ և դրանով պայմանավորված՝ կիրառվում երգիծաբանության մեջ: Դարձվածներ, նաև տարածված կամ հանրահայտ խոսքեր ու արտահայտություններ հաճախ են կիրառել հայ երգիծաբաններ Պարոնյանը, Օտյանը, Պեղիկթաշյանը, նաև Առանձարը: Նույն «Բուրդի վաճառականություն» պատմվածքում հերոսը,

³ Աղայան 1976, 309:

⁴ Տերունական տոներ 2006, 197:

⁵ Պողոսյան 1991, 38:

խոսելով իր անձուկ վիճակի մասին, այն պատկերավոր ներկայացնելու համար կիրառում է դարձված. «Եթե քիչ մը ատեն ալ այսպես պատրաստեն ուտենք, շուտով *բերաննիս քամիին պիտի բանանք...*» (31):

Երբեմն Առանձարի հերոսներն իրենց խոսքն ավելի պատկերավոր դարձնելու նպատակով մեջբերում են տարբեր դարձվածներ, ասացվածքներ, թևավոր խոսքեր և այլն՝ փորձելով ցույց տալ դրանց և իրենց արտահայտած մտքերի կապը: Այդպես է «Հոգուս համար» պատմվածքում, որտեղ Նազարեթ էֆենդին կոտորածներից մազապուրծ հայրենակիցներին օգնելուց խուսափելու համար «իմաստասիրում» է. «*Աստված մարդու բախտը առնելե առաջ խելքը կառնե ըսեր են նե շիտակ է. անխելքության երեսեն աս օրին հասաք և դեռ չենք ուզեր խելքերնիս գլուխներս ժողվել. ձեռքովնիս մեր գերեզմանը կփորենք*» (102-103), կամ «*Ինչպես գեղցիին առաճը կըսե՛ ջաղացը ջուրը տարավ, մենք ջախջախ կփնտրենք: Ո՞ր մեկուն տանք, ո՞ր մեկուն հասնինք, ալ լմնցանք, լմնցանք*» (102):

«Տասը տարի ետքը» պատմածքի հերոսը՝ թշվառ գոյությունը քարշ տվող հայ գրողը, դեգերում է խմբագրությունից խմբագրություն: Իր դեգերումներից մեկը նկարագրելիս նա գրում է. «*Ծովը հյնողը օձին կփաթթվի* ըսեր են. վերադարձիս ասոր խմբագրատան առջևեն անցնելու ատեն պահ մը կեցա և մտածեցի» (141):

Համեմատություն

Պատկերավորման միջոց է համեմատությունը, որը մեծ կիրառություն ունի թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքում: Առանձարը ևս խոսքային տարբեր իրադրություններում կիրառել է համեմատություններ՝ ասելիքը երգիծական տարրերով համեմելու նպատակով: Համեմատության միջոցով շատ հաճախ Առանձարը նկարագրում և սուր քննադատում է թուրքական իրականությունը: «Բուրդի վաճառականությունս» պատմվածքում բանտում հայտնված անմեղ հերոսին այցելում է մի պաշտոնյա, որին հեղինակը պատկերում է հետևյալ կերպ. «Ծերունի դապթիյե մը, որու աչքերեն ջուրն ու ճպուռը այնպես կհոսեին, ինչպես խեժը Արաբիայի արմավենիներեն՝ կանգնած էր սնարիս քով» (39):

«Հոսիսն ու ինտելիգենտը» պատմվածքում, թուրքական իրականությունը ներկայացվում է հերոսների միջոցով՝ ի հայտ բերելով դրա դժոխային-բռնատիրական այլանդակ նկարագիրը. «Սրտերնիս հրաբուխի մը կնմանի, որ սակայն բռնության կափարիչներուն տակ ճնշված՝ չի կրնար կոր ժայթքիլ: Պոլիս անանկ խըլախ գրիչի տեր տղաք ունինք որ, սակայն խեղճերը չեն կրնար կոր գրել, տաղանդնին խորշակահար ծաղիկի նման կցամքի, կերթա... ազատություն չկա...» (91): Ինչպես նկատել է ժամանակի գրաքննադատներից մեկը, Առանձարի պատմվածքները «ծիծաղաշարժ են վերին աստիճանի և գեղեցիկ կերպով պատկերացնում են այն դժբաղդ երկիրը, որը Թիւրքիա է կոչում»⁶: Մասնագիտական գրականության մեջ նշվել է, որ «հաջող համեմատության կարևորագույն հատկանիշներից մեկը անսպասելիության, նորոյթի, հնարամտության տարրն է:

⁶ Երիցյան 1902:

Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր հեղինակ չափազանց անհատական է համեմատությունների ընտրության և գործածության իմաստով»⁷: Հիշենք *աղջկա և մեղրամոմի* համեմատությունը «Նորավեպին նորավեպը» պատմվածքում: Հերոսները՝ Ատոմ Որբունին և Տիգրան Ասապյանը սկսնակ գրողներ են, մեծ ցանկություն ունեն տպագրելու իրենց գործերը, անուն ու փառք ձեռք բերելու, արդեն տառապում են աստղային հիվանդությամբ, իսկ տաղանդի բացակայությանը հաճախ «օգնության է հասնում» հիվանդ երևակայությունը, ինչպես այն դրվագում, որտեղ Որբունին ընկերոջ հետ փորձում է ավարտին հասցնել սկսած նորավեպը. «Թոքախտե թող մեռնի, ատանկ ավելի քնքուշ կըլլա և ավելի սրտառույժ մանավանդ նկարագրական աղվոր պատկեր մըն ալ կրնաս դնել մեջը, թե ինչպես *աղջիկը* հիվանդութենեն սանկ *մեղրամոմի* պես կհատնի» (77):

Առանձարը տեղ-տեղ կիրառել է նաև առավելական համեմատություններ: «Առավելական ենք կոչում այն համեմատությունը, որի մեջ համեմատվող առարկան իր հատկանիշներով ավելի բարձր է ներկայացվում համեմատյալից (մերժողական դեպքում՝ ավելի ցածր)»⁸: Համեմատության այս տեսակը ևս Առանձարն օգտագործել է թուրքական իրականությունը պատկերավոր նկարագրելու համար, այս դեպքում Գյավուր-Բողան կոչվող թաղը, որտեղ խտացել էր «քաղքի թրքության էն հարազատ մասը» (58): Թաղը բնակիչների պես ունի իր դեմքը, որը ներկայացնում է «հսկայական աղբակույտ մը, որու մեջ հյուղակները - ավելի որջերու, քան մարդկային բնակարաններու նման - ...ծանծուռ ու անկարելի դիրքերով խրված են» (58): Այդ թաղում տիրում է հայատյացության ոգին:

Երբեմն համեմատություններն ու փոխաբերությունները կիրառված ենք տեսնում կողք կողքի՝ իրար միահյուսված, ինչը պատկերին վառ գունավորում և շոշափելի կենդանություն է պարգևում: Հիշենք «Կախաղանեն ...ամուսնություն» պատմվածքը: 1894-1896 թթ. կոտորածների ժամանակ ձերբակալվել է բժիշկ Սագիսը՝ անհեթեթ ու սարսափելի մեղադրանքներով: Սրճարանում այս հարցն են «քննարկում» երեք զինվորականներ, որոնց հեղինակը նկարագրում է հետևյալ կերպ. «Երեքին ալ դեմքերը դժոխային կատաղություն մը կարտահայտեին, մանավանդ հազարապետին սոսկալի փորը փուքի մը պես կելևէջեր ու կՖշֆշար, մեկ վայրկյանեն մյուսը զայրոյթի նոր ժայթքում մը սպառնալով, իսկ տակի խեղճ աթոռը սրտաճմրիկ ճիչեր կարծակեր, մսի այդ վիթխարի բուրգին ծանրութենեն» (54):

Հակադրույթ

Երգիծաբանության մեջ պատկերավորման հաճախակի կիրառություն ունեցող միջոց է հակադրույթը, որով հակադիր իմաստ ունեցող բառերի գործածությամբ հակադրվում են առարկաներ, հատկանիշներ, երևույթներ: Ամբողջությամբ հակադրույթներից կազմված երգիծական խոսքի դասական փայլուն նմուշ է բանաստեղծի ճառը Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» վիպակում, որտեղ տրամաբանությունից բացարձակապես զուրկ խոսքի միջոցով

⁷ Ефимов 1961, 491.

⁸ Պողոսյան 1991, 14:

Պարոնյանը բացահայտում է իր կերպարի՝ բանաստեղծի փուչ էությունը. «Անոնք անցյալ են, մենք՝ ապանոնի, անոնք խավար են, մենք՝ լույս, անոնք տգետ են, և մենք՝ գիտուն, անոնք սուր են, մենք՝ գրիչ, անոնք ատելություն են, մենք՝ սեր, անոնք կրակ են, մենք՝ ջուր, անոնք միս են, մենք՝ բանջարեղեն, անոնք վարունգ են, մենք՝ խնձոր, անոնք փուշ են, մենք՝ վարդ»⁹:

Առանձարը հակադրություններ կազմել ու կիրառել է միանգամայն տարբեր ձևերով ու եղանակներով: Պայմանավորված իրենց բնույթով՝ հակադրությունները ճնշող մեծամասնությամբ կազմվում են հականիշների միջոցով: Ոճագիտության մեջ ընդունված է հականիշները բաժանել որոշակի խմբերի, որոնցից են լեզվական և խոսքային, բուն կամ համագործական և համատեքստային կամ անհատական հականիշները¹⁰:

Լեզվական հականիշներն իրենց առաջնային իմաստներով հակադրվում են միմյանց և երբեմն կոչվում են նաև բացարձակ հականիշներ:

«Վշտի ծիծաղ» ժողովածուում մեծ է լեզվական հականիշների դերը: Հիշենք «Բուրդի վաճառականությունս» պատմվածքը, որում ասվում է, թե ինչպես էր հայությունը 1894-1895 թթ. կոտորածների ժամանակ, շունչը պահած, սպասում նոր զարգացումների: Անձկությամբ լեցուն այս հոգեվիճակը և գործընթացների տրամաբանական ավարտը հեղինակը նկարագրում է հակադրությունների միջոցով, որոնք կազմված են բացարձակ հականիշներից՝ *ավելորդ - բոթ, հույս - հուսահատություն*. «Բայց *ավելորդներուն* շուտով *բոթեր* ալ սկսան խառնվիլ և սարսափի ու ակնկալության տարօրինակ զգացումի մը տակ ճմլվելու վրա էինք, երբ վերջապես փոթորիկը փրթավ ու քշեց տարավ *հույսն* ալ, *հուսահատությունն* ալ» (81): Հայտնի է, որ կան բառեր, որոնք «հականիշություն են ձեռք բերում հաջորդ եզրում միայն մեկ ածանցի հավելումով... նաև միևնույն բառին հականիշ ածանցների ավելացումով»¹¹: Հականիշ այսպիսի զույգով կազմված հակադրությո առկա է «Մորուքի սանտրը» պատմվածքում, որտեղ խանութպան հերոսին այցելում է ոստիկանության մի պաշտոնյա, որի էության պերճախոս բնութագիրն է մի թռուցիկ ակնարկ. «Հյունի չավուշ այն սիրալիր էակներեն է, որ *պաշտոնական* առթիվ մը ծանոթանալե ետքը *անպաշտոն* այցելություններու առիթը չեն փախցներ» (9):

Բացարձակ հականիշներ են *ապրել* և *մեռնել* բայերը, որոնց ենթակայական դերբայները կազմել են հակադրությո «Տասը տարի ետքը» պատմվածքում: Հեղինակն անդրադառնում է հայ իրականությանը բնորոշ մի չափազանց ցավոտ թեմայի՝ մտավորականի չքավոր վիճակին. «Մեր մեջ գրականության երեսեն անոթի *մեռնողներ* շատ եղած են, բայց անով *ապրող* մը դեռ չենք տեսած» (162):

Այս ծանր հարցին անդրադարձել են հայ մյուս երգիծաբանները ևս, բավական է հիշել Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» վիպակը: Հետաքրքրական է, որ Պարոնյանը նույն գաղափարը գրեթե նույն բառերով ու նույն հակադրությամբ արտահայտել է «Ազգային ջոջերում», Համբարձում Իփեքճյանի դի-

⁹ Պարոնյան 1954, 396:

¹⁰ Հմմտ. Մելքոնյան 1984, 83:

¹¹ Էլոյան 1989, 152:

մանկարում: Միակ «տարբերությունն» այն է, որ այստեղ խոսքը ուսուցչի մասին է. «1859-ին վարժարանն ելավ և Թեոդոսիա դառնալով՝ ուզեց դասատուությամբ ապրիլ: Դասատուությամբ *ապրիլ*... հրաշքի դարերն անցած են ...դասատուությամբ *մեռնիլ*, այս է իրականությունը»¹²:

Լեզվական հականիշներից զատ, «Խոսքի մեջ շատ հաճախ հականիշային կիրառություն են ստանում այնպիսի բառեր ու բառաձևեր, որոնք առանձին վերցրած՝ միմյանց նկատմամբ հակադիր իմաստներ չունեն, այսինքն՝ լեզվական հականիշներ չեն, նշանակում է՝ խոսքի մեջ բառերի իմաստային շարունակության սահմանները ընդարձակվում են, և բառերը ձեռք են բերում հակադրական հարաբերություններ արտահայտելու լայն հնարավորություններ»¹³:

Խոսքային հականիշներով կազմված հակադրությւները ևս առատ են Առանձարի ժողովածուում. դրանք առկա են անգամ վերնագրերում: Պատմվածքներից մեկը հեղինակն անվանել է «Կախաղանն ...ամուսնություն»: Առաջին հայացքից երկու հասկացություն, որոնք ընդհանուր որևէ եզր չունեն, և այստեղ է զավեշտային: Առանձարի հերոսը՝ բժիշկ Սարգիսը, հայտնվում է բարդ երկընտրանքի առջև. կախաղա՞ն, թե ամուսնություն: Մարդն ընտրում է երկրորդը՝ որպես չարյաց փոքրագույնը՝ ամուսնանալով փաշայի սիրական-աղախնի հետ:

Խոսքային հականիշներով կազմված հակադրությւի ուշագրավ օրինակի հանդիպում ենք հերոսներից մեկի՝ ոստիկանության թուրք պաշտոնյայի խոսքում, որը պահանջում է վկա Առաքելից պատմել ճշմարտությունը և բացատրում է, թե որն է ճշմարտությունը: Թուրք կոմիսարի արտաբերած մեկ նախադասության մեջ խտացած կարելի է տեսնել հայության վիճակը Օսմանյան կայսրության մեջ առհասարակ. «Բայց ոչ *հայու ճշմարտությունը*, աս ալ հասկցա՞ր, - ավելցուց խոշոր ցուցամատը սպառնազին ճոճելով, - այլ *բուն ճշմարտությունը*, այն ճշմարտությունը, զոր հոճա էֆենդին արդեն հայտնած է. եթե տարբեր բան պատմելու ըլլաս, 32 ատամդ կոկորդդ կթափեմ» (20):

Օտար բառեր

Երգիծաստեղծ մեծ հնարավորություններով են օժտված բառապաշարի այլևայլ շերտերին պատկանող բառեր: Խոսքային միջավայրում առանձնանալով՝ այս միավորներն օգնում են ընթերցողին ավելի խորությամբ ընկալելու նկարագրվող առարկան կամ երևույթը, նրա որոշակի հատկությունները, նաև կոմիկական բնույթը: Նկարագրելով կյանքը Օսմանյան կայսրության ժամանակ՝ Առանձարը որոշակի նպատակներով երբեմն դիմում է թուրքերեն բառերի՝ հաճախ տալով նաև դրանց բացատրությունը կամ կից կիրառելով հայերեն համարժեքները: Օտար բառեր հաճախ են հանդիպում հերոսների խոսքում, ինչը միանգամայն հասկանալի է: Դրանք տարածված են դիմելաձևերում, ինչպես՝ *պե էֆենդի կամ չորպաճի*: «Մորուքի սանտրը», որ «Վշտի ծիծաղ» ժողովածուի առա-

¹² Պարոնյան 1954, 325:

¹³ Էլոյան 1989, 156:

ջին պատմվածքն է, սկսվում է հետևյալ երկխոսությամբ. «Բարի լույս, *Չորպածի*: Բարի լույս, Հյուննի չավուշ» (9):

Տողատակում Առանձարը տալիս է բառի բացատրությունը և «ծագումը», որն ավելի ողբերգական է, քան կոմիկական. «Չորպածի- ապուր տվող: Ժամանակին ենիչերինները տված են այս տիտղոսը քրիստոնյա հարուստներուն. բառին այս ծագումը կարծես պերճախոսերեն կբացատրե արդեն անոր փոխաբերական իմաստը» (9): Երբեմն օտար բառերը զուգորդվում են հայիոյանքների կամ բացասական - գնահատողական իմաստ արտահայտող բառերի հետ՝ կերպարի խոսքի միջոցով անթերի բնութագրելով նրա ներաշխարհը, ինչպես թուրք սպայի խոսքի պարագայում է բացահայտվում նրա վայրագ, ոչ մարդկային, գազանային տեսակը. «Կյավուր շուն շանորդի, խընգիր, էշ, սրիկա, դավաճան, թնդանոթին մեղք չէ՞, մեղք չէ՞ վառողին, ոտքերը կկապեն, վիզը չվան մը կանցնեն ու հրեայի մը ձեռքը տալով՝ ամբողջ քաղաքը պտղտցնել կուտամ քաշկոտելով: Շան ծնունդ քեզի» (56):

Օտար բառեր՝ այս անգամ գերմաներեն, ֆրանսերեն և այլն, հաճախ են հանդիպում «Հոսիսն ու ինտելիգենտը» պատմվածքի հերոսների խոսքում, օրինակ երբ ռուսահայը, փորձելով առաջադեմ երևալ, արտաբերում է խեղված, անհեթեթ մտքեր. «մի ուրիշ խոսք - և դեմքի սոսկալի ծամաճոխությամբ մը արտասանեց - ժո-դո-վր-դա-կան. ֆու՛յ, ինչ վատ խոսք է, այդ մեր անպիտան *կոնտնանտները* երբեմն մի այնպիսի *դիստանցիա* են առաջ բերում, որ կրթված ականջները չեն կարողանում տանել. ինչու՞ գործ չածել ուղղակի *պոպուլեր* խոսքը, որը բոլոր կուլտուրական լեզուներում ընդունված է և վեր կենալ էդ տեսակ սարսափելի խոսքեր թխել» (89):

Հնչերանգ և դադար

Առանձարի լեզվին հետաքրքիր երգիծական երանգներ են հաղորդում նաև հնչերանգն ու դադարը և դրանք արտահայտող կետադրական նշանները, որոնց շնորհիվ հնարավոր է դառնում միանգամայն դյուրին կերպով թափանցել ասելիքի ենթաշերտերի մեջ և հասկանալ առաջին հայացքից շատ պարզ թվացող միտքը: «Մորուքի սանտրը» պատմվածքում հերոսը խոսում է իր՝ ոստիկանություն կամ դատարան կանչվելու մասին: Օսմանյան կայսրության արդարադատության համակարգը հեղինակը ներկայացնում է երկու տողով, որոնցում դադարն ու հարցական հնչերանգը՝ արտահայտված կախման կետերով ու հարցական նշանով, ունեն էական դեր. «Դա՛տ: Աստված չընե. տունս տեղս կուտամ, դատ չեմ բանար... Թուրքիո մեջ» (9): «Հոգուս համար» պատմվածքն սկսվում է միակզմ նախադասությամբ կամ բառ-նախադասությամբ, որը պատմվածքի հանգուցաբառն է. հանգանակություն: Այս բառի կարևորությունն ընդգծելու համար հեղինակը դարձյալ դիմում է հնչերանգի՝ այս անգամ արտահայտված ենթամայի և շեշտի միջոցով. «Հա՛ն-գա՛-նա՛-կու՛-թյու՛ն» (96):

Հետաքրքիր իրողության՝ դադարի կրկնության հանդիպում ենք «Երկու պատկեր» պատմվածքում: Պատահողոված շորերով և արյունվա երեսով փոքրիկը պատմում է մորը իր գլխով անցածը: Մեկ նախադասության մեջ, գրեթե

ամեն բառից հետո հեղինակը դադար է տալիս՝ ընթերցողին ստիպելով անընդ-հատ կանգ առնել ու խորհել փոքր թվացող մի իրադարձության մասին, որը, կարելի է ասել, մանրակերտն է մի ողջ ժողովրդի ողբերգության, իսկ նախա-դասության առաջին և վերջին անդամների բացականչական հնչերանգը ավելի է խտացնում գույներն ու տրամադրությունը. «-Մայրի՛կ...թուրք տղաքը ըրին...շատ փայտ հավաքեր էի... մեյդանեն... կուգայի... փայտը ուզեցին... չտվի... ուզեցին խել... փախա...ետևես վազեցին... չկրցան հասնիլ... վերջեն... վերջեն... մեծ բեխավոր թուրք մը դեմս ելավ... բռնեց ինձի... տղոց ձեռքը տվավ... փայտս խլեցին... ինձի ալ... ձեծեցի՛ն» (64):

Եզրակացություններ

Առանձարը հայ երգիծաբանության ուրույն դեմքերից է, որի վաստակն անուրանալի է հայ գրական անդաստանում: Նրա ստեղծագործությունը գաղա-փարական, գեղագիտական և այլ արժանիքներից զատ առանձնանում է մատ-չելի, սակայն գեղեցիկ ու պատկերավոր լեզվով, որին նպաստել են պատկերա-վորման լեզվական միջոցների առատությունը, դրանց ճիշտ ու տեղին կիրա-ռությունը: Փոխաբերությունները, համեմատությունները, հակադրոյթները և այլն խոսքը հարստացրել են տարբեր նրբերանգներով, օժտել այլաբանական նշանակությամբ, հաղորդել երգիծական բնույթ, որը, կախված ասելիքի առանձ-նահատկություններից, դրսևորվել է տարբեր կերպ՝ հումորայինից մինչև կծու հեզնական: Մեծ է նաև բառապաշարային տարբեր շեշտերի պատկանող միա-վորների՝ հատկապես օտարաբանությունների ոճաստեղծ դերը: Ուշադրության են արժանի նաև հնչերանգն ու դադարը և դրանք արտահայտող կետադրական նշանները, որոնք հաճախ խոսքին հաղորդում են խորը ենթատեքստ, երգիծա-ստեղծ են ու պատկերաստեղծ:

Առանձարի պատմվածքներում հականիշների առկայության հետ են կապված խոսքի արտահայտչականությունը, հագեցվածությունը, ազդեցիկույ-թյունը և այլ արժանիքներ: Հականիշները կարևոր մասնակցություն ունեն հակա-դրոյթների կազմության մեջ, որը ոճական զորեղ արտահայտչամիջոց է և երգի-ծական խոսքի կարևոր բաղադրիչ:

Օգտագործված գրականություն

Աղայան Է. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1616 էջ:

Առանձար 1947, Վշտի ծիծաղ, Երևան, «Հայպետհրատ», 164 էջ:

Երեցիան Դ. 1902, Հայոց գրականությունը, «Նոր դար», N 85, Թիֆլիս:

Էլոյան Ա. 1989, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 260 էջ:

Մելքոնյան Ա. 1984, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Երևան, «Լույս», 248 էջ:

Պարոնյան Հ. 1954, Ընտիր երկեր, գիրք 1, Երևան, «Հայպետհրատ», 576 էջ:

Պողոսյան Պ. 1991, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք երկրորդ, Երևան, ԵՊՀ հրատ., 336 էջ:

Տեր-Պողոսյան Ա. 1948, Առանձար, Սովետական գրականություն և արվեստ, N 1, Երևան, էջ 98-101:

Տերունյան տոներ 2006, Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 608 էջ:

Арнольд С. 1973, Стилистика современного английского языка, Ленинград, «Просвещение», 304 с.

Ефимов А. 1961, Стилистика художественной речи, Москва, изд. Московского университета, 519 с.

ЛИНГВОСТИЛИСТИЧЕСКИЕ СРЕДСТВА САТИРЫ В СБОРНИКЕ АРАНДЗАРА «СМЕХ СКОРБИ»

Карине Аракелян

Резюме

Западноармянские писатели-сатирики занимают особую нишу в истории армянской литературы, и одним из них является Арандзар-Мисак Гуюмчян (1877-1913). Его сборник «Смех скорби», изданный в 1905 г., представляет жизнь западных армян в годы османской деспотии, их быт и нравы сквозь призму юмора и сатиры. Творчество Арандзара отличается особой образностью языкового мышления, создающего неповторимую эстетику его произведений. Метафоричность его лексики, использование сравнений, антитез, антонимов и т.д. определяют стилистику и экспрессию его творчества.

Ключевые слова – Арандзар, сатира, речь, стиль, метафора, сравнение, контраст.

LINGUAL-STYLISTIC MEANS OF SATIRE IN ARANDZAR'S COLLECTION "LAUGHTER OF SORROW"

Karine Arakelyan

Abstract

Armenian satirical literature has rich traditions and deep roots. One of them is Arandzar, Misak Guyumdjian (1877-1913). In 1905 his collection "Laughter of Sorrow" was published, which presents the life of the Armenians in the Western Armenia during the Ottoman dictatorship, the manners and suffering of Armenians, seasoned with a satirical element. Satire was manifested in various ways: humor, gaiety, irony – bitter or spicy, etc. Metaphors, comparisons, contrasts, etc. enriched the speech with various nuances, endowed it with allegorical meaning, imparted a satirical character, which, depending on the characteristics of what was being said, was manifested in various ways – from humorous to spicy ironic. Arandzar's stories teems with antonyms, which endow the text with unique stylistic coloring and expressiveness.

Key words – Arandzar, satire, speech, style, metaphor, comparison, contrast.

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆԱԴԱՀԱՅ ԲԵՄԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ. ԱՐՓԻՆԵ ՇԱԼՃՅԱՆ

Անահիտ Բեքարյան

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4

Էլ. հասցե՝ abekaryan@mail.ru

ORCID: 0000-0001-7980-4180

Հոդվածը ներկայացվել է 08.02.2024, գրախոսվել է 10.02.2024, ընդունվել է տպագրության 03.12.2024
DOI: 10.53548/0320-8117-2024.3-178

Ամփոփում

Կանադահայ թատրոնի դերասանուհի, բեմադրիչ և երգչուհի Արփինե Շալճյանը իր բեմական առաջին քայլերը կատարել է Եգիպտոսում, իսկ հետագա թատերական գործունեությունը շարունակել Կանադայում: Նրա խաղընկերներն են եղել Արաքսի և Ասատուր Օհանյանները, Արտոն Նշանյանը, Լևոն Շիշմանյանը, Արփիար Վարդյանը, հայրը՝ Գրիգոր Բագրատունին և ուրիշներ: Հետաքրքիր և անմոռանալի բեմադրությունների հեղինակը իր մասնակցությունն է բերել բազմաթիվ ներկայացումների՝ արժանանալով ոչ միայն խաղընկերների, այլև թատերական հասարակայնության և մամուլի բարձր գնահատականին:

Բանալի բառեր՝ Արփինե Շալճյան, Սեպուհ Շալճյան, Եգիպտոս, Կանադա, Համազգային թատերախումբ, թատերախաղ, դերասանուհի:

Ներածություն

Դերասան Գրիգոր Բագրատունու¹ դուստրը՝ Արփինե Շալճյանը (1921-?) ծնվել է Կահիրեում: Հաճախել է Գալուստյան վարժարան ու երկու երաժշտանոց՝ «Մոնտեվերդի»² և «Աբու Բաքր Խայրաթ»³ Բեմական գործունեությունը սկսել է դպրոցական տարիներին՝ ասմունքով, երգով, պարով և թատրոնով:

¹ Բնիկ պոլսեցի, Օրթոգյուլի Թարգմանչաց և Պոլսի Կեդրոնական վարժարանի շրջանավարտ Գրիգոր Բագրատունին Կ. Պոլսի «Ազատ թատրոնի» հիմնադիրներից մեկն էր՝ Աշոտ Մաղաթյանի, Ենոք Շահենի, Չափրաստի, Էլիզ Պինեմեջյանի և այլոց հետ: 1918-ին տեղափոխվում է Եգիպտոս՝ Կահիրե: Կահիրեի լավագույն դերասանական ուժերով՝ Արաքսի և Ասատուր Օհանյաններ, Վահրամ Գալբազյան, Մանուկ Թաշճյան, բեմադրել է թատերգություններ և կազմակերպել գրական երեկոներ: Իր տանը նաև թատերական փորձեր են արել: Ունի հրատակված և անտիպ բանաստեղծություններ, թատերախաղեր՝ «Շուշանը ցեխի մեջ», «Ինչ պիտի ըլլալ ասոր վերջը», «Ախ, երբ պիտի ազատվեմ», «Տխուր զարթոնք». տե՛ս Էվերեկյան 2000, Ջահակիր, 5 հոկտեմբերի:

² Կլատիոն Մոնտեվերդի /1567-1643/ - իտալացի նշանավոր կոմպոզիտոր, պարուսույց, երաժշտագետ:

³ Աբու Բաքր Խայրաթ /1910-1962/ - եգիպտացի երգահան, դաշնակահար, երաժշտական գործիչ, ճարտարապետ: Կահիրեի կոնսերվատորիայի /1959/ առաջին ռեկտոր: 1927-ին նրա նախաձեռնությամբ ստեղծվում է երաժշտական ընկերություն:

1943-ին ամուսնանում է բազմաշնորհ արվեստագետ Սեպուհ Շալճյանի հետ⁴ (1912-1951): Վերջինիս ղեկավարությամբ Արփինե Շալճյանը խաղացել է «Մարո» օպերետում, «Շառլատան», «Պատվի համար», «Սայաթ Նովա», «Մորեղբայր Վանյա», «Չար ոգի» և այլ թատերախաղերում: Եգիպտական օպերայի կազմավորման առաջին իսկ օրերից մասնակցել է պետական օպերայի ներկայացումներին՝ մոտ քսան տարի կատարելով լիրիկական սոպրանոյի դերերգերը: Երգացանկում տեղ էին գտել Պուչինիի «Բոհեմ», «Մադամ Բատերֆլայ», Բիզեի «Կարմեն», Մասնեի «Վերթեր», «Դոն Բիշոտ», Մասկանիի «Կավալերիա Ռուստիկանա», Մուսորգսկու «Բորիս Գոդունով» Վերդիի «Օթելլո» և այլ գործեր: 1969-ին նա տեղափոխվում է Կանադա և հաստատվում Մոնրեալում:

Արփինե Շալճյանի թատերական գործունեությունը հիմնականում ծավալվում էր Համազգային մշակութային միության հետ: Դերասանուհին հանդես է եկել «Հին աստվածներ», «Եսի Մարդը» «Արմենուհի», «Փորձություն», «Արջը», «Արշին Մալ Ալան», «Ուշ լինի, նուշ լինի», «Շողոքորթը», «Պատվի համար», «Չար ոգի», «Հարազատ մարդիկ», «Աշխարհն, այո՛, շուտ է եկել», «Սրբազան բոց» և այլ թատերախաղերում: 1984-ին պարզևատրվել է Համազգային մշակութային միության շքանշանով երկարատև թատերական գործունեության համար⁵: Իր մասնակցությունը բերելով օտար և հայկական երգահանդեսներում՝ Արփինե Շալճյանը հանդես է եկել նաև հայ կոմպոզիտորների ստեղծագործություններով. Ռոմանոս Մելիքյան, Ալեքսանդր Սպենդիարյան, Կոմիտաս, Բարսեղ Կանաչյան, Լիպարիտ Նազարյանց⁶, Տիգրան Չուխաճյան: Նրա խաղընկերներն են եղել Արաքսի և Ասատուր Օհանյանները, Մանուկ Թաշճյանը, Արփիար Վարդյանը, Գրիգոր Բագրատունին, Խաչիկ Սանդալճյանը, Լևոն Շիշմանյանը և այլք:

Մոնրեալի համազգային «Պետրոս Ադամյան» թատերախումբը

Մոնրեալի Համազգային հայ մշակութային միության «Պետրոս Ադամյան» թատերախումբը սկսել է գործել 1975-ի օգոստոսի 18-ին և մեծ դերասանի անունը պաշտոնապես կրել է 1975-ի դեկտեմբերի 16-ից: Թատերախումբը կազմել են հիշյալ միության թատերասերները, որոնք կարծում

⁴ Սեպուհ Շալճյան /1912-1951/ - ծնվել Աեքսանդրիայում: Նախնական կրթությունը ստացել է տեղի Պողոսյան ազգային վարժարանում Նիկոլ Աղբալյանի տնօրինության օրոք, ապա շարունակել է ուսանել ֆրանսիական վարժարանում: Ունեցել է ստեղծագործական ձիրք նկարչության և երաժշտության մեջ: Եղել է տաղանդավոր ջութակահար: Նա Համազգային մշակութային միության երգչախմբի և գեղարվեստական բոլոր հանդեսների կազմակերպիչն էր:

⁵ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Համազգայինի մշակութային համախմբումը, Հորիզոն, 5 նոյեմբերի 1984:

⁶ Լիպարիտ Նազարյանց /1868-1947/ - լրագրող, իրավաբան, բանաստեղծ, երաժիշտ: ՀՅԴ կուսակցության անդամ էր: Ունի ռոմանսներ, որոնցից մեկը գրված է Միսաք Մեծարենցի «Ճերմակ Վարդեր» բանաստեղծության հիման վրա:

էին, որ հասել է ժամանակը ավելի մասնագիտական թատերախումբ կազմակերպելու Մոնրեալի Համազգայինի շրջանակներում: 1978-ի սովյալների համաձայն, թատերախումբը բաղկացած էր քառասուն դերակատարներից և ուներ չորս ղեկավար, որոնց թվում էր Արփինե Շալճյանը: Սկսած 1975-ից՝ «Պետրոս Ադամյան»-ը հանդես էր գալիս հայ և օտար հեղինակների թատերախաղերով, որոնք հաճույքով դիտում էին հայ համայնքի անդամները: Թատերախումբը ներկայացումներ է տվել սկսած 1964-ից: 1970-ի մայիսի 3-ին խմբավար Երվանդ Ալեքսանյանի⁷ ղեկավարությամբ բեմադրվել է Ու. Հաջիբեկովի «Արշին Մալ Ալան» օպերետը: Սույն օպերետը հայերեն է թարգմանել Թիֆլիսում, Բաքվում, Երևանում իր գործունեությունը ծավալած արևելահայ դերասան, երգիչ, թառահար, կովկասյան պարերի մասնագետ Սեդրակ Մաղալյանը: 1913-ին գրված «Արշին Մալ Ալան»-ը առաջին անգամ ներկայացվել է Բաքվում 1914: Չորս արարից բաղկացած օպերետը մեծ ընդունելություն է գտել ամենուրեք: Օպերետը բազմիցս բեմադրվել է հայկական թատերախմբերի կողմից: 1924-ին հունվարի 20-ին Հայ կարմիր խաչի Համիլտոնի մասնաճյուղը հրավիրել է դերասան ամուսիններ Քաջունիներին և նրանց ջանքերով բեմադրել «Արշին Մալ Ալան»-ը, որին ներկա էին «քաղաքիս և արվանձաններու բոլոր հայերը»⁸: Մոնրեալում այն առաջին անգամ ներկայացվել է 1970-ի մայիսի 3-ին Երվանդ Ալեքսանյանի կողմից, տաղանդավոր արվեստագետների ուժերով: Թատերասրահը լիքն էր արվեստասեր հասարակությամբ, Արփինե Շալճյանը կատարում էր Ասյայի դերը. նա անկրկնելի էր թե՛ որպես երգչուհի և թե՛ որպես դերասանուհի: «Ոստոստուն խաղարկութիւն, բեմին տիրացած համարձակութիւն եւ հաճելի ձայն, եւ ահա մենք ունեցանք փնտռուած արուեստագիտուհի մը բեմին վրայ», - գրում է թատերագետ Խորեն Տետեյանը⁹: «Արփինե Շալճեանի պարագային, դժուար էր որոշել թէ որն էր գերազանցը. երգչուհի՞ն թէ՛ դերասանուհին: Իբրեւ ասպարեզով երգչուհի՝ լիապես արդարացուց իր հանգամանքը. իբրեւ դերասանուհի՝ ամեն թույլ տեղին ու յարմար դեմքի ար-

⁷ Երվանդ Ալեքսանյան /1908-1981/ - ծնվել է Ալեքսանդրիայում, կրթությունը ստացել տեղի Պոդոլյան ազգային վարժարանում: 17 տարեկանում արդեն ելույթներ է ունեցել օտար նվագախմբերի հետ: 1926-ին «Յառաջդիմասեր» միության համար ստեղծել է նվագախումբ-երգչախումբ, որը հետագայում կրել է Համազգայինի «Քնար» երգչախումբ անվանումը, և որի համերգները արժանացել են ժողովրդի ջերմ գմնահատականին: 1964-ին հաստատվելով Մոնրեալում՝ կրկին հիմնում է «Քնար» երգչախումբը և համերգներով հանդես գալիս Տրոնտոյում Բոստոնում, Նյու-Յորքում: 1966-ին «Գագեթ» անգլիատառ օրաթերթը բարձր է գնահատել այս երգչախմբի արվեստը՝ նշելով որ իսկապես հիանալի է 70 հոգանոց ժողովրդական երգչախումբը՝ «կազմված Մոնրեալի Հայաստանյայց Սուրբ Հակոբ եկեղեցվո անդամներից»՝ Երվանդ Ալեքսանյանի ղեկավարությամբ: Նշենք, որ Ե. Ալեքսանյանը նաև բազմաթիվ երգերի հեղինակ է:

⁸ Անցորդ 1924, 1 փետրվարի:

⁹ Տետեյան 1970, 11:

տահայտություններով կը գրավէր ներկաներուն ուշադրութիւնը»¹⁰: Շնորհիվ խմբավար Երվանդ Ալեքսանյանի, որը երկար տարիներ ղեկավարել է մեր երգչախմբերը և օպերետների բեմադրությունները, սկզբում Եգիպտոսում, իսկ հետագայում Կանադայում, այդ օրը բոլոր դերասանները «ցուցաբերեցին անթերի եւ ներդաշնակ նվագաձուփին մը»¹¹:

Այս օպերետը 1979-ի նոյեմբերին Համազգայինի «Պետրոս Ադամյան» թատերախումբը Երվանդ Ալեքսանյանի կազմակերպությամբ և Արփինե Շալճյանի բեմադրությամբ կրկին ներկայացրել է թատերասեր հոծ հասարակայնությանը: Չնայած որ նյութը ծանոթ էր, «սրահը լեցուն էր և շատերը ձեռնունայն դռնէն վերադարձան օրեր առաջ տոմսերը սպառած ըլլալուն համար»¹², - գրում է հոդվածագիրը: Ներկա էր մոնրեալահայ արվեստասեր հասարակությունը, իսկ «Բեմադրիչ Արփինե Շալճեան, տարիներու տուած բեմական փորձառութեան եւ յոգնատանջ աշխատանքներու արգասիքն էր, որ կը վայելէր այդ երեկոյ տեսնելով օպերեթին յաջող ներկայացումը»¹³:

Թատերախոս Գ. Շիվանյանը գրում է. «Տիկ. Շալճեան կարողացել էր ստեղծել պատշաճ մթնոլորտ, առույգ և կենսականորեն զվարթ վոդևիլյան տարազ մը հագցնելով օպերետին»¹⁴:

1970-ին Մոնրեալի Հ.Ե.Դ. «Լեւոն Շանթ» խումբը կազմակերպել է հուշ երեկո՝ նվիրված Շանթի հարյուր - ամյակին: Ներկայացնելով Շանթի «Եսի մարդը» թատերախաղը՝ մի թատերախաղ, որն ունեցել է «բացառիկ հաջողություն», «երկարատև ծափերու մէջ վերջ գտաւ ներկայացումը, որմէ ետք փունջ մը ծաղիկ տրուեցաւ դերուսոյց եւ բեմադրիչ Արփինե Շալճեանին, որուն մղիչ ուժին կը պարտինք ներկայացումի յաջողութիւնն ու լեզուական տարրերու բժախնդրութիւնը:

Արդարեւ, անսահման խանդավառութիւն ու գեղարուեստի անխառն սէր պետք է, զլուխ հանելու համար «Եսի մարդը» ի նման թատերախաղ մը՝ առավելաբար սիրողներով ու նորեկներով»¹⁵, - գրում է թատերախոսը:

1973-ի հունվարի 21-ին Մոնրեալի Վիլյամ Հինգստոն թատերասրահում Համազգայինի նախաձեռնությամբ բեմադրվել է Գ. Երիցյանի «Ուշ լինի, նուշ լինի» օպերետը՝ Երվանդ Ալեքսանյանի երաժշտական ղեկավարությամբ և Արփինե Շալճյանի բեմադրությամբ:

Ըստ մեր ունեցած տվյալների, Կանադայում այս թատերախաղը առաջին անգամ ներկայացվել է Բրենդֆորդում, Խրիմյան գրադարանի սրահում մայիսի 24-ին (ի նպաստ Բրենդֆորդի Խրիմյան գրադարանի)՝ Արգար

¹⁰ Պ.Թ.Մ. 1970, 15:

¹¹ Տեսէեան 1970, 11:

¹² Շիրվանյան 1979, 14:

¹³ Շիրվանյան 1979, 14:

¹⁴ Շիրվանյան 1979, 14:

¹⁵ Մոմճեան 1970, 17:

Հազցյանի ղեկավարությամբ¹⁶: 1966-ի մարտի 13-ին Ս. Հակոբ եկեղեցու դպրաց դասի նախաձեռնությամբ կազմակերպվել և Մոնրեալում, Ուկրաինական սրահում ներկայացվել է «Ուշ լինի, նուշ լինի» օպերետը: Շողիկի դերով հանդես է եկել Ս. Քեքլիկյանը, որն «ամբողջ օբերտեթի տեսողության իր խաղարկությամբ, ձայնով եւ կեցուածքով բոլորի գնահատանքին արժանացավ»¹⁷:

Նշենք, որ ներկայացման տոմսերը նախօրոք սպառված են եղել: Ըստ մամուլի տեղեկությունների, ներկա էր մոտ ութ հարյուր հանդիսական, և «հակառակ որ, յավելուածական աթոռներ դրուեցան, սրահի տարողութիւնը սահմանափակ ըլլալուն, շատերը ստիպուեցան ետ դառնալ»¹⁸: Գլխավոր հերոսուհու Նազիկի դերով հանդես է եկել Արփինե Շալճյանը, որն իր գրավիչ ձայնով կարողացել է իր տառապանքին և ուրախությանը հաղորդակից դարձնել հանդիսականին: Օպերետի հաջողությանը նպաստել է բեմադրիչի և երաժշտական ղեկավարի համագործակցությունը: Չէ՞ որ «Ուշ լինի, նուշ լինի» թատերախաղը խղճալի, պատառոտուած տետրակ մըն է, տարիներով գաղութ գաղութ, ձեռքե ձեռք անցած ատաղձ մը, որ կը խոսի ժողովուրդի սրտեն, հարկ էր արտագրել, դասավորել, վերամշակել եղանակները, ճոխացնել, աշխուժացնել, կատարելագործել և վերջապես ոտքի հանել: Այս որ կատարած են խմբավարն ու բեմադրիչը ձեռք ձեռքի»¹⁹, - գրում է Պ. Մոմճյանը: Ըստ մամուլի արձագանքների, թատերասեր հասարակությունը շատ ջերմորեն է ընդունել ներկայացումը՝ խելահեղ և երկարատև ծափահարություններով: «Գեղարուեստական վայելքէն բացի, նման նուաճում մը, անգամ մը ես կը տանի այն եզրակացութեան, թէ որեւէ գործի հաջողութիւն կախեալ է մասնակցող անձերուն զոհաբերութեան ոգիէն, աշխատանքէն, ու յատկապես համագործակցութեան ոգիէն», - գրում է թատերախոսը և հույս հայտնում, որ նման օպերետներ ավելի հաճախ բեմադրվեն²⁰: Նշենք, որ Կովկասահայ դրամաօպերետային թատերախումբը, որն իր գործունեությունը սկսել էր Կ. Պոլսում, 1920 թ. հունվարից մինչև 1922-ի աշուն, ի թիվս այլ ներկայացումների, բեմադրել է նաև Գ. Երիցյանի «Ուշ լինի, նուշ լինի» օպերետը: «Չնայած... իր պարզունակ կառուցվածքով չէր կարող համեմատվել եվրոպական օպերետների հետ..., - գրում է թատերագետ Գառնիկ Ստեփանյանը, - սակայն դիտվել է հաճույքով, կրկնվել քանիցս՝ պարզապես հայ գեղջկական կյանքի ցուցադրմամբ, բարքերի հարազատությամբ, հեշտ ընկալելի երգերով, որոնք արագորեն տարածվել են ժողովրդի մեջ»²¹: Այս

¹⁶ Մանուկեան 1927:

¹⁷ Թղթակից 1966:

¹⁸ Մոմճեան 1973, 21 («Ուշ լինի, նուշ լինի» օպերտեթի ներկայացումը):

¹⁹ Մոմճեան 1973, 21 («Ուշ լինի, նուշ լինի» օպերտեթի ներկայացումը), տե՛ս նաև Մոմճեան 1973 (Քանատահայ կեանք. «Ուշ լինի» օպերտեթը Մոնրեալի մեջ):

²⁰ Մոմճեան 1973, 21 («Ուշ լինի, նուշ լինի» օպերտեթի ներկայացումը):

²¹ Ստեփանյան 1975, 278-279:

թատերախաղը բեմադրել է նաև Փարիզի Հայ դրամա-օպերետային թատերախումբը՝ Միշա Ազնավուրյանի և Շահ-Պարոնյանի ղեկավարությամբ: Սուրաբյան ամուսինները²² Ամերիկայում նույնպես բեմադրել են «Ուշ լինի, նուշ լինի» օպերետը: Այս ներկայացումը եղել է Սուրաբյանների խաղացանկում նրանց գործունեության ամբողջ ընթացքում, 1920-ից մինչև 1950-ական թվականների վերջը: «Օպերետի հեղինակը՝ Գարեգին Երիցյանը, կարո՞ղ էր մտքովն անգամ անցկացնել թե իր «Ուշ լինի, նուշ լինի» գործը շրջելու էր աշխարհով մեկ՝ շնորհիվ Սուրաբյանների թատերախմբի, իսկ մայր հայրենիքում՝ տասնամյակներ շարունակ արժանի տեղ գրավել Երևանի Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնի խաղացանկում, ցուցադրվել Հայաստանի բոլոր քաղաքներում ու ավաններում»²³:

1977-ի հունիսի 11-ին և 12-ին «Պետրոս Աղամյան» թատերախումբը ներկայացրել է Արամաշոտ Պապայանի «Աշխարհն, այո՛, շուտ է եկել» կատակերգությունը Վիլյամ Հինգստոն վարժարանի թատերասրահում՝ Սարգիս Զուրիկյանի²⁴ և դերուսույց Արփինե Շալճյանի բեմադրությամբ: Դերասանների խումբը մեծ վայելք է պատճառել թատերասերներին և պարզևեղ անմոռանալի երեկո: Հոգվածագիրը, շնորհավորելով բոլոր դերակատարներին և հատկապես Արփինե Շալճյանին «աննախնթաց հաջողություն գտած այս ներկայացման համար»²⁵, գտնում է, որ «այսքան յաջող եւ լաւ պատրուաստուած թատերգութիւն քիչ անգամ ներկայացուած է Մոնթրեալի բեմերուն վրայ, որը արդիւնք է ամիսներու յարատեւ եւ տքնաջան փորձերու»²⁶: Տորոնտոյի Հայ մշակութային միության հրավերով Մոնթրեալի «Պետրոս Աղամյան» թատերախումբը 1977-ի հուլիսի 9-ին ներկայացնում է վերոհիշյալ թատերախաղը: «Հո՞ծ բազմութիւն մը, նոյնիսկ հեռաւոր քաղաքներէ ժամանակէն առաջ փութացած էր վայելելու սքանչելի այս ներկայացումը», - գրում է հոգվածագիրը և շարունակում, - «Բոլոր դերակատարները մեծ մասամբ սիրողներ-իրենց կարելին ըրին լավագոյն խաղարկութիւն ցոյց տալով»²⁷: Լավագույնների մեջ էր Մարգարի կնոջ՝ Նուբարի դերով հանդես եկող Արփինե Շալճյանը:

1979-ի հոկտեմբերին Համազգայինի «Պետրոս Աղամյան» թատերախումբը ներկայացնում է Մելիք Քոչարյանի²⁸ «Հարազատ մարդիկ» թա-

²² Սեդրակ և Մաշա Սուրաբյանները 1923-ին ԱՄՆ-ում հիմնել են «Սուրաբյան» թատերախումբը:

²³ Ստեփանյան 2008, 348:

²⁴ Սարգիս Զուրիկյան (1931-2007) - մոնթրեալահայ համայնքի վաստակավոր դերասան, բեմադրիչ, դերուսույց: Բեմադրել է ինչպես հայ, այնպես էլ օտար հեղինակների թատերգություններ:

²⁵ Թղթակից 1977:

²⁶ Թղթակից 1977:

²⁷ Հոթոյեան 1977:

²⁸ Մելիք Քոչարյան /1912/ - գրել է 40-ից ավելի թատերգություններ: Առավել հանրաճանաչ են «Քեդիները քե՛ք են անում», «Հարազատ մարդիկ», «Հին հիվանդություն» պիեսները:

տերախաղը «Մարի Անն» սրահում: Պիեսի դեպքերը տեղի են ունենում Երկրորդ աշխարամարտից հետո Հայաստանում: Բեմադրության հաջողության մասին Պ. Մոմճյանը գրում է. «Կըսուի թե բեմադրիչն ու դերասանն են, որ հարմար մթնոլորտ ու ներդաշնակութիւն կուտան հեղինակի մը գործին: Ընդհանուր առմամբ, կարելի է ըսել թե բոլոր դերակատարներն ալ իրենց դերերուն մեջն էին: Այլ խոսքով՝ կարտայայտեին իրենց վստահված դերերը»²⁹: Բանվորուհի Օվսաննայի դերով հանդես է եկել Արփինե Շալճյանը: «Խանդավառ, քաջ, գթասիրտ, մարդամոտ, ու մարդասեր բանվորուհի մըն է Օվսաննան: Տիկ. Ա. Շալճեանն, իր զուարթաբարոյ պերճախոսութեամբ հաջողապէս ներկայացուց միամիտ այս անձնավորութիւնը»³⁰, - նշում է Պ. Մոմճյանը: Արփինե Շալճյանն իր խաղացանկում անդրադառնում է նաև Շիրվանզադեին, «որի դերը մեր դրամայի և թատրոնի զարգացման համար անզուգական է»³¹: «Թատրոնը Շիրվանզադեի երկրորդ տարերքն էր: Վաղ երիտասարդության տարիներին, ինչպես հիշում են նրա կենսագիրները, նա խաղում էր թատերասերների խմբում, խաղում էր համարձակ և բավականին հաջող: Միայն գրականության հանդեպ սերը հաղթեց այդ զգացմանը... Շիրվանզադեն միշտ հետևում էր հայոց թատրոնի բոլոր ներկայացումներին, առանձնապես սիրելով ու գնահատելով շեքսպիրյան ու սունդուկյանական խաղացանկը... Չմշկյան-Ադամյան-Սիրանոյշ, - հայ բեմի հսկաները կախարդում էին Շիրվանզադեին, նպաստում նրա ճաշակի և էսթետիկական ըմբռնումների լայնացմանը»³²: 1909-ին Շիրվանզադեն գրում է «Արմենուհի» դրաման, որը առաջին անգամ բեմադրվում է 1910-ի դեկտեմբերի 28-ին Թբիլիսիի Արտիստական ընկերության թատրոնում: Դրաման բուռն վեճեր է հարուցել մամուլում: 1911-ին Հովհաննես Թումանյանը «Անցնենք տոնին» հոդվածում, խոսելով այդ մասին, գրում է. «Արդ, այն մարդիկ ու այն մամուլը, որ նրա մի անհաջող նախադասության վրա այսքան կանգնեցին ու զբաղվեցին, եթե անկեղծ ու շիտակ մարդիկ են, որքան պիտի կանգնեն նրա տաղանդավոր գործերի առաջ ու որքան պիտի զբաղվեն նրա հատորներով: Եթե մի ձախորդ խոսքի համար այսքան նախատեցին ու քաջքեցին, որքան պիտի հարգեն ու գովեն ամբողջ գեղարվեստական գործերի համար»³³:

Տուրք չտալով որոշ հոդվածագիրների բացասական կարծիքներին՝ Արփինե Շալճյանը որոշում է բեմադրել դրաման: 1976-ին նա իրականացնում է իր մտադրությունը: «Արմենուհի» թատերախաղի ներկայացումը Մոնթրեա-

²⁹ Մոմճեան 1979:

³⁰ Մոմճեան 1979:

³¹ Տերյան 1961, 295:

³² Թամրազյան 1978, 341-342:

³³ Թումանյան 1994, 304:

լի մեջ՝ կու գայ ապացուցանելու, թե բոլորովին ճշմարիտ չէ այս կարծիքը, թե պրպտումներով կրնանք մոռացութեան տրուած երկեր դարձեալ կեանքի կոչել. Կը բաւէ քաջութիւնը ունենալ ժամանակավրեպ կարծուած գործեր ներկայացնելու: Անժամանցելի են ճշմարիտ արուեստի գործերը»³⁴: Ներկայացմանը մասնակից են եղել 12 դերակատար, որոն գրեթէ կեսը առաջին անգամ էր բեմ բարձրանում: Անշուշտ, մեծ ճիգ ու ջանք է թափել դերուսույցը իր մտահղացումը իրագործելու համար: Բեմադրությունն ունեցել է փայլուն հաջողություն, որի մասին թատերախոսը գրում է. «Բեմադրութիւն մը հաւաքական աշխատանքի արդիւնք է անկասկած, երբ մանաւանդ միատարր մակարդակով մը կը ներկայացնեն: Այս բոլորը միացնող ու յաջողակ ելոյթի վերածողը բեմադրիչն ու դերուսույցն է. «Արմենուհիի» պարագային՝ տիկ. Արփինե Շալճեանը»³⁵:

Անմոռաց հուշեր Եգիպտոսից

Դերասանուհու՝ Եգիպտահայ թատերական կյանքի հետ կապված հուշերում առանձնապէս ուշադրություն է գրավում այն փաստը, որ Մեծն Սիրանույշի վաստակն ու հեղինակությունը բարձր գնահատող արվեստագետները որոշել են Եգիպտահայ թատերախմբերի միացյալ ուժերով կիսանդրի կանգնեցնել հայ բեմի թագուհու՝ մեծանուն դերասանուհու՝ Սիրանույշի հողաթմբին: Հարկ եղած գումարը հայթայթելու համար նրանք ձեռնամուխ են եղել «Անուշ» օպերայի բեմադրությանը: Մասնակիցների մեջ էր Սիրանույշի երկաթը, իսկ Անուշի դերով հանդես է եկել Արփինե Շալճյանը: Հավաքված դրամը չի բավարարել, և այդ պատճառով ներկայացրել են նաև «Չար ոգին»³⁶: Հետագայում նկարիչ-քանդակագործ Օննիկ Ավետիսյանը³⁷ կերտել է Սիրանույշի դիմաքանդակը և 1946-ին այն տեղադրել Կահիրեի Մարմինայի հայկական գերեզմանատանը, որտեղ հանգչում էր Սիրանույշի աճյունը Արփիար Արփիարյանի և Երվանդ Օտյանի կողքին: Արփինե Շալճյանը պատմում է, որ 1947-ի օգոստոսին բեմադրիչ Գասպար Իփեքյանը ժամանել է Կահիրե՝ մասնակցելու ՀՅԴ 14-րդ ընդհանուր ժողովին: Այս առիթով Եգիպտոսի թատերասերների մասնակցությամբ բեմադրվում է Լևոն Շանթի «Հին աստվածները»: Ներկայացումը պսակվում է մեծ հաջողությամբ:

³⁴ Մոմճեան 1976:

³⁵ Մոմճեան 1976:

³⁶ Իրականում Կահիրեի Էգպեթի թատրոնում 1944-ի հունիսի 4-ին Եգիպտահայ գեղարվեստասիրաց և «Նավասարդ» թատերախմբերի միացյալ ուժերով ներկայացվել է Շիրվանզադեի «Նամուրը»: Տե՛ս Հրահատ, Արև, 1944, հունիսի 10, թիւ 7746: Ստացված հասույթին որոշ հավելումներ անելով՝ նրանք 1946-ին Կահիրեում կանգնեցրել են Սիրանույշի կիսանդրին:

³⁷ Օննիկ Ավետիսյան /1898-1974/ - գեղանկարիչ, քանդակագործ, արվեստաբան: 1927-ին ավարտել է Հռոմի գեղարվեստի ակադեմիան: 1923-ից նկարչի գործերը ցուցադրվել են տարբեր երկրներում և շահել մրցանակներ:

Սեդայի դերով հանդես է եկել Արփինե Շալճյանը, իսկ վանահոր դերում՝ Սեպուհ Շալճյանը: Ձեռնարկը իրականացվել է «Հ.Յ.Ռ. երիտասարդացի»-ի և Գալուստյան Շրջանաւարտից միութեան թատերախմբի միացյալ աշխատանքով, Աշոտ Ջորյանի³⁸ հրաշալի բեմահարդարումով և խստապահանջ Գասպար Իփեքյանի բեմադրությամբ:

Եզրակացություններ

Արփինե Շալճյանը, որը երկար տարիներ անմնացորդ նվիրումով ծառայել է հայ թատրոնին, հանդես է եկել ոչ միայն որպես դերասանուհի, այլև՝ բեմադրիչ և երգչուհի:

Թատերական արվեստի սիրահարներին Արփինե Շալճյանի պատգամն այն է, որ նրանք «Շատ ավելի լրջությամբ մոտենան հայ բեմին: Իսկ կազմակերպիչներուն՝ նկատի ունենալով, որ հայապահպանման առաջին ազդակներեն է, չինայեն որևէ անհրաժեշտութիւն հայ բեմին, եթե կուզեն իսկապես ծառայել հայ լեզուին և գրականութեան»³⁹:

Օգտագործված գրականություն

Անցորդ 1924, Ամերիկահայ կեանք, Հայրենիք, Բոստոն, 1 փետրվարի:

Էվերեկեան Դ. 2000, Նիւթ Եգիպտահայ թատրոնի պատմութեան. հարցազրոյց տիկին

Արփինե Շալճեանի հետ, Զահակիր, 5 հոկտեմբերի:

Թամրազյան Հ. 1978, Շիրվանզադէ. Կյանքը և գործը, Երևան, ԵՊՀ հրատ., 591 էջ:

Թղթակից 1966, «Ուշ լինի, նուշ լինի»-ն Մոնթրէալի մէջ, Հայրենիք, ապրիլի 2:

Թղթակից 1977, Համազգայինի «Պետրոս Աղամեան» թատերախումբի ելոյթը, Հայրենիք, հուլիսի 15:

Թումանյան Հովհ. 1994, Երկերի լիակատար ժողովածու, հ. 6, Քննադատություն և հրապարակախոսություն (1887-1912), ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ. Հովհաննես Թումանյանի թանգարան, 670 էջ:

Համազգայինի մշակութային համախմբումը 1984, Հորիզոն, 5 նոյեմբերի:

Հոթոյեան Գր. 1977, «Պետրոս Աղամեան» թատերախումբին ելոյթը, Հայրենիք, 5 օգոստոսի:

Հրահատ 1944, «Նամուս»-ի բեմադրումը, Արեւ, 10 հունիսի, թիւ 7746:

Մանուէլեան Մ.Տ. 1927, Ամերիկահայ կեանք. Հանդես - ներկայացում, Հայրենիք, 5 հունիսի:

Մամճեան Պ. 1970, Լևոն Շանթին նուիրուած յուշ երեկոն, Լրաքաղ, թիւ 86, էջ 17:

Մամճեան Պ. 1973, Քանատահայ կեանք. «Ուշ լինի, նուշ լինի» օփերեթը Մոնթրէալի մէջ, Հայրենիք, 14 փետրվարի:

³⁸ Աշոտ Ջորյան /1905-1970/ - գեղանկարիչ: Ստեղծել է դիմանկարներ, բնանկարներ, նատյուր-մորտներ և պատկերազարդել գրքեր: Սովորել է Կ. Պոլսի Էսայան վարժարանում, այնուհետև՝ Վիեննայի նկարչական դպրոցում: 1928-ին ավարտել է Հոմի գեղարվեստի ակադեմիան: Դեռևս ուսանողական տարիներից մասնակցել է ցուցահանդեսներին: 1931-ին Ալեքսանդրիայում կազմակերպվել է նրա առաջին անհատական ցուցահանդեսը: Նրա կտավները ցուցադրվել են տարբեր երկրներում, այդ թվում՝ Կահիրեի և Ալեքսանդրիայի թանգարաններում, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան վանքերի փրահներում, Հայաստանի ազգային պատկերասրահում /մոտ 200 գործ/:

³⁹ Էվերեկեան 2000, Զահակիր, 5 հոկտեմբերի:

- Մոմճեան Պ. 1973, «Ուշ լինի, նուշ լինի» օփերեթի ներկայացումը Մոնրեալի մէջ, Հայրենիք, Լրաքաղ, թիւ 105, էջ 21:
- Մոմճեան Պ. 1976, «Արմենուի» թատերախաղի ներկայացումը, Հայրենիք, 9 նոյեմբերի:
- Մոմճեան Պ. 1979, «Հարազատ մարդիկ» ներկայացումը, Հորիզոն, 22 հոկտեմբերի:
- Շիրվանեան Գ. 1979, «Արշին Մալ Ալան» օփերեթը, Գեղարդ, թիւ 47, էջ 14:
- Պ.Թ.Մ. 1970, «Արշին Մալ Ալանի» ներկայացումը, Լրաքաղ, հունիս, թիւ 86, էջ 15:
- Ստեփանյան Գ. 1975, Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. 3, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 434 էջ:
- Ստեփանյան Գ. 2008, Ամերիկահայ թատրոնի պատմություն Երևան, ԵՊՀ հրատ., 565 էջ:
- Տետէեան Խ. 1970, Արշին Մալ Ալան օփերեթը Մոնթրեալի մէջ, Քուլիս, թիւ 563, էջ 11:
- Տերյան Վ. 1961, Երկերի ժողովածու, հ. 3, Հայ գրականության գալիք օրը, Երևան, «Հայպետհրատ», 801 էջ:

ТВОРЧЕСКИЕ СИЛЫ КАНАДСКОЙ АРМЯНСКОЙ СЦЕНЫ: АРПИНЕ ШАЛЧЯН

Анаит Бекарян

Резюме

Канадская армянская актриса, режиссер и певица Арпине Шалчян начала свою сценическую карьеру в Египте, а в дальнейшем продолжила ее в Канаде. Ее партнерами по сцене были Аракси и Асатур Оганяны, Арто Ншанян, Левон Шишманян, Арпиар Вардян, ее отец – Григор Багратуни и другие. Автор интересных и незабываемых постановок – Арпине Шалчян – принимала участие во многих спектаклях, которые были удостоены высокой оценки не только партнеров по сцене, но и театральной общественности и периодики.

Ключевые слова – Арпине Шалчян, Сепух Шалчян, Египет, Канада, Общенациональная театральная труппа, пьеса, актриса.

CREATIVE POTENTIAL OF THE ARMENIAN STAGE IN CANADA: ARPINE SHALJIAN

Anahit Bekaryan

Abstract

Arpine Shaljian, Canadian Armenian actress, stage manager and singer made her stage debut in Egypt before captivating stages in Canada. She shared the stage with the Ohanians, Arto Nshanian, Levon Shirinian, Arpiar Vardian, her father Grigor Bagratouny and others. The author of many plays, she also played in many performances and garnered immense praise from both audiences and critics alike.

Key words – Arpine Shaljian, Sepuh Shaljian, Egypt, Canada, performance, Hamazgain theatre company, actress.

ԱՐՑԱՆԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԿԱՏԱԿԵՐԳԵՐԸ

Մարիաննա Տիգրանյան

Արվեստագիտության թեկնածու
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղդասարյան 24/գ
ԵՊԿ հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոն
ՀՀ, Երևան, Սայաթ-Նովա 1ա
Էլ. հասցե՝ tigranyan.marianna@mail.ru
ORCID: 0009-0009-8960-4911

Լինդա Սարգսյան

ԵՊԿ երաժշտագիտության բաժին
ՀՀ, Երևան, Սայաթ-Նովա 1ա
Էլ. հասցե՝ linda.sargsyan31@mail.ru
ORCID: 0009-0006-6562-3892

Հոդվածը ներկայացվել է 15.05.2024, գրախոսվել է 04.11.2024, ընդունվել է տպագրության 03.12.2024
DOI: 10.53548/0320-8117-2024.3-188

Ամփոփում

Հոդվածում առաջին անգամ անդրադարձ ենք կատարել արցախյան կատակերգերին՝ շարունակելով Արցախ աշխարհի ավանդական երաժշտության տարբեր ժանրերին նվիրված մեր ուսումնասիրությունների շարքը¹: Երգիծական երգը հայ ժողովրդական երգաստեղծության սիրված, բայց և քիչ լուսաբանված ժանրերից է, ուստի ստորև ներկայացվող կատակերգերի երաժշտական օրինակների անդրանիկ հրապարակումը, կարծում ենք, կհետաքրքրի ոլորտի մասնագետներին:

Դեռևս XIX դ. 40-50-ականներից սկսած՝ Արցախի հարուստ բանահյուսության գրառման և ուսումնասիրության շարունակական աշխատանքներով զբաղվել են նվիրյալ հոգևորականներ (Եպիսկոպոս Մակար Բարխուդարյան, վարդապետ Խաչիկ Դադյան), անվանի բանահավաքներ (Բահատրյան Եղբայրներ, Կարապետ Մելիք-Շահնազարյան՝ Տմբլաչի Խաչան) և ազգագրագետներ (Երվանդ Լալայան, Ստեփան Լիսիցյան, Ալվարո Ղազիյան): Եվ կորստից փրկվել է Հայոց աշխարհի պատմական, հնագույն տարածաշրջաններից մեկի՝ Արցախի բազմադարյա բանավոր գրականության հսկայական ժառանգությունը: Այդ կուտակված նյութը գիտական ուսումնասիրությունների մեծ հնարավորություն է տալիս: Ցավոք, նույնը չի կարելի ասել Արցախի ավանդական երաժշտության մասին, որի նպատակային հավաքագրումը երաժշտագետներն իրականացրել են միայն XX դ. 50-ականներից: Ժողովրդական բանավոր գրականության և երաժշտության գոհարների գրառման այդ մեկդարյա ժամանակային տարբերությունը, անշուշտ, իր բացասական հետևանքներն է թողել այն առումով, որ ժողովրդական երաժշտության շատ արժեքավոր նմուշներ պարզապես կորել են: Դրա վառ ապացույցն այն է, որ ազգագրական զանազան աղբյուրներում հրատարակված գեղջկական երգերը մեզ են

¹ Տե՛ս Տիգրանյան, Սարգսյան 2021, 123-134, Տիգրանյան, Սարգսյան 2022, 230-241:

հասել միայն բանաստեղծական տեքստի ձևով, մինչդեռ դրանց երաժշտական բաղադրյալի մասին մենք պատկերացում չունենք:

Արցախի ավանդական երաժշտության ծայնագրման և հավաքագրման աշխատանքներին նպաստել են Կոմիտաս վարդապետը, Գրիգոր Այունին, Ստեփան Դեմուրյանը, Ռոբերտ Աթայանը, Արամ Քոչարյանը և Մաթևոս Մուրադյանը: Ներկա ուսումնասիրության շրջանակում դիտարկված են Արցախում տարածում գտած երգիծական երգերի չորս ուշագրավ օրինակներ՝ «Նախշուն աքիր» (ծայնագրությունը՝ Ա. Քոչարյանի, Ստեփանակերտ, 1925 թ.) «Հե՛յ, Հոռոտ!» (ծայն.՝ Ռ. Աթայանի, Լեռնային Ղարաբաղ, 1957 թ.), «Տերպեր, միրուքդ խուզիր» (ծայն.՝ Մ. Մուրադյանի, Լեռնային Ղարաբաղ, 1958 թ.) և վերջերս մեր ծայնագրած «Դերունց ծորումը» կատակերգը (<< ԳԱԱ ԱԻ, Երևան, 2024 թ.):

Բանալի բառեր՝ Արցախի ավանդական երաժշտություն, կատակերգեր, Ա. Քոչարյան, Ռ. Աթայան, Մ. Մուրադյան, Խանդամիրյան թատրոն, Կ. Մելիք-Շահնզադյան (Տմբլաչի Խաչան):

Ներածություն

Կատակերգերը կամ երգիծական երգերը ժողովրդի մեջ լայն տարածում ունեցող ծաղրական-հումորային երգաստեղծության նմուշներ են: Կատակերգերում գեղջուկի կողմից քննադատվել ու ծաղրի են ենթարկվել սոցիալական անհավասարության մի շարք թեմաներ և գեղջուկական միջավայրում առկա բացասական երևույթներ, մարդկային արատներ՝ պարծենկոտություն, ծուլություն, որկրամոլություն, ազահություն, ժլատություն, մեծամտություն, հարբեցողություն, կաշռակերություն, շատախոսություն: Վերջինիս վառ օրինակ է «Դու զար, բոլոճիկ, զար» կատակերգը, երբ պարի սիրահար շատախոս կինը հնձվոր ամուսնուն ճաշ տանելու ժամանակ լսում է բոլոճիկի բզզոցը, ճաշն անմիջապես դնում է գետնին և միջատի բզզոց-երաժշտության տակ սկսում երգել ու պարել²: Սոցիալական իրադարձությունների բացասական ազդեցությունից զատ, հորինվել են նաև դրանց հակադրվող երգեր, օրինակ՝ սեփական անապահովության ծաղրելը («Հինգ էժ ունեմ»³), որն ուղեկցվել է գեղջուկի նրբանկատ հումորով, կամ՝ չամուսնացած աղջկա զգացմունքներն ու մտահոգությունը («Թաք տանեհին»⁴), ինչպես և ամուսնության տարիքի հասած աղջկա հոր և մոր առաջարկած փեսացուներին ծաղրելու, անուն դնելու երևույթը («Զէ՛ դադո, չէ՛ բաբո, չեմ առնի»⁵): Երգիծական տարրեր առկա են նաև ժողովրդական երգաստեղծության այլ ժանրերում՝ քնարական («Խմորիհիդ քասխեցավ»⁶), հարսանեկան հանելուկներ («Էն դիզան»⁷) և նմանատիպ շատ օրինակներ:

² Բրուսյան 2004, 190:

³ Կոմիտաս 1969, 44-46:

⁴ Գրիգորյան 1956, 303

⁵ Մելիքյան 1953, 66:

⁶ Թումանյան 1983, 49-50:

⁷ Կոմիտաս 2000, 75:

Թեմատիկ ամբողջությունն ապահովելու համար երգիծական երգերի բաղկացուցիչ մասն են կազմում ազատ համեմատությունները, բառախաղը, ինչպես նաև գոեհիկաբանությունն ու հայիոյանքները, որոնք ժանրի համար բնորոշ տրամադրություն են ստեղծում⁸: Սակայն այդ ամենը դիմացինին վիրավորելու նպատակ չի հետապնդում, երբեմն սոցիալական բարդ իրավիճակներում գեղջուկի կյանքում թեթևություն և ծիծաղ է առաջացնում, ինչպես նաև բովանդակային առումով դաստիարակչական նշանակություն ունենում:

Կատակերգերն իրենց երաժշտական իմաստով և մտածողությամբ մոտ են պարերգերին, որոնց հատուկ են շարժման պարբերականությունը, փոքր ծավալը, կրկնությունը, հատվածների համաչափությունն ու ձևի քառակուսի կառուցվածքը: Երգիծական երգերի ձևակառուցման գործում մեծ դեր ու նշանակություն ունեն դիթամիկ պատկերները, որոնք բովանդակությամբ հաղորդում են սրություն⁹: Կատակերգերի թեմային բազմազանությունից և բանաստեղծական շարադրանքից զատ, կարևոր նախապայմաններից է մեղեդիական մտածողությունը: Կոմիտասի կատակերգերի վերաբերյալ Ռ. Աթայանը գրում է. «Կատակային-ծաղրական երգերի բովանդակությունը հաջողությամբ դրսևորվում է նրանց մեղեդիների երաժշտական հարկանիշների օգնությամբ՝ հստակ կշռությամբ կարճարև, հարու ֆրազներ, որոնք նպաստում են խոսքի պարզ արտաբերմանը, երաժշտական նախադասությունները բազմակի կրկնելու հնարավորություն (գրեթե պարային դինամիկա), պարզ արտահայտված, սուր շեշտավորվածություն, երբեմն՝ «անկյունավոր ելևէջ» և այլն»¹⁰:

Կատակերգության ժանրը Շուշիի երաժշտաթատերական կյանքում (Տբլաչի հաչան)

Կատակերգության ժանրը Արցախի թատերական կյանքում վառ դրսևորում է ունեցել: Ներկայացումների համար գրված մի շարք երգեր, ծնունդ առնելով թատրոնում և մեծ ժողովրդականություն վայելելով, մուտք են գործել գեղջուկի կենցաղ: Այդպիսի օրինակ է Կոստանդին Մելիք-Շահնազարյանի թատերական պիեսի մաս կազմող «Ըն՛, Հուռում» երգիծական երգը, և այդ առումով հպանցիկ կերպով անդրադառնանք Շուշիի թատերական կյանքին, ինչպես և Կ. Մելիք Շահնազարյանի բանահյուսական գրառումներում տեղ գտած ու հետագայում բեմականացված «Ըն՛, Հուռում» երգի ստեղծման պատմությանը:

⁸ Բրուտյան 2004, 189:

⁹ Բրուտյան 2004, 191:

¹⁰ Կոմիտաս 2000, 31:

Արցախի ազգագրական նյութերի հավաքագրման և ուսումնասիրության գործում մեծ վաստակ է ունեցել շուշեցի երգիծաբան, արձակագիր Կ. Մելիք-Շահնազարյանը (Տմբլաչի Խաչան), որը գրառել է արցախյան բարբառով հարուստ ֆոլկլորային նյութ, այդ թվում՝ կատակներ, հեքիաթներ, անեծքներ, օրհնանքներ և այլն¹¹: XIX դ. երկրորդ կեսին մշակութային կենտրոն համարվող Շուշի քաղաքում հասարակությունը բնական պահանջ ուներ թատերական ներկայացումներով կրթվելու և դաստիարակվելու, ինչին մեծապես նպաստեց ոչ միայն ժողովրդի ջերմ ընդունելությունը, այլ նաև տեղի հարուստ բանահյուսությունը¹²: Ականավոր պատմաբան, գրող, հրապարակախոս, ծնունդով շուշեցի Լեոն, մտաբերելով այդ օրերը, գրել է. «...գավառական դեմքերի վրա շեքսպիրյան հանճարի հրճվանքն էր դրոշմվել և որ ամենակարևորն է՝ շուշեցիները թափրոնի մեջ փնտրում էին ոչ այնքան գեղարվեստական, որքան ազգային դեմք»¹³:

Ժամանակի մշակութային կարևոր իրադարձություններից մեկն էր 1891 թ. Շուշիում «Խանդամիրյան թատրոնի» հիմնադրումը, որտեղ բեմադրվեցին և մեծ արձագանք ստացան ժողովրդական բանահյուսությունից գրառված մի շարք պատմություններ¹⁴: Թատերական ներկայացումներն այստեղ ուղեկցվում էին երաժշտական կատարումներով և նվագներով: Դրանք երբեմն հորինվում էին հատուկ ներկայացումների համար, իսկ ավելի հաճախ՝ ժողովրդի շրջանում տարածում գտած գեղջկական երգերն ու մեղեդիները ներառվում էին բեմադրություններում, ինչը նպաստում էր պիեսների ժողովրդականացմանն ու հանրայնացմանը: Ներկայացումների ցանկում առանձնահատուկ տեղ ունեին Կ. Մելիք-Շահնազարյանի երգիծական թատերգությունները, որոնք բեմադրվել են նաև Արցախի սահմաններից դուրս:

Կ. Մելիք-Շահնազարյանի աշխատանքներում հանդիպում է «Ղըղըցե կնանոց պընը-փէշակը»¹⁵ («Շուշեցի կանանց բանն ու գործը») ժողովրդական երգիծական պատմությունը, որի հիման վրա հորինվել է վերը հիշատակված «Հե՛յ, Հուռում» կատակերգը: Ամենայն հավանականությամբ, Տմբլաչի Խաչանն այն լսել է արցախցի կանանց միջավայրում¹⁶: Կենցաղային բովանդակությամբ այս պիեսում նկարագրված են շուշեցիների միջավայրի նիստն ու կացը, բարքերն ու սովորույթները, հարսանցուի և նրա մոր փոխհարաբերությունները ևն: Ինչպես նշել է բանահավաքը, նա «Ղըղըցե կնանոց պընը-փէշակը» պիեսի աշխատանքներն ավարտել է Հադրութում 1897 թ., որտեղ հնչել է նաև երաժշտական նյութ: Ուշադրության է արժանի

¹¹ Ղազիյան 1983, 6:

¹² Հայրապետյան 2007, 308:

¹³ Խանդամիրյան, Հարությունյան 1987, 6:

¹⁴ Հայրապետյան 2007, 311:

¹⁵ Տմբլաչի Խաչան 1882:

¹⁶ Հայրապետյան 2007, 43:

այն փաստը, որ երգում փեսացուի անունը Խաչան է, սակայն Կ. Մելիք-Շահնազարյանի պիեսի գրառումներում չենք հանդիպում նման հերոսի: Կարծում ենք՝ գրական կեղծանվան ընտրությունը պատահական չէ, և նշելով *Խաչան*¹⁷ Կ. Մելիք-Շահնազարյանը պահպանել է հեղինակի իր իրավունքը, ինչը տարածված էր աշուղական արվեստում:

Ռ. Աթայանի «Ղարաբաղ-57» գիտարշավը. «Հե՛յ, Հուռում» կատակերգը

Տմբլաչի Խաչանի «Հե՛յ, Հուռում» կատակերգի առաջին ձայնագրությունը անվանի երաժշտագետ Ռ. Աթայանը կատարել է 1957 թ. Արցախում իրականացված անդրանիկ գիտարշավի ընթացքում¹⁷: Խորհրդային Ադրբեջանի տարածքում գտնվող Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում, սեփական նախաձեռնությամբ, Ռ. Աթայանը ձայնագրել է ժողովրդական, աշուղական երգերի և գործիքային մեղեդիների շուրջ 20 օրինակ: Վերջերս հավաքագրված այդ նմուշները վերծանվել, դասակարգվել, նոտային շարվածք են ստացել և առաջիկայում կընդգրկվեն Արցախի ավանդական երաժշտությանը նվիրված ուսումնասիրության մեջ: Հարկ է նշել, որ «Հե՛յ, Հուռում» վոկալ-գործիքային կատակերգը (թառի ուղեկցությամբ) մինչ օրս կատարվում է արցախցիների շրջանում: Պարային բնույթով այս զուգերգն ուղեկցվում է Արցախում դեռ վաղնջական ժամանակներից տարածում գտած թառ գործիքի նվագակցությամբ, ինչի մասին ազգագրագետ Ստեփան Լիսիցյանը գրում է. «...*ղարաբաղցին կարծես ամբողջովին գտնվում է սագի, իսկ այժմ էլ բազմադի թառի իշխանության ներքո, որը գրեթե վերջնականապես դուրս է մղել սագին: Ղարաբաղցու փանը միշտ զենքի կողքին կախված է եղել սագը կամ թառը: Որոշ ընտանիքներ (Նոր Շենում՝ Սայի բեկի ընտանիքը) հայտնի են նրանով, որ սերնդից սերունդ փոխանցում են սագ նվագելու վարպետությունը: Նվագն այստեղ սրբազորություն է*¹⁸: Երգում նկարագրվում է տղայի և աղջկա սերը, արցախցիներին բնորոշ նուրբ և միևնույն ժամանակ սուր հումորային արտահայտություններով, ինչը նկատելի է նաև ստորև ցուցադրվող մյուս երգերում: «Հե՛յ, Հուռում»-ի բովանդակությունն արտահայտում է խնջույքային բարձր տրամադրություն, որտեղ Խաչանի և Հուռումի վիճաբանությունը վերածված է հումորի: Զուգերգն առանձնանում է նաև այս երգում առկա արցախյան անզուգական բարբառով, որը, ցավոք, քիչ է պահպանվել մեզ հասած ձայնագրություններում:

¹⁷ ՀՀ ԳԱԱ ԱԻ Ա. Քոչարյանի անվ. ձայնագրան (այսուհետև՝ ԱԻԶ), Ռ. Աթայան «Ղարաբաղ-57, տուփ 554:

¹⁸ Լիսիցյան 1981, 76:

№ 1. ՀԵՅ, ՀՈՒՌՈՒՄ¹⁹

Տղա. Հե՛յ, հե՛յ, հե՛յ Հուռում, դլետ²⁰ փեշկը (փեշ) պեց ըրա,
 Էսա կյամա Խաչանը, ծափ տո պարեք քեփ ըրա,
 Դըռ հա դըռ հա տըմբլա, Խաչանեն քեփը պեց ուրա (բաց անել):

Աղջիկ. Ջա՛ն, ջա՛ն, այ Խաչան, վեր սուֆանա վեր Խաչան,
 Էս սհաթես պեցանիմ, վններետ () տակեն խալիչա:
 Դըռ հա դըռ հա տմբլա, Խաչանեն քեփը պեցուրա:

Տղա. Համ լավ կինի լավ փլավ, բոլ կերալմ լավ խմալ,
 Ջուբս (գրպան, ջեբ) լիզը շբաշավ (շաբաշ), տոնմ պերալ քեզ մհար
 (համար):

Աղջիկ. Չէ, չէ, այ Խաչան, հրսանեքտ մահնայա,
 Թազա հարթնանը (հարս) պաչալըս, էտ շաբաշտ մահնայա (պատճառ):

Տղա. Կարքեն պահէ քեզ Հուռում, հինչս յըրաս () կոկոում,
 Վեր Խաչանը կզնվից, համ կրակ ա, համ զուլում:
 Դըռ հա, դըռ հա, տըմբլա, Հուռումէն օրը սըվ մնա:

Աղջիկ. Մեր բուտանըմը թանագա (խաղողի վագ), դրբզըմը (դարպաս)
 փալանգա (փակ),
 Կըզնվմել (բարկանայ) այ Խաչան, հինչ ասըմըմ հանագյա:

Տղա. Մատաղ ինիմ հինագիտ, էտ քու տնգաժ թինաքիտ,
 Հինչս մհակավ (ճիպոտ) անըմ, տըռանը կապաժ փիլանգին (փական):

Աղջիկ. Սերը սրտետ լեն կենա, հըրսնքներըմը քեփ ըրա,
 Իմը տուվս այ Խաչան, վննմ իլալ քու պաչան:

Միասին. Սերավ ինինք լավ ինինք, կտոց մուշուհավ ինինք,
 Հիշքան ապրինք ըշխարքմ, միշտ սերավ ու լավ ինինք:
 Դըռ հա, դըռ հա, տմբլա, Խաչանեն քեփը պեցուրա:

¹⁹ ՀՀ ԳԱԱ ԱԻՁ, Ռ. Աթայան «Ղարաբաղ-57, տուփ 554, № 13, կատ.' Մովսիսյան Սերգեյ, ք. Ստեփանակերտ: Նոտային և տեքստային վերծանությունը կատարել է Մ. Տիգրանյանը, 2021 թ.:

²⁰ Ղլեպ՝ վերնահագուստ: Կատակերգերում առկա արցախյան բարբառային որոշ բառերի բացատրությունը (տե՛ս Սարգսյան 2019) այսուհետև կնշվի տվյալ բառի մոտ՝ փակագծերում:

թառ

$\text{♩} = 100$

tr

tr

tr

tr

ritardando *tr*

ձայն

$\text{♩} = 69$

թառ

Հե՛յ, հե՛յ, հե՛յ Հու - ռում, ղը - լետ փե՛կը պեց ը - թա,

Է - սա կա - մա Խա - չա - նը, ծափ տո պա - ռիք քեփ ը - թա,

Հա ղըռ - ղը - ռա, ղըռ - ղը - ռա, Խա - չեն քե - փը պեց ը - թա,

Է - սա, կա - մա Խա - չա - նը, ծափ տո պա - ռիք քեփ ը - թա:

«Հե՛յ, Հուռում» կատակերգը զարգանում է կվինտային հենքով իոնական ձայնակարգում, որին առանձնահատուկ գունեղություն է հաղորդում ալտերացված բարձր երկրորդ աստիճանը (II⁺): Ինչպես հայտնի է, ալտերացված հնչյունները միտված են հարստացնելու ժողովրդական երաժշտության

հնչողությունը: Այստեղ լադային անկայուն աստիճանների ձգողականությունը դեպի կայուն աստիճաններ նպաստում է ձայնեղանակի սահմաններում դրա սրմանն ու երանգավորմանը (eis-fis)՝ առավել ընդգծելով երրորդ աստիճանը (fis)²¹:



Կատակերգում մեծ նշանակություն ունի առաջին աստիճանի կայունությունը, որը փոխկապակցված է կվինտային (a) և որոշ դեպքերում նաև օկտավային (d') տոների հետ²²: Պարային ռիթմական պատկերների մեղեդային կրկնությունը՝ թառի և ձայնի հաջորդումով, տարբեր զարդանախշերի բազմազանությունը և մաժոր լադի առկայությունն ընդգծում են երգի հումորային բնույթն ու աշխուժությունը:

Ա. Քոչարյանի ձայնագրած «Նախշուն աքիր» կատակերգը

1925 թ. անվանի կոմպոզիտոր և հասարակական գործիչ Ռոմանոս Մելիքյանը ԼՂԻՄ-ի կառավարության կողմից Ստեփանակերտում երաժշտական ուսումնարան հիմնելու առաջարկ ստացավ և անհապաղ մեկնեց Լեռնային Ղարաբաղ²³: Այդ ազգանվեր գործում նրան աջակից եղան երաժշտագետ Արամ Քոչարյանը և երգչուհիներ Արուս Բաբայանը (Ռ. Մելիքյանի կինը), Թամար Շահնազարյանը: Նամակներից տեղեկանում ենք, որ Ռ. Մելիքյանը և Ա. Քոչարյանը Լեռնային Ղարաբաղում ոչ միայն մանկավարժական, այլև բանահավաքչական գործունեություն են իրականացրել, որի ընթացքում Ռ. Մելիքյանը ձայնագրել է «Գյուլ-Գյուլիստան» երգը, այն մշակել և հետագայում ընդգրկել է իր «Ձառ-վառ» վոկալ շարքում²⁴: Ներկայացվող «Նախշուն աքիր» կատակերգը Ա. Քոչարյանը նույնպես ձայնագրել է Ստեփանակերտում 1925 թ. և հետագայում մշակել երգչախմբի համար²⁵:

²¹ Բրուտյան 2004, 43-44:

²² Кушнарѳев 1958, 543.

²³ Տիգրանյան, Սարգսյան 2024:

²⁴ Տե՛ս Մելիքյան 1949, 35:

²⁵ Հավելենք, որ ՀՀ ԳԱԱ ԱԻՁ Ա. Քոչարյանի ֆոնդում պահվող գիտարշավային շուրջ 1000 ձայնագրություններում, որոնք երաժշտագետն իրականացրել է Արվեստի ինստիտուտում աշխատելու տարիներին, «Նախշուն աքիր» երգը չի հանդիպում, տե՛ս Ա. Քոչարյանի ֆոնդ, տուպի № 29-78 (76-125):

№ 2. ՆԱԽՇՈՒՆ ԱՔԻՐ

Նախշուն աքիր (քույրիկ, տիկին), նախշուն աքիր,
Նախշուն աքիր, նախշուն աքիր:

Պաքվա (Բաքու) պասիկլեն (ծանրոց) կերալըմ,
Նախշուն աքիր,
Սառ ջուրը երան խըմալըմ,
Նախշուն աքիր.
Եկ, եկ, Ծատուրը ջան,
Եկ, քե մատաղ, Մատուրը ջան,
Աչքերիդ, ունքերիդ,
Ղալամիդ (գեղեցկություն) մատաղ,
Ծատուրը ջան, Մատուրը ջան,
Ծատուրը ջան, Մատուրը ջան:

Խոխան շկոլանըմ քըցալ,
Շկոլան փողը օզում ան,
Ծատուրը ջան, Մատուրը ջան,
Ծատուրը ջան, Մատուրը ջան,
Նախշուն աքիր:

Քյոխվան (գյուղի կառավարիչ) տոռնը (դուռ) թակում ա,
Նախշուն աքիր,
Ե՛կ, ե՛կ, Ծատուրը ջան,
Ե՛կ, քե՛ մատաղ, Մատուրը ջան,
Աչքերիդ, ունքերիդ,
Ղալամիդմատաղ,
Ծատուրը ջան, Մատուրը ջան,
Ծատուրը ջան, Մատուրը ջան:

Ինչպես և նախորդ օրինակը, «Նախշուն աքիր» կատակերգը նույնպես զարգանում է կվինտային օժանդակ հենքով իոնական ձայնակարգում (F-gis-a-b-c-d-e), որին վառ զունեղություն է հաղորդում ալտերացված II աստիճանը (gis)՝ կվինտային (c) տոնից բացի, կարևորելով նաև տերցիային տոնը (a): Կարելի է փաստել, որ Արցախում այդ ձայնակարգը բավականին տարածում է ունեցել:

♩.=76

Նախ-շուն ա - քիր, նախ-շուն ա - քիր, նախ-շուն ա - քիր, նախ-շուն ա - քիր,
 Դար-վա պա - սիլ - կեն կն - բալ ըմ, նախ - շուն ա - քիր,
 Սառ ջու - ըը և - ռան խը - մալ ըմ, նախ - շուն ա - քիր,
 Եկ, եկ, Ծա - տուր ջան,
 Եկ քն մա - տադ, Մա - տուր ջան,
 Աչ - քն - ըիդ, ուն - քն - ըիդ, դա - յա - միդ մա - տադ
 Ծա - տուր ջան, Մա - տուր ջան,
 Ծա - տուր ջան, Մա - տուր ջան:

Մ. Մուրադյանի «Ղարաբաղ-58» գիտարշավը. «Տերտեր, միրուքը խուզիր» կատակերգը

Արցախ աշխարհում իրականացված առաջին պաշտոնական գիտարշավը տեղի է ունեցել 1958 թ. Մ. Մուրադյանի ղեկավարությամբ, որին մասնակցել են Սերիկ Դավթյանը, Տելեմակ Ավետիսյանը²⁶: 1958 թվականը հատկանշան էր նրանով, որ Գիտությունների ակադեմիայի համակարգում ստեղծվեց Արվեստի ինստիտուտ, որը մինչ այդ գործում էր որպես արվեստների պատմության և տեսության սեկտոր, ու Մ. Մուրադյանն ստանձնել էր Արվեստի ինստիտուտի գիտական քարտուղարի և Ժողովրդական երաժշտության բաժնի վարիչի պաշտոնները²⁷: Ժողովրդական երաժշտության առջև դրված առաջնային խնդիրներից էր ՀԽՍՀ-ի տարբեր մարզերում, ինչպես և հանրապետության սահմաններից դուրս՝ հայաբնակ վայրերում բանահա-

²⁶ Տիգրանյան, Սարգսյան 2022, 230:

²⁷ Ասատրյան 2010, 40:

վաքչական աշխատանքներ իրագործելը: Այդ առումով Ադրբեջան ԽՍՀ-ի կազմի մեջ գտնվող Լեռնային Ղարաբաղում Մ. Մուրադյանի 1958 թ. ծեռնարկած գիտարշավն առաջինն է, որի բանահավաքչական աշխատանքների ընթացքում գրանցվել և կորստից փրկվել է 52 գեղջկական և աշուղական վոկալ-գործիքային նմուշ: Գիտարշավի բոլոր ձայնագրությունները 1980-90-ական թթ. վերծանել է Մ. Մուրադյանի որդին՝ երաժշտագետ, դաշնակահար Աշոտ Մուրադյանը, որից լույս են տեսել ընդամենը 18-ը՝ «Հայ ավանդական երաժշտություն» (այսուհետև՝ ՀԱԵ) մատենաշարի հատորներում: Հրատարակված օրինակների ցանկում է նաև ստորև դիտարկվող «Տերտեր միրուքդ խուզիր» կատակերգի գործիքային տարբերակը²⁸: Կարծում ենք՝ այն Արցախում լայն տարածում է ունեցել, քանի որ երգի վոկալ-գործիքային տարբերակը հանդիպում է նաև Ռ. Աթայանի 1957 թ. ձայնագրություններում: Այսպիսով, երկու երաժշտագետների Արցախյան գրառումներում հանդիպում ենք այս կատակերգի գրեթե նույնանման երեք օրինակի, որը փաստում է տարածաշրջանում երգի տիպական մտածողության մասին:

Դարեր շարունակ Հայ Առաքելական Եկեղեցին ազգային ինքնության պահպանման կարևորագույն հենասյուներից է եղել, և հայ ժողովրդի ողբերգական իրադարձություններով լի բազմադարյա պատմության ընթացքում պետականությունը կորցրած ազգին փրկել է եկեղեցին, որի շուրջ կարողացել է համախմբվել հայությունը: Ցավոք, խորհրդային իշխանության հաստատումից հետո եկեղեցին թիրախավորվեց, իսկ նրա սպասավորները ենթարկվեցին հալածանքների: Հոգևորականների հանդեպ գաղափարական ճնշումներն իրենց արտացոլումը գտան նաև ժողովրդական երգերում, մասնավորապես կատակերգերում: Հանուն արդարության ասենք, որ որոշ անբարեխիղճ վանականների ծաղրել են նաև ավելի վաղ ժամանակներում՝ խորհրդային կարգերի հաստատումից շատ ավելի առաջ, ինչի վառ ապացույցն են՝ Կոմիտաս վարդապետի («Աստված անեղ»²⁹), Մ. Թումանյանի («Էսօր մեր տերտեր զիկ ասաց»³⁰), կամ Սպ. Մելիքյանի («Արևն առե լուսե լուս»³¹) գրառած երգիծական երգերը.

*Աման, տերտեր, ամոթ ա,
Տերտեր փարին կարոտ ա,
Տերտեր մապներ խաղցրեց,
Շահին կապեկ փախցրեց*³²:

²⁸ ՀԱԵ 2008, 112-114:

²⁹ Կոմիտաս 2004, 108:

³⁰ Թումանյան 2005, 44:

³¹ Մելիքյան, Գարդաշյան 1928:

³² Մելիքյան 1953, 67:

№ 3. «ՏԵՐՏԵՐ, ՄԻՐՈՒՔԴ ԽՈՒՉԻՐ»³³

թառ

ձայնին միանում է թառը (unison)

ձայն

Տեր - տեր, մի - րու - - - քըդ խու - զի՛ր,

Մեզ - նի՛ց թո - դու - թյուն ու - զի՛ր,

Վարձ - քըդ կը - տանք կը - խը - մենք,

Տեր - տեր աչ - քըդ կը - հա - նենք:

թառ

Ներկայացվող օրինակում բանաստեղծական տեքստը շարադրվում է յամբական 7-վանկանի տաղաչափությամբ: Այստեղ անապեստի խառնուրդը լինում է տողի սկզբում և վերջում, ապա նաև շարժական ձևով առաջին կամ երկրորդ մասում:

<i>Տեր-տե՛ր, մի-րու՛-քըդ խու-զի՛ր,</i>	(7)	} 2 անգամ
<i>Մեզ-նի՛ց թո-դու՛-թյուն ու-զի՛ր,</i>	(7)	
<i>Վարձ-քը՛դ կը-տա՛նք, կը-խը-մե՛նք,</i>	(7)	
<i>Տեր-տե՛ր, աչ-քը՛դ կը-հա-նե՛նք:</i>	(7)	


*Տերտեր, թե դու մարդ էղար,
Քո ջոջ բալեն փառք էղավ,
Թե որ թոթը կխմենք,
Տերտեր, քեզ դուրս կհանենք:
Տերտեր, միրուքդ խուզիր,*

³³ ՀՀ ԳԱԱ ԱԻՁ, Մ. Մուրադյան «Ղարաբաղ-58», տուփ 204-5ա, № 41, կատ.՝ Նիկողոսյան Փառանձեմ, թառով նվագակցում է Բաղդամյան Զինավարը, Հաղորդի շրջան, Մեծ Մազրա գյուղ: Նոտային և տեքստային վերծանությունը կատարել է Ա.Մուրադյանը, 1981 թ.:

*Մեզնից թողություն ուզիր,
Վարձքդ կտանք, կխմենք,
Տերտեր, աչքդ կհանենք:*

Ս. Աբեղյանը գրում է. «Երկանդամ 7-վանկանի ուրանավորում գլխավոր կամ հիմնարար շեշտերը 4-րդ և 7-րդ վանկերի վրա են, իսկ ռիթմական բոլոր շեշտերի թիվն է երեք՝ 2, 4, 7 վանկերի վրա (ս' ս' սս')»³⁴: Ժողովրդական երգաստեղծության մեջ 7-վանկանի քառյակի օրինակ է «Էս գիշեր, լուսնակ գիշեր» սիրերգը (Է՛ս գիշե՛ր, / լուսնա՛կ գիշե՛ր, // Ձո՛ւնն էկե՛լ, / գետի՛ն նախշե՛ր.)³⁵:

Կատակերգի մեղեդու հիմքում նույն ժանրին պատկանող հայկական ժողովրդական «Ավլեմ, թափեմ փոշին» երգն է: Ներկայացվող նմուշը դարձյալ ուղեկցվում է թառով, և ի տարբերություն նախորդ օրինակի՝ այստեղ զարդանախշերն ու թռիչքները սակավ են, ավելի հաճախ են կրկնվում մեղեդային դարձվածքները: Երգը զարգանում է տերցիային հիմքով էոլական ձայնակարգում: Այն ժողովրդական երգաստեղծության մեջ հաճախ հանդիպող ձայնեղանակներից է:



Երգում տարբեր ռիթմական պատկերներով թառի և ձայնի բաժիններում հատուկ ընդգծվածություն ունի տերցիային տոնը (E-g-): Որպես կանոն, տերցիային հիմք ունեցող էոլական լադում շարադրվող ժողովրդական երգերը փոքրածավալ են՝ կվարտա-կվինտա ինտերվալային ձայնածավալով:

«Դերունց ծյորումը» կատակերգը

Արցախի ավանդական երաժշտության ուսումնասիրությունը շարունակելով՝ 2020 թ. առ այսօր նախաձեռնել և իրականացրել ենք արցախյան ֆոլկլորի լավագույն կրողների և բանասացների արժեքավոր օրինակների ձայնագրությունները՝ նպատակ ունենալով ամբողջ գրանցված նյութն ընդգրկել համահավաք աշխատանքում: 2021-2023 թթ. Արցախում տեղի ունեցող ողբերգական իրադարձությունները մեր հայրենակիցներին ստիպեցին բռնել գաղթի ճանապարհը և սփռվել Հայաստանում ու նրա սահմաններից դուրս: Այս ծանր օրերին, գիտակցելով երաժշտական ֆոլկլորի գրանցման ու պահպանման կարևորությունը, արցախցիները կատարում և մեզ են փոխանցում երգային արժեքավոր նմուշներ: Արդ, ներկայացնենք 2021 թ. ՀՀ

³⁴ Աբեղյան 1971, 180, 182:

³⁵ Կոմիտաս 2003, 91:

ԳԱԱ արվեստի ինստիտուտում գրանցված «Դերունց ծյորումը» (Տերտերի ծորում) կատակերգը: Այս երգի և մի շարք այլ արցախյան գեղջկական նմուշների փոխանցման գործում իր նվիրումն ու աջակցությունն է ցուցաբերել բ.գ.դ., բանագետ, մշակութաբան Թամար Հայրապետյանը, որը նաև մեզ օգնել է բարբառային ճշգրտումների հարցում: «Դերունց ծյորումը՝ Տերտերի ծորը, Արցախում հայտնի տեղանք է, որտեղ հաճախ գաղտնի հանդիպել են սիրահար զույգերը: Ներկայացվող կատակերգը մինչ օրս հնչում և կատարվում է արցախցիների շրջանում: «Դերունց ծյորում»-ը, ի տարբերություն նախորդ վերլուծված երգերի, հորինվել է ոչ վաղ անցյալում, 1930-ական թթ., և հեղինակն է ճարտարցի գուսան Բագրատը (Բագրատ Ավետիսյանը), որի հայտնի երգերից են՝ «Բժիշկ, դեղ դիր վերքիս», «Սալաթ-Նովա», «Ընկերացու», «Արև ես դու ինձ համար»:

№ 4. «ԴԵՐՈՒՆՑ ԾՅՈՐՈՒՄԸ»³⁶

8
 Մին օր քե - ցե տես - նեմ դե - րանց ծյո - րու - մը
 Մին դա - շանգ ախ - ճիգ կա - նաչ կար - միր ծյո - րու - մը:
 Ա - սի՝ «ախ - ճի, հու՛վ ըս, հինչ ըս հո՛ւր կը - կյանս
 Տու իմ սա - զի վե - թին դա - մին տուր կը - կյանս:

Տղա. Մին օր քեցե, տեսնեմ դերանց ծյորումը
 Մին դաշանգ ախճիգ կընընչ-կարմիր շորումը:
 Ասի՝ «ախճի՛, հուվըս, հինչըս շոռ կըկաս,
 Տու իմ սազին վերին դամին տուր կը կյաս:

Տղա. Ախչի՛, լավնըս իմ սազի սոյբաթիցը,

³⁶ Ձայնագրվել է 2021 թ., կատարում է Թամար Հայրապետյանը, ՀՀ ԳԱԱ ԱԻ, Երևան: Նոտային և տեքստային վերծանությունը կատարել է Մ. Տիգրանյանը, 2021 թ.:

Ամա շատ ըմ վախըմ Մանաս դայուցը,
Ես էն տարեն նյոքյարըմ իլալ ծեր տանը,
Քու հար ասըլա. «իրես չըն տալ էն շանը»:

Աղջիկ. Թա օզըմ ըս ծեր տոնը հարս տանիս
Վախըմ ըմ թա տանի ետնան փուշմանիս
Իմ հար չար ա, տու էտ մինը լավ գիդաս,
Ընդրա թոփեն տու կարել չըս տեմ կենաս:

Տղա. Թա սիրըմ ըմ քո հար էլ կյա, քո մար էլ,
Ձոռավ էլա պիտի տանիմ, այ իմ սեր,
Ես փոխել չըմ քու հոր խելքը քու մագին,
Վեղըս քու հոր տեմ ու տերտակ կընդագին:


Աղջիկ. Պա էն հունց ա, վեր տու էլ մի նոր քեցիր,
Մեր պաներն ու զուրաթանը կյուղացիր,
Իմ հարն եկավ շանավ փադավ ու տիրավ
Մին մըծ փանար աշկետ տակեն ցեց տիրավ:

Տղա. Ախշի՛, հի՞նչ ըս քյոհնա տերման քամուն տամ
Ձոռավ հի՞նչ ըս խամ եզանը սյամուն տամ
Ես գիդըմ ըմ, մըտկըմըտ կա, եկ խոսք տանք,
Ետնան ուրուր ջան ասինք՝ ջան ըսկանանք:

Աղջիկ. Էսա քանե վախտ ա ըստեղ ես դուղու,
Աշկըս հենա քրզ նըման դաշանգ մին տղու,
Թահիք կըկյա ըստեղ մին լավ խաղ կանչի,
Վեր իմ սըրտըս ընդրա խաղան կընանչի:

Միասին. Սերին հետի հարուստ-քյասիք պեն չկա,
Հըվատըմ չըս՝ առ էս պաչըս քեզ վկա:
Սերը սեր ա, սերը երգ ա ու կինի,
Ծերքտ ինձ տո, իմ սերն էլ թող քեզ ինի:

Երգի պարայնությունն ընդգծում են թեթև ու թանկան պատկերները, պարզ մեղեդիական շարադրանքը: «Դերունց ծյորումը» կատակերգը զուրկ է զարդանախշերից և բարդ մետրից, որի շնորհիվ մեղեդին ավելի պարզունակ է, իսկ բովանդակությունը՝ շեշտված, զարգանում է կվինտային հենքով էոլական ձայնակարգում:



Երգին յուրօրինակ գունավորում է հաղորդում VII աստիճանը, որը վերին քառալարում հանդես է գալիս բնական (f), իսկ ստորին քառալարում՝ հարմոնիկ (fis) ձևով:

Եզրակացություններ

Արցախյան ավանդական երգաստեղծության մեջ իրենց տիպական օրինակներով առանձնանում են հորովելներն ու օրորները, որտեղ լավագույնս դրսևորվել է ժողովրդական երգամտածողության հին ձայնակարգերից՝ փոյուզիականը (բնորոշումը պայմանավորված է նաև օրինակների բազմազանությամբ): Մեզ հասած երգիծական երգերի սակավությունը հնարավորություն չի տալիս բնորոշել տարածաշրջանի՝ տվյալ ժանրին բնորոշ երաժշտական լեզվամտածողության տիպական առանձնահատկությունները, թեև գուցե դա ավելորդ է, քանզի, ի տարբերություն վիպերգերի, հորովելների, տոնածիսական երգերի, կատակերգերի դեպքում դժվար է խոսել երաժշտական լեզվի տիպական դրսևորումների, բանաձևային երգամտածողության, կայուն դարձվածքների և «բնորոշ» ձայնակարգերի մասին, որը խիստ տրամաբանական է:

Ներկայացված երգերն իրենց ձայնեղանակային դրսևորումներով տարբեր են. «Շէ՛յ, Հուռում»՝ տեղիային օժանդակ հենքով իոնական ձայնակարգ (իոն.³), «Տերպեր, միրուքդ խուզիր»՝ տեղիային հենքով էոլական, (էոլ.³) և «Դերունց ծյորումը»՝ կվինտային հենքով էոլական (էոլ.⁵): Կատակերգերն ինքնին շատ բազմազան են, բազմաբովանդակ և դրանց նվազ քանակը բնավ չի թերարժևորում ժանրի բնորոշ գծերն ու տիպական առանձնահատկությունները: Տարբեր ժամանակներում ձայնագրված ղարաբաղյան կատակերգերն իրենց մեղեդայնությամբ և բազմազանությամբ հարստացնում են Արցախ աշխարհի ավանդական ժողովրդական երգարվեստի շտեմարանը:

Օգտագործված գրականություն

- Ասատրյան Ա. 2010, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ – 50, Երևան, «Գիտություն», 395 էջ:
 Աբեղյան Մ. 1971, Երկեր, Հայոց լեզվի տաղաչափություն (մետրիկա), հ. Ե, խմբ.՝ Աղայան Է., Հակոբյան Հ., Հարությունյան Բ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 512 էջ:
 Բրուտյան Մ. 2004, Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, Երևան, «Ամրոց գրուպ», 256 էջ:
 Գրիգորյան Գ. 1956, Հատընտիր հայ ժողովրդական բանահյուսության [V-XX դդ.], կազմ.՝ Գրիգորյան Գ., խմբ.՝ Հարությունյան Ա., Երևան, «Հայպետհրատ», 390 էջ:

- Թումաճան Մ. 1983, Հայրենի երգ ու բան, հ. 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 439 էջ:
- Թումաճան Մ. 2005, Հայրենի երգ ու բան, հ. 4, Երևան, «Ձանգակ», ՀՀ ԳԱԱ ԱԻ, 431 էջ:
- Լիսիցյան Ստ. 1981, Լեոնային Ղարաբաղի հայերը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 12, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 144 էջ:
- Խանդամիրյան Բ. 1987, Հարությունյան Ս. Էջեր Շուշիի հայ թատրոնի անցյալից, Երևան, 57 էջ:
- Կոմիտաս 1969, Երկերի ժողովածու, Խմբերգեր, հ. 3, Երևան, «Հայաստան», 308 էջ:
- Կոմիտաս 2000, Երկերի ժողովածու, հայ ժողովրդական երգեր (Բ), հ. 10, կազմ.՝ Աթայան Ռ., Երևան, «Գիտություն», 214 էջ:
- Կոմիտաս 2003, Երկերի ժողովածու, Հայ ժողովրդական երգեր (Դ), հ. 12, կազմ.՝ Աթայան Ռ., խմբ.՝ Աթայան Ռ., Գյոդակյան Գ., Երևան, «Գիտություն», 208 էջ:
- Կոմիտաս 2004, Երկերի ժողովածու, Հայ ժողովրդական երգեր (Ե) հ. 13, Հայ ժողովրդական երգեր Գիրք Ե, կազմ.՝ Աթայան Ռ., խմբ.՝ Աթայան Ռ., Գյոդակյան Գ., Երևան, «Գիտություն», 224 էջ:
- Հայ ավանդական երաժշտություն 2008, Հայ նվագարանային երաժշտություն, պարեղանակներ, պրակ 1, նոտագրեց և կազմեց Ա. Մուրադյանը, Երևան, «Ամրոց գրուպ», 176 էջ:
- Հայրապետյան Թ. 2007, Թատերական կյանքը Շուշիում (XIX դ. երկրորդ կես և XX դ. առաջին տասնամյակներ), Շուշին Հայոց քաղաքակրթության օրրան (Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր), պատ. խմբ.՝ Մաղալյան Ա., Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., էջ 308-319:
- Հայրապետյան Թ. 2007, Կոնստանդին Մելիք-Շահնազարյան (Տմբալազի Խաչան): Կյանքն ու գործը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 24, Երևան, «Գիտություն», 221 էջ:
- Ղազիսյան Ա. 1983, Հայ ազգագրություն և բանահյուսություն, Արցախ, հ. 15, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 192 էջ:
- Մելիքյան Ռ. 1949, Ձառ-վառ, N 8, «Գյուլ-գյուլի», խմբ.՝ Գ. Բուդաղյան, Երևան, «Հայպետհրատ», 109 էջ:
- Մելիքյան Սպ. 1953, Հայ ժողովրդական երգեր և պարեր, հ. 2, Երևան, «Հայպետհրատ», 266 էջ:
- Մելիքյան Սպ., Գարդաշյան Գ. 1928, Վանա ժողովրդական յերգեր, Ազգագրական ժողովածու, պրակ 2, Հավելված ՀԽՍՀ գիտության յեվ արվեստի ին-տի N 1 տեղեկագրի, Երևան, 18 էջ:
- Սարգսյան Ա. 2019, Ղարաբաղի բարբառային բառարան (2-րդ լրամշակված հրատ.), Արցախի Հանրապետության ԿԳՄՆ, Արցախի պետական համալսարան, Երևան, «Էդիթ պրինտ», 845 էջ:
- Տիգրանյան Մ., Սարգսյան Լ. 2021, Արցախյան հոռովելներ, Արվեստագիտական հանդես, N 2 (6), էջ 123-134:
- Տիգրանյան Մ., Սարգսյան Լ. 2022, Մաթևոս Մուրադյանի «Ղարաբաղ-58» գիտարշավը, Գիտական Արցախ, N 2 (13), էջ 230-241:
- Տիգրանյան Մ., Սարգսյան Լ. 2024, Ռոմանոս Մելիքյանի արցախյան գործունեության անհայտ էջերը, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2 (671), էջ 280-290:
- Տմբալազի Խաչան 1882, Ղըըըցե կանանց պընը-փեշակը, Թիֆլիս, «Movses Vardanean» տ-ն, 36 էջ:

Кушнарёв Хр. 1958, Вопросы истории и теории армянской монодической музыки, Ленинград, АН АССР, Гос. муз. изд., 626 с.

ТРАДИЦИОННЫЕ ШУТОЧНЫЕ ПЕСНИ АРЦАХА

Марианна Тигранян, Линда Саргсян

Резюме

Сатирические песни – один из популярных, но малоизученных жанров армянского народного песнетворчества. Сбором и изучением арцахского фольклора учёные стали заниматься ещё с середины XIX в. (епископ Мака́р Бархударян, архимандрит Хачик Дадян), известные исследователи (братья Баатрянны, Карапет Мелик-Шахназарян, Тмблаци Хачан), этнографы (Ерванд Лалаян, Степан Лисицян, Алвард Газиян), благодаря чему удалось сохранить огромное наследие устного творчества этого древнего исторического региона армянского мира. Накопленный материал создаёт возможность и перспективы для научных исследований. К сожалению, этого нельзя сказать о традиционной музыке Арцаха, где полевые работы музыковедами стали осуществляться начиная лишь со второй половины XX в. Столетняя временная разница между записями жемчужин народной устной литературы и музыкального фольклора, безусловно, имела свои негативные последствия: многие ценные образцы народной музыки попросту были безвозвратно утеряны. Ярким доказательством сказанного являются опубликованные в различных этнографических сборниках поэтические тексты народных песен, о музыкальной составляющей которых мы не имеем какого-либо представления.

Полевыми работами по сбору музыкального фольклора Арцаха занимались архимандрит Комитас, Григор Сюни, Степан Демуриян, Роберт Атаян, Арам Кочарян и Матевос Мурадян. В данной статье в качестве четырех ярких примеров популярных в Арцахе сатирических песен представлены «Нахшун акир» /Прекрасная тётя/ (запись А. Кочаряна, Степанакерт – 1925 г.), «Эй, Урум» (запись Р. Атаяна, «Нагорный Карабах – 1957»), «Тертер, мирукд хузир» /Поп, сбрей бороду/ (М. Мурадян, «Нагорный Карабах – 1958») и недавно записанная нами песня «Дерунц Цёрум» /Долина священников/ (НАН РА Институт искусств, Ереван – 2024).

Ключевые слова – традиционная музыка Арцаха (Нагорный Карабах), шуточные песни, А. Кочарян, Р. Атаян, М. Мурадян, театр Хандамиряна, К. Мелик-Шахназарян (Тмблаци Хачан).

TRADITIONAL JOKE SONGS OF ARTSAKH

Marianna Tigranyan, Linda Sargsyan

Abstract

Continuing the series of studies devoted to various genres of traditional music of the Artsakh region, this article presents for the first time folk joke songs of Artsakh. Satirical songs are one of the popular but less-studied genres of Armenian folk songwriting, hence the first publication of the musical examples presented below will be of interest to specialists. Archimandrite Komitas, Grigor Syuni, Stepan Demuryan, Robert Atayan and Matevos Muradyan made a great contribution to the recording and collection of the musical folklore of Artsakh. Three examples of joke songs popular in Artsakh are considered within the framework of the present study: "Hey! Hurum" (recorded by R. Atayan, Nagorno-Karabakh, 1957), "Terter, mirukd khuzir" (recorded by M. Muradyan, Nagorno-Karabakh-1958) and the recently recorded song "Derunts Tsyorum" (A. Kocharyan Phonothek of the Art Institute of NAS RA, 2024).

The collection and study of Artsakh folklore has been practiced by scholars since the middle of the XIX century (Bishop Makar Barkhudaryan, Archimandrite Khachik Dadyan), famous researchers (Baatryan brothers, Karapet Melik-Shahnazaryan, Tmblachi Khachan), ethnographers (Ervand Lalayan, Stepan Lisitsyan, Alvard Ghaziyanyan), as a result of which a huge heritage of oral art of this ancient historical region of the Armenian world was saved from loss. The accumulated material gives great opportunities and prospects for scientific research. Unfortunately, this cannot be said about the traditional music of Artsakh, where fieldwork by musicologists has been carried out only since the second half of the twentieth century. The hundred-year time difference between the recordings of the pearls of folk oral literature and musical folklore certainly had its negative consequences: many valuable samples of folk music were simply irretrievably lost. The poetic texts of folk songs published in various ethnographic collections, about the musical component of which we have no idea, are a vivid proof.

Archimandrite Komitas, Grigor Syuni, Stepan Demuryan, Robert Atayan, Aram Kocharyan and Matevos Muradyan were engaged in fieldwork to collect the musical folklore of Artsakh. In this article are presented four vivid examples of popular satirical songs: "Nakhshun Akir" /Beautiful Aunt/ (recorded by A. Kocharyan, Stepanakert – 1925), "Hey, Urum" (recorded by R. Atayan, "Nagorno-Karabakh – 1957"), "Terter, mirukd khuzir" /Priest, shave off your beard / (M. Muradyan, "Nagorno-Karabakh – 1958") and recently recorded by us song "Derunts Tserum" /Priests' Valley/ (NAS RA Institute of Arts, Yerevan – 2024).

Key words – Traditional music of Artsakh (Nagorno-Karabakh), joke songs, A. Kocharyan, R. Atayan, M. Muradyan, Khandamiryanyan Theater, K. Melik-Shahnazaryan (Tmblachi Khachan).

ԿՈՄԻՏԱՍԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՂՈՒ «ՊՈԼՍԱԿԱՆ» ՇՐՋԱՆԻ ՄԵԿՆԱՐԿԸ

Մեեր Նավոյան

Արվեստագիտության դոկտոր
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղդասարյան 24գ
Էլ. havgub' mhernavoyan@gmail.com
ORCID: 0009-0008-1081-1639

Հոդվածը ներկայացվել է 08.06.2024, գրախոսվել է 19.06.2024, ընդունվել է տպագրության 03.12.2024
DOI: 10.53548/0320-8117-2024.3-207

Ամփոփում

Կոմիտասի կյանքի և ստեղծագործական ուղու «պոլսական» շրջանն ընդունված է հաշվել 1910 թվականից, երբ նա հեռացավ Էջմիածնից:

Այն փաստարկները, որ բերվել են այս փուլայնացումը սահմանելիս, առնչվում են Կոմիտասի կյանքի մի շարք իրողությունների. այդ շրջանում Էջմիածնի միաբանությունում տիրող բարդ իրավիճակը, որ ներկայացվել է իբրև Կոմիտասի անձի հանդեպ հալածանք, Կոմիտասի՝ կաթողիկոսին գրած նամակների անհետևանք մնալը, Կ. Պոլսում կոնսերվատորիա հիմնելու ծրագիրը և այլն:

Այսօր արդեն հրապարակված փաստաթղթերի և նամակների համադրությունը թույլ է տալիս պնդել, որ նշվածներից Էջմիածնի միաբանության երկու թևերի պայքարը չի կարող դիտարկվել որպես Կոմիտասի անձի դեմ ուղղված հալածանք, թեև այն բացասական դեր է ունեցել Կոմիտասի գործունեության տեսանկյունից: Այդուհանդերձ, աշխարհայացքային տարբերություններով պայմանավորված այդ պայքարի ֆոնին Կ. Պոլսում հաստատվելու համար առավել վճռորոշ է եղել նոր կաթողիկոսի ընտրությունը 1911 թվականի ավարտին: Պահպանված այլ փաստաթղթեր ևս վկայում են, որ միաբանությունից հեռանալու խնդրանքով Կոմիտասը պաշտոնապես դիմել է Էջմիածին հենց այդ շրջանում: Խնդրանքը բավարարվել է 1912 թվականի սկզբին: Մինչև դա նա համերգներով ու դասախոսություններով շրջագայել է Օսմանյան կայսրությունում և եվրոպական մի շարք երկրներում՝ կապված մնալով Էջմիածնի միաբանությանը: Ուրեմն, Կոմիտասի կյանքի և ստեղծագործական ուղու «պոլսական» շրջանը պետք է հաշվել այս վերջին տարեթվից սկսած:

Բանալի բառեր՝ Կոմիտաս, Մատթեոս Բ Իզմիրլյան, Գևորգ Ե Սուրենյանց, Կ. Պոլիս, Էջմիածին, «պոլսական» շրջան, «Էջմիածնական» շրջան:

Ներածություն

Դեռևս խորհրդային տարիներին հաստատվեց այն տեսակետը, որ Կոմիտասի կյանքի և ստեղծագործական ուղու «պոլսական» շրջանն սկսվում է 1910 թվականից¹: Տեսակետը հավանաբար հենվում էր այն փաստի վրա, որ 1910 թվականից հետո Կոմիտասը իսկապես հեռացել է Էջմիածնից, հաճախ է այցելել Կ. Պոլիս: Սակայն կենսագրական տեղեկությունների ցաքու-

¹ Գասպարյան 1947, 31-33, Шавердян 1956, 44, Յոլյան 1969, 32-33, Թերլեմեզյան 1992, 65 և այլն:

ցիր բնույթը, մի շարք փաստաթղթերի դեռևս հրապարակված չլինելը ամենայն հավանականությամբ խանգարել են անվանի երաժշտագետներին այս շրջանն առավել ճշգրիտ սահմանելուն: Դրան գումարվել են նաև ժամանակի գաղափարական կանխադրույթները, որոնց համաձայն՝ Կոմիտասը հաստատվել է Կ. Պոլսում «ռեակցիոն կղերականության» ճնշումների պատճառով:

Այսպիսի փուլայնացումը, ի վերջո, կարող էր և երկրորդական նշանակություն ունենալ, եթե դրա հետ կապված չանտեսվեին Կոմիտասի գործունեության կարևոր հանգամանքներ:

Քննարկվող խնդիրն այլ տեսք է ստանում այսօր արդեն հրապարակված փաստական հիմքերի վրա դիտարկելիս: Դրանցից խիստ կարևոր են Խ. Սամվելյանի, ցավոք անավարտ, «Կոմիտասի կյանքի և գործունեության համառոտ տարեգրությունը» աշխատությունը, որ, սկսած 1969 թվականից, հեղինակը ժամանակագրական կարգով հրատարակեց «Սովետական արվեստ» պարբերականի համարներում, ինչպես նաև Գ. Ավագյանի հրատարակած ժողովածուն, որ ամփոփում է Կոմիտասին առնչվող արխիվային փաստաթղթերը² և Ս. Բեհբուդյանի կազմած՝ Մատթեոս Բ Իզմիրյանի գահակալության շրջանի վավերագրերի հատորը³: Դրանց առընթեր կարևոր աղբյուր է նաև կոմիտասյան նամականին⁴:

«Պոլսական» շրջանի մեկնակետի հարցը. *terminus a quo*

Այսպիսով, որտեղի՞ց է ծագել այն թեզը, թե Կոմիտասի կյանքի «պոլսական» շրջանն սկսում է 1910 թվականից: Այն, որ 1910 թվականի ամռանից Կոմիտասը թողել է Էջմիածինը և մինչև կյանքի վերջը, փաստորեն, սուկ մեկ անգամ՝ 1913 թվականին է կարճ ժամանակով վերադարձել այնտեղ, կենսագրական փաստ է, որ չի վիճարկվում: Սակայն արդյո՞ք դա թույլ է տալիս արդեն 1910 թվականից հաշվելու Կոմիտասի կյանքի «պոլսական» շրջանը: Բավական է նկատել, որ «Էջմիածնական» շրջանի այլ փուլում ևս Կոմիտասը երկարաժամկետ բացակայել է Մայր աթոռից: Օրինակ, 1905 թվականին գրեթե անընդմեջ ճամփորդել է Հայաստանի տարբեր վայրերում, եղել Քութայիսիում, հաճախ՝ Թիֆլիսում, այցելել է Վիեննա⁵, իսկ 1906-1907 թթ. իր եվրոպական շրջագայությունների ընթացքում հինգ ու կես ամիս բնակվել է Բեռլինում (1906-ի ապրիլի կեսից մինչև նույն թվականի հոկտեմբերի սկիզբ): 1906 թ. հոկտեմբերի 2-ից մինչև 1907 թ. մայիսի առաջին տասնօրյակ՝ վեց ամսից ավելի, Փարիզում էր. այդ ընթացքում բացակայել է սուկ տասն օր՝

² Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության 2019:

³ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության 2001:

⁴ Կոմիտաս Վարդապետ 2009:

⁵ Սամվելյան 1969, N 12, 63-64, 1970, N 1, 61-64: Սամվելյանի տարեգրության մեջ հաճախ ճշգրտված չէ հին ու նոր տոմարի հանգամանքը: Ուստի շրջանցում ենք այն՝ բերելով վկայված ամսաթիվը, երբեմն էլ անելով մոտավոր ձևակերպումներ:

մեկնելով Բրյուսել (1910 թ. դեկտեմբերի 9-20-ը)⁶: Ապա հետագա ամիսներին շրջագայել է եվրոպական տարբեր քաղաքներով և Էջմիածին է վերադարձել միայն 1907 թ. սեպտեմբերի վերջին⁷: Սակայն այդ փուլը նրա կյանքում երբևէ չի բնութագրվել որպես «եվրոպական» կամ առավել ևս՝ «բեռլինյան» կամ «փարիզյան»: Մինչ այդ՝ նախքան Բեռլին ուսման մեկնելը, շուրջ յոթ ամիս Թիֆլիսում ուսանել է Մ. Եկմայանին (1895 թ. հոկտեմբերի սկզբից 1896 թ. ապրիլի վերջ)⁸, որն անհամեմատ կարևոր հանգամանք է արվեստագետի կյանքում, քան սոսկ ճամփորդություններն ու համերգային շրջագայություններն են: Սակայն, այդուհանդերձ, այդ փուլը ևս Կոմիտասի կյանքում «թիֆլիսյան» չի կոչվում և իրավամբ: Եվրոպական երաժշտության պատմության մեջ թափառիկ կյանք վարած կոմպոզիտորները քիչ չեն: Սակայն նրանց կյանքի և ստեղծագործության ուղին պարբերացնելիս ընդունված չէ առաջնորդվել վաղանցիկ դեպքերով, բազում համերգային շրջագայությունների կամ լուսավորչական գործունեության աշխարհագրությամբ: Կոմիտասն էլ, ինչպես համաաշխարհային երաժշտության շատ երևելիներ, համերգային շրջագայություններ կարող էր ունենալ: Նրա դեպքում դրանք առավել օրինաչափ էին՝ պայմանավորված որպես երաժիշտ-լուսավորիչ հանդես գալու, դասախոսելու հանգամանքով:

Փուլայնացում՝ ըստ բնակության վայրի

Սովորաբար, կոմպոզիտորի ստեղծագործական ուղու փուլերը սահմանելիս առաջնորդող են հիմնական բնակության կամ ծառայության վայրը կամ, որ առավել կարևոր է, ստեղծագործական ոճի, մտածողության կազմավորումն ու այդ ոլորտում հետագա որակական բնույթի փոփոխությունները: Վերջին դեպքում ևս, եթե գեղարվեստական տեղաշարժերով պայմանավորված փուլայնացումն ունի տեղանվանական ցուցիչ, ապա դա նույնպես նշանակում է, որ այդ փոփոխությունները կապված են կոմպոզիտորի այդ շրջանի հիմնական կեցավայրի կամ ծառայության վայրի հետ: 1910 թվականը Կոմիտասի ստեղծագործության մեջ գեղարվեստական կամ ստեղծագործական խորքային փոփոխություններ չի ցուցանում, կամ գոնե դրանք էականորեն չեն տարբերվում նրա կյանքում մինչ այդ եղած համաբնույթ իրողություններից: Գեղարվեստական նշանակալի փոփոխություններ կերևան արքորից առաջ և հետո՝ այս անգամ, իսկապես, «պոլսական» շրջանի միջակայքում:

Այդուհանդերձ, 1910-ին գեղարվեստական որոշարկող ցուցիչների առկայության դեպքում անգամ դրանք Կ. Պոլսի հետ կապել հնարավոր չէր լինի,

⁶ Սամվելյան 1970, N 2, 62-64, N 3, 49-52, N 5, 53-58:

⁷ Սամվելյան 1970, N 5, 53-58:

⁸ Սամվելյան 1969, N 11, 55-56:

քանի որ **մինչև 1912 թվականը Կոմիտասն իր հիմնական բնակավայրն ու ծառայության վայրը չի փոխել: Էջմիածինը թողնելու փաստն էլ դեռ այդ մասին չի վկայում. կարող ենք խոսել շարունակ շրջագայությունների, համերգների, դասախոսությունների մասին, որ կայացել են այլուր ու նաև Կ. Պոլսում: Սակայն դրանք հիմնական կեցավայր փոխելու մասին չեն վկայում:**

Կոմիտասը 1910-1911 թվականներին, կարճաժամկետ այցերը չհաշված, Կ. Պոլսում երկու անգամ է տևականորեն մնացել՝ 1910 թ. սեպտեմբերի 26-ից մինչև դեկտեմբերի 15-ը՝ շուրջ երկուս ու կես ամիս, ապա 1911 թ. փետրվարի 2-ից մինչև մայիսի վերջը՝ երեքուկես ամսից քիչ ավելի⁹: Անգամ այս թռուցիկ օրացույցով ողջ 1910-1911 թթ. դժվար է «պոլսական» շրջան անվանել:

Ավելին, ըստ պաշտոնական փաստերի, 1910 թվականը որպես «պոլսական» շրջանի մեկնակետ դիտարկելն առավել քան խախտու է: Այն, որ 1910 թվականից Մայր աթոռի միաբան Կոմիտաս վրդ. Սողոմոնյանն ինչ-ինչ պատճառներով, սակայն պաշտոնապես և արտոնությամբ բացակայել է Էջմիածնից և հաճախ երևացել Կ. Պոլսում, դեռ հիմք չէ այդ թվականից հաշվելու նրա կյանքի «պոլսական» շրջանը: Խորհրդային տարիներին էլ չի շրջանցվել այն փաստը, որ 1910 թ. ամառնամուտից մինչ աշուն Կոմիտասը ծննդավայր Քյոթահիայում է եղել: Մայր աթոռի պահպանված գրությունները հաստատում են այս տվյալները: Մասնավորաբար, 1910 թ. մայիսի 10-ին Կոմիտասը գրություն է ներկայացրել Ամենայն Հայոց կաթողիկոս Մատթեոս Բ Իզմիրյանին՝ խնդրելով արտոնել իր այցը ծննդավայր Կուտինա, ապա Եվրոպա և հոկտեմբերին վերադառնալ Էջմիածին: Ըստ խնդրագրի՝ նրան տրամադրվել է դիվանագիտական անձնագիր, վեց ամսվա միանվագ աշխատավարձ և օրապահիկ («սննդադրամ»)՝¹⁰: Ուրեմն, գոնե ձևական առումով, մինչև 1910 թ. աշուն Կոմիտասի բացակայությունը այսօրվա ձևակերպմամբ գործուղում էր և որպես Կ. Պոլսում հաստատվելու փաստ չի կարող

⁹ Կոմիտասի՝ 1910-1911 թթ. շրջագայությունների օրացույցն ու աշխարհագրությունն այսպիսին է. 1910 թ. մայիսի 20-ին նա թողնում է Վաղարշապատը և Թիֆլիսի, Բաթումի վրայով հունիսի 10-ին հասնում է Կ. Պոլիս: Հունիսի 14-ին մեկնում է Քյոթահիա: Օգոստոսի 20-ին Աֆիոն-Գարաիսարում է, օգոստոսի 29-ին՝ Էսկիշեհիրում: Սեպտեմբերի 1-12-ն ընկած ժամանակահատվածում Էսկիշեհիրից մեկնել է Բրուսա, ապա սեպտեմբերի 25-26-ին՝ Կ. Պոլիս: Դեկտեմբերի 16-ից մինչև 1911 թ. փետրվարի 2-ը Ջմյուրնիայում (Իզմիր) է, որից հետո մեկնում է Կ. Պոլիս և մինչև մայիսի վերջը (23-30) մնում է այնտեղ: Մայիսի վերջին մեկնում Ալեքսանդրիա, Կահիրե: Հուլիսի 6-ից (կամ 13-ից) Փարիզում է, ապա նույն ամսի 19-ին մեկնում է Մեծ Բրիտանիա՝ Ուայթ կղզի (Շենկլին): Օգոստոսի 2-6-ը Փարիզ վերադառնալու ճանապարհին Սեն-Մալոյում է: Օգոստոսի երկրորդ տասնօրյակում մեկնում է Բեռլին: Նոյեմբերի երկրորդ կեսին Բեռլին-Դրեզդեն կատարած ճամփորդությունից վերադառնում է Կ. Պոլիս: 1911 թ. դեկտեմբերն արդեն պաշտոնական ջրբաժան է, որ կփորձենք հիմնավորել: Սամվելյան 1971, N 1, 51-55, N 2, 53-58, N 6, 52-54, N 8, 50-59, N 9, 52-59, 1972, N 1, 58-61, N 3, 48-54, N 6, 47-55 1973 N 3, 52-59:

¹⁰ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության 2019, փաստաթուղթ (հետայսու՝ փ.), N 56, 76:

մեկնաբանվել՝ հակառակ այն բազմաթիվ վկայությունների, որ այդ շրջանում Կոմիտասը եղել է Կ. Պոլսում, լավ է ընդունվել, համերգներ է տվել, սեպտեմբերի վերջից էլ տևականորեն գտնվել է այստեղ և այլն:

Քիչ այլ են հանգամանքները 1911 թվականի առնչությամբ: Շրջագայում է Օսմանյան կայսրության տարբեր վայրերում, իհարկե, լինում է Կ. Պոլսում, այցելում եվրոպական երեք երկիր: Այդ տարի Կոմիտասի էջմիածին չվերադառնալն ինքնական է: Այդուհանդերձ, 1910 թ. հոկտեմբերի 5-ին Թիֆլիսի «Заквказье» լրագիրը, հենվելով պոլսական մամուլի հաղորդագրությունների վրա, գրել է, որ Կոմիտասը ցանկանում է Կ. Պոլսում կազմելիք իր մեծ երգչախմբով դեռ մեկ տարի համերգային շրջագայություն ունենալ Օսմանյան կայսրությունում և Եվրոպայում՝ Բեռլին, Փարիզ այցելելուց հետո Պետերբուրգով վերադառնալ էջմիածին¹¹: Այսինքն՝ դեռևս 1910 թ. աշնանը ճիշտ իր վերադարձի համար՝ իր խնդրագրով սահմանված ամսին թերթով ծանուցվել է, որ նա դեռ մեկ տարի էլ բացակայելու է: Ավելին, նրա էջմիածին վերադառնալու մտադրության մասին հայտարարում է նաև «Բիզանդիոնը» 1911 թ. հունիսի կեսին լույս տեսած իր համարում¹²: Այլ խոսքով՝ **1911 թվականի շրջագայությունները նախապես ծրագրված են եղել, իր բացակայության մասին, վստահաբար իր փրամադրած տեղեկությամբ, հրապարակավ ծանուցվել է:** Միաբանությունից իր բացակայության մասին այս կերպ ծանուցելու պատեհությունն այսօր քննարկելիք հարց չէ: Սակայն փաստ է, որ այդ և հետագա հրատարակված հաղորդագրություններում, որոնց պակասը Կոմիտասի կյանքում չկա, **1910-1911 թվականներին Կ. Պոլսում հաստատվելու մասին խոսք իսկ չի եղել:**

Մայր աթոռի ծանուցագիր-փաստաթուղթը վկայում է, որ Կոմիտասը միայն 1911 թ. դեկտեմբերին է ցանկություն հայտնել Կ. Պոլսում հաստատվելու¹³: Ինքնական բացակայության մասին նույն փաստաթղթով տրվող բացատրությունը, իսկապես, շատ բան հստակեցնում է թե՛ բուն բացակայության, թե՛ Կ. Պոլսում երկար մնալու առումով: Օսմանահպատակ Կոմիտասը Ռուսական կայսրություն մուտք գործելիս խնդիր է ունեցել. օսմանյան իշխանությունները նույնիսկ դիմել են Պետերբուրգ: Գործընթացի ձգձգման պատճառով Կոմիտասը որոշել է մինչև վերադառնալը գործով զբաղվել՝ համերգներ տալ, համերգներով շրջագայել և այլն: Դրանից զատ, թե՛ փաստաթղթի հետ կապված գործընթացը, թե՛ Օսմանյան կայսրության տարբեր մասեր ու

¹¹ Սամվելյան 1971, N 8, 50-51:

¹² Սամվելյան 1971, N 2, 54: Ի դեպ, «Բիզանդիոնի» հրապարակման մեջ շրջագայությունների վերջնական նպատակը «հայկական բնատոհմիկ երաժշտության վրա իր երկասիրության» գերմաներեն հրատարակությունն է հիշատակված: Այս տեղեկությունը կարող էր ստուգվել: Այն հավանաբար նախատեսվում էր իրականացնել Գերմանիայում: Սակայն ցայսօր փնտրությունները նման ձեռագիր գոնե Գերմանիայում դեռ ի հայտ չեն բերել:

¹³ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության 2019, փ. N 64, 84-85:

Եվրոպական երկրներ մեկնելը նրան ականա վերադարձրել են Կ. Պոլիս. պաշտոնական մարմինների տեղակայությամբ, ճանապարհների և հաղորդակցության հնարավորությունների տրամաբանությամբ (այսօր կասենք լոգիստիկա) միշտ ենթադրվել է Կ. Պոլիս՝ կայսրության մայրաքաղաք վերադառնալու անխուսափելիությունը: Այսինքն՝ իրերի բերումով Կոմիտասը ստիպված էր նախ հաճախ լինել մայրաքաղաքում և հետո՝ որպես կատարող-երաժիշտ և բանախոս, «գործով պարապելու» առավել մեծ հնարավորություն տեսել է այնտեղ: Այս հանգամանքները չեն վկայում այդ շրջանում Կ. Պոլսում Կոմիտասի հաստատվելու, առավել ևս հաստատված լինելու մասին:

Էջմիածնից հեռանալու պատճառները

Անշուշտ, 1910 թ. աշնանից մինչև 1911 թ. դեկտեմբեր Կոմիտասի ինքնական բացակայությունը Մայր աթոռից ուրիշ ենթատեքստ ևս կարող էր ունենալ, որ պաշտոնական ծանուցումներում կա՛մ չի երևում, կա՛մ սոսկ ակնարկվում է: Եղած գրականության մեջ արձարծված պատճառաբանություններից ուշարժան են երկուսը՝ հարաբերությունները հոգևորական դասի հետ և Կ. Պոլսում կոնսերվատորիա հիմնելը¹⁴: Վերջին հանգամանքը հեշտ հերքվում է այն բանով, որ Կ. Պոլսում կոնսերվատորիա հիմնելու մտադրության մասին Կոմիտասը տեղի երաժիշտների, մտավորականների հետ խորհրդակցել է միայն 1911 թ. փետրվարի վերջին: Մտածել են Եվրոպայից և Կովկասից երաժիշտներ հրավիրելու մասին, այսինքն՝ երկար ու բարդ գործընթաց է նախատեսվել: Ավելին, դրա հաջողելն ի սկզբանե կասկածելի է համարվել, քանի որ Կ. Պոլսում ձախողելու դեպքում քննարկել են այլ տարբերակներ ևս. Կ. Պոլսի Բերա թաղամասից բացի, նկատի են առել նաև Իզմիրը: Հետևաբար այս քննարկումները, նույնիսկ այդ նպատակի իրականացմանն ուղղված համերգներն ինքնին դեռ 1911 թվականին Կ. Պոլիս տեղափոխվելու փաստ չեն:

Կոնսերվատորիա հիմնելը Կոմիտասի կյանքում, իհարկե, խիստ կարևոր նպատակ էր, սակայն Էջմիածինն ինքնական թողնելու վճռորոշ քայլը պայմանավորող իրողություն չէր կարող լինել: Այլապես այդ նպատակի ձախողումից հետո նա անմիջապես պետք է վերադառնար Էջմիածին կամ գոնե հեռանար Կ. Պոլսից, բայց չի հեռացել... Այսինքն՝, թե՛ Կ. Պոլիս տեղափոխվելու, թե՛ այնտեղ մինչև վերջ մնալու համար այլ պատճառներ կային, որ 1910-1911 թվականներին դեռ ակնհայտ չէին: Կոմիտասը միշտ երազել է հիմնել երաժշտական կրթական հաստատություն տարբեր վայրերում: Հետևապես Կ. Պոլսում դրան ուղղված աշխատանքները կարող են դիտվել նրա գործունեության ընդհանուր տրամաբանության մեջ որպես կարևոր բա-

¹⁴ Սամվելյան 1972, N 1, 60:

ղադրիչ իր նշած «գործով պարապելու» համատեքստում: Ուրեմն, կոնսերվատորիա ունենալու Կոմիտասի երազանքը, որ միշտ ունեցել է և՛ էջմիածնում, և՛ Կ. Պոլսում, ո՛չ «էջմիածնական», ո՛չ «պոլսական» շրջանի որոշարկիչ չէ:

Ներմիաբանական պայքար

Առավել բարդ է Մայր աթոռի հոգևորական դասի հետ հարաբերությունների հարցը: Երաժշտագիտական գրականության մեջ էջմիածնից հեռանալու հիմնական պատճառ այս հանգամանքն է վկայված¹⁵: Որքան էլ այս պնդումն իրական հիմքեր ունի, այդուհանդերձ, այն ներկայացվել է նեղ ըմբռնումով, որոշակի միտումով և իրողությունների որոշակի եղծումով: Այսպես, ըստ ձևակերպված տեսակետի, կարելի է կարծել, որ այդ շրջանում Մայր աթոռի ներմիաբանական բավականին սուր կողմեր ունեցող պայքարը հենց Կոմիտասի անձի դեմ «խավարամիտ կղերականության» ծավալված հալածանքի արտահայտություն էր: Դա հիմնավորելիս հաճախ վկայակոչել են 1909-1910 թվականներին Կոմիտասի՝ կաթողիկոսին ուղղված երկու նամակի բովանդակությունն ու դրանց անպատասխան մնալը¹⁶: Այնինչ այդ հալածանքները, եթե կային և կարող էին այդպես կոչվել, հետևանք էին միաբանության մեջ գործող երկու թևերի միջև ընթացող պայքարի, անպատասխան նամակներն էլ կարող էին այլ բացատրություններ ունենալ, որ դիտարկված չեն:

Այն, որ նշված ժամանակահատվածում Մայր աթոռում բարդ իրավիճակ էր, կասկածից վեր է: XIX-XX դարերի սահմանագծին Մայր աթոռի միաբանության երկու թևերի միջև հակասությունները տարբեր կերպ են մեկնաբանվել, նաև անվանվել՝ «պահպանողականներ» և «առաջադեմներ» կամ «չափավորներ» և «ծայրահեղականներ», նաև՝ «ճեմարանականներ», «հակավանականներ», «օրմանյանականներ», «հակաօրմանյանականներ»¹⁷ և այլն: Այստեղ զերծ կմնանք այդ հոսանքները բնութագրելու փորձից: Սակայն այդ անվանումները որոշ դեպքերում կարող են սխալ պատկերացում տալ գոյություն ունեցած իրողությունների մասին: Այն, որ դրանցից մեկն ավանդույթների պահպանություն ու մյուս թևն էլ սոսկ նորարարություններ կամ խիստ ծայրահեղ փոփոխություններ էր ուզում, ակնհայտ չէ կամ կես ճշմարտություն է նույնիսկ նույն թևի տարբեր ներկայացուցիչների պարագայում: Օրինակ՝ Ե. վրդ. Տեր-Մինասյանը (մասամբ նաև Գ. վրդ. Հովսեփյանցը) Ա. ֆոն Հառնակի պատմաքննադատական հայացքների ազդեցությամբ¹⁸ կարող էր նույնիսկ Հայ եկեղեցու ռեֆորմացիայի հարց բարձրաց-

¹⁵ Գասպարյան 1947, 33, Шавердян 1956, 43-44, Յոլյան 1969, 31-33, Թերլեմեզյան 1992, 62:

¹⁶ Ս. Գասպարյանն անհայտ հիմքով նույնիսկ պնդում է, թե կաթողիկոսը մերժել է Կոմիտասի 1909 թ. սեպտեմբերի 5-ի նամակի խնդրանքը, տե՛ս Գասպարյան 1947, 31-32: Հմմտ. Յոլյան 1969, 33, Թերլեմեզյան 1992, 63:

¹⁷ Հմմտ. Тунян 2004, 147-148:

¹⁸ Տեր-Մինասեանց 2013, 12-15, Հովսեփեանց 1908, հ. Է.-Ը., 709-711:

նել¹⁹: Սակայն նույն խմբի անդամ դասված Կոմիտասի դեպքում նման «գերառաջադեմ» մոտեցումներ ուղղակի չկային: Ավելին, եթե հետևելու լինենք նրա առաջարկած կրթական բարեփոխումների տրամաբանությանը, ապա նա առավել պահպանողական էր: Նույնն է նաև քաղաքական հայացքների առումով. Կոմիտասը առհասարակ մերժում էր հեղափոխականությունը որպես ազգային խնդիրների լուծման հնարավոր ուղի, մեծապես արժևորում էր կրթությունն ու լուսավորության գործը, վերապահ դիրքորոշում ուներ քաղաքական պայքարի հանդեպ. սկզբունքորեն լինելով եվրոպեիստ՝ քննադատորեն էր վերաբերվում եվրոպական որոշ նորամուծությունների և այլն²⁰: Նույնիսկ սխալված չենք լինի, եթե ասենք, որ խմբակային այս պայքարում Կոմիտասի դիրքորոշումը հատկապես հստակ է արտահայտվել հենց քաղաքական գաղափարախոսությունների հարթության վրա՝ հայ ժողովրդի, Հայաստանի, Հայ եկեղեցու և քաղաքական այս կամ այն հոսանքի փոխառնչությունների տեսանկյունից²¹: Այս իմաստով քիչ տարօրինակ կարող է թվալ այն, որ **իրավամբ հայ երաժշտության նաև նորարարական փուլի հիմնադիրը՝ XX դարասկզբի ամենանորարար արվեստագետներից մեկը, իր ազգային գաղափարաբանությամբ և հասարակական դիրքորոշումով թերևս կարող էր բնութագրվել որպես ազգային չափավոր-պահպանողական թևի ներկայացուցիչ, ինչպես իր ուսուցիչ Մ. արք. Օրմանյանն էր²²:**

Պատահական չէ, որ Կոմիտասին և իր համախոհներին կարող էին նաև «օրմանյանական թև» համարել: Դրա մասին է վկայում մի միջադեպ, երբ Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի և կաթողիկոսի միջև կայացած կնճռոտ խոսակցության ընթացքում կաթողիկոսը, ինչ-ինչ խնդիրներում ակնարկելով «օրմանյանականներին», ուղղակի վիրավորական արտահայտություն է թույլ տվել եպիսկոպոսի հանդեպ՝ չընդունելով վերջինիս հակափաստարկները²³: Իսկ այն, որ Կոմիտասին իսկապես կարելի էր «օրմանյանական» կոչել, հայտնի է²⁴: Եվ այն, որ 1908 թվականի կաթողիկոսական ընտրություններին Կոմիտասի համար Մ. արք. Օրմանյանի թեկնածությունն առավել նախընտ-

¹⁹ Տեր-Մինասեան 1908, հ. Ե.-2., 465-487: Հմմտ. Վավերագրեր Հայ եկեղեցու պատմութեան 2001, փ. N 158, 226-228, փ. N 227, 322-323, փ. N 260, 370-371:

²⁰ Այս տեսանկյունից կարևոր է Կոմիտասի 1912 թ. դեկտեմբերի 25-ին Արշակ Չոպանյանին գրած նամակը, որում արտացոլված են նրա քաղաքական մի շարք հայեցակետեր: Հմմտ. Կոմիտաս Վարդապետ 2009, 145, 214-217: Նաև՝ Նավոյան 2020, 59-60:

²¹ Հմմտ. Կոմիտաս Վարդապետ 2009, 160, 165:

²² Սարուխանյան 2006, 50-71:

²³ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմութեան 2001, փ. N 725, 869-872:

²⁴ Հատկանշական է, որ 1910 թ. հունիսի 10-ին, Կ. Պոլիս հասնելու հաջորդ օրը՝ 11-ին, պատրիարք Եղիշե արք. Դուրյանին քաղաքավարական այց մատուցելուց հետո Կոմիտասն անմիջապես այցելել է իր ճեմարանական ուսուցչին, ըստ էության մեկուսացված Մ. արք. Օրմանյանին: Սամվելյան 1971, N 2, 54: Հետագայում էլ՝ արդեն 1912-ին, Կոմիտասի և Մ. Արք. Օրմանյանի առնչությունների մասին իմանում ենք վերջինիս Տիրայր վարդապետին գրած նամակներից: Սամվելյան 1974, N 1, 57, N 5, 52, 54-55:

րելի էր²⁵, մի՞թե հայտնի չէր Մատթեոս Բ Իզմիրյանին, և դա մի՞թե կաթողիկոսի մոտ հետևանք չէր կարող ունենալ՝ հենց միաբանների խմբակային պայքարի համատեքստում²⁶: Մանավանդ որ հակադիր թևի ներկայացուցիչները կարող էին դա որպես գործիք հմտորեն օգտագործել նույն միաբանական պայքարում: Այստեղից բխում է մեկ այլ հարց ևս՝ մի՞թե Կ. Պոլսում Կոմիտասը խուսափելու էր այդ նույն խմբակային պայքարի ճնշող մթնոլորտից, և արդյո՞ք նույն այդ պայքարով կամ նաև դրանով չէին պայմանավորված այն անիրավ հողվածներն ու հայտարարությունները, համերգ ու դասախոսություն արգելող տիպի միջադեպերը, որ նա ունեցավ Կ. Պոլսում և այլուր, եկեղեցական ու հասարակական շրջանակներում: Այս փաստարկները վկայակոչում ենք շեշտելու, որ էջմիածնական միջավայրի ներմիաբանական պայքարը շատ բանով ածանցված էր հենց Կ. Պոլսի պատրիարքությունում, մեծ հաշվով ազգային շրջանակներում չափավոր-պահպանողական և հեղափոխական հոսանքների բախումից և, մասնավորաբար, Մ. արք. Օրմանյանի անձի շուրջ ծավալված պղտոր գործընթացներից: Կոմիտասը դրանց լավագույնս տեղյակ էր: Ուստի, եթե էջմիածնից մեկնելու հիմնական պատճառը սոսկ այդ խմբակային պայքարն էր, ապա «հակաօրմանյանական» թևի հալածանքներից խուսափելու համար Կ. Պոլիսը լավագույն վայրը չէր, որ նա պիտի ընտրեր²⁷:

Այսպիսով, հստակ է, որ իրավիճակը չէր կարող մեկնաբանվել որպես հատուկ Կոմիտասի անձի դեմ մղվող հալածանք²⁸: Հակառակ այն բանին, որ

²⁵ Հմմտ. Կոմիտաս Վարդապետ 2009, 159-160:

²⁶ Туян 2004, 147-148.

²⁷ Այս իմաստով հիշարժան է կնճռուտ մի դեպք. երբ 1910 թ. նոյեմբերի 21-ի համերգի հոգևոր մասը պատրիարքարանը արգելում է, ականատեսի՝ Հ. Սիրունու վկայությամբ Կոմիտասն իրապարակավ դա վերագրում է մի խումբ չարակամների, որոնք իր դեմ դավեր էին նյութում նաև Կ. Պոլսում: Սակայն ուշագրավ է և այն, որ Կոմիտասն ընդվզելով հայտարարել է, որ ինքն էջմիածնի միաբան է, այսինքն՝ ենթակա չէ Կ. Պոլսի պատրիարքությանը և հոգևոր երզը համերգային բեմից հնչեցնելու իրավունք ստացել է հայոց Հայրիկից (իմա՝ Մկրտիչ Ա Խրիմյանից, Խրիմյան Հայրիկից): Սրանով վկայված է, որ «հակառակ թև» Կոմիտասին, ցավոք, չէր պակասում Կ. Պոլսում ևս, նաև այն, որ 1910 թ. նոյեմբերի վերջին Կոմիտասն իրեն դեռևս պոլսական միջավայրի ներկայացուցիչ չէր համարում, այլ Մայր աթոռի միաբան, որը ևս մեկ անգամ հաստատում է վերևում բերված թիֆլիսյան «Закавказье» լրագրի ծանուցումը: Սամվելյան 1971, N 8, 55-56:

²⁸ Ներմիաբանական պայքարի հետնախորքը քիչ ավելի լուսաբանելու առումով հետաքրքիր է 1909 թ. մայիսի 14-ին Ա. Չոպանյանի՝ Մատթեոս Բ Իզմիրյանին գրած նամակը, որ նախքան վերջինիս էջմիածին հասնելը նրան, մի տեսակ, Մայր աթոռի միջավայրին ծանոթացնելու, նախապատրաստելու, նախազգուշացնելու նպատակ է հետապնդել: Այստեղ մի հողվածի մասին ակնարկելով՝ նամակագիրն առավել կանգ է առնում Մայր աթոռի հակամարտող երկու խմբակների պայքարի վրա և նույնիսկ անում է որոշ անձնական բնութագրումներ, որ շատ ուշագրավ են և հակամարտող խմբակների պայքարին տալիս են որոշակի անձնավորված նկարագիր: Այդուհանդերձ, Չոպանյանը ոչ թե անձամբ Կոմիտասի, այլ նրան ընկերակից ողջ խմբի համար է բարեխոսում. դա նշանակում է, որ խնդիրը որևէ անձի հետ չէր կապված, և Կոմիտասի ընկերները ևս լավ վիճակում չէին. թեպետ այդ մասին ինքը՝ Կոմիտասն էլ է քանիցս նշում: Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության 2001, փ. N 188, 269: Հմմտ. Կոմիտաս Վարդապետ 2009, 158-162:

Նման պայքարը շատ հաճախ կարող էր նաև անձնավորվել և իսկապես կրել ճնշող բնույթ, այդուհանդերձ, դա աշխարհայացքային հակասություններով պայմանավորված հակադրություն էր, որում բախվում էին հայ իրականության առավել ծայրահեղ և չափավոր պահպանողական թևերը: Իհարկե, երկու ճամբարում էլ կային գաղափարախոսական թևերի բևեռային արտահայտություններ, որոնք կարող էին տարօրինակ, գուցե և արտառոց տեսք ունենալ: Սակայն, ինչ էլ որ լինի, այս պայքարը, կրկնենք, չի կարող դիտարկվել որպես Կոմիտասի անձի դեմ մղված հալածանք: ***Այն ճշգրտորեն բացատրվում է որպես մեծ երաժշտի կյանքի բարդ, սակայն կարևորագույն մի իրողություն: Դրանում արտացոլվում են Կոմիտասի աշխարհայացքը, ազգային, հասարակական դիրքորոշումները, որոնք նրան բնութագրում են որպես որոշակի գաղափարական նկարագրի ազգային գործիչ:***

Եվ այս տեսանկյունից այդ պայքարն ու դրա դասակարգումը Կոմիտասի կյանքում կարևոր երևույթներ են՝ որպես հենց ***էջմիածնական միջավայրում ծավալված իրողություններ:***

Ասվածի ոչ անձնական բնույթը հիմնավորվում է նաև նրանով, որ Մատթեոս Բ Իզմիրյանի գահակալության և դրան հաջորդած տարիներին Մայր աթոռի մթնոլորտը խիստ լարված էր բազում այլ պատճառներով ևս²⁹:

²⁹ Նորընտիր կաթողիկոսի՝ Մատթեոս Բ Իզմիրյանի գահակալությունը տևեց շուրջ երկու տարի՝ 1908-1910 թթ.: Նրան բաժին ընկած այս կարճ շրջանում հարկ էր կարգավորել թե՛ եկեղեցու ներքին կյանքին վերաբերող բազում հարցեր, թե՛ երկու տերությունների՝ Ռուսական (Турия 2004, 181-186) և Օսմանյան կայսրությունների հետ հայ եկեղեցու բավականին բարդ փոխհարաբերությունները: Օսմանյան կայսրությունում Կ. Պոլսի պատրիարքական աթոռի շուրջ առաջացած բավական խոր կնճիռներից (Турия 2004, 186-187), նոր պատրիարքի ընտրության գործընթացից ու հետագա բարդություններից գատ, լուրջ խնդիրներ կային Երուսաղեմի պատրիարքությունում նույնպես (Օրմանեան 2001, 5887-5915): Բացի այդ, 1909 թվականին տեղի ունեցավ դարասկզբի ամենաողբերգական իրադարձություններից մեկը՝ Ադանայի ջարդերը: Դրա բազմաբարդ հետևանքների հաղթահարումը նույնպես Մատթեոս Բ Իզմիրյանին բաժին ընկած փորձություններից էր: Մյուս կողմից, Ռուսական կայսրության մեջ հայտնի քաղաքական շարժումների հետևանքով տեղի ունեցած փոփոխությունները խնդրահարույց իրավիճակ էին ձևավորել Հայ եկեղեցու համար: Նախ, վարչապետ Պ. Ստոլիպինի առաջարկած փոփոխությունները, որ երբեմն գնահատվում են որպես բարեփոխություն, նույնքան հաճախ՝ ռեակցիա, առնչվում էին նաև Հայ եկեղեցուն²⁹: Այս առումով ուշագրավ է Պ. Ստոլիպինի հրահանգով Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի ներկայացրած զեկույցը՝ կաթողիկոսի թեմական խորհուրդների ընտրությանն առնչվող 1910 թ. մայիսի 28-ի կոնդակի մասին (տե՛ս Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության 2001, փ. N 726, 873-877): Առավել բնութագրական է կաթողիկոսական կոնդակի չեղարկումը, Հայ եկեղեցում ստուգումներ անցկացնելը, որ Ստոլիպինը նախաձեռնեց 1910 թ. աշնանը՝ կաթողիկոսի մահից առաջ (Турия 2004, 181-182, 190): Դրան գումարվում էր հայ քաղաքական կուսակցությունների առաջադրած օրակարգը, որ փորձաքար էր թե՛ եկեղեցի-կայսրության, թե՛ ներեկեղեցական փոխհարաբերությունների համար (Турия 2004, 52-67, 186-187): Մյուս կողմից իր՝ Մատթեոս Բ Իզմիրյանի նախկինում դրսևորած ոչ ռուսահաճո կեցվածքը («Պոլոժենիի» դեմ հանդես գալը, Օրմանեան 2001, 5839) նույնպես խոչընդոտ էր պետության հետ հարթ ընթացք կազմակերպելու ճանապարհին: Վերջապես, որպես անձնական գործոն՝ 1909 թ. բժշկական քննության արդյունքներով կաթողիկոսն արդեն խիստ տկար առողջական վիճակի մեջ էր (Հովիտ 1910, N 36, 566-567), որ խանգարող հանգամանք էր աշխույժ գործունեություն վարելու, բոլոր խնդիրներին շուտափույթ լուծում գտնելու տեսանկյունից:

Անպատասխան նամակներ

Ամենայն Հայոց կաթողիկոս Մատթեոս Բ Իզմիրյանին Կոմիտասի գրած և անպատասխան մնացած նամակները պետք է դիտարկվեն այս ժամանակի ողջ բարդ համատեքստում, այլապես կմնան ոչ միայն չհասկացված, այլև շրջանը հասկանալու ճանապարհին խանգարող հանգամանք:

Նախ, կաթողիկոսին Կոմիտասի գրած նամակները չորսն են (այն էլ դեռևս պատրիարք Իզմիրյանին գրած մեկ նամակը չհաշված)³⁰: Դրանցից մեկը Ռ. Ղորղանյանի Ս. Պատարագի երգասացությունների ներդաշնակման վերաբերյալ կաթողիկոսի հանձնարարականով Կոմիտասի գրած գրախոսականն է³¹, որ էջմիածինը թողնելու մասին ենթադրության տեղիք չէր կարող տալ: Մյուս երեքը իսկապես անպատասխան են կամ առավել ճիշտ՝ դրանց հետագա ընթացքի մանրամասները մեզ հայտնի չեն:

Մատթեոս Բ Իզմիրյանին Կոմիտասի 1909 թ. սեպտեմբերի 5-ի նամակն իսկապես արտահայտում է թե՛ ծայրահեղ դժգոհություն և նույնիսկ հուսաբեկություն, թե՛ Մայր աթոռից հեռանալու ձգտում³²: Սակայն Կ. Պոլսի մասին խոսք չկա, հիշատակվում է Սևանի անապատը: Մյուս երկուսը (1910 թ.) կրթական բարեփոխումների մասին առաջարկների փաթեթ են, որոնցից առաջինը (հուվարի 12-ի ամսաթվով) ուղղակի հիշատակում է այն մասին, որ գրվել է ի պատասխան կաթողիկոսի բանավոր հրահանգի³³՝ հավանաբար կրթական բարեփոխումների գործընթացում կիրառելու նպատակով: Ուստի սա նամակ չէ, այլ հանձնարարականի կատարում՝ առաջարկի տեսքով, որը պատասխան չի ենթադրում: Մյուսը (մայիսի 10-ին) հանձնարարության մասին չի ակնարկում, սակայն ճիշտ նույն բնույթն ունի³⁴:

Այդուհանդերձ, մեր փնտրած «պատասխանների» առիթով տեղին է հղել Մատթեոս Բ Իզմիրյանի մահից հետո հայ հասարակությունը ալեկոծած աղմուկի մեկ դրվագ: Կաթողիկոսի մահից հետո հրապարակված մի քանի նամակների և փաստաթղթերի բովանդակությունն այն էր, որ հայրապետին հնարավորություն չի տրվել լիարժեք գործելու, որ նա նույնիսկ հրաժարականի նամակ էր պատրաստել թագավոր-կայսեր անունով, որ, ըստ էության, շրջապատված էր անառողջ մթնոլորտով և այլն: Որպես բացասական գործոն հիշատակված էր նաև միաբանության երկու խմբակների միջև պայքարը: Սրան հակընդդեմ հրապարակումներում կաթողիկոսի աշխատունակության, հոգևոր դասի հետ ակտիվ շփումների մասին վկայող փաստ էր դիտվում նաև մի շարք հոգևորականների, այդ թվում՝ Կոմիտաս վարդապետի հետ

³⁰ Կոմիտաս Վարդապետ 2009, 150-152:

³¹ Կոմիտաս Վարդապետ 2009, 173-175:

³² Կոմիտաս Վարդապետ 2009, 166:

³³ Կոմիտաս Վարդապետ 2009, 179-182:

³⁴ Կոմիտաս Վարդապետ 2009, 186-189:

նրա հաճախ հանդիպած լինելու հանգամանքը³⁵: Գուցե թե հասարակական ուշադրության արժանացած այս փոխադարձ մեղադրանքներում հիշատակված վկայությունները արժանահավատ չհամարեինք, եթե չլիներ Կոմիտասի՝ 1909 թ. հունիսի 14-ին Ա. Չոպայանին գրած նամակը, որ լիովին հաստատում է կաթողիկոսի հետ իր ունեցած հանդիպումն ու հատկապես Բյուրականի ամառանոց ուղեկցելու փաստը³⁶: Դրանից բացի, նման հանդիպումների համար կարևոր հանգամանք էր նաև Կոմիտասի զբաղեցրած պաշտոնը, որ ստանձնել էր Ա. Մանթաշյանի ցանկությամբ³⁷: Խոսքը Մայրավանքի վերանորոգման աշխատանքների ֆինանսական հանձնախմբի գանձապահ-քարտուղարի պաշտոնի մասին է: Հետևաբար երկու փաստ կարելի է արձանագրել. Կոմիտասը, անկախ բացասական բոլոր հանգամանքներից, 1910 թվականի դրությամբ Մայր աթոռում հարզ ու դիրք ունեցող միաբան էր, և հետո անգամ ի պաշտոնե իսկապես կարող էր հաճախ հանդիպել կաթողիկոսի հետ: Ինչի մասին, բացի հիշյալ աղմուկի կապակցությամբ հրապարակված հակընդդեմ նամակից, ըստ էության, վկայում է հենց Կոմիտասը 1910 թ. հունվարի 12-ի նամակի սկզբում: Այդտեղ հիշատակված բանավոր հանձնարարականը, ինչպես նաև դրան նախորդած՝ 1909 թ. դեկտեմբերին գրված Ռ. Ղորղանյանի երկի մասին գրախոսականը վկայում են թե՛ գրավոր, թե՛ բանավոր հանձնարարականների և ո՛չ եզակի շփումների մասին: Դրանք բոլորն էլ հաջորդել են 1909 թ. սեպտեմբերի 5-ի վերը հիշատակված դրամատիկ գրությանը: Հետևապես կարելի է առնվազն ենթադրել, որ այդ նամակից հետո, այդուհանդերձ, Կոմիտասին ինչ-որ բացատրություններ տրվել են:

Պարզ ձևակերպմամբ՝ եթե առիթներ կային հայրապետի հետ բանավոր քննարկելու տարբեր հարցեր, ապա գրավոր պատասխանի կարիքը կարող էր և չզգացվել: Դիցուք, հիշյալ նամակներից գոնե վերջինը Կոմիտասը կաթողիկոսին է ներկայացրել իր մեկնելուց ութ օր առաջ՝ 1910 թ. մայիսի 12-ին³⁸: Երեք օր անց՝ մայիսի 15-ին, վեհարանում կաթողիկոսի մասնակցությամբ տեղի է ունեցել նկարիչների և ճարտարապետների հանձնախմբի նիստ (Մայրավանքի վերանորոգության հարցերի առնչությամբ), որի քարտուղարը Կոմիտասն էր³⁹: Այսինքն՝ նա իր նամակի պատասխանը ստանալու համար հնարավորություն ուներ դիմելու, գուցե և դիմել է կաթողիկոսին:

Ուրեմն, ո՛չ կարիք կար նամակների պատասխանին սպասելու, ո՛չ ժամանակ, ո՛չ էլ պատասխան չունենալը կարող էր լինել մեկնելու առիթ:

³⁵ Тунян 2004, 196.

³⁶ Կոմիտաս Վարդապետ 2009, 164-165:

³⁷ Հմմտ. Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության 2001, փ. N 595, 742:

³⁸ Սամվելյան 1971, N 1, 53-54: Այստեղ Խ. Սամվելյանը շփոթմամբ «միավորել» է 1910 թվականին Կոմիտասի՝ կաթողիկոսին գրած երկու նամակները:

³⁹ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության 2001, 18, փ. N 576, 578, 728-730:

Ի դեպ, այս վերջին նամակ-առաջարկը ժամանակի մամուլում ներկայացվել է որպես մասնագիտական խնդիրների նկարագրություն, իրավիճակի վերաբերյալ դժգոհության արտահայտություն և հրաժարական⁴⁰: Այնինչ նամակը կրթական բարեփոխությունների մի ամբողջ շարք է պարունակում, այլ ոչ հրաժարական, և ավարտվում է Կոմիտասի կողմից իր անձնվեր ու անշահախնդիր մասնագիտական աշխատանքը կաթողիկոսին առաջարկելով⁴¹: Նույնիսկ միայն ուսուցչության պաշտոնից հրաժարումը հիշատակելով (որը դարձյալ ճիշտ է)՝ մամուլն ուղղակի նպաստել է թյուր տեսակետ ձևավորելուն՝ իբր Կոմիտասը հրաժարական է ներկայացրել կաթողիկոսին և հեռացել Էջմիածնից⁴² (օրինակ՝ «Ազատամարտի» ծանուցման մեջ)⁴³: Գուցե նաև այդ հրապարակումներն են դարձել խորհրդային երաժշտագիտության մեջ ձևավորված Կոմիտասի ստեղծագործական ուղու փուլայնացման հիմքը: Այնինչ, ինչպես տեսանք, թե՛ Կովկասի, թե՛ Կ. Պոլսի այլ պարբերականներ և՛ 1910-ին, և՛ 1911-ին ծանուցել են Կոմիտասի՝ Էջմիածին վերադառնալու մտադրության մասին:

⁴⁰ Խոսքը 1910 թ. մայիսին Բաքվի «Бакы», Թիֆլիսի «Новая речь», ապա՝ հունիսին Կ. Պոլսի «Ազատամարտ», թերթերում տպագրված լուրերի մասին է: Սամվելյան 1971, N 1, 55, N 2, 53: Տե՛ս նաև Թերթապատում 2019, 107:

⁴¹ Կոմիտաս Վարդապետ 2009, 186-189:

⁴² Թերլեմեզյան 1992, 64-65:

Հրաժարականի մասին տեղեկությունը հավանաբար ծագել է Կոմիտասի մեկնումից առաջ Մայր տաճարի վերանորոգության հանձնախմբի քարտուղար-գանձապահի գործերի ընդունման ու հանձնման արձանագրությունից, որ կատարվել է Կոմիտաս և Արտակ Սմբատյան վարդապետների միջև: Սակայն վերջինը սոսկ ժամանակավոր պաշտոնակատար էր նշանակված, որը նույնպես արձանագրված է փաստաթղթերով: Հմմտ. Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության 2001, փ. N 595, էջ 742, հմմտ. 3. N 581, 732-733: Նաև՝ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության 2019, փ. N 57, 77: Այսինքն՝ կարող ենք ասել, որ նախատեսվել է ժամանակավոր բացակայություն, այլ ոչ հրաժարական ու վերջնական հեռացում Էջմիածնից:

⁴³ Այս հարցին մասամբ և դարձյալ անճշտորեն անդրադարձել է Ռ. Թերլեմեզյանը: Նա նշում է, որ Կոմիտասի մեկնելուց «մի քանի ամիս անց» ճեմարանում և Մայր Աթոռի խմբավարի պաշտոնում նրան փոխարինողի հարց են բարձրացրել և 1910 թ. նոյեմբերի 1-ից ազատել պաշտոնից: Նախ, եթե այդպես է, ապա ազատել են նոյեմբերի 1-ից, այլ ոչ մայիսից կամ հունիսից, որը քիչ թե շատ կարող էր համապատասխանել մամուլում հրապարակված կեղծ լուրին: Սակայն Ռ. Թերլեմեզյանը չի հստակեցրել, որ «մի քանի ամիս անցը» դա դեռ նույնիսկ 1910 թ. նոյեմբերի 1-ը չէր: Խոսքը կաթողիկոսական տեղապահ Գ. արք. Սուրենյանցի 1911 թ. փետրվարի 10-ի N 1281 որոշմանն է վերաբերում, որում, այո՛, նախորդ տարվա նոյեմբերի 1-ից բացակայող Կոմիտաս վարդապետը հետին թվով պաշտոնաթող էր ճանաչվում: Ավելին, Սինոդի 1911 թ. օգոստոսի 27-ի որոշմամբ է միայն նշանակվել ճեմարանի երգեցողության նոր ուսուցիչը: Այսինքն՝ որը 1910-1911 ուս. տարում ճեմարանը երգեցողության ուսուցիչ չի ունեցել. սպասել են Կոմիտասին: Ու եթե այդ նշանակման մեջ նույնիսկ ենթատեքստեր փնտրենք, որն անում է Թերլեմեզյանը, ապա, միևնույն է, այն հիմնավորված էր կրթական գործընթացը կազմակերպելու պահանջով: Հիշենք, որ այդ ժամանակ Կոմիտասն արդեն բավական երկար ժամանակ ինքնակամ բացակայում էր, և մամուլը հայտնել էր, որ նա դեռ շրջագայելու է, իսկ ճեմարանի համապատասխան դասընթացը չէր կարող դադարեցվել: Թերլեմեզյան 1992, 64, Արարատ 1911, հ. Գ., 168:

Անկախ նշված հանգամանքից, նամակների անպատասխան մնալը այլ պատճառներով ևս ամուր փաստարկ չի կարող դիտվել Մայր աթոռից հեռանալու համար: Այդ նամակներն ուղիղ առնչվում են թե՛ ներմիաբանական, թե՛ քաղաքական և թե՛ նույնիսկ եկեղեցու՝ կայսրությունների հետ ունեցած խնդիրներին: Այսպես, այն, որ Կոմիտասի կրթական բարեփոխումներ առաջարկող նամակը անպատասխան է մնացել, կարող էր նաև պատահական չլինել: Նախ, կրթական բարեփոխումները Մատթեոս Բ Իզմիրյանի նախատեսած ծրագրերից էին⁴⁴: Այդ ուղղությամբ նրա կարճ գահակալության շրջանում կատարվել են բազմաթիվ քայլեր: Նախաձեռնվել և կազմվել է համապատասխան հանձնաժողով, որի ձևավորման աշխատանքները, ի դեպ, հանձնարարվել են Կոմիտասի ջերմ բարեկամ Գարեգին վրդ. (հետագայում՝ կթղ.) Հովսեփյանցին, իսկ հանձնախմբի անդամ ընտրվել է նրա մտերիմ ընկեր Մ. Աբեղյանը⁴⁵: Նախաձեռնվել է թեմական դպրոցների համար միօրինակ ծրագրի մշակում⁴⁶: Ակնհայտ է, որ իրենց ընդհանուր զեկույցներում թեմակալ առաջնորդները գործերի դրությունը ներկայացնելիս հատուկ կարևորել են կրթական հարցերը և արել առաջարկներ⁴⁷: Այս տրամաբանությամբ է հավանաբար, որ նման առաջարկներ կաթողիկոսին ներկայացրել են այլ միաբաններ ևս⁴⁸: Ավելին, կրթական բարեփոխությունների մասին խոսվել է նորընտիր կաթողիկոսի՝ Պետերբուրգ կատարած այցի ժամանակ՝ ամենաբարձր մակարդակով⁴⁹: Կարելի է ենթադրել, որ խնդիր էր դրված նաև հայկական դպրոցների համակարգը համաձայնեցնել Ռուսական կայսրության կրթական քաղաքականությանը⁵⁰: Դա է վկայում նաև այն, որ եկեղեցական-ծխական դպրոցների կանոնադրությունը համաձայնեցվում էր Կովկասի փոխարքայության հետ⁵¹: Այլ խոսքով՝ նախատեսվող բարեփոխումները պետք է ընթանային ստոլիպինյան «ռեֆորմների» տրամաբանությամբ: Ուստի, եթե անգամ մտածենք, որ հիշյալ նամակները ոչ թե պա-

⁴⁴ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության 2001, 17-18, Тунян 2004, 104-106:

⁴⁵ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության 2001, փ. N 320, 454, փ. N 332, 467, փ. N 348, 480-481:

⁴⁶ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության 2001, փ. N 280, 412-413:

⁴⁷ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության 2001, փ. N 267, 378-393, փ. N 268, 394-400 և այլն:

⁴⁸ Կարևոր օրինակ է դեռ կաթողիկոսի պաշտոնավարման սկզբին Գալուտ Տեր-Մկրտչյանի գրած նամակը: Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության 2001, փ. N 190, 272-274:

⁴⁹ Օրմանեան 2001, 5928:

⁵⁰ Կարևոր է Գ. Տեր-Մկրտչյանի նամակը թե՛ կրթական առաջարկների, թե՛ «Նոր պլոմբենիայի» դիրքերից հայ դպրոցի խնդիրները դիտարկելու առումով, որը փաստում է վերն ասվածը, որ խնդիր կար կրթական գործը ռուսական քաղաքականության հետ համաձայնեցնելու: Տե՛ս Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության 2001, փ. N 190, 272-275: Բացի այդ, «պետության արդի պահանջների» մասին ակնարկ կա նաև թեմական դպրոցների ընդհանուր ծրագրերը մշակելու համար հրավիրված հանձնաժողովի արձանագրության մեջ: Տե՛ս Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության 2001, փ. N 280, 412-413: Տե՛ս նաև՝ Тунян 2004, 71, 109-113:

⁵¹ Հմմտ. Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության 2001, փ. N 534, 685:

տասխան պահանջող գրություններ էին, այլ ակնկալվող բարեփոխությունների համար ներկայացվող առաջարկներ, ապա բացառված չէ, որ 1910 թվականի նամակ-առաջարկները կարող էին շրջանցվել ընդգծված ազգային բովանդակության պատճառով: Ինչևէ, այս ենթադրություններից զատ, ակնհայտ է այն, որ 1910 թ. հունվարին գրված նամակ-առաջարկը, ինչպես և նույն թվականի մայիսի գրությունը հենց կաթողիկոսի հրահանգով նախապատրաստված զեկույցներ էին, որ պատասխան չէին պահանջում: Հետևաբար այդ պատրվակով իբր էջմիածնից հեռանալն անհիմն պնդում է:

Թեև ամեն բանից առաջ պետք է նկատի ունենալ, որ Կոմիտասի կրթական առաջարկների իրականացման ճանապարհին առավել մեծ խոչընդոտը դրանց մասշտաբային բնույթն էր: Այս առումով ևս մեկ դիտարկում կարելի է անել: Վերջին նամակում Կոմիտասի առաջարկները էջմիածնում կոնսերվատորիա՝ «հոգևոր երաժշտարան», երաժշտական տպագրություն հիմնելու, մասնագիտացված երաժշտական կատարողական խմբեր ձևավորելու, թե՛ հոգևոր կրթական համակարգում, թե՛ հանրակրթության մեջ լայնորեն երաժշտական բաղադրիչ ներդնելու մասին ակներևաբար ավելին էին, քան սոսկ կոնսերվատորիա հիմնելն էր: Այն երաժշտական կրթության ամբողջական համակարգի՝ տարրական (հանրակրթություն), բարձրագույն (ճեմարան) մակարդակների և հոգևոր երաժշտության բարձրագույն կրթական հաստատության («հոգևոր երաժշտարան», կոնսերվատորիա, որի օրինակն ինքը տեսել էր Բեռլինում) հիմնադրման, նաև երաժշտական կյանքի մյուս բաղադրիչների մասին համալիր առաջարկ էր: Եթե համարենք, որ հենց նամակի անպատասխան մնալը, այդ առաջարկի ձախողումն է առիթ դարձել էջմիածինը թողնելու և Կ. Պոլսում հաստատվելու համար, ապա ընդգծենք, որ Կ. Պոլսում ևս նման ծավալուն համակարգ ստեղծելու հնարավորություն չի եղել. չի քննարկվել նույնիսկ նախագծի մակարդակում: Ուստի խոսք կարող էր լինել Կ. Պոլսում կոնսերվատորիա բացելու մասին, որ այդ առաջարկի բազում կետերից միայն մեկն էր: Դրա վճռորոշ լինելն էլ ճշգրտվում է վերևում ձևակերպած հարցով՝ ուրեմն **ինչո՞ւ Կ. Պոլսում այդ նպատակի ձախողումը առիթ չեղավ Օսմանյան կայսրությունը լքելու և այլ վայրում իր երազանքն իրականացնելու համար, ինչպես որ իբր առիթ էր ծառայել էջմիածինը լքելիս:**

Այժմ «ամենամոռայ» նամակի մասին: Որքան էլ զարմանալի թվա, ճիշտ նույն կրթական բարեփոխումների ծիրի մեջ կարելի է դիտարկել կաթողիկոսին Կոմիտասի 1909 թ. սեպտեմբերի 5-ի նամակը, որով նա խոր վրդովմունքով և դրամատիկ շեշտերով նկարագրում է Մայր աթոռում իր աշխատանքի համար անհրաժեշտ միջավայրի, աշխատելու հնարավորության բա-

ցակայությունն իսկ և խնդրում է իրեն արձակել Մայր աթոռի միաբանություն-նից և նշանակել Սևանի մենաստանի մենակյաց⁵²:

Այն, որ այդ շրջանում Մայր աթոռի միաբանական միջավայրը Կոմիտասի նման արվեստագետին կարող էր հասցնել հուսահատության, կասկածից վեր է: Բացի այդ, նամակը սոսկ հուսահատ մարդու գանգատ չէ, այլ հստակ խնդրանք, հստակ նպատակի սահմանումով: Ավելին, խոսքը միայն իր բազմամյա «ուսումնասիրությունների պտուղները» գրի առնելուն չէ, որ կարող էր վերաբերել:

Խնդիրն սկզբունքորեն այլ երանգ է ստանում, երբ փորձում ենք դիտարկել Սևանի մենաստանի ի՛նչ լինելն այդ շրջանում: Առանց նման դիտարկման տպավորություն է, որ Կոմիտասն այնքան հուսահատ էր, որ խնդրում էր իրեն ուղարկել բացարձակ քայլ մի վայր կամ աշխարհից կտրված միջնադարյան վանական ճգնարան, անապատ՝ բառի ուղիղ և կրոնական իմաստով: Այնինչ Սևանն այդպիսին չէր... Նման տպավորություն կարող էր առաջանալ թե՛ որոշակի գեղարվեստական երանգ ունեցող այն ոճից, որով շարադրված էր նամակը, թե՛ առհասարակ դիմումի բովանդակային նկարագրից, որ նույնիսկ կարող էր մեկնաբանվել որպես ռոմանտիկական աշխարհայացքին հատուկ «փախուստ իրականությունից» հարացույցով: Կոմիտասի մեծ արվեստագետ լինելը, նամակագրության դեռևս գրական ժանր լինելը, կրոնական նամակագրությանը հատուկ ճարտասանական-պաթետիկ շեշտառություններն ու ընդգծումներն անտեսելն այս դեպքում մեծ սխալ կլիներ:

Այսպես մտածելու համար հիմք է նույն 1909 թ. հուլիսի 14-ին Ա. Չոպանյանին գրած Կոմիտասի նամակը: Այստեղ նա, իհարկե, ակնարկում է հակադիր թևի անիրավ դիրքի մասին: Սակայն նշում է, որ կաթողիկոսի հրավերով ինքը, ապա նաև Երվանդ և Հուսիկ վարդապետները հանդիպել են նորընտիր հայրապետին, զրուցել, ներկայացրել իրենց մոտեցումները: Գրում է, որ՝ «...Վեհը, գրեթե, ըստ ամենայնի մեզ համախորհուրդ է իր ծրագիրներով...»⁵³: Նամակի տրամադրությունը չասենք խանդավառ է, սակայն գոհունակություն և հույս է արտահայտում: Ինչպես վերևում նշեցինք, այս նամակում հիշատակում է, որ իրենք են կաթողիկոսին ուղեկցել Բյուրական: Վկայված է նաև, որ նույն թվականի օգոստոսի 17-ին Կոմիտաս և Գրիգորիս վարդապետներն էին ուղեկցում կաթողիկոսին Բյուրականից Էջմիածին վերադառնալիս⁵⁴: Այսինքն՝ վերոհիշյալ հուսաբեկ նամակից ընդամենը քսան օր առաջ Կոմիտասն ուղեկցում էր կաթողիկոսին, իսկ երկու ամիս առաջ գրածում հոգեբանական ընկճվածության և Էջմիածնում մնալու անհնարինության ակնարկ

⁵² Կոմիտաս Վարդապետ 2009, 166:

⁵³ Կոմիտաս Վարդապետ 2009, 165:

⁵⁴ Тунян 2004, 114.

իսկ չկար: Ուստի Սևանում ծառայության անցնելու հարցն իսկապես այլ լույսի տակ պետք է դիտարկել:

Սևանի մենաստանը Հայ եկեղեցու համբավավոր կենտրոններից էր, որի երբեմնի փառքը թեև սկսել էր աղոտել, սակայն դեռևս բարձր էր նրա հարգը: Իսկապես, Սևանի մենաստանի դպրոցը նոր էր փակվել, 1901 թվականին Խրիմյան Հայրիկի կոնդակով մենաստանն հայտարարված էր աղոթատեղի⁵⁵: Սակայն Կոմիտասին քաջ հայտնի էին այս վանքի ավանդույթները: Ավելին, Մխիթարյան միաբանության հետ ունեցած սերտ կապերը կասկած չեն թողնում այն մասին, որ Կոմիտասը մոտիկից գիտեր Մխիթար Սեբաստացու ունեցած առնչություններն ու նպատակները այս վանքի հետ կապված: Գուցե նաև դա էր դրդել Կոմիտասին ձգտել դեպի Սևան, այնտեղ խաղաղության մեջ «իր գործն» անելուց զատ, թաքուն փայփայել նաև կրթական-մշակութային կենտրոն հիմնելու իր երազանքը: Ամեն դեպքում Կոմիտասն իր նամակի ավարտին հստակ նշում է Սևան հեռանալու գիտական-մշակութային դրդապատճառների մասին:

Սևանի մենաստանը Մայր աթոռից ոչ այնքան հեռու (անցյալ դարասկզբին Հայ եկեղեցու համակարգում գործող մի շարք այլ մենաստանների համեմատ) մի հաստատություն էր, որի կարևորվածությունը թերևս ընդգծված էր վանահոր եպիսկոպոսական աստիճանով: Չմոռանանք, որ այդ ժամանակ մի շարք թեմեր կային, որ վարդապետներ էին առաջնորդում: Մյուս կողմից, կասկածից վեր է, որ Կոմիտասը լավ հարաբերություններ ուներ մենաստանի վանահայր Սարգիս եպիսկոպոսի (Փիլոյա՞ն) հետ, այլապես առանց տվյալ վանքի վանահոր նախնական համաձայնության դժվար կլիներ մտածել, որ յուրաքանչյուրը, նույնիսկ հեղինակավոր հոգևորական, կարող էր հայտ ներկայացնել այդ միաբանությանն անդամակցելու: Առավել ևս վատ հարաբերությունների դեպքում վանահայրն ինքը դառնալու էր այն մեծ խոչընդոտը, որ անկասկած խանգարելու էր «իր գործն» անելուն: Եկեղեցու պաշտոնեական աստիճանակարգության տեսանկյունից, ըստ էության, Կոմիտասը խնդրում էր իր ծառայությունը կաթողիկոսական ենթակայությունից իջեցնել վանահայրության ենթակայություն: Այդ «իջեցման» հետևանքները նա չէր կարող նկատի չառնել, և որոշումն էլ պատահական, հուզախոշիվ պոռթկումի արդյունք չէր կարող լինել:

Վերջապես խիստ կարևոր մեկ հանգամանք կա: Մատթեոս Բ կաթողիկոսի գրությունից հասկանում ենք, որ Սևանի վանքի վանահայր Սարգիս եպիսկոպոսը 1909 թ. սեպտեմբերի 13-ին դիմել է կաթողիկոսին իր առաջնորդած մենաստանում «երեսնաչափ» աշակերտների համար երկդասյան դպրոց հիմնելու խնդրանքով: Դրան ի պատասխան՝ կաթողիկոսը հոկտեմբերի 3-ին հրապարակել է համապատասխան արտոնագիր-կոնդակը (կամ

⁵⁵ Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան 2002, 903:

նամակը՝ գովելով առաջնորդի կրթական նախաձեռնությունը, որ համահունչ է համարել ժամանակի պահանջներին⁵⁶: Այսպիսով, երբ համադրում ենք Կոմիտասի 1909 թ. սեպտեմբերի 5-ին կաթողիկոսին գրած նամակն ու Սևանի մենաստան հեռանալու ցանկությունը և Սևանի վանքի վանահոր նույն ամսի 13-ին կաթողիկոսին գրած նամակը՝ իր մենաստանում դպրոց հիմնելու խնդրանքով, գրեթե կասկած չի մնում, որ Կոմիտասը տեղյակ էր, հնարավոր է նույնիսկ մասնակից էր դպրոց հիմնելու նախագծին և նպատակ ուներ աշխատելու նոր հիմնվող այդ հաստատությունում: Ի դեպ, այդպիսի նախաձեռնություն հետո էլ է ունեցել: Կ. Պոլսում երաժշտական դպրոցի նման մի հաստատություն հիմնելու մասին 1913 թվականի ամռանը նամակով տեղեկացնում է Հ. Թումանյանին⁵⁷:

Ինչևէ, 1909 թ. սեպտեմբերի 5-ի նամակից աներկբայորեն հստակ է դառնում, որ Սևան մեկնելու Կոմիտասի ցանկությունը ոչ թե սոսկ կուսակրոն հոգևորականին վայել աղոթական կյանքին տրվելն էր, այլ անապատում, հավանաբար միջնադարյան վանական կենտրոնների օրինակով, մշակութային գործունեություն ծավալելը: Դրանով ուղղակի զուգադրվում էին թե՛ իր հայ հնավանդ մշակութային հիմքերի վերակերտման մշտակա ձգտումը, թե՛ վանահոր դպրոց հիմնելու ծրագրը: Այս գործընթացի այլ մանրամասներ, ցավոք, մեզ հայտնի չեն: Հնարավոր է, որ հենց դպրոցի չբացվելու պատճառով նաև Կոմիտասի Սևան տեղափոխվելն է խափանվել, նամակն էլ մնացել է անհետևանք⁵⁸:

Կաթողիկոսական ընտրությունները՝ որպես որոշիչ գործոն, կամ «էջմիածնական» շրջանի ավարտը. terminus ad quem.

Մատթեոս Բ Իզմիրլյանի մահից հետո Գևորգ Ե Սուրենյանցի՝ կաթողիկոս ընտրվելն արդեն սոսկ խմբակային պայքարով չէ, որ կարող էր սպառնալ Կոմիտասին: Գևորգ Ե կաթողիկոսի հետ խնդիրները, որ 1913 թվականին

⁵⁶ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության 2001, փ. N 313, 444-445:

⁵⁷ Կոմիտաս Վարդապետ 2009, 222:

⁵⁸ Այդուհանդերձ, Մատթեոս Իզմիրլյանի թե՛ պատրիարքական, թե՛ հայրապետական գահակալության շրջաններում անպատասխան նամակները, հավանաբար, եզակի երևույթներից չէին: Այդ կարգի դիմումների շարքից մեկ ուրիշ օրինակ կա, որ շատ բանով բացատրում է Մատթեոս կաթողիկոսի մոտեցումը՝ նման իրողություններին ընթացք չտալու առումով: Այն կարող էր արտացոլվել Կոմիտասի դեպքում ևս: Խոսքը Կ. Պոլսի արդեն նախկին պատրիարք Մաղաքիա արք. Օրմանյանի և Մատթեոս կաթողիկոսի հարաբերություններին է առնչվում: Օրմանյանի պատրիարքական շրջանի ավարտին առնչվող ողջ թնջուկն այստեղ մեկնաբանելու կարիք չկա: Միայն հավելենք, որ նախկին պատրիարք Մ. արք. Օրմանյանի մի քանի դիմումը իրեն հաջորդած պատրիարքի՝ Մատթեոս Իզմիրլյանի անպատասխան թողնելը արդեն Մատթեոս Բ կաթողիկոսը բացատրել է հայ հանրության որոշ շրջանակներ չգրգռելու զգուշավորությամբ: Ահա նաև այդ թնջուկը նկատի ունեինք, երբ ակնարկեցինք Կ. Պոլսի պատրիարքության շուրջ ձևավորված բարդ իրավիճակը, դա ևս նկատի ունեինք, երբ ակնարկեցինք ազգային կուսակցությունների առաջադրած օրակարգի հետևանքները: Օրմանեան 2001, 5842, 5918:

Բյուրականում իրենց սուր դրսևորումը կատանան, արդեն լուրջ առիթ էին Կ. Պոլսից չվերադառնալու համար: Կաթողիկոսական իշխանությամբ օտոված հակադիր թևն ի զորու էր ոչ միայն խոչընդոտելու Կոմիտասի գործունեությունը, այլև արգելելու կամ առնվազն վերահսկելու այն: Իսկ Գևորգ Ե Սուրենյանցի ընտրությունը 1911 թվականի իրողություն էր և, իսկապես, կարող ենք ենթադրել, որ Կոմիտասը մեկ տարի հապաղել է Էջմիածին վերադառնալ՝ սպասելով կաթողիկոսական ընտրությունների արդյունքներին, որոնք իր համար նախընտրելի չեղան⁵⁹:

Կաթողիկոսական ընտրությունը, որպես Կոմիտասի Կ. Պոլիս տեղափոխվելու հիմնական պատճառ, հաստատվում է նաև մի քանի փաստական տվյալների համադրումով և հիշյալ պաշտոնական փաստաթղթերով: Մատթեոս Բ Իզմիրլյանի առողջական վատ վիճակի մասին միաբաններին հայտնի էր դեռ 1909 թվականից⁶⁰: Ուստի 1910 թ. հոկտեմբերի վերջերին, երբ Կոմիտասը պետք է վերադառնար Էջմիածին, անակնկալների մասին մտահոգվելու առիթ ուներ: Նույն շրջանից ծայր առավ կաթողիկոսի և պոլսական քաղաքական կուսակցությունների միջև բավական խոր մի դիմակայություն՝ կապված եկեղեցիներում քաղաքական հավաքների անցկացման արգելքի հետ: Դրա հետևանքով հոկտեմբերի 22-ին հրաժարական տվեց Կ. Պոլսի պատրիարք Եղիշե արք. Դուրյանը: Թվում է, այս մթնոլորտը հարևանցիորեն միայն կարող էր առնչվել Կոմիտասին, սակայն վերը հիշատակված համերգային «գրաքննությունները», որ Կոմիտասը հրապարակավ կապում էր ինչ-որ չարական մարդկանց դավերի հետ, կաթողիկոսի կայացրած արգելքի շուրջ բարձրացած դժգոհությունն ու «օրմանյանականներին» դրա հետ կապելը այսպես թե այնպես առնչակից իրողություններ էին: Դրա ուղիղ վկայությունը Կ. եպս. Տեր-Մկրտչյանի և կաթողիկոսի վերը հիշատակված գժտությունն էր, որ տեղի ունեցավ արդեն 1910 թ. նոյեմբերի 19-ին: Այդ միջադեպը և Կարապետ Եպիսկոպոսին հասցված վիրավորանքը հենց այս թնջուկի մասն էին: Առկա դժգոհությունների մեջ կաթողիկոսը մեղադրել էր «օրմանյանականներին», որին դիմադարձել էր Կարապետ սրբազանը՝ հանգեցնելով հայրապետի կոպիտ պողպեղումին: Հաջորդ օրն իսկ Կ. եպս. Տեր-Մկրտչյանը ներկայացրել էր ընդլայն մի բողոք-բացատրագիր, որով և հրա-

⁵⁹ Գևորգ Ե Սուրենյանցը, որ ժամանակին նպաստել էր Բ. Կարա-Մուրզայի և Մ. Եկմայանի գործունեությանը, եկեղեցական կյանքում իրագործել էր մի շարք բարենորոգություններ և նորամուծություններ (այդ թվում՝ երգեհոնի կիրառությունը Հայ եկեղեցում, Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության 2005, 12), որ իր կաթողիկոսական գահակալության ընթացքին որպես հայ եկեղեցու ամենածեռնահաս և հայրենասեր հովվապետերից մեկը արժանի կերպով պետք է դիմակայեր հայ ժողովրդի պատմության ամենաճակատագրական իրադարձություններից մի քանիսը կամ խթաններ մյուսները (Մեծ եղեռն, Հայաստանի խորհրդայնացում կամ Սարդարապատի հերոսամարտ, Առաջին հանրապետության հաստատում և այլն), ցավոք, Կոմիտասի կյանքում նպաստավոր դեր չունեցավ: Ինչևէ...

⁶⁰ Тунян 2004, 114.

ժարական էր ներկայացնում⁶¹: Դրան զուգահեռ՝ հակադիր թևի դիրքերն ավելի էին ամրացել:

Կ. եպս. Տեր-Մկրտչյանն «օրմանյանական» թևի, կարելի է ասել, առաջնորդն էր կամ առաջնորդներից մեկը: Ուրեմն ակնհայտ էր, որ 1910 թ. հոկտեմբերի վերջին, նոյեմբերի սկզբին, երբ Կոմիտասը պետք է վերադառնար Մայր աթոռ, խիստ անբարենպաստ ժամանակ էր: Թերևս նաև դրանով էր պայմանավորված այն թերթային ծանուցումը, թե Կոմիտասը ծրագրել է ևս մեկ տարի համերգներով շրջագայել, ապա նոր վերադառնալ Էջմիածին: Ահա սա է, որ անվանում ենք **սպասողական դիրք գրավել, հապաղել**: Սակայն տեղի է ունենում վատթարը: 1910 թ. նոյեմբերի 29-ին կաթողիկոսի առողջական վիճակը կտրուկ վատանում է, իսկ դեկտեմբերի 11-ին նա մահանում է:

Մինչև նոր կաթողիկոսի ընտրությունները Մայր աթոռում իրավիճակը, իսկապես, ամենաանբարենպաստ կարող էր համարվել Կոմիտասի համար: Նախ, օբյեկտիվորեն կարող էին ընթացք չտալ որևէ պաշտոնական դիմումի կամ խնդրանքի՝ ընտրված կաթողիկոս չունենալու օրինական պատճառաբանությամբ: Կաթողիկոսական տեղապահը Գևորգ արք. Սուրենյանցն էր: Նրա կամ Սինոդի որոշումներին հուսալը⁶² նշված իրավիճակում Կոմիտասի համար անցանկալի էր: Ուստի, 1910 թ. աշնանը Կոմիտասի Էջմիածին չվերադառնալը և սպասողական դիրք գրավելը հիմնավոր են թվում: Մինևույն ժամանակ հնարավորությունը, որ նոր կաթողիկոսի ընտրությունը կարող էր և շրջել դեպքերի ընթացքը, իրական էր: Կոմիտասը կարող էր հույս ունենալ, որ նոր կաթողիկոս կարող է ընտրվել Մայր աթոռի հակամարտող խմբակների՝ ոչ իրենց հակադիր թևից մեկը կամ գոնե չեզոք մի հոգևորական: Ուստի և բնական է, որ սպասեր նոր ընտրություններին: Դրանք կայացան 1911 թ. դեկտեմբերի 13-ին (ըստ կարգի՝ նախորդ կաթողիկոսի մահից մեկ տարի անց)⁶³: Ընտրվեց Գևորգ Ե. Սուրենյանցը⁶⁴: Ի դեպ, ընտրությունը բոյկոտած 28 պատգամավորների մեջ քիչ չէին օրմանյանականները, նույն Կ. արք. Տեր-Մկրտչյանը, Գարեգին վրդ. (հետագայում՝ կթղ.) Հովսեփյանցը և այլք⁶⁵: Եղիշե արք. Դուրյանը, որ նորընտիր Գևորգ Ե Սուրենյանցի հիմնական մրցակիցն էր և նրան զիջել էր մեկ ձայնով⁶⁶, Կոմիտասի համար կարող էր լինել հենց այն չեզոք մեկը, որ նախկինում էլ փորձել էր իրավիճակն հավասարակշռել Կ. Պոլսում. ժամանակին Մ. արք. Օրմանյանի հետ հիմնել

⁶¹ Тунян 2004, 186-190.

⁶² Սինոդում հակադիր թևը բավական ուժեղ էր ներկայացված՝ դատելով 1911 թվականի կաթողիկոսական ընտրությունների փաստաթղթերից: Տե՛ս Յուսիկ արքեպ. 1911, հ. ԺԲ, 37:

⁶³ Յուսիկ արքեպ. 1911, հ. ԺԲ, 6:

⁶⁴ Յուսիկ արքեպ. 1911, հ. ԺԲ, 2-56:

⁶⁵ Յուսիկ արքեպ. 1911, հ. ԺԲ, 49:

⁶⁶ Յուսիկ արքեպ. 1911, հ. ԺԲ, 51:

ու զարգացրել էր Արմաշի նշանավոր դպրեվանքը⁶⁷, ի վերջո, լինելով մեծ բանաստեղծի կրտսեր եղբայրը, ինքն էլ արվեստագետ մարդ էր: Նրա ընտրության հնարավորությունը նույնպես կարող էր Կոմիտասի համար հույսով սպասելու առիթ դառնալ:

Ինչևէ, **այն, որ 1910 թ. աշնանից մինչև 1911 թ. դեկտեմբերի վերջ Կոմիտասը ո՛չ գրավոր, ո՛չ բանավոր վկայությամբ, ո՛չ էլ հրապարակավ չի ակնարկել Էջմիածնի միաբանությունից հեռանալու իր մտադրության մասին, պաշտոնական ոչ մի դիմումով չի հրաժարվել Մայր աթոռում իր զբաղեցրած պաշտոններից, Կ. Պոլսում հաստատվելու մտադրության մասին նույնպես չի հայտնել և փաստացի այնտեղ չի էլ հաստատվել, անշրջանցելի իրողություններ են:** Փաստերը վկայում են այն մասին, որ, մնալով Ս. Էջմիածնի միաբան, համերգային շրջագայություններին զուգահեռ, սպասել է Մայր աթոռում ներքին իրավիճակի վճռորոշ փոփոխության կամ գոնե ոչ բացասական միտումով կայունացման:

Մեր տեսակետը հիմնավորող խոսույն փաստ է նաև այն, որ Կոմիտասն իր պաշտոնական հրաժարականը ներկայացրել է միայն կաթողիկոսի ընտրությունից հետո: Գևորգ Ե Սուրենյանցն ընտրվել է 1911 թ. դեկտեմբերի 13-ին, Կոմիտասը Կ. Պոլիս տեղափոխվելու ցանկությամբ Մայր աթոռ է դիմել գրեթե անմիջապես (եթե նկատի ունենանք ընտրություններին հաջորդող բազում ընթացակարգային արարողություններն ու գործընթացները, որ ձգվեցին մինչև 1912 թ. ամառ⁶⁸) 1911 թ. դեկտեմբերի 26-ին: Այդ մասին Սինդոնում պաշտոնապես զեկուցվել է 1912 թ. հունվարի վերջին⁶⁹: **Այսինքն՝ նոր կաթողիկոսի ընտրությունն այն վճռորոշ պատճառն էր կամ առնվազն այդպիսիներից մեկը, որ Կոմիտասին ստիպեց տեղափոխվել Կ. Պոլիս:**

Այս վերջին զեկուցագիրը ծանուցում էր, որ Կոմիտասի խնդրանքով դադարեցվում է նրա միաբանական աշխատավարձը: Այն առաջարկվում էր «կարճել» 1910 թ. նոյեմբերի 1-ից, քանի որ Կոմիտասն ինքնական բացակայել էր Մայր աթոռից այդ օրվանից⁷⁰: Ըստ մեկ այլ փաստաթղթի՝ որոշումը կայացվել է Սինդոնի քննարկումից երկու օր հետո՝ հունվարի 27-ին⁷¹: Սա խիստ ուշագրավ է: Այսինքն՝ մինչև 1912 թ. հունվարի 27-ը Կոմիտասի անունով Մայր աթոռում դուրս էր գրվել միաբանական աշխատավարձ: Թեև, դատելով զեկուցագրի ձևակերպումներից, Կոմիտասն այն չի ստացել և

⁶⁷ Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան 2002, 157:

⁶⁸ Գևորգ Ե Սուրենյանցի ընտրությունը թագավոր-կայսրը հաստատել է 1912 թ. մարտի 18-ին, օծումը կայացել է հուլիսի 1-ին: «Արարատ» 1912, հ. Դ., 308-318, հ. Է-Ը, 604-619: Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության 2005, 12, փ. N 35, 68-75:

⁶⁹ Հմմտ. Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության 2019, փ. N 64, 84-85:

⁷⁰ Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության 2019, փ. N 64, 84-85:

⁷¹ Հմմտ. Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության 2019, փ. N 64, 84-85, փ. N 64, 84-85, փ. N 68, 88-89:

կարճվել է հետին թվով: Ավելին՝ Կոմիտասը նույն՝ 1912 թվականին է միայն էջմիածնում լիազոր անձի միջոցով վաճառել իր ունեցվածքը. շեշտված է ոռյալը⁷²:

Այսինքն՝ դեռևս 1910 թվականին, իբր, կաթողիկոսին Կոմիտասի ներկայացրած հրաժարականի մասին տպագիր լուրերը կեղծիք էին: Մինչև 1911 թվականի ավարտը Կոմիտասը Մայր աթոռի միաբան էր, և նրա հիմնական կեցավայրը, անկախ շրջագայություններից, էջմիածինն էր: Այս հանգամանքը նրա կողմից ոչ մի փաստաթղթով կամ հայտարարությամբ կասկածի չի առնվել: 1910-1911 թթ. իր ստեղծագործական շրջագայությունների ընթացքում Կոմիտասը Կ. Պոլսում կամ որևէ այլ վայրում չի հաստատվել: Վերջապես, նրա կյանքի այդ շրջանի խիստ վճռորոշ իրադարձությունները, ուղիղ կամ միջնորդավորված, կապվում էին Մայր աթոռում ծավալվող գործընթացների հետ:

«Պոլսական» շրջանի գեղարվեստական որոշ բնութագրիչներ

Քննարկվող երկու տարիներին նշանակալի կարող է համարվել սոսկ մշակումների նոր տեսրի կազմումը 1911 թ. հուլիս-օգոստոսին, որում դարձյալ գեղարվեստական մտածողության բնութագրերի առումով էական տեղաշարժեր չկան, եթե համեմատենք նախորդ խոշոր ժողովածուի՝ 1907-ին հրատարակված «Հայ քնարի» հետ: Դեռ ավելին, այս ժողովածուում ընդգրկված երգերը Կոմիտասն ընտրողաբար է հրատարակել, և ժողովածուի պահպանված բնագրերն էլ որոշ պակասություններ ունեն⁷³:

Ստեղծագործական նոր միտումների կամ նորովի վերածնակերպված սկզբունքների մասին կարող ենք խոսել ավելի ուշ՝ 1912 թվականից հետո միայն: Այստեղ հնարավոր չէ Կոմիտասի ստեղծագործական այդ վերջին շրջանի հատկանիշները հանգամանորեն վերլուծել: Սակայն նույնիսկ մակերեսային դիտարկումով որոշ իրողություններ առանձնանում են: Բացի շարադրանքի պարզեցումից, հստակեցումից և առավել օրգանական ամբողջություն ձևավորելու ձգտումից, որ հատուկ է նրա ստեղծագործական վերջին շրջանի գործերին⁷⁴, որպես այլ միտում, օրինակ, նշելի են **ծավալուն ձևերի և մշակութային հնագույն շերտերի վերակերտման՝ մենք կասեինք «նոր արխաիզմների» հակումը**: Հայ ժողովրդական երգերից շարեր ստեղծելու ձգտումը, իհարկե, վաղ երևույթ է և ոչ միայն Կոմիտասի արվեստում դրսևորված: Խոսքը տարբեր շարեր որպես թեմատիկ կամ նույնիսկ բովանդակային-սյուժետային ամբողջություն մեկնաբանելու մասին է: Եթե դաշնամուրային պարերի նոր խմբագրությունը կարող է մեկնաբանվել որպես

⁷² Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության 2019, փ. N 65, էջ 66, 86-87:

⁷³ Կոմիտաս 1960, 8-9:

⁷⁴ Կոմիտաս 1982, 9:

ստեղծագործական հասուն ոճին հարիր, բյուրեղացած մտածողությամբ հայկական դաշնամուրային սյուիտի նմուշ (1916 թ.), ապա 1913 թվականի կեսերից Կ. Պոլսում արդեն կատարվող⁷⁵ Հարսանեկան Բ շարի պոլսական նախագծերն իր ժամանակների համար խիստ առաջադեմ մեկ այլ միտում են դրսևորում: Կոմիտասը շարը մեկնաբանում է որպես հնագույն ծիսական ողնաշարի (թե՛ նախաքրիստոնեական, թե՛ քրիստոնեական) վրա, բովանդակային-դրամատուրգիական ամբողջություն ունեցող, հստակ կերպարային ոլորտների ընդգծումներով⁷⁶ կառույց, որը, մեր համոզմամբ, ստեղծագործությանը հաղորդում է օրատորիալ բնույթ: Իհարկե, օրատորիա ժանրի դասական օրինակները կպահանջեին մի շարք այլ բնութագրիչներ, որ այստեղ չկան և չէին ունենա մյուսները, որ առկա են Կոմիտասի Հարսանեկան Բ շարում: Սակայն հարկ է նկատի ունենալ կոմիտասյան ժանրերի և դրանց եվրոպական համարժեքների համադրելիության խիստ պայմանական բնույթը: Այդ պայմանականությունը բխում է նրա ժառանգության հիմնական բնութագրիչների ազգային տրամաբանությունից և XX դարասկզբից նկատվող դասական ժանրերի նորարարական մեկնաբանման մեծ ազատությունից: Այսու՝ Կոմիտասի արվեստում այսպիսի մեծակտավ երկը որպես օրատորիա կամ գոնե օրատորյալ հատկանիշներ ունեցող մեկ ամբողջություն մեկնաբանելը բնավ մերժելի չենք համարում: Այլ խոսքով՝ XX դարասկզբի հայկական օրատորիան ո՛չ միայն կարող էր, այլև պե՛տք է տարբեր լիներ, ասենք, Գ. Հենդելի այդ ժանրի մոնումենտալ կտավներից, այն էլ՝ կոմիտասյան մեկնաբանմամբ:

Այստեղ առկա է հնագույն ծեսի արարողական ընթացակարգով զարգացող դրամատուրգիա, որ հենվում է երկու կերպարային ոլորտների՝ «Թագավորի»՝ փեսայի և «Թագուհու»՝ հարսի գովքերի ու նրանց առնչվող երգային միավորների վրա, առկա է սյուժե՝ դիմառնացված երգային-խմբերգային համարներով, որտեղ ընդհանուր պատում հիշեցնող խմբերգերը ներկայացվում են «խմբակային կերպարների»՝ հարսանքավորների, հարսի կամ փեսայի ընկերների անունից: Պատումի մեջ «գործուն» (գործողություն ենթադրող, ակնարկող ներկայությամբ) երևում են թագվորն ու թագվորամերը, իսկ անհատապես ներկայացող կերպարներից է հատկապես հարսը:

⁷⁵ Կոմիտաս 1869, 266:

⁷⁶ Կոմիտասի թողած բնագրերից մեկում՝ «Առավոտուն բարի լուս» երգին կից, կա հարսանեկան յոթ երգից բաղկացած շարի դրամատուրգիական ամբողջությունը ներկայացնող շարադրանք, գրեթե լիբրետո: Տե՛ս Կոմիտաս 1869, 267-268: Նույն տեքստը՝ որոշ փոփոխություններով Կոմիտասը մատուցել է 1913 թ. մայիսի 28-ին Ադաբազարի Արամյան վարժարանում կայացած իր համերգ-դասախոսության ընթացքում, որտեղ հարսանյաց երգերին վերաբերող ողջ դրվագը գեղարվեստական ու խիստ կերպարային ոճով պատմել է որպես սյուժետային ամբողջություն: Տեքստը տպագրել է «Բիզանդիոնը»: Սամվելյան 1974, N 7, 52-53:

Նույն՝ հնավանդ հիմքով մեծակտավ երկերի հունի մեջ է տեղավորվում նաև «Մշո շորորը», որի վերջնական հեղինակային խմբագրությունը, ցավոք, չունենք. այն շրջանառու է Ռ. Աթայանի խմբագրությամբ⁷⁷:

Վերջապես, կոմիտասյան մեծակտավ երկերի պսակը Պատարագի վերջին տարբերակն է (1915 թ.), որի կարևորագույն հատկանիշներից մեկը նրա երկֆունկցիոնալ բնույթն է: Այդ թվում առաջինը, իհարկե, ծիսական կիրառականությունն է: Սակայն այն նաև ծիսական տրամաբանությամբ միավորված խմբերգային (մեներգ-խմբերգ ևս) ամբողջություն է, որն արդեն հստակորեն կարող է մեկնաբանվել որպես հայ ազգային կոմպոզիտորական արվեստի կանտատ-օրատորիալ ժանրի արտահայտություն⁷⁸, որովհետև հեղինակի մտահղացմամբ ունի ծիսական արարողությունից դուրս գեղարվեստական կենցաղավարման նախատեսվածություն ևս⁷⁹, բնութագրվում է գեղարվեստական «ինքնարժեքությամբ», դրամատուրգիական ամբողջությամբ, որը պայմանավորող ատաղձը կրոնական պատումն ու ծիսական արարողակարգն են, ինչպես եվրոպական վաղ շրջանի օրատորիաների դեպքում:

Եզրակացություններ

Գեղարվեստական հարցերի նշված համախումբը, որպես Կոմիտասի ստեղծագործական կյանքի նոր շրջան ձևավորող միտումներ, դրսևորվել է արդեն 1912 թվականից հետո և, իսկապես, իր պոլսական կյանքին շաղկապված: Այս շրջանի ստեղծագործական առանձնահատկությունների ուսումնասիրությունը, անշուշտ, հետագրուման առանձին նյութ է:

Այստեղ այդ հարցերին անդրադարձանք սուկ մակերեսորեն, փաստելու համար, որ **1910-1911 թվականները չեն կարող համարվել «պոլսական» շրջան: Այն սկսում է 1912 թվականից: Նախորդող երկու տարին «էջմիածնական» շրջանի ավարտն են ներկայացնում, որը, մեծ ցանկության դեպքում, գուցե առանձին էլ կարող է դիտվել, սակայն որպես «էջմիածնական» շրջանի՝ համերգային շրջագայությունների մի ենթափուլ:**

Օգտագործված գրականություն

«Արարատ» 1911-ՌՅԿ., տարի ԽԵ., մարտ, համար Գ., էջ 168:

«Արարատ» 1912-ՌՅԿԱ., տարի ԽԶ., ապրիլ, համար Դ., էջ 308-318, հուլիս օգոստոս, համար Է-Ը, էջ 604-619:

Գասպարյան Ս. 1947, Կոմիտաս, Երևան, «Հայպետհրատ», 105 էջ:

⁷⁷ Կոմիտաս 1982, 12, 173-174, 179: Ի դեպ, մեր երաժշտագիտության մեջ արդեն նշվել է, որ հնագույն մշակույթի կոմպոզիտորական վերակերտումներով Կոմիտասը կանխում է անցյալ դարասկզբի մի շարք մեծ նորարար-կոմպոզիտորների: Հմմտ. Գյոդակյան 2000, 38, Նավոյան 2020, 144:

⁷⁸ Նավոյան 2020, 136-137:

⁷⁹ Պատարագի համերգային կենցաղավարման համար նախասահմանված լինելու և դրա հետ կապված որոշ թյուրիմացությունների մասին նկատել է Ռ. Աթայանը: Կոմիտաս 1997, 7-8:

- Գյոդակյան Գ. 2000, Կոմիտաս, Երևան, «Գիտություն», 79 էջ:
 «Թերթապատում». Մամուլի անդրադարձները Կոմիտաս Վարդապետի մասին 2019, Պոլսոյ շրջան 1910-1911 թթ., գիրք Ա, Աշխատասիրութեամբ Արմինէ Գրիգորեանի, Երևան, «Անտարես», 422 էջ:
- Թերլեմեզյան Ռ. 1992, Կոմիտաս, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 147 էջ:
- Կոմիտաս 1960, Երկերի ժողովածու, հատոր առաջին, խմբագրություն՝ Ռ. Աթայան, Երևան, «Հայպետհրատ», 194 էջ:
- Կոմիտաս 1969, Երկերի ժողովածու, հատոր երրորդ, խմբագրություն՝ Ռ. Աթայան, Երևան, «Հայաստան», 308 էջ:
- Կոմիտաս 1982, Երկերի ժողովածու, հատոր վեցերորդ, խմբ. Ռ. Աթայանի, Երևան, «Սովետական գրող», 239 էջ:
- Կոմիտաս 1997, Պատարագ, յոթերորդ հատոր, խմբ. Ռ. Աթայանի, Երևան, «Անահիտ», 190 էջ:
- Կոմիտաս Վարդապետ 2009, Նամականի, Աշխատասիրութեամբ Գուրգէն Գասպարեանի, Երևան, «Սարգիս Խաչենց-Փրինթինֆո», 549 էջ:
- «Հովիտ» շաբաթաթերթ 1910, N 36 (դեկտեմբերի 19), էջ 566-567:
- Յոլյան Ի. 1969, Կոմիտաս, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ, 249 էջ:
- Յովսեփեան Գ. վրդ. 1908-ՌՅԾԷ., Գրախօսութիւն, «Արարատ» պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, տարի ԽԱ., հուլիս-օգոստոս, համար Է.-Ը., էջ 709-711:
- Յուսիկ արքեպ. 1911-ՌՅԿԱ., Ընտրութիւն Ամենայն Հայոց Հայրապետի, «Արարատ», տարի ԽԵ., դեկտեմբեր, համար ԺԲ, էջ 6-56:
- Նավոյան Մ. 2020, Ազգային կոմպոզիտորական դպրոցի հայեցակարգն ըստ Կոմիտասի, Երևան, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հրատ., 180 էջ:
- Սամվելյան Խ. 1969, Կոմիտասի կյանքի և գործունեության համառոտ տարեգրություն, «Սովետական արվեստ», N 11, էջ 52-64, N 12, էջ 54-64:
- Սամվելյան Խ. 1970, Կոմիտասի կյանքի և գործունեության համառոտ տարեգրություն, «Սովետական արվեստ», N 1, էջ 61-614, N 2, էջ 62-64, N 3, էջ 49-52, N 5, էջ 53-60:
- Սամվելյան Խ. 1971, Կոմիտասի կյանքի և գործունեության համառոտ տարեգրություն, «Սովետական արվեստ», N 1, էջ 51-55, N 2, էջ 53-58, N 6, էջ 52-54, N 8, էջ 50-59, N 9, էջ 52-61:
- Սամվելյան Խ. 1972, Կոմիտասի կյանքի և գործունեության համառոտ տարեգրություն, «Սովետական արվեստ», N 1, էջ 58-61, N 3, էջ 48-51, N 6, էջ 47-55:
- Սամվելյան Խ. 1973, Կոմիտասի կյանքի և գործունեության համառոտ տարեգրություն, «Սովետական արվեստ», N 3 էջ 52-59:
- Սամվելյան Խ. 1974, Կոմիտասի կյանքի և գործունեության համառոտ տարեգրություն, «Սովետական արվեստ», 1974, N 1, էջ 55-59, N 5, էջ 52-58, N 7, էջ 48-56:
- Սարուխանյան Ն. 2006, Հայկական հարցը, արևմտահայ ազատագրական միտքը և Մաղաքիա Օրմանյանը, «Պատմա-բանասիրական հանդես», N 1, էջ 50-71:
- Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան 2001, գիրք Ը., Մատթէոս Բ Իզմիրլեան Կաթողիկոս Ամենայն Հայոց (1908-1910 թթ.), կազմեց և առաջաբանը գրեց՝ Սանդրո Բէիբուղեան, Երևան, «Հայաստան», 972 էջ:
- Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան 2005, Գիրք ԺԳ, Գէորգ Ե Վշտալի Սուրենեանց Կաթողիկոս Ամենայն Հայոց, կազմող՝ Սանդրո Բէիբուղեան, Երևան, 712 էջ:
- Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան 2019, գիրք ԻԱ., Կոմիտաս Վարդապետ Սողոմոնեան (1969-1935), Փաստաթղթերի ժողովածու (ըստ Հայաստանի ազ-

- գային արխիվի նիւթերի), Կազմեց՝ Գոհար Աւագեան, Մայր աթոռ Սուրբ Էջմիածին, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., 279 էջ:
- Տեր-Մինասեան Ե. 1908-ՌՅՅԷ., Վերանորոգութեան կարիքը Հայ եկեղեցու համար, «Արարատ», տարի ԽԱ., մայիս-հունիս, համար Ե.-2., էջ 465-487:
- Տեր-Մինասեանց Ե. վրդ. 2013, Ընդհանուր եկեղեցական Պատմութիւն, հատոր առաջին, Հին եկեղեցին, նախաբան հոդվածը՝ «Երվանդ Տեր-Մինասյանի «Ընդհանուր եկեղեցական պատմութիւն. հին եկեղեցին» աշխատությունը», Գևորգ եպ. Սարոյանի, Ս. Էջմիածին, Մայր աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 511 էջ:
- «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան 2002, Երևան, 1072 էջ:
- Օրմանեան Մ. արք. 2001, Ազգապատում, Գ հատոր, Մայր աթոռ Ս. Էջմիածին, 5970 էջ:
- Шавердян А. 1956, Комитас и армянская музыкальная культура, Ереван, «Армгосиздат», 344 с.
- Тунян В.Г. 2004, Правление католикоса М. Измирляна 1908-1910 гг., Ереван, изд. «Чартагет», 203 с.

НАЧАЛО «КОНСТАНТИНОПОЛЬСКОГО» ПЕРИОДА ЖИЗНИ И ТВОРЧЕСТВА КОМИТАСА

Мгер Навоян

Резюме

Началом константинопольского периода жизни и творчества Комитаса принято считать 1910 год – именно тогда Комитас покинул Эчмиадзин.

В аргументах, приводимых при определении этапов жизнедеятельности Комитаса, упоминается ряд обстоятельств, в частности, напряженная атмосфера, царившая в то время в Первопрестольном Эчмиадзине и представленная как гонения против самого Комитаса, его письма католикосу, оставшиеся без ответа, планы по созданию консерватории в Константинополе и т.д.

Знакомство с опубликованными сегодня документами и письмами позволяет утверждать, что конфликт между двумя сформировавшимися в Эчмиадзине флангами духовенства не следует рассматривать в качестве личного фактора, направленного против Комитаса. Следует, впрочем, отметить, что это противостояние действительно отрицательно сказалось на его деятельности. И все же, решающим обстоятельством для переезда Комитаса в Константинополь послужило то, что в конце 1911 года, в атмосфере продолжающегося конфликта мировоззрений был избран новый католикос. Другие сохранившиеся документы также свидетельствуют о том, что именно в это время Комитас подавал в Эчмиадзин официальное прошение об отъезде. Прощение было удовлетворено в начале 1912 года. Этому предшествовала длительная поездка Комитаса по различным областям Османской империи и

некоторым странам Европы, во время которой он выступал с концертами и лекциями. На протяжении всего этого времени связь с Эчмиадзином не прерывалась. Таким образом, началом константинопольского периода жизни и творчества Комитаса следует считать именно 1912 год.

Ключевые слова – Комитас, Матевос II Измирлян, Геворг V Суренянц, Константинополь, Эчмиадзин, константинопольский период, эчмиадзинский период.

BEGINNING OF "THE CONSTANTINOPLE PERIOD" IN THE LIFE AND WORK OF KOMITAS

Mher Navoyan

Abstract

The year 1910, when Komitas left Etchmiadzin, is considered the beginning of the Constantinople period of his life and work.

The arguments used to determine the stages of Komitas' life refer to various circumstances. These include, in particular, the tense atmosphere in the Mother See of Holy Etchmiadzin at that time, which was presented as persecution against Komitas himself, his letters to the Catholicos which were not answered, plans to establish a conservatory in Constantinople, etc.

The study of the published documents and letters suggests that it is misleading to interpret the conflict between the two flanks in the Etchmiadzin congregation as a persecution of Komitas personally, although it had negative effect on his activities. Meanwhile, the decisive factor in Komitas' relocation to Constantinople was the election of a new Catholicos at the end of 1911 in the midst of this ideological disagreement. Other surviving documents also indicate that at that time Komitas submitted an official petition for his departure from Etchmiadzin. The petition was granted in early 1912. Prior to this, Komitas embarked on an extensive tour of many locations within the Ottoman Empire as well as several European countries, during which he performed concerts and delivered lectures. During all that time, relations with the Mother See of Holy Etchmiadzin were never interrupted. Thus, 1912 should be considered the beginning of Komitas "Constantinople" period of life and work.

Key words – Komitas, Mattevos II Izmirlian, Gevorg V Sureniants, Constantinople, Etchmiadzin, Constantinople period, Etchmiadzin period.

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՔՈՒՉԱԿ-2 ՀՆԱՎԱՅՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔԻ ԲՆԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԲՐՈՆԶ-ԵՐԿԱԹԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ (ըստ 2010 թ. պեղումների արդյունքների)

Լևոն Պետրոսյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ galstyan-1966@mail.ru
ORCID: 0009-0002-8247-2230

Բորիս Գասպարյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ borisg@virtualarmenia.am
ORCID: 0009-0004-9118-9175

Հոդվածը ներկայացվել է 23.12.2023, գրախոսվել է 06.08.2024, ընդունվել է տպագրության 03.12.2024
DOI: 10.53548/0320-8117-2024.3-234

Ամփոփում

Քուչակ-2 ամրոց-բնակատեղի գտնվում է Արագածոտնի մարզի Քուչակ գյուղի հյուսիսարևելյան կողմում, շրջապատի նկատմամբ գերիշխող դիրք ունեցող բլրի վրա: Բլրի արևելյան մասի ստորոտում պեղված ոչ մեծ տարածքում հայտնաբերված խեցեղենն ու քարե գործիքների հարուստ հավաքածուն ցույց են տալիս, որ կյանքն այստեղ սկսվել է առնվազն մ.թ.ա. IV հազ. կեսերին:

Ամրոց-բնակատեղիի տարածքում հայտնաբերված նյութերը թույլ են տալիս եզրակացնել, որ այն հիմնադրվել է վաղ երկաթի դարաշրջանում: Դամբանադաշտում պեղված երկու սալարկղային դամբարաններից մեկը թվագրվում է ուշ բրոնզի, իսկ մյուսը՝ Վանի թագավորության դարաշրջաններով: Գյուղի հարավարևելյան հատվածում ժամանակին պատահականորեն բացված դամբարանի նյութերն էլ իրենց կայուն զուգահեռներն են գտնում միջինբրոնզեդարյան կարմիրբերդյան մշակույթի համալիրներում:

Ինչպես նորահայտ, այնպես էլ արդեն հայտնի նյութերի առկայությունը վկայում է Քուչակ-2-ի և հարակից տարածքի բնակվածության փուլերի մասին, որոնք ժամանակագրական առումով ներառում են մ.թ.ա. IV հազ. կեսերից մինչև մ.թ.ա. I հազարամյակի առաջին կեսը: Գործնականում, Քուչակ գյուղի վարչական սահմաններում իրականացված ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ այդ բնակավայրում դրսևորվել են նյութական մշակույթի զարգացման միևնույն օրինաչափությունները, որպիսիք առկա են Ապարանի գոգավորության տարածքում և Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան հատվածում:

Բանալի բառեր՝ Ապարանի գոգավորություն, Քուչակ, ամրոց-բնակատեղի, կուր-արաքայան մշակույթ, կարմիրբերդյան մշակույթ, սալարկղային դամբարաններ, բրոնզ-երկաթի դարաշրջան:

Ներածություն

Քուչակ-2 ամրոց-բնակատեղին, որը տեղացիներն անվանում են «Հին բերդ», գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի Քուչակ գյուղից մոտ 500 մետր դեպի հյուսիս-արևմուտք: Այն կառուցված է շրջապատի նկատմամբ գերիշխող դիրք ունեցող բնական բարձունքի վրա (նկ. 1):

Քուչակ-2 հնավայրի պեղման աշխատանքները սկսվեցին 2010 թ., երբ փոստրակների միջոցով ստուգվեց ամրոցի շերտագրությունը: Պեղումներով ձեռք բերված ոչ մեծաքանակ նյութերը փաստում են ամրոցի կառուցման ժամանակաշրջանը՝ վաղ երկաթի դարի վաղ փուլ: Այս պարագայում անհրաժեշտ էր պարզել նաև տվյալ հուշարձանի դամբարանադաշտի տեղադիրքը, որի վկայությունները դարձան ամրոցի հարավարևելյան քիչ թեք, հարթ տարածքում պեղված երկու սալարկղային դամբարանները. մեկը՝ ուշ բրոնզի դարի, մյուսը՝ ուրարտական դարաաշրջանների: Ուշագրավ է ամրոցի արևելահայաց ստորոտին բացված վաղ բրոնզեդարյան բնակատեղիի առկայությունը: Այստեղ՝ ոչ մեծ մակերեսով տարածքում կատարված պեղումների շնորհիվ գտնվեցին վաղ բրոնզի դարի վաղ փուլի մասին վկայող խեցեղենի դասական նմուշներ և քարե գործիքների հավաքածու, որը կարող է վերագրվել մ.թ.ա. IV հազ. երկրորդ կեսի ժամանակագրական սահմաններին:

Մինչդեռ գյուղի հարավարևելյան մասում պատահականորեն հայտնաբերված միջինբրոնզեդարյան դամբարանը վերաբերում է այս ենթափուլի կարմիրբերդյան ավանդույթին, որի տեղը ժամանակագրական սանդղակում կարելի է համարել մ.թ.ա. XIX դ. II կեսը:

Վաղբրոնզեդարյան նյութերի բնութագիրը

Վաղբրոնզեդարյան խեցեղենը պատրաստված է մանրահատիկ, ավազախոն կավից և աչքի չի ընկնում այս փուլի խեցեղենին բնորոշ երկշերտությամբ ու սև փայլեցված արտաքին մակերեսով: Խեցանոթների բեկորները միաշերտ են և ունեն կարմիր, վարդագույն կամ կրեմագույն մակերեսներ: Պեղված խեցեգործական արտադրանքը բավական միատեսակ է. հիմնականում կարասներ, կճուճներ, քրեղաններ և գավաթներ են:

Հայտնաբերված կարասների բազմաթիվ բեկորներից հնարավոր է դարձել մեկ կարասի վզի ամբողջական վերականգնումը, որն ունի 10 սմ

բարձրություն և 50 սմ տրամագիծ (աղ. 1, նկ. 1): Այն իր ձևով շատ նման է Շիրակավանի բնակավայրի պեղումներից ձեռք բերված կավե առարկաներին¹, որոնց հետ մեծ ընդհանրություններ ունեն նաև Ապարան², Գազանոց³, Թալինի⁴, Թռելիի⁵ և Քեթիի⁶ հուշարձաններից հայտնաբերվածները:

Պեղումներով գտնված վաղբրոնզեդարյան նյութերում առավել մեծ խումբ են կազմում ուռուցիկ իրանով, բարձր վզով կճուճները, որոնց մի մասի վզի և ուտերի միացման մասում առկա են բռնակներ: Մեր օրինակները գրեթե զուրկ են զարդերից (աղ. 1, նկ. 3, 4-10): Նշված նյութերը ինչպես Հայաստանում, այնպես էլ Հարավային Կովկասում գրեթե նույնական են: Դրանք, ըստ փուլերի, միմյանցից որոշ չափով զանազանվում են ձևաբանական փոքր փոփոխություններով և զարդաձևերով: Քուչակի ուսումնասիրվող նյութերին առավել մոտ են վերջերս Ֆ. Մուրադյանի կողմից Ավանում պեղված վաղ բրոնզի վաղ փուլին պատկանող և, ըստ ռադիոածխածնային վերլուծության տվյալների, մ.թ.ա. 3600-3500 թթ. (կալիբրացված) հասակագրված նյութերը⁷, ինչպես նաև Էլառի⁸, Գեղարոտի⁹, Լանջիկի¹⁰, Թալինի¹¹, Ծաղկալանջի¹² և այլ հուշարձաններից դուրս եկած իրերը:

Քուչակ-2-ում պեղումներով հայտնաբերված խեցեղեն նյութերի մյուս տեսականին են ներկայացնում ձևով կճուճներից ոչնչով չտարբերվող, միայն չափերով համեմատաբար փոքր բաժակները (աղ. 2, նկ. 5-8): Այդպիսիք լավագույնս հայտնի են ինչպես վերը նշված, այնպես էլ Հարավային Կովկասի վաղբրոնզեդարյան մի շարք հուշարձաններից (Սամշվիլոե, Մեծամոր, Թբիլիսի) և բազմաթիվ այլ հնավայրերից: Ասենք, որ կճուճների և բաժակների տեսակը, որոշ փոփոխություններ կրելով, շարունակում է գոյատևել նաև վաղ բրոնզի հաջորդ փուլերում:

Քուչակ-2 ամրոցի արևելյան ստորոտի վաղբրոնզեդարյան բնակատեղիից հայտնաբերված խեցեղենի խմբում զգալի տեղ են զբաղեցնում քրեղանները: Դրանք ունեն գնդաձև իրան, դուրս թեքված շուրթ, փոքր հատակ (աղ. 2, նկ. 1-4): Քրեղանների որոշ մասը օժտված է կլոր փոսիկ-

¹ Թորոսյան և այլք 2002, աղ. 1, նկ. 1:

² Badalyan, Avetisyan 2007, pl. III.

³ Badalyan, Avetisyan 2007, 92, pl. II.

⁴ Badalyan, Avetisyan 2007, 249, pl. V.

⁵ Тбилиси 1978, 35-43, 7, 8, 10, 11, 12.

⁶ Петросян 1989, табл. 12.

⁷ Տվյալները վերցված են Ֆ. Մուրադյանից և Բորիս Գասպարյանից:

⁸ Խանգաղյան 1979, 25, աղ. IV-VII:

⁹ Бадалян, Смит 2008, աղ. III:

¹⁰ Badalyan, Avetisyan 2007, pl. I.

¹¹ Badalyan, Avetisyan 2007, 248, 249.

¹² Badalyan, Avetisyan 2007, 75, pl. II, 17-20.

զարդերով: Նշված նյութերի օրինակներ են էլաո¹³, Քեթի¹⁴, Սամշվիլդե¹⁵, Բաբադերվիշ¹⁶ և մի շարք այլ համաժամանակյա հնավայրերի դամբարանային իրերը:

Քուչակում հայտնաբերված խեցեղենի խմբում առկա են խեցանոթների անբաժանելի մաս կազմող կափարիչները (աղ. 2, նկ. 10-13), որպիսիք հայտնի են վաղբրոնզեդարյան՝ էլաոի¹⁷ դամբարանների, Ապարան 3-ի¹⁸, Գազանոցի¹⁹, Գեղարոտի²⁰, Թռելիի²¹ և բազմաթիվ այլ համաժամանակյա հուշարձանների նյութերում:

Խեցեղեն արտադրանքի վերջին նմուշն է հենակ-պատվանդանի ոտքի փոքրիկ բեկորը (աղ. 2, նկ. 9). այդպիսիք նույնպես լավ հայտնի են վաղբրոնզեդարյան հուշարձաններից²²:

Այսպիսով՝ Քուչակ-2 հնավայրից հայտնաբերված և վերը նկարագրված վաղբրոնզեդարյան խեցեղեն համալիրը հստակորեն ներկայացված է Հայաստանի կուր-արաքսյան մշակույթի վաղ փուլին բնորոշ տիպաբանական հատկանիշներով և հասակագրվում է մ.թ.ա. IV հազ. II կեսով:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում նաև նույն փուլին պատկանող, հղկման և համադրված՝ հղկման ու բեկոտման եղանակներով հարդարված 18 քարե գործիքները (աղ. 3-13), որոնք պատրաստված են հրաբխային ապարներից՝ բազալտից, անդեզիտից և պեմզայից: Այս իրերը կերտված են կարծրության և ծակոտկենության զանազան աստիճան ունեցող գետաքարերից, որոնց մակերևույթների, կողերի և ծայրային մասերի մշակման կամ ձևափոխման շնորհիվ դրանց տրվել է որոշակի ձև, ինչով էլ պայմանավորված է վերջիններիս գործառույթը:

Այդ իրերը հիմնականում երկրագործական արտադրանքի վերամշակման համար նախատեսված գործիքներ են՝ բրիչներ, տրորիչներ, ձեծիչներ կամ սանդակոթեր: Բրիչները ներկայացված են երկուական օրինակով: Դրանցից առաջինը, որն ունի դեպի մեկ կողմը լայնացող հիմք, հարդարվել է հիմքային, կորացող մասի սրացող, միակողմանի՝ պարզունակ բեկոտմամբ և ստացել գրեթե եռանկյունաձև տեսք (աղ. 3): Երկրորդ բրիչը ձևավորված է օվալաձև ուրվագծեր ունեցող, տափակ գետաքարի հենքի վրա, որի երկու ծայրերն էլ սրվել են երկկողմանի, պարզունակ բեկոտմամբ:

¹³ Խանգաղյան 1979, աղ. VI, VII:

¹⁴ Петросян 1989, табл. 26-31.

¹⁵ Мирцхулава 1975, табл. XII.

¹⁶ Исмаилов 1977, табл. IV.

¹⁷ Խանգաղյան 1979, 37, նկ. 41, 49, նկ. 67:

¹⁸ Badalyan, Avetisyan 2007, 61, pl. IV.

¹⁹ Badalyan, Avetisyan 2007, 92, 20-23.

²⁰ Badalyan, Avetisyan 2007, 103, pl. III-4.

²¹ Тбилиси 1978, 43, рис. 14 (с), табл. 11, рис. 236.

²² Խանգաղյան 1967, աղ. XVIII:

Երկու բրիչներն էլ նախատեսված են եղել աշխատելիս ձեռքի մեջ բռնած պահելու համար:


Տրորիչները, որոնք երեքն են, պատրաստված են բազալտի բարձրորակ՝ մանրահատիկ տարատեսակներից (դոլերիտային բազալտներ): Դրանք խնամքով ընտրված, երկարավուն և կանոնավոր ուրվագծեր ունեցող գետաքարեր են, որոնց աշխատանքային մի կողմը հարթ է և ունի փայլուն, հղկված մակերևույթ՝ առաջացած շփման ուժի երկարատև ազդեցության հետևանքով (աղ. 4-6): Բոլոր երեք տրորիչներն էլ վերածակվորված են և վերածված ձեծիչների (աղ. 4-5), սրաքար-ուղղիչի (աղ. 8), քանի որ աշխատանքի ընթացքում մաշվել ու կոտրվել են: Նոր գործառույթի հետևանքով այս իրերի վրա հայտնված հետքերն ունեն այլ բնույթ՝ ծայրերի և կողային հատվածների կետ-հարվածային մաշում, ցլեպային կոտրվածքներ և ակոսանման փոսիկներ:

Ընդհանուր առմամբ՝ ձեծիչ-սանդակոթերի տեսակը հավաքածուի ամենամեծ խումբն է կազմում: Առկա են ինչպես կոթառ-բռնակի արհեստական ձևավորմամբ (աղ. 7), այնպես էլ բռնակի բնական ձևավորում ունեցող օրինակներ (աղ. 8), որոնք հիմքում ունեն կլորավուն և քառանկյուն՝ ուռուցիկ և տափակ կամ հարթ աշխատանքային մակերևույթներ:


Այս բոլոր իրերի վրա նկատելի են կետ-հարվածային և մակերևույթների մաշվածության հետքեր, իսկ մի մասն էլ աշխատանքի ընթացքում ֆիզիկական լարումների և հարվածային մեծ բեռի ազդեցության ներքո կոտրված է:

Հարվածային գործիքների շարքում առանձնանում է մուրճ-ձեծիչը, որի երկու ծայրերն էլ կրում են աշխատանքային մաշվածության հետքեր (աղ. 9): Գործիքի կողային հատվածներում, մեջտեղից մի փոքր ներքև մաշեցման եղանակով արված են ոչ մեծ խորություն ունեցող «փոսիկներ», որոնց միջոցով ստեղծվել է մուրճը բռնակին կապելու համար ներճկված տեղամաս:


Հարվածային գործիքներին են վերաբերում ևս երկու իր, որոնք, ամենայն հավանականությամբ, պատրաստված են խնամքով հարդարված գետաքարային ձեծիչների ջարդված հատվածների վրա: Դրանցից առաջինի վերին ծայրը լիովին հարթ է՝ նախատեսված մատով ճնշում կիրառելու համար, իսկ ստորին ծայրը կոտրվելուց հետո հղկվել է ելուստավոր, ոչ սուր լեզվակի տեսքով՝ հարվածը տեղայնացնելու կամ հարվածի մակերեսը փոքրացնելու նպատակով: Ամենայն հավանականությամբ, այս վերափոխված գործիքը քարի կամ ոսկրի բեկոտման համար կիրառվող ջարդիչ է (աղ. 10): Երկրորդ գործիքը ձևափոխվել է միևնույն տրամաբանությամբ, սակայն դրա ստորին ծայրը ենթարկվել է բեկոտման և սրվել՝ ձևավորելով հատող աշխատանքային եզր (աղ. 11): Հավանաբար, այս իրը պատրաստվել է հատիչի կամ կոպիտ կացնի գործառույթի համար:



Նկ. 1. Քուչակ-2 ամրոց-բնակատեղին, օդալուսանկարները՝ Լևոն Մկրտչյանի




Աղյուսակ 1




Աղյուսակ 2




Աղյուսակ 3




Աղյուսակ 4




Աղյուսակ 5




Աղյուսակ 6




Աղյուսակ 7




Աղյուսակ 8




Աղյուսակ 9




Աղյուսակ 10




Աղյուսակ 11




Աղյուսակ 12




Աղյուսակ 13




Աղյուսակ 14



Աղյուսակ 15



Աղյուսակ 16



Աղյուսակ 17

Հավաքածուում առկա են աշխատանքային գործիքների այլ տեսակներ ևս՝ կոկիչի և կախիկ-ծանրոցի մեկական օրինակներ: Կոկիչը պատրաստված է կարմրամոխրագույն երանգ ունեցող հրաբխային պեմզայից, որի երկու մակերեսներն էլ հարթեցված են հղկման միջոցով (աղ. 12): Հղկված և կլորացված են նաև առարկայի կողային ու ծայրային հատվածները, որոնք ևս կարող էին ծառայել որպես աշխատանքային մակերևույթներ՝ կողային հատվածները կոկելու, իսկ ծայրային հատվածները կիրառվելու որպես փափուկ ջարդիչ:

Կախիկ-ծանրոցը, որը պատրաստված է նույն եղանակով, ինչ որ կոկիչը, ծայրային մասերում ունի երկու փոսիկանման հատվածներ, որոնք ստացվել են ջարդման և հանված մասերի հարդարման եղանակով, ունի խիստ պարզունակ տեսք: Կախիկ-ծանրոցի ճակատային մակերևույթներին տեսանելի են կետ-հարվածային բնույթի հետքեր, որոնք թույլ են տալիս ենթադրել, որ վերջինս կարող է կիրառված լինել նաև որպես գնդան:

Եվ, վերջապես, հավաքածուն ներառում է ծխական բնույթի մի առարկա, որ, ամենայն հավանականությամբ, կուռք է: Այն պատրաստված է ծակոտկեն և անհամասեռ անդեզիտից կամ պեմզայից և նման է վերը նկարագրված կոկիչին, սակայն վերին մասում ունի երկու՝ աչքերի հետ զուգորդվող փոսիկներ, իսկ հիմքում՝ մեկ ավելի մեծ ու խոր փոսիկ, որը «պորտ» է

հիշեցնում: Չի բացառվում, որն այն ևս իր օգտագործման սկզբնական փուլում կոկիչ է եղել:

Մի կողմ թողնելով բերված քարե իրերի տեխնիկակազմաբանական ցուցիչների մանրամասն վերլուծությունը, ինչպես նաև զուգահեռների ներկայացումը՝ ուսումնասիրության այս մակարդակում կարող ենք պնդել, որ Քուչակ 2-ի վերը նկարագրված հավաքածուն ևս լիովին համահունչ է Հայկական լեռնաշխարհի վաղբրոնզեդարյան Կուր-արաքսյան մշակույթի վաղ փուլի հուշարձաններից հայտնի համանման օրինակներին²³: Ավելին, դրանց ուսումնասիրությունից երևում է, որ այս իրերը բազմիցս վերամշակվել և վերաօգտագործվել են՝ ստանալով նոր գործառույթ և կիրառություն: Այսուհանդերձ, դրանց գործառույթների մասին վերջնական եզրակացության կարելի է հանգել միայն հետքաբանական վերլուծություն իրականացնելուց հետո:

Միջինբրոնզեդարյան նյութերի բնութագիրը

Քուչակ գյուղի հարավարևելյան տարածքում պատահաբար բացված դամբարանում գտնված նյութերից մեզ են հասել մեկ կճուճ, հինգ քրեղան, հրաբխային խարամից պատրաստված կափարիչ և փոքր անոթի բեկոր (աղ. 14): Այս նյութերը տիպիկ կարմիրբերդյան մշակույթի նմուշներ են, դրանցից մեկը՝ կճուճը (աղ. 14, նկ. 1), իր չափերով համապատասխանում է նշված ժամանակաշրջանի նյութերի չափանիշներին: Սակայն շուրթի եզրերին և ուսերին արված գունավոր, ալիքաձև կախված ծաղկաշղթաների ձևով օղակաձև զարդերը հիշեցնում են թռեղք-վանաձորյան մշակույթի որոշ մանրամասներ: Վերջինիս ուշ փուլի նյութերին է նման զարդաձևերով և ձկնագարդ պատկերների ուսերով հիդրան, որը կարող է հանդիսանալ Քուչակի կճուճի նախատիպը: Ժանամակագրական առումով նույնպես ուշագրավ են ավազախառն կավից պատրաստված գնդաձև իրանով երկու քրեղանները (աղ. 14, նկ. 4, 5), որոնց նմանակները տեսանելի են թռեղք-վանաձորյան մշակույթի վերջին փուլին պատկանող Մոզի դամբարաններից մեկում²⁴ և նույն ժամանակաշրջանին պատկանող Քեթիի թիվ 38 դամբարանում²⁵: Նույն տեսակով, սակայն սև հարդարված մակերեսներով և փոքր շուրթի նշմարումով օրինակները լավ հայտնի են Լոռի բերդի թիվ 60, 66, 75²⁶ դամբարաններից: Դրանք ուշագրավ են նաև շուրթի թույլ արտահայտված ձևավորմամբ: Ուսումնասիրվող դամբարանի երեք քրեղանների շուրթերի գունավոր զարդարման ձևը ևս հիշեցնում է թռեղք-վանաձորյան մշակույթի

²³ Դրանք առկա են հողվածում հղված աշխատություններում:

²⁴ Խանգաղյան 1979, 72, նկ. 100:

²⁵ Խնկիկյան 1993, աղ. LXXIX, նկ. 5-9:

²⁶ Петросян 1989, табл. 38 (7, 8).

վերջին փուլին բնորոշ զարդարման ձևը, որպիսին հայտնի է Լոռի բերդի դամբարաններից²⁷ Էլառի դամբարանադաշտի գտածոներից²⁸:

Սույն քրեղանների սկզբնավորման տեսակետից կարևոր է այն փաստը, որ դրանց վաղագույն օրինակը, գտնված Թռեղքի երրորդ խմբի դամբարաններից մեկում²⁹, ներկայացված է որպես նոր հանդես եկող տեսակ: Քուչակի այս դամբարանից հայտնված վերջին կավամանն իր ձևով կրկնում է ներկայացված քրեղանների ոչ խոր տեսակը՝ ավելացված բռնակը, որի նմանակները մեզ հայտնի չեն: Այստեղ որոշ չափով կարելի է նորություն համարել զարդաձևը, որի զուգահեռն է կրում Էլառի դամբարանադաշտից գտնված քրեղանը³⁰:

Այսպիսով՝ Քուչակում պատահաբար բացված դամբարանի խեցեգործական արտադրանքի տեսականու ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ դրանք դեռևս առնչվում են թռեղք-վանաձորյան մշակույթի վերջին փուլերի նյութերի հետ, որի շնորհիվ Քուչակի դամբարանը կարելի է համարել մ.թ.ա. XIX դ. II կեսի հուշարձան և վերագրել կարմիրբերդյան մշակույթի սկզբնափուլերին: Ավելացնենք նաև, որ Քուչակի տարածքում գտնվող մեկ այլ՝ Քուչակ-1 հնավայրում արձանագրված տվյալ ժամանակաշրջանի բնակատեղիի և դամբարանադաշտի առկայությունը վկայում է այն մասին, որ Քուչակ գյուղից հարավ և հարավ-արևելք ընկած տարածքը եղել է Հայաստանի կարմիրբերդյան մշակույթի կարևոր օջախներից մեկը: Այդ մասին են վկայում նաև 1984 թ. Ֆ. Մուրադյանի կատարած պեղումների արդյունքները³¹:

Ուշբրոնզեդարյան նյութերի բնութագիրը

Քուչակ-2 հնավայրի դամբարանադաշտում պեղված սալարկղային՝ հյուսիս-հարավ ուղղված թիվ 2 դամբարանը պատկանում է Հայաստանի ուշբրոնզեդարյան ժամանակաշրջանին: Այն ծածկված էր երկու սալաքարերով և ուներ 1,1 մ երկարություն, 0,6 մ լայնություն, 0,6 մ խորություն: Խցում հայտնաբերվեցին երեք կիսազնդածն քրեղաններ, երկթեք իրանով երկու փոքր քրեղաններ. մեկը՝ լայնաբերան, քիչ բարձր վզով խոր անոթ, չորս սափոր, չորս կճուճ-սափոր, երեք կեռնոս, մեկ ծիսական արկղ, ինչպես նաև խեցանոթների տակ խիստ բեկորացված երեք ծիսական պատվանդաններ, որոնցից հնարավոր եղավ ամողջացնել միայն մեկը: Խեցանոթների տակ գտնվեցին նաև երեխայի ազդրոսկրերի և բազկոսկրերի բեկորներ:

²⁷ Դևեջյան 2006, 154, նկ. 10, 164, 4, 166, 5:

²⁸ Խանգաղյան 1979, 78, նկ. 107:

²⁹ Гогадзе 1972, табл. 22 (14).

³⁰ Խանգաղյան 1979, 78, նկ. 108:

³¹ Մուրադյան 1993, 103-105:

Այժմ փորձենք դրանք ներկայացնել ըստ տիպաբանական խմբերի: Առաջին խմբի մեջ գետեղենք կիսագնդաձև իրանով խորունկ քրեղանները (աղ. 15, նկ. 5, 6, 8): Միանգամից կարող ենք փաստել, որ այս ինքնատիպ քրեղանները կարելի է համարել Արթիկի ուշբրոնզեդարյան դամբարանա-յին, հատկապես ուշ բրոնզի երկրորդ փուլի մշակույթին պատկանող իրեր³²: Այս քրեղանների տեսակը քիչ քանակությամբ առկա է նաև Շիրակավանի ուշ բրոնզի ուշ փուլի թիվ 106 դամբարանում³³: Նույն տեսակը Լճաշենում քիչ քանակով հանդես է գալիս ուշ բրոնզի վերջին փուլի մշակույթում, դրանք իրանի վերին մասում ունեն նաև բռնակ: Քուչակի խեցեղենին հա-մահունչ են նաև Վրաստանի Պևրեբի հնավայրի թիվ 53 և 21 դամբարան-ների նյութերը³⁴, որոնք պատկանում են ուշ բրոնզի առաջին փուլին³⁵: Անդ-րադառնալով հայաստանյան հուշարձաններին՝ նշենք, որ դրանք բնորոշ են նաև Մեծամորի ուշ բրոնզի վերջի և վաղ երկաթեդարյան նյութերին³⁶:

Տվյալ ժամանակաշրջանին են պատկանում նաև Տաշիր-Ձորագետի 5 դամբարանների նյութերը³⁷, որոնց երևան գալը Ոսկեհասկի գտածոներում³⁸ վկայում է այն մասին, որ դրանք, սկիզբ առնելով դեռևս ուշ բրոնզի և վաղ երկաթի փուլերում, չնչին քանակությամբ գտնվում են նաև Քուչակի ուսում-նասիրվող թիվ 2 դամբարանում (թաս-քրեղանները), (աղ. 15, նկ. 3, 4): Այս նյութերը ուշ բրոնզի վաղ փուլի կիսագնդաձև իրանով անոթներից զանա-զանվում են իրանի երկաթեքությամբ. այդպիսիք նույնպես առավել հատկա-նշական են ուշ բրոնզի երկրորդ փուլի իրերին, որոնք հարատևում են նաև երկաթեդարյան ժամանակաշրջանում: Նման տիպին են պատկանում Քու-չակ-1-ի³⁹, Արթիկի⁴⁰ Լճաշենի երկրորդ փուլի նյութերը⁴¹, մեր կարծիքով, նաև Շիրակավանի թիվ 30 դամբարանը, որտեղ առկա են այդ տեսակի երկու քրեղան⁴², Տաշիր-Ձորագետի թիվ 16 դամբարանը, որտեղ կա տվյալ տեսակի թաս⁴³:

Քուչակի թիվ 2 դամբարանից պեղված միակ, ոչ շատ խոր, լայնա-բերան քրեղանը (աղ. 15, նկ. 7) իր տեսակով հիշեցնում է ուշ բրոնզի շրջա-նում լայնորեն տարածված քրեղանները, սակայն դրա քիչ բարձր վիզը անո-

³² Хачатрян 1979, 109, 7, 11, 123, 20 22.

³³ Թորոյան և այլք 2002, աղ. XLI:

³⁴ Պետրոյան 2018, 289, աղ. 401 (8, 10):

³⁵ Пицхелаури 1979, табл. XIV (2, 5), табл. XVII (10).

³⁶ Khanzadian 1995, pl. 48 (2), 51 (6), 58 (2).

³⁷ Դևեջյան 2001, աղ. II (10, 13):

³⁸ Петросян 1989, табл. 66 (14).

³⁹ Պետրոյան 1993 աղ. LIII և այլն:

⁴⁰ Хачатрян 1979, 124, 125, 128, 144 և այլն:

⁴¹ Պետրոյան 2018, աղ. 410 (51), 415 (16):

⁴² Թորոյան և այլք 2002, աղ. XX (6, 7, 8):

⁴³ Դևեջյան 2001, աղ. VI (9):

թին որոշ չափով տալիս է կճուճի տեսք, որի մոտավոր նմանակներ կարելի է համարել Մեծամորի օրինակները⁴⁴: Այսպիսով, քննարկված նյութերը հիմք են տալիս Քուչակ-2-ի թիվ երկու դամբարանը համարել ուշ բրոնզի երկրորդ փուլի հուշարձան: Այդ են վկայում նաև տվյալ դամբարանի սափորները (աղ. 16, նկ. 1, 2, 4, աղ. 17, նկ. 1, 2): Նկատենք նաև, որ դրանք Արթիկում հանդես գալով ուշ բրոնզի վերը նշված կճուճների հետ՝ առավել բնորոշ են վաղ երկաթի ժամանակաշրջանի մշակույթին⁴⁵: Համաժամանակյա են ուշ բրոնզի փուլին վերագրված՝ Վրաստանի Գադրեկիլի հուշարձանի թիվ 10 և 65 դամբարանների օրինակները⁴⁶:

Քուչակի ուսումնասիրվող դամբարանում ամփոփված հանգուցյալի մասին կարևոր տվյալներ են հաղորդում հայտնաբերված ծիսական երկու իրերը՝ պատվանդանը և արկղը (աղ. 15, նկ. 1, 2): Արկղերի տվյալ տեսակի վաղագույն օրինակները հայտնի են Ուզերլիկ թեփեից, կարմիրբերդյան մշակութային շերտից⁴⁷: Ըստ Կ. Կուշնարյովայի՝ նման արկղեր են հայտնաբերվել Կարմիր բլուրում, որոնք նա տեսել է հնագետ Սորոկինի արխիվային նյութերի մեջ. հեղինակը դրանք համարում է շարժական կրակարաններ⁴⁸: Բացի նշվածներից, այդ տեսակին են պատկանում նաև Շիրակավանից⁴⁹, Մեծամորից⁵⁰ և Սարի Թեփեից⁵¹ գտնվածները: Ուշագրավ են դրանց հայտնաբերման միջավայրերը՝ Ուզերլիկ Թեփեի նմանատիպ իրերը եղել են մոխրի և ածխի կուտակման մեջ, Կարմիր բլուրինը՝ քարաշեն օջախի մոտ, Մեծամորինը գտնվել է N 2 սրբատեղիի գլխավոր զոհասեղանի հյուսիսային կողմում՝ կրակարանի և զոհասեղանի միջև ընկած տարածությունում⁵²: Վաղ շրջանի արկղերի խմբին է պատկանում Նորատուսի թիվ 26 դամբարանի օրինակը⁵³: Իրենց ձևերի բազմազանությամբ և ճոխ ձևավորմամբ աչքի են ընկնում Լճաշենում իմ կողմից պեղված թիվ 81, 18, 150, 218 դամբարանները⁵⁴ և թիվ V դամբանաբլուրը, որոնց առավել մոտ զուգահեռները հայտնի են Կարմիր բլուրի և Նուզիի բնակատեղիների շերտերից⁵⁵: Լճաշենի նշված դամբարաններում ամփոփել են հոգևոր դասի ներկայացուցիչներին: Դրանցում կմախքները բացակայում են. հավանաբար, դիակի-

⁴⁴ Khanzadian 1995, pl. 31 (2, 4).

⁴⁵ Хачатрян 1979, погр. 7, 38, 52, 72.

⁴⁶ Пицхелаури 1979, табл. XX II (4, 8), XXII (4).

⁴⁷ Кушнарева 1965, 12.

⁴⁸ Кушнарева 1965, 83.

⁴⁹ Թորոսյան և այլք 2002, աղ. XLLX (25):

⁵⁰ Խանզադյան և այլք 1973 116, նկ. 115:

⁵¹ Иессен 1965, 117 (15).

⁵² Պետրոսյան 2002, 31:

⁵³ Փիլիպոսյան 1999, 30:

⁵⁴ Պետրոսյան 2018, 35:

⁵⁵ Richard 1939, pl. 113.

զում է իրականացվել: Յեղի առաջնորդներին պատկանող դամբանաբլուրները փաստում են, որ նրանք, բացի աշխարհիկ իրավունքներից, ունեցել են նաև հոգևոր իրավունքներ: Նրանց թաղումները կատարվել են դիաթաղման եղանակով: Այդ նյութերի՝ հոգևոր արարողություններին ծառայած լինելու մասին են վկայում նաև դրանց հետ գրեթե միշտ հանդես եկող փոքր սրվակներն ու թասերը⁵⁶: Սույն փաստերը, անշուշտ, վկայում են տվյալ ժամանակաշրջանում հոգևոր դասի առկայության մասին:

Հարկ է նշել, որ Լճաշենում վերոհիշյալ արկղերի հետ միասին հաճախակի հանդիպում են հենակ-պատվանդաններ, որոնք առկա են նաև հոգևոր դասին պատկանող այլ դամբարաններում⁵⁷: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պատվանդաններն առաջացել են սկզբնական շրջանի փակ հատակով տեսակից (մ.թ.ա. III հազ.) և ունեցել են պարբերական զարգացման փուլեր: Հենակ-պատվանդանների ստեղծման առաջին շրջանին հետևել է երկրորդը, որի տարբերակներն են լճաշեն-լոռիբերդյան փոքր տեսակի օրինակները, ինչպիսիք են Լճաշենի թիվ 221 և 222 դամբարանների (մ.թ.ա. XVII դ.)⁵⁸ և Մեծամորի մ.թ.ա. XIII-II դդ.-ով թվագրվածները⁵⁹: Իսկ Լճաշենի, Մեծամորի ճշգրիտ տեսակի սկզբնական օրինակը գտնվել է Իրգանչայի մ.թ.ա. XVII դարին պատկանող թիվ 4 կուրգանում⁶⁰: Լճաշեն-լոռիբերդյան վերջնական տարբերակին պատկանողները լավ հայտնի են Լճաշենի⁶¹ XV-XIV և Լոռի բերդի⁶² համաժամանակյա և բազմաթիվ այլ դամբարաններից և ճանաչված են որպես ծիսական արարողություններին ծառայած իրեր: Դրա ցայտուն զուգահեռները հայտնի են Նուզիի⁶³ և Լոռի բերդի քրմի դամբարաններից⁶⁴: Քուչակ 2-ի թիվ 2 դամբարանի տիրոջ՝ հոգևոր դասին պատկանելու մասին են վկայում նաև նույն նպատակին ծառայած ծորակով անոթները (աղ. 17, նկ. 4-6): Դրանք ուռուցիկ իրանով, ոչ շատ բարձր վզով կճուճներ են, որոնցից երկուսի ուսերը զարդարված են բազմաշար ակոսագոտիներով, ուսերին արված են չորս ծորակներ (աղ. 17, նկ. 4-6): Բոլոր անոթների հատակները և հատակամերձ հատվածները կրակի ազդեցության տակ ստացել են մուգ դարչնագույն և բաց սև երանգներ, որը հստակ մատնանշում է անոթների՝ կրակի վրա լինելու հանգամանքը: Նշենք նաև, որ ծորակները ոչ թե ուղղահայաց, վեր բարձրացող են, այլ

⁵⁶ Պետրոսյան 2018, 35-36:

⁵⁷ Петросян 2003, 77-82.

⁵⁸ Պետրոսյան 2018, աղ. 64 (1) և 72 (4):

⁵⁹ Khanzadian 1995, 59 (24).

⁶⁰ Փիլիպոսյան 1999, 60:

⁶¹ Պետրոսյան 2018, 93-96:

⁶² Деведжян 1981, табл. X.

⁶³ Star 1939, 113.

⁶⁴ Դևեջյան 1986, 108-124:

ունեն ուսերի նույն թեքությունը: Եվս մի հանգամանք. ծորակներն ունեն բաց դարչնագույն տեսք, որը վկայում է դրանցից դուրս եկած տաք օդի ներգործության մասին: Այսպիսով, ծիսական արարողությունների ժամանակ կրակի վրա դրված անոթներում պարունակվող անուշահոտ նյութերից արձակված բուրմունքով կատարվել են խնկարկման ծիսական արարողություններ, որոնց մասին հստակ խոսում են վերը նշված Նուզիի տվյալները: Ի դեպ, Քուչակի հետազոտվող դամբարանից ինձ հայտնի միակ ստույգ զուգահեռը գտնվել է մեր դամբարանին համաժամանակյա՝ մ.թ.ա. XV-XIV դարերին պատկանող Ծաղկալանջի թիվ 17 դամբարանից, միայն այն տարբերությամբ, որ Քուչակի անոթների վրայի ծորակների փոխարեն վերջինս կրում է երեք փոքր անոթներ⁶⁵: Հավաստենք նաև, որ մեզ հայտնի բոլոր ծորակով անոթները, որոնք ունեցել են միանգամայն այլ նպատակային գործառույթներ, պատկանում են երկաթեդարյան ժամանակաշրջանին: Դրանք հայտնաբերվել են նաև Խրտանոցից, Աստղի բլուրից, Ոսկեհասկից, Լոռի բերդից, Շիրակավանից, Թոեղքից և այլն⁶⁶:

Քուչակի քառածորակ անոթի նմանակը վերջերս գտնվել է Իջևան քաղաքի Անտառային փողոցում բացված սալարկղային դամբարանում, որը թվագրվում է մ.թ.ա. V-I դարերի ժամանակագրական սահմաններով⁶⁷: Այսպիսով՝ Քուչակ-2-ի ներկայացված թիվ 2 դամբարանի նյութերը միանշանակ փաստում են տվյալ դամբարանի տիրոջ՝ հոգևոր դասին պատկանելու մասին:

Եզրակացություններ

Ամփոփելով բերված տվյալները՝ կարելի է եզրակացնել, որ Ապարանի գոգավորության գրեթե կենտրոնական մասում գտնվող ներկայիս Քուչակ գյուղի վարչական տարածքը հարուստ է հնագիտական սկզբնաղբյուրներով, որոնց շարքում առանձնանում է Քուչակ-2 հնագիտական համալիրը կամ հնավայրը, որը բաղկացած է վաղբրոնզեդարյան՝ կուր-արաքսյան մշակույթին պատկանող բնակատեղիից, վաղերկաթեդարյան ամրոց-բնակատեղիից և դրան հարող ուշ բրոնզեդարյան դամբարանադաշտից: Իր հերթին՝ գյուղի հարավային և հարավարևելյան մատույցներում փաստագրված հնավայրերը՝ Քուչակ-1 բնակատեղին և դամբարանադաշտերը ցույց են տալիս, որ ուսումնասիրվող տարածքը եղել է միջինբրոնզեդարյան կարմիրբերդյան մշակույթի կարևորագույն օջախներից մեկը:

Այսպիսով, Քուչակում իրականացված հնագիտական հետազոտությունները վկայում են, որ առնվազն մ.թ.ա. IV հազ. երկրորդ կեսից սկսած՝ այն-

⁶⁵ Badalyan, Avetisyan 2007, 284.

⁶⁶ Դովլաթբեկյան և ուրիշներ 2009, 76, 5:

⁶⁷ Ենգիբարյան 2003, 110-114:

տեղ առկա է երկրագործական-անասնապահական կենսաձև վարող հասարակություն, որին՝ մ.թ.ա. XIX դ. II կեսից հաջորդում է միջինբրոնզեդարյան՝ կարմիրբերդյան ավանդույթը կրող բնակչություն: Քուչակի տարածքի՝ բրոնզեերկաթեդարյան փուլի բնակեցման հաջորդ շրջանի վկայությունն են ուշ բրոնզի դարի եզրափակիչ փուլի՝ մ.թ.ա. XIII-XII դդ. սալարկղային դամբարանը և վաղ երկաթի դարի վաղ փուլում՝ մ.թ.ա. XI-IX դդ. հիմնված Քուչակ-2 ամրոցը: Նույն դամբարանադաշտում փաստագրված՝ Վանի թագավորության դարաշրջանի դամբարանը վկայում է, որ կյանքն այստեղ շարունակվել է նաև միջին երկաթի դարում: Գործնականում, Քուչակի պատմական լանդշաֆտը դրսևորում է նյութական մշակույթի զարգացման միևնույն օրինաչափությունները, որոնք առկա են Ապարանի գոգավորության տարածքում և Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան հատվածում:

Ավելին, այստեղից հայտնաբերված հնագիտական իրերը կարևոր նշանակություն ունեն ինչպես տեղական բնակչության տնտեսական գործունեության և կենցաղավարման առանձնահատկությունների, այնպես էլ սոցիալական և հոգևոր-ժիսական բնույթի վերակազմությունների համար:

Օգտագործված գրականություն

- Դևեջյան Ս. 1986, Լոռի բերդի քրմի դամբարանը, Պատմաբանասիրական հանդես, N 3, էջ 108-124:
- Դևեջյան Ս. 2001, Հնագիտական հետազոտություններ Տաշիր-Ձորագետում, Երևան, «Նաիրի», 159 էջ:
- Դևեջյան Ս. 2006, Լոռի-բերդ II (միջին բրոնզ), Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 419 էջ:
- Դովլաթբեկյան Ս., Հմայակյան Ս., Սիմոնյան Հ. 2009, Իջևան քաղաքի մինչքրիստոնեական հուշարձանները, Տավուշ, նյութական և հոգևոր ժառանգություն, Երևան, «Գիտելիք», էջ 74-77:
- Ենգիբարյան Ն. 2003, Ուրարտական կնիքով դամբարան Քուչակից, Հայաստանի հնագույն մշակույթը, 3, «Մուղնի», էջ 110-114:
- Թորոսյան Ռ.Մ., Խնկիկյան Օ.Ս., Պետրոսյան Լ.Ա. 2002, Հին Շիրակավան, «Գիտելիք», 158 էջ:
- Խանզադյան Է. 1967 Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա III հազարամյակում, Երևան, ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., 117 էջ:
- Խանզադյան Է. 1979, Էլառ-Դարանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 214 էջ:
- Խանզադյան Է., Մկրտչյան Կ., Պարսամյան Է. 1973, Մեծամոր (ուսումնասիրություն 1965-1966 թթ. պեղումների տվյալներով), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 188 էջ:
- Խնկիկյան Օ. 1993, Պեղումներ Եղեգնաձորի շրջանում, Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., էջ 75-80:
- Մուրադյան Ֆ. 1993, Նորահայտ նշանագրեր Ապարանի շրջանից, Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., էջ 102-105:
- Պետրոսյան Լ. 1993, Քուչակի նախնադարյան հուշարձանները, Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, I հատոր, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., էջ 61-65:

- Պետրոսյան Լ. 2018, Լճաշենի դամբանադաշտը, I, Հայաստանի հնագույն հուշարձանները, 22, Երևան, ՀԱԻ հրատ., 414 էջ:
- Պետրոսյան Լ. 2002, Հայաստանի ծիսական արկղերը, Հայաստանի հնագույն մշակույթը 2, Երևան, «Գիտություն», էջ 31-36:
- Փիլիպոսյան Ա. 1999, Հին Արևելքի շրջանակավոր դաստակով դաշույններն ու սրերը, «Չանգակ-97», Երևան, 85 էջ:
- Փիլիպոսյան Ա. 1989, Պեղումներ Սևանի կղզեկտորի նորահայտ հատվածում, Հայաստանի Հանրապետության 1989-1990 թթ. դաշտային հնագիտական աշխատանքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Երևան, 25-26 էջ:
- Бадалян Р., Смит А. 2008, Поселение Гехарот. Основные результаты раскопок 2005-2006 гг., «Հին Հայաստանի մշակույթ», XIV, Երևան, էջ 45-68:
- Гогодзе Э. 1972, Периодизация курганной культуры Триалети, Тбилиси, «Мецниереба», 147 с.
- Деведжян С. 1981, Лори Берд, I, Ереван, 84 с.
- Иессен А. 1965, Поселение Узерлик Тепе, Материалы и исследования по археологии СССР, N 125, с. 103-127.
- Исмаилов Г. 1977, Археологические исследования древнего поселения Баба-Дервиш, «Элм», Баку, 101 с.
- Кушнарева К. 1965, Новые данные о поселении Узерлик Тепе около Агдама, Материалы и исследования по археологии СССР, N 125, Москва-Ленинград, с. 74-102.
- Мирцхулава Г. 1975, Самшвилде, Тбилиси, «Мецниереба», 98 с.
- Петросян Л. 1989, Раскопки памятников Кети и Воскеваза, Ереван, изд. АН Арм. ССР, 119 с.
- Петросян Л. 2003, Древние подставки из Лчашена. Археология, этнология и фольклористика Кавказа, Материалы международной конференции, Ереван, с. 77-82.
- Пицхелаури К. 1979, Восточная Грузия в конце бронзового века, Тбилиси, «Мецниереба», 224 с.
- Тбилиси, 1978, Археологические памятники, I, Тбилиси, «Мецниереба», 214 с.
- Хачатрян Т. 1979, Арктикский некрополь, Каталог, изд. ЕГУ, 403 с.
- Badalyan R., Avetisyan P. 2007, Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia, British Archaeological Reports International Series, Oxford, Archaeopress, 320 p.
- Khanazadyan E. 1995, Metsamor 2, La nécropole, Vol. I, Les tombes du bronze moyen et recent, Recherches et Publications, Neuchâtel, Paris, 110 p.
- Starr R. 1939, Nuzi: Report on the Excavation at Yorgan Tepa near Kirkuk, Iraq, Vol. 1, Harvard, University Press, 113 p.

**ЗАСЕЛЕННОСТЬ ПАМЯТНИКА КУЧАК-2 И ПРИЛЕГАЮЩИХ
ТЕРРИТОРИЙ В ЭПОХУ БРОНЗЫ-ЖЕЛЕЗА
(по результатам раскопок 2010 г.)**

Левон Петросян, Борис Гаспарян

Резюме

Крепость-поселение Кучак-2 расположена на холме к северо-востоку от одноименного села марза Арагацотн. В результате раскопок на восточном

склоне холма была обнаружена богатая коллекция керамики и каменных орудий, датируемая серединой IV тыс. до н.э.

Археологические материалы, выявленные во время разведывательных работ на территории крепости-поселения, позволяют заключить, что оно было основано в эпоху раннего железа. Раскопки двух погребений в виде каменных ящиков указывают на то, что последние относятся к эпохе поздней бронзы Ванского царства. В свою очередь, материалы из случайно обнаруженного погребения на юго-восточной окраине села имеют свои параллели в комплексах среднебронзовой кармирбердской культуры и могут быть датированы второй половиной II тыс. в. до н.э.

Наличие как нововыявленных, так и уже известных материалов позволяет судить об этапах заселения крепости-поселения Кучак-2 и прилегающих территорий, которые относятся к середине IV тыс. до н.э. – первой половине I тыс. до н.э. Практически, результаты археологических изысканий в административных границах села Кучак явствуют о том, что данная территория имела те же закономерности развития материальной культуры, которые наличествуют как в Апаранской котловине, так и в северо-восточной части Армянского нагорья.

Ключевые слова – Апаранская котловина, Кучак, крепость-поселение, куро-араксская культура, кармирбердская культура, погребения типа каменного ящика, эпоха бронзы-железа.

THE PHASES OF HABITATION OF THE KUCHAK-2 SITE AND ITS SURROUNDINGS DURING THE BRONZE-IRON AGES (According to the results of 2010 excavations)

Levon Petrosyan, Boris Gasparyan

Abstract

The fortress-settlement Kuchak-2 is situated on the north-eastern side of the village of Kuchak of the Aragatsotn Province atop a natural hill dominating the area. In a limited area on the eastern slope of the hill occupied by the fortress the excavations uncovered ceramic complex and a rich collection of stone tools, which allows to conclude that the habitation in this area starts at least from the second half of the 4th mill. BC.

Additionally, archaeological materials uncovered from the test trenches implemented in the area of the fortress-settlement allow to conclude, that it was founded during the Early Iron Age. Meanwhile, two stone-box type burials which were excavated in the necropolis of the fortress, belong to the time periods of the Late Bronze Age and the functioning of the Van Kingdom correspondingly. At the same time, archaeological materials from the grave uncovered by chance on the south-eastern part of the village distribute their strong parallels with

the complexes known from the Karmirberd culture of the Middle Bronze Age and can be attributed to the second half of the II mill. BC.

The newly discovered as well as the previously known materials are highlighting the occupational phases of the area of Kuchak-2 and the surrounding territories during the Bronze and Iron Ages, which spans between the time range of the second half of the IV mill. to the first half of the I mill. BC. In practice, the archaeological investigations in the administrative boundaries of the village of Kuchak shows, that it distributes the same patterns of development of the material culture typical for the area of the Aparan Depression and the south-eastern part of the Armenian Highland.

Key words – Aparan Depression, Kuchak, fortress-settlement, Kura-Araxes culture, Karmirberd culture, stone-box type graves, Bronze-Iron Ages.

ՀԱՂՐՈՒԹՅՑ ԲՈՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՐՑԱԽԱՀԱՅԵՐԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԿԵՆՍԸՆԹԱՅԻ ԽԵՂՈՒՄՆԵՐԸ¹

Արմինե Տիգրանյան

ԵՊՀ մշակութաբանության ամբիոն
ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 1
Էլ. հասցե՝ armine.tigranyan@ysu.am
ORCID: 0000-0001-5886-3667

Հոդվածը ներկայացվել է 01.01.2024, գրախոսվել է 11.01.2024, ընդունվել է տպագրության 03.12.2024
DOI: 10.53548/0320-8117-2024.3-255

Ամփոփում

2020 թվականի 44-օրյա պատերազմի հետևանքով Ադրբեջանի կողմից Արցախի Հանրության շրջանից բռնի տեղահանվեց շուրջ 13.000 արցախահայ: Բռնի տեղահանությունը, ի թիվս հումանիտար և սոցիալ-տնտեսական խնդիրների, խաթարեց նաև արցախահայերի ավանդական կենսընթացը:

Ադրբեջանի պետական նպատակամիտված քաղաքականության իրագործմամբ արցախահայությունը հեռացվեց իր սոցիալ-մշակութային արժեքներից՝ զրկվելով պատմական հայրենիքի՝ Արցախի բնության, հուշարձանների, համայնքի և մշակութային լանդշաֆտի հետ կապված գիտելիքը, սովորույթներն ու պրակտիկաները իրացնելու, վախելու, ապագա սերունդներին փոխանցելու հնարավորությունից: Հանրության շրջանի պատմական հուշարձաններից բռնի հեռացումը, դրանց գոյությանը սպառնացող ուղղակի վտանգը, արդեն իսկ ոչնչացված ու պղծված ժառանգության բազմաթիվ արժեքները՝ սեփական ինքնությամբ ապրելու անհնարինությունը անհաղթահարելի մարտահրավերներ ստեղծեցին Արցախի ողջ ժառանգության և կենսական նշանակության եկեղեցիների, սրբավայրերի, ուխտատեղիների հետ կապված ծեսերը, ավանդույթները կենսունակ պահելու գործընթացներում: Բացի այդ, տեղահանության բացասական հետևանք համարվող համայնքային կյանքի կազմաքանդումը, բնական մշակութային միջավայրից ու լանդշաֆտից հեռացումը պատճառ դարձան ոչ նյութական ժառանգության բազմաթիվ տարրերի՝ բարբառի, ավանդական ուտեստների, արհեստների, տոների, փառատոների, համայնքային խաղերի, գյուղատնտեսական և կենցաղավարման մշակույթի աստիճանական անհետացման, մշակութային ոչ ֆորմալ կրթության կասեցման՝ ստեղծելով ինքնության ամբողջականության պահպանության համակարգային խնդիրներ:

Բանալի բառեր՝ Արցախ, Հանրութ, ավանդական կենսընթաց, բռնի տեղահանում, մշակույթի իրավունք, ոչ նյութական մշակութային ժառանգություն, արցախյան փառատոներ:

¹ Ուսումնասիրությունն իրականացվել է Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի տրամադրած դրամաշնորհի միջոցներով՝ «44-օրյա պատերազմի հետևանքով Շուշիից և Հանրության բռնի տեղահանված արցախահայերի մշակութային իրավունքի իրացման և ոչ նյութական ժառանգության պահպանության խոչընդոտները» հետազոտական ծրագրի թեմայի շրջանակում:

Ներածություն

2020 թ. Արցախյան պատերազմը բնորոշվեց Ադրբեջանի կողմից միջազգային օրենքների և պատերազմի կանոնների բազմաթիվ խախտումներով՝ ներառյալ Հաագայի, Ժնևի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի կոնվենցիաների և Միջազգային հումանիտար իրավունքի նորմերի խախտումները: Հարձակման թիրախ էին դարձել ոչ միայն քաղաքացիական ենթակառուցվածքներն ու բնակչությունը, այլև պատերազմի ժամանակ անձեռնմխելի համարվող մշակութային ժառանգությունը՝ իր նյութական և ոչ նյութական դրսևորումներով: 2020 թվականից ի վեր Հաղորդի շրջանում Ադրբեջանը ոչնչացրել է ազատամարտիկների հուշարձանը, վերացրել Առաքել գյուղի խաչքարը, աղվանական հռչակել Հաղորդի Սուրբ Խաչ հայկական եկեղեցին, քանդել Հաղորդի եղբայրական գերեզմանոցը և սկսել իրագործել շրջանի իսլամացման մեծ ծրագիր և այլն:

2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ համաձայնագրի արդյունքը եղավ այն, որ բռնի տեղահանվեց Ադրբեջանի վերահսկողության տակ անցած՝ Շուշիի, Հաղորդի և Արցախի այլ շրջանների բնակչությունը՝ մոտ 41 հազար մարդ², որից շուրջ 13000-ը՝ Հաղորդից: 2023 թ. սեպտեմբերին կյանքի հանդեպ վախի, հուսալքության և արյունալի ռազմական գործողությունների հետևանքով հայաթափվեց Արցախում մնացած բնակչությունը՝ 100.600 մարդ³՝ զրկվելով իր հայրենիքում ապրելու, արարելու իրավունքից: Ադրբեջանի հայատյացության քաղաքականության պատճառով ներկայումս բռնի տեղահանված է 121.600 մարդ⁴:

Ադրբեջանի պետական նպատակամիտված քաղաքականության իրագործմամբ արցախահայությունը ստիպված հեռացավ բնօրրանից՝ թողնելով իր սոցիալ-մշակութային արժեքները՝ զրկվելով պատմական հայրենիքի՝ Արցախի բնության, հուշարձանների, համայնքի և մշակութային լանդշաֆտի հետ կապված գիտելիքը, սովորույթներն ու պրակտիկաները իրացնելու, վայելելու, ապագա սերունդներին փոխանցելու հնարավորությունից: Հաղորդի շրջանի պատմական հուշարձաններից, գերեզմանոցներից բռնի հեռացումը, դրանց գոյությանը սպառնացող ուղղակի վտանգը, արդեն իսկ ոչնչացված ու պղծված ժառանգության բազմաթիվ արժեքները⁵, սեփական ինքնույթ-

² 44-օրյա պատերազմից հետո 41 հազար բռնի տեղահանվածների մի մասը՝ 20.000 մարդ, տեղափոխվեց Արցախ՝ ներքին տեղահանվածի կարգավիճակով ապրելով հայկական վերահսկողության տակ գտնվող տարածքներում, իսկ մոտ 21.000-ը ժամանակավոր բնակություն հաստատեց ՀՀ-ում:

³ Ադրբեջանի հայատյացության քաղաքականության հետևանքով ներկայումս բռնի տեղահանված է համարվում 121.600 արցախահայ. 21 հազարը 2020 թ., իսկ 100.600-ը 2023 թ. տեղահանվածներ են:

⁴ Center for truth and Justice 2023, 13.

⁵ 2020 թվականի պատերազմից հետո Ադրբեջանը ոչնչացրել է Հաղորդի ազատամարտիկների հուշարձանը, վերացրել Առաքել գյուղի խաչքարը, աղվանական հռչակել Հաղորդի Սուրբ Խաչ հայ-

յամբ ապրելու անհնարինությունը անհաղթահարելի մարտահրավերներ ստեղծեցին Արցախի ողջ ժառանգությունը պահպանելու, անշուշտ, նաև կարևոր նշանակության՝ եկեղեցիների, սրբավայրերի, ուխտատեղիների հետ կապված ծեսերը, ավանդույթները կենսունակ պահելու գործընթացը: Բացի այդ, համայնքային կյանքի կազմաքանդման գործընթացը, բնական մշակութային միջավայրից ու լանդշաֆտից հեռացումը պատճառ դարձան ոչ նյութական ժառանգության բազմաթիվ տարրերի՝ բարբառի, ավանդական ուտեստների, արհեստների, տոների, փառատոների, համայնքային խաղերի, գյուղատնտեսական և կենցաղավարման մշակույթի աստիճանական անհետացման, մշակութային ոչ ֆորմալ կրթության⁶ կասեցման և ստեղծեցին ինքնության ամբողջականության պահպանության համակարգային խնդիրներ:

Արցախի Հաղրուփի շրջանից բռնի տեղահանված արցախահայերի հետ անհատական խորացված⁷ և թիրախ-խմբային հարցազրույցների⁸ վերլուծության արդյունքները բացահայտել են, որ բռնի տեղահանությամբ, բնական ռեսուրսներից օտարմամբ կասեցվել են Արցախի ոչ նյութական արժեքների պահպանումն ու վերստեղծումը, խաթարվել արցախահայերի համայնքային կյանքը՝ բացասական խոր ազդեցություն թողնելով արցախահայերի մշակութային կյանքի ոչ նյութական ասպեկտների վրա:

Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության միջազգային համակարգը

Միջազգային համակարգում ՅՈՒՆԵՍԿՕ-ն է այն մարմինը, որը սահմանում է ոչ նյութական ժառանգությունն իր հռչակագրերի և կոնվենցիաների միջոցով: Ոլորտի հիմնական՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության» 2003 թ. կոնվենցիան ներկայացնում է դրա ընդգրկման շրջանակները՝ սովորույթներ, բեմադրություններ, արտահայտություններ, գիտելիքներ ու հմտություններ, ինչպես նաև դրանց

կական եկեղեցին, քանդել Հաղրուփի եղբայրական գերեզմանոցը և սկսել իրականացնել շրջանի իսլամացման մեծ ծրագիր:

⁶ Ոչ ֆորմալ կրթությունը կրթական գործունեություն է, որը կարող է չհամընկնել դպրոցների, քոլեջների, բուհերի և ֆորմալ կրթություն իրականացնող այլ կազմակերպությունների գործունեության հետ և ներառում է կենսափորձի հիման վրա ստացած կրթությունը, համայնքային ինքնատիպ կրթական հնարավորությունները, ընտանիքի ավագներից ժառանգած գիտելիքը, արվեստի, արհեստների, ձեռագործության և այլ հմտությունների զարգացումը ընտանեկան և համայնքային միջավայրերում:

⁷ Անհատական խորացված հարցազրույցներ են իրականացվել ՀՀ Սյունիքի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Կոտայքի և Շիրակի մարզերում և Երևանում 2020 թ. պատերազմի հետևանքով բռնի տեղահանված շուրջ 60 հաղրուփցիների հետ (Հետազոտության ամբողջական արդյունքները գիտական մենագրության տեսքով տպագրության փուլում են):

⁸ Թիրախ-խմբային հարցազրույցները տեղի են ունեցել Երևանում՝ «Դիզակ արտ» և «Հաղրուփ ստեղծագործական մանկապատանեկան կենտրոն» ՀԿ-ներում՝ Հաղրուփից տեղահանվածների հետ:

հետ կապված գործիքներ, առարկաներ, արվեստի գործեր և մշակութային տարածքներ, որոնք համայնքների, խմբերի և որոշ դեպքերում անհատների կողմից ճանաչվում են իրենց մշակութային ժառանգության մաս: Այստեղ ակնհայտ է, որ ոչ նյութական ժառանգությունը ստեղծում, հետագայում վերականգնում և պահպանում են համայնքներն ու խմբերը բնական որոշակի միջավայրում՝ ապահովելով դրա ինքնատիպությունը: Այն դրսևորվում է բանավոր ավանդությունների, կատարողական արվեստների, սոցիալական սովորույթների, ծեսերի, տոնակատարությունների և ավանդական արհեստների միջոցով⁹: Մասնագետները պնդում են, որ ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկացած պրակտիկա կարող է վերանայ, եթե այդ սոցիալ-մշակութային արժեքները տարանջատվեն իրենցով զբաղվող համայնքների ու խմբերի կյանքից և գործելակերպից:

Հարկ է շեշտադրել, որ *ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանություն* նշանակում է դրա կենսունակության ապահովմանն ուղղված միջոցների ձեռնարկում՝ ներառյալ այդ ժառանգության ճանաչումը, պահպանումը, խթանումը, բարելավումը, փոխանցումը կրթության միջոցով, ինչպես նաև դրա տարբեր ուղղությունների վերակենդանացումն ու իմաստավորումը¹⁰:

2003 թ. կոնվենցիան, համադրելով ոչ նյութական մշակութային ժառանգության ժամանակային և տարածական հարթությունները, ընդգծում է երկու կարևոր հանգամանք. նախ՝ **ժառանգությունը պետք է «փոխանցվի սերնդից սերունդ և անընդհատ վերստեղծվի»**, ապա՝ **այդ գործընթացը պետք է տեղի ունենա «համայնքների, բնության և պատմության փոխգործակցության միջոցով»**¹¹: Փաստորեն, ժողովուրդների՝ իրենց բնակավայրերից տեղահանությունը կամ այլ վայրեր տեղափոխումը խաթարում է ոչ նյութական տարրերի վերստեղծման հնարավորությունը, քանզի չկան այն համայնքը, այն ռեսուրսների համախումբը և այն միջավայրը, որոնց փոխգործակցության շնորհիվ պետք է ծնվի ոչ նյութական մշակութային ժառանգության այս կամ այն նոր պրակտիկան, կամ պահպանվի արդեն եղածը: Ոչ նյութական մշակութային ժառանգությունը պետք է ապահովվի համայնքների ինքնության և շարունակականության զգացումը¹²: Բայց բռնի տեղահանումը ոչ միայն էական վտանգ է ստեղծում ոչ նյութական ժառանգության իրացման գործընթացում, այլև կասեցնում է համայնքների գործու-

⁹ UNESCO 2003, Convention for the Safeguarding of the Intangible Cultural Heritage, art. 2, § 1, 2.

¹⁰ UNESCO 2003, Convention for the Safeguarding of the Intangible Cultural Heritage, art. 2, §3:

¹¹ UNESCO 2003, Convention for the Safeguarding of the Intangible Cultural Heritage, art. 2, §3:

¹² UNESCO 2001, Executive Board, Report on the preliminary study on the advisability of regulating internationally, through a new standard-setting instrument, the protection of traditional culture and folklore UNESCO Doc. 161 EX/15, 3, Decision of the Intergovernmental Committee: 11.COM 15, §6.

նեությունը, պրակտիկաների միջսերունդ փոխանցումը և ապագա շարունակականությունը:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանությունը կարևոր նշանակություն ունի ինչպես բուն ժառանգության տարրի, այնպես էլ այն համայնքների ու խմբերի մշակութային ինքնության և առհասարակ համայնական կյանքի պահպանման համար, որոնք օգտագործում են այն: Նշանակում է՝ անգամ համայնքի անդամների ֆիզիկական ներկայությունն այլ վայրում բավարար չէ ապահովելու համայնքի բուն ինքնության շարունակականությունը, քանզի ոչ նյութական ժառանգության կենսունակության համար անհրաժեշտ է նաև բնական ռեսուրսների և համայնքի հետ փոխհարաբերակցություն:

Ոչ նյութական ժառանգության պաշտպանությունը զինված բախումների և տեղահանության դեպքում

Պատերազմների և տարածքների բռնազավթման ժամանակ մշակութային ժառանգության պաշտպանության հիմնական օրենքները Հաագայի և Ժնևի կոնվենցիաներն են՝ իրենց համապատասխան արձանագրություններով: Սակայն պետք է ընդգծել, որ այս իրավական մեխանիզմները պաշտպանություն են տրամադրում հիմնականում նյութական օբյեկտներին, իսկ ոչ նյութական ժառանգության պաշտպանությունը շատ դեպքերում խնդրահարույց է: Ու եթե նյութականի դեպքում թիրախավորվում են մշակութային կառույցներն ու կոթողները, ապա ոչ նյութականի պարագայում՝ այդ ժառանգությունը կրող կամ մեկնաբանող անհատներն ու համայնքները: Փաստորեն, ոչ նյութական մշակութային ժառանգությունը պատերազմների ժամանակ ամենախոցելի է. այն վնասվում է բոլոր՝ նյութական և ոչ նյութական տարրերի խաթարման, այդ ժառանգությունը կրող համայնքի անդամների (մարդկանց) թիրախավորման կամ տեղահանման դեպքերում:

Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության որոշ կետեր է պարունակում Հաագայի 1907 թ. կոնվենցիային կից կանոնակարգի 46-րդ հոդվածը. «Ընտանեկան պատիվն ու իրավունքները, անձանց կյանքն ու ունեցվածքը, ինչպես նաև կրոնական համոզմունքներն ու գործելակերպը պետք է հարգվեն»¹³:

Հարկ է ընդգծել, որ «Պատերազմի զոհերի և քաղաքացիական անձանց պաշտպանության մասին» Ժնևի 1949 թ. կոնվենցիայի առաջին արձանագրության 75-րդ հոդվածում նշվում է. «Պատերազմի ընթացքում քաղաքացիական անձանց նկատմամբ չպետք է ցուցաբերվի ռասայի, մաշկի, սեռի,

¹³ UNESCO 2001, Executive Board, Report on the preliminary study on the advisability of regulating internationally, through a new standard-setting instrument, the protection of traditional culture and folklore UNESCO Doc. 161 EX/15, 3, Decision of the Intergovernmental Committee: 11.COM 15, §6, art. 46.

լեզվի, կրոնի կամ դավանանքի, համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, ծննդի կամ այլ գործոններով պայմանավորված խտրական վերաբերմունք. պետք է հարգանքով վերաբերվել նաև նրանց պատվին, համոզմունքներին և կրոնական ծիսակատարություններին»¹⁴: Իսկ Ժնևի կոնվենցիայի 27-րդ հոդվածը հավելում է, որ պետք է հարգանք ցուցաբերել նաև կենսափորձի և սովորույթների նկատմամբ¹⁵, ինչը կարող է ընդգրկել ոչ նյութական ժառանգության ողջ տիրույթը: Բացի այդ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2005 թ. միջկառավարական հանդիպմանը շեշտվել է, որ ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման և փոխանցման շարունակականությունը պետք է ապահովվի ցանկացած պահի, նույնիսկ զինված բախումների և տեղահանության ժամանակ¹⁶:

Ոչ նյութական ժառանգությունը մշակույթի իրավունքի համակարգում

Ոչ նյութական մշակութային ժառանգության հիմքում ընկած են մարդու ինչպես անհատական, այնպես էլ հավաքական-համայնքային իրավունքները¹⁷: Ժառանգության պահպանության հայեցակարգը XXI դարում ընդունեց **մշակույթի իրավունքի մոտեցումը**՝ ուղղակի պաշտպանությունից անցում կատարելով դեպի ժառանգության պաշտպանությունը՝ որպես **մարդու մշակութային ինքնության համար կարևոր նշանակություն ունեցող արժեք**¹⁸: Մշակույթի իրավունքի առաջին համընդհանուր երաշխիքը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ» հռչակագրի 27-րդ հոդվածն է՝ «Յուրաքանչյուր ոք ունի համայնքի մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու, արվեստը վայելելու, գիտական առաջընթացին և դրա օգուտներին մասնակցելու իրավունք» ամրագրումով¹⁹: Վերջինիս ՅՈՒՆԵՍԿՕ-ի մեկնաբանությունը հաստատել է, որ համայնքի մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը երաշխավորում է նաև մշակութային ժառանգության հասանելիության, մշակութային պրակտիկաներին մասնակցելու և վայելելու յուրաքանչյուրի իրավունքը²⁰: Մշակույթի իրավունքի քննության մեկ այլ առանցքային աղբյուր է ՄԱԿ-ի «Տնտեսական,

¹⁴ Ժնև 1977, «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին» 1949 թ. կոնվենցիային կից՝ Միջազգային զինված բախումների ժամանակ զոհերի պաշտպանության մասին լրացուցիչ արձանագրություն, հոդված 75:

¹⁵ Ժնև 1949, «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին» կոնվենցիա, հոդված 27:

¹⁶ UNESCO 2001, Decision of the Intergovernmental Committee: 10.COM 15.a, Annex, 9.

¹⁷ ICJ 2004, Legal Consequences of the Construction of a Wall in the Occupied Palestinian Territory, Advisory Opinion, § 105; UN Committee on Economic, Social and Cultural Rights, 2009, General Comment No. 21 (art. 15, para. 1a of the Covenant on Economic, Social and Cultural Rights), E/C.12/GC/21, § 55.

¹⁸ UN 2016, A/71/317, § 16; UN Bennoune 2016, § 53.

¹⁹ UN 1948, Art. 27.1.

²⁰ UNESCO 2024, Culture: Protecting Our Heritage and Fostering Creativity.

սոցիալական, քաղաքական և մշակութային իրավունքների» միջազգային դաշնագրի 15-րդ հոդվածը, որի 1/ա կետով մշակույթի իրավունքը սահմանվում է որպես «...յուրաքանչյուր անհատի՝ իր մշակութային կյանքին մասնակցելու իրավունք²¹»: Դաշնագրի մեկնաբանությամբ՝ մշակութային կյանքին մասնակցությունը բազմաշերտ գործընթաց է, որը ներառում է փոխկապակցված բաղադրիչներ՝ մշակութային կյանքին հասանելիություն, ուղղակի մասնակցություն և ներդրման հնարավորություն²²:

Հիշյալ մեջբերումները մեզ թույլ են տալիս ասել, որ բռնի տեղահանված արցախահայերի շրջանում խախտված է մշակույթի իրավունքը, քանզի հաղորդագիները զրկված են իրենց համայնքի մշակութային կյանքին մասնակցելու, հուշարձանների հետ հաղորդակցվելու, ոչ նյութական ժառանգությունը կիրառելու իրավունքից, մշակութային պրակտիկաները պահպանելու և սերունդներին փոխանցելու հնարավորությունից:

Հաղորդագիների ավանդական կենսընթացի խեղումները

Փորձելով գնահատել Արցախի Հաղորդի շրջանի ժողովրդի ավանդական կենսընթացի խեղումները, մշակույթի իրավունքի խախտումները և ոչ նյութական ժառանգության կորուստները՝ առաջացած բռնի տեղահանման հետևանքով, մենք առերեսվում ենք մի քանի խնդիրների, որոնք ներառում են Հաղորդի տոների, ավանդույթների, արհեստների կասեցումը, ինքնության վերստեղծման խոչընդոտումը:

Մշակութային փառատոների հարկադիր կասեցումը Հաղորդում

Մշակույթի իրավունքը Հաղորդում խախտվում է, երբ ոչ նյութական ժառանգության պահպանումը խաչընդոտվում է ամենամյա բնույթ ունեցող փառատոների հարկադիր կասեցմամբ՝ բացառելով արցախահայերի մասնակցությունը մշակութային միջոցառումներին, ինքնության և ժառանգության համար առանցքային համայնքային գործելակերպին:

Հիշատակման է արժանի Հաղորդի շրջանի **Տողի գինու փառատոնը**, որն անցկացվում էր 2014 թվականից սկսած, ամեն տարի սեպտեմբերին Տող բնակավայրի մելիքական ապարանքում (XVIII դ.), ներկայացվում էր գինեգործության հնագույն և ինքնատիպ ծիսակատարությունը՝ խաղողի ճզմում, արցախյան ավանդական ուտեստների հյուրասիրություն (ժենգյալով հաց, լավաշ, կուրկուտ), ազգագրական պարերի, երաժշտության ներկայացում և այլն: Տողում էին գտնվում «Կատարո» գինու գործարանը և խաղողի այգին²³: Գինու հումքը *խնդողնի* կոչվող խաղողն էր, իսկ պահպանման հա-

²¹ UN Committee on Economic, Social and Cultural Rights 2009, § 3, § 13; UN Bennoune 2016, § 7.

²² UN Committee on Economic, Social and Cultural Rights 2009.

²³ «Կատարո» գինու գործարանը մնացել է թշնամու տիրապետության տակ:

մար օգտագործվում էին արցախյան կաղնու փայտից պատրաստված տակառներ: Ուստի, պետք է արձանագրենք, որ իսպառ վերացման եզրին են հայտնվել այն փորձն ու գիտելիքը, որ բնորոշ էին հենց արցախյան գինեգործական մշակութային լանդշաֆտին և կյանք էին հաղորդում գինեգործական ոչ նյութական պրակտիկային: Այս փառատոների բացակայությունը ստիպել է բազմաթիվ գինեգործների, որոնք այժմ բնակվում են Հայաստանի Հանրապետությունում, կտրվել իրենց հողից ու խաղողի այգիներից: Տող գյուղում էին ապրում շուրջ 70 գինեգործ, որոնք տնական գինի էին պատրաստում և մասնակցում փառատոնին:

Գերմանացի մարդաբան Բ. Բրաուչլերի պնդմամբ՝ պատերազմների ընթացքում նյութականի վնասը շատ դեպքերում ակնհայտ և տեսանելի է, իսկ ոչ նյութական արժեքներն ընդհանրապես անհետացման վտանգի առջև են հայտնվում, և հնարավոր չէ գնահատել պատճառված վնասը²⁴:

Արցախյան ազգային և բնությանն առնչվող ավանդույթները հատկապես կարևորվել են Հաղորդի շրջանի Դրախտիկ գյուղում, որտեղ, սկսած 2014 թվականից, կազմակերպվում էր **թթվի փառատոնը**: Մասնակցում էին շրջանի 17 գյուղերի բնակիչներ՝ ցուցադրելով թթվի 60 և ավելի տեսակ՝ ընդգծելով դրա պատրաստման յուրահատուկ մշակույթը: Այս ոչ նյութական պրակտիկան այլևս չի կարող գոյություն ունենալ, քանզի այն մշակութային ենթահողը (տեղական հումք, բնություն, համայնքի գիտելիք), որը կար Արցախում հաղորդացու համար, այլևս հասանելի չէ: Բացի այդ, այն մշակութային տարածքը, որտեղ նա պետք է ստեղծեր, արարեր ու ապագա սերունդներին փոխանցեր թթվի պատրաստման ոչ նյութական պրակտիկան, ներկայումս անմատչելի է:

Մինչ 2020 թվականի պատերազմն ու տեղահանումը արցախահայության շրջանում կենսունակ էին ազգային-ավանդական՝ լախտի, կոխ, արլորակոփ, քաշոցի, պարանի ձգում և այլ ռազմի ու համայնքային խաղերը «Գուպար» ազգային ավանդական խաղերի մրցույթ փառատոնի շնորհիվ, որն ընդգրկում էր Արցախի՝ Քաշաթաղի, Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի, Հաղորդի, Շուշիի, Շահումյանի շրջանների 250 մասնակցի: Փառատոնն առաջին անգամ կայացել է 2020 թ. սեպտեմբերի 2-ին՝ Արցախի անկախության 29-րդ տարեդարձի օրը՝ Հաղորդի շրջանի Տող գյուղի XVIII դարի արգելոցում՝ մեղիքական ապարանքում:

Իր ողջ պատմության ընթացքում զուտ հայկական բնակչություն, հայկական ազգային-դավանական միջավայր ունեցող²⁵ Հաղորդի շրջանում

²⁴ Bräuchler 2012, 153-167.

²⁵ XIX դարում Ռուսական կայսրության տարածքում պարբերաբար հրատարակվող և կայսրության էթնիկ կազմը, բնակավայրերը ներկայացնող պարբերականներում Հաղորդի բնակավայրը նկարագրվում է որպես հայկական (Давидбеков 1888, 153-192):

«Գուպար» խաղերի մրցույթը նախաձեռնել էր Հադրութի մշակույթի և երիտասարդության բաժինը, քանզի բնակչության շրջանում ամուր էին համայնքային կապերն ու ավանդական մտածողությունը: Բռնի տեղահանված արցախահայերի հետ մեր շուրջ 60 անհատական խորացված հարցազրույցների շնորհիվ պարզել ենք, որ տեղահանումից հետո հարցվածներից ոչ ոք այս խաղերը չի խաղացել:

2017 թ. ի վեր ամեն տարի **Հադրութում կազմակերպվում էին «Դիզակի գույները» խորագրով նկարչական միջազգային սիմպոզիումներ**, որոնց շնորհիվ ստեղծվել է ավելի քան 150 կտավ²⁶: Աշխարհի տարբեր անկյուններից ժամանած արվեստագետները ծանոթանում էին Դիզակ աշխարհին և կտավների միջոցով արտահայտում Հադրութի (Արփենահետիկ, Պլեթանգ, Մելիքաշեն, Ծաղկավանք, Բանաձոր, Խանձաձոր) բնության գեղեցկությունը: Սակայն 2020 թ. պատերազմի պատճառով Հադրութն անցավ Ադրբեյջանի վերահսկողության տակ, և կտավների մեծ մասը կորսվեց:

Հիշյալ փառատոները համայնքային ընդհանուր արժեքներ ունենալու և դրանք սերունդներին փոխանցելու հնարավորություն էին ընձեռում՝ նրանց մեջ սերմանելով պատկանելության և նույն ավանդույթներով ապրելու գգացում: Հարկադիր տեղահանումը համայնքներին առանձնացրեց այս պրակտիկաներից:

Հադրութիցիների խոհանոցային վտանգված ավանդույթները

Հադրութի ժողովրդի ոչ նյութական ժառանգության պահպանության իրավունքի խախտում է նաև մշակութային գործունեության համար անհրաժեշտ պայմանների բացակայությունը: Այս համատեքստում մշակույթի իրավունքի իրացումը այն պայմանների պաշտպանությունն է, որոնք մարդկանց թույլ են տալիս առանց խտրականության մասնակցելու և ներգրավվելու մշակութային կյանքի մեջ²⁷: Պայմանների խոչընդոտումը հատկապես ակնառու է արցախյան ավանդական խոհանոցային սովորույթների պահպանման հարցում, քանզի այս ուտեստների պատրաստման շատ բաղադրիչներ մշակվել են արցախյան բնության միջավայրում և ներկայումս անհասանելի են Հայաստանի Հանրապետությունում:

Արցախյան **ժենգյալով հացը**, որը խմորից, վայրի և մշակովի ուտելի բույսերից²⁸ պատրաստված տափակ բլիթ է, որպես ավանդական պրակտիկա՝ անխզելիորեն կապված է Արցախի և մասնավորապես Հադրութի բնության, մարդկանց, համայնքի և միջավայրի հետ: Հադրութից տեղահանվածները նշել են, որ այս ուտեստի բաղադրատոմսում ներառել են 15 տեսակի

²⁶ Panorama. am 2021, The "Colors of Dizak" symposium was held in Stepanakert instead of Hadrut.

²⁷ UN Bennoune 2016, UN Committee on Economic, Social and Cultural Rights 2009, § 55.

²⁸ Ծատուրյան, Հովսեփյան 2021, 305-326:

կանաչի, թեև գրականության մեջ ավանդաբար օգտագործվել է շուրջ 32 բուսատեսակ²⁹: Այնուամենայնիվ, տեղահանությունից հետո նոր միջավայրում, տարբեր բույսերի ու պայմանների բացակայությունը խանգարում է այս պրակտիկայի շարունակականությանը: Ու, չնայած այս ուտեստի վերստեղծման փորձերին, այն մնում է արցախյան հողի հետ անխզելիորեն միաձույլ պրակտիկա և դժվարությամբ է հարմարվում նոր միջավայրին:

Արցախի տարբեր շրջաններում ոչ նյութական ժառանգության արժեքներից կարևոր նշանակություն ունեն **թթի կիրառման մշակույթը**, քանզի Հաղորդում շատ ընտանիքներ իրենց բակում թթի ծառեր էին մշակում՝ տիրապետելով թթից ավանդական ուտեստներ պատրաստելու մեծ հմտությունների: Արցախում թուփը նույնպես ընդգծված համայնքային մշակույթի տարր էր. հարևաններով, հատուկ ընթացակարգով օջախի վրա թթից պատրաստում էին նաև դոշաբ, որը համայնքային ծիսակարգ էր: Տեղահանությունից հետո, ռեսուրսների բացակայության պատճառով, արցախյան դոշաբը չի պատրաստվում՝ արցախահայերին զրկելով թե՛ այս յուրահատուկ պրակտիկայից և թե՛ դոշաբի օգտակար ու բուժիչ հատկություններով բժշկվելու հնարավորությունից:

Արցախի բնության և համայնքային կյանքի հետ էր կապված նաև թական ջրերնով, խոզի կամ բադի մսով հարիսան՝ **կուրկուտը**: Հարցվածների ճնշող մեծամասնությունը նշել է, որ կուրկուտ էին պատրաստում կարևոր օրերին՝ մայիսի 1-ին, 9-ին, Զատիկի տոնին, Ամանորին, մեռելոցին և այլ օրերի. դա ցուցիչն է այն բանի, որ կուրկուտը համայնքային և խիստ առանձնահատուկ մշակութային պրակտիկա էր:

Ոչ նյութական պրակտիկաներից **խաշիլի** պատրաստման համար, որը հատկապես տարածված էր Հաղորդում, ցորենն աղում էին, օջախի վրա 4 ժամ եփում, մատուցելիս մեջտեղում փոս անում, յուղ լցնում և պարտադիր կերպով չորաթան ու սոխեռած ավելացնում³⁰: Խաշիլի կարևոր բաղադրիչ էր խնոցու թանով պատրաստված չորաթանը³¹, որը ՀՀ-ի քաղաքային և

²⁹ Ծառույցյան, Հովսեփյան 2021, 305-326: Ժենգյալով հացի բաղադրության մեջ մտնում են. վայրի թրթնջուկ, ըվիլուկ (ավելուկ), պովապորտ (կավաժիպակ), սիմսիմոկ (անմոռուկ), ճրճըռոկ (աստղիկ), կոնանջուկ (ծվճվուկ), ծըտըպաշար (հովվամաղախ), կնձմնձուկ (կերբելուկ), սիբեղն (սիբեխ) և այլ կանաչիներ:

³⁰ Կոտայքի մարզ, Զովունի, հաղորդեց Արցախի Հաղորդի շրջանի Տոլ գյուղից տեղահանված Լևոն Հակոբյանը (78 տ.), 2023 թ. մայիս:

³¹ «Չորաթանը պատրաստում էինք խնոցու մեջ կարագը պատրաստելու ժամանակ. երբ յուղը վրայից վերցնում էինք, մնում էր թանը, հետո այն ածում էինք հատուկ պարկի մեջ, մաղով քամում, կլոր կլոր գնդիկներ անում, դրանք ձեռքով սեղմում և դնում դրսում արևի տակ, չորացնում, ձմեռը պահում սառը տեղ, հետո ջրի մեջ բացում և ուտում: Չորաթանով նաև չլնջոժ էինք պատրաստում»։ Շիրակ, Գյումրի, հաղորդեց Արցախի Հաղորդի Տոլ գյուղից տեղահանված՝ Սևակ Վարդանյանը (64 տ.), 2023 թ. մայիսի 18:

մյուս բնակավայրերում դժվար է պատրաստել: Տեղահանվածները խաշիլի վերաբերյալ նույնպես փաստեցին, որ այն համայնքային պրակտիկա էր³²:

Արցախի բնական լանդշաֆտին բնորոշ մեկ այլ պրակտիկա էր նաև **կաճապով ապուրը**, որի հումքը՝ կաճապը, դառնահամ, վայրի, երկար տերևներով բույս էր և աճում էր միայն Հաղրուփի դաշտերում. այն չորացնելիս կորցնում էր դառնությունը, ապուրի մեջ անուշ համ էր ստանում: Այս բույսը բուժիչ հատկություններ ուներ, և պատրաստում էին հիմնականում հիվանդներին առողջացնելու նպատակով³³:

Հաղրուփի գեղեցիկ բնությունն ու հարուստ բնական լանդշաֆտը առանցքային դեր են կատարել **թեյախմության** մշակույթում: Ընդունված ավանդույթ էր տեղական ուրցով և արցախյան խոտաբույսերով թեյախմությունը, որի հանդեպ սերն էլ ստեղծել էր խորհրդանշական՝ սամովարի (ինքնատե) մշակույթը, որը գրեթե բոլորն իրենց տներում ունեին: Թեյախմությունն ավելին էր, քան միայն թեյ խմելը, այն սոցիալական իրադարձություն էր, որ նպաստում էր փոխշփումներին: Հաղրուփցիները նշել են, որ դեպի տարածքի ուխտատեղիներ՝ Կատարո վանք, Հաղրուփի Սուրբ Խաչ վանք, Տողի Սուրբ Հովհաննես ուխտագնացությունների ժամանակ, հաճախ իրենց հետ տանում էին սամովարը (ինքնատե) և բնության գրկում վայելում Դիզափայտի լանջերից հավաքված բնական խոտաբույսերով թեյը³⁴: Այս ավանդույթը ընդգծում է արցախցիների և շրջակա միջավայրի խորը կապը, որը Հայաստանում նույն կերպ անհնար է վերարտադրել:

Արցախը հարուստ էր նաև **մեղվաբուծությամբ**, հատկապես Դիզափայտի մեղվափեթակներով, որոնցից շատ տնտեսվարողներ ստանում էին բացառիկ համի մեղր:

Հաղրուփի շրջանի խոհանոցի յուրահատուկ ուտեստ էր **պոպոքով (ընկույզ) գաթան**, որը հիմնականում պատրաստում էին տոնական օրերին: Առաջին հայացքից կարող է թվալ, որ դյուրին է այն պատրաստել նաև Հայաստանում, բայց տեղահանվածները նշում են, որ Հաղրուփի «պոպոքի» համն ուրիշ էր, քանզի տեղի հող ու ջրից էր սնվում, իսկ բուն գաթան տարբերվում էր մյուս շրջանների գաթայից ընկույզի առատությամբ և հաճախ Հաղրուփի գաթան «պոպոքը շար գաթա էին անվանում»³⁵:

³² Սյունիքի մարզ, Կապան, հաղորդեց Արցախի Հաղրուփի Թաղասեր գյուղից տեղահանված Վարդուհի Սկանը (59 տ.), 2023 թ. մայիս:

³³ Երևան, հաղորդեց Արցախի Հաղրուփ քաղաքից տեղահանված Զարինե Մարտիրոսյանը (48 տ.), 2023 թ. մայիս:

³⁴ Երևան, հաղորդեց Արցախի Հաղրուփի շրջանից տեղահանված Մարինե Քարամյանը (59 տ.), 2023 թ. ապրիլ:

³⁵ Կոտայքի մարզ, Եղվարդ, հաղորդեց Արցախի Հաղրուփի շրջանի Տող գյուղից տեղահանված Անուշ Սարգսյանը (41 տ.), 2023 թ. հունիս:

Ինչպես տեսանք, Արցախի Հաղորդի շրջանում համայնքային ուտեստների կիրառման պրակտիկայի պահպանումը զգալի մարտահրավերների է բախվում ոչ միայն ռեսուրսների բացակայության, այլև համայնքի մասնատվածության պատճառով: Շատ ավանդական ուտեստների պատրաստումը խորապես միահյուսված էր կոնկրետ օրերի, ժամանակի և արցախյան համայնքային իրադարձությունների հետ՝ արտացոլելով Արցախի մշակութային, ծիսական և բնական ժառանգությունը: Այս ուտեստները՝ ժենգյալով հացը, արցախյան գաթան, խաշիլը, կուրկուտը և այլն, ավելին էին, քան պարզապես սնունդ. դրանք համայնքի ինքնության և սոցիալական կառուցվածքի կենսական մասն էին: Եվ հաճախ պատրաստվում էին փառատոների, կրոնական տոների և այլ նշանակալից հավաքույթների ժամանակ՝ ամրապնդելով սոցիալական կապերը և պահպանելով մշակութային ավանդույթները:

Ադրբեջանի խտրական քաղաքականության հետևանքով իրենց պայենական հողերից արցախահայերի բռնի տեղահանումը կասեցրել է գիտելիքների միջսերունդ փոխանցումը, արցախյան մշակութային սովորույթների և ավանդույթների բնականոն շարունակականությունը³⁶:

Հաղորդի արհեստների կասեցումը

Բռնի տեղահանությունը հանգեցրեց ոչ նյութական մշակութային արհեստագործական պրակտիկաների կասեցմանը: Մեր ուսումնասիրությունները փաստում են, որ Արցախի Հաղորդի շրջանում (հատկապես Մեծ Թաղարում³⁷) մինչ պատերազմը կենսունակ էին XIX դարի արհեստները, այդ թվում՝ դարբնագործությունը, տակառագործությունը, բրուտագործությունը, համետագործությունը (թամբի պատրաստում, փալանջիություն) աստղծագործությունը, պայտարագործությունը, կլայեկագործությունը (արծնապատում, էմալապատում), գորգագործությունը, փայտագործությունը, հյուսնությունը, որի հումքը տեղական կաղնու փայտն էր: Տակառագործությունը, որի հումքը Արցախի հաճարի փայտն էր, զարգացած էր Տողում: Իսկ Ասկերանի շրջանում գործում էր անգամ տակառագործության՝ միջազգային չափանիշներին համապատասխան գինեգործության և կոնյակագործության գործարան՝ Վարանդան³⁸:

Հաղորդը հարուստ էր իր գորգագործության և կարպետագործության մշակույթով, որի ավանդական պրակտիկան կասեցվեց կրթական կենտրոնների՝ գորգագործության վայրերի բռնազավթման պատճառով:

³⁶ De Feyter and Parmentier 2002, 23-39, Kendall 2010, 356-381.

³⁷ Արցախի երկրորդ բնակավայրն էր Թաղարը (լեռ երկնքի տակ, թաղ-երկինք. *թաղասեր* և *թաղավարդ* բառերը նույն արմատով են): Երևան, հաղորդեց Արցախի Հաղորդի շրջանի Թաղար գյուղից տեղահանված Լևոն Հայրյանը (68 տ.) 2023 թ. հունիս:

³⁸ Avetyan 2021.

Հատկանշական է, որ արհեստների կորստից զատ, տեղահանությունը խաթարել է նաև արհեստների յուրացման մշակութային կրթության բնականոն գործընթացը, ավանդական գիտելիքի ստացումը և փոխանցումը: Մինչ ադրբեջանական օկուպացիան Հադրուֆի շրջանում գործում էին 26 դպրոց և 6 մանկապարտեզ, որտեղ կրթություն ստացող 2030 աշակերտ տեղահանության հետևանքով զրկվել է կրթության հիմնարար իրավունքից:

Հադրուֆի շրջանի տոների հարկադիր կասեցումը

Արցախցիների կյանքում մեծ տեղ են ունեցել տոները, այդ թվում՝ Հադրանակի օրը՝ մայիսի 9-ը, Աշխատանքի օրը՝ մայիսի 1-ը, Արցախի անկախության օրը՝ սեպտեմբերի 2-ը, Հադրուֆի օրը՝ օգոստոսի 15-ը, Խարույկի օրը՝ մայիսի 19-ը, ինչպես նաև հիշատակի օրերը՝ Ցեղասպանության հիշատակի օրը՝ ապրիլի 24-ը, Երկրաշարժի զոհերի հիշատակի օրը՝ դեկտեմբերի 7-ը: Մեծ կարևորություն ունեին նաև եկեղեցական տոները՝ Սուրբ Ծնունդը, Սուրբ Զատիկը, Տյառնընդառաջը, Վարդավառը և այլ տոներ: Հատկանշական է, որ այս տոները խորապես փոխկապակցված են Արցախի մշակութային վայրերի, եկեղեցիների ու հուշարձանների հետ: Շատ հաճախ դրանք ուղեկցվել են հուշարձաններ այցելություններով կամ տոնվել են հենց հուշարձանների տարածքներում: Դրանցից էին՝ Հադրուֆի Կատարո, Սպիտակ Խաչ վանքերը, Սուրբ Հարություն, Տողի Սուրբ Հովհաննես եկեղեցիները, Տումի Կարմիր վանքը, Առաքել գյուղի խաչքարերն ու այլ սրբավայրեր:

Արդ, առանձնացնենք այն տոները, որոնք միայն Հադրուֆում են նշվել: Կարևոր էր հատկապես Հադրուֆին բնորոշ, համայնքային ավանդույթ դարձած, կորսված՝ Խարույկի օրը: Բոլոր համայնքների սարերի ստորոտում հադրուֆցիներն այդ օրը խարույկ էին վառում և մրցում, թե ու՛մ խարույկն է ավելի բարձր: Տոնից մեկ շաբաթ առաջ երեկոները ցախ ու անվադողեր էին գլորում, երգով, պարով տանում դեպի խարույկը վառելու տեղը: Տոնին վառված խարույկների շուրջ բոլորը հավաքվում էին մեծ ու փոքր, դրանց վրայից թռչում ու մինչ ուշ գիշեր մնում այնտեղ³⁹: Հիշատակության է արժանի նաև **Հադրուֆ քաղաքի տոնը՝ օգոստոսի 15-ը**, որը նվիրված էր 1992 թ. օգոստոսի 15-ին հադրուֆցիների՝ թուրքերի դեմ ինքնապաշտպանական հերոսական պայքարին և հաղթանակին: Հատկանշական է, որ տոնի առանցքում կրկին մշակութային ժառանգության վայրեր այցելելն էր: Ազատամարտիկներից մեկը նշում է, որ Հադրուֆի տոնին տղամարդիկ շրջկենտրոնի հուշարձան և հուշահամալիր էին գնում, հետո քաղաքի կենտրոնական հրապարակում տոնախմբություն, պետական միջոցառումներ էին անց-

³⁹ Երևան, «Դիզակ արտ» կենտրոն, թիրախ-խմբային հարցում Հադրուֆից տեղահանված ուսուցիչների հետ, 2023 թ. ապրիլ:

կացվում, իսկ երեկոյան զինվորականներն էին գալիս, և պետական մակարդակով կազմակերպվում էր հյուրասիրություն⁴⁰: Այդ օրը շատերը նաև Կատարո վանք էին բարձրանում: Տեղահանվածներից մի տղամարդ պատմում է, որ Հաղորդի օրը վիրավորները հավաքվում էին Խոռնաղբյուրում՝ Տնջրի ծառի տակ, որը Հաղորդի խորհրդանիշն էր⁴¹: Պատերազմում զոհված երիտասարդներից մեկի մայրը նշում է, որ 2020 թ. պատերազմից ի վեր Հաղորդի օրն այլևս գոյություն չունի, քանզի այն «նշվում» է Եռաբլուրում՝ որպես պատերազմում Հաղորդից զոհված հերոսների հիշատակի օր⁴²:

Հաղորդի կորսված բարբառը

Հաղորդն Արցախի մյուս շրջաններից առանձնանում էր իր ինքնատիպ լեզվամշակույթով: Բացի նրանց հետ ունեցած ընդհանուր տարբերություններից, Հաղորդի 48 բնակավայրերից յուրաքանչյուրը նույնպես ուներ իր ինքնատիպ բարբառը: ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակած ոչ նյութական մշակութային ժառանգության էթիկական սկզբունքների համաձայն, լեզվի անհետացումը սպառնում է շարունակական պրակտիկայի և կենդանի ժառանգության փոխանցմանը և կարող է հանգեցնել կենսական՝ մշակութային և բնագիտական գիտելիքների կորստին⁴³: Այսօր Արցախի շրջանի Հաղորդի յուրօրինակ բարբառը կորստի վտանգի տակ է, քանզի այն բառ ու բանը, որ պետք է փոխանցեր Հաղորդի տիպիկ կոլորիտն ու յուրաքանչյուր բառի մեջ թաքնված մշակույթը, փոխվում և կորչում է միջավայրի ազդեցության պատճառով:

Աղբբեջանի կողմից Արցախի ոչ նյութական ժառանգության պահպանության և մշակույթի իրավունքը հարգելու պարտավորությունը

Սույն պարտավորությունը պահանջում է ուղղակի կամ անուղղակի կերպով ձեռնպահ մնալ մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը խոչընդոտելու ցանկացած միջամտությունից⁴⁴ և ինքնության բացառման խտրական վերաբերմունքից⁴⁵: Այն երաշխավորում է նաև մշակութային ժառանգության և ինստիտուցիոնալ ծառայությունների մուտք գործելու հնա-

⁴⁰ Կոտայքի մարզ, Նաիրի, հաղորդեց Արցախի Հաղորդի շրջանի Հաղորդ քաղաքից տեղահանված Զարուհի Սարգսյանը (38 տ.), 2023 թ. հունիս 12:

⁴¹ Երևան, հաղորդեց Արցախի Հաղորդի շրջանից տեղահանված Էրիկ Ավաբերյանը (56 տ.), 2023 թ. հունիս:

⁴² Վայոց ձորի մարզ, Եղեգնաձոր, հաղորդեց Արցախի Հաղորդի շրջանի Հաղորդ քաղաքից տեղահանված Կարո Հայրապետյանը (45 տ.), 2023 թ. հունիս:

⁴³ UNESCO 2019, Living heritage and Indigenous People, 8.

⁴⁴ UN Committee on Economic, Social and Cultural Rights 2009, §48.

⁴⁵ UN General Assembly 1990, Article 31.

րավորությունը⁴⁶ և պաշտպանում մշակութային ինքնությունն ազատորեն արտահայտելու գործելակերպն ու ապրելակերպը: Խտրականության, ռասայական կամ կրոնական ատելության քարոզչությունն օրենսդրորեն արգելված է «Քաղաքացիական և միջազգային դաշնագրի» 19-րդ, 20-րդ և «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի 4-րդ հոդվածներով:

Մշակութային իրավունքի հանդեպ հարգանքը նաև մշակութային ժառանգության բոլոր ձևերի պաշտպանության իրավունքն է: **Ժառանգությունը պետք է պահպանվի, զարգանա, հարստացվի և փոխանցվի գալիք սերունդներին՝ որպես մարդկային փորձառության և ձգտումների արդյունք**⁴⁷: Բայց, ինչպես փաստեցինք, Արցախի մշակութային ժառանգությունը ոչ միայն անխնա ոչնչացվում ու բռնի յուրացվում է, այլև հերքվում է արցախահայերի ստեղծագործ լինելու հանգամանքը:

Եզրակացություններ

2020 թ. պատերազմի ժամանակ Ադրբեյջանի կողմից Հադրութի շրջանի հայերի բռնի տեղահանումը խորապես խաթարել է նրանց ավանդական կյանքը և մշակութային շարունակականությունը: Արցախի պատմական լանդշաֆտից և բնական ռեսուրսներից օտարումը, ինչպես նաև ոչ նյութական մշակութային պրակտիկաների կասեցումը, ինչպիսիք են փառատոները, տոները, ավանդույթները, ծեսերը և արիեստները, խիստ ազդել են մարդկանց մշակութային կյանքի վրա:

Այսօր ՀՀ տարածքում գտնվող հադրութցիները անմիջականորեն կրում են տեղահանության բացասական հետևանքները, այդ թվում՝ մշակութային ինքնության, համայնքային կյանքի, ընտանեկան սովորույթների և ավանդույթների լիարժեք պահպանության անհնարինությունը, անհատական և կոլեկտիվ մշակույթի իրավունքի իրացման խոչընդոտները, որը թե՛ մշակութային արժեքներին հաղորդակցվելու, թե՛ մասնակցության և թե՛ ներդրման հնարավորության բացակայությունն է: Հադրութի մշակութային համայնքների կազմաքանդման հետևանքով չեզոքացել են նաև ոչ նյութական մշակութային ժառանգության ամենաէական դրսևորումները, որոնց կորուստը հանգեցրել է համայնքային կյանքի կազմաքանդման և մշակութային ամբողջականության պահպանության այլևայլ խնդիրների: Վտանգված է նաև Հադրութի տարբեր բնակավայրերի բարբառների շարունակականության պահպանությունը:

Տեղահանության հետևանքով Հադրութի ժողովուրդը զրկվել է արիեստագործական պրակտիկաները իրացնելու հնարավորությունից, ներառյալ՝

⁴⁶ UNESCO Universal Declaration on Cultural Diversity 2001, § 8.

⁴⁷ UN Committee on Economic, Social and Cultural Rights 2009, § 50.

գորգագործության, կարպետագործության, թոնրաշինության, տակառագործության, փայտագործության, դարբնության, բրուտագործության ավանդական պրակտիկաները: Կորսվել են նաև մշակութային փառատոները, որոնք կապված էին ոչ նյութական արժեքների՝ գինու, խաղողի, ժենգյալով հացի, թթվի և այլ արժեքների հետ: Հաղորութի բնակիչների կենսընթացի անբաժանելի մասն են կազմել տոները, որոնց ավանդական մշակույթը ևս հնարավոր չէ իրացնել:

Միջազգային օրենքները փաստում են, որ հարկադիր տեղահանման ազդեցությունների մեջ կործանարար է հատկապես խմբի մշակութային իրավունքի խոչընդոտումը: Բռնի տեղահանության հետևանքով առաջացած ոչ նյութական մշակութային արժեքների կորուստը և դրանց իրացման խոչընդոտումը պատճառ են դարձել, որ Հաղորութի ժողովրդի հետագա սերունդները զրկվեն բնականոն սերնդափոխության, ինքնաճանաչման և զարգացման հնարավորություններից:

Օգտագործված գրականություն

- Ժնև 1949, «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին» կոնվենցիա:
- Ժնև 1977, «Միջազգային զինված բախումների ժամանակ զոհերի պաշտպանության մասին» Ժնևի 1949 թ. օգոստոսի 12-ի կոնվենցիային կից 1977 թ. լրացուցիչ արձանագրություն:
- Ծատուրյան Ռ., Հովսեփյան Ռ. 2021, «Ժենգյալով հացը» 2020 թ. Արցախյան պատերազմի օրերին, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, էջ 305-326:
- Давидбеков И. 1888, Село Гадрут, Елисаветпольской губернии, Джебраильского уезда, «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. шестой, отд. I, Тифлис, с. 153-192.
- ICJ 2004, Legal Consequences of the Construction of a Wall in the Occupied Palestinian Territory. Advisory Opinion of 9 July 2004.
- International Criminal Court 2021, Policy on Cultural Heritage.
- UN 2009, Committee on Economic, Social and Cultural Rights (CESCR), General comment no. 21, Right of everyone to take part in cultural life (art. 15, para. 1a of the Covenant on Economic, Social and Cultural Rights), E/C.12/GC/21.
- UN Bennoune K. 2016, Report on the Intentional Destruction of Cultural Heritage as a Violation of Human Rights. A/71/317.
- UN 1948, Universal Declaration of Human Rights (UDHR). New York: United Nations.
- UN 2010, Report of the Special Rapporteur on the Human Rights of Migrants, United Nations Human Rights Council, A/HRC/14/36.
- UN 2016, Report on the Intentional Destruction of Cultural Heritage as a Violation of Human Rights. A/71/317.
- UNESCO 1907, Hague Convention (IV) respecting the Laws and Customs of War on Land and its annex: Regulations concerning the Laws and Customs of War on Land.

- UNESCO 2001, Executive Board, Report on the preliminary study on the advisability of regulating internationally, through a new standard-setting instrument, the protection of traditional culture and folklore, Paris.
- UNESCO 2001, Universal Declaration on Cultural Diversity. Paris.
- UNESCO 2003, Convention for the Safeguarding of the Intangible Cultural Heritage, Paris.
- UNESCO 2003, Decision of the Intergovernmental Committee: 10.COM 15.a.
- UNESCO 2019, Living Heritage and Indigenous Peoples.
- UNESCO 2024, Culture: Protecting Our Heritage and Fostering Creativity.
- UN General Assembly 1990, International Convention on the Protection of the Rights of All Migrant Workers and Members of Their Families. General Assembly resolution 45/158.
- Center for truth and Justice 2023, What happened to all the Armenians in Nagorno-Karabakh? An Exodus Out of Indigenous Lands: Azerbaijan's Forced Displacement of the Ethnic Armenians from Nagorno-Karabakh.
- Bräuchler B. 2012, Intangible Cultural Heritage and Peace Building in Indonesia and East Timor, Routledge, p. 153-167.
- De Feyter K., Parmentier S. 2002, Cultural Rights: A Neglected Category of Human Rights. The International Journal of Human Rights, N 6(1), p. 23-39.
- Kendall S. 2010, Displacement, Development, and Culture: Understanding the Cultural Rights Implications of Forced Displacement. Human Rights Quarterly, N 32(2), p. 356-381.
- Chainoglou K. 2017, The Protection of Intangible Cultural Heritage in Armed Conflict: Dissolving the Boundaries Between the Existing Legal Regimes? Santander Art and Culture Law Review, N 2, p. 109-134.

ИСКАЖЕНИЕ ТРАДИЦИОННОГО ОБРАЗА ЖИЗНИ НАСИЛЬСТВЕННО ДЕПОРТИРОВАННЫХ АРМЯН ИЗ ГАДРУТА

Армине Тигранян

Резюме

В результате 44-дневной войны 2020 года около 13 000 армян были депортированы из Гадрутского района Арцаха. Армяне Арцаха лишились культурного наследия, что стало прямой угрозой для сохранения национальной идентичности. Депортация породила множество гуманитарных и социально-экономических проблем, а также нарушила традиционный образ жизни армян Арцаха.

Отрыв от природной культурной среды и ландшафта привел к утрате многих элементов нематериального наследия. К ним относятся диалекты, ремесла, праздники, фестивали, народные игры, а также культура питания, земледелия и быта. Более того, нарушение системы неформального культурного образования создало системные проблемы в сохранении целостности идентичности.

Ключевые слова – Арцах, Гадрут, традиционный образ жизни, депортация, право на культуру, нематериальное культурное наследие, фестивали Арцаха.

THE DISRUPTION OF THE TRADITIONAL WAY OF LIFE OF ARTSAKH ARMENIANS FORCIBLY DISPLACED FROM HADRUT

Armine Tigranyan

Abstract

As a result of the 44-day war in 2020, around 13,000 Artsakh Armenians were forcibly displaced from the Hadrut region of Artsakh by Azerbaijan. This forced deportation, in addition to causing humanitarian and socio-economic challenges, disrupted the traditional way of life for the Artsakh Armenians.

Through the implementation of a purposeful state policy by Azerbaijan, Artsakh Armenians were separated from their socio-cultural values, deprived of the opportunity to engage with and pass on the knowledge, customs, and practices tied to the nature, monuments, community, and cultural landscape of their historical homeland. They were also prevented from passing these on to future generations. Forced removal from the historical monuments and cemeteries of the Hadrut region, along with the direct threats to their existence, the destruction and defilement of many heritage sites, and the impossibility of living according to their own identity, created insurmountable challenges concerning the preservation of Artsakh's entire heritage. This included the churches, sanctuaries, pilgrimage sites, and religious rites essential to keeping traditions alive.

Additionally, the disintegration of community life, a significant consequence of displacement, combined with separation from the natural cultural environment and landscape, led to the erosion of many elements of intangible heritage. These include dialects, traditional dishes, crafts, holidays, festivals, community games, and the agricultural and household culture. Furthermore, the disruption of informal cultural education created systemic challenges in maintaining the integrity of identity.

Key words – Artsakh, Hadrut, traditional way of life, forced displacement, cultural right, intangible cultural heritage, Artsakh festivals.

ԱՐՀԵՍՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԸՍՏ ՊԱՏՄԱԳԻՐ ԱՌԱՔԵԼ ԴՎՎՐԻԺԵՑՈՒ

Քրիստինե Պապիկյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ՀՀ, Երևան, Չարենցի 15

Էլ. հասցե՝ cristine-8@mail.ru

ORCID: 0009-0007-4815-5940

Հոդվածը ներկայացվել է 08.01.2024, գրախոսվել է 08.01.2024, ընդունվել է տպագրության 03.12.2024

DOI: 10.53548/0320-8117-2024.3-273

Ամփոփում

XVII դարի պատմագիր Առաքել Դավրիժեցու «Պատմության» մեջ տեղ են գտել այն նյութերը, որոնց հիման վրա ներկայացվում են Արևելյան Հայաստանի և, մասնավորապես, իրանահայության կյանքը, կենցաղը, զբաղմունքները և արհեստները: Առաքել Դավրիժեցին ակնհայտապես վկան է եղել XVII դարի պատմական կարևորագույն իրողությունների: Նրա պատմության՝ որպես հիշյալ ժամանակաշրջանի ամենահավաստի և ստույգ սկզբնաղբյուրի, կարևոր աղբյուրներն են եղել ինչպես ակնհայտապես մարդիկ, այնպես էլ ձեռագիր հիշատակությունները: Պատմագիրը, շրջելով Հայաստանում, Պարսկաստանում, Փոքր Ասիայում, բանահավաքի ճշգրտությամբ գրի է առել իր ողջ տեսածն ու լսածը հայ ժողովրդի կյանքի բոլոր բնագավառների՝ պատմության, կրոնի, մշակույթի, տնտեսական կյանքի, կենցաղի, այդ թվում՝ արհեստների ու զբաղմունքների վերաբերյալ: Այս առումով Դավրիժեցու գրառած նյութերի մեծ մասը դաշտային ազգագրական նյութի արժեք ունի: Նրա երկում ուշագրավ տվյալներ են պահպանվել Նախիջևանի և Իրանի հայ բնակչության զբաղմունքների և արհեստների մասին: Հանգամանորեն ներկայացված են մետաղագործությունը (դարբնություն, զինագործություն, ոսկերչություն, արծաթագործություն, պղնձագործություն), քարկոփությունն ու որմնադրությունը, գորգագործությունը, կաշեգործությունը: Նյութը կարևոր է ազգագրական ուսումնասիրության տեսանկյունից, որը թույլ է տալիս պատկերացում կազմել XVII դարում հայերի շրջանում առավել ընդունված ու կիրառություն ունեցող ավանդական արհեստների ու զբաղմունքների մասին: Հոդվածի գիտական նորոյթն այն է, որ ի մի են բերվել արհեստների մասին գրքում առկա նյութերը, որոնք կարող են հիմք դառնալ հետագա նորանոր հետազոտությունների համար:

Բանալի բառեր՝ մատենագիտություն, պատմագրություն, իրանահայեր, քարակոփ վարպետներ, դարբնություն, ոսկերչություն, գորգագործություն:

Ներածություն

Սույն հոդվածում Առաքել Դավրիժեցու «Պատմության» տվյալների հիման վրա քննարկվում են հիմնականում Նախիջևանի և Իրանի հայերի արհեստագործական մշակույթը, բնակչության ամենատարածված զբաղմունքներն ու արհեստները, որոնք կարևոր նշանակություն են ունեցել տնտեսու-

թյան զարգացման համար¹: Վերհանվելու են հայկական ավանդական արհեստագործության ամենատարբեր ճյուղերը, և դրանց միջոցով փորձ է արվելու ցույց տալ այն հեղինակությունը, որ վայելում էին հայ արհեստավորները թե՛ հայրենիքում, թե՛ օտար, տվյալ դեպքում՝ պարսկական միջավայրում:

Հոդվածի նպատակն է Դավրիժեցու «Պատմությունից» վեր հանել և առանձնացնել հայ ժողովրդի հիշյալ շրջանի արհեստների ու զբաղմունքների մասին արժանահավատ տեղեկությունները, որոնք շատ կարևորվում են ազգագրական տեսանկյունից և կարող են կարևոր սկզբնաղբյուր հանդիսանալ հետագա ուսումնասիրությունների իրականացման համար: Մեր խորին համոզմամբ թեման արդիական է հենց այս առումով:

Առաքել Դավրիժեցու աշխատությունում պատմաազգագրական տարբեր շրջաններին վերաբերող ազգաբանական արժեք ունեցող ուշագրավ վկայություններ կան, որոնց վրա հենվելով վերհանվում են Իրանի հայ բնակչության կյանքը, կենցաղը, նրա զբաղմունքներն ու ունեցած տնտեսական դերը: Դավրիժեցին արհեստները խմբավորել է հետևյալ կերպ՝ քարակոփություն և որմնադրություն, մետաղագործություն (դարբնություն, պղնձագործություն, ոսկերչություն, արծաթագործություն), ոստայնագործություն (ջուլհակություն), կաշեգործություն, կոշկակարություն և այլն²:

Հայ ժողովրդի կյանքում բախտորոշ ժամանակաշրջան էր XVI դարը. պետականությունից զուրկ ժողովուրդը հայտնվել էր սոցիալ-տնտեսական և քաղաքական ծանր իրավիճակում: Այս ամենին ավելացավ ևս մեկ արհավիրք՝ դարասկզբին (1603-1604 թթ.) պարսից Շահ Աբասի կազմակերպած բռնագաղթը, որը հայ ժողովրդի մի զգալի հատվածին կտրեց սեփական հողում ապրելու և արարելու իրավունքից: Պարսկաստանի տնտեսական կյանքի զարգացմանը նպաստելու համար շահը տեղահանված հայ բնակչությանը, որոնց մեջ գերակշռում էին արհեստավորները, բնակեցնում է երկրի տարբեր քաղաքներում, մասնավորապես Սպահանում, Շիրազի երկրամասում, Թավրիզում, Գիլանում և Մազանդարանում: Դրա հետևանքով XVII դարի առաջին քառորդին ստեղծվեց հայկական Նոր Զուղա գաղթավայրը:

Քարակոփություն և որմնադրություն

Շահ Աբասի կողմից Պարսկաստան տեղահանված հայերի մեջ մեծ թիվ էին կազմում քարագործներն ու որմնադիրները, որոնց բնակեցրին Սպահանում, Թավրիզում և հարակից շրջաններում: Կարճ ժամանակում քարտաշ և որմնադիր վարպետները կառուցում են աշխարհիկ և հոգևոր

¹ Սույն հոդվածը գրվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում իրականացվող «Ազգագրական նյութը XVII դ. պատմագիրների երկերում» թեմայի շրջանակում՝ բազային ֆինանսավորմամբ:

շենքեր, հյուրատներ, կամուրջներ: Նկարագրելով Սպահանում հաստատված հայերի շինարարական աշխատանքները՝ պատմագիրը գրում է. «...Շինեցին յարկս և բնակութիւնս ինքեանց՝ հրաշալի յօրինուածովք, կամարակապ փողոցօք, թևաւոր ապարանօք, և ամարասուն հովանոցօք, բարձրաբերձ և արքայակերպ շինուածօք, զարդարեալ և յօրինեալ ի ծաղիկս ոսկւոյ և լաջվարդի՝ և պէս պէս երանգաց ակնախտիղ տեսողաց: Սոյնպէս շինեցին և զեկեղեցիսն հրաշագան յօրինուածովք ըստ արժանոյն փառացն Աստուծոյ, երկնանման խորանօք, և գերամբարձ կաթողիկէիք, բովանդակ ծաղկեալ պէս պէս երանգովք ոսկւով և լաջվարդով, տնօրինականօք Տեառն և պատկերովք սրբոց: Եվ ի գլուխ կաթողիկէից ամենայն եկեղեցեաց կառուցեալ զնշան սրբոյ խաչին նոցին եկեղեցեացն ի պսակ՝ և ի պարծանս քրիստոնէից»³:

Հայաստանը շինանյութով հարուստ երկիր էր. օգտագործում էին քար, աղյուս, կավ/հող, կիր, գաջ, սակայն քարը գերիշխող դեր ուներ:

Ժամանակի դեպքերի ականատես-վկա Առաքել Դավրիժեցին գրում է, որ Հովհաննավանքի առաջնորդ Զաքարիա Քանաքեռցին ձեռնամուխ է լինում Հովհաննավանքի եկեղեցիների նորոգությանը. «Զաքարիա վարդապետն⁴ ժողովեաց բազում վարպետս՝ քարահատ և փայտատաշ, և դարբին... երեսուն քարտաշ հանապազ նստեալ քար տաշէին, և երկու ճարտար մէմար (որմնադիր) միշտ շարէին, և այլ վարպետք և գործաւորք յոյժ յոյվք... և զքարն և զկիրն յայնմ կողմանէ ձորոյն ձիով բերէին. և ի ՌՃԱ. (1652) թուին զերծան ի գործոյ»⁵: Վերանորոգվում է նաև Արտազ գավառի Սուրբ Թադեոս առաքյալի վանքը «...Շինեցին ներքուստ և արտաքուստ սրբատաշ վիմօք, ամուր և գեղեցիկ»⁶: Ապա սկսում են կառուցել եկեղեցու ժամատունը՝ «խրատեալ (մշակված) քարամբք և մածուցեալ (մածուցիկ) կրով»⁷:

Առաքել պատմագիրը գրում է Մովսես վարդապետի կողմից Էջմիածնի վանական համալիրի շինությունների կառուցման մասին. «Ի հարաւային կողմն շինեցին սեղանատուն, փռնատուն, տնտեսատուն, համբարանոց ցորենոյ և այլ նիւթոց...ամենեքեան լիտեալ քարիւ և թրծեալ աղիւսով և կրով և բոով (գաջ) շինեցան գեղեցիկ և վայելուչ յօրինուածով»⁸: 1664 թ. Երևանցի մեծանուն խոջա Մահտեսի Գրիգորը (Մոծակենց Գրիգոր) Աշտարակի ձորում՝ Քասախ գետի վրայի հին, փլված կամուրջի տեղում, ամուր կրով ու

³ Դավրիժեցի 1896, 63-64:

⁴ Զաքարիա վարդապետը, ով հայտնի է որպես Զաքարիա սարկավազ Քանաքեռցի, իր ողջ կյանքը անցկացրել է Հովհաննավանքում (1627 Քանաքեռ - 1699 Հովհաննավանք):

⁵ Դավրիժեցի 1896, 348:

⁶ Դավրիժեցի 1896, 349-350:

⁷ Դավրիժեցի 1896, 350:

⁸ Դավրիժեցի 1896, 306:

տաշած տուֆով կառուցեց նորը՝ «վասն հոգւոյ իւրոյ փրկութեան և վասն առ Աստուած յուսոյն»⁹:

Այն, որ քարագործներն ու որմնադիրներն արժանացել են մեծ հարգանքի ու գնահատանքի, վկայում է նաև Ներսես Շնորհալու մի հանելուկ՝ նմանեցնելով նրան մեղվին. «Ձերդ ըզքարագործ եւ այլ իմաստուն, հրաշից ծաղկանց շինէ իւր տուն»¹⁰:

Բացի քարագործ ընդհանուր անունից, վիմական արձանագրություններում նրանք հիշատակվում են նաև քանդակիչ, գծող, կազմիչ կամ կազմող անուններով: XIII դ. մի վիմագրում գրված է. «զԱբէլ եւ տէր Աւագ կազմող խաչիս յիշեցէք ի տէր»¹¹, իսկ XII դարի (1185) վիմագրում՝ «...Նորոգեցաւ Կաթողիկէն սուրբ ի թուին ուզ (1184): ՉՄխիթար կազմիչս յիշեցէք ի Քրիստոս»¹²: Դավրիժեցու տվյալները վանական համալիրների վերանորոգման մասին ուշագրավ վկայություններ են պարունակում ժամանակի քարագործ վարպետների մասնագիտական անվանումների, նրանց կատարած աշխատանքների տարբերակման առումով: Ժամանակի իրողությունների լավագույն գիտակ պատմիչը ոչ միայն նշում է այս կամ այն վանքի կամ եկեղեցու նորոգման մասին, այլև մանրամասներ է հաղորդում իրականացնող վարպետների հմտության, նրանց կարողությունների և զանազան գործառույթների վերաբերյալ:

Կաշեգործություն

Հայ մատենագրության մեջ կաշվի վերամշակման հետ կապված հիշատակվում են մի շարք արհեստներ՝ կոշկակարություն, թամբագործություն, կազմարարություն, մուշտակագործություն և այլն: Արհեստավորները պատրաստում էին ոտնամաններ, թամբեր, հագուստներ ու դրանց առանձին մասեր: Գոյություն ունեին կաշի մշակելու արհեստանոցներ՝ աղաղանոցներ (դաբախանա)¹³, որոնք հում կաշի էին մատակարարում: Դավրիժեցին հիշատակում է տրեխը. «Հարկիւ բանալ ետուն զսնդուկն և տեսին զի ոչ կայր ի նմա, բայց միայն մէկ ջուխտ մաշեալ և չորացեալ տրեխ՝ որ է չարուխ»¹⁴:

Դավրիժեցին վկայություն ունի նաև Տիգրանակերտ (Տիգրանակերտը կոչվում է նաև Նփրկերտ, Մարտիրոպոլիս: Այն հիմնադրել է Տիգրան Մեծը մ.թ.ա. 77 թվին: Թուրքերը այն կոչում են նաև Սիլվան կամ Ֆարկին)¹⁵ քա-

⁹ Դավրիժեցի 1896, 352-353:

¹⁰ Առաքելյան 1958, 190:

¹¹ Կոստանեանց 1913, 88:

¹² Կոստանեանց 1913, 35:

¹³ Աղայան 1976, 270:

¹⁴ Դավրիժեցի 1896, 175-176:

¹⁵ Առաքելյան 1958, 534:

ղաքում զարգացող մուշտակագործության մասին. «Իսկ բարեպաշտ քրիստոնեայքն՝ որք յագգէն Հայոց բնակեալ էին ի քաղաքն Համիթ, որ էր խօջայ Երեմիայն, և խօջայ Մախսուտն, Վանեցի խօջայ Ռօհիջանն, որ էր այս վէզիրս քուրքչի պաշի [մուշտակագործների պետ] և հաաստարիմ, և հաճոյական սպասաւոր առաջի նորա»¹⁶:

Համետագործության մասին՝ որպես արհեստի, պատմագիր Առաքել Դավրիժեցին գրում է, որ Վրթանես եպիսկոպոսը կտրում է էշի համետը, որը փալանն է. «Իսկ Վրթանէս եպիսկոպոսն հերձեաց զիշոյ միոյ կուրդին¹⁷, որ է պաղանն»¹⁸: Բերված տվյալները հիմք են կաշեգործության և դրա արտադրության հետ կապված բազմաթիվ հարցեր լուսաբանելու առումով:

Մոմ սպիտակեցնելու արհեստ

Հայերը հմուտ էին նաև բարձր որակի մոմեր պատրաստելու և հատկապես մոմ սպիտակեցնելու արհեստում: Առաքել Դավրիժեցին գրում է, որ 1625 թ. Երևանի Ամիրգունա խանը և Բայինդուր բեկը այցելում են Անանիա առաքյալի վանքը, Մովսես Սյունեցի վարդապետի անապատը: Մովսեսն իր հյուրերին նվիրում է յոթական սպիտակ մոմ, որը խիստ անծանոթ երևույթ էր ամբողջ Անդրկովկասի և Պարսկաստանի համար: Բայինդուր բեկը, հիանալով մոմի սպիտակությամբ, ասում է. «Պահեմ՝ զսա և տարեալ աղերս մատուցանեմ շահին»¹⁹: Մովսեսը, այս լսելով, բերում է ևս յոթ մոմ՝ Շահին նվիրելու: Մովսեսն այս արհեստը սովորել էր Երուսաղեմում և եկեղեցական արարողությունների ժամանակ օգտագործում էր իր պատրաստած սպիտակ մոմերը. «Եւ զսպիտակ մոմ՝ վառէր յեկեղեցուջն ի պատարագն, և յամենայն ժամակարգութիւնսն, զի զտօնս տէրունականս և զնշանաւոր սրբոց՝ մեծաւ հանդիսիւ կատարէր սպիտակ և պայծառ մոմեղինօք՝ և մեծաւ ցնծութեամբ»²⁰:

Դարբնություն

Հայոց մեջ զարգացած էր հատկապես մետաղների մշակությունը՝ իր երեք հիմնական ճյուղերով՝ դարբնություն, պղնձագործություն և ոսկերչություն: Դարբնի մասին հիշատակվում է դեռևս Աստվածաշնչի «Ծննդոց» գրքում՝ որպես երկաթե և պղնձե իրերի պատրաստող. «Սէլլան ծնեց Թորբէ-

¹⁶ Դավրիժեցի 1896, 242:

¹⁷ Կուրդին նշ. է համետ, փալան: Աղայան 1976, 802:

¹⁸ Պաղան՝ ոմկ.՝ բալան, վր.՝ փալանի, համետ. կորգին: Աւետիքեան, 2, 1836-1837, 1756, Դավրիժեցի 1896, 428:

¹⁹ Դավրիժեցի 1896, 300:

²⁰ Դավրիժեցի 1896, 299:

լին, որը պղնձի ու երկաթի հմուտ դարբինն էր»²¹: Դարբինն էր պատրաստում երկրագործական շատ գործիքներ՝ գուլթանի և արորի խոփ, մանգաղ, բահ, քաղհանի ուրագ, պայտեր, կենցաղային տարբեր իրեր, զենքեր և այլն: Պատահական չէ, որ դարբնին կոչում էին վարպետաց-վարպետ²²: Պարսկաստանում մեծ համբավ ունեին հատկապես հայ դարբինները. օրինակ՝ Փարիս գավառի առաջին հայկական գյուղին տրվել էր Դարբնի գյուղ անունը. «...յառաջին գիւղն երկրին Փարիոյ՝գոր Դարբնի գիւղ ասեն»²³: Դարբնության հետ էր կապված նաև փականագործությունը (չլնկարություն)²⁴: Տիգրանակերտցի Խաչատուրը. «...ունէր արուեստս չլնկարութեան, որ շինէ կոպղայս և այլ այսպիսի մանր իրք»²⁵:

Զինագործություն

Առաքել Դավրիժեցին զենքերից հիշատակում է նետը, աղեղը, կացնակը և հրացանը. «Եւ եկեալ մերձ բերդին Նախչուանու բանակ եղեալ նստաւ, այնքան մերձ, որ թէ թֆանք (հրացան) ձգէին հասանէր»²⁶: Կացնակը հիշատակվում է նաջախ անունով. «...էառ ի ձեռաց փայեկին զկացնակն, որ է նաջախ»²⁷: Պատմագիրը խոսում է նաև նետ ու աղեղի մասին. «...վաղվաղակի լցեալ զաղեղն՝ զի նետիւ հարցէ զայծեմունսն»²⁸, «...մի ձգէք թֆանք կամ նետ»²⁹: Դաշույնը հիշատակվում է խանջալ անունով. «Ճանապարհորդ եմ և աստ եկեալ կորուսի զխանջալն իմ՝ և շրջելով որոնեմ»³⁰: Պատմագիրը թվարկում է ռազմի զենքեր ու զրահ՝ սուսերը, աշտենները և նետերը. «...վառեցին զնոսա զրահիք և պատերազմական զինուք, նետիք և աշտէիք, սուսերօք և այլ զինուք»³¹:

Դավրիժեցին այգեգործական գործիքներից հիշատակում է ինչպես, օրինակ, քլունգը, որին նաև մուրճ է անվանում. «...էառ ի ձեռն իւր մուրճ, որ է քլունկ»³²:

²¹ Աստուածաշունչ 1999, 8:

²² Թաղևույսյան 2007, 105:

²³ Դավրիժեցի 1896, 163:

²⁴ Չլնկար կամ չլնկըր (çilingir) բառը թուրքերեն է, նշանակում է փականագործ, երկաթագործ, դարբին: Баскаков 1977, 192, Մուշեղյան Կարնեցի 1986, 28:

²⁵ Դավրիժեցի 1896, 533:

²⁶ Դավրիժեցի 1896, 22:

²⁷ Դավրիժեցի 1896, 165:

²⁸ Դավրիժեցի 1896, 280:

²⁹ Դավրիժեցի 1896, 22:

³⁰ Դավրիժեցի 1896, 507:

³¹ Դավրիժեցի 1896, 560:

³² Դավրիժեցի 1896, 501-502:

Պղնձագործություն

Մեծ է եղել մետաղագործության դերը կենցաղում, որի վառ ապացույցն է պղնձե և բրոնզե կաթսաների և կենցաղային զանազան իրերի առկայությունը՝ ափսեները, թասերը, ջրամանները, սկուտեղները, տնտեսական զանազան իրերը, կանացի արդուզարդը և այլն: Մետաղագործ վարպետները բավարարել են նաև հոգևորականության պահանջները՝ պատրաստելով եկեղեցական սպասքներ, այդ թվում՝ պղնձե անոթներ, բուրվառներ, սկիհներ, խաչեր, մոմակալներ և այլն: Առաքել Դավրիժեցին, նկարագրելով ջալալիների ասպատակությունները հայոց աշխարհում, նկարագրում է նաև Հովհաննավանքի թալանը: Ելուզակները, տանջանքների ենթարկելով վանքի արեղային, իմանում են վանքի թաքստոցի տեղը, որտեղից հանում են. «Եթէ շորեղէն, եթէ պղնձեղէն, եթէ անօթք, խաչ, սկիհ, շուրջառ, բուրվառ և գրեանք, որք էին ամենեքեան պատուական գրեանք վարդապետականք: Այլ և էին ի դարանի աստ սրբութիւնք վանիցն. որ էր վարշամակ երեսացն (ծածկոց) Քրիստոսի, և մասն ինչ ի փուշ պասկէն Քրիստոսի. և աջն սրբոյն Ստեփաննոսի նախավկային»³³:

Դավրիժեցին, նկարագրելով Էջմիածնի վանական համալիրը, գրում է, որ Փիլիպոս կաթողիկոսի թե՛ վարդապետության և թե՛ կաթողիկոսության շրջանում գահակալ աթոռն ավելի հարստացավ. «...հարստացաւ և փարթամացաւ եկեղեցական անօթով, ոսկով և արծաթով, և մեծագին զգեստուք, և պատուական գրենօք»³⁴:

Դավրիժեցի պատմագիրը ուշագրավ տեղեկություններ է հաղորդում 1651 թ. Վարազա վանքի կողոպուտի մասին: Վանքից դուրս է բերվում պղնձեղենով լիքը հոր, որտեղ բնակիչները լցրել էին վանքի բոլոր պղնձե իրերը և թաքցրել: Թաքստոցը լի էր հարստությամբ՝ Ավագ սուրբ նշանը՝ դրված գեղեցկաշեն արկղի մեջ և բազմեցրած անոթների վրա՝ փաթաթված բազմաթիվ կերպասներով. «արծաթեղէնք, սկիհք, և խաչք, և խաչ մի մարդաչափ. Որոյ կշիռն էր մէկ խոնդքարի լիտր (լիտրը հավասար է 12 ֆունտի, մոտ 5 կգ), և ի վերայ իւր գրեալ ունէր, Դաւթի խաչ. և բազում ոսկետուփ և արծաթապատ ասետարանք, և այլ գրեանք և արծաթեղէնք, քշոցք և բուրվառք և կանթեղք, և պատուական և մեծագին շուրջառք, և վարագոյրք, և բեմի ծածկոցք, և այլ ևս կահք և կարասիք բազումք, զորս անդէն պահեալ էին»³⁵:

Գեղարվեստական մետաղագործության բազմաթիվ ուշագրավ նմուշներ են պահպանվել Իրանի հյուսիսային մասի վանքերում և մասնավոր հավաքածուներում, որոնց մեջ հատկանշական են մեծաքանակ արծա-

³³ Դավրիժեցի 1896, 81:

³⁴ Դավրիժեցի 1896, 342:

³⁵ Դավրիժեցի 1896, 502-503:

նագիր, զանազան քարերով ագուցված խաչերը, մասնատուփերը, որոնց մի մասը 1830 թ. գաղթից հետո տեղափոխվել է Հայաստան³⁶:

Ոսկերչություն և արծաթագործություն

Հայերի շրջանում ոսկերչությունը շատ հին արհեստ էր: Ոսկերչական արհեստը սերտորեն կապված էր եկեղեցական կյանքի հետ: Ոսկուց և արծաթից էին պատրաստում կիրառական արվեստի բազմաթիվ նմուշներ՝ սպասքներ, եկեղեցական սկիհներ, բուրվառներ, խաչվառներ, խաչեր, մոմակալներ, ջահեր, վարագույրներ և այլն: Այս ամենից բացի, կարևոր տեղ ունեին նաև եկեղեցական հոգևոր գրքերի կազմերը՝ պատրաստված ոսկուց և արծաթից: Ոսկե կազմերի առկայությունը պայմանավորված էր նրանով, որ դրանց տեսքը լիներ գեղեցիկ և միաժամանակ ապահովեր ձեռագրի երկարակեցությունը: Ոսկերչության լավագույն նմուշները պահվում էին վանքերում և եկեղեցիներում, որոնք մշտապես հիացրել են դիտողին իրենց կատարողական բարձր արվեստով ու գեղագիտական նրբաճաշակությամբ: Լվովում ֆռանկների կողմից հայոց եկեղեցին թալանելուց ակնհայտ դարձավ, որ տեղի հայերը ոչնչացումից փրկելու համար եկեղեցու զանձատանն էին պահել իրենց ամենաթանկ իրերը, որոնց մեջ կային բազմաթիվ գրքեր՝ ավելի քան հազար կտոր, բոլորն էլ ընտիր: Սրանց մեջ էին. «...ոսկետուփ աստուածաշունչք, և աւետարանք, և շարակնոցք...»³⁷:

1915 թ. Մեծ եղեռնից մազապուրծ եղած հայերն իրենց վրա են վերցրել նաև Վարազա վանքի, Լիմ, Աղթամար կղզու վանքերի ձեռագիր մատյանների ու սպասքների պահպանության պատասխանատվությունը: Մատենադարանում է պահվում Նոր Զուղայի 1666 թվականի թիվ 5640 ձեռագիր Ավետարանը, որի գրիչը Կիրակոս երեցն է, ստացողը՝ Պողոս քահանան: Այն ունի արժեքավոր կազմ՝ արծաթյա քանդակազարդով, ականակուռ կրկնակազմով³⁸: Առաքել Դավրիժեցին գրում է, որ Երևանում գտնվող Իրանի Թահմազղույի բեկի առջև բերեցին Լուսավորչի սուրբ աջը, նաև մի ոսկետուփ ունեցող թանկագին Ավետարան և մի արծաթյա խաչ³⁹:

XVII դ. Նոր Զուղայում ոսկերչական արհեստը հասավ իր կատարելությանը: Նորջուղայեցիների կենցաղում ընդունված էին ոսկե և արծաթե սպասքներ, ոսկեջուր և արծաթյա պատառաքաղներ, գինու և ջրի արծաթյա գավաթներ, ջրամաններ և թասեր: Բարձր խավի հարստության չափանիշը նաև տան շքեղ կահավորումն էր, որին վերաբերվում էին առանձնակի բժախնդրությամբ: Լինելով անսահման հյուրասեր՝ նորջուղայեցիները մեծ

³⁶ Ըստ հնագետ Հուսիկ Մելքոնյանի բանավոր հաղորդման:

³⁷ Դավրիժեցի 1896, 377:

³⁸ Տե՛ս Եգանյան, Ջեյթունյան, Անթաթյան 1970, 155:

³⁹ Դավրիժեցի 1896, 168:

ուշադրություն էին դարձնում սեղանի հարդարանքին: 1628 թ. ապրիլի 15-ին անգլիական դեսպանության անդամ Հերբերթ Թոմասը խոջա Նազարի տանը կազմակերպած հյուրասիրության նկարագրում ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ սեղանի սպասքի բաժակներն ու գավաթները ամբողջությամբ ոսկուց էին, իսկ վարդաջրերի սրվակները և Շիրազից բերված գինու համար դրված բաժակները՝ ապակուց⁴⁰: Նորջուղայեցիների հարուստ ու շքեղ կենցաղավարության վառ ապացույց է նաև Առաքել Դավրիժեցու հետևյալ վկայությունը. 1603 թ. խոջա Խաչիկը Ջուղայում կազմակերպում է Շահ Աբասի հանդիսավոր ընդունելությունը. «ամենայն բնակիչքն Ջուղայու բազում և զանազան և պէս-պէս յօրիննուածովք պատրաստութիւնս հոգացեալ, ելին ընդառաջ շահին, որպէս վայել է թագաւորի: Եւ ի տան անդր, խոջայ Խաչիկն ոսկի սկուտեղ լցեալ ոսկով եղեալ ի ձեռն որդւոյ իւրոյ մատոյց առաջի թագաւորին, նոյնպէս և ամենայն մեծամեծքն Ջուղայու մատուցին ընծայ, որպէս վայել է թագաւորի: Եւ զաւուրս երեք եկաց անդ շահն, և Ջուղայեցիք պատուեցին զնա համադամ կերակրօք և ծաղկեհամ գինեա»⁴¹: Նկարագրելով Շահի այցը Ագուլիս 1617 թ.՝ պատմիչը գրում է. «Իշխանք, և ժողովորդք, արք և կանայք և աղջկունք, երիտասարդք մանկունք, ամենեքեան զարդարեալք ազնիւ և մեծագին զարդուք... վայելչահասակ և գեղեցկատես մանկունք և աղջկունք և կանայք ի ձեռս առեալ զգինին ոսկի բաժակաւ մատուցանէին շահին»⁴²:

Առաքել Դավրիժեցին հիշատակում է խիլան՝ որպես թանկագին հագուստ, որը թագավորները նվիրում են իրենց մեծագործ հպատակներին⁴³: Կոստանդնուպոլսի խոնդկարը⁴⁴ վրաց Սիմոն իշխանին պարգևեց խիլա⁴⁵: Առաքել պատմագիրը նկարագրում է Շահ Աբասի այցը Գեղամա գավառի Մազրա գյուղ (գտնվում է այժմյան Վարդենիսի շրջանում, որ կոչվել է նաև Մեծ Մազրա, այժմ՝ Զոդ), որտեղ էլ հյուրընկալվում է հայ քրիստոնյա մելիք Շահնազարի տանը: Վերջինս շատ հարգված իշխան էր և շահի բարեկամն ու մտերիմն էր: Նա փառահեղ ընդունելություն է կազմակերպում թագավորի համար, որին ի պատասխան, Շահ Աբասը նվիրում թանկագին ու ազնիվ զգեստներ⁴⁶: Մեկ այլ վկայությամբ՝ Երևանի Ամիրգունա խանը պատվեց Պողոս վարդապետին՝ նրա վրա գցելով թանկագին ու ոսկեհուռ

⁴⁰ Ստեփանյան 2000, 105:

⁴¹ Դավրիժեցի 1896, 24-25:

⁴² Դավրիժեցի 1896, 356:

⁴³ Դավրիժեցի 1896, 36:

⁴⁴ Խոնդկար/խոնդքար: Բուն նշանակությունը՝արյունախում, արյուն թափող, որ գործածվում էր թուրքական սուլթանների համար որպես ամենապատվավոր տիտղոս՝արքա, թագավոր: Խոնդկարը իրավունք ուներ օրական տասնչորս մարդ սպանելու: Աճառյան 1972, 549:

⁴⁵ Դավրիժեցի 1896, 36:

⁴⁶ Դավրիժեցի 1896, 85:

կապա⁴⁷: Թագավորական խնջույքներում կամ ընդունելությունների ժամանակ ոսկու կիրառությունը և՛ սպասքի, և՛ արդուզարդի և թե՛ հանդերձանքի տեսքով ոչ թե ցանկալի էր, այլ արարողակարգային պարտադիր բնույթ էր կրում, որը հասարակության հիերարխիկ կառուցվածքի արտահայտման միջոց էր:

Նոր Ջուղայի, Թավրիզի, Սպահանի հայ ոսկերիչների պատրաստած բարձրարժեք զարդերը որպես նվեր ուղարկվում էին խալիֆաթ ու բյուզանդական կայսրերին, ռուսաց ցարին: Իրանի հայ ոսկերչական արվեստի գլուխգործոց է համարվում ռուսաց Ալեքսեյ Միխայելովիչ ցարին նվիրած գահը: Խոջա Ջաքար Սարհադյանը 1660 թ. Մոսկվայում ցարին է նվիրում Սպահանի հայ վաճառականների ընկերության նվերները. «Գահավորակ կամ գահ՝ ոսկով ու արծաթով պատած, ադամանդներով, մարգարիտներով ու յակինթներով զարդարած: Գահի վրայ միայն 870 հատ այլ և մեծութան ադամանդ կար, մէկ լալ, 1223 հատ յակինթ. գահը պատած էր մախնուրով, որի վրայ դարձեալ երեք թել մարգարիտ էր անցկացրած, երկու կողմից երկու հրեշտակ, որոնք նոյնպէս մարգարիտներով էին զարդարված»⁴⁸: Նվերների թվում էին նաև պղնձե տախտակի վրա փորագրված «Խորհրդավոր ընթրիքը», ոսկե մատանի՝ ադամանդով, տապակելու արծաթե աման, պարսկական տափակ արծաթյա հեղուկաման, ոսկե բարձունքով սազ կամ տավիղ՝ զարդարված թանկագին քարերով, որի մեջ կար թանաքաման, ևս երկու ադամանդե մատանի և արծաթագործ արկղիկ⁴⁹:

Պետք է նշել, որ Առաքել Դավրիժեցին ոսկերչական արհեստանոցների և դրանց պատրաստման տեխնիկայի մասին տեղեկություն չի հաղորդում, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանը Պարսկաստանի տիրապետության տակ էր, պետք է ենթադրել, որ ոսկերչական արհեստի հետ կապված հարցերում ունեցել են ընդհանրություններ: Հայ ոսկերիչները, հենվելով հին ավանդույթների վրա, յուրացնելով ոսկերչական արհեստի նորարարությունները, այն հասցրեցին կատարելության աստիճանի: Դատելով նրանց պատրաստած բարձրարժեք աշխատանքներից, պարզ է դառնում, որ, բացի ոսկե իրեր պատրաստելուց, նրանք տիրապետել են նաև դրանց վրա թանկարժեք քարերի ամրացման տեխնիկային: Հայ ոսկերիչները, ունենալով սեփական ձեռագիրը, միաժամանակ յուրացրել են արաբական, պարսկական, և ընդհանրապես, մուսուլմանական ոսկերչական արհեստի լավագույն առանձնահատկությունները:

Դավրիժեցու վկայությունների համաձայն՝ ոսկե զարդերը և զգեստները ճոխ էին և մեծ տարածում ունեին հատկապես բարձր խավի կյանքում:

⁴⁷ Դավրիժեցի 1896, 221:

⁴⁸ Տէր-Աստուածատրեանց 1906, 14:

⁴⁹ Տէր-Աստուածատրեանց 1906, 14:

Դրանից ելնելով՝ ոսկին վայելում էր մեծ մասսայականություն, և դրա ընծայումը խիստ տարածված էր մեծատունների շրջանում: Ամենատարբեր տոնահանդեսներին և պերճաշուք ծիսակատարություններին առանձին փայլ էին տալիս շքեղ հանդերձանքը, ոսկե և արծաթե գեղաքանդակ սպասքը, զարդերն ու պերճանքի առարկաները, որոնց մեծ շուք էին հաղորդում թանկարժեք և կիսաթանկարժեք քարերը: Հետաքրքիր է ոսկու ընդունված զանգվածային կիրառությունը եկեղեցական կյանքում, ոսկե և արծաթե սպասքի կիրառությունը վանական միաբանություններում: Սրանց մեջ հատկապես շքեղ էին սկիհները, գավաթները, սուրբ սեղանի սփռոցները, վարագույրները, խնկամանները, բուրվառները և քշոցները:

Գորգագործություն

Հայաստանում ավանդաբար զբաղվել են ջուլիակությամբ (ոստայնագործություն), կապերտագործությամբ և գորգագործությամբ: Հիմնական հումքը բուրդն էր, սակայն պատմաազգագրական տարբեր մարզերում կիրառվում էին նաև բամբակը, կանեփն ու մետաքսը: Բրդից գործում էին շալի տեսակներ, գուլպաներ, շավարներ, չուխաներ և այլն: Ա. Դավրիժեցու «Պատմությունում» հանդիպում ենք հետևյալ հիշատակությանը. «Հարկի բանալ ետուն զսնդուկն և տեսին զի ոչինչ կայր ի նմա, բայց միայն մէկ ջուլիստ մաշեալ և չորացեալ տրեխ՝ որ է չարուխ, և հնոտի և պատառոտեալ հետկիք»⁵⁰: Մատթեոս Ջուղայեցին ուշագրավ տեղեկություն է հաղորդում ոստայնագործի աշխատանքի մասին և տալիս է նրա հաստոցի նկարագրությունը. «Ոստայնանկ, յորժամ ոստան հենէ, նախ չափէ զմի թելն և ապա հենէ. և ի գործելն՝ ոտիւքն և ձեռք վճարէ. և զինչ գործէ՝ ծրարէ ի վերայ սալմենն, ոչ զիտելով, թե զինչ գործեաց մինչև վճարէ. և ի վճարելն հատանէ, և ապա դարձեալ յետ տա ի սալմենն. և կրկին չափէ, և տեսանէ զգործն, թէ բարի է՝ փառաւորի ի տեսանելն զնա և թէ գարշ է՝ տրտմի. և ի ծախելն կրկին փառաւորի զգինս առնելով աշխատանաց իւրոց»⁵¹: Անասնապահության զարգացումը երկրում նպաստում էր գորգագործության տարածմանը: XVII դ. Ջուղայում գորգագործության՝ որպես արհեստի, զարգացած լինելու մասին է վկայում Ղևոնդ Ալիշանը. «կանայքն ճարտարք ասին ի հիւսած գորգոց և կարպետից»⁵²: Ջուղայում գորգագործության՝ որպես առաջատար արհեստի ճյուղի զարգացած լինելու մասին է վկայում Դավրիժեցու հետևյալ հիշատակությունը. երբ Շահ Աբասը այցելում է

⁵⁰ Խսիր կամ նման նիւթ՝ ոտքին փաթաթելու համար: Աճառեան 1926, 82: Ուղքի փաթաթան, բրդե հաստ և տաք հագնելիք, որ հագնում են ոտքին՝ կոճերից մինչև ծունկը (գետրի): Աղայան 1976, 861:

⁵¹ Իսաչիկյան 1956, 78:

⁵² Ալիշան 1893, 427-428:

Ջուղա, քաղաքի բնակիչները թագավորին վայել ընդունելության են արժանացնում. «Եւ զճանապարհս անցից արքայի զարդարեցին. և յեղէրէ գետոյն մինչև ցապարանս խօջայ Խաչիկին արկին փայանդազ առաթուր թագաւորին, պատուական և վայելուչ կումաշս⁵³, որոց վերայ էանց թագաւորն՝ և գնաց ի տուն խօջայ Խաչիկին»⁵⁴: Գորգագործությունը մեծ հմտություն էր պահանջում և շատ ծախսատար էր, ու պատահական չէր, որ որպէս ճոխության և հարստության նշան նվեր էր ուղարկվում արաբ խալիֆներին: Ըստ X դ. արաբ պատմիչ Մուհամմեդ Բարիախինի հիշատակության՝ ամիր Յուսուֆ Արուսաջը Հայաստանից խալիֆ Մուխտադիին ուղարկում է չորս հարյուր ձի, երեսուն հազար դինար և յոթ հայկական գորգ, որոնցից մեկն ուներ վաթսուն կանգուն երկարություն և վաթսուն կանգուն լայնություն (քսանութ արշին, որը վկայում է գորգերի անսովոր մեծության և, անշուշտ, նաև բացառիկ գեղեցկության մասին), որի վրա աշխատել են տասը տարի⁵⁵: Իրանահայ գաղթօջախում, ի թիվս զանազան արհեստագործությունների, հայ արհեստավորների սիրելի զբաղմունքներից է եղել գորգագործությունը, որը որդոց որդի փոխանցված արհեստի ճյուղերից մեկն է: Հայ ժողովուրդը, զրկված լինելով հայրենիքից, ենթարկվելով պարսկաթուրքական բարբարոս զավթիչների կեղեքումներին ու ճնշումներին, իր գոյությունը պահպանում էր արհեստագործական յուրահատուկ ձիրքի ու աշխատասիրության շնորհիվ, որի վառ օրինակն է բռնագաղթած հայերի կողմից Նոր Ջուղա քաղաքի կառուցումը⁵⁶:

Առաքել Դավրիժեցու «Պատմությունը» յուրահատուկ հանրագիտարան կարելի է համարել XVII դ. հայ իրականության մեջ ամենաբազմազան արհեստների, դրանց արտադրական մանրամասների վերհանման առումով: Պատմագիրը ոչ միայն լավ տեղյակ էր տարբեր արհեստների և դրանցով զբաղվողների մասնագիտական հմտություններին, այլև տիրապետում էր գործառական կարողություններին:

Եզրակացություններ

Դավրիժեցու վկայությունների մեծագույն մասը չի վերաբերում արհեստների քննությանը և դրանց առնչվող մանրամասներին: Այնուամենայնիվ, Դավրիժեցին այն պատմագիրներից է, որ իր երկում բազում ուշագրավ տվյալներ է բերում Հայաստանի և մեծավ մասամբ Իրան բռնագաղթած հայ ժողովրդի կյանքի և կենցաղի մասին: Այդ առումով Դավրիժեցու աշխատանքը հիմք է քննելու արհեստավորության և դրա հետ կապված բազմա-

⁵³ Կումաշ (արաբ. qumas), ընտիր կերպաս, ազնի գործուածք: Մալխասեանց 1944, 482:

⁵⁴ Դավրիժեցի 1986, 25:

⁵⁵ Թեմուրճյան 1952, 105:

⁵⁶ Առաքելյան 1958, 61:

թիվ խնդիրները: Եթե հայ պատմագիրների երկերի մեծ մասը տվյալներ է պարունակում հայոց արքաների, աշխարհիկ և հոգևոր վերնախավի ներկայացուցիչների գործունեության ամենատարբեր ոլորտների վերաբերյալ, ապա Դավրիժեցու «Պատմությունը» ընդգրկում է բազմաթիվ տվյալներ հայ աշխատավոր ժողովրդի կյանքի ու կենցաղի մասին: Այս սա անգնահատելի սկզբնաղբյուր է իրանահայերի և Հայաստանի առանձին հատվածների XVII դ. արհեստագործության, արտադրական կառույցների ստացված արդյունքների, դրանց կիրառական նշանակությունն ուսումնասիրելու համար:

Առաքել Դավրիժեցին XVII դ. առավել նշանավոր մատենագիրներից է (Զաքարիա Քանաքեռցի, Գրիգոր Դարանաղցի, Զաքարիա Ագուլեցի): Նրա «Պատմության» հաղորդած տեղեկությունները լուրջ հիմք են արևելահայոց պատմության տնտեսական զարգացման, խոջայական կապիտալի ուսումնասիրության առումով:

Օգտագործված գրականություն

- Ալիշան Ղ. 1893, Սիսական, Տեղագրութիւն Սիւնեաց Աշխարհի, Վենետիկ, ի Մխիթարայ Վանս, ի Ս. Ղազար, 643 էջ:
- Աղայան Է. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, 2, Երևան, «Հայաստան», 1615 էջ:
- Աճատեան Հ. 1926, Հայերէն արմատական բառարան, հ. 3, Երևան, ԵՊՀ հրատ., 2705 էջ:
- Աճառյան Հ. 1972, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 2763 էջ:
- Առաքելյան Բ. 1958, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., հ. 2, Երևան, ՀՍՍՌ ԳԱ ՀԱԻ հրատ., 329 էջ:
- Առաքելյան Վ. 1988, Առաքել Դավրիժեցի, Պատմություն (Թարգմանությունը, առաջաբանը, ծանոթագրությունը՝ Վարագ Առաքելյանի), Երևան, «Սովետական գրող», 589 էջ:
- Աստուածաշունչ 1999, Մատենան Հին և Նոր Կտակարանների, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայաստանի Աստուածաշնչյան ընկերության հրատ., 352 էջ:
- Աւետիքեան Գ., Սիրմէլեան Խ., Աւգերեան Մ. 1836-1837, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Վենետիկ, տպ. Սրբոյն Ղազարու, 2235 էջ:
- Արթինեան Յովհ. 1908, Նոր Զուղայեցի Հայերուն առետուրը ԺԷ. դարուն, «Անահիտ» հանդէս ամսէայ, ազգային, գրական, գեղարուեստական, Ժ տարի, թիւ 1-2-3-4, Բարիզ, տպ. «Անահիտ», 31-37 էջ:
- Դարիժեցի Ա. 1896, Պատմութիւն, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 711 էջ:
- Եգանյան Օ., Զեյթունյան Ա., Անթաքյան Փ. 1970, Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարան, Բ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1546 էջ:
- Թաղևոսյան Ա. 2007, Դարբինը հայոց ծիսակարգում (պատմաագագագրական հետազոտություն), Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 23, Երևան, «Գիտություն», 101-183 էջ:
- Թեմուրճյան Վ. 1952, Պատմական ակնարկ հայկական գորգագործության մասին, ՀՍՍՌ ԳԱ, Տեղեկագիր Հայկական Գիտությունների, N 11, 99-116 էջ:

- Խաչիկյան Լ. 1956, Մատթեոս Զուղայեցու կյանքն ու մատենագրությունը, ՀՍՍՌ Մինիստրների Սովետին Կից Պետական Զեռագրատուն (Մատենադարան), Բանբեր մատենադարանի, Երևան, N 3, 54-84 էջ:
- Կոստանեանց Կ. 1913, Վիմական տարեգիր, Յուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց, Ը դար, Ա. Պետերբուրգ, Գիտութեանց Ճեմարանի Կայսերականի հրատ., 294 էջ:
- Մալխասեանց Ս. 1944, Հայերէն բացատրական բառարան, ցուցակ 1, հ. 2, Երևան, ՀՍՍՌ հրատ., 2409 էջ:
- Մուշեղյան Ե. 1986, Թուրքերեն-հայերեն բառարան, աշխ.՝ Բ. Չուբասզյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 176 էջ:
- Ստեփանյան Ա. 2000, Նոր Զուղայի կենցաղային մշակույթը, Իրանահայ գաղթօջախի 17-18-րդ դդ. արհեստագործության պատմությունից, Երևան, «Զանգակ-97», 214 էջ:
- Տէր-Աստուածատրեանց Հ. 1906, Հայ վաճառականութիւնը Ռուսիայում, պատմական տեսութիւն վաւերաթղթերով ժԷ-ժԸ դար, Պարիս, Բազմալեզուան Տպարան Բասմաջեանի, 54 էջ:
- Баскаков А. 1977, Турецко-русский словарь, Москва, «Русский язык», 966 с.

РЕМЕСЛА В АРМЕНИИ ПО ДАННЫМ ИСТОРИКА АРАКЕЛА ДАВРИЖЕЦИ

Кристине Папикян

Резюме

Аракел Даврижеци был непосредственным свидетелем важных исторических событий, описанных им в труде «История», тем самым его труд является самым достоверным первоисточником. Он использовал также рукописные источники и устные сведения, почерпнутые из бесед с местными жителями. Путешествуя по Армении, Персии, Малой Азии, он детально записывал все увиденное и услышанное. В этом контексте большая часть записанных Аракелом Даврижеци материалов представляет собой ценные полевые этнографические материалы. В его труде сохранились примечательные данные о роде занятий и ремеслах армянского населения Ирана и Нахиджевана. Он дает обстоятельное описание ремесел, связанных с обработкой металла (кузнечное дело, изготовление оружия, золотых и серебряных изделий, обработка меди), камня, рассказывает о ковроткачестве, кожевенном производстве. Его труд имеет огромное познавательное значение в качестве важного этнографического источника по традиционным ремеслам и роду занятий армян в далеком XVII веке.

Ключевые слова – библиография, историография, иранские армяне, мастера-каменотесы, кузнечное дело, изготовление золотых изделий, ковроткачество.

CRAFTS IN ARMENIA ACCORDING TO THE HISTORIAN ARAKEL DAVRIZHETSI

Christine Papikyan

Abstract

The main purpose of this article is the analysis of information provided by Arakel Davrizhetsi (17th century) about the life, occupations, and crafts of Eastern Armenia, in particular that of Iranian Armenians. Arakel Davrizhetsi personally witnessed important historical events and described them in his "History", becoming the most reliable source. He also used handwritten sources and oral information from residents. While traveling to Armenia, Persia, Asia Minor, he described in detail everything he saw and heard about Armenians, including history, religion, culture, economy, life, crafts, and their occupations. In this context, most of the materials recorded by Arakel Davrizhetsi are valuable field of ethnographic materials. His work contains remarkable data on the occupations and crafts of the Armenian population of Iran and Nakhichevan. He gives detailed information about metalworking (blacksmithing, manufacture of weapons, gold and silver production, copper processing), the craft of stonemasonry and bricklaying, carpet weaving, leather production. The material is important as an ethnographic source on traditional crafts and occupations of Armenians of the 17th century.

Key words – bibliography, historiography, Iranian Armenians, stonemasonry, blacksmithing, gold production, carpet weaving.

TYPICAL FINDS OF SCYTHIAN CULTURE FROM THE PIJUT CEMETERY (LORI, ARMENIA)¹

Ani Saratikyan

Junior Researcher, Postgraduate student at the Institute of Archeology and Ethnography of the National Academy of Sciences of the Republic of Armenia

Charents Str. 15, Yerevan, RA

Email: anisaratikyaniae@gmail.com

ORCID: 0009-0007-7455-6350

The article has been delivered on 22.08.2024, reviewed on 23.08.2024, accepted for publication on 03.12.2024

DOI: 10.53548/0320-8117-2024.3-288

Abstract

The Scythian artefacts found during archaeological excavations provide interesting insights into the influence and spread of the Scythian culture. The Scythians were known for their art, especially metalwork. Their influence spread over several regions, including parts of modern Armenia. Scythian artefacts found in Armenia include metal objects such as weapons, jewellery and decorative items. The presence of Scythian artefacts in Armenia indicates cultural exchange between the Scythians and the local population. The Scythians were particularly influential in the VII-VI centuries BC, when they interacted with the northern parts of Armenia. Both in Armenia and in the region, archaeological studies show that the Scythian culture had a significant impact on local and neighbouring cultures.

Key words – Pijut, Lori, funerary rite, Scythians, Iron Age, arrowhead, pottery.

Introduction

The evidence of the presence of the Scythian culture at the archaeological sites of Armenia was documented in Karmir Blur, Lori Berd, Karashamb and other sites². The data concerning the northern part of Armenia has been supplemented by the Pijut cemetery excavations, which were conducted between 2014 and 2015³. The tombs found in this cemetery include notable examples of Scythian arrowheads, sharpening stones with hanging loops, decorated bronze pipes, and other objects of luxury. These items, as posited by prevailing scholarly opinion, are associated with the Kimmerian-Scythian culture⁴. The aforementioned ritual is particularly well-documented in the region through the excavation data of

¹ The article was prepared for publication with the financial support of the Institute of Archaeology and Ethnography of the National Academy of Sciences of the Republic of Armenia.

² Tumanyan 2017, 197.

³ The excavations were conducted with the joint financial support of the Institute of Archaeology and Ethnography NAS RA and Teghout CJSC. Head of the expedition: Suren Hobosyan.

⁴ Թումանյան 2017, 169, Tumanyan 2017, 196-201.

Urartian castles⁵. In contrast, the newly discovered examples, which are related to the funerary rite, were found in Iron Age tombs.

The construction of tombs

The Pijut cemetery is located about 1 km southwest of the Teghut village of Lori marz, on the left high slope of Dukanadzor, a tributary of the Shnogh river (Map 1, Fig. 1).

Tomb N 1 is located in the area adjacent to the Pijut road (Fig. 3.1, 3.2). During the construction of this road the mausoleum was damaged, only the western part was preserved. It was oriented east-west, the depth from the ground surface was 0.75 m. The width of the chamber in the western part was 0.55 m. The walls of the chamber were lined with andesite fragments. The western andesite cover of the chamber was also preserved. The skeleton was lying on its right side in a squatting position, only the upper part of the skeleton was preserved. On the back of the skull there was an iron knife with an annular handle and a whetstone, small bronze pliers, 6 bronze bracelets, a bronze hairpin and 7 ceramic bowls (Fig. 4, 5).

Tomb N 7 was located 3.35 m west of tomb No. 6 in an east-west direction. The external dimensions are 1.47x1.20 m. During the road construction works the outer part of the tomb was completely destroyed. The chamber had two slabs, the western one was made of sandstone 0.70x0.51 m, and the central one – of granite 0.80x0.55 m. The chamber, 1.20x0.97x0.82 m, oriented east-west, was lined with standing stones. The skeleton was placed on its right side in a squatting position with the skull facing west. A wide bronze belt runs the length of the chamber under the north wall (Fig. 3.3, 3.4). Iron knives were placed between the skeleton and the single-handed jar (Fig. 2.10, Fig. 6.1, 6.8), in the eastern part of the chamber, right next to the bronze belt, a small sharpening stone with hanging loops, Scythian-type 8 bronze arrowheads were found (Figs. 2.1, 2.2-2.9). Among the finds from the chamber there were 5 bracelets (Fig. 6.2, 6.5, 6.6, 6.7, 6.9), two of which were decayed, and three were presented by hollow bronze pipes.

Tomb N 14. Located 0.85 m south of tomb 7, oriented east-west. Outer dimensions are 1.57x1.50 m. The outer part of the tomb was severely damaged, only the western andesite cover (1.13x0.90 m) was preserved. The dimensions of the stone chamber are (1.50x0.80x0.67 m), it is oriented east-west, it is lined with stones placed in an upright position. The skeleton was laid on its right side in a squatting position with the skull facing west. The skull was in the center of the

⁵ Çilingiroğlu 2005, Makhortykh 2023, 436.

chamber, under the north wall. The south-western part of the chamber was completely empty. A Scythian-type bronze arrow was found in there (Fig. 2.10).

Metal artefacts

Among the metal artifacts, Scythian arrowheads stand out as particularly fascinating. They are among the most prevalent finds in the study of Iron age culture. These arrowheads are frequently associated with Urartian sites⁶. Notably, the large number of arrowheads discovered at the Ayanis fortress highlights the significant military presence and influence of the Scythians in the region⁷. Scythian arrowheads have also been found in the fortress dwellings of Armenia, further emphasizing the influence of the Scythians in the region. In contrast to this context, the examples presented here are part of a funerary ritual. In total, we have 9 of such arrowheads from the tombs of Pijout, which are among the classic examples known to us.

The bronze belt found in tomb 7 is also a remarkable find, as it is also associated with the Scythian funerary rite⁸. Academician B. Piotrowski paid special attention to the bronze belts of Transcaucasia, in particular to their production techniques and uses. He notes that the bronze belts, made of thin sheet metal, were intended to be attached to the leather surface of clothing and necessarily belonged to soldiers⁹. At the beginning of the 1st millennium, the new manifestations of the iconography of the soldier in sculpture, where the belt is also a component of the warrior's armor, prove that the belt was part of the weaponry¹⁰. In this respect, the anthropomorphic idols deserve special attention¹¹. It is a well-documented fact that an anthropomorphic idol was discovered within the tomb at Lori Berd¹². In the case of other examples, it is hypothesized that they were also part of the funerary rite¹³. The idol of Voskevan, rich in iconographic details, is particularly interesting¹⁴. It has a pendant around its neck, arms on either side, an object in one palm, probably a dagger, and a bow-like figure in another.

The lower part of the idol's body is decorated. Four congruent triangles enclosed in a rectangle delimit the lower part of the statue, which seems to

⁶ It should be noted that these arrowheads are also common in the territory of Eastern Georgia, Пицхелаури 1973.

⁷ Çilingiroğlu 2005, 63-66, For more parallels, see Пьянков и др. 2019, 206-228.

⁸ Թումանյան 201, 172:

⁹ Пиотровский 1962, 73.

¹⁰ Есаян 1980, табл. 56, рис. 2, 7, Есаян 1976, табл. 148, рис. 2, 3.

¹¹ "These sculptures are markers of the former presence of Scythian tribes in the given area", Tumanyan 2017, 198. For details on these sculptures, see Ольховский, Евдокимов 1994, Елагина 1959, 187-196.

¹² Devedjian 2009, 146-153.

¹³ Թումանյան 2017, 163:

¹⁴ Կարապետյան 2004, 65:

represent a belt that completes the image of a soldier. Why do we emphasize this circumstance? Because we think that similar sculptural manifestations related to the funerary rite directly expressed the earthly image of the deceased, especially considering the fact that the bronze belts found in tombs, both in a number of ancient sites in Armenia and in the region, were found in male burials¹⁵.

Unique example of a jug

Anthropomorphism is also evident in a number of Iron Age ceramic pots. This phenomenon represents itself as a new trend in aesthetic tendencies, as exemplified by the famous ceramic pot from Talin, which features a human head and hands carved on it. These elements appear to be "protecting" the pot¹⁶.

Furthermore, the use of human body parts in decoration of pottery, such as hands or legs, was a prevalent practice during this period¹⁷.

In this context, our attention particularly was drawn to the ceramic single-handed jar found at Pijut, handle of which was decorated in detail (Fig. 4.2). This vessel has perhaps only one parallel, found in the area of the Shnogh river basin¹⁸. Both jars come from a funerary context. Therefore, if in some cases the presence of anthropomorphic statues in the burial complexes of the region is considered as an influence of the Scythian culture, it can be hypothesized that the appearance of anthropomorphic elements on pottery is probably one of its manifestations, when the stone culture gradually begins to give way to small sculptural elements, which, parallel to the change of form, continue to carry the symbolism of sculpture, but the form of expression changes. It is noteworthy that the pottery dating to the VI-V centuries BC makes up a unique group, where alongside rough, asymmetrical, and simple kitchenware there are delicately crafted ceramic pots, which indicates their special functions. Depiction of the hands on the pots is certainly not only an artistic manifestation, but also a special attitude towards the contents of the vessel¹⁹.

Whetstones

Two of the tombs contain whetstones (Fig. 2.1, 5.1), which were found with accompanying military equipment, including daggers, arrows, and a bronze belt (Fig. 3.3, 3.4)²⁰. These are well crafted, black colored tools with a smooth surface.

¹⁵ Narimanishvili, Vadachkoria, Tamazashvili, Juszczak et al. 2017, 129.


¹⁶ Ավետիսյան, Ավետիսյան 2006, 204. աղ. 8. նկ. 9, Հորոսյան և այլք 2021, 373, նկ. 173-1:

¹⁷ Асланов и др. 1959, таб. XXII, рис. 8, Հորոսյան և այլք 2021, 338-340:

¹⁸ Հորոսյան և այլք 2021, 373, նկ. 173-2:

¹⁹ Despite the lack of proper research, we suppose that they were wine jugs (and possibly water jugs) that had no ordinary use, but were used for special ceremonies.

²⁰ For parallels, see Пьянков, Рябкова, Зеленский 2019, 218.



Map 1. Archaeological sites within the Teghut mine area (by Rafik Gabrielyan)




Fig. 1. Pijut Cemetery (Measurements by Lilit Ter-Minasyan)



Fig. 2. Objects of material culture from Tomb 7, 14




Fig. 3. The appearance and unfolded state of Tombs 1, 7 and 14




Fig. 4. Tomb N 1, A group of various forms of ceramic (Drawings by Ani Sahakyan)



Fig. 5. Tomb N 1, Metallic and stone artefacts (Photos by Vram Hakobyan)




Fig. 6. Tomb N 7, Ceramic and metallic artefacts (Drawings by Ani Sahakyan)

Relation of this tool to the Scythian culture can be seen in its detailed depictions on Scythian sculptures, such as we see it, for example, on the famous statue from Ternovsk, where one can see a whetstone hanging from a belt of the statue²¹. The appearance of special whetstones is observed in the cultures of Maykop and Usatovo (Period I)²². We generally agree with the assessment made by Prof. Blagoje Govedarica that the inclusion of whetstones in the equipment of warriors of the Bronze and Iron Ages of Eurasia can be understood as one of their fundamental culture-historical characteristics. This tradition emerged in the area north of the Caucasus in the first half of the 4th millennium BC, which was the period of appearance of the first daggers made of arsenical bronze and the whetstones were used for sharpening daggers. It is in this context that the custom arose of placing such tools in graves together with weapons. The Bronze Age dagger-whetstone combination already points to a warrior. It personifies the vigilance of the deceased, the power of weapons, as well as his belonging to the warrior social class. In Iron Age graves, whetstones are frequently interred alongside swords, thereby perpetuating the tradition of combining these symbols of warfare. There is no reason to doubt that the combination of whetstone and dagger, as well as whetstone and sword, marked the place of the deceased in the social hierarchy

²¹ Елагина 1959, 189, рис. 3, 4.

²² Govedarica 2022, 92.

and their status as a warrior in real life. The ritual placement of these items with the deceased may have been of even greater importance, as it was intended to secure the same advantages in the afterlife²³.

Discussion

Among the ancient cultural realities, unique artistic approaches deserve special attention. They are expressed both in the design of objects of practical significance and in ritual or cult objects. As already mentioned, a number of changes took place in the Armenian Highlands during this period, among which the formation of separate tribal confederations, the militarization of the community and, of course, the advancement of the positions of the Urartian state on the one hand and the periodic movement of the Scythian tribes on the other are of particular importance. The material culture of the period gives the best idea of individual tribal customs. This is interesting, especially when considering the material culture of tribal communities in an intermediate position. Despite the fact that they have their own cultural peculiarities, the archaeological data prove that this culture cannot be completely separated from the contemporary sites of the region. The study of arrowheads, whetstones, other armor components provide valuable insights into Scythian military tactics, technology and conflicts with neighboring cultures.

The evidence suggests that their influence increased in the territory of north-eastern Armenia and in the southern Caucasus more generally during the period spanning the 7th and 6th centuries BC. Moreover, the advent of new forms of pottery and the emergence of new styles of anthropomorphic statuary represent significant interest in the field of archaeological studies. Nevertheless, the north-eastern region of Armenia is a zone of interesting influences, where one can see both the prevailing trends of the time – metalworking, production of luxury objects, etc. – and as local, distinctive features.

Bibliography

- Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ. 2006, Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. XI-VI դարերում, Երևան, ԵՊՀ հրատ., 396 էջ:
- Թումանյան Գ. 2017, Կիմերա-սկյութական մշակութային ընդհանրության դրսևորումները Հայկական լեռնաշխարհում (ըստ հնագիտական տվյալների), Պատմաբանասիրական հանդես, Երևան, N 3, էջ 162-179:
- Կարապետյան Ս. 2004, Կովկասյան թանգարանի հայկական հավաքածուն, Երևան, «Գիտություն», 96 էջ:
- Հոբոսյան Ս., Գասպարյան Բ., Հարությունյան Հ., Սարատիկյան Ա., Ամիրխանյան Ա. 2021, Խաղողի և գինու հայոց մշակույթը, Երևան, ՀԱԻ հրատ., 437 էջ:

²³ Govedarica 2022, 108.

- Асланов Г., Ваидов Р., Ионе Г., Древний Мингечаур: эпоха энеолита и бронзы, Баку, изд. АН Азерб. ССР, 189+68 с.
- Есаян С. 1976, Древняя культура племён северо-восточной Армении (III-I тыс. до н.э.) (отв. ред. Пиотровский Б.Б.), Ереван, изд. Академии наук Армянской ССР, 269 с.
- Есаян С.А. 1980, Скульптура Древней Армении, Ереван, изд. Академии наук Армянской ССР, 76 с.
- Елагина Н. 1959, Скифские антропоморфные стелы Николаевского музея, Советская археология, N 2, Москва, изд. Академии наук СССР, с. 187-196.
- Ольховский В., Евдокимов Г. 1994, Скифские изваяния VII-III вв. до н.э., Москва, ИА РАН, 188 с.
- Пьянков А., Рябкова Т., Зеленский Ю. 2019, Комплекс раннескифского времени кургана № 11 могильника Лебеди V в Прикубанье, Археологические вести, N 25, Ин-т истории материальной культуры РАН, Санкт-Петербург, с. 206-228.
- Пиотровский Б.Б. 1962, Искусство Урарту. VIII-VI вв. до н.э., Ленинград, изд. Гос. Эрмитажа, 164 с.
- Пицхелаури К.Н. 1973, Основные проблемы истории племен Восточной Грузии в XV-VII вв. до н.э., Тбилиси, «Мецниереба», 222 +68 таб.
- Çilingiroğlu A. 2005, Bronze Arrowheads of Ayanis: Indicate Ethnic Identity? In: Ü. Yalçın (ed.), Anatolian Metal III, Bochum, p. 63-66.
- Devedjian S. 2009, Stone Stelae in the Bural Ground of Lori Berd, Aramazd, Vol. 4, Issue 2, Association for near eastern and Caucasian studies (Editor-in-chief Aram Kosyan), Yerevan, p. 146-153.
- Govedarica B. 2022, Decorated Whetstones in the Bronze and the Iron Ages of Eurasia, Eurasia Antiqua, Vol. 24, p. 91-113.
- Makhortyk S. 2023, The Scythians and Urartu, Proceedings of the 12th International Congress on the Archaeology of the Ancient Near East, Volume 1, Edited by Nicolò Marchetti, Michael Campeggi, Francesca Cavaliere, Claudia D'Orazio, Gabriele Giacosa, Eleonora Marian, Harrassowitz Verlag Wiesbaden, p. 435-447.
- Narimanishvili D., Vadachkoria R., Tamazashvili K., Juszczak K., Tomczyk W. 2017, Archaeological excavations at Beshtasheni Late Bronze Age-Early Iron Age Cemetery (2015-2016 results), Aramazd, Vol. 11, Issues 1-2 (Editor in chief A. Kosyan), Yerevan, Oxford, p. 120-144.
- Tumanyan G. 2017, Cimmerian and Scythian Funerary Rituals in the South Caucasus, Near Eastern Archaeology, Vol. 80, N 3, p. 196-201.

**ՍԿՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻՆ ԲՆՈՐՈՇ ԳՏԱԾՈՆԵՐ ՓԻՋՈՒՏ
ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԻՑ (ԼՈՐԻ, ՀԱՅԱՍՏԱՆ)**

Անի Սարատիկյան

Ամփոփում

Հնագիտական պեղումներով հայտնաբերված սկյութական արտեֆակտները վկայում են սկյութական մշակույթի տարածման և ազդեցության մասին: Սկյութները հայտնի էին իրենց արվեստով, հատկապես մետաղագործությամբ: Հայաստանում հայտնաբերված սկյութական արտեֆակտները ներառում են մետաղական առարկաներ, ինչպիսիք են զենքերը, զարդերը և դեկորատիվ իրերը: Դրանց առկայությունը Հայաստանում վկայում է

սկյութների և տեղի ցեղերի մշակութային փոխառնչության մասին: Վերջին տվյալների համաձայն, Հայաստանի հյուսիսային հատվածներում սկյութական մշակույթի ազդեցության հետքեր նույնպես կան: Սկյութական մշակույթի ազդեցությունը տեղի ցեղերի վրա նկատելի է հատկապես մ.թ.ա. VII-VI դարերում, երբ սկյութները սերտ կապեր են ունեցել Հայաստանի հյուսիսային շրջանների բնակիչների հետ:

Բանալի բառեր՝ Փիջուտ, Լորի, թաղման ծես, սկյութներ, երկաթի դար, նետասլաք, խեցեղեն:

ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ СКИФСКОЙ КУЛЬТУРЫ НАХОДКИ ИЗ МОГИЛЬНИКА ПИДЖУТ (ЛОРИ, АРМЕНИЯ)

Ани Саратикян

Резюме

Найденные при археологических раскопках скифские артефакты свидетельствуют о влиянии и распространении скифской культуры. Скифы славились искусством обработки металлов. Скифские артефакты, найденные в Армении, включают металлические предметы, такие как оружие, украшения и декоративные изделия. Наличие скифских артефактов в Армении указывает на культурный обмен между скифами и местным населением. Согласно последним данным, следы влияния скифской культуры сохранились в северных регионах Армении. Ощутимым было влияние скифской культуры на армянскую в VII-VI веках до н.э., когда скифы имели тесные контакты с населением северных районов Армении.

Ключевые слова – Пиджут, Лори, погребальный ритуал, скифы, железный век, наконечник стрелы, керамика.

L'UTILISATION DES BRIQUES CRUES DANS LES MONUMENTS DE LA PÉRIODE OURARTIENNE D'ARMÉNIE

Aminia Kanetssian

Candidat en sciences historiques Institut d'archéologie et d'ethnographie de l'Académie nationale des sciences de la République d'Arménie, chercheur rue Charents 15,
Professeur agrégé de l'Université d'État d'ingénierie d'Arménie, Rue Teryan, 105
Email: amina-kanetsyan@mail.ru
ORCID: 0009-0009-2759-9109

The article has been delivered on 22.08.2024, reviewed on 05.10.2024, accepted for publication on 03.12.2024
DOI: 10.53548/0320-8117-2024.3-299

Résumé

L'article présente les bâtiments (résidentiels, fortifiés, culturels) érigés à partir de briques crues, découverts lors de fouilles de monuments de la période ourartienne, avec la participation de l'auteur. On y discute des bâtiments ourartiens en briques crues d'Arguich-tikhinili-Armavir, d'Artachat et de Guétap. L'utilisation de la structure de la pose des briques crues, le principe de leur construction, ainsi que les particularités de leur fabrication et de leur utilisation sont révélés. L'utilisation des briques crues sur le territoire de l'Arménie, à partir de la période pré-ourartienne, s'est successivement (traditionnellement) poursuivie jusqu'à la fin du Moyen Âge, sans changements significatifs dans la technique du bâtiment (construction).

Mots clés – brique crue, construction en brique crue, fortifications, palais, fausses fenêtres.

Introduction

Au IX^e siècle av. J.-C., un nouvel État a fait son apparition sur l'arène historique. Formé au sud-est du Plateau Arménien, il a rapidement réuni sous son pouvoir tout le territoire du Plateau. Les souverains ourartiens fondaient sur le territoire conquis des villes, des forteresses et des places fortes militaires de diverses importances, à l'intérieur desquelles des édifices de destinations multiples ont été construits (fortifications, temples, palais, habitations, bâtiments auxiliaires, etc.). Pour l'érection de ces édifices, les artisans ourartiens utilisaient divers matériaux de construction : pierre, bois (diverses espèces), mais plus généralement, l'argile, le mortier d'argile et les briques crues¹. Bien que certains chercheurs considèrent que l'usage des briques crues ait été le résultat de l'influence des régions du sud (Assyrie, Mésopotamie), mais les briques crues ont été utilisées dans la construction des loge-

¹ Բադալյան և այլք 2017, 205-246, Բադալյան և այլք 2022, 345-360, Badalyan et al. 2016, 163-177:

ments sur le Plateau Arménien dès le IV^e millénaire av. J.-C. (Téghout, Aratachen, Arévik, Djrahovit, Dvin, Métzamor, Garni, etc.)².

Les briques crues ont été utilisées au nombre d'autres matériaux de construction dans l'art du bâtiment ourartien dans les édifices aussi bien cultuels que profanes (fortifications, palais, habitations). Examinons l'exemple de quelques édifices qui ont été découverts grâce à nos fouilles.

L'utilisation de la brique crue dans la construction des villes et forteresses ourartiennes

Les remparts de la ville d'Arguichtihinili-Armavir, tant de la citadelle ouest que celle de l'est, ont été construits avec des assises de briques crues, partiellement conservées, sur base de blocs de basalte³. Des remparts en briques crues ont été également découverts dans les villes ourartiennes d'Eréboundi et de Teichébani, dans les forteresses de Guétab (district de Vaïots Dzor) et d'Aragatz, ainsi que dans les monuments se trouvant en Arménie Occidentale (Bastam-Roussahinili, Aïanis, Altyn-tépé, Tchaouch-tépé, etc.). Les remparts découverts au cours des fouilles de la citadelle de la capitale Artachat (II^e siècle av. J.-C.) sont d'un grand intérêt⁴ (fig. 1). Comme l'ont montré les études, ils ont été d'abord construits par les Ourartiens (VIII^e-VII^e siècles av. J.-C.). Ensuite, après certaines modifications, ils ont été utilisés dans l'Antiquité. Le flanc nord des remparts a été fouillé sur une distance de 400 mètres de longueur (fig. 2,3) et une hauteur de 6 à 7 mètres. La largeur de la muraille est de 2,7 mètres. Les murailles susmentionnées avaient des contreforts d'une largeur presque égale de 5,5 à 6,5 mètres. La surface supérieure de la base est couverte d'une couche de mortier d'argile d'une épaisseur de 5 cm environ. Elle est surmontée d'un mur en assises régulières de briques crues (51 x 51 x 14 cm ; 51 x 35 x 14 cm). Les coins de la partie en assise de briques du contrefort sont travaillés, en plan, à trois degrés dont chacun est de 30 cm (fig. 2). Les pans de murs entre les contreforts (longueur 1,7 m, profondeur 90 cm) présentent dans leur partie centrale des niches formés de manière analogue. Outre l'accroissement de la solidité de l'édifice, tout cela crée un jeu de clair-obscur qui contribue à animer la façade monotone du rempart. Les façades travaillées des contreforts et des niches sont caractéristiques de l'architecture de la Mésopotamie. C'est de la même manière que sont travaillées les façades de l'édifice à trois étages et de la tour, représentés sur les plaques de bronze découvertes à Toprak-kalé et à Karmir Blour, la « Porte de

² Խանգաղյան 1967, Թորոսյան 1976, Кушнарева 1977:

³ Տիրացյան 1972, 37, Տիրացյան 1978, 49, Ղաֆադարյան 1984, 55:

⁴ Խաչատրյան 1987, 158-170, Kanetsyan 2001, 147-148, Оганесян 1961, 82-84:

Mher » à Van, les baies des portes du palais d'Erébouni et du temple « Soussi », etc.⁵. Le travail des murs du trésor de Persépolis⁶, où l'on trouve également des parallèles de niches et de contreforts, est directement en relation avec le fragment découvert de la muraille ourartienne d'Artachat. La grande solidité des fortifications ourartiennes est également attestée par le fait que 400 ans après la chute de l'Ourartou, dans la ville antique d'Artachat, compte tenu du degré de conservation de ce fragment de muraille, on a décidé de l'intégrer dans le système des fortifications d'Artachat. Un usage analogue de murailles ourartiennes est également observé dans la forteresse de Kalé-Guavour, située au sud-est du Lac d'Ourmia⁷, où le rempart découvert au nord-ouest d'une forteresse ourartienne des VI^e-V^e siècles av. J.-C. a été conservé sans modification.

La hauteur des murs de l'édifice palatin ourartien, découvert à l'intérieur de la citadelle d'Erébouni, atteint 3 mètres. Cet édifice est également construit en murs de briques crues sur base de pierre ; les briques utilisées sont des variétés carrées et rectangulaires présentant les dimensions mentionnées ci-dessus (fig. 11).

Les fouilles ont découvert au sommet de la colline à l'est de la ville d'Arguichtihinili-Armavir le temple nommé « Soussi » du dieu suprême (fig. 4). À l'ouest du temple, un grand complexe a été découvert (fig. 5) qui est à notre avis un édifice palatin construit pour l'élite des serviteurs du culte. Par la suite, cet édifice a été également utilisé à la haute époque arménienne comme palais pour les Ervandides (Orontides). Cet édifice n'est pas encore complètement fouillé, mais l'on peut déjà se faire une idée de sa composition architecturale. Sur le flanc nord, on distingue un groupe d'édifices de diverses destinations, isolés les uns des autres. Ce sont des groupes de pièces, composés de quatre rangs d'enfilades parallèles. Jusqu'à présent, seule la partie des quatre enfilades⁸ a été fouillée. Les entrées des pièces des enfilades sont reliées entre elles par des couloirs perpendiculaires ou, dans certains cas, un vestibule. Dans la partie centrale sud, une grande salle est située parallèlement aux pièces des enfilades. Cet édifice se présente comme un bâtiment à murs bien conservés de 2,80 à 3,55 mètres, élevés en briques crues sur un stylobate de 80 à 90 cm de haut (fig. 6, 7, 8). Les murs de la salle ont été plâtrés et couverts de fresques, ce dont témoignent les débris épars sous les murs.

⁵ Оганесян 1961, 82-84.

⁶ Schmid 1953, fig. 65-68, 74.

⁷ Kleiss, Kroll 1978, 27-59, Abb 9, 12.

⁸ Տիրացյան, Կարապետյան 1991, 133-139, Kanetsian 1998, 13-16, fig. 5:



Fig. 1. Les fortifications d'Artachat




Fig. 2. Le plan de la forteresse de la ville d'Artachat



Fig. 3. Arguichtihinili. Le plan de la forteresse d'Armavir




Fig. 4. Le plan de la forteresse d'Arguichtihinili, Armavir



Fig. 5. Le complexe occidental d'Arguichtihinili, Armavir



Fig. 6. Les murs en briques crues des pièces du complexe d'Arguichtihinili, Armavir



Fig. 7. Les murs en briques crues des pièces du complexe d'Arguichtihinili, Armavir



Fig. 8. Les murs conservés en briques crues des pièces du complexe d'Arguichtihinili, Armavir



Fig. 9. Les murs en briques crues de Guétar




Fig. 10. La structure d'un mur en briques crues



Fig. 11. Des briques crues carrées*

Les briques des murs conservés ont les dimensions suivantes : 0,50 x 0,50 x 0,15 cm et 0,50 x 0,32 x 0,15 cm. Sur la rive droite de la rivière Eghéguis, sur

* Les photos et dessins utilisés dans l'article sont d'Aminia Kanetsyan, seule la Fig. 10. La structure d'un mur en briques crues. dessin tiré de Оганесян 1961, 82-84 du livre.

une colline haute de 50 mètres, les fouilles ont découvert la forteresse de Guétap⁹. Au cours des fouilles, un fragment de rempart a été découvert avec une forteresse angulaire. Sur la pente nord de la colline, des édifices du VIII^e siècle av. J.-C. ont été révélés, construits selon les canons de l'art ourartien du bâtiment : murs en briques, élevés sur la base de gros blocs de pierre (fig. 9).

Les exemples d'Artachat, d'Erébouni, de Guétap et d'Arguichtihinili-Armavir montrent que les monuments construits à la période ourartienne ont continué d'être utilisés aux périodes achéménide et hellénistique.

Outre le territoire de la République d'Arménie, des monuments ourartiens ont été découverts en Arménie Occidentale (actuelle Turquie). Les fouilles ont révélé les sites de Toprak-kalé, Altyn-tépé, Tchaouch-tépé, Bastam, Az-nour-tépé, Kef Kalessi, Aghildjévez, la forteresse d'Aïanis, etc.

Les éléments constitutifs du mur ourartien et l'art de sa construction

Le mur ourartien est composé des parties suivantes : fondation, base du mur et mur (fig. 10). La base du mur ourartien est placée sur le roc. Dans ce but, la terre qui couvre la colline est creusée jusqu'au roc en forme de ruban, d'après le périmètre du mur, puis le roc de sous le mur est aplani et réduit à un plan horizontal. Au cas où le terrain est oblique, le traitement du roc peut présenter des degrés. La partie de la base du mur est construite en blocs de basalte ou de tuf bien taillés (parfois taillés en rustique), de volume moyen, en assises sèches. Dans l'architecture des habitations, on observe parfois des bases en assises de blocs de taille grossière, liés de mortier d'argile. La profondeur des bases ne dépasse pas 1,5 à 2,0 mètres. Les parties creusées des bases de part et d'autre des assises sont remplies d'éclats de pierre et de terre. Dans le but de consolider les bases et d'éviter leur détérioration, souvent les bases des murailles sont enfoncées dans le roc sur tout le périmètre des remparts, dans des tranchées creusées à même le roc, puis refermées avec les pierres retirées des tranchées. Nous avons un exemple de ce genre dans les murailles de la forteresse d'Ochakan, ainsi que dans la structure du stylobate du temple « Soussi » d'Arguichtihinili. La base du mur constitue la suite du fondement avec la même largeur et la même structure sur une hauteur subdivisée de 0,5 à 1,5 mètres (fig. 10). La surface supérieure de la base du mur est recouverte de mortier d'argile de 3 à 5 cm d'épaisseur, sur lequel est élevé le mur en briques crues. À Guétap, le mortier en argile rougeâtre qui lie les murs est préparé d'un mélange d'argile et de poudre de scories rougeâtres, servant de matériau de liage. L'épaisseur de cette couche était de 0,12 à 0,5 cm.

⁹ Melkonyan, Karapetyan, Yengibaryan 2010, 90-98.

L'épaisseur des murs ourartiens est d'habitude de 2,12 à 3,70 mètres. Les dimensions des briques crues sont également diverses ; toutefois, elles sont proportionnelles aux dimensions linéaires généralement adoptées dans l'art du bâtiment ourartien. Les dimensions des briques crues découvertes sont les suivantes : 51,8 x 35,0 x 14 cm ; 51,8 x 51,8 x 14 cm (Teichébani) ; 48,5 x 48,5 x 15,5 cm ; 51,0 x 51,0 x 14,0 cm ; 51,0 x 30,0 x 14,0 cm (Arguichtihinili-Armavir) ; 45,0 x 45,0 x 14 cm ; 48,5 x 48,5 x 15,0 cm ; 51,0 x 51,0 x 14,0 cm (Artachat) ; 5.1x 49,3 x 14 cm ; 51.1 x 51.1 x 15cm (Guétap). Les briques crues (rectangulaires ou carrées) étaient placées dans un ordre défini d'avance et consolidées avec du mortier d'argile (fig. 10), ce qui assurait le lien transversal des joints des briques. Déplaçant les assises successives d'un même type sur la longueur du mur, le lien longitudinal des assises était également assuré¹⁰. Comme le montrent les fouilles, les dimensions des briques sont différentes, même dans un même édifice. Les dimensions des briques sont basées sur la coudée ourartienne, qui servait à mesurer les murs (des murs de 4, 5 ou 7 coudées).

Chaque assise du mur, une fois rangée, était couverte d'une couche de 2 à 3 cm de mortier d'argile. Les chercheurs ont découvert que la dimension de la brique crue correspond à une coudée ourartienne, égale à 51,8 cm actuels. Cette coudée correspond à la coudée Nipourienne. Une autre coudée était également usitée en Ourartou, égale à 52,5 cm. Le tiers de cette coudée (17,5 cm) était aussi considéré comme une mesure de longueur. Les recherches ont montré que les proportions ourartiennes sont basées sur la règle de la juste proportion (5 : 8).

À l'époque ourartienne, les briques crues étaient utilisées non seulement pour l'érection des murs, mais aussi pour la couverture des toits plats des édifices et les sols. Dans l'art du bâtiment ourartien, les sols étaient aménagés de la manière suivante : la base en roc était aplanie à l'aide d'une masse d'argile. Ensuite, des briques crues étaient ragées sur cette surface qui était couverte de deux couches de plâtre : la première de 3,7 cm, la deuxième de 2,7 cm. C'est ainsi que sont construits le sol de la cour d'Arguichtihinili-Armavir, celui du sanctuaire nord, ainsi que les sols des habitations de Teichébani et d'Erébouni. L'argile était également utilisée pour les réservoirs d'eau, par exemple à Arguichtihinili¹¹, où les joints des dalles en pierre du sol et des murs sont soigneusement couverts d'un mortier étanche spécial en argile pur et tamisé. Les joints des pierres de la base des remparts étaient recouverts d'un mortier du même genre (forteresse d'Ochakan). Les murs des édifices (la base du mur et les assises en briques crues) étaient également recouverts de mortier d'argile. On usait généralement pour les bâtiments de l'argile rouge ou de la marne.

¹⁰ Оганесян 1955, 81-88.

¹¹ Ղաֆադարյան 1984, 89-92, գծ. 29:

Pour la préparation des briques crues, on mélangeait à l'argile à menus grains du chaume ou des poils de chameau, ce qui donnait de la solidité à la brique et la capacité de sécher rapidement. Les briques étaient fabriquées dans des formes spéciales. Après avoir donné à la brique sa forme générale, on la faisait sécher à l'air frais.

Vitruve décrit en détail la fabrication de la brique en argile à l'époque antique¹².

Conclusion

La fabrication de la brique crue en territoire arménien est restée la même depuis la période pré-ourartienne, passant à l'ourartienne et continuant héréditairement au Moyen Âge. Le mur en brique ourartien avait en particulier l'aspect de sa surface extérieure. Il avait des contreforts et des niches. De fausses fenêtres en pierre (basalte) soigneusement taillée étaient également introduites dans les murs en briques ourartiens ; leurs fragments ont été découverts à Arguichtihinili-Armavir¹³. On peut deviner l'existence de telles fenêtres dans l'architecture ourartienne d'après les hauts-reliefs représentant les forteresses (Kef kalessi)¹⁴. À l'époque, des fenêtres aveugles ont été découvertes dans les ruines du temple du dieu Khaldi à Toprak-kalé.

Bibliographie

- Բադալյան Մ., Միքայելյան Մ., Կյուրեղյան Ա., Իսկրա Մ., Հովսեփյան Ռ., Նահապետյան Ս., Եղիազարյան Ա. 2017, Օձաբերդի 2014-2016 թթ. Պեղումների նախնական արդյունքները, Մեծամորյան ընթերցումներ I, Երևան, Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն ՊՈԱԿ, էջ 205-246:
- Բադալյան Մ., Միքայելյան Ա., Եղիազարյան Ա., Կյուրեղյան Հ., Հովսեփյան Ռ., Սիմոնյան Հ., Նահապետյան Ս. 2022, Օձաբերդի 2017-2019 թթ. պեղումների նախնական արդյունքները, Ծովային Հայաստան. Ուդուրի-Էթիունի երկրի հնագիտական ժառանգությունը, Երևան, ՀԱԻ հրատ., էջ 345-360:
- Թորոսյան Ռ. 1976, Թեղուտի վաղ երկրագործական բնակավայրը (մ.թ.ա. IV հազարամյակ), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 144 էջ:
- Խանգադյան Է. 1967, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 117 էջ:
- Խաչատրյան Ժ. 1987, Հայաստանի անտիկ շրջանի պաշտպանական կառույցները, Պատմա-բանասիրական հանդես, N 4, էջ 158-170:
- Ղաֆադարյան Կ. 1984, Արգիշտիխինիլի քաղաքի ճարտարապետությունը, Երևան, 161 էջ:
- Տիրացյան Գ. 1972, Արմավիրի պեղումները, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, էջ 36-42:
- Տիրացյան Գ. 1978, Ուրարտու և Հայաստան, Պատմա-բանասիրական հանդես, N 1, էջ 43-60:

¹² Витрувий 1936, 66-69, 77-79.

¹³ Тирациян 1978, 108-109.

¹⁴ Burney, Lawson 1958, pl. XXXIV a, fig. 3.

- Տիրացյան Գ., Կարապետյան Ի. 1991, Արմավիրի 1987-1988 թթ. պեղումները, Լրաբեր հասարակական գիտությունների, N 6, էջ 133-139:
- Витрувий 1936, Десять книг об архитектуре, книга 1, глава 3, Издательство Всесоюзной Академии архитектуры, Москва, МСМXXXVI, с. 63-79.
- Կушнарева К. 1977, Древнейшие памятники Двина, изд. АН Арм. ССР, Ереван, 116 с.
- Оганесян К. 1961, Арин-берд, Архитектура Эребуни, Ереван, изд. АН АрмССР, 113 с.
- Оганесян К. 1955, Кармир-Блур, IV, Архитектура Тейшебаини, Ереван, 114 с.
- Тирацян Г. 1978, Урартский Армавир (по данным археологических раскопок), Культура Востока, Древность и раннее средневековье, Ленинград, изд. Аврора, с. 106-114.
- Badalyan M., Kzlyan V., Iskra M., Mikayelyan A., Kyureghyan H. 2016, (Tsovinar): A Brief Preliminary Report on the 2014-2015 Excavations, Aegean World and South Caucasus. Cultural Relations in the Bronze Age, International Workshop, Proceedings, Tbilisi, Georgia, p. 163-177.
- Burney C., Lawson G. 1958, Urartian Relief at Adilcevaz on Lake Van and a Rock Relief from Karasu near Bireeik, Anatolian Studies, Vol. 8, p. 211-218.
- Kleiss W., Kroll S. 1978, Urartäische Plätze und Anlagen des 2.-1. Jahrtausends v. Chr. in Iran, Archäologische Mitteilungen aus Iran, Band II, Dietrich Reimer, Berlin, S. 27-71.
- Kanetsian A. 1998, Citta e insediamenti nell'Armenia di eta classica, ai piedi dell'Ararat, Firenze – universita degli Studi di Torino, 94 p.
- Kanetsyan A. 2001, Urartian and Early Achaemenid Palaces in Armenia, The Royal Palace Institution in the First Millennium BC, Monographs of the Danish Institute at Athens, Vol. 4, p. 145-153.
- Melkonyan H., Karapetyan I., Yengibaryan N. 2010, The Excavations of the Newly Found Urartian Fortress in Getap, Aramazd, Vol. V, Issue 2, p. 90-98.
- Schmid E. 1953, Persepolis, I, Structures, Reliefs, Inscriptions, Chicago, The University of Chicago press, 282 p.

ՀՈՒՄ ԱՂՅՈՒՄԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԻՐԱՐՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐՈՒՄ

Ամինիա Կանեցյան

Ամփոփում

Ուրարտական ժամանակաշրջանի՝ Արգիշտիխինիլի-Արմավիր, Արտաշատ և Գետափի հուշարձանների պեղումներով հայտնաբերվել շինություններ (բնակելի, պաշտպանական և պաշտամունքային) որոնք կառուցված են հում աղյուսից:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանի տարածքում հում աղյուսի օգտագործումը սկսած նախաուրարտական ժամանակներից ժառանգաբար փոխանցվել է մինչև ուշ միջնադար՝ համարյա չլրելով շինարվեստին վերաբերող փոփոխություններ: Հում աղյուսե կառույցները ոչ միայն ծառայում էին ֆունկցիոնալ նպատակների, այլև արտացոլում էին դրանք կառուցած համայնքների գեղարվեստական ընկալումները:

Բանալի բառեր՝ հում աղյուս, պարսպապատեր, պալատական շինություններ, կեղծ պատուհաներ, Արմավիր, Արտաշատ, Գետափ:

ИСПОЛЬЗОВАНИЕ СЫРЦОВОГО КИРПИЧА В ПАМЯТНИКАХ УРАРТСКОГО ПЕРИОДА АРМЕНИИ

Аминиа Канецян

Резюме

В результате раскопок памятников урартского периода были выявлены сооружения (жилые, крепостные, культовые), построенные из сырцового кирпича. К ним относятся урартские строения Аргиштихинили-Армавира, Арташата и Гетапи.

Исследования показывают, что на территории Армении сырцовый кирпич в качестве строительного материала использовался еще с до-урартского периода, и эта традиция сохранялась вплоть до позднего средневековья почти без существенных изменений в плане строительной техники. Строения из необработанного кирпича не только служили функциональным целям, но и отражали художественное восприятие построивших их общин.

Ключевые слова – сырец, крепостные стены, дворцовые сооружения, ложные окна, Армавир, Арташат, Гетапи.

USE OF MUD BRICK IN THE URARTIAN PERIOD MONUMENTS OF ARMENIA

Aminia Kanetsyan

Abstract

During the excavations of the monuments of Argishtikhinili-Armavir, Artashat, and Getapi of the Urartian period, buildings (residential, defensive, and religious) built of mud brick were found.

The study shows that the use of mud brick in the territory of Armenia was inherited from the pre-Urartian period until the late Middle Ages, almost without any changes in the art of construction. Mud brick structures not only served functional purposes, but also reflected the artistic ideas of the communities that built them.

Key words – mud brick, fortress, walls, palace buildings, fake windows, Armavir, Artashat, Getapi.

ԵՐԵՎԱՆԻ 1724 ԹՎԱԿԱՆԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ ԱՂԱՎԱՂՄԱՆ ՓՈՐՁԵՐԻ ՇՈՒՐՋ

Արման Եղիազարյան

Պատմական գիտությունների դոկտոր

ԵՊՀ հայոց պատմության ամբիոն

ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 1

Էլ. հասցե՝ armanyeghiazaryan@ysu.am

ORCID: 0000-0002-2687-6209

Հոդվածը ներկայացվել է 08.11.2024, գրախոսվել է 28.11.2024, ընդունվել է տպագրության 03.12.2024

DOI: 10.53548/0320-8117-2024.3-311

Ամփոփում

«Հայկական քաղաքագիտական հանդեսի» 2023 թ. 1-ին համարում «Անդրադարձ» խորագրի ներքո լույս է տեսել Ա. Այվազյանի «Ընդդեմ 1724 թ. Երևանի հերոսամարտի պատմության աղճատման» վերնագրով նյութը¹, որտեղ հեղինակը իր խոսքով՝ քննական գրախոսության է ենթարկել Ա. Եղիազարյանի՝ «Երևանի 1724 թվականի ինքնապաշտպանությունը» հոդվածը² և եզրակացրել, «որ XVIII դարի 20-ական թվականների պատմա-հետազոտական ասպարեզ մուտք գործելու հեղինակի փորձը լիովին ձախողվել է, քանի որ չի ուղեկցվել պատշաճ աղբյուրագիտական, պատմագիտական և մեթոդաբանական պատրաստվածությամբ: Գրախոսվող հոդվածում... Երևանի 1724 թ. հերոսամարտի պատմության վերաբերյալ առաջարկված բոլոր փոփոխություններն ու «նորամուծություններն» անհիմն են և սխալ: Մասնավորապես, աղավաղված է պատմական իրադարձությունների ժամանակագրությունը»³:

Ա. Այվազյանի նյութը կազմված է Ա. Եղիազարյանի թվային սխալների բացահայտմանը և հրնթացս իր՝ Ա. Այվազյանի՝ վերջին տասնամյակներին խնդրո առարկա թեմայով կատարած ուսումնասիրությունների արդյունքների վերստին ներկայացմանը նվիրված բաժիններից: Դրանցում Ա. Այվազյանը փորձում է Ա. Եղիազարյանի հոդվածին վերագրել թերի մեթոդաբանություն, կամայական հիմնավորումներ, բռնազբոսիկ և անտրամաբանական եզրակացություններ՝ ներկայացնելով, իր կարծիքով, կատարյալ մեթո-

¹ Այվազյան 2023, 127-170: Չարմանյանի է, որ քաղաքագիտական հանդեսը հրատարակել է նման բնույթի գրախոսական գրվածք, քանի որ վերջինս լիովին դուրս է դրա նպատակների ու խնդիրների տիրույթից: Ավելին, այդ գրվածքին հատկացվել է հանդեսի տվյալ համարի ավելի քան մեկ քառորդ: Ի դեպ, ես դիմել եմ հանդեսի գլխավոր խմբագրին՝ ակնկալելով գիտական բարեխղճության դիրքերից իմ պատասխանը ևս հրատարակելու, թեև սկզբունքային համաձայնություն եմ ստացել, սակայն 2024 թ. սեպտեմբերին հրատարակված՝ այդ հանդեսի հերթական համարում իմ պատասխանը, որը գլխավոր խմբագրին եմ ներկայացրել դեռևս 2024 թ. հունվարին, տեղ չի գտել: Այնուհետև, 2024 թ. հոկտեմբերին հոդվածս հրատարակության ընդունելու՝ այդ հանդեսի խմբագրի խոստումը մնացել է անկատար:

² Եղիազարյան 2022, 55-75:

³ Այվազյան 2023, 127:

դաբանությամբ, օբյեկտիվ ու անհերքելի հիմնավորումներով և տրամաբանական եզրակացություններով շարադրված իր հողվածներից երկարաշունչ և ոչ այնքան երկարաշունչ հատվածներ⁴:

Ա. Այվազյանի «քննական գրախոսությունից» պարզ է, որ նրա համար Երևանի 1724 թ. ինքնապաշտպանության առումով կա երկու տեսակի կարծիք, մեկը՝ իրենը, որով «որոշել» է այդ ինքնապաշտպանության ժամանակագրությունը և հանգամանքները, իսկ ցանկացած երկրորդ կարծիք, ըստ նրա՝ սխալ կարծիք է: Այս պարագայում, երբ խոսքը Ա. Եղիազարյանի հողվածի մասին է, Ա. Այվազյանը «պարզում» է, որ այնտեղ ոչ մի ճիշտ բան չկա, այն «սխալաշատ» և «սխալական» է:

Հենց միայն այն, որ Ա. Այվազյանը հայոց պատմության մի կարևոր դրվագի լուսաբանմանը նվիրված գիտական հողվածի վերաբերյալ իր «քննական գրախոսությունը» հրատարակել է հայագետների «աչքից հեռու»՝ քաղաքագիտական հանդեսում, կարող էր պատճառ դառնալ այն ընդհանրապես անտեսելու, սակայն նման բնույթի գրվածքն անպատասխան թողնելը կարող է դրա հեղինակին համոզել իր գրածի ճշմարտացիության մեջ, որն անթույլատրելի է:

Ստորև հիմնավորված է, որ Ա. Այվազյանի «քննական վերլուծությամբ» Ա. Եղիազարյանի «Երևանի 1724 թվականի ինքնապաշտպանությունը» հողվածում «հայտնաբերված» թերությունները և սխալները հորինված են, իսկ այդ հողվածի վերաբերյալ նրա «դիտարկումները»՝ անհիմն:

Ա. Եղիազարյանի հողվածում ներկայացվածը համապատասխանում է իրականությանը և հիմնված է Երևանի 1724 թ. ինքնապաշտպանության գլխավոր սկզբնաղբյուրի տեղեկությունների վրա:

Բանալի բառեր՝ Երևան, ինքնապաշտպանություն, պաշարում, ժամանակագրություն, աղավաղում, Աբրահամ Երևանցի, ականատես:

Ներածություն

Իր «քննական գրախոսության» «Նախաբանում» Ա. Այվազյանը նշում է, որ վերջին երեք տասնամյակներին Երևանի 1724 թ. հերոսամարտի հետազոտությունը հանգել է հիմնավոր արդյունքների: Նշված շրջանում հիմնավոր արդյունքների հասած հետազոտությունների մեկնարկը տրվել է, դատելով ներկայացվածից, իր՝ Ա. Այվազյանի 1991 թ. հողվածով⁵, այնուհետև շարունակվել ու խորացվել 2006 թ. նրա մեկ այլ հողվածով⁶ և, ի վերջո, ամփոփիչ տեսքի բերվել 2022 թ.՝ դարձյալ Ա. Այվազյանի ուսումնասիրությամբ⁷: Ստացվում է, որ Երևանի 1724 թ. ինքնապաշտպանության արժանահավատ հետազոտությունը կատարել է միայն ինքը՝ Ա. Այվազյանը⁸: Դա ականառու է Ա. Այվազյանի տեքստում, քանի որ անցած երեք տասնամյակների վերոհիշյալ հե-

⁴ Օրինակ՝ իր նյութում Ա. Այվազյանը մի ամբողջ էջ է նվիրել իր 2006 թ. հողվածից կատարված մեջբերմանը: Այվազյան 2023, 136: Մեկ այլ տեղում նա իր 1991 թ. հողվածից մեջ է բերում կես էջից ավելի: Այվազյան 2023, 138-139:

⁵ Այվազյան 1991, 93-100:

⁶ Այվազյան 2006, 51-77:

⁷ Այվազյան 2022:

⁸ Այվազյան 2023, 128-129:

տազոտությունները ներկայացնելուց հետո նա տեղնուտեղը գրում է, որ իր առաջին հոդվածում «որոշվել են» Երևանի պաշարման տևողությունը և առնչակից տարբեր իրադարձությունների ամսաթվեր՝ ամբողջովին կամ մասամբ մերժելով այդ հարցերում այլ տեսակետ ունեցող հեղինակների՝ Լեոյի, Թ. Հակոբյանի, Ա. Միրզոյանի, Ե. Սարգսյանի, Պ. Հարությունյանի, Վ. Մարտիրոսյանի, Վ. Հակոբյանի, Մ. Կարապետյանի, Ա. Հովհաննիսյանի, Վ. Դիլոյանի կարծիքները: Նա համոզված է, որ իր ուսումնասիրություններով «խնդիրն արդեն հանգամանորեն քննվել և լուծվել էր»⁹:

...Քանի որ դեռևս Վ. Դիլոյանը, գրախոսելով Ա. Այվազյանի «Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում (Երևան, 2003)» մենագրությունը, նկատել էր, որ «Գրքում ...արված [են] բավականաչափ կտրուկ և անհիմն եզրակացություններ, որոնք արդյունք են մասամբ որոշ հիմնահարցերի ոչ ամբողջական և համալիր ուսումնասիրության, մասամբ անհարկի շտապողականության, մասամբ էլ հեղինակի որոշ հարցեր չափազանցնելու հակվածության»¹⁰, մենք անիմաստ ենք համարում դարձյալ ներկայացնել նաև այս պարագայում ակնհայտ այդ իրողությունները:

Ա. Այվազյանը, նշելով այն մասին, որ 1991-2022 թթ. ընթացքում իր հետազոտությունների արդյունքները որևէ քննադատության չեն ենթարկվել ու մերժվել, անդրադառնում է իմ՝ 2022 թ. տպագրված վերոհիշյալ հոդվածին՝ ի սկզբանե փորձելով պարզել, թե ինչու՞ են ես Երևանի հայության ինքնապաշտպանությունը թվագրել ականատես պատմագիր Աբրահամ Երևանցու տեղեկություններին համապատասխան՝ 1724 թ. ապրիլի 9-ից հունիսի 7-ը:

Ա. Այվազյանի հենքային սխալը. իրականում Աբրահամ Երևանցին ականատես հեղինակ է

Ըստ Ա. Այվազյանի՝ իմ հիմնական սխալներից մեկն այն է, որ Աբրահամ Երևանցուն համարում եմ ականատես հեղինակ, «որի սխալաշատ հետևանքները» Ա. Այվազյանը խոստանում է բացահայտել իր «քննական գրախոսության» հետագա գրեթե 40 էջերում¹¹:

«Աբրահամ Երևանցին ականատես հեղինակ չէ» ենթավերնագրի ներքո Ա. Այվազյանը, ի հիմնավորումն իմ հոդվածում իբրև թե առկա մեթոդաբանական սխալների, նշում է, որ սխալ է Աբրահամ Երևանցուն նրա հաղորդած մանրամասն տեղեկությունների հիմքով ականատես հեղինակ համարելը: Նա կարծում է, որ եթե նա ականատես է, ուրեմն, օրինակ՝ մասնակցել է իր իսկ նկարագրած գիշերային մի ծածուկ այցելության, մինչդեռ իրականում չի մասնակցել: Դա իբր ցույց է տալիս, որ իմ կիրառած մեթոդաբանությունը

⁹ Այվազյան 2023, 129-131:

¹⁰ Դիլոյան 2004, 297:

¹¹ Այվազյան 2023, 131-132:

ճիշտ չէ: Անմիջապես էլ նա մեջ է բերում ինձ անհայտ՝ իր 2006 թ. հոդվածը, որտեղ, իր կարծիքով, ապացուցել է, որ Աբրահամ Երևանցին առնվազն 1716-1724 թթ. Երևանում չի եղել¹²:

Բայց արդյո՞ք ճիշտ է դա: **Ո՛չ, Աբրահամ Երևանցու՝ ականատես լինելու իրողությունն անհերքելի՛ է:**

Իհարկե, Ա. Այվազյանի՝ «ականատես» բառի ընկալմանն ի պատասխան կարելի էր ներկայացնել միայն Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանից» այդ բառի բացատրությունը, որտեղ ներկայացված է դրա՝ նաև «կողմնակի դիտող, միայն նայող դիտող», իսկ «ականատեսի դերում լինել» արտահայտության համար՝ «իրեն վերաբերող գործի մեջ կողմնակի դիտողի նման վարվել, գործուն մասնակցություն չունենալ» նշանակությունները¹³, որով Աբրահամ Երևանցու՝ ականատես հեղինակ լինելու պարագայում նշված ծածուկ այցին պարտադիր մասնակցած լինելու Ա. Այվազյանի դրույթը հերքվում է:

Սակայն ընթերցողի համբերությունը չչարաշահելու համար անմիջապես անցնենք Աբրահամ Երևանցու՝ Երևանի կռիվներին ականատես լինելու գլխավոր հիմնավորմանը: Աբրահամ Երևանցու երկի 1977 թ. հրատարակության առաջաբանում բնագիրը հրատարակության պատրաստած Հ. Սահակ Ճեմճեմյանը գրում է, որ «Պատմութիւն թագայորի Պարսից» կամ «Պատմութիւն Պարսոյ» կոչվող թիվ 2717 ձեռագրում առկա է հետևյալ հիշատակարանը.

«Վերջ եղավ զայս պատմութիւնիս բանըն, այլ ոչ գիտեմ քան սիս յառայվել. **այս էր որ տեսի աչաց իմոյ գրեց եւ յիշեցի, թվ. ՌՃՀԳ (=1724)ումն մինչ ի 1183 (=1734): Շուրջ եկի ի մէջ օսմանցու, ի մէջ պարսոյ, տեսի եւ գրեցի, եւ Երեւանցի Յօհանէս որդի Աբրահամս, որ զայս յիշեցի այս պատմութիւնըս:** Օվ աստուայծասէր քրիստոնէս, կարդայ զայս պատմութիւնըս, ողորմիս ասէ իմ հօր Յօհանին, իմ մայր Մարամին եւ քոյր Դարդայ խաթունին, իմ քոյր Շահումին, իմ եխպար Կոստանդին, եխպար Ղարայկօզին, եխպար Ատի բէկին, եխպար Փիլումին, եխպար Փիլումին, եխպար Պետրոսին, եխպար Փանոսին: Զայս անունքս որ յիշեցի, ի ձեռն օսմանցու մարտիրոսայցան, թէ մայր, թէ հայր, թէ եխպար: Ով ասէ ողորմիս, վարձն Քրիստոսէ առցէ. ամէն»¹⁴:

Հ. Սահակ Ճեմճեմյանը այս հիշատակարանից իրավացիորեն բխեցրել է, որ Աբրահամ Երևանցին «իր բոլոր պատմաձեռքուն եղած է ականատես», իսկ այն դեպքերում, երբ տեղեկությունը ներկայացրել է միայն լսածին համապատասխան, հատուկ նշում է այդ մասին՝ «...այլոց խօսելովն» բառերով: Բնագրի հրատարակիչն այնուհետև եզրակացնում է, որ՝

¹² Այվազյան 2023, 132-133:

¹³ Աղայան 1976, 15:

¹⁴ Աբրահամ Երևանցի 1977, 6:

«Այս տեսակետով Աբրահամ Երևանցիի գիրքը կը ստանայ ականատես պատմագրի մը արժեքը, եւ կարելի է դասատրել զայն ժամանակագիրներու շարքին: Նոյն եզրակացութեան պիտի հասնի ամէն ընթերցող՝ երբ կարդայ անոր պատմութիւնը, ու տեսնէ խղճամիտ մանրամասնութիւններ՝ տարիներու, ամիսներու, օրերու եւ ժամերու, որոնք պատմութեան կու տան յատուկ արժէք եւ միաժամանակ կենսունակութիւն»¹⁵:

Այո՛, ամէն ընթերցող, բայց ոչ Ա. Այվազյանը: Գուցե նա տեղյակ չէ՞ այդ հիշատակարանին կամ Հ. Սահակ Ճեմճեմյանի տեսակետին: **Նման դեպքերում ես հետևում եմ «եթե մի սխալմունք կարելի է բացատրել անտեղյակությամբ, այլ պատճառներ մի՛ փնտրիր» սկզբունքին:** Այս դեպքում էլ այդպես կվարվեմ, թեև Ա. Այվազյանը, իր նյութի 133-137 էջերում Աբրահամ Երևանցու տեքստից թվացյալ սխալներ ներկայացնելով, դարձյալ ու դարձյալ փորձում է «հիմնավորել» Աբրահամ Երևանցու՝ ականատես չլինելու տեսակետը, կարծես թե ականատեսները երբեք չեն սխալվում:

Արժե՞ արդյոք շարունակել Աբրահամ Երևանցու՝ ականատես հեղինակ լինելու հիմնավորումներ ներկայացնելը: Անհմատ է. **«տեսի աչաց իմոյ գրեց եւ յիշեցի, թվ. ՌՃՀԳ (=1724) ումն մինչ ի 1183 (=1734)»** տողը ամեն ինչի մասին խոսում է, նաև այն ժամանակահատվածի, որի ականատեսն էր նա, այսինքն՝ խնդրո առարկա իրադարձությունները ներառյալ:

Պատահական չէ, որ Աբրահամ Երևանցու երկի բնագրի անգլերեն թարգմանությունը պատրաստող և ծանոթագրող Գ. Բունդոյանը կարծում է, որ Աբրահամ Երևանցին ապրել է Երևանում¹⁶: Հետազոտողն իրավամբ նշում է, որ Աբրահամ Երևանցու տեքստում առկա են սխալներ, և հաճախ այն պատճառով, որ նա տեղեկությունների մի մասը քաղել է ուրիշներից¹⁷: Բայց է. Աղայանի ստուգաբանումից պարզ է, որ ականատես հեղինակ լինելը չի նշանակում անպայման գործուն մասնակցություն ունենալ, կարելի է նաև կողմնակի դիտող լինել:

Աբրահամ Երևանցին, այսպիսով, ականատես հեղինակ է, ուստի Ա. Այվազյանի նյութի այն հատվածը, որը միտված է պատմագրին ականատեսի «կարգավիճակից զրկելու» միջոցով ինձ սխալ մեթոդաբանություն և, հետևաբար, սխալաշատ հետևանքներ վերագրելուն, լիովին անհիմն է: Ավելին՝ այդպիսով սխալ մեթոդաբանություն և սխալաշատ հետևանքներ կարելի է վերագրել հենց իրեն՝ Ա. Այվազյանին, քանի որ չի ընդունում ականատես պատմագիր Աբրահամ Երևանցու ճշգրիտ ժամանակագրական տեղեկությունները Երևանի հերոսամարտի մասին՝ «որոշելով» (իր բառն է) այլ թվագրումներ:

¹⁵ Աբրահամ Երևանցի 1977, 7:

¹⁶ Abraham of Erevan 1999, 4.

¹⁷ Abraham of Erevan 1999, 7.

Համոզված եմ, որ եթե Ա. Այվազյանի «քննական գրախոսությունը» հրատարակվեր հայագիտական որևէ հանդեսում (ենթադրենք, թե նման բան հնարավոր է), մասնագետ խմբագիրը կամ գրախոսը կնկատեին այդ կոպիտ սխալը և կկանխարգելեին դրա՝ գիտական շրջանառության մեջ մտցնելու փորձը: Իսկ քաղաքագիտական հանդեսում հրատարակված հայագիտական բնույթի գրվածքում այդպիսի վրիպումը զարմանալի չէ:

Բայց ո՞րն է իրականում Աբրահամ Երևանցու՝ Երևանի հերոսամարտին ականատես լինելը հերքելու Ա. Այվազյանի հիմնական դրդապատճառը: Ամենայն հավանականությամբ, նրա նպատակն այդպիսով Երևանի հերոսամարտի՝ Աբրահամ Երևանցու ներկայացրած ժամանակագրությունը մերժելու համար հող նախապատրաստելն է:

Այսքանից հետո էլ Ա. Այվազյանը իմ ներկայացրած ժամանակագրությունը համարում է Երևանի հերոսամարտի ժամանակագրության աղավաղում¹⁸, մինչդեռ ես, ի տարբերություն նրա, հավատարիմ եմ մնացել ականատես պատմագրի տվյալներին: Աղավաղում է նա, ով փորձում է ականատես պատմագրի համապատասխան տեղեկությունները մերժել, ի դեպ, հընթացս ընդունելով նրա հաղորդած այլ տեղեկությունները: Մասնավորապես, նա, մերժելով Աբրահամ Երևանցու տեղեկությունը Երևանի հայության ինքնապաշտպանության ժամանակի վերաբերյալ, սակայն, նրա՝ ինքնապաշտպանությանը նախորդող և ընթացիկ իրադարձությունների շարադրանքը համարում է «հստակ դիպաշարով» ներկայացված¹⁹: Մինչդեռ նման մտածելակերպի դեպքում տեղին կլիներ կասկածը. եթե ժամանակագրությունը սխալ է, ինչպե՞ս կարող է հստակ ու ճիշտ լինել դրանցում ներկայացված դեպքերի հերթականությունը: Կամ հակառակը, եթե հեղինակն այդքան ճշգրիտ ներկայացնում է Երևանի հերոսամարտին առնչվող «դիպաշարը», ապա ինչպե՞ս կարող էր անտեղյակ լինել դրա ժամանակագրությանը:

Այստեղ միայն հավելեմ, որ ականատես պատմագիր Աբրահամ Երևանցու ճշգրիտ տեղեկություններով՝ Երևանի հայության 1724 թ. ինքնապաշտպանությունը օսմանյան բանակի դեմ տևել է 60 օր՝ ողբերգականորեն ավարտվելով հունիսի 7-ին՝ հայկական թաղամասերի ամբողջական գրավմամբ և հայության կոտորածով²⁰: Այնուհետև օսմանյան բանակը պաշարել է Երևանի բերդը, որն էլ գրավվել է սեպտեմբերի վերջին²¹: Ես իմ հոդվածում լիովին ընդունել եմ պատմագրի տեղեկության իսկությունը և ըստ այդմ ներկայացրել Երևանի հայության ինքնապաշտպանության դրվագների ժամանակագրությունը²², իսկ ինձ այդ ժամանակագրության

¹⁸ Այվազյան 2023, 127, 147, 166:

¹⁹ Այվազյան 2023, 141:

²⁰ Աբրահամ Երևանցի 1977, 25-31:

²¹ Աբրահամ Երևանցի 1977, 31-35:

²² Եղիազարյան 2022, 67-74:

աղավաղման մեջ մեղադրող Ա. Այվազյանը մերժել է այդ տեղեկությունը՝ հիմնվելով օսմանցի հեղինակ Չելեբի-Չաղեի հաղորդումների վրա, որտեղ նկարագրված են Երևանի բերդի պարսպին կից արվարձանի գրավումն ու ոչնչացումը և բերդի պաշարումը հունիսի 24-ից սեպտեմբերի 23-ը²³:

Ըստ որում, Ա. Այվազյանը Աբրահամ Երևանցու՝ Երևանի հայության ինքնապաշտպանության վերաբերյալ դեպքերը և դրանց հաջորդականությունը, ի տարբերություն դրանց ժամանակագրության, ընդունում է, բայց փորձում է «տեղադրել» Չելեբի-Չաղեի ներկայացրած վերոհիշյալ ժամանակագրության (հունիսի 24 - սեպտեմբերի 23) միջակայքում՝ այդպիսով սխալմամբ միահյուսելով իրականում իրար հաջորդող իրադարձությունները²⁴:

Ի՞նչ «կամայականության հաղթարշավի» մասին է խոսում Ա. Այվազյանը, և իրականում ո՞վ է կամայական մեկնաբանություններ անում

«Կամայականության հաղթարշավ («Օգոստոսի 20-ը այնքան էլ ճիշտ չէ»)» վերնագրի ներքո հեղինակը հինգ էջ է հատկացրել՝ «ցուցադրելու» իմ առաջ քաշած մի վարկածի կասկածելի (կամ անընդունելի) լինելը:

Այստեղ նա ի սկզբանե կիրառում է մի հնարք՝ Ա. Եղիազարյանին հակադրելով... Ա. Եղիազարյանին: Նրա կարծիքով, եթե ես համարում եմ, որ «խորքային տեղեկությունների տիրապետող հեղինակը (Աբրահամ Երևանցին) անհնար է, որ չտիրապետեր դեպքերի ժամանակագրությանը», «քաղաքի պաշտպանության մասին հեղինակի մանրամասն տեղեկությունները ...որևէ հնարավորություն չեն ընձեռում կասկածի ենթարկելու նրա ներկայացրած ժամանակագրական տեղեկությունները» և «դրանց չվստահելու հիմքեր իրականում չկան», ապա դրանով անսխալական եմ հռչակում պատմագրին և զրկվում նրա երկում որևէ սխալ մատնացույց անելու իրավունքից: Ավելին, նա գտնում է, որ Աբրահամ Երևանցու տեքստի վերաբերյալ նման խոսքերից հետո, եթե ես պատմագրի մի ժամանակագրական տեղեկության իսկությանը կասկածում եմ, ուրեմն շարժվում եմ «երկակի չափանիշներով»²⁵: Ա. Այվազյանի սույն միտքը քննարկելն իսկ համարում եմ անիմաստ, քանի որ այն պարզապես հակազիտական է:

Անդրադառնալով վերոհիշյալ վարկածին՝ նշեմ, որ ես, խորապես ընդունելով, որ իմ ներկայացրածը Աբրահամ Երևանցու ժամանակագրական տեղեկություններից մեկի սխալ լինելու վերաբերյալ միայն վարկածային բնույթ ունի, նման դեպքերի համար անհրաժեշտ բառապաշարով («եթե ընդունենք», «եթե առաջարկած ճշգրտումը հավանական է») նշել եմ հետևյալը. պատմագիրը Երևանի բերդի գրավումը դնում է օգոստոսի 21-ին (անիմաստ է բա-

²³ Թուրքական աղբյուրները 1961, 143-150:

²⁴ Այվազյան 1991, 93-100:

²⁵ Այվազյան 2023, 140-141:

նավիճել պատմագրի՝ Երևանի բերդի գրավման օրվանն առնչվող «օգոստոսի Ի-մին»-ը օգոստոսի 20 հասկանալու հարցի շուրջ²⁶, քանի որ դա այլ քննության նյութ է), որը կարող է լինել վրիպակ՝ սեպտեմբերի փոխարեն գրվել է օգոստոս: Եթե իրական դիտարկվի այս վարկածը, ուրեմն Աբրահամ Երևանցուն հայտնի էր նաև բերդի անկման ամսաթիվը: Ա. Այվազյանը, որ Երևանի ինքնապաշտպանության՝ Աբրահամ Երևանցու նշած հստակ ժամանակագրական շրջանակը մերժում է՝ համարելով, որ պատմագիրը սխալվել է, փաստորեն, շուրջ երկուսուկես ամսով, անցնում է Աբրահամ Երևանցու տեղեկությունների «պաշտպանությանը» և տարակուսում, թե ինչպես կարելի է նման «կամայական լուծում» առաջարկել²⁷, չնայած խոսքը ոչ թե լուծման (առավել ևս՝ կամայական լուծման), այլ զուտ վարկածի մասին է:

Փաստորեն, հենց ինքը՝ Ա. Այվազյանն է երկակի չափանիշներ կիրառում անհրաժեշտության դեպքում ճիշտ կամ սխալ համարելով Աբրահամ Երևանցու տեղեկությունները: Այդքանից հետո էլ երեք էջ շարունակ վերլուծում է նշված վարկածը, պարզ է՝ ցույց տալու իմ կամայական «հետազոտական աշխատանոցը»²⁸:

Թվում է, որ այդ վարկածը մեծապես անհանգստացրել է Ա. Այվազյանին՝ ստիպելով նրան դրա անհաջող հերքմանը (ըստ էության, դա ոչ թե հերքում է, այլ իմ վարկածի իմաստի այլափոխում) հատկացնելու հինգ էջ, քանի որ, եթե Աբրահամ Երևանցու երկի այդ հատվածում «օգոստոսը» փոխարինում ենք «սեպտեմբերով», հիմնականում լուծվում են Երևան քաղաքի և համանուն բերդի 1724 թ. կռիվների ժամանակագրական հարցերը, քանի որ այդպիսով ստացվում է, որ Աբրահամ Երևանցին գիտե նաև բերդի անկման ժամանակը: Սակայն կրկնում են, դա միայն վարկած է, և գուցե անաչառ մի հետազոտող (ընդունենք, որ այստեղ Ա. Այվազյանն անաչառ լինել չի կարող) հետազայում ի վերջո հաստատի կամ հերքի այն: Հենց դրա համար էլ առաջ են քաշվում վարկածները: Եվ որևէ խնդիր չի եղել տպավորություն ստեղծելու, թե «Ա. Այվազյանը վատ բան է արել»²⁹: Նա արել է այն, ինչ կարողացել է:

Ա. Այվազյանը, իմ ներկայացրած վարկածը ինչ-որ կերպ հերքելու նպատակով, առաջ է քաշում ««սեպտեմբեր» գրել ցանկացողը ոչ մի կերպ «օգոստոս» գրել չի կարող» դրույթը³⁰, որն ընթերցողին ասվածի իմաստից շեղելու կամ ապակողմնորոշելու հնարք է, քանի որ խոսքը «սեպտեմբեր» գրել ցանկանալու պարագայում սխալմամբ «օգոստոս» գրելու մասին չէ: Նույն կերպ կարելի է նրան հակադարձել, որ Երևանի ինքնապաշտպանության սկզբի

²⁶ Այվազյան 2023, 144:

²⁷ Այվազյան 2023, 144-145:

²⁸ Այվազյան 2023, 142:

²⁹ Այվազյան 2023, 143:

³⁰ Այվազյան 2023, 144:

համար հունիսի փոխարեն (ըստ Ա. Այվազյանի) Աբրահամ Երևանցին «ապրիլ» գրել էր կարող շփոթելով նաև ամսաթվերը: Չէ՞ որ պատմագիրը, ինչպես Երևանի ինքնապաշտպանության ժամկետների հարցում կարող էր սխալվել (ըստ Ա. Այվազյանի), այնպես էլ կարող էր այս հարցում ևս սխալվել: Ուստի ինչո՞ւ է Ա. Այվազյանը փորձում ինձ «արգելել» կատարելու այն, ինչ ինքն է արել այլ առիթով: Ինչ վերաբերում է Ա. Այվազյանի վերոհիշյալ դրոյթին, ապա հարկ է նկատի ունենալ, որ դժվար թե Աբրահամ Երևանցին իր երկը շարադրած լիներ օրագրության սկզբունքով, այլ գուցե հետագայում, երբ Երևանի շուրջ կրքերը որոշ չափով հանդարտվել էին, իսկ ինքը, որի ընտանիքը կոտորվել էր, կորստի ցավից ուշքի էր եկել, շարադրել է տեղի ունեցածի պատմությունը, ինչով մեծանում է սխալվելու հավանականությունը: Ինչպես տեսանք, հետազոտողները մի քանի սխալներ են նկատել նրա երկում: Գուցե այս դե՛պքն էլ բացառություն չէ: Ա. Այվազյանը փորձում է նաև այնպես ներկայացնել, թե իբր ես խոսել եմ ոչ թե վրիպակի, այլ Աբրահամ Երևանցու՝ մեկ բառում կատարած մի քանի տառասխալների մասին, քանի որ նշում է, թե «օգոստոս» և «սեպտեմբեր» բառերում համընկնում է միայն երկու տառ: Բայց ո՞վ է խոսել տառասխալների մասին, խոսքը հնարավոր վրիպակի՞ մասին է, որը կարող էր տեղի ունենալ տեսածը հետագայում շարադրելիս առաջացած շփոթության պատճառով: **Անընդունելի՛ է այլ հետազոտողի տեսակետը հերքելու կամ այն ստվերելու նպատակով նրա ասածը խեղաթյուրելը:**

Ա. Այվազյանի կատարած այլ խեղաթյուրումներ

Ա. Այվազյանը միայն իմ կարծիքի վերոհիշյալ խեղաթյուրմամբ չի բավարարվում: Նա, հընթացս ասվածին, նաև փորձում է ինձ վերագրել անուշադիր և անփույթ վերաբերմունք իմ իսկ հաշվարկների նկատմամբ. իբրև թե մի տեղում ես Երևանի հայկական թաղամասերի պաշտպանությունը թվագրում եմ ապրիլի 7-ից հունիսի 7-ը, մեկ այլ դեպքում՝ ապրիլի 9-ից հունիսի 7-ը³¹: Ըստ որում, նա այնքան է տարվել իմ այդ «անուշադրությունը» և «անփութությունը» հանրայնացնելու բուռն ցանկությամբ, որ այդ արել է երկու անգամ³²: Մինչդեռ ուշադիր (նաև անաչառ) ընթերցողը կտեսնի, որ ապրիլի 7-ից հունիսի 7-ն ընդգրկող ժամանակահատվածի (այդպիսին է Երևանի պատմության անվանի ուսումնասիրող Թ. Հակոբյանի կարծիքը քաղաքի հայության 1724 թ. ինքնապաշտպանության վերաբերյալ³³) մասին ես նշել եմ Երևանի հայկական թաղամասերի ինքնապաշտպանության ժամանակագրությունը քննելիս, երբ

³¹ Այվազյան 2023, 141, ծանոթ. 41:

³² Այվազյան 2023, 165, ծանոթ. 113:

³³ Հակոբյան 1971, 77-90:

դեռ չեմ ճշգրտել վերջինիս շրջանակները³⁴, իսկ ճշգրտելուց հետո կանգ եմ առել հերոսամարտի ապրիլի 9-ին սկսվելու տեսակետի վրա³⁵, որը և նշել եմ հոդվածիս ամփոփման մեջ: Ուրեմն էլ ի՞նչ «անուշադրության» կամ «անփութության» մասին կարող է խոսք լինել: Հայտնի է միայն Ա. Այվազյանին:

Այնուհետև Ա. Այվազյանը գրում է, թե իբր «Ա. Եղիազարյանի մտացրությունը բերել է նրան, որ նույն հոդվածում նա մի տեղ «հայերի ինքնապաշտպանության անկումից հետո» Երևանի բերդում ամրացած կայազորի դիմադրության տևողությունը հաշվում է երկու ամիս, մեկ ուրիշ տեղ (հոդվածի ամփոփման մեջ)՝ երեք ամիս»³⁶: Ստուգենք, թե երբ եմ ես խոսել բերդի երկամսյա պաշտպանության մասին: Առաջին անգամ այդ մասին գրել եմ Թ. Կրուշինսկու տեղեկությունը ներկայացնելիս³⁷, քանի որ հենց նա է, որ բերդի պաշարման նման տևողություն է ներկայացնում: Երկրորդ անգամ ևս խոսքը եղել է նույն հեղինակի տեղեկության մասին (հենց դա էլ մատնանշում է Ա. Այվազյանը)³⁸, այսինքն՝ դա ոչ թե իմ միտքն է, այլ նշված հեղինակի տեղեկությունը: Սակայն, ինչպես նշել եմ հոդվածիս ամփոփման մեջ, բերդն իրականում պաշարված է եղել երեք ամիս³⁹: Փաստորեն, Երևանի բերդի երկամսյա պաշարումն իմ կարծիքը չէ, այլ նշված հեղինակի: Ա. Այվազյանը դա վերագրել է ինձ՝ պատճառ համարելով իմ «մտացրությունը»:

Թեև նման մոտեցումներով գիտության մեջ գործունեություն ծավալելն անթույլատրելի է, սակայն այս պարագայում նույնիսկ լավ է, որ Ա. Այվազյանն այդպես է վարվել. ընթերցողը կարող է պարզորոշ տեսնել, թե ինչի է նա ընդունակ իր անհույս դիրքերը պաշտպանելիս:

Այսպիսով՝ իմ իբրև թե «անուշադրությունը», «անփութությունը» և «մտացրությունը» Ա. Այվազյանի հորինածն են, և թե ի՞նչ նպատակով է նա այդ արել, դատողությունները թողնում եմ ընթերցողին:

Այո՛, 1724 թ. գարնանը Արարատյան երկրում եղել է օսմանյան մեծաթի՛վ բանակ

Այնուհետև Ա. Այվազյանն անցնում է իմ հոդվածում 1724 թ. գարնան դեպքերի լուսաբանման ժամանակ կատարված իբրև թե սխալ եզրահանգումներին և սխալ օգտագործված հասկացությունների մատնանշմանը: Մասնավորապես «1800 հոգուց բաղկացած... բանակ» վերնագրի ներքո Ա. Այվազյանը արդեն Աբրահամ Երևանցու տեղեկությունների հիմամբ (որոնք նա այս պարագայում ընդունում է առանց վերապահության) քննում է

³⁴ Եղիազարյան 2022, 69:

³⁵ Եղիազարյան 2022, 71, 72, 73, 74:

³⁶ Այվազյան 2023, 164-165:

³⁷ Եղիազարյան 2022, 60:

³⁸ Եղիազարյան 2022, 69:

³⁹ Եղիազարյան 2022, 74:

օսմանյան զորամասերի տեղաշարժերը դեպի Կարբի և Երևան, հաշվում պատմագրի երկում առկա տվյալները դեպքերի տևողությունների վերաբերյալ և հանգում այն եզրակացության (ուղղակի կրկնում է իր նախկին ուսումնասիրություններում ասվածը), որ մարտի 6-ից սկսած զորաշարժից հետո անցել է 60 օր, որից հետո էլ Երևանի ինքնապաշտպանությունը տևել է ևս 60 օր, հետևաբար օսմանցիները Երևանը հունիսի 7-ին գրավել չէին կարող⁴⁰: Ըստ նրա՝ իրականում Երևանի պաշարումը սկսվել է հունիսի 24-ին⁴¹:

Անդրադառնալով այդ հաշվարկին՝ իմ հոդվածում նշել էի. «Ինչ վերաբերում է Ա. Այվազյանի՝ մարտի 6-ից կատարած հաշվարկին, ապա այն այնքան միանշանակ չէ, քանի որ նա այդ մեկնակետից իր հաշվարկած 60 օրում հերթականության սկզբունքով ընդգրկել է Կարբիի կռիվների 40 օրը և փաշայի՝ կարբեցիներին ներկայացրած վերջնագրին հետևած 10 օրը: Մինչդեռ հաշվարկը հարկ էր կատարել զուգահեռության սկզբունքով՝ Կարբիի կռիվները և Երևանի վրա արշավանքն ու քաղաքի ինքնապաշտպանությունը դիտարկելով որպես զուգահեռաբար ընթացող իրադարձություններ: Դրանով իսկ Աբրահամ Երևանցու ժամանակագրական տեղեկությունները դառնում են հավաստի»⁴²:

Իմ այս պնդմանը Ա. Այվազյանը հակադարձում է Աբրահամ Երևանցու տեղեկություններում առկա՝ իրադարձությունների ներկայացված հերթականությանը «աներկբա» վստահելով և տեղնուտեղը նույն հեղինակի նույն իրադարձությունների վերաբերյալ «ամսաթվային» տվյալները չընդունելով⁴³: Այդ անելուց հետո էլ ի՛նձ է «մեղադրում» միջոցների մեջ խտրություն չդնելու համար, դեպքերի իմ մեկնաբանությունը համարում «մտացածին ու խառնաշփոթ պատմություն»⁴⁴, մինչդեռ իրականում էլ ինչպե՞ս կարելի է հնարավորինս խառնաշփոթ պատմություններ հորինել, եթե ոչ Ա. Այվազյանի օրինակով միևնույն հեղինակի առանձին հիշատակության մի հատվածին (իրադարձությունների ժամանակագրական հերթականություն) աներկբա վստահելով, իսկ մյուս հատվածը (նույն դեպքերի ամսաթվերը) լիովին մերժելով:

Ով ո՞ւմ է մեղադրում խառնաշփոթ և մտացածին պատմություն ներկայացնելու մեջ:

Այնուհետև՝ միջոցների մեջ խտրություն չդնելով՝ ներկայացնում է իմ հոդվածից խմբագրական միջամտության պատճառով անկատար ձևակերպում ստացած մի պարբերություն և եզրակացնում. «Շարունակությունը շարադրված է նույն ոճով ու տրամաբանությամբ»⁴⁵, թեև ինչ-ինչ, բայց այդ պարբերության տրամաբանությունը պետք է որ պարզ լիներ նրան, շարահյու-

⁴⁰ Այվազյան 2023, 146:

⁴¹ Այվազյան 2023, 147:

⁴² Եղիազարյան 2022, 71:

⁴³ Այվազյան 2023, 147:

⁴⁴ Այվազյան 2023, 148:

⁴⁵ Այվազյան 2023, 148:

սական անկատարությունը չի ազդել դրա տրամաբանության վրա: Ա. Այվազյանն այդ պարբերությունը իզուր չի թիրախավորել, քանի որ այդտեղ ներկայացված են օսմանյան զորամասերի տեղաշարժերը և, մասնավորապես, այն, որ «Կարբիի դեպքերի նկարագրությունից հետո նշվում է այն մասին, թե Երևանի ուղղությամբ օսմանյան զորքի արշավանքը սկսվում է Եղվարդից, որը հուշում է, որ օսմանյան բանակի մի մասը այնտեղ պարսկական բանակը ջախջախելուց հետո գնացել էր Կարբիի ուղղությամբ, իսկ մյուս մասը՝ Եղվարդում զորամասեր թողնելով՝ դեպի Երևան»⁴⁶:

Չկարողանալով հերքել այդ միտքը՝ Ա. Այվազյանը դարձյալ դիմում է Աբրահամ Երևանցու տվյալներին լիակատար կերպով վստահելու մարտավարությանը, ըստ որոնց՝ այդ շրջանում գործում էր ընդամենը 1800 օսմանցի զինվոր: «Ներկայացնել այդ փոքրաթիվ գունդը որպես «օսմանյան բանակ» նշանակում է ոչ այլ ինչ, քան պատմական տեղեկությունների միտումնավոր աղճատում»⁴⁷, - գրում է նա:

Ճիշտ է, 1800 զինվորից բաղկացած զորախումբը բանակ անվանելը կարելի է չափազանցություն համարել, բայց արդյո՞ք Աբրահամ Երևանցին չի սխալվել, քանի որ այդ զորախումբը կարողացել էր գլխավին ջախջախել Երևանի խանի 12-հազարանոց զորքը: Ա. Այվազյանը փորձում է 1800 օսմանցի զինվորներին վերագրվող այդ անհավանական հաջողությունը բացատրել՝ խանի զորքը «զինված խառնամբոխ» որակելով⁴⁸: Իսկ իմ տեսակետը Ա. Այվազյանը փորձում է մերժել՝ օսմանյան զորախմբի փոքր թվաքանակը հաշվի առնելով: Ըստ նրա, երբ ես գրում եմ «օսմանյան բանակի մի մասը այնտեղ (Եղվարդում) պարսկական բանակը ջախջախելուց հետո գնացել էր Կարբիի ուղղությամբ, իսկ մյուս մասը՝ Եղվարդում զորամասեր թողնելով՝ դեպի Երևան»⁴⁹, ապա նկատի ունեմ այդ բանակի զինվորների հավասարաչափ բաժանումը, այս պարագայում՝ Երևանի խանի զորքի դեմ ճակատամարտից հետո մնացած 1200-1500 օսմանցի զինվորներին (պարզվում է՝ Ա. Այվազյանին հայտնի են օսմանյան զորախմբի կորուստները) բաժանելով 400-500-հոգանոց երեք խմբի⁵⁰, որը, իհարկե, այդպես չէ:

Ինձ վերագրված իր նմանատիպ հաշվարկներով էլ նա իմ «դրույթները» հոչակում է ինքնահնար:

Օսմանյան բանակի փոքրաթիվ լինելը պնդելու և հիմնավորելու Ա. Այվազյանի մղումն ունի իր նպատակը. քանի որ ես առաջարկել եմ Աբրահամ Երևանցու վերոհիշյալ տեղեկությունն օսմանյան բանակի զորաշարժերի վե-

⁴⁶ Եղիազարյան 2022, 71:

⁴⁷ Այվազյան 2023, 148:

⁴⁸ Այվազյան 2023, 146:

⁴⁹ Եղիազարյան 2022, 71:

⁵⁰ Այվազյան 2023, 149:

րաբերյալ դիտարկել զուգահեռության սկզբունքով, նրան պետք է, որ այդ բանակը լինի փոքրաթիվ, որ անհնար դիտարկվի միևնույն ժամանակ Կարբիի և Երևանի ուղղությամբ զորամասեր ուղարկելու նրա հնարավորությունը:

Նախ, «բանակ» բառից կառչել պետք չէ՝ փորձելով զորախմբի վերաբերյալ դրա կիրառումը համարել կոպիտ սխալ, քանի որ հայերենում այն, ի թիվս այլոց, ունի նաև «ընդհանրապես՝ զորք»⁵¹, «զորքի խումբ»⁵², «զորագունդ, զորախումբ, զորասին, զորաբաժին, գունդ, վաշտ, գումարտակ»⁵³ նշանակությունները, ուստի այն նշածս իմաստներով լիովին կիրառելի է: Ինչ վերաբերում է Ա. Այվազյանի հաշվարկներին, ապա արդյոք ճիշտ է առանց քննության հիմք ընդունել 1800 օսմանցի գինվորի մասին Աբրահամ Երևանցու տվյալը և դրա հիմքով օսմանյան այդ զորախումբը համարել «առաջամարտիկ զորագունդ»⁵⁴: Եվ արդյոք նման զորախումբն ի զորու կլինե՞ր իրականացնելու այն ամենը, ինչ նրան վերագրվում է, մասնավորապես Երևանի խանի 12-հազարանոց զորքի ջախջախումը: Անհավատալի՞ է, որ ծավալուն գործողությունների համար կուղարկվեր նման փոքրաթիվ զորախումբ:

Ա. Այվազյանը, տարված իմ տեսակետները մերժելու բուռն ցանկությամբ, նույնիսկ չի նկատում, թե ինչպես է հակասում ինքն իրեն. մասնավորապես իր «քննական գրախոսության» խնդրո առարկա հատվածում սկզբում ընդգծում է, որ «1724 թ. գարնան ամբողջ ընթացքում Արարատյան երկրում ո՛չ օսմանյան «բանակ» է եղել, ո՛չ էլ, բնականաբար, այն գլխավորող հրամանատար (այսինքն՝ սերասքեր)», իսկ նույն էջի վերջում գրում. «Իրականում օսմանյան բանակի հիմնական ուժերը, Աբրահամ Երևանցու նշած «մեծ փաշայի» (իմա՝ սերասքեր Արիֆի-Ահմեդ փաշայի) գլխավորությամբ, հասել էին Եղվարդ-Կարբի բնագծին Կարբիի պաշարման 40-րդ օրը՝ ինչպես և պարզել ենք՝ 1724 թ. մայիսի 25-ին»⁵⁵: Մի՞թե մայիսի 25-ը գարուն չէ և Եղվարդ-Կարբի բնագիծը Արարատյան երկիր չէ:

Ինչ վերաբերում է 1724 թ. գարնանը Արարատյան երկրում օսմանյան բանակ իբրև թե չլինելու Ա. Այվազյանի պնդմանը, ապա այս առումով կարևոր է աղբյուրային այն տեղեկությունը, որը բերել ենք մեր հոդվածում⁵⁶, և որն «աջքաթող» է արել նա: Հայտնի է, որ Կոստանդնուպոլսի 1724 թ. հունիսի 12-ի ռուս-թուրքական պայմանագրով նախատեսված միջպետական սահմանագիծն Այսրկովկասում օսմանյան տիրապետության ներքո էր թողնում, մասնավորապես Թիֆլիսը, Երևանը, Նախիջևանը, Գանձակը, Պարտավը և

⁵¹ Աղայան 1976, 167:

⁵² Աճառյան 1971, 405:

⁵³ Հայոց լեզուի նոր բառարան 1992, 287:

⁵⁴ Այվազյան 2023, 146:

⁵⁵ Այվազյան 2023, 150:

⁵⁶ Եղիազարյան 2022, 68:

Արցախը⁵⁷: Ընդ որում՝ օսմանյան կողմը ճանաչում էր ռուսական նվաճումները Այսրկովկասում և Կասպից ծովի հարավում, իսկ ռուսական կողմը՝ օսմանյան նվաճումները Այսրկովկասում: Նվաճումների այդ փոխադարձ ճանաչումն ակնհայտ է դառնում Կոստանդնուպոլսից ռուսական արքունիք ուղարկված 1724 թ. մայիսի 24-ի զեկուցագրից: Ներկայացնելով ռուս-թուրքական պայմանագրի նախագիծը՝ տեղեկագրի հեղինակը գրում է, որ պարսկական տերության հողերը նվաճելու համար սուլթանը «մեծաթիվ զորքեր» է ուղարկել երեք ուղղությամբ⁵⁸՝ արձանագրելով, որ, փաստորեն, օսմանյան զորքն արդեն ներխուժել էր պարսկական տերություն 1724 թ. մայիսի դրությամբ՝ նվաճելով «շատ վայրեր»⁵⁹: Պարզվում է նաև, որ ռուս-թուրքական պայմանագրի շուրջ համաձայնությունը վերջնական տեքստով արդեն առկա էր 1724 թ. մայիսին, և թուրքական բանակն անցել էր իրեն հասանելիք տարածքների գրավմանը: Պայմանագրի դրույթների շուրջ նախնական համաձայնությունը կայացվել էր դեռևս 1724 թ. մարտի 28-ի դրությամբ⁶⁰, ուստի պատահական չէ, որ հենց այդ ժամանակ օսմանյան բանակն Արաքս գետի ափից շարժվելով՝ սկսեց Արարատյան երկրի և Երևան քաղաքի գրավումը: Փաստորեն, նախքան պայմանագրի կնքումը կողմերը, ամենայն հավանականությամբ, փոխհամաձայնեցված ձգտում էին զբաղեցնել իրենց անցնող տարածքները: Ի դեպ, սա հանգուցային տեղեկություն է Երևանի ինքնապաշտպանության սկիզբը հստակեցնելու համար և, փաստորեն, հիմնավորում է Աբրահամ Երևանցու ժամանակագրական տվյալների արժանահավատությունը՝ մի կողմից, և մյուս կողմից՝ այն, որ Արարատյան երկրում 1724 թ. գարնանը օսմանյան բանակ իրականում կար:

Կարծում եմ՝ Ա. Այվազյանի մոտեցման պատճառը Աբրահամ Երևանցու՝ օսմանյան 1800 զինվորից բաղկացած զորախմբի մասին տեղեկությանը աներկբայորեն վստահելն է (եթե, իհարկե, նա այդ արել է զուտ հեղինակի տվյալ տեղեկությանը վստահելու պատճառով և ոչ թե իմ տեսակետը մերժելու նպատակով): Մինչդեռ հենց այստեղ էր անհրաժեշտ ցուցաբերել քննական մոտեցում և իրականացնել այլ աղբյուրների տեղեկությունների հետ համադրում:

Բայց դրա փոխարեն Ա. Այվազյանը դարձյալ փորձում է հիմնավորել վերոհիշյալ օսմանյան զորախմբի՝ սակավաթիվ լինելու պնդումը⁶¹:

⁵⁷ Պայմանագրի ամբողջական տեքստը տե՛ս Полное собрание законов Российской империи с 1649 года 1830, 503-508: Հմնմ. Армяно-русские отношения в первой трети XVIII века 1967, 177-181:

⁵⁸ Армяно-русские отношения в первой трети XVIII века 1967, 181.

⁵⁹ Армяно-русские отношения в первой трети XVIII века 1967, 181.

⁶⁰ Армяно-русские отношения в первой трети XVIII века 1967, 158-172.

⁶¹ Այվազյան 2023, 151:

Ձորագյուղի մարտիկները մասնակցել են Երևանի ինքնապաշտպանական առաջին կռիվներին, և նրանց անհետացման «առեղծվածը» «բացահայտված է» Աբրահամ Երևանցու կողմից

«Ձորագյուղի մարտիկների առեղծվածային անհայտացումը» ենթավերնագրի ներքո Ա. Այվազյանն ի սկզբանե գրում է, որ Ա. Եղիազարյանի «հողվածում կան նաև այլ կոպիտ սխալներ»⁶², փորձելով տպավորություն ստեղծել, թե մինչ այդ արդեն ներկայացրել է նման մի քանիսը: Թե ինչպես է նա այդ արել, արդեն ցույց տրվեց:

Այս անգամ նա խոսում է ըստ Աբրահամ Երևանցու՝ Երևանի ինքնապաշտպանության նպատակով քաղաքի թաղամասերից կատարված զորահավաքի ժամանակ Ձորագյուղից հավաքված երեք հազար զինվորների մասին, որոնք, իմ կարծիքով, զինվորագրվել էին այնտեղ ապաստանած՝ Երևանի շրջակա գյուղերի հայ գաղթականներից⁶³: Ա. Այվազյանը ճշտող հարց է տալիս՝ իսկ այդ դեպքում ո՞ր էին անհետացել Ձորագյուղի բնակիչները, որից կարելի է բխեցնել, որ նա այդ մասին տեղյակ չէ: Նրա միտքն այն է, որ ես չեմ նկատել, որ իմ «հապճեպ եզրակացության տրամաբանությամբ, ձորագյուղիները Երևանի պաշտպանությանը չեն մասնակցել, ինչը կատարյալ անհեթեթություն է»⁶⁴:

Իսի՛ստ է ասված, բայց ասված է այն, ինչ ասված է: Ուստի ճշտենք, թե ո՞վ է կատարյալ անհեթեթություններ գրում:

Անշուշտ, այդ ճշտող հարցը Ա. Այվազյանն իրե՛ն պետք է տար, քանի որ պատասխանն առկա է Աբրահամ Երևանցու տեքստում, իսկ նա իրեն այդ տեքստի գիտակ է համարում և ամեն պատեհ ու անպատեհ առիթով վկայակոչում իր իսկ հետազոտությունները. ուրեմն ինչո՞ւ այս հարցի պատասխանը չունի: Այս առումով տեղին է կրկին անդրադառնալ Վ. Դիլոյանի վերոհիշյալ գրախոսությանը, որտեղ գիտնականը մասնավորաբար պարզել է, որ «Երբեմն Ա. Այվազյանը զարմանալի անիրազեկություն է դրսևորում խնդրո առարկա ժամանակաշրջանին բնորոշ երևույթներն ու վավերագրերում ընդունված սովորական բանաձևումները մեկնաբանելիս»⁶⁵:

Իհարկե, ձորագյուղիները մասնակցել են Երևանի պաշտպանությանը, բայց ոչ այնպես և այն ժամանակ, ինչպես մտածում է Ա. Այվազյանը: Բացատրեմ. ըստ Աբրահամ Երևանցու ներկայացրած «հստակ դիպաշարի» (Ա. Այվազյանի կիրառած բառակապակցությունն է)՝ օսմանյան զորքը ապրիլի սկզբին հասնում է Երևանի մատույցներ, որի պատճառով Երևանի շրջակա գյուղերի բնակիչները ապաստանում են Երևանում: Երևանի հայությունը պատրաստվում է ինքնապաշտպանության, որն արդյունքում 60 օր է

⁶² Այվազյան 2023, 154:

⁶³ Եղիազարյան 2022, 56-57, ծանոթ. 4:

⁶⁴ Այվազյան 2023, 154-155:

⁶⁵ Դիլոյան 2004, 303:

տևում: Քանի որ քաղաքը ոչ մի կերպ գրավել չէր լինում, օսմանյան բանակին անընդհատ օգնական ուժեր էին գալիս: Մի քանի օր անց օսմանյան զորամասերին հաջողվեց ներխուժել Ձորագյուղ: Ձորագյուղցիները՝ Հունդի բեկենց Յոհանի (Հովհաննես Հունդիբեկյան) և այլոց գլխավորությամբ կարողացան պաշտպանվել մինչև կեսօր: Այդ ժամանակ, ներխուժած օսմանյան զորքից խուսափելով, «**Ձորայգեղեցի Գրիգոր վարդապետն, ինչպի որ ժողովուրդունէր, բովան առավ մտավ Ձորայգեղայ Սուրբ Սարգիս վանքն: Էն օրն բռ [=2.000] քրիստոնայ սրով անցավ...**»⁶⁶:

Պահրոգ է, թե ուր էին անհետացել ձորագյուղցիները. նրանց մի մասը (տղամարդիկ) «Ձորայգեղեցի Հունդի բեկենց Յոհանի» և այլոց գլխավորությամբ կատաղի մարտ էր տվել թշնամուն՝ կրելով ծանր կորուստներ, իսկ մյուս մասին (հավանաբար կանանց, ծերերին և երեխաներին) կտորրել էին, քանի որ «Ձորայգեղեցի Գրիգոր վարդապետի ժողովուրդը» հենց ձորագյուղցիներն էին: Գուցե ոչ բոլորին էին կտորրել, բայց կռվում անխուսափելիորեն տված մեծաթիվ զոհերի և շուրջ երկու հազար կտորվածների իրողությունը բացահայտում է, թե ուր էին անհետացել ձորագյուղցիները⁶⁷:

Այնուհետև ինքնապաշտպանության հրամանատարները գիշերը հավաքվում և խորհուրդ են անում, որ «բազում հզորք շինեն, որ յառավուտուն թե օսմանցի գայ ի քաղաքի մէջն, հազիր լինեն, կռվեն»⁶⁸: Քանի որ հաջորդ առավոտյան թշնամին քաղաք չմտավ, Երևանում ապաստանեցին մոտակայքի գյուղերի՝ Փարաքարի, Գոգունբեթի, Կավակերտի, Առինջի, Ավանի, Գավանի, Ձագի, Նորագյուղի բնակիչները. «բովայդակ այս գեղերիս մարդն մտել ի քաղաքն. այս գեղերուս մարդն կամ քաղաքի մարդն կամ գեղերի մարդն միայրեցան, բովանդագ եղան ամենեքեան, որ պատվայկան բան այ, կան մարդիգն եղան թռ [=9.000] քրիստոնեայ, որ այս բանայկան այ, անբանն ոչ կարայ առնուլ ի ձեռն սուր»⁶⁹: Տեղեկությունից պարզ է, որ Ձորագյուղի կռվից և ձորագյուղցիների մի մասի կտորածից հետո Երևանում ապաստանում են մի քանի այլ գյուղերի բնակիչներ ևս, և ահա հենց այդ ժամանակ է, որ տեղի է ունենում վերոհիշյալ զորահավաքը, և Ձորագյուղում ապաստանածներից ու երևանցիներից հավաքվում է ինը հազար զինվոր, որոնք էլ կռվում են մինչև հունիսի սկիզբ:

Ըստ որում, Աբրահամ Երևանցին, ասես կանխազգալով հետագայում ուսումնասիրողների շփոթվելու հնարավորությունը, ի սկզբանե «ճշտում» է, որ Երևանում ապաստանածները «գեղերուս/գեղերի մարդ» են, իսկ

⁶⁶ Աբրահամ Երևանցի 1977, 25-26:

⁶⁷ Ա. Այվազյանը ձորագյուղցիների թիվը հասցնում է 15 հազարի (Այվազյան 2022, 198-212), սակայն նրա հաշվարկները ներկայացրածից հետո արդեն վստահություն չեն ներշնչում:

⁶⁸ Աբրահամ Երևանցի 1977, 28:

⁶⁹ Աբրահամ Երևանցի 1977, 28:

բուն Երևանի թաղամասերի բնակիչները՝ «քաղաքի մարդ»: Եվ հավաքված զինվորների մեջ հիշատակում է «Ձորայգեղայ հզորքն, որ է գո [=3.000] պատվայկան գեղից մարդիք...»⁷⁰, որոնց մենք, հիմնվելով նաև պատմագրի «այս գեղերուս մարդն կամ քաղաքի մարդն կամ գեղերի մարդն միայորեցան»⁷¹ տեղեկության և դրանից առաջ ձորագյուղացիների կոտորածի մասին հիշատակության վրա, նույնացնում ենք Երևանի շրջակա գյուղերից Երևանում (փաստորեն, Ձորագյուղի այն հատվածում, որը օսմանյան զորքը չէր գրավել, քանի որ աշխարհագրո հավաքագրելու ընթացքում այստեղ են գալիս նաև բոշաների 234 զինվորները) ապաստանածներից հավաքված զորքին: Ա. Այվազյանը, հակառակը, գրում է, որ «պատվայկան գեղից մարդիք» արտահայտությունը վերաբերում է ձորագյուղացիներին, քանի որ Ձորագյուղը «գեղ» կամ «գյուղ» էր կոչվում⁷², թեև Աբրահամ Երևանցին ինքը Ձորագյուղը միայն Ձորագյուղ է կոչում և երբեք՝ գյուղ կամ գեղ: Ճիշտ է, Աբրահամ Երևանցու «Ձորայգեղայ հզորքն, որ է գո [=3.000] պատվայկան գեղից մարդիք» արտահայտությունը հուշում է, որ այդ զորքը հավաքագրվել է Ձորագյուղում, բայց եթե կազմված լիներ ձորագյուղացիներից, ապա բավարար կլիներ միայն «Ձորայգեղայ հզորքն, որ է գո [=3.000] պատվայկան մարդիք» արտահայտությունը, ինչպես որ արել է Երևանի մյուս թաղամասերի զորախմբերը նկարագրելիս. «Հին Երեանայ թաղի հզորքն, ...պատվայկան մարդիք» և այլն⁷³: Իսկ պատմագիրը հարկ է համարել նշել, որ նրանք «գեղից մարդիք» են, ինչպես որ դրանից քիչ առաջ էր տարբերակել «գեղերուս/գեղերի մարդ»-ը «քաղաքի մարդ»-ից: Եվ դա Աբրահամ Երևանցու կողմից Ձորագյուղի՝ գյուղ և նրա բնակիչների՝ գյուղացիներ հանդիսանալու արձանագրումը չէ, ինչպես փորձում է պնդել Ա. Այվազյանը, այլ հատուկ նշում նրանց՝ հենց «գեղից մարդիք» կամ «գեղերուս/գեղերի մարդ» լինելու մասին, այլապես այլ թաղամասերից հավաքված զինվորների մասին խոսելիս նույն տրամաբանությամբ «պատվայկան մարդիք»-ի փոխարեն պետք է, որ ասեր՝ «պատվայկան քաղաքի[ց] մարդիք»: Բայց չի ասում, քանի որ նրանք հենց այդ թաղերի բնակիչներն էին՝ ի տարբերություն «Ձորայգեղայ հզորքի», որ Ձորագյուղի բնակիչները չէին: Քանի որ Աբրահամ Երևանցին սկզբում գրել էր, որ Երևանում ապաստանած գյուղացիները և քաղաքի բնակիչները միավորվել էին, այժմ էլ հարկ է համարել նշել, թե որտեղ զորքը գյուղացիներից էր հավաքվել, իսկ որտեղ՝ քաղաքացիներից:

Այսքանից հետո, երբ ակնհայտ է, որ Աբրահամ Երևանցին հստակորեն ներկայացնում է Երևանի ինքնապաշտպանության առաջին օրերի՝ նախքան

⁷⁰ Աբրահամ Երևանցի 1977, 28:

⁷¹ Աբրահամ Երևանցի 1977, 28:

⁷² Այվազյան 2023, 155:

⁷³ Աբրահամ Երևանցի 1977, 28:

Երևանի հայերի շրջանում կատարված զորահավաքը տեղի ունեցած դեպքերը՝ ներկայացնելով օսմանյան զորքի առաջին գրոհների ուղղությունները և լույս սփռելով ձորագյուղացիների իբրև թե առեղծվածային անհետացման վրա, մնում է զարմանք հայտնել, որ Երևանի ինքնապաշտպանության ժամանակագրությունը և հանգամանքները «որոշել» հավակնող հեղինակը անտեղյակ է ձորագյուղացիների մասնակցությանը քաղաքի ինքնապաշտպանությանը և նրանց պատուհասած դժբախտությանը: Դրա պատճառով էլ նրա գլխում ծնվել է «ո՞ր էին անհայտացել ...Ձորագյուղի բնակիչները» հարցը⁷⁴ և դրանից բխող իմաստագուրկ եզրահանգումը:

Երևանի կառուցվածքի մասին Ա. Այվազյանի կարծիքները սխալ են

Իր կարծիքով՝ ամենածանր հարվածը Ա. Այվազյանը «պահել» է վերջում՝ այդ ամենը ներկայացնելով «Եգրոյթների թյուրըմբռնում և շփոթ («Մեծ արվարձանը» ...«փոքրիկ արվարձանն է»)» վերնագրի ներքո:

Նա սկզբում մի ուսուցողական էքսկուրս է կատարում՝ բացատրելով միջնադարյան և ուշմիջնադարյան քաղաքների կառուցվածքը և կառուցվածքային մասերի տարածված անվանումները, ինչպես, օրինակ, հայտնի մի բան՝ արվարձանի «վարոշ» կոչվելը⁷⁵, որից հետո ցավ է ապրում, որ «Ա. Եղիազարյանն այս աղբյուրագիտական հարցերի վերաբերյալ առկա մեթոդաբանությունն ու եզրաբանությունը չի կիրառել, ինչը հանգեցրել է լուրջ սխալների ու շփոթությունների»⁷⁶:

Հենց այսպես, ո՛չ ավելի, ո՛չ պակաս:

Այժմ էլ ցավ արտահայտելու ի՛մ հերթն է: Յավոք, Ա. Այվազյանն իր ասածը հիմնավորելու համար իմ կարծիքը ներկայացնում է համատեքստից կտրված, ուստի ստացվում է, որ ես գրել եմ, որ չպետք է վարոշը (իմա՛ արվարձան) շփոթել քաղաքի հետ: Բայց չի գրում այն մասին, որ ես այդտեղ գրել եմ Երևանի բերդի պարիսպների հարևանությամբ ձևավորված մի նոր վարոշ-արվարձանի մասին՝ հաշվի առնելով այն, որ Երևանի հայկական թաղամասերը միասնաբար նաև քաղաք են կոչվել⁷⁷: Ես նշել եմ, որ քանի որ Երևանի հայկական թաղամասերը, ըստ Աբրահամ Երևանցու՝ գրավվել էին դեռևս հունիսի առաջին կեսի դրությամբ, իսկ Չելեբի-Չադեն ներկայացնում է Երևանի վարոշի գրավման պատմությունը որպես հունիսի վերջին տեղի ունեցած դեպք, ապա պետք է հասկանալ, որ Երևանի բերդին կից այդ ժամանակ առանձին արվարձան կար ձևավորված, որը ցույց են տալիս օսմանցի հեղինակներ Չելեբի-Չադեի և Էվլիյա Չելեբիի տեղեկությունները:

⁷⁴ Այվազյան 2023, 154:

⁷⁵ Այվազյան 2023, 158-159:

⁷⁶ Այվազյան 2023, 159:

⁷⁷ Tournefort 1741, 178-182, The Travels of sir John Chardin into Persia and East Indies 1686, 246.

Չելեբի-Չաղեն գրում է, որ Երևանի բերդի պաշարումը կապված էր վարոշի գրավման հետ, այսինքն՝ բերդը պաշարելուց առաջ անհրաժեշտ էր գրավել վարոշը, որը և տեղի ունեցավ հունիսի վերջին: Օսմանյան զորքի մի մասն անցավ կամրջով, իսկ մյուս մասը՝ լողալով. «երկու ժամվա ընթացքում 10 հազարի չափ կըզըլբաշների սրո ճարակ դարձրին և ամբողջ վարոշը նրանց կեղտոտ մարմիններից ազատեցին և մաքրեցին: Բացի այդ, ժողովրդից 10 հազարից ավելի ընտանիք և երեխաների գերի վերցրին...: ...վարոշի պարիսպների մոտ գտնվող և նրանց կից տները ամբողջովին հողին հավասարվեցին և շուրջանակի պարիսպների շրջակայքը ազատ հրապարակի վերածվեց: Այս կերպով հաղթական բանակը կարողացավ վարոշը գրավել»⁷⁸:

Արդյոք Չելեբի-Չաղեի այս նկարագրությունը, որը Ա. Այվազյանը վերագրում է հայկական թաղամասերի գրավմանը, որևէ նմանություն կամ առնչություն ունի՞ Աբրահամ Երևանցու նկարագրածի հետ: Իհարկե՞ ոչ: Այդ վարոշը գտնվում էր բերդի պարիսպներին կից, օսմանյան բանակը այն գրոհել է՝ անցնելով կամրջով կամ լողալով, այնտեղ կոտորվել է 10 հազար իրանցի⁷⁹, վարոշի՝ բերդին կից տները քանդվել են, այնտեղ ազատ տարածք է ձևավորվել, որից հետո պաշարվել է բերդը: Իսկ Աբրահամ Երևանցուց հայկական թաղամասերի գրավման մասին բոլորովին այլ բան է հայտնի: Իրականում, քանի որ հայկական թաղամասերը գրավվել էին մինչ այդ, ուրեմն դա ուրիշ արվարձան էր, որն ամրոցին կից էր և հավանաբար իրանցիներով բնակեցված, քանի որ այնտեղ հենց իրանցիներ էին կոտորվել: Ի դեպ, Երևանի հայկական հատվածի ինքնապաշտպանության ժամանակ Աբրահամ Երևանցու կողմից իրանցիների, այն էլ՝ 10 հազարի, սպանության դեպքեր հիշատակված չեն:


Մյուս կողմից, Ժ. Շարդենի տեղեկություններից հայտնի է, որ հայերով բնակեցված քաղաքը գտնվում էր բերդից թնդանոթային կրակոցի հեռավորության վրա⁸⁰, իսկ Չելեբի-Չաղեի նշած վարոշը բերդի պարսպին կից էր: Ճիշտ է՝ Ժ. Շարդենի տեղեկությունները վերաբերում են 1670-ական թթ. սկզբներին, որից հետո՝ 1679 թ., տեղի է ունեցել Երևանի երկրաշարժը, սակայն քաղաքի հատակագծում երկրաշարժից հետո առանձնապես զգալի փոփոխություններ տեղի չեն ունեցել: Այդ իրողությունն արձանագրված է նաև Ժ. Շարդենի և Ժ.-Բ. Տավերնիեի տեղեկություններով կազմված՝ Երևանի գծապատկերներում⁸¹:

⁷⁸ «Թուրքական աղբյուրները» 1961, 143:

⁷⁹ «Կըզըլբաշներ» թուրքերը անվանում էին պարսիկներին: Волкова 1980, 209:

⁸⁰ The Travels of John Chardin into Persia and East Indies 1686, 246.

⁸¹ The Travels of John Chardin into Persia and East Indies 1686, 226-226, The Six Voyages of John Baptista Tavernier 1678, 14-15, Atlas des voyages de Tavernier 1810, pl. V.




The Platform of Erevan and the Suburbs.

- A. The Town and Fort.
- B. The Suburbs, inhabited by the Armenian Christians.
- C. The Church.
- D. The Convent.
- E. The Tower of Singul-cija.
- F. The Stone-Bridge.
- G. The Highway for the Caravans.
- H. The Fort which Sha-Seli built to batter the City.
- I. The River that falls from the Mountain.
- K. The Highway to Tauris.
- L. The Way to Teflis the chief City of Georgia, and the Way to the Mountains where the Kan of Erevan goes twice a Summer to drink.
- M. The Market-places, for Sale of Goods.

Նկ. 1. Ժ.-Բ. Տավերնիեի աշխատության 1678 թ. հրատարակությունից



Նկ. 2. Ժ. Շարդենի աշխատության 1686 թ. հրատարակությունից



Նկ. 3. Ժ.-Բ. Տավերնիեի գծապատկերների ատլասից (1810)

Ընդհանուր առմամբ, սա էր իմ կարծիքը Երևանի բերդին կից ոչ հայաբնակ վարոշի մասին, որը չպետք է շփոթել հայկական թաղամասերի հետ, որին Ա. Այվազյանը, տեսանք, թե ինչպես է արձագանքում: Հավանաբար, իմ կարծիքը նրան անհասկանալի է եղել:

Հենց չհասկանալն է պատճառը, որ Ա. Այվազյանը գրում է նաև, թե իբր ես «հայտնագործել եմ», որ մեծ վարոշը, այսինքն՝ «Հին քաղաքը» կամ, ըստ նրա՝ «Հին Երևանը» բնակեցված է եղել մուսուլմաններով⁸²: Եթե ես այդպիսի բան գրեի, ապա դա կլիներ ոչ թե «հայտնագործություն», այլ հրեշավոր սխալ: Եվ ինչպես կարող էի ես նման բան գրել, եթե ասում եմ, որ Երևան քաղաքում բնակվել է 30 հազար հայ⁸³: Ես դա ասել եմ Չելեբի-Չադեի նկարագրած վարոշի մասին, իսկ այն որևէ կապ չուներ հայկական թաղամասերի հետ. այն բերդի պարսպին և Երևանի բերդ տանող կամրջին կից էր (ինչպես կտեսնենք, Էվլիյա Չելեբին ևս այստեղ առանձին վարոշ է ներկայացնում), իսկ հայկական թաղամասերը բերդին և կամրջին հարակից չէին: Հենց այդ վարոշն էր, իմ կարծիքով, բնակեցված մուսուլմաններով և ոչ թե Հին Երևանը, ինչպես փորձում է ներկայացնել Ա. Այվազյանը: Նրան հավանաբար

⁸² Այվազյան 2023, 164:

⁸³ Եղիազարյան 2022, 66:

շփոթեցրել է այն, որ ես Էվլիյա Չելեբիի ներկայացրած վարոշը չեմ նույնացնում հայկական թաղամասերի հետ, հիմնվելով հեղինակի՝ «Յայլայի դարպասից դուրս գտնվող արվարձանը կոչվում է հին քաղաք (էսքի շեհիր)։ Կամուրջի գլխին խանի այգին է և արվարձան՝ մզկիթով և բաղնիքով»⁸⁴ տեղեկության վրա, որը ցույց է տալիս այլ արվարձանի գոյությունը։ Գուցե ասվածը հավելյալ հիմնավորումների կարիք ունի, որոնք կներկայացնեն ստորև, բայց իմ խոսքը որևէ կերպ չի նշանակում, թե Հին Երևանը բնակեցված է եղել մուսուլմաններով։ Դա էլ Ա. Այվազյանի՝ հայտնագործությունն է՝ կատարված իմ ներկայացրածի ոչ ճիշտ համադրմամբ։ Իսկ թե ինչու՞ է նա այդ արել, թող դարձյալ ընթերցողը որոշի ինքնուրույն՝ հաշվի առնելով նրա «քննական գրախոսության» վերաբերյալ վերևում նշված բացահայտումները։

Ինչ վերաբերում է սկզբնաղբյուրների հետ աշխատելու իր՝ Ա. Այվազյանի «մեթոդին», ապա ներկայացնենք մի հույժ հետաքրքրական դրվագ։ Քանի որ նա փորձել է Երևանի 1724 թ. ինքնապաշտպանությունը և դրա ժամանակագրությունը «որոշել» Աբրահամ Երևանցու և օտար աղբյուրների տեղեկությունների սխալ համադրումով, ստիպված է եղել որոշակի անհարկի «շտկումներ մտցնել» Երևանի խնդրո առարկա շրջանի հատակագծում, ինչպես նաև կատարել անհիմն նույնացումներ։ Ներկայացնելով Էվլիյա Չելեբիի կողմից Երևանի 1640-ականների նկարագրությունը (**«Բերդը գտնվում է Չանգի գետի եզերքին, ձգված է հարավից դեպի հյուսիս և շատ նեղ է։ ...Ունի երեք հաստատուն երկաթե դարպաս։ Թավրիզի դարպասը բացվում է դեպի հարավ, Մեյդանի դուռը՝ դեպի հյուսիս։ Վերջինս կոչվում է նաև Յայլայի դարպաս...։ Մի դուռն էլ աջեմների Դերվազի-փել կոչված կամրջի դարպասն է։ ...Քաղաքում կան մոտ 2060 հողածածկ տներ։ Ամենալավ շինությունը խանի դղյակն է...։ Յայլայի դռնից դուրս գտնվող մեծ վարոշը կոչվում է Էսքի շեհիր (հին քաղաք – Ա.Ե.)։ Այս վարոշում կա խան, ցամի, շուկա, բազար։ Խանի այգին գտնվում է կամրջի ծայրին։ Այստեղ էլ ցամի, խան, բաղնիք և շուկաներ կան, կարծես քաղաք լինի»⁸⁵)՝ նա գրում է, որ հեղինակը, խոսելով «հին քաղաքի» կամ «մեծ վարոշի» մասին, «զարմանքով շեշտում» է, որ այն «մի իսկական քաղաք է»⁸⁶։ Ստացվում է, որ հեղինակը գրել է, թե **քաղաքը մի իսկական քաղաք է** և այն էլ՝ զարմանքով։ Ինչ անմտություն։ Այսինքն՝ ներկայացնելով մի արվարձան, որը նա «հին քաղաք» է կոչում, ինչո՞ւ պետք է հավելեր, որ այն իսկական քաղաք է, չէ՞ որ այն արդեն քաղաք է կոչել։ Մի՞թե կարելի է ասել՝ «քաղաքը մի իսկական քաղաք է» և զարմանալ։ Հենց աղբյուրի տեղեկության նման ընկալմամբ էլ նա**

⁸⁴ Եղիազարյան 2022, 66: Հղումը բերված է Էվլիյա Չելեբիի տեքստի անգլերեն թարգմանությունից: Evliya Efendi 1850, 153:

⁸⁵ Էվլիյա Չելեբի 1967, 84-85:

⁸⁶ Այվազյան 2023, 160:

ոչ միայն Էվլիյա Չելեբիին է վերագրում «հին քաղաքը ...մի իսկական քաղաք է» տարօրինակ ու անմիտ տեղեկությունը, այլև փորձում հերքել իմ նշածը քաղաքի պարսպի հարևանությամբ ձևավորված և օսմանյան բանակի կողմից ոչնչացված վարոշի մասին:

Փաստորեն, նա տեսնում է, որ Էվլիյա Չելեբին հին քաղաքի մասին սկզբում գրում է, որ այնտեղ կան խան, ջամի, շուկա, իսկ հետո շարունակում, թե «կամրջի ծայրին» գտնվող խանի այգու մոտ ևս կան խան, ջամի, շուկաներ, և, ըստ որում՝ հենց այդ վերջինն է, որ «կարծես քաղաք լինի»: **Սակայն նշվածը Ա. Այվազյանն առանց երկմտելու վերագրում է հին քաղաքին կամ Հին Երևանին: Որտեղ է խանի այգին և որտեղ՝ Հին Երևանը. դրանք պատահականորեն շփոթելու հավանականությունն իրականում աննշան է:** Այսպիսով՝ պարզ է, թե ինչպես է ծնվել «հին քաղաքը ...մի իսկական քաղաք է» անմիտ արտահայտությունը Ա. Այվազյանի տեքստում:

Վերջում անհրաժեշտաբար դեռ մանրակրկիտ կքննարկեմ Էվլիյա Չելեբիի տեղեկության վերջին հատվածը, որով վերջնականապես կհամոզվենք, որ հայկական Հին Երևանը կամ մեծ վարոշը և իսկական քաղաքի նմանվող վարոշը տարբեր բաներ էին:

Ա. Այվազյանի «քննական գրախոսության» այս հատվածում կան նաև հիշատակելու արժանի այլ անհիմն դիտարկումներ: Մասնավորապես, նա գրում է, որ Երևանի բերդից դուրս գտնվող բոլոր թաղամասերն էլ արվարձան (վարոշ) էին, և բոլորն էլ՝ Երևանի մաս⁸⁷, կարծես թե հանդիպել է պնդման, որ Երևանի հայկական թաղամասերից որոշները Երևանի մաս չէին: Այնուհետև նա հավելում է, որ Էվլիյա Չելեբին «քաղաք» ասելով «հատկանշում էր ինչպես բերդը, այնպես էլ նրան կից որոշ արվարձանները, ներառյալ, ըստ ամենայնի՝ Ձորագյուղն ու Կոնդը»⁸⁸: Այն, որ քաղաք ասելով Էվլիյա Չելեբին նկատի ուներ բերդը, ակնհայտ է այն իրողությունից, որ նա այնտեղ է հիշատակում խանի դղյակը («Քաղաքում կան մոտ 2060 հողածածկ տներ: Ամենալավ շինութիւնը խանի դղյակն է...»⁸⁹), սակայն տարօրինակ է, որ նա կարող էր քաղաք համարել բերդը՝ Երևանի հայկական թաղամասերից երկուսի (շուտով «կպարզվի», որ երեքի) հետ միասին:

Ա. Այվազյանի այս տեսակետը մի շարք սխալ շերտեր ունի ինչպես հայկական թաղամասերի՝ իբրև թե բերդին կից լինելու պնդման, այնպես էլ Երևանի կառուցվածքի պատկերացման առումով: Նախ, փաստորեն, ստացվում է, որ, ըստ Ա. Այվազյանի՝ Կոնդը բերդին կից էր: «Կից» բառի իմաստը հստակ է՝ «Կողքին՝ մոտիկ գտնվող», «մոտ, մոտիկ, մերձավոր», «կցված, հետը

⁸⁷ Այվազյան 2023, 160:

⁸⁸ Այվազյան 2023, 160:

⁸⁹ Էվլիյա Չելեբի 1967, 85:

եղող»⁹⁰: Ձորագյուղը դեռ ոչինչ, բերդից այնքան էլ հեռու չէր, թեև դարձյալ կից չէր: Բայց Կոնդը...: Ա. Այվազյանը, որ իր հողվածում Հին Երևան թաղամասի՝ բերդի պարիսպներին հասնելու հարցում հղում է Երվանդ Շահագիզի «Հին Յերեվան» գիրքը, գոնե նայել այդ գրքի 228-229 էջերի ներդիրում տեղադրված Երևանի հատակագիծ-քարտեզը (ըստ Ղ. Ալիշանի), որտեղ երևում է, որ Ձորագյուղը մինչև բերդ չէր հասնում, իսկ Կոնդը գտնվում էր ավելի հեռու և նույնիսկ վառ երևակայության դեպքում բերդին կից համարվել չէր կարող⁹¹:

Ի դեպ, այն, որ հայկական թաղամասերը բերդին կից չէին, այլ նրանից զգալիորեն հեռու, ներկայացնում է Ժ. Շարդենը, որ, ինչպես տեսանք, գրում է, թե քաղաքը գտնվում էր բերդից թնդանոթային կրակոցի հեռավորության վրա: Այդ իրողությունն է արտահայտված նաև նույն Ժ. Շարդենի և Ժ.-Բ. Տավերնիեի՝ Երևանի գծապատկերներում (տե՛ս հավելվածը), որտեղ երևում է նաև, որ հայկական թաղամասերը բերդին կից չէին: Մինչդեռ հայտնի է պարսպին կից մուսուլմանների տների գոյության մասին նախկինում՝ մինչ վերոհիշյալ հեղինակների այցելությունը: Օրինակ՝ 1603 թ. դրությամբ, բերդի պարսպին կից՝ արտաքուստ, մուսուլմանների տներ կային: Ըստ օսմանցի պատմագիր Նայիմայի, ստանալով Իրանի Շահ Աբաս Ա-ի (1587-1629) զորքի առաջխաղացման լուրը, Երևանի օսմանյան կառավարիչները հասկանում են, որ Նախիջևանից նահանջող իրենց զինվորներին Երևանի բերդում տեղավորել չեն կարող և որոշում են դրա հարավային կողմից պարսպին կից մուսուլմանների տների հատվածում նոր պարիսպ կառուցել: Արդյունքում, նրանք բերդի հարավային, արևելյան և արևմտյան կողմերում նոր ու բարձր պարիսպներ են կառուցել⁹²: Պարզ է, որ բերդի պարիսպներին կից մուսուլմանների համար ավելի հեշտ էր հաստատվել, իսկ հայերը բերդից հեռու էին մնում:

Ի՞նչ է ստացվում. հայկական թաղամասերը բերդին կից չէին, բացի դա էլ՝ որևէ տրամաբանություն ու հիմք չկար բերդը արվարձան հանդիսացող թաղամասերից երկուսի հետ առանձնաբար քաղաք ընկալելու մեջ, քանի որ դրանք առանձին ամբողջություն չէին: Բայց քանի որ Ա. Այվազյանը սխալմամբ կարծում է, որ «հին քաղաք» կամ «մեծ արվարձան» ասելով՝ Էվլիյա Չելեբին նկատի է ունեցել միմիայն Երևանի Հին Երևան թաղամասը, որն ամենամեծն էր բոլոր թաղամասերի մեջ⁹³, ուստի կամայականորեն մնացած թաղամասերն էլ «միավորել» է բերդի հետ «քաղաքի» շրջանակներում: Ինչ վերաբերում է Երևանի Ջուհայրենց թաղին, ապա պարզվում է, որ Ա. Այվազյանն այն ևս համարում է իր պատկերացրած «քաղաքի» մաս՝ գրելով, որ «1640-ական թվա-

⁹⁰ Աղայան 1976, 736:

⁹¹ Շահագիզ 1931, 228-229 (ներդիր):

⁹² Թուրքական աղբյուրները 1961, 71:

⁹³ Այվազյան 2023, 162-163:

կաններին Երևանում Չելեբիի նշած «2060 հողածածկ տներում» (իրականում Էվլիյա Չելեբին այս դեպքում խոսում է ոչ թե Երևանի մասին ընդհանրապես, այլ «քաղաքի», որը նույնանում է բերդին), այսինքն՝ Ձորագյուղ, Կոնդ և Ջուհարենց թաղերում ապրել է 20-25 հազար մարդ»⁹⁴: Այդ դեպքում ո՞ր մնաց Երևանի բերդը, չէ՞ որ Ա. Այվազյանի կարծիքով նշված թաղերի հետ այն «քաղաք» էր համարվում, թե՛ այնտեղ մարդիկ չէին ապրում:

Երևանի գծապատկերներին նայողը միայն զարմանալ կարող է Ա. Այվազյանի եզրահանգումից, որը, ի դեպ, նաև որևէ կերպ չի բխում հղված աղբյուրի տրամաբանությունից: Այդքանից հետո էլ Ա. Այվազյանն ի՛նձ է մեղադրում անտեղյակության և սխալների մեջ⁹⁵:

Ա. Այվազյանի կողմից «հին քաղաքի» նույնացումը Հին Երևան թաղամասին կարող է գայթակղիչ լինել, բայց պետք է հիշել, որ որևէ ականատես հեղինակ հայկական թաղամասերն առանձին-առանձին չի հիշատակում, առավել ևս՝ դրանցից երեքը, բերդի հետ, որպես «քաղաք», իսկ Հին Երևան թաղամասը՝ որպես «հին քաղաք», քանի որ դա չէր բխում Երևանի կառուցվածքից: Երևանը բաղկացած չէր բերդը, Ձորագյուղը, Կոնդն ու Ջուհարենց թաղը իբրև թե ընդգրկող «քաղաքից» և Հին Երևան թաղամասից, այլ բերդից և նշված թաղամասերն ընդգրկող հատվածից, ինչպես հիշատակված է տարբեր հեղինակների կողմից: Բացի այդ, Երևանի նշված գծապատկերներից երևում է, որ այդ թաղամասերի միջև ընդգծված սահմանագծեր չկային: Եվ իրականում մի բան ակնհայտ է. Էվլիյա Չելեբին քաղաք է կոչում բերդը, իսկ հին քաղաք կամ մեծ արվարձան՝ քաղաքի հայկական թաղամասերը՝ միասին վերցրած: Այդպես է արել նաև ֆրանսիացի ճանապարհորդ Ժ.-Բ. Տավերնիեն, որ 1630-ական թթ. և այնուհետև եղել է Երևանում և ուշագրավ տեղեկություններ է հաղորդել բերդի ու արվարձանի մասին: Ըստ նրա՝ բերդում ապրում էր խանն իր սպաներով ու զինվորներով, իսկ «Երևանի թաղը (quartier), որը [բերդի] հյուսիս-արևմուտքում մի արվարձան (fauxbourg) է, ուր քսան անգամ ավելի ժողովուրդ կա, քան քաղաքում»⁹⁶ (իմա՝ բերդում-Ա.Ե.): Սա բոլոր վաճառականների և արհեստավորների, ինչպես նաև բոլոր հայերի ապրելատեղին է», որոնք այնտեղ չորս եկեղեցի և մեկ վանք ունեին⁹⁷: Երևանի գծապատկերում էլ կրկին շեշտված է՝ «արվարձանը՝ բնակեցված քրիստոնյա հայերով»⁹⁸: Ինչպես տեսանք, Ժ. Շարդենը հայտնում է, որ հայերով բնակեցված քաղաքը գտնվում էր բերդից թնդանոթային կրակոցի հե-

⁹⁴ Այվազյան 2023, 161, ծանոթ. 96:

⁹⁵ Այվազյան 2023, 161:

⁹⁶ Թարգմանությունը Մ. Կարապետյանի: Կարապետյան 1986, 100:

⁹⁷ Les Six Voyages de Jean Baptiste Tavernier 1679, 38, The Six Voyages of John Baptista Tavernier 1678, 13-14.

⁹⁸ Les Six Voyages de Jean Baptiste Tavernier 1679, 40-41, The Six Voyages of John Baptista Tavernier 1678, 15.

նավորության վրա: 1700 թ. Երևան այցելած գերմանացի ճանապարհորդ Ֆ.Կ. Շիլլինգերը պատմում է, որ բերդում ապրում էին միայն պարսիկներ, իսկ արվարձանում՝ նրանցից 10 անգամ ավելի շատ հայեր⁹⁹: Մեկ տարի անց Երևան այցելած Ժ.Պ. Տուրնեֆորը հայկական թաղամասերը կամ ընդհանուր Երևան և կամ «քաղաք» ձևով է հիշում¹⁰⁰:

Այդպե՛ս էր պատկերանում Երևանը օտարերկրացիներին, քանի որ հենց այդպիսին էր նրա կառուցվածքը, ուստի **Էվլիյա Չելեբիի հիշատակության՝ Ա. Այվազյանի մեկնաբանությունը, մեղմ ասած, չափազանց կասկածելի է, իսկ եթե առավել որոշակի՝ միանգամայն անհիմն:**

Վերջապես, անդրադառնանք Էվլիյա Չելեբիի տեղեկությանը Երևանի արվարձանի վերաբերյալ, որն ի ցույց է դնում Ա. Այվազյանի սխալ ընկալումը Երևանի կառուցվածքի մասին: Հեղինակը մասնավորապես գրում է, որ «Այս վարոշում (մեծ վարոշ կամ հին քաղաք-Ա.Ե.) կա խան, ջամի, շուկա, բազար: Խանի այգին գտնվում է կամրջի ծայրին: Այստեղ էլ ջամի, խան, բաղնիք և շուկաներ կան, կարծես քաղաք լինի»¹⁰¹: Հեղինակի երկի անգլերեն թարգմանության մեջ նույնն է՝ «Յայլայի դարպասից դուրս գտնվող արվարձանը կոչվում է հին քաղաք. կամուրջի գլխին խանի այգին է և արվարձան՝ մզկիթով և բաղնիքով» (“The suburb outside of Yaila Kapûssi is called the old town; at the head of the bridge is the Khan's garden, and a suburb with mosque and bath”¹⁰²): Ի դեպ, ռուսերեն թարգմանությունը, որ օգտագործել է Ա. Այվազյանը, քիչ թերի է և հետևյալ տեսքն ունի. «Большое предместье, расположенное перед воротами Яйлы, называют также Старым городом. В этом предместье есть караван-сарай, соборная мечеть, рынок и базар. У моста разбит ханский виноградник. Здесь есть также много соборных мечетей, ханов, бань, рынков - это настоящий город»¹⁰³: Որոշակիորեն տարբերվում է հիշատակության արդի թուրքերեն տարբերակը, որը թարգմանվում է հետևյալ կերպ. «Իսկ Յայլայի դարպասից [դուրս գտնվում է] գավառական մեծ վարոշը, որը նրանք կոչում են Էսքի շեհիր: Խանով (իջևանատուն), ջամիով (մզկիթ) ու բազարով (շուկա) վարոշ է: Իսկ կամրջի գլխին խանի այգին է..., [այնտեղ կա] ջամի, խան և շեհիր (քաղաք)՝ համամով (բաղնիք) ու բազարով: Կարճ ասած, սա ...մի մեծ քաղաք է»¹⁰⁴: Մի՞թե ակնհայտ չէ, որ խոսքը ուղղակի հիշատակված երկու տարբեր արվարձանների մասին է, քանի որ խանի այգին, որի մերձակայքում գտնվում էր մյուս արվարձանը [այն թուրքերեն տեսքստում պարզապես շեհիր (քաղաք) ձևով է հիշատակված], տարածվում էր

⁹⁹ Schillinger 1707, 118.

¹⁰⁰ Tournafort 1741, 178-182.

¹⁰¹ Էվլիյա Չելեբի 1967, 85:

¹⁰² Evliya Efendy 1850, 153.

¹⁰³ Эвлия Челеби 1983, 155.

¹⁰⁴ Evliyâ Çelebi Seyahatnâmesi 2005, 327.

բերդից դեպի արևմուտք՝ կամրջի հարևանությամբ: Եվ մի՞թե սա, համադրելով Չելեբի-Չադեի տեղեկությունների հետ, բավարար չէ կարծելու, որ Երևանի բերդի շրջակայքում՝ կամրջին մոտ (ի դեպ, պատահական չէ, որ Չելեբի-Չադեն, ներկայացնելով բերդի պաշարումից առաջ նրան կից վարոշի գրավումն ու ոչնչացումը, պատմում է օսմանցի զինվորների՝ մինչ այդ կամուրջն անցնելու մասին¹⁰⁵), մի արվարձան էլ էր ձևավորվել, որտեղ հազարավոր իրանցիների էին սպանել օսմանցի զինվորները: Ըստ որում, քանի որ հայկական թաղերը, ըստ Աբրահամ Երևանցու՝ արդեն գրավված էին, ուստի հունիսի վերջին ոչնչացված վարոշը, ամենայն հավանականությամբ, հենց դա էր: Իսկ Ա. Այվազյանը փորձում է Չելեբի-Չադեի նշած արվարձանի գրավումը նույնացնել Հին Երևանի և բերդին կից որոշ թաղամասերի գրավման հետ¹⁰⁶:

Ասվածից հետո, երբ պարզ են Ա. Այվազյանի «քննական գրախոսության» որակն ու դրդապատճառները, հույժ հետաքրքրական է այն, թե ինչի վրա է ի վերջո կանգ առնում նա: Ա. Այվազյանը գրում է, թե իբր «Ա. Եղիազարյանը, չկարողանալով ճիշտ վերծանել աղբյուրներում գործածվող «վարոշ», «արվարձան», «քաղաք», «բերդ» եզրույթները, խճճվել է մեթոդաբանական ու փաստական սխալներում»¹⁰⁷: Որ ասվածը կեղծ է ու անհիմն, արդեն ցույց տրվեց: Ընթերցողը կարող է տեսնել, թե աղբյուրային տեղեկությունների հիմքով ինչպես եմ ես վերծանել այդ եզրույթները և ինչպես՝ Ա. Այվազյանը: Վերջինս երևի «քաղաք» եզրույթն ինչպես հարկն է վերծանելուց հետո է, որ որոշել է իր «քննական գրախոսությունը» հրատարակության ներկայացնել քաղաքագիտական հանդեսում:

Այնուհետև մտահանգելով, թե «Կարդալով Ա. Եղիազարյանի հոդվածը՝ ընթերցողը հայտնվելու է եզրաբանական, աղբյուրագիտական և պատմափաստական սխալների անանցանելի մի լաբիրինթոսում»¹⁰⁸, Ա. Այվազյանն այնտեղ մոլորված ընթերցողին մեծահոգաբար առաջարկում է իր օգնությունը. «որից (նշված լաբիրինթոսից-Ա.Ե.) ճիշտ ելք գտնել կարելի է միայն նեղ մասնագիտական օգնությամբ՝ ի դեմս տվյալ քննական գրախոսության»¹⁰⁹: Նրան երևի թվում է, որ Երևանի 1724 թ. հերոսամարտի վերաբերյալ հիմնական սկզբնաղբյուր հեղինակի ականատես լինելու իրողությունը և հայության ինքնապաշտպանական կռիվների վերաբերյալ նրա ներկայացրած ժամանակագրական տեղեկությունը կամայականորեն մերժելով և նույն հեղինակի՝ միևնույն հերոսամարտի վերաբերյալ ներկայացրած «դիպաշարն» անվերապահորեն ընդունելով՝ ընթերցողին փրկում է պատմափաստական սխալների

¹⁰⁵ Թուրքական աղբյուրները 1961, 143:

¹⁰⁶ Այվազյան 2023, 167:

¹⁰⁷ Այվազյան 2023, 165:

¹⁰⁸ Այվազյան 2023, 166:

¹⁰⁹ Այվազյան 2023, 166:

լաբիրինթոսում հայտնվելուց, իսկ նա, ով իր ուսումնասիրությունը կառուցում է ականատես հեղինակի տեղեկությունների վրա, մոլորեցնում է ընթերցողին: Ինչպիսի՞ ինքնախաբեություն:

Բավարարվե՞նք այսքանով, թեև Ա. Այվազյանի «քննական գրախոսության» վերաբերյալ ասելիք դեռ շատ կար:

Եզրակացություններ

Ամփոփելով ներկայացվածը՝ կարող եմ արձանագրել հետևյալը:

1. Ա. Այվազյանի «քննական գրախոսությունը» ունի միտում՝ ամբողջությամբ հերքելու իմ եզրակացությունները՝ ոչ միայն դրանք առանձին-առանձին մերժելու միջոցով, այլև խնդրո առարկա պատմաշրջանի վերաբերյալ իմ մասնագիտական ընդունակությունները կասկածի տակ դնելով և գրածս ամբողջովին «որակագրկելով»: Վերևում ցույց է տրված, որ նրա կողմից իմ հոդվածում որպես թերություններ ու սխալներ մատնացույց արվածը իրականում ճիշտ է և հիմնված սկզբնաղբյուրների տեղեկությունների վրա:

2. Թեև Ա. Այվազյանը մերժում է Երևանի հայության 1724 թ. ինքնապաշտպանության հիմնական աղբյուրներից մեկի՝ Աբրահամ Երևանցու երկի տվյալները ինքնապաշտպանությունը ապրիլից հունիս տեղի ունենալու վերաբերյալ և սխալմամբ համարում, որ նա ականատես հեղինակ չէ, սակայն երբ իրեն անհրաժեշտ է, լիովին ու անքննադատ ընդունում է պատմագրի տեղեկությունները և դրանցով հակադրվում իմ տեսակետներին:

3. Աբրահամ Երևանցին իրականում ականատես հեղինակ է և լավագույնս պատկերացրել է Երևանի հայության պաշտպանության ժամանակագրությունը:

4. Ա. Այվազյանը պնդում է, որ ես աղավաղել եմ Երևանի ինքնապաշտպանության ժամանակագրությունը, մինչդեռ այդ հարցում ես լիովին հետևել եմ ականատես հեղինակ Աբրահամ Երևանցու տեղեկություններին, իսկ ինքը դրանք սխալ է համարել՝ նրա ներկայացրած դեպքերը «տեղադրելով» օսմանցի հեղինակի ներկայացրած՝ այլ դեպքերի ժամանակագրության մեջ: Հետևաբար սխալվել է հենց նա:

5. Իմ հոդվածում նրա «հայտնաբերած» մյուս սխալներն ու անճշտությունները ևս որևէ կերպ չեն հիմնավորվում: Մասնավորապես՝

5.1. չի անտեսված ձորագյուղիների տեղն ու դերը Երևանի ինքնապաշտպանության մեջ,

5.2. 1724 թ. գարնանը Արարատյան երկրում օսմանյան բանակ իրականում եղել է,

5.3. Երևանի բերդին կից այլ արվարձան լինելու իրողությունը ներկայացված է աղբյուրներում,

5.4. ես լավագույնս վերծանել եմ աղբյուրներում գործածվող եզրույթները:

6. Սույն հոդվածում մանրամասնորեն ներկայացված են Ա. Այվազյանի նաև մյուս սխալ և վիճահարույց կարծիքներն ու պնդումները, որոնք եզրակացությունում առանձին ներկայացնելու կարիք չկա:

7. Քանի որ Ա. Այվազյանի «քննական գրախոսությունը» որևէ կերպ չի ապացուցում իմ հոդվածում ներկայացրած ժամանակագրության և այլ տեսակետների սխալ կամ թերի լինելը, ուստի այստեղ կրկնում եմ այն, ինչ եզրակացրել էի այնտեղ.

«Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ճիշտ են այն հետազոտողները, որոնք առաջարկում են Երևան քաղաքի հայության ինքնապաշտպանությունն առանձնացնել Երևանի բերդի պաշտպանությունից, որը սկսվել է հայերի ինքնապաշտպանության ավարտից հետո և շարունակվել մինչև սեպտեմբերի 22-ը: Երևանի հայության ինքնապաշտպանությունը սկսվել է ապրիլի 9-ին և ավարտվել հունիսի 7-ին՝ տևելով 60 օր: Մայիսի 20-ին տեղի է ունեցել Երևանի հայության ինքնապաշտպանության ամենախոշոր՝ Ձորագյուղի ճակատամարտը, որտեղ հայերը, 1300 զոհ տալով, ջախջախել են օսմանյան բանակն ու ստիպել նահանջել՝ պատճառելով վեց հազար զինվորի կորուստ: Երևանի հայության ինքնապաշտպանական ջոկատների դեմ կենտրոնացնելով ավելի քան 60-հազարանոց բանակ՝ օսմանյան թուրքերը հունիսի 7-ի առավոտյան ներխուժել են քաղաք: Հայկական ինքնապաշտպանական խմբերը կռվել են մինչև վերջ՝ փորձելով փրկել ժողովրդին: Քաղաքը թալանելուց և բնակչությանը կոտորելուց կամ գերեվարելուց հետո օսմանյան բանակը հարձակվել է Երևանի բերդի փոքրիկ արվարձանի՝ վարոշի վրա, գրավել ու ոչնչացրել այն, որից հետո երեք ամիսների ընթացքում բերդը պաշարված է եղել»:

Օգտագործված գրականություն

- Աբրահամ Երևանցի 1777, Պատմութիւն Պատերազմացն 1721-1736 թուի: Յառաջաբան, բնագիր, խմբագիր օրինակ եւ ծանոթութիւններ: Պատրաստեց Հ. Սահակ Ճեմճեմեան Մխիթարեան ուխտէն, Վենետիկ, Ս. Ղազար, 182 էջ:
- Աղայան Է. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, հատոր Ա, Ա-2, Երևան, «Հայաստան», 929 էջ:
- Աճառյան Հր. 1971, Հայերեն արմատական բառարան, Ա հատոր, Ա-Դ, Երևան, ԵՊՀ հրատ., 700 էջ:
- Այվազյան Ա. 2006, 1724 թ. Երևանի պաշտպանությունը հայ ազատագրական շարժման և պարսից իշխանությունների հարաբերությունների թնջուկում, Արևելագիտության հարցեր, հ. VI, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 51-77:
- Այվազյան Ա. 2022, Արևելահայության ժողովրդագրությունը XVII–XVIII դարերում և հայոց զորքի թվակազմը 1720-ական թվականներին, Երևան, ՆՏ Հոլդինգ, 664 էջ:
- Այվազյան Ա. 1991, Երևանի 1724 թ. պաշտպանության ժամանակագրության մասին, Պատմաբանասիրական հանդես, N 1, Երևան, էջ 93-100:
- Այվազյան Ա. 2023, Ընդդեմ 1724 թ. Երևանի հերոսամարտի պատմության աղճատման, Հայկական քաղաքագիտական հանդես, N 1, էջ 127-170:

- Դիլոյան Վ. Արմեն Այվազյան. Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում, Երևան, «Լուսակն», 2003, 343 էջ: Պատմաբանասիրական հանդես, N 1, 2004, էջ 295-304:
- Եղիազարյան Ա. 2022, Երևանի 1724 թվականի ինքնապաշտպանությունը, Հայագիտության հարցեր, N 2, էջ 55-75:
- Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին 1961, թարգմ. թուրքերեն բնագրերից, ներածությունով, ծանոթագրություններով, տերմինաբանական բառարանով և հավելվածով, հ. Ա, կազմեց Ա.Խ. Սաֆրաստյան, Երևան, 404 էջ:
- Կարապետյան Մ. 1986, Երևանի բնակչության էթնիկական կազմի և թվաքանակի փոփոխությունները 1600-1724 թթ., Պատմաբանասիրական հանդես, N 2, էջ 95-109:
- Հակոբյան Թ. 1971, Երևանի պատմությունը (1500-1800 թթ.), Երևան, 523 էջ:
- Հայոց լեզուի նոր բառարան 1992, առաջին հատոր, Ա-Հ, աշխատասիրեցին՝ Գնէլ արքեպս. Ճերէճեան, Փարամազ Կ. Տոնիկեան, Պեյրուֆ, Կ. Տոնիկեան եւ որդիք հրատ., 1306 էջ:
- Շահազիզ Յե. 1931, Հին Յերեվանը, Յե., Հրատարակություն Մելքոնյան ֆոնդի, 262 էջ:
- Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 1967, Դ, «Թուրքական աղբյուրներ», Գ, Էվլիյա Չելեբի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 346 էջ:
- Армяно-русские отношения в первой трети XVIII века 1967, сборник документов, т. II, часть II, под ред. А.Г. Иоаннисяна, Ереван, изд. АН Армянской ССР, 421 с.
- Волкова Н. 1980, О названиях азербайджанцев на Кавказе, Ономастика Востока, Москва, «Наука», с. 208-210.
- Полное собрание законов Российской империи с 1649 года 1830, т. VII, 1723-1727, СПб., N 4531, 922 с.
- Эвлия Челеби 1983, Книга путешествия (извлечения из сочинения турецкого путешественника XVII века). Перевод и комментарии. Вып. 3: Земли Закавказья и сопредельных областей Малой Азии и Ирана. Составитель и ответственный редактор А.Д. Желтяков, Москва, «Наука», 376 с.
- Abraham of Erevan 1999, History of the Wars (1721-1738), Annotated Translation from the Original Eighteenth-Century Texts with Introductory Notes by George A. Bournoutian, Mazda Publishers, Costa Mesa, California, 111 p.
- Atlas des voyages de Tavernier 1810, contenant La Carte d'Asie et vingt - trois Planches, gravées par Tardieu, aîné, "Bibliothèque portative des voyages", tome XLIX, Paris.
- Evliyâ Çelebi Seyahatnâmesi: Bursa - Bolu - Trabzon - Erzurum - Azerbaycan - Kafkasya - Kirim - Girit (Günümüz Türkçesiyle), 2. Cilt, 1. Kitap, 2005, Hazırlayanlar: Yücel Dağlı - Seyit Ali Kahraman, İstanbul, 327 s.
- Les Six Voyages de Jean Baptiste Tavernier, écuyer baron d'Aubonne, qu'il a fait en Turquie, en Perse, et aux Indes 1679, p. 1, Paris, 792 p.
- Narrative of Travels in Europe 1850, Asia, and Africa in the Seventeenth Century, by Evliya Efendy. Translated from the Turkish by the Ritter Joseph von Hammer, Vol. II, London, Oriental Translation Fund, 244 p.
- Schillinger F.C. 1707, Persianische und Ost-Indianische Reis, Nürnberg, 541 S.
- The Six Voyages of John Baptista Tavernier, a Noble Man of France Now Living, Through Turkey into Persia, and the East-Indies, finished in the Year 1670, made English by J.P, London, 1678, 122 p.

The Travels of sir John Chardin into Persia and East Indies 1686, the First Volume, Containing the Author's Voyage from Paris to Ispahan, London, 585 p.
Tournefort J.P. 1741, A Voyage into the Levant, perform'd by Command of the Late French King, Vol. III, London. 404 p.

О ПОСЛЕДОВАТЕЛЬНЫХ ПОПЫТКАХ ИСКАЖЕНИЯ ХРОНОЛОГИИ И СОБЫТИЙ САМООБОРОНЫ ЕРЕВАНА 1724 ГОДА

Арман Егиазарян

Резюме

В первом номере «Армянского политологического журнала» 2023 года была опубликована критическая рецензия Армена Айвазяна, озаглавленная «Против искажения истории героической обороны Еревана 1724 года», в которой автор, проанализировав статью Армана Егиазаряна «Самооборона Еревана в 1724 году», пришел к заключению, что все изменения и «новшества», предложенные Арманом Егиазаряном и касающиеся истории самообороны Еревана 1724 года, являются «безосновательными и неверными», в частности, искажена, якобы, хронология исторических событий.

А. Айвазян ошибочно полагает, что автор начала XVIII века Абраам Ереванци не является очевидцем самообороны Еревана 1724 года, и тем самым он отвергает хронологические данные одного из основных исторических источников по самообороне города, которая имела место с апреля по июнь. Однако весьма часто он целиком и некритически принимает информацию того же автора. Но Абраам Ереванци на самом деле является автором-очевидцем рассматриваемых событий, о чем он пишет в памятном письме своей рукописи. Таким образом, ему была хорошо известна хронология самообороны Еревана.

А. Егиазарян доказывает, что «ошибки», приписываемые ему А. Айвазяном, необоснованны, сам же Армен Айвазян искажает хронологию самообороны Еревана, отвергая сведения автора-очевидца Абраама Ереванци.

На самом деле самооборона Еревана началась 9 апреля 1724 года и закончилась 7 июня того же года, после чего османская армия предприняла осаду Ереванской крепости, которая длилась до 22 сентября 1724 года.

Ключевые слова – Ереван, самооборона, осада, хронология, искажение, Абраам Ереванци, очевидец.

ON THE CONSISTENT ATTEMPTS TO DISTORT THE CHRONOLOGY AND EVENTS
OF YEREVAN'S SELF-DEFENSE IN 1724

Arman Yeghiazaryan

Abstract

In the first volume of the "Armenian Journal of Political Science" for 2023 a critical review by Armen Ayvazyan entitled "Against historical distortion of the epic defense of Yerevan in 1724" was published, where the author analyzed Arman Yeghiazaryan's article "The Self-Defense of Yerevan in 1724" and "concluded" that all the changes and "innovations" proposed by Arman Yeghiazaryan in the history of Yerevan's self-defense in 1724 against the Ottoman army are "baseless and incorrect". In particular, the chronology of historical events is allegedly distorted.

In this article, A. Yeghiazaryan analyzes the critical review by A. Ayvazyan and reveals his motives, as well as groundlessness of his views on the chronology and events of the Yerevan self-defense of 1724.

A. Ayvazyan mistakenly believes that the author of the early 18th century, Abraham Yerevantsi, is not an eyewitness to the Yerevan self-defense of 1724, and thus rejects the chronological data of one of the main sources of self-defense, that the latter took place from April to June. However he often completely and uncritically accepts the information of the same author. But Abraham Yerevantsi is actually an eyewitness author and writes about it in a colophon of his manuscript. Thus, he was well aware of the chronology of the Yerevan self-defense.

A. Yeghiazaryan proves that the "mistakes" attributed to him by A. Ayvazyan are unfounded, and A. Ayvazyan himself distorts the chronology of Yerevan's self-defense, rejecting the information of the eyewitness author Abraham of Yerevan.

In fact, the self-defense of the Armenians of Yerevan began on April 9, 1724 and ended on June 7 of the same year, after which the Ottoman army besieged the Yerevan fortress until September 22, 1724.

Key words – Yerevan, self-defense, siege, chronology, distortion, Abraham Yerevantsi, eyewitness.

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Սփյուռքի հայ գրականության մեծերից Արամ Հայկազը (Չեքեմյան¹, 1900-1986) շապինգարահիսարցի² էր, 1915-ի հունիսին հայրենակիցների հետ Բերդ բարձրացավ, մասնակցեց հերոսական դիմադրությանը: Նա մոր հետ անցավ դեպի անհայտություն տանող գաղթի ճամփաներով: Ապրելու հույսը օրեցօր մարում էր, և տիկին Յուզաբերը որոշեց փրկել որդուն: Մոր խնդրանք-հորդորով Արամը միացավ լեռները բարձրացող քուրդ և թուրք կանանց: Պատանեկության չորս տարիներն իր նման տարագիր մի քանի հայ աղջիկների ու տղաների հետ ապրելուց հետո նա փախավ Պոլիս: Հորաքրոջ պահանջով տասնիննամյա պատանին դարձավ «Կեդրոնականի» սան և վեց ամիս աշակերտեց Հակոբ Օշականին (Քյուֆեճյան, 1883-1948): 1921-ին Արամը խորթ եղբոր՝ Հակոբ Կարմիրյանի (1888-1970) հրավերով ներգաղթեց ԱՄՆ, ապրեց ու մահկանացուն կնքեց Նյու Յորքում:

Գրողը գրական առաջին փորձերը ստորագրում էր *Արամ Հայկազ* գրչանունով:

Նա հրատարակել է հետևյալ հատորները՝ *The Fall of the Aerie* (Արծվաբնի անկումը), Բոստոն, 1935: *Ցեղին ծայնը*, Նիւ Եորք, 1949, *Պէյրուֆ*, 1954, *Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը*՝ Նիւ Եորք, 1957, *Չորս աշխարհ*, Նիւ Եորք, 1962, *Պանդոկ*, *Պէյրուֆ*, 1967, *Կարօտ*, *Պէյրուֆ*, 1971, *Չորս տարի Քիւրտիստանի լեռներում մէջ*, *Անթիլիաս*, 1972, *Ապրէ՛ք, երեխէ՛ք*, *Պէյրուֆ*, 1973, *Երջանկութիւն*, *Պէյրուֆ*, 1978:

2009-2023 թթ. հրատարակել են Արամ Հայկազի նամակները, «Արամ Հայկազ. Մոռացված էջեր» գրքի յոթ հատորները, «Ապրող ծառ մը» պատմվածքների ժողովածուն, վերահրատարակել են «Չորս տարի Քիւրտիստանի լեռներում մէջ» վեպը (Ե., 2022) և «Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը» գիրքը (Ե., 2023):

«Արամ Հայկազ. Նամակներ»-ում զետեղված է Արամ Հայկազի նամակը Մարգար (1937-2023) և Էլիզ Շարապխանյանների³: Տասնամյակներ անց ամուսիններն ինձ տրամադրեցին Արամ Հայկազի՝ իրենց հասցեագրած տասը նամակները, որոնք հրապարակում ենք ստորև:

Մարգար Շարապխանյանի անձնական արխիվում պահվող նամակներն ունեն անուրանալի գրապատմական արժեք: Սփյուռքահայ գրողի այս նամակները՝ ուղղված գրական-մշակութային գործչին՝ Մարգար Շարապխանյանին, իրենց ուրույն տեղն ունեն Արամ Հայկազի գրավոր ժառանգության մեջ, որն այսօր էլ ասելիք ունի հայությանը:

Նամակներում ընդգծումները հեղինակինն են, երբեմն հիշատակվում են անուններ, որոնք տասնամյակներ անց դժվար է ճշտել և ծանոթագրելը:

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԽԱՋԱՏՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր
margarit2011@gmail.com

18 հոկտեմբեր 1973

Սիրելի՛ Շարապխանեան,

Քանի որ օր առաջ ստացայ ու հաճոյքով կարդացի Գագանձագիսի⁴ թարգմանութիւնը: Ի՞նչ մեղքս պահեմ. իրմէ շատ բան չէի կարդացած, եւ հիացումս եղաւ մեծ:

Շնորհատրելով նախաձեռնութիւնդ՝ կը մաղթեմ, որ սպառուի, եւ նոր հատորներ հրատարակէք:

Փոստին կը յանձնեմ նաեւ Ձեր անուան մակագրուած «Քիրտիստան» մը:

Կը ներփակեմ «Արձագանգ»ի համար յարմար «Լուրեր» եւ Մահարիէն կարճ կտոր մը⁵: Ձեր յարմար դատած ձեռով վարուելու ազատ զգացէք անոնց հետ:

Սիրով՝ Արամ Հայկազ

(բնագիր, ձեռագիր)

10 նոյեմբեր 1973

Սիրելի՛ Շարապխանեան,

Պայծառ ու ցուրտ օդով առաւօտ է: Անախորժ ցուրտ: Օդերեւութաբանական կայանը կ'ըսէ, թէ ցուրտը կու գայ Գանատայէն: Ամառը, երբ զով օդ գայ, շնորհակալ կ'ըլլանք, իսկ հիմա՞... Հիմա՞ ալ շնորհակալ ըլլալու ենք...

4 հոկտեմբեր թուակիր նամակդ կարդացի հաճոյքով եւ երախտապարտ կը զգամ գէթ մէկ բան լուսաբանելուն համար: Բացատրեմ: Երկար ատեն է կ'աշխատիմ յիշել անունը այն ընկերոջ կամ բարեկամին, որ Թորոնթօ եղած օրերու մէջ Նիակարա տարաւ, մէզ հիւրասիրեց եւ այլն... Միջահասակ էր, ամուր կազմով եւ Բաֆֆիի նման կարճ մօրուքով: Ձէի գիտեր, թէ որո՞ւ դիմեմ այդ տեղեկութիւնը առնելու համար:

Հիմա հարցը լուծուած է, եւ ես ուրախ եմ այդ բանին համար:

Հիմա խօսինք «Ճգնութիւն»ի մասին: Կասկածէ դուրս է, որ *արժէքաւոր* գործ է: 4-5 անգամով հասայ վերջին տողին: Բայց բնաւ ժողովրդական չի կրնար ըլլալ: Ոչ միայն մեր ժողովուրդին, այլեւ ուրիշ ժողովուրդներու մեծամասնութեան սրտին խօսող գործ չէ. դժուարըմբռնելի է: Ձեր անմիջական շրջանակէն դուրս քանի՞ հոգի պիտի ապսպրէ, կարդայ եւ հաճոյք առնէ անկէ:

Աս տողերով ըսել չեմ ուզեր, թէ իջնելու ենք ժողովուրդներուն հասնելու աստիճանին:

Յաջողութիւն կը մաղթեմ այս մէկին եւ յաջորդներուն համար:

Ես պատրաստեցի երկու հատոր: Մին՝ «Երջանկութիւն»⁶ խորագրուած, 19 պատմութիւններ է կը բաղկանայ, միւսը (չեմ համրած) մինչեւ հիմա հրատարակած 8 հատորներու մէջ ցրուած պատանիներու յարմար կտորներէ կը բաղկանայ եւ «Ապրէ՛ք, երեխէ՛ք»⁷ խորագիրը կրելու է: Դասագիրք չէ, այլ մատաղ սերունդին, դպրոցականներու ձեռք տրուելու յարմար գիրք:

Շատ հետաքրքիր են կարդալու համար Հասըրճեան օրիորդ Էլիզի գրածը «Քիւրտիստան»-ի մասին⁸: Երբ տեսնես զինքը, իմ կողմէ շատ բարեւ ըրէ:

Հիմա զանք անոնց (գրքերուն) գինին: Ճիշդ էք ըրած՝ զանոնք 7 տոլարի ծախելով: Ներկայիս տետրակները 3-4 տոլարի կը ծախին, ուր մնաց 510 էջնոց լաթակազմ հատոր մը: Յետոյ աս ալ կա, որ 5 տոլար վաստկելու համար մարդ մը Լիբանանին մէջ օր մը պէտք է աշխատի, հոս՝ ժամ մը: Աւելին, գրեթէ ամէն մէկ գրքի համար մէկ տոլար ալ ծախս եղաւ զանոնք հոս բերելու եւ նաւամատոյցը գրաւող մաֆիայի ձեռքէն ազատելու համար, 34 սենթ ալ (Գանատայի համար՝ 48 cent) փոստի ծախս վրան աւելցուր: Այս բոլորը ըսի, որովհետեւ նամակիդ մէջ դուն ակնարկութիւն ըրած էիր «Բագին»-ի եւ «Հայրենիք»-ի ծանուցման մէջ գիներու եղած տարբերութիւններուն համար:

«Բագին»-ի թիւ 7-ը տեսա՞ր: Ինծի քանի մը օր առաջ եկաւ: Մէջը պատմուածք մը⁹ ունիմ: Մեծ բան մը չէ, բայց վերջաւորութիւնը կը կարծեմ, թէ լաւ է, շատ լաւ:

Սիրով՝ Արամ Հայկազ

(բնագիր, ձեռագիր)

7 ապրիլ 1974

Սիրելի՛ Շարապխանեան,

Կիրակի իրիկուն մեր ունեցած կարճատեւ խօսակցութեան ընթացքին նոր պատմուածքներու «Ալէք Մանուկեան» գրական մրցումին¹⁰ ներկայացնելու մտադրութեանս մասին Ձեր ըրած դիտողութիւնը տեղ էր բռնած մտքիս մէջ: Երկար խորհեցայ այդ մասին եւ գտայ, որ իրաւունք ունիք: Ես ալ մտածած էի այդ ուղղութեամբ եւ կասկածներս խաղաղեցուցած՝ ըսելով ինքզինքիս, թէ «Տոմուզտան գրլ չէքմէսի սեպապ տըր»:

Բառական թարգմանութեամբ՝ «Խոզէն մազ քաշելը վարձք է»:

Քիչ մը կոպիտ է պ. Մանուկեանը խոզի նմանցնելը. Լա՛ւ մարդ է, լա՛ւ հայ եւ նախկին դաշնակցական, բայց առածին մէջ նման բաներ ներելի են:

Ուրեմն այդ հարցը կարելի է փակուած համարել: Նոր գրքիս՝ «Երջանկութիւն»-ին մասին կը գրեմ Պէյրութի «Համազգային»-ին, իսկ «Քիւրտիստան»-իս թարգմանութեան համար¹¹ պէտք եղող 2300 տոլարը կը ճարեմ ուրիշ կերպով մը: Թերեւս հաց ու պանիրի տեղ միայն հաց ու ջուր ուտելով... եթէ միայն վստահ ըլլայի, թէ թարգմանութեան աւարտելէն ետք ամերիկացի հրատարակիչ մը պիտի գտնեմ...

Այս բոլորը պահէ՛ քեզի, խնդրեմ:

[Այն] շաբաթ օր ստացայ «Արծազանգ»ը: Լաւ էր. կը հիանամ Ձեր եռանդին վրայ: Նորանոր յաջողութիւններ կը մաղթեմ: Կը ներփակեմ կտրօն մը, որ եթէ փափաքիք, օգտագործէք:

Քանի մը շաբաթէն (թերեւս ամիս մը) Ձեզի կ'ուղարկեմ Խ. Ն. Գաւառի «Հին կարօտներու ճամբով»էն¹² օրինակ մը: Լա՛ւ գիրք է, շա՛տ լաւ: Դեռ Նիւ Եորք չեն հասած բաւականին օրինակներ: Մէջը, այսինքն՝ գրքին վրայ աշխատանքի մեծ բաժին ունիմ¹³: Իմ կարծիքով, վերջին կէս դարու ընթացքին հրատարակուած հայերէն գրքերուն լաւագոյններէն մէկն է: Ուրախ կ'ըլլամ, եթէ գրախօսէք:

Ըսելու հարկ կա՞, թե ուրախ եղայ Լուսինե՞ն¹⁴ տունը միասին ըլլալնու համար:
Ջերմագին բարեւներ բոլորիդ:

Սիրով՝ Արամ Հայկազ

(բնագիր, ձեռագիր)

20 նոյեմբեր 1974

Սիրելի՛ Շարապխանեան,

Այսօր այս նամակին հետ նամակատուն կը տանիմ Համաստեղի յուշամատենէն¹⁵ ութ օրինակ – վստահ չեմ, թե ո՞ւր է, թե՞ անելի կամ պակաս – ինչ որ է, տարբերութիւն չ'ընէր: Երէկ գիշեր, երբ Պապեան Գալուստին¹⁶ հետ կը խօսէի, ի միջի այլոց ձեռով մը ըսաւ, թե դուք այդ գրքին երբեմն պէտք կ'ունենաք ու հոտ¹⁷ չունիք: Աս դրկած ուր յօրինակս նուէր է ձեր կազմակերպութեան, եւ կը խոստանամ մօտ օրէն 8-10 օրինակ եւս դրկել նոյնպէս նուէր. անոնց համար ոչինչ էք պարտական ինծի կամ մի այլ անձի:

Գալուստը ըսաւ նաեւ, թե ունեցեր էք յաջող մէկ դասախօսութիւն՝ օգտուելով Ժիրայրի¹⁸ ներկայութիւնէն: Յաճախ կը լսեմ Ձեր գործունէութեան արծագանգները ու մտքէս «Ապրի՛ք» մը կը նետեմ Ձեր հասցէին: Կը նախանձիմ ալ, որ ձեզ մօտ ու ձեզ հետ չեմ:

Ի՞նչ գործի վրայ ես. նոր աշխատանք ունի՞ս ձեռքդ: Ես վերջին հատորս¹⁹ – երկու իմաստով ալ վերջին – երրորդ անգամ ըլլալով աչքէ անցուցի, եւ հրատարակութեան պատրաստ է: Կարծեմ անոր մասին ասկէ առաջ ալ գրած եմ քեզի:

Ճիշդ հիմա, երբ կը մեքենագրէի այս նամակը, նամակատան ցրուիչը բերաւ «Արծագանգ»ի վերջին թիւը: Դեռ չեմ բացած. վստահ եմ՝ հետաքրքրական բաներ պիտի գտնեմ մէջը:

Քեզմէ ետք պիտի գրեմ նաեւ Պէյրութ՝ Պողոսին²⁰: «Բագին»ի սեպտեմբերի թիւին մէջ լաւ մը լուացած էր Ստեփան Կուրտիկեանը²¹ ու շա՛տ իրաւացի կերպով: Սթալինի օրով, երբ Մեծ գազանը կը փառաբանէին ոմանք, գէշ-աղէկ հասկնալի էր. կրնայինք «մարդկային տկարութիւն» կամ «ինքնապաշտպանութեան բնագոյն» որակել իրենց արարքը, բայց խաղաղութեան ու արհաւիրքի օրերուն անցնելէն ետք ելնել ու սուտ ու փուտ պատմութիւններով Լենինը փառաբանել՝ անմարսելի է մեր ախորժակին:

Ջերմ բարեւներ ծանօթներու եւ գործակիցներուդ:

Անկեղծօրէն՝ Արամ Հայկազ

Յ.Գ. Ծրարը ուղարկած եմ «Արծագանգ»ի հասցէով:

(բնագիր, մեքենագիր)

5 մարտ 1975

Շա՛տ, շա՛տ սիրելի Մարգար,

8 փետրուար թուակիր աղուոր ու երկար նամակդ²² կարդալէս ի վեր բազմաթիւ անգամներ սեղանիս առջեւ անցայ անոր պատասխանելու համար, ու

ամեն անգամ ալ բան մը արգելք եղաւ: Գլխաւոր ըսելիքս այն է, որ գիտնաս առողջութեանդ ու երիտասարդութեանդ արժէքը ու չվատնես զանոնք: Հոս տեղացիները կ'ըսեն, թէ «Էվէրէյճ – աս բառը ի՞նչ պիտի թարգմանենք, միջի՞ն – ամերիկացին մինչեւ իր 40 տարեկան ըլլալը կ'աշխատի դրամ շահելու համար, 40-էն ետք այդ դրամը կը ծախսէ իր կորսնցուցած առողջութիւնը վերագտնելու համար»: Ուրախառիթ է ազգային գործերու նուիրուիլը, գործ գլուխ հանելը, բայց նայէ՛, որ չափի գիտակցութիւն ունենաս: Իմ ճանչցած բոլոր կազմակերպութիւններուն մէջ միայն Դաշնակցութիւնն է, որ միայն առնել գիտէ. առնողներու կազմակերպութիւն է: Ու թերեւս հոս է նաեւ իր ոյժը: Տալ չի գիտէր: Երբ այլեւս օգտակար չես, կը մոռնայ քեզ: Ուրիշ բան մը, եթէ ուզէ, կրնայ ոչնչութիւն մը աստուածացնել կամ հակառակը՝ աստուած մը ոչնչացնել: Կը փափաքիմ, որ այս բաները ի մտի ունենաս:

Հրատարակչական աշխատանքներուդ մասին²³ կարդալով թէ՛ ուրախացայ եւ թէ՛ տխրեցայ: Ուրախացայ, որ գործունեայ էք, ու տխրեցայ, որ ձեր միջոցները սահմանափակ են: Չեմ գիտեր, թէ ձեր շրջանին մէջ ո՞ր գրքերը կը սպառին. փափաքելի է, որ այդ երեւոյթին ուշադիր ըլլաք ու ձեր նախաքայլերուն մէջ նախ տպէք գործեր, որոնք կը սպառուին կամ պիտի սպառուին դիրին եւ արագ:

Հաւատա՛ անկեղծութեանս, եթէ ըսեմ, թէ ես տպագրութեան համար պատրաստ հատոր մը ունենալուս մասին գրած էի ձեզի միայն առ ի տեղեկութիւն: Բնաւ մտքէս չէ անցած, որ դուք տպագրէք զայն: Երբ Լիբանան էի անցեալ տարի²⁴, «Համազգային»ի ատենապետը՝ տոքտ. Գոնիալեան²⁵, բազմիցս հրապարակաւ ըսաւ, թէ «Հայկա՛գ, դուն գրէ՛, մենք կը հրատարակենք»: Երբ հատորս պատրաստ եղաւ, գրեցի ու յիշեցուցի իր խոստումը՝ ակնկալելով, որ պիտի ըսէ. «Ղրկէ՛, որ տպենք»: Երկար սպասելէ ետք յուսահատեցայ ու որոշեցի ղրկել Ալէք Մանուկեանի գրական մրցանակի մրցումին: Երկար վարանեցայ այդ քայլը առնելէ առաջ, ի վերջոյ ղրկեցի: Երէկ իր գործերու վարիչէն ստացայ 1975-ի մրցումին յայտարարութիւնը: Վէպի ու պատմութեան, բանաստեղծութեան եւ թատերգութեան բաժիններ ունի: Շահողը կը ստանայ 1500 տոլար պատմութեան համար, նոյն գումարը՝ բանաստեղծութեան, ու 750 տոլար ալ՝ թատերախաղի մասին²⁶: Կը տպագրուի իրենց ծախսով ու բացի նուէրէն՝ հեղինակին կը տրուի 150 օրինակ գիրք:

Դատական կազմի անդամներ՝

Պատմութեան՝ Սիմոն Սիմոնեան²⁷, Պօղոս Սնապեան եւ Միշա Գիւտեան²⁸
Լոնտոնէն:

Բանաստեղծութեան՝ Վահէ-Վահեան²⁹ տոքթ. Խրիշտեան³⁰, Երուանդ Ազատեան³¹:

Թատերախաղի՝ Պերճ Ֆազլիան³², տոքթ. Բ. Փափազեան³³, Յովհ. Փիլիկեան³⁴:

Վստահ եմ՝ Բիրոն³⁵ արտօնութիւն տուած է Սնապեանին ու տոք. Փափազեանին, որ դատական կազմին մէջ ըլլան:

Հրանդ Մարգարեանը³⁶ Թալէաթի սպանութիւնը թատերախաղի էր վերածած ու անցեալ կիրակի ներկայացուց: Ակնկալածէս լաւ էր: Անշուշտ սրբագրելի

տեղեր ունէր, բայց ո՞ր վարպետին թատերախաղը բեմադրուելու ժամանակ պակասութիւններ չ'ունենար ու կը սրբագրուի: Գրքին մէջ կատարեալ թուած գործ մը միշտ ալ բեմին վրայ աւելորդութիւններով լեցուն կամ պակասատր ըլլալ կը թուի:

Գալով փնտռած միլիոնատէրիդ, որ կռնակ կենայ ձեր հրատարակչական գործին, փնտռելու վրայ եմ...

Նետիւրեանի գիրքը տեսա՞ծ էք – Խ.Ն. Գալառ, «Հին կարօտներու ճամբով», 700 էջ է, լաթակազմ: Կը ծախուի 10 տոլարի: Արդէն իրեն ամէն մէկը այդքան է արժած: Պատկերազարդ է: Շատ լաւ գիրք է: Եթէ փափաքիք, այդ գիրքը ձեզի համար կրնամ 6 տոլարի առնել՝ պայմանաւ, որ ապսպրանքը տասը հատէն պակաս չըլլայ:

Ջերմ բարեւներ Գալուստին, սիրելի Էլիզին, Մարոյին³⁷ ու միւս խենթերուն:

Սիրով՝ Արամ Հայկազ

Յ.Գ. Վաղը, միւս օր Նետիւրեանի գրքէն օրինակ մը նուէր կը դրկեմ Ձեր գրադարանին³⁸:

Նոյն

(բնագիր, մեքենագիր)

21 յունիս 1976

Սիրելի՛ Մարգար,

Կը ներփակեմ «Սովետական Հայաստան» ամսագրէն³⁹ քանի մը կտրօններ: Կը խորհիմ, թէ անոնցմէ ոմանք յարմար են «Արծազանգ»ի մէջ դրուելու համար: «Գրական տեղեկատու»ն եւ «[Պիտոճէ]»ները մանաւանդ: Յամենայն դէպս, վերջին դատաւորը դուք էք:

Ջերմօրէն՝ Արամ Հայկազ

Յ.Գ. Հաւանաբար տեսած էք «Ալէք Մանուկեան» հիմնարկի այն յայտարարութիւնը, թէ Լիբանանի կացութեան հետեւանքով⁴⁰ հիմնարկի յայտարարած գրական մրցման արդիւնքները պիտի չկրնան ծանուցանել, քանի որ դատաւարութեան մեծամասնութիւնը լիբանանաբնակ էին: Նոր դատաւորներ պիտի նշանակուին, եւ արդիւնքը կը յայտարարուի 1967⁴¹ յունուարին:

Նոյն

(բնագիր, ձեռագիր)

6 դեկտեմբեր 1976

Շա՛տ սիրելի տիկին Շարապխանեան,

Ժամանակին ստացած եմ Ձեր 12 նոյեմբեր թուակիրը, որով կ'իմացնէիք գրադարանին համար ուղարկած գրքերու ստացուած ըլլալը: Տօնական օրերու իրարանցումէն ետք կ'ուղարկեմ նոր ծրար մը: Գրադարանիս մէջ իզուր փնտռեցի Շաարշ Միսաքեանի⁴² Ա հատորը. կարծեմ «Օրեր ու ժամեր» խորագրուած էր, բայց չգտայ. ով գիտէ՝ ո՞վ էր տ[ա]րած ...Եթէ գտնէի, պիտի ուղարկէի ձեզի:

Կ'ուզեմ գիտնալ, թէ գրադարանին մէջ ունի՞ք Կարօ Գեորգեանի տարեգրքերուն շարքը⁴³: Եթէ իմացնես, գոհ կ'ըլլամ: Եթէ հնարատր է, կազմեցէ՛ք նաեւ ձեր գրադարանին համար ձեր ունենալ փափաքած գրքերուն ցանկը եւ ուղարկեցէ՛ք ինծի. եթէ ունենամ, սիրով կ'ուղարկեմ: Ըսեմ նաեւ, թէ շատ բան չէ մնացած... Անգամ մը Պոսթոնի «Մշակութային»ի տղաքն ու աղջիկները եկած էին մեզի կառքով, ու անոնց արտօնեցի, որ հաւանձնին լեցնեն կառքը ու տանին: Մաս մըն ալ անցեալները Գոհար Ազնավուրեանը⁴⁴ հետը տարաւ Հայաստան:

Շուտով մեռնելու միտք չունիմ, կը հաւատամ, թէ աշխարհը լաւ տեղ մըն է ապրելու համար, լաւ ու գեղեցիկ տեղ մը, բայց շուրջս մարդ, բարեկամ ու ազգական չմնաց. կը խորհիմ, թէ ուշ կամ կանուխ հերթը իմս է, իսկ մահէս յետոյ աս գրքերուն վրայ նայող իսկ չգտնուիր: Կը հաւատամ, թէ այս բացատրութիւնը կը գոհացնէ ձեր հետաքրքրութիւնը, թէ այս մարդը ինչո՞ւ իր գրքերը կը ցրուէ:

Մօտեցող տօնական օրերու առթիւ ջերմագին մաղթանքներ աշխատունակ ամուսնիդ, Գալուստին – եթէ տեսնէք – Մարիին ու վերջապէս բոլորին:

Ջերմօրէն՝ Արամ Հայկազ

(բնագիր, մեքենագիր)

21 դեկտեմբեր 1978

Սիրելի՛ Մարգար,

Նամակդ, որուն կը սպասէի մօտերս, ստացայ այսօր: Ամսագրի⁴⁵ նուիրատուին հեռաձայնով տուած տեղեկութիւնէն իմացած էի, թէ 4 հոգիով գացած ու վերցուցած էք ամսագիրը: Եթէ տեղէ մը իմանամ, թէ մէկը ունի ուրիշ օրինակ մը, քեզի կ'իմացնես: Գիտեմ, թէ տեղ մը կայ ծախու, բայց շատ սուղ է (կը ներփակեմ ծանուցումը պարունակող էջը), եւ դուն չես կրնար նման գումար վճարել: Բացի յետինէն, տարիներ առաջ 2 լրիւ շարք ալ դրկած եմ Հայաստան: Եթէ բախտատուր ես, ուշ կամ կանուխ հատ մը եւս հրապարակ կ'ելնէ: Ի միջի այլոց ըսեմ, թէ Մինասն⁴⁶ ալ իր անձնական գրադարանին համար կը փափաքի ունենալ շարք մը, բայց ան կրնայ «Հայրենիք»ի ունեցածը օգտագործել, այնպէս որ անոր փափաքը կը մնայ փափաք՝ ի բաց առեալ, երբ ուրիշ մը կը նուիրէ իրեն:

Մօտեցող տօնական օրերու առթիւ կը մաղթեմ ազգի գործերուն յաջողութիւն եւ Ձեզի առողջութիւն, բարօրութիւն, ուժ, կորով... Ի՞նչ գիտնամ Ձեր ուզած բաները. գրեցէ՛ք, ես կը ստորագրեմ:

Ջերմագին բարեւներ քեզի, շնորհալի կնոջդ եւ տղոցդ⁴⁷:

Սիրով՝ Արամ Հայկազ

(բնագիր, ձեռագիր)

20 փետրուար 1973

Սիրելի՛ Շարապխանեան,

Երկու օր առաջ ստացայ 13 փետրուար թուակիրդ: Հասցէներու տետրակիս մէջ փոխեցի Ձեր հասցէները⁴⁸ ու փափաքիդ համաձայն՝ 10 գիրք ճամբեցի 2

ծրարով, որովհետեւ նամակատունը 11 փառնտէն աւելի ծանր կշռող ծրար չ'ընդունիր Գանատայի համար: Ծրարներէն մէկուն մէջ 8 գիրք կայ, միսին մէջ՝ 2: Օդանաւով դրկած էին եւ 200 գրքի համար մօտ 400 տոլար փոխադրողքէք տուինք: Կը կարծեմ, թէ եթէ գրքերը վերջաւորութեան նշանակուածին պէս 10 տոլարի ծախէք, 8-ը ինծի, 2-ը ձեզի կը բաժնուինք: Հակառակ երէկուայ ծինին ու փոթորիկին, յաջողեցայ նամակատուն հասցնել, որ մարտ 17-18-ի Ձեր ձեռնարկին համար հասնի:

Շնորհակալութիւն գնահատական տողերուդ համար: Կը հաւատամ, թէ աս վերջինն է: Ձեմ ուզեր, որ մարդիկ ըսեն, թէ «Հայկազը ծերացաւ, աս գիրքը միաներուն չի գար. ունեցածին վրայ բան չ'աւելցներ...»: Թէեւ գիտեմ, թէ Պօղոսին մօտ ունիմ «Բագին»ի համար ուղարկուած պատմութիւն մը⁴⁹, որ շատ լաւն է, մեղք, որ «Երջանկութեան» չիսասա՛ մէջը դրուելու համար. խորագիրը ինքնին շատ դիպուկ է, ինչպէս կ'ըսեն մեր արեւելահայ եղբայրները: Խորագիրը «Տրամախօսութիւն գետնուղիին մէջ» է: Ես ու դրացիս (կին մը) կը ճամբորդենք միասին. ինծի բերանս բանալու պատեհութիւն միայն մէկ անգամ կու տայ, ան ալ՝ 2 բառ միայն:

Կը խորհիմ, թէ յաջողած պատմուածք է:

Նոր տուներնիդ, ինչպէս կ'ըսեն, բարով վայլէք առողջութեամբ ու երջանկութեամբ:

Ջերմ բարեւներ քեզի եւ շնորհալի տիկնոջդ:

Արամ Հայկազ

(բնագիր, մեքենագիր)

9 մայիս 1979

Սիրելի՛ Մարգար,

Ժամանակին ստացած եմ մայիս 30 թուակիրդ եւ այսօր ալ՝ հրաւիրատոմսը: Շնորհակալութիւն:

Գիտեմ, թէ հաւանաբար աւելի պատշաճ պիտի ըլլար, եթէ հեռագրով մը շնորհաւորէի կեդրոնի՝ «Հայ Կեդրոն»ի բացումը⁵⁰, որ, գիտեմ, գլուխ հանուեցաւ կարգ մը նուիրեալներու անխոնջ ճիգերով ու աշխատանքով եւ ոմանց ալ՝ զոհաբերութեամբ:

Երկար ժամանակէ կը հետեւէի գանատահայերու գովելի կազմակերպական ճիգերուն եւ բա[ղդ]ատութեան⁵¹ կը դնէի Ձեզ մեզի հետ:

Բայց բա[ղդ]ատութեան եզր չկա՛յ...

Կը մնայ սրտագին «Ապրի՛ք, տղա՛ք» մը ըսել հեռուէն: Մե՛ղք, որ հեռաւորութեան եւ յոգնութեան պատճառով⁵² չեմ կրնար ըլլալ Ձեզի հետ, բայց հոգիով ու մտածումով միշտ Ձեզի հետ եմ:

Սիրով ու հիացումով՝ Արամ Հայկազ

(բնագիր, ձեռագիր)

ՃԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. 1921 թ. մայիսի 28-ին ԱՄՆ ներգաղթելիս Արամ Արսենի Չեքեմյանին գրանցեցին *Չեքեմյան* ազգանունով: Հայկազն Արամի եղբայրն է (1898-1915). նրան մոր աչքի առաջ սպանել է թուրքը:

2. Շապին Գարահիսար - բերդաքաղաք պատմական Փոքր Հայքի Նիկոպոլի գավառում, այժմ թուրքական Շաբին Կարահիսար գավառի կենտրոնն է:

3. Արամ Հայկազ. Նամակներ (Ե., 2009, 225-226): Նամակում (29.VIII.1975) գրողը հայտնում է, որ չի կարողանա մասնակցել Մարգարի և Էլիզի հարսանիքին (նրանք ամուսնացել են 1975 թ. սեպտեմբերի 7-ին): «Ձեր կեանքի բոլոր օրերուն պսակի այս օրերուն պէս միշտ երջանիկ ըլլաք», – բարեմաղթում եւ նամակի վերջում երկրորդում է գրողը: ՏԵՆ Մ.Մ. Խաչատրյան, Մի նամակի հետքերով («Հորիզոն գրական» ամսաթերթ, Մոնրեալ, 2015 N 8) հոդվածը:

4. Մարգար Շարապխանյանը 1973 թ. հայերեն է թարգմանել և Տորոնտոյում հրատարակել հույն նշանավոր գրող, Խաղաղության միջազգային մրցանակի դափնեկիր (1956) Նիկոս Կազանձակիսի (1883-1956) «Ճգնութիւն. Աստուծոյ փրկարարները» գիրքը: «Հայրենիքի» 1974 թ. ապրիլի 14-ի համարում տպագրված է Հակոբ Կարապենցի (1925-1994) «Նիզոս Գազանձակիսի «Ճգնութիւն»ը ըստ Մարգար Շարապխանյանի» հոդվածը:

5. «Արձագանքի» 1973 թ. համարներում Գուրգեն Մահարու (Աճեմյան, 1903-1969) ստեղծագործություններից չի հրատարակվել:

6. Լույս է տեսել Բեյրութում, 1978 թ.:

7. Լույս է տեսել Բեյրութում, 1973 թ.: Այս գիրքը «Համազգային» հայ կրթական և մշակութային միության նվերն է գրողին՝ հորեյանի առթիվ:

8. Էլիզ Շարապխանյանի հոդվածը լոյս է տեսել «Արձագանք» ամսաթերթի (Տորոնտո, 1973) N 10-ում և «Հայրենիք» օրաթերթի (Բոստոն, 1973) դեկտեմբերի N 11-ում. տե՛ս Արամ Հայկազ. Մոռացված էջեր, հ. 2 (Ե., 2015), էջ 43-45:

9. «Բագին» հանդեսի 1973 թ. 7-րդ համարում լոյս է տեսել Արամ Հայկազի «Որորներն ու Թէոդորի աղանիները» պատմվածքը:

10. Ալեք Մանուկյան (1901-1996) - Հայաստանի ազգային հերոս (1994), 1953-1983 թթ.՝ ՀԲԸՄ կենտրոնական վարչական ժողովի նախագահ, 1970-ից՝ ցլեանս նախագահ, 1989-ից՝ ցլեանս պատվավոր նախագահ: 1968 թ. մեկ միլիոն դոլարով հիմնել է իր անունը կրող մշակութային հիմնադրամը:

11. Արամ Հայկազի դուստրը՝ Այրիս Չեքեմեանը (ծնվ. 1928 թ.), 2014 թ. Նյու Յորքում հրատարակեց «Չորս տարի Քիւրտիստանի լեռներուն մէջ» վեպի ութ գլուխներն անգլերեն իր թարգմանությամբ:

12. Խաչիկ Նետյուրյանի (Գավառ, 1900-՞) այս գիրքը վերահրատարակվել է Նյու Ջերսիում, 1973 թ.:


13. Արամ Հայկազը Հարութին Գեղարդին (Գազանձյան, 1928-2006) հասցեագրած նամակում պատմում է Խաչիկ Նետյուրյանի գրքի մասին (տե՛ս Արամ Հայկազ, Նամակներ, էջ 40-41): Գրքի «Շնորհակալիք» հատվածում Խաչիկ Նետյուրյանը շնորհակալություն է հայտնում Արամ Հայկազին, «որ ազնուաբար յանձն առաւ ոչ միայն սրբագրել, այլ նաեւ դասատրել ձեռագիրներս»:

14 Անգլիագիր վիպագիր, նիւեորքաբնակ, պարսկահայ արմատներով Լուսիկ Մելիքեան, մահացաւ 92 տարեկանին: Գրքերն են՝ From Pages of Life, Soaring Thoughts, Tehran, Girl and the Sun, Forbidden Days of Ramazan, From Hunger to Caviar (ծնթ.՝ Էլիզ Շարապխանյանի):

15. 1967 թ. Նյու Յորքում լույս է տեսել «Համաստեղ.1895-1966» հուշամատյանը:
16. Նշանավոր լուսանկարիչ Գալուստ Պապյանն է (1938-2017):
17. Արամ Հայկազը բառն այսպես է գրում:
18. Արծակագիր Ժիրայր Աղդարյանն է (1914-2006): «Յուշամատեան «Համազգային» հայ կրթական եւ մշակութային միութեան «Գլածոր» մասնաճիւղի գործունէութեան: 1969-2019» գրքի 11-րդ էջում նշվում է, որ 1974 թ. նոյեմբերի 11-ին նա Տորոնտոյում դասախօսել է «Եղուարդ Պոյաճեանի կեանքն ու գործը» թեմայով:
19. Նկատի ունի «Ապրէ՛ք, երեխէ՛ք» ժողովածուն:
20. Խոսքը ՀՀԴ գործուն անդամ, 1966-2014 թթ. «Բագին» հանդեսի գլխավոր խմբագիր, գրող, գրականագետ, ուսուցիչ, հրապարակագիր Պողոս Սնապյանի մասին է (1927-2014). տե՛ս Արամ Հայկազ, Նամակներ, էջ 177-184. գրողի նամակները Պողոս Սնապյանին:
21. Գրող, հրապարակագիր, լրագրող Ստեփան Կուրտիկյան (1908-1986): «Բագին» հանդեսի 1974 թ. 9-րդ համարում (էջ 37-46) տպագրված է նրա «Ստութեամբ շաղախուած սուտ գրականութիւն» խմբագրական հոդվածը:
22. Մարգար Շարապխանյանի այս նամակը պահպանվել է. տե՛ս Արամ Հայկազ. Մոռացված էջեր, հ. 2 (Ե. 2015), էջ 229-232:
23. Մարգար Շարապխանյանը հիմնել է "Kar" («ԲԱՐ») հրատարակչական ընկերությունը: «Անվանումը «Մարգար»ի վերջին վանկն է՝ անգլերէնով, «որպէսզի «ժայռ» կամ «վեմ» իմաստը ստանայ: Սա սիրողական գործ էր մեր աշխատանքէն անդին», – գրում է Էլիզ Շարապխանյանն ինձ հասցեագրած նամակում:
24. Արամ Հայկազը Լիբանանում էր 1973 թ. դեկտեմբերի 5-23-ին: Նրա հորելյանական հանդեսը Բեյրութում տեղի է ունեցել 1973 թ. դեկտեմբերի 20-ին:
25. Լիբանանահայ յայտնի ատամնաբոյժ, ազգային գործիչ, 1990-1994 թթ. «Համազգային» հայ կրթական և մշակութային միութեան ատենապետ, Պէյրութի «Ալօս» պարբերագրքի (1944-1960) արտօնատէր Տոքթ. Եղիկ Գոնիպլեան (1919-2002): 2000 թուականին ստացած է «Համազգային»ի ջքանշան՝ «Հայ հասարակական կեանքի եւ յատկապէս «Համազգային»ի ծիրէն ներս իր նուիրեալ աշխատանքին համար (ծնթ.՝ Էլիզ Շարապխանյանի):
26. Պետք է լինի՝ համար:
27. Սիմոն Սիմոնյան (1914-1986) - նշանավոր խմբագիր, հրատարակիչ, մանկավարժ: 1955-ին հիմնադրել է «Սեան» հրատարակչությունը, 1958-1974 թթ. խմբագրել և հրատարակել է «Սփիւռք» շաբաթաթերթը:
28. Լոնտոնաբնակ գրող, թարգմանիչ, լուսանկարիչ, ատամնաբոյժ Միշա Գիւտեան (Mischa Kudian): Անգլերէնի թարգմանած է «Սասունցի Դաւիթ» էպոսը եւ հայկական հէքիաթներ՝ The Saga of Sassoun: The Armenian Folk Epic, Three Apples Fell from Heaven: A collection of Armenian Folk and Fairy Tales: Նշանակելի են նաև (համացանցին վրայ գոյութիւն ունին) Խորհրդային Հայաստանի իր լուսանկարները (ծնթ.՝ Էլիզ Շարապխանյանի):
29. Բանաստեղծ, խմբագիր Վահե Վահյանը (Սարգիս Աբդալյան, 1908-1998) 1946-1955 թթ. Բեյրութում խմբագրել է «Անի» գրական հանդեսը:
30. Խոսքը նշանավոր փիլիսոփա Գևորգ Խրլոյանի (1927-2010) մասին է:
31. Մշակութային ականավոր գործիչ Երվանդ Ազատյանն է (1935-2023):
32. Դերասան, ռեժիսոր Պերճ Ֆազլյանը (1926-2016) 1976-ին Մորեալում հիմնել է «Հայ բեմ» թատերախումբը:
33. ՀՀԴ գործուն անդամ, մասնագիտությամբ բժիշկ Բաբկեն Փափազյանի (1876-1973) մասին տե՛ս Արամ Հայկազ. Նամակներ, էջ 194-206:

34. Բանաստեղծ, ռեժիսոր, թատերագետ Հովհաննես Փիլիկյանը (1942-2018):
35. Խոսքը ՀՀԴ կենտրոնական մարմնի մասին է:
36. ՀՀԴ գործուն անդամ, քիմիական գիտությունների դոկտոր, նշանավոր բեմադրիչ Հրանտ Մարգարյանը (ծնվ. 1938 թ.):
37. Մարո Մարտիրոսեանը Տորոնտոյի «Համազգային»ի մասնաճիղի նուիրեալ աշխատողներէն էր (ծնթ.՝ Էլիզ Շարապխանյանի):
38. «Համազգայինի» «Յարութիւն Մանուկեան» գրադարանը Տորոնտոյում գործում է 1971 թ. ի վեր: Տիկին Հայկուհի Մանուկյանն ամուսնու մահից հետո նրա հարուստ գրադարանը նվիրել է հայ համայնքին: 1972 թվականից գրադարանին կից գործում է գրատունը:
39. Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի օրգան, գրական-գեղարվեստական պատկերագրող ամսագիր, լույս է տեսել 1945-1988 թթ.:
40. 1975 թ. Լիբանանում սկսվել է 15-ամյա քաղաքացիական պատերազմը, 1976 թ. սիրիական գորքերը Լիբանան են ներխուժել:
41. Վրիպակ է: Ճիշտը՝ 1977 թ.:
42. Շավարշ Միսաքյան (1925-1957) - ՀՀԴ նշանավոր դեմքերից, «Յառաջ» (Փարիզ) թերթի հիմնադիր և խմբագիր: «Օրեր եւ ժամեր» գիրքը՝ *հայոր Ա* նշումով, լույս է տեսել Փարիզում 1958 թ.:
43. Կարո Գևորգյանը (1892-1975) 1954-1968 թվականներին հրատարակել է «Ամէնուն տարեգիրքը» աշխատության 14 հատորները:
44. Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի աշխատակցուհի Գոհար Ազնավուրյանը (1906-1983):
45. Ակնարկը «Հայրենիք» (1922-1970 թթ., Բոստոն) ամսագրի մասին է [խմբագիր՝ Ռուբեն Դարբինյան (Արտաշես Չիլինգարյան, 1883-1968)]: Արամ Հայկազը և Հակոբ Խաչմանյանը (1888-1968) սիրով օգնում էին հայերեն գրքեր ու ամսագրերի հավաքածուներ փնտրողներին և հատկապես դրանք Հայաստանի Հանրապետություն ուղարկողներին: Այդ գործում նրանց եռանդուն աջակիցը Ամենայն Հայոց կաթողիկոս (1955-1994) Վազգէն Առաքինն էր (Լևոն-Կարապետ Պալճյան, 1908-1994): Տիկին Էլիզ Շարապխանյանը գրում է. «Մոռցայ ըսելու, որ այն գրքերը, որոնց մասին Հայկազը կը խօսի, որ բերինք, «Հայրենիք» ամսագրերու ամբողջական լաթակազմ հաւաքածոն էր, Թորոնթոյի գրադարանին համար: Ամուսինը կորսնցուցած տարեց կին մը իր ամուսնուն հաւաքածոն նուիրեց մեզի»:
46. «Արամ Հայկազ» հրեյանական գրքույկը (Նյու Յորք, 1972) և Համաստեղի հուշամատյանը (Նյու Յորք, 1967) ձևավորող նկարիչ Մինաս Մինասյանը (1907-1981):
47. Շարապխանյանների որդիներին՝ Հովհաննեսին և Վազրիկին:
48. «Դեկտեմբեր 1978-ին մեր նկուղային յարկաբաժնէն փոխադրուեցանք մեր սեփական առանձնատունը», – գրում է Էլիզ Շարապխանյանն ինձ ուղղած նամակում:
49. «Բագին» հանդեսի 1979 թ. 4-րդ համարում տպագրված է Արամ Հայկազի «Տրամախօսութիւն դրացի ուղեկցուիի մը հետ» պատմվածքը:
50. Տորոնտոյի «Հայ կեդրոնի» նոր համալիրի բացումը տեղի է ունեցել 1979 թ. հունիսի 16-ին՝ Հյուսիսային Ամերիկայի Արևելյան շրջանի և Կանադայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տեր Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի (1941-2003) օրհնությամբ:
51. Շարադրանքում՝ բախտատութիւն:
52. Արամ Հայկազը 79 տարեկան էր:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ, Դավիթ Անանուն. կյանքը և գործունեությունը, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2023, 226 էջ:



Վերջերս լույս է տեսել բանասիրական գիտությունների դոկտոր, «Պատմաբանասիրական հանդես»-ի գլխավոր խմբագիր Անուշավան Զաքարյանի մենագրությունը՝ «Դավիթ Անանուն. կյանքը և գործունեությունը» խորագրով: Աշխատությունը տպագրվել է ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվ. գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ: Խմբագիրը ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալբերտ Խառատյանն է:

Ժամանակի պարբերական մամուլի և արխիվային հարուստ սկզբնաղբյուրների հիման վրա Ա. Զաքարյանը ստեղծել է ուրույն և ուշագրավ աշխատություն: Մենագրության

«Երկու խոսք»-ը բացվում է Գրիգոր Արծրունու մահվան 25-ամյակի առթիվ Դ. Անանունի՝ նրան ներկայացնող հետևյալ խոսքերով, որն ամբողջովին կարելի է վերագրել այդ տողերը գրողին. «Սև ապերախություն կլինի հաջորդ սերունդների կողմից, եթե նրանք մոռանան կամ անգիտանան նախորդների արածը, և հրամայական պահանջ է, որ այդ սերունդները իրազեկ լինեն իրանց հասարակական կարապետների կյանքին ու գործին» (էջ 7):

Մենագրության տասներկու գլուխներում՝ իրենց ենթաբաժիններով, հեղինակը հանգամանալից քննության է ենթարկում Դ. Անանունի կենսագրությունը, հասարակական-քաղաքական գործչի ձևավորման ընթացքը, գործունեությունը՝ նաև որպես հրապարակագիր, խմբագիր, գրականագետ: Նշվում է, որ նա ծնվել է 1880 թ. մարտի 2-ին Ելիզավետպոլի նահանգի Ջևանջիրի գավառի Մեծ շեն գյուղում (հետագայում՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջան): Սկզբնական կրթությունն ստացել է Շուշիի քաղաքային դպրոցում, ապա շարունակել ինքնակրթությամբ: Երկար տարիներ ապրել և գործել է Բաքվում, ծանայել հայկական մի շարք նավթային ընկերություններում: Այդտեղ էլ տեղի են ունեցել առաջին հանդիպումները ժամանակի նշանավոր գրողների՝ Ավ. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի և այլոց հետ: Հարել է քաղաքական-կուսակցական տարբեր ճամբարների՝ դաշնակցական, սոցիալ-դեմոկրատական, հնչակյան՝ վարելով նաև ղեկավար պաշտոններ: Թողել է գրական հարուստ ժառանգություն՝ շուրջ 10 հատոր ծավալով՝ ներառյալ «Ռուսահայերի հասարակական զար-

գացումը» եռահատոր կապիտալ ուսումնասիրությունը, որոնցում հետևողականորեն արծարծել է «հայության հավաքման գաղափարը, այն է՝ կուլտուրական վերածնունդ, նյութական հզորություն, ազգային ինքնագիտակցություն և հայկական տարածքների միավորում: Իսկ այս ամենի նախապայմանն անկախության անհրաժեշտությունն էր» (էջ 13-14):

Դ. Անանունի առաջին հոդվածը տպագրվել է 1902 թ. մարտի 20-ին Թիֆլիսի «Մշակ» թերթում, որտեղ դժգոհել է, որ Բաքվի հայերին պատկանող գրախանութներում «հայ գիրքը գրեթե ներկայացված չէր...»: 1903-1904 թթ. աշխատակցել է Բուլղարիայում հրատարակվող «Վերածնունդ» թերթին: Նշված տարիներին հրապարակումներ է ունեցել հողային հարցի, ազգային-մշակութային ինքնավարության, ժողովրդավարության և այլ հիմնախնդիրների շուրջ: Մի շարք ելույթներում հանդես է եկել որպես հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման համոզված պաշտպան: Մասնակցել է Մ. Գորկու նախաձեռնած և 1916 թ. ապրիլի վերջին Պետրոգրադում լույս տեսած «Հայ գրականության ժողովածուի» հրատարակությանը, որը «յուրովի բողոք էր երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության դեմ»: Ավելին՝ ժողովածուն բացվում էր Դ. Անանունի «Հայկական հարցը Ռուսաստանում» վերնագրով ծավալուն հոդվածով: 1916 թ. Բաքվում լույս է տեսնում Դ. Անանունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800-1870)» աշխատության առաջին հատորը, որն արժանանում է գրեթե համընդհանուր ուշադրության և գնահատանքի: Այդ տարիներին էջմիածնի ճեմարանում մի շարք առարկաների դասախոս, հետագայում պետական գործիչ, ականավոր պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը խոստանում է հաջորդ տարվանից այդ աշխատությունը մտցնել «ճեմարանի լսարաններում, որպես ձեռնարկ հայոց նոր պատմության»: Վահան Տերյանը Մոսկվայի «Армянский вестник» շաբաթական հանդեսում (1916, թիվ 42-43) տպագրած գրախոսականում համոզմունք է հայտնում, որ «այդ գիրքը նշանավոր երևույթ է մեր՝ նման գործերով աղքատ գրականության մեջ», և որը «կդառնա անփոխարինելի մի ձեռնարկ՝ նախորդ դարերի մեր պատմության ուսումնասիրման համար»: Աշխատության առիթով հեղինակին հղած նամակում անվանի գրաքննադատ Հարություն Սուրխաթյանը խոստովանում է, որ այն հիացրել է իրեն, ընթերցել է «մի շնչով», քանի որ «Իբրև գործ, ուսումնասիրություն, իր տեսակի մեջ առաջինն է մեր գրականության մեջ և եզակի...»:

Ա. Զաքարյանի գնահատմամբ՝ անցյալ դարի 10-ական թվականների գործունեության մեջ առանձին հետաքրքրություն են ներկայացնում Դ. Անանունի գրական-հասարակական առնչությունները Հովհ. Թումանյանի, Վ. Տերյանի, Դ. Դեմիրճյանի և այլոց հետ, ինչպես նաև վերաբերմունքը գրական-մշակութային նշանակալից իրադարձությունների նկատմամբ: Դարասկզբին նա արդեն ակտիվ գրական-խմբագրական գործունեություն էր ծավալել: 1911-1912 թթ. Բաքվի «Նոր կյանք» երկշաբաթաթերթի խմբագիր-հրատարակիչն էր, 1912-ին Բաքվում տպագրել էր «Մեր ուղին» ժողովածուն, հեղինակ էր մի շարք պատմաբանասիրական բնույթի հոդվածների, երբ նույն թվականին Մոսկվայում լույս

տեսած «Գարուն» ավանանիստ (գիրք III, էջ 99-128) առաջին անգամ հանդես է եկել «Անցյալի մեծարանքը (Հովհ. Թումանյանի քնարը)» հրապարակմամբ:

Աշխատության մեջ Ա. Զաքարյանն ընդգծում է, որ 1916-1917 թթ. Դ. Անանունի ազգային-հասարակական, գրական-մշակութային գաղափարների և համոզմունքների տեսակետից կարևոր են նաև նրա արտահայտած գնահատականները Վ. Բրյուսովի՝ Բաքվում ունեցած դասախոսության և Հովհ. Թումանյանի գլխավորած Հայ գրողների կովկասյան ընկերության գործունեության սկզբունքների վերաբերյալ:

1919 թ. փետրվարի 20-ին Թիֆլիսում նշվում է Հովհ. Թումանյանի ծննդյան 50-ամյակը: Բնորոշ է, որ «Մշակ»-ի այդ օրվա համարը բացվում էր Դ. Անանունի «Հարգալի խոսք Հովհ. Թումանյանին» հոդվածով: Ա. Զաքարյանը բերում է «սթափ գնահատականներով լեցուն, բովանդակալից, արդիական հնչեղություն ունեցող հոդվածն ամբողջությամբ» (էջ 77): Ավելի ուշ՝ Թումանյանի 1920 թ. հունվարին հրատարակված «Քառյակներ» գրքույկի առիթով, «Իմացության թախիծը...» վերնագրված հոդվածում հաստատում է, որ «Նրա անունը այլևս որակումներ չի ընդունում. բանաստեղծ է առանց տիտղոսների: ...Տաղանդը ազգային նեղ շրջանակից նրան առաջնորդել է դեպի համամարդկային զգացումների ու խոհերի ասպարեզ: ...Ընտրյալը, ներկա դեպքում բանաստեղծ Հովհ. Թումանյանը, զգում է մարդկության չզգացածը և նրան կոչում դեպի կատարելագործում» (էջ 110-111):

Թիֆլիսում հրատարակվող «Գրական-գեղարվեստական ավանախ»-ի 1920 թ. 5-րդ համարում Ստ. Զորյանի կազմած «Հայ գրականության վիճակը (հայ գրողների կարծիքով)» հարցաշարին Հովհ. Թումանյանի, Շիրվանզադեի, Նար-Դոսի, Դ. Դեմիրճյանի և ուրիշների հետ պատասխանել է նաև Դավիթ Անանունը: Քնարերգության բնագավառում առանձնացնելով «Վ. Տերյանի մուսան», որը, ըստ նրա, «ահա քանի տարի է, որ խլացրել է մյուս ձայները», նա գրում է՝ «այժմ տիրում է գեղեցիկ գրականության բացակայության շրջանը»: Սակայն, նրա կարծիքով, այդ վիճակը երկար չի կարող շարունակվել, որովհետև համոզված է, որ «կերտվում է հայ պատմության նոր շրջանը», որում «իրար պիտի խառնվին երկու տարբեր ապրումներ - անցյալի հիշողությունները՝ լի թախիծով, սուսկումներով և ավստասանքով և ապագայի որոնումները, ուր մտքի վարանումը կցորդված կլինի խիզախության հետ»: Ուրեմն և՛ այդ ընթացքի մեջ «հնարավոր է և՛ ռոմանտիզմը կրոնական շղարշով պարուրված, և՛ ցայտուն ռեալիզմը» (էջ 82):

Հստակ էր Դ. Անանունի տեսակետը նաև հայ լեզվի ապագայի հարցում: Նրա կարծիքով, մասնավորապես արևելահայ ու արևմտահայ բարբառների միաձուլումը ցանկալի չէ, բայց վճռորոշը պետականության իրողությունն է և այն, թե ո՞ր բարբառն ավելի զորեղ կգտնվի: Ըստ այդմ, «...կան տվյալներ, որ այժմվանից նշմարելի են դարձնում ռուսահայ բարբառի գերիշխանությունը»: Գրությունն ավարտվում էր դարձյալ լավատեսական նոտայով. «Մենք հավատով ենք նայում մեր գրականության ապագային»: Ճիշտ ու հետևողական աշ-

խատանքի դեպքում, ըստ նրա, կստեղծվի որոշակի «գրական ճակատ, ուր կխամրի թույլը, և հաղթական ճաճանչներ կարծակե հզորը»:

1918 թվականին Դ. Անանունը, անցնելով Հյուսիսային Կովկաս (Աստրախան, Պյատիգորսկ), հանդիպումներ է ունենում ՌՍՖՍՀ Ազգայությունների գործերի ժողկոմին առընթեր Հայկական գործերի կոմիսար Վ. Ավանեսովի տեղակալ Վահան Տերյանի հետ: Ի դեպ, այդ հանդիպումները, ինչպես պարզվում է օրեր անց, վճռորոշ էին նրա ճակատագրի համար, քանզի «հակահեղափոխական» պիտակով ձերբակալված Դ. Անանունն ու նրա երկու ընկերները հենց Վ. Տերյանի երաշխավորությամբ ազատվում են Էսենտուկիի բանտից: Այդ մասին վկայել է Դ. Անանունն իր հուշերում: «Եթե Հանքային Ջրերում հալածանքի ենթարկված հայ մտավորականներս, - գրել է նա, - անփորձ մնացինք - ապա այդ պարտական ենք բացառապես Վ. Տերյանին» (էջ 73-74): Ճիշտ է, այդ պատճառով հայ բոլշևիկների կողմից Վ. Տերյանը նաև հալածանքների է ենթարկվել «հակահեղափոխականներին» պաշտպանելու համար:

Դ. Անանունի բազմակողմանի գործունեության մեջ որոշակի տեղ է գրավում լրագրական-հրատարակչական ոլորտը: Ըստ Ա. Զաքարյանի, «Արխիվային նյութերից, տարբեր անձանց հետ ունեցած նամակագրությունից պարզվում է, որ 1914-1916 թթ. Դ. Անանունը ձեռնամուխ է եղել պարբերականների հրատարակության»՝ ընդգծելով, սակայն, թե «մեզ չհաջողվեց գտնել այդ մասին ամբողջական որևէ տեղեկատվություն» (էջ 54): Հայտնի է միայն, որ 1916 թ. գարնանը Դ. Անանունը, Պ. Մակինցյանը և Յ. Խանգադյանը Բաքվում նախաձեռնել են «Գործ» ամսագրի հրատարակումը, որը լույս է տեսել 1917 թ. հունվար-դեկտեմբերին: Չնայած ամսագրի ուղղության նկատմամբ եղած որոշ տարակարծություններին՝ առաջին համարի խմբագրականում նշվում էր, որ «Գործը» մի հոսանքի կամ մի ուղղության բերան չէ: Նրա հրատարակման գաղափարը երկնվել է տարբեր աշխարհայացքի տեր մտավորականների մեջ: ...նրա մտահոգությունը լավ ասված, շնորհքով ու հմտությամբ գրված հայ խոսքի գոյությունն է, ո՛ր բանակից էլ ելած լինի նա: Այս տեսակետից խմբագրական կազմը լայն հյուրընկալող է և ոչ նեղսիրտ աղանդավոր» (էջ 62):

1917 թ. գարնանը (ապրիլ-հուլիսին) Անանունն աշխատակցել է Բաքվում հրատարակվող ՍԴԲՀԿ պաշտոնաթերթ «Բանվոր» շաբաթաթերթին (լույս է տեսել 6 համար)՝ լինելով հիմնական հոդվածագիրը: Ա. Զաքարյանը նշում է, որ Ստ. Զորյանի 1919 թ. հուլիսի 6-ի նամակից պարզ է դառնում նաև, որ «Դ. Անանունը մտադիր է եղել Երևանում հրատարակել «Ազդարար» անունով պարբերական» (էջ 65):

Բավական բուռն ու դժվարին է եղել Դ. Անանունի հասարակական-քաղաքական և գրական գործունեությունը 1917-1920 թվականներին Անդրկովկասում փոթորկվող իրադարձություններում, որը անվանի գրականագետը ներկայացրել է քննախույզ հայացքով: Հատկապես Ռուսաստանում բռնկված Փետրվարյան հեղափոխության ազդեցությամբ երկրամասում ևս իրար էին բախվում սոցիալական տարբեր խմբեր, գաղափարներ, տեսակետներ: 1917 թ. սեպտեմ-

բերի 29-ից հոկտեմբերի 13-ը Թիֆլիսում ընթացող Հայոց ազգային համախորհրդակցության երկրորդ նիստում (սեպտեմբերի 30-ին) ունեցած իր ելույթում («Մոմենտը և նրա հետ կապված խնդիրները») Անանուն առանձնացնում է հակադիր երկու տեսակետ. «Մեծամասնությունն ասում է, թե խորտակելով հնի խարխուլ շենքերը, պիտի կառուցանել բուրժուական հասարակարգ, մյուսն ասում է՝ բուրժուական հասարակարգը գոյություն չպիտի ունենա, այլ անմիջապես թագավորե սոցիալիստական հասարակարգ»։ Քննարկելով օգուտներն ու վնասները հայոց ազգային շահերի տեսանկյունից՝ նա հայտարարում է, որ, այնուամենայնիվ, «կռալիցիան անհրաժեշտ է»։ Ի վերջո, բուն բանավեճերից հետո, արձանագրվել է. «...խորհրդաժողովը ցույց տվեց և համոզեց ամենքին, բոլոր հոսանքների և կուսակցությունների ներկայացուցիչներին, որ ներկա քաղաքական տագնապայից թուպին, երբ հայ ժողովրդի համար կյանքի և մահի խնդիրն է լուծվում, անհրաժեշտ է ամենքի միասնությունը, համագործակցությունը և համերաշխ գործունեությունը» (էջ 69)։

1917 թ. հոկտեմբերի 4-7-ը Թիֆլիսում գումարված հայ սոցիալ-դեմոկրատների համախորհուրդը բացվել է Դ. Անանունի զեկուցմամբ, որտեղ նա արտահայտում է իր տեսակետը սոցիալ-դեմոկրատական աշխատանքները հայ իրականության մեջ կազմակերպելու սկզբունքների վերաբերյալ։ Քննարկման արդյունքում որոշվել է «միավորել ուժերը Անդրկովկասում սոցիալ-դեմոկրատական գաղափարների տարածման համար, ստեղծել կազմակերպչական միություն, մշակել միասնական ծրագիր և տակտիկա»։ Սակայն, ինչպես նշում է Ա. Զաքարյանը, միավորումը «ինչ-ինչ պատճառներով տեղի չի ունենում» (էջ 70)։

Սոցիալ-քաղաքական հիշյալ գործընթացներն իրենց ազդեցությունն էին ունենում ազգամիջյան հարաբերությունների վրա։ Այդ հարցում Դ. Անանունի հայացքների և դրսևորած վարքագծի տեսանկյունից բնորոշ են 1918 թ. մարտի վերջին Բաքվում մուսավաթական ուժերի և Բաքվի խորհրդային իշխանության (Կոմունայի) զորքերի միջև տեղի ունեցած ծանր մարտերը։ Այդ օրերին Արևելյան Անդրկովկասի բաքվաբնակ հայերի կազմակերպության գործադիր կոմիտեի նախագահ Դ. Անանունը Ազգային խորհրդի որոշմամբ նշանակվել էր «մուսուլմանների հատուկ խնամատար-կոմիսար ...քաղաքի հայկական մասում ապրող կամ պատսպարված մահմեդականների՝ թուրքերի, պարսիկների և լեռնականների գործերով» (էջ 71)։ Եվ ահա թե նշված իրադարձությունների մասին ինչ է հեռագրել առևտրաարդյունաբերող, թաթարների շրջանում մեծ հեղինակություն վայելող Հաջի-Ջեյնալ-Աբդիլ Թադիևը մարտի 27-ին Անդրկովկասյան կոմիսարիատի նախագահ Ե. Գեգեչկորիին. «Երկրի բարօրության օգտին ես անձամբ իմ քաղաքացիական պարտքն եմ համարում հայտարարելու, որ Բաքվի անցքերը հայ-թուրքական ընդհարման բնույթ չէին կրում։ Կոմիտեի ամբողջ ընթացքում... հայկական զորամասերը փրկեցին և ապաստան տվին ավելի քան 14.000 մուսուլմանների, որոնց հետո վերադարձրին պարսից հյուպատոսի միջոցով» (էջ 72)։

Մենագրության մեջ Ա. Զաքարյանն առանձին գլուխ է նվիրել 1918-1920 թթ. Ղարաբաղի (Արցախի) շուրջ տեղի ունեցած ճակատագրական իրադարձությունների շրջանում Դ. Անանունի ակտիվ գործունեությանը: 1918 թ. դեկտեմբերի կեսերից նա Հովհ. Թումանյանի նախագահությամբ գործող «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» լիազոր ներկայացուցիչն էր Ղարաբաղի (Շուշիի և Զևանշիրի գավառների) հայ բնակչության կրած նյութական վնասների քննության գծով: Բնական է, որ այդ և հետագա մեկ-երկու տարիներին հաճախակի այցելել է երկրամաս և հանդես եկել հողվածաշարերով: Ի դեպ, 1915 թ. նա եղել է Թիֆլիսի «Մշակ» թերթի Բաքվի թղթակիցը, իսկ 1919 թ. մարտի 1-ից ընդունվել թերթի խմբագրական խորհրդի կազմում: Պատահական չէ, ուրեմն, որ Անանունի «Ղարաբաղ (ուղևորի դիտողություններ)» յոթ մասից բաղկացած ծավալուն հողվածը տպագրվել է հենց «Մշակ»-ում 1919 թ. փետրվար-մարտին:

1919 թ. հունիսի սկզբին Շուշիի և շրջակա հայկական գյուղերի հայերի կոտորածների կապակցությամբ, բողոքի ցույցեր են տեղի ունենում Երևանում ու Թիֆլիսում: Թիֆլիսի վերջին՝ հունիսի 22-ին, կայացած համահայկական մեծ հավաքը ևս՝ Հովհ. Թումանյանի գլխավորությամբ, ընդունել է բանաձև, որով հավաքի մասնակիցները՝ «...վստահ Անտանտայի ժողովուրդների, կառավարությունների և Փարիզի կոնֆերանսի նրանց ներկայացուցիչների արդարամտության ու բարեկամական զգացմունքին», խնդրում, պահանջում էին Ղարաբաղից հեռացնել Ադրբեջանի իշխանությանը, կոտորածի հեղինակներին ձերբակալել ու դատի տալ, թույլատրել, որ Ղարաբաղը կցվի Հայաստանին: Թիֆլիսում և Երևանում կայացած բողոքի ցույցերին մասնակցել և կրակոտ ելույթներ է ունեցել նաև Դ. Անանունը: Ինչ վերաբերում է Շուշիի հայության կոտորածներին, ապա Ա. Զաքարյանը նշում է. «...որքան հայտնի է, Դ. Անանունը քաղաքի՝ 1919 և 1920 թվականների կոտորածների մասին մամուլում հանդես չի եկել» (էջ 91), սակայն ծավալուն մեջբերումներ է անում Լեոյի՝ 1919 թ. հունիսի 18-ին Երևանում գտնվող Դ. Անանունին գրած նամակից, որտեղ նա հանգամանորեն տեղեկացնում էր նրան Շուշիի անկման պատճառների՝ թուրքերի գազանությունների և անզվիական զորապետների երկերեսանիության մասին (էջ 89-91):

1919-1920 թվականները, կարելի է ասել, վճռորոշ տարիներ էին Դ. Անանունի համար: Նրա մինչ այդ ունեցած փորձը, գիտելիքներն ու կարողությունները նկատվել են, և այդ շրջանում նա զբաղվել է հասարակական ու գրական ակտիվ գործունեությամբ: 1919 թ. մայիսին ՀՀ պարենավորման նախարարության կողմից առաջարկ է ստացել զբաղեցնելու նախարարության քարտուղարի պաշտոնը, որը, սակայն, չի իրականացել նախարար Ք. Վերմիշյանի իրաժարականի պատճառով: Հունիսի վերջին «դիվանագիտական առաքելությամբ» մեկնել է Ղարաբաղ՝ ՀՀ կառավարության կողմից նշանակված լինելով «Շուշիում բրիտանական հրամանատարության մոտ Հայաստանի ներկայացուցիչ»՝ «Շուշու հարցի առթիվ» (էջ 96): Սակայն, ինչպես գրում է Ա. Զաքարյանը, հուլիսի 6-ին Ստ. Զորյանի՝ Ղարաքիլիսայից Դ. Անանունին գրած նամակից հայտ-

նի է դառնում, որ «Ազրբեյջանի կառավարությունը» չի ընդունել «Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին», ինչի համար Ստ. Զորյանը խորհուրդ է տվել նրան չվիատվել (էջ 96-97):

Հովիսի սկզբին Դ. Անանունը միանում է հայրենիքում համախմբվող մտավորականությանը, Թիֆլիսից փոխադրվում Երևան և ակտիվորեն մասնակցում Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական ու գրական-մշակութային կյանքին: Ըստ Ստ. Զորյանի վերոհիշյալ նամակի՝ Բաքվի մեծահարուստ Մայիլյան եղբայրները նպատակ են ունեցել գնել «Մշակ» թերթը և փոխադրել Երևան: Այդ կապակցությամբ նա հորդորել է Դ. Անանունին՝ առաջարկ լինելու դեպքում չմերժել թերթի խմբագրի պաշտոնի ստանձնումը, «որովհետև գրական գործը քեզ (ինչպես և ինձ) հետաքրքրում է ավելի, քան որևէ ուրիշ բան» (էջ 98): Այդ «ձեռնարկը», սակայն, չի հաջողվում և շատ չանցած՝ Անանունը հրավիրվում է աշխատելու ՀՀ ներգաղթի և վերաշինության վարչությունում: Ներկայացնում է իրականացվելիք աշխատանքների իր ծրագիրը, ըստ որի՝ «Մեր կառավարության օրինական մտահոգությունը պիտի կազմե հայրենիքի նվաճումը: Հայ տարրի ցիրուցան վիճակը պիտի գտնի իր վախճանը, և կառավարությունը համառ ու ծրագրված աշխատանքով պիտի գլուխ բերի հայահավաքման գործը...»: Աշխատանքի նշանակումը, սակայն, ինչ-ինչ պատճառներով, նույնպես տեղի չի ունեցել, արձանագրում է Ա. Զաքարյանը (էջ 98):

Դ. Անանունը 1919 թ. կեսերին ընտրվել է Երևանում հիմնված Հայաստանի գրական ընկերության վարչության անդամ: 1919 թ. օգոստոսին նշանակվել է հունվարից հրատարակվող «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթի խմբագիր՝ փոխարինելով Ս. Վրացյանին: Քարտուղարը Ստ. Զորյանն էր, իսկ թերթի բնաբանը՝ «Միությունը ուժ է»: Հատկանշական է, որ թերթն ուներ «Գրական բաժին»՝ ժամանակի անվանի դեմքերի (Հովհ. Թումանյան, Ե. Զարենց, Ստ. Զորյան, Դ. Դեմիրճյան և ուրիշներ) մասնակցությամբ, որի համար, մենագրության հեղինակի հավաստմամբ, «օրինականորեն կարելի է այն համարել «Նորք» հանդեսի արժանավոր նախորդը Հայաստանի հողի վրա» (էջ 104-105): Նույն շրջանում Անանունը՝ Ս. Վրացյանի ու Եր. Հարությունյանի հետ, խմբագրել է նաև «հանրապետության խորհրդարանի նախագահության նախաձեռնությամբ հրատարակվող «Բանակի օր» մեկօրյա թերթը», որտեղ տպագրվել են Հովհ. Թումանյանը, Հովհ. Հովհաննիսյանը, Ավ. Իսահակյանը, Լեոն, Վրթ. Փափագյանը, Ստ. Զորյանը... (էջ 107-108):

Աշխատության մեջ Ա. Զաքարյանը քանիցս արձանագրում է, որ Դավիթ Անանունը Հայաստանի անկախության ջատագովներից էր: 1920 թ. հունիսի 12-ին Ղարաքիլիսայում՝ հավաքի ժամանակ նա պնդում է, որ «Մենք պիտի ջանանք միջազգային դաշնագրով և օրենքով ապահովել մեր անկախությունը, որի համար կառավարությունը հարկ եղած միջոցների պիտի դիմե Վեհաժողովում (Փարիզի խաղաղության կոնֆերանսում – Ա.Զ.), և առավելապես Եռյակ Համաձայնության կառավարությունները պարտավոր են բավարարել իրենց փոքր դաշնակցի արդար պահանջները...» (էջ 116): Այդ համատեքստում բարձ-

րացնում է նաև Ղարաբաղը «մայր երկրի» հետ վերամիավորելու հարցը: Հունիսին նա ընտրվում է Երևանում ապրող ղարաբաղցիների Հայրենակցական միության վարչության նախագահ: «Հայաստանի կոոպերացիա»-ի 1920 թ. 17-րդ համարում (սեպտեմբերի 15-ին) տպագրվելիք «Ղարաբաղ» հոդվածի «սրբագրական փորձերում», որն ուղարկել էր ՀՀ վարչապետ Հ. Օհանջանյանին, Դ. Անանունը վճռականորեն առարկում էր այն գործիչներին, որոնք Ղարաբաղի պատկանելության հարցը կապում էին տնտեսական նպատակահարմարության հետ: «Այդ հոդվածի մեջ ես աշխատում եմ ապացուցել, - գրում է նա, - որ տնտեսապես Ղարաբաղը պատկանում է Հայաստանին, Ղարաբաղը միշտ եղել է և մնացել է այսօր տնտեսապես ինքնամփոփ (самодовлеющая) երկիր. սա ամենամեծ նշանն է, որ նրան կարելի է առանց ցնցումների կցել այս կամ այն երկրին: ...մեր օրերում հարց հարուցել այս կամ այն երկրամասի տնտեսական հակման (тяготение) մասին և դրանով լուծել խնդիրները՝ ուղղակի անթույլատրելի է»: Նա ելնում էր ազգերի՝ իրենց ճակատագիրը տնօրինելու իրավունքի գերակայությունից, պնդելով, որ «յուրաքանչյուր անհատ և յուրաքանչյուր ազգություն իր ճակատագրի դարբնոցը ինքն է, միայն թե գիտակցություն ու բարի կամեցողություն լինի»: «Ես հույսով եմ, - գրում է նա, - որ Ղարաբաղի հարցում զիջողություն չի կարող լինի: Ուրախ կլինեմ, եթե իմ հոդվածը այս ուղղությամբ ավելի ամրացնե հայ գործիչներին իրանց համոզմունքների մեջ» (էջ 122-123): Հատկանշական է նաև այն, որ Անանունն առաջարկել էր «խճուղի անցկացնել»՝ Ղարաբաղը Հայաստանին կապելու համար, Շուշին վերաշինելու ծրագրեր էր մշակել, քանզի, ինչպես ծանոթագրում է Ա. Զաքարյանը, «Դ. Անանունը երբեք չկորցրեց հույսն ու հավատը հարազատ երկրամասի ապագայի նկատմամբ» (էջ 125):

Հայաստանի խորհրդայնացումից հետո Դավիթ Անանունը մնացել է հայրենիքում: Չնայած բոլշևիկյան գաղափարախոսության համար նախորդ տարիներին ունեցած մի շարք «վտանգավոր» տեսակետներին՝ նրա նկատմամբ որևէ բռնություն կամ ոտնձգություն չի կատարվել: Անցնելով ազգային-քաղաքական, գաղափարախոսական ստորջրյա խոչովտության միջով (եղել է դաշնակցական, ապա սոցիալ-դեմոկրատների կուսակցության անդամ, այսպես կոչված՝ «սպեցիֆիկ» և այլն)՝ նա հավատարիմ է մնացել հայոց անկախ պետականության, հայահավաքման, ազգային առողջ ու անվտանգ ապագայի կերտման իր դավանած հիմնարար սկզբունքներին: Ըստ մենագրության հեղինակի՝ խորհրդայնացման առաջին տարիներին Դ. Անանունի նկատմամբ եղած «ներողամիտ» վերաբերմունքը պայմանավորված է եղել նաև «նախկին սպեցիֆիկ, ժամանակի ազդեցիկ բոլշևիկ Աշոտ Հովհաննիսյանի հետ մտերիմ կապերով» (էջ 144): Նման իրավիճակը հնարավորություն է տվել Անանունին շարունակելու իր ակտիվ և բազմակողմանի գործունեությունը հանրապետության կյանքի տարբեր ոլորտներում: 1921-ի Փետրվարյան ապստամբության ճնշումից հետո հաշտարար դեր է խաղացել Զանգեզուրի (Լեռնահայաստանի) հակաբոլշևիկյան պայքարի ղեկավարների և խորհրդային իշխանության միջև բանակցություններում,

որն ամենևին աննկատ չի մնացել: Ստ. Ջորյանն այդ օրերին Դ. Անանունին գրել է. «Իմացա, որ գնում ես Ջանգեզուր, իբրև պատվիրակ: Թիֆլիսի հայ հասարակությունը, որ վերջերս զարմանալի հետաքրքրություն է ցույց տալիս դեպի Հայաստանն ու հայ ժողովուրդը, մեծ հույսեր է կապում քեզ հետ այն իմաստով, որ քո առաքելությամբ կարող ես վերացնել ժողովրդին սպառնացող աղետը: ...քո անունը միացնում է շատ-շատերին և հույսեր է ներշնչում: Մի խոսքով՝ դու դառնում ես կամ ավելի շուտ՝ դարձել ես համազգային դեմք» (էջ 147):

Հիշյալ տարիներին Դ. Անանունը պատասխանատու մի շարք պաշտոններ է զբաղեցրել հանրապետության կուլտուր-լուսավորական աշխատանքի ասպարեզում. եղել է ՀՍԽՀ պարենավորման ժողովրդական կոմիսարիատի կուլտուր-մշակութային բաժնի քարտուղար, կոմիսարիատի քարտուղարության հրատարակչական բաժնի վարիչ, Հայաստանի պետական թանգարանի հեղափոխության բաժնի վարիչ: Որպես «Հայաստանի կոոպերացիա» և Հայկոոպի օրգան «Վերածնունդ» պարբերականի խմբագիր՝ վարել է Հայկոոպի խմբագրական բաժինը:

Նշանակալից է նաև Դ. Անանունի գործունեությունը նորաստեղծ հանրապետության գիտական հաստատությունների կայացման և գիտական ներուժի խթանման ոլորտում: 1921 թ. հուլիսի 6-ին նա նշանակվում է Էջմիածնի գիտական ինստիտուտի աշխատակից և անմիջապես ձեռնամուխ լինում արևելահայության շրջանում հասարակական-քաղաքական շարժումների ուսումնասիրությանը: Հոկտեմբերին հրավիրվում է աշխատակցելու «Էջմիածնի Գիտական Ինստիտուտի Բանբեր»-ին: Միաժամանակ հանդես է գալիս դասախոսություններով, տպագրվում ինստիտուտի տարեգրքում: 1922 թ. Էջմիածնում տպագրվում է Դ. Անանունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը» գրքի երկրորդ հատորը, որն ընդգրկում էր 1870-1900 թթ. ժամանակաշրջանը: 1921-1923 թթ. աշխատել է դպրոցական-կրթական բնագավառում՝ Վաղարշապատի II աստիճանի դպրոցում՝ որպես ընդհանուր պատմության ուսուցիչ: Պատմություն է դասավանդել նաև Ամերիկյան երեկոյան դպրոցում...

Դ. Անանունի բազմակողմանի գործունեության հատկանշական դրվագներից է նաև այն, որ նա Լեոյի, Հ. Մանանդյանի, Թ. Ավդալբեգյանի, Ստ. Լիսիցյանի և անվանի այլ դեմքերի հետ հրավիրվել է մասնակցելու 1925 թ. հունիսի 11-ին և 13-ին Աշոտ Հովհաննիսյանի նախաձեռնությամբ Լուսժողկոմատի շենքում հրավիրված պատմաբանների խորհրդակցությանը, որի նպատակը «Հայոց պատմությունը» ձեռնարկի ծրագրի կազմելն էր: Ընդ որում, հետաքրքիր է, որ այն ժամանակ ևս քննարկվել են ոչ միայն հայոց պատմության սկզբնավորման ու պարբերացման, այլև ձեռնարկը «Հայոց», թե «Հայաստանի» պատմություն կոչելու հարցերը (էջ 159): Իր գիտահետազոտական գործունեության մեջ Անանունը նաև զգալի ջանքեր է ներդրել Հայաստանում պատմագիտության զարգացման համար նախադրյալներ ստեղծելու ուղղությամբ: Մի շարք հոդվածներ է տպագրել՝ մասնավորապես, «Մոտիկ անցյալից» ընդհանուր խորագրով և XIX դ. 80-ական թվականների ազգային-ազատագրական շարժումների վերա-

բերյալ: Ուշադրության է արժանի նաև Բաքվի «Մարդասիրական ընկերություն հայոց (գործունեության հիսունամյա պատմություն. 1864-1913)» վերնագրով աշխատությունը: Հետևապես, պատահական չէ, որ 1926 թ. Թ. Ավդալբեգյանի ու Ե. Շահագրգի հետ ընտրվել է 1925 թ. ապրիլի 27-ին ստեղծված ՀՍՍԲ գիտության և արվեստի ինստիտուտի պատմահասարակական բաժնի անդամ (էջ 166):

Դ. Անանունի խմբագրական-հետազոտական գործունեության մեջ կարևոր է նշել Պետական թանգարանի նախաձեռնած Ալ. Մյասնիկյանի ժողովածուի համար նրա հոդվածների հավաքման աշխատանքների ղեկավարումը, ակտիվ մասնակցությունը Վ. Տերյանի երկերի 1-3 հատորների՝ Կ. Պոլսում (1924 թ.) և 4-րդի՝ Երևանում (1925 թ.) հրատարակության նախապատրաստմանը, աշխատակցությունը 1922 թ. Երևանում Ա. Հովհաննիսյանի, Պ. Մակինցյանի և Ա. Մոսվյանի խմբագրությամբ հրատարակվող «Նորք» գրական, գիտական և քաղաքական հանդեսին: Իսկ 1926 թ. Վենետիկում տպագրվում է Դ. Անանունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը (1901-1918)» վերնագրով աշխատությունը:

Չնայած այդ ամենին՝ կյանքի վերջին մեկուկես տասնամյակը (1927-1943 թթ.) Դ. Անանունն անցկացրել է բանտերում և քստրավայրերում (Թիֆլիս, Երևան, Մոսկվա՝ Բուտիրկա, Սիբիր՝ Տոմսկի շրջանի Նարիմի երկրի Իլինո գյուղ, Աստրախան, Ուֆա): Ա. Ջաքարյանի բնութագրմամբ՝ խառնակ ժամանակներ էին, և ազգային ավանդական արժեքների պաշտպանության, հայահավաքման, «Ռուսահայերի հասարակական զարգացումը» եռահատոր ուսումնասիրության հիմքում ընկած մի շարք այլ գաղափարներ սուր քննադատության էին ենթարկվում 1920-1930-ական թվականներին խորհրդային ուղղափառ գաղափարախոսության կրողների կողմից: Դ. Անանունին պիտակավորում էին «տխրահոջակ», «տիրացու», «ազգայնամոլ», «վնասակար» անվանումներով, որի հետևանքով 1926 թ. դեկտեմբերի 1-ին նա ազատվում է Պետական թանգարանի հեղափոխության բաժնի վարիչի պաշտոնից՝ ի վերջո, համարվելով «պրոլետարական հեղափոխության և խորհրդային իշխանության կատաղի թշնամի»: Հատկանշական է, սակայն, որ նույնիսկ բանտի կամ քստրի տաժանագին պայմաններում Անանունը չի կորցրել իր սիրած աշխատանքներով զբաղվելու հետաքրքրությունն ու կարողությունը: Դրա վկայություններից մեկը 1928 թ. հուլիսի 5-ին Իլինոյից Կ. Միքայելյանին գրած նամակն է, որով խնդրում էր թերթեր և գրքեր՝ առավելապես «պատմական աշխատություններ» ուղարկել, քանզի «Եթե ձեռքիս տակ բավարար նյութ ժողովվեր, ապա կձեռնարկեի գրել ռուսական հեղափոխության մասին մի աշխատություն: Երկու տարուց ավելի պիտի մնամ քստրում ...և սա բավական միջոց է մի լավ աշխատություն պատրաստելու համար» (էջ 192): Նա պարբերաբար մեկ այլ ընկերոջը՝ Թ. Ավդալբեգյանին է ուղարկել քստրավայրերում գրած իր ուսումնասիրությունները, բայց, ցավոք, դրանք չեն պահպանվել: Վերջինիս ձեռբակալությունից հետո նրա կինը այդ ձեռագրերը հանձնել է «իր ազգական՝ հայտնի բանասեր, պատմաբան ու մանկավարժ Ստե-

փան Կանայանին», որի մահից հետո էլ, ընտանիքը ոչնչացրել է այդ ամենը: «Այդպիսով՝ դաժան ճակատագրի է արժանացել ոչ միայն Դ. Անանունը, այլև ծանր պայմաններում, անկասկած, մեծ գոհողությունների գնով ստեղծված նրա գիտական ժառանգության մի մասը»՝ մեջբերելով պատմաբան Վ. Հակոբյանի եզրահանգումը, վկայում է Ա. Զաքարյանը (էջ 199):

Հայագետ, հասարակական-քաղաքական գործիչը մահացել է 1943 թ Աստրախանում, արդարացվել է տասնամյակներ անց՝ 1989 թ. հունվարի 16-ին:

Անուշավան Զաքարյանի՝ Դավիթ Անանունի կյանքի ու գործունեության հնարավորինս ամբողջական քննությունը ներկայացնող և արդիական կարևոր հնչեղություն ունեցող այս աշխատությունն ուղղված է պատմական արդարության վերականգնմանը՝ անցյալի մեր շատ «մոռացված» դեմքերի հետ նրան ևս «վերադարձող անունների» պատվավոր շարքում դասելու հրամայականին:

ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

pdemirchyan@mail.ru

Eric Clavier & Luc Stevens, Les greniers souterrains d'Arménie, Chemins souterrains, V. 1, Saint Etienne, Edité par l'association Chemins Souterrains, 2023, 180 p.



Հայաստանի քարե դռներով քարանձավ-ամբարները դարձել են «Ստորգետնյա հետազոտությունների ֆրանսիական ընկերության» անդամներ Էրիկ Կլավիեի և Լյուկ Ստեվանի (Eric Clavier & Luc Stevens) ծավալուն ուսումնասիրության առարկան: Սնդամթերքի համար նախատեսված հորեր ունեցող այս ստորգետնյա ամբարները (հացահատիկի շտեմարանները) տեղակայված են բնական քարանձավներում, որոնք արտաքին աշխարհի հետ միանում են ցածր ու նեղ միջանցքներով: Վերջիններս կահավորված են քարե մեկ կամ մի քանի դռներով: Այդ քարանձավները գտնվում են Արագածի հարավային լանջերին՝ Աղջք, Կոշ, Ուջան, Փարպի, Ավան, Լեռնարոտ և այլ բնակավայրերի տարածքներում:

2023 թ. Է. Կլավիեն և Լ. Ստեվանը հրատարակել են «Հայաստանի ստորգետնյա շտեմարանները» ընդարձակ և պատկերազարդ ուսումնասիրությունը: Մինչ այս հետազոտությունը նրանք արդեն մեկ այլ հիմնարար՝ «Քարե դռներ» աշխատության մեջ (Les portes en pierre, Chemins souterrains, Saint Etienne, 2022, 234 p.) մի քանի էջի սահմաններում արդեն անդրադարձել էին Հայաստանի ստորգետնյա շտեմարաններին: Հեղինակները մոտ մեկ ամիս (2019 թ. ապրիլ-մայիս) իրենց ուսումնասիրություններն են կատարել մեր երկրի տարածքում՝ հետազոտելով Արագածոտնի մարզի 13 ստորգետնյա ամբարներ և Հայաստանի տարածքում սփռված քարե դռներ ունեցող 6 վերերկրյա շինություններ: Օգտագործելով նաև հայ մասնագետների ուսումնասիրության արդյունքները՝ հեղինակները ներկայացրել են Արագածոտնի ստորգետնյա շտեմարանների տեղակայման քարտեզը:

Ներածությանը հաջորդող աշխատության հիմնական բաժինը բաղկացած է երեք մասից, յուրաքանչյուր մասն էլ իր հերթին՝ մի քանի գլուխներից: Գիրքն ավարտվում է մոտ 35 հոդվածներ և մենագրություններ ներկայացնող գրականության ցանկով և շնորհակալական խոսքերով՝ ուղղված այդ աշխատանքին գործուն աջակցություն ցույց տված կազմակերպություններին և անձանց:

Առաջին մասում ներկայացվում է Արագածոտնի մարզի ստորգետնյա ամբարների տարածքի ընդհանուր բնութագիրը՝ աշխարհագրական տեղադիրքը, երկրաբանական կառուցվածքը, Հայկական աշխարհագրական ընկերության և Հայաստանի անձավագիտական կենտրոնի, Հայաստանի ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի մասնագետների կողմից 1980-2020-ական թթ. իրականացված անձավագիտական հետազոտությունների և ուսումնասիրությունների արդյունքները:

Ստորգետնյա ամբարները տեղակայված են Քասաղ, Ամբերդ գետերի և Արագածի հարավային լանջերով հոսող գետակների ձևավորած փոքր կիրճերի և ձորերի զառիթափ լանջերին՝ զբաղեցնելով լավային-կոնտակտային քարանձավների տարածքները: Վերջիններս ձևավորվում են երկու հարևան լավային շերտերի միջև առկա փոփոխ գոյացությունների (խարամ, լիթոմարգե) էրոզիայի և տեղատարման հետևանքով: Ձևավորված խոռոչները (քարանձավները) երբեմն զբաղեցնում են մինչև 120 քառ. մ տարածք: Ամբարների մուտքերը շատ դեպքերում դժվար նկատվող են թե՛ լանդշաֆտի և թե՛ չափերի պատճառով: Բացի այդ, կառուցողները կիրառել են նաև քողարկման տարբեր ձևեր՝ մուտքերի հատվածներում կուտակել են քարեր, կամ դրանք ուղղված են եղել ոչ թե դեպի ձոր, այլ ուրիշ ուղղություն են ունեցել: Մուտքերի չափերը չեն գերազանցում 1 մ-ը, լայնությունը՝ 0.6 մ-ը: Բոլոր շտեմարաններն էլ գտնվում են բնակավայրերի սահմաններից դուրս: Նման տեղադիրքը թույլ է տվել ապահովել ամբարների պահպանությունը. կողոպտիչների համար ձորերը և կիրճերը դժվարհասանելի են եղել, քանի որ դրանք վտանգավոր տարածքներ էին անգամ նրանց համար: Բացի այդ, կիրճերի և ձորակների միջև եղած տարածքներն ունեցել են հարթ ռելիեֆ և լավագույն հողահանդակներ են հանդիսացել հացահատիկային մշակաբույսերի (ցորեն, գարի, վարսակ և այլն) աճեցման համար: Արտերի և ամբարների անմիջական հարևանությունը թույլ է տվել մաքրված ու գտված հացահատիկը անմիջապես ամբարել հենց արտերի հարևանությամբ գտնվող ստորգետնյա շտեմարաններում:

Աշխատության այս մասում հեղինակները մանրամասնորեն նկարագրել են ստորգետնյա ամբարների տարածքների առանձին մասերը՝ բնական քարանձավները (կառուցվածքը և մակերեսները), միջանցքները (երկարությունը և դռների քանակը), քարե դռները (չափերը, ապարատեսակը, պատրաստելու համար նախատեսված գործիքները, հղկվածությունը), այդ դռների շրջանակների կառուցվածքը (չափերը, առանձին մասերի կառուցվածքային առանձնահատկությունները), փականները (քարե դռների մի մասն ունեցել է կողպեք, սակայն դրանցից ոչ մեկը չի պահպանվել), քարե դռների մեջ փորված բռնակների տեսակները, նաև պահեստային սենյակները և դրանք պարփակող պատերը, վերջիններիս մեջ տեղադրված խորշերը և դրանց նշանակությունը, հորերը (դասավորվածությունը պահեստի ներսում, չափերը, կառուցվածքը, ձևը, վերնամասի կառուցվածքը), հորերի կափարիչները (ձևերը, չափերը, ապարատեսակը) և այլն:

Հեղինակները նկատել են հետաքրքիր օրինաչափություն՝ իրենց ուսումնասիրած քարե դռների բարձրությունների և լայնությունների հարաբերությունը կազմում է 1,5:1: Միջանցքների և դռների շինվածքը վկայում է դրանք կառուցողների բարձրակարգ վարպետության մասին: Մեկ միջանցքում տեղադրված մի քանի քարե դռները ստեղծում են բուֆերային գոտի՝ դանդաղեցնելով օդի ջերմաստիճանի փոփոխությունը պահեստում: Մանրամասն ներկայացվել է (նկարագրությունը ուղեկցվել է առանձին փուլերը պատկերող սխեմատիկ նկարներով) ստորգետնյա ամբարների շինության գործընթացը՝ քարանձավի ընտրություն, դրա ներքին չափերի մեծացում, հատակային մասում հորերի տեղադրում, հենապատերի և միջանցքի կառուցում, քարե դռների տեղադրում, խոռոչի մուտքի քողարկում: Գրքի այս հատվածում անդրադարձ կա նաև ստորգետնյա ամբարների բնական միջավայրին, ամբարներում պահվող սննդամթերքի տեսակներին, դրանց կառուցման պատճառներին (հեղինակների կարծիքով՝ թշնամիների ասպատակություններից սննդամթերքի պաշարների փրկությունն էր), թվագրմանը (դրանք առնչվում են միջնադարին՝ հավանաբար, XI-XV դդ. կառույցներ են):

Աշխատության 2-րդ մասում ներկայացված են Արագածոտնի մարզի 13 ստորգետնյա ամբարների մասին 2019 թ. կատարված դաշտային հետազոտությունների արդյունքները: Դրանք խմբավորված են 5 համալիրներում, յուրաքանչյուրում՝ 1-ից մինչև 4 ստորգետնյա ամբար: Համալիրների ընդհանուր պատկերը արտացոլված է Google Earth-ի տիեզերական նկարներում, որոնք հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու աշխարհագրական միջավայրի առանձնահատկությունների մասին: Ուսումնասիրված տարածքը ներկայացված է առանձին քարտեզով, որտեղ տրված են հետազոտված տարածքները և ստորգետնյա ամբարները: Դրանք սփռված են մոտ 200 քառ. կմ տարածքի վրա: Յուրաքանչյուր ամբարի աշխարհագրական դիրքի մասին համառոտ տվյալներ տալուց հետո մանրամասնորեն նկարագրվում են այդ կառույցների ընդհանուր ճարտարապետական-շինարարական առանձնահատկությունները, ինչպես նաև տրվում են առանձին տարրերի՝ սրահ-պահեստների, միջանցքների, քարե դռների, հորերի և այլ բնութագրերը: Ամբարների խոշորամասշտաբ հատակագծերը, լուսանկարները, սխեմաները կազմում են յուրաքանչյուր նման տարածքի նկարագրության կարևոր մասը. դրանց միջոցով ընկալելի է դառնում ստորգետնյա այդ կառույցների ստեղծման ողջ գործընթացը: Մանրամասն հետազոտված ամբարներն ունեն հետևյալ աշխարհագրական տեղաբաշխումը՝ Լեռնարոտում՝ 2, Ավանում՝ 2, Կոշում՝ 4, Ուջանում՝ 2, Աղցքում՝ 2 և Փարպիում՝ 1 հատ:

Աշխատության երրորդ մասում հեղինակներն անդրադարձել են քարե դռներ ունեցող վերգետնյա մի քանի հուշարձանների: Ուսումնասիրվել են Ամբերդի ամրոցի, Արուճի բազիլիկ կառույցի, Ոսկեհատի ամրոցի, Փարպիի Ծիրանավոր եկեղեցու, Երևանի Ավանի տաճարի և Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր գյուղի «Քարե դուռ» սրբավայրի քարե դռները: Ի տարբերություն


ստորագետնյա քարե դռների, վերգետնյա կառույցներում դրանք ունեցել են բացառապես պաշտպանական նշանակություն, որի հետևանքով վերջինները ավելի զանգվածային են ու չափերով մեծ, չունեն բանալու անցք և այլն:

Չնայած այն բանին, որ մի շարք հարցեր պարզաբանված չեն (պատմական հանգամանքները, որոնց բերումով դրանք կառուցվել են, լայնածավալ այդ աշխատանքների պատվիրատուն և կատարողները, օդի ջերմաստիճանի և խոնավության չափումներ, որոնք կարող էին վկայել այդ պայմաններում մթերքի որակի պահպանվածության մասին, առանձին քարանձավներում երրորդ դռների առկայության պատճառները, ներկայացված չեն նախկինում իրականացված մի շարք գրքերի և հոդվածների վերլուծությունները), այնուամենայնիվ, մեր ֆրանսիացի գործընկերները կարողացել են մեծածավալ աշխատանքներ կատարել՝ ներկայացնելով հայկական մշակութային ժառանգության բացառիկ օրինակներին նվիրված ուսումնասիրությունը: Կարծում ենք, որ այս հետազոտությունները պետք է ԿԳՄՍ նախարարության օժանդակությամբ շարունակվեն հայ մասնագետների կողմից՝ ամբողջացնելու հայկական շինարվեստի այս կարևոր արժեքներին առնչվող աշխատանքները:

ՍՄԲԱՏ ԴԱՎԹՅԱՆ

Տեխնիկական գիտությունների թեկնածու
srdavtyan@mail.ru

Lilit Yernjakyán, *The Musical World of Alan Hovhaness: East-West Crossroads*, "Cambridge Scholars Publishing", 2023, 130 p.



By the decision of the Scientific Council of the Institute of Arts of the National Academy of Sciences of the Republic of Armenia, the UK based “Cambridge Scholars Publishing” has published the English study by the Doctor of Arts, Professor Lilit Yernjakyán titled “The Musical World of Alan Hovhaness: East-West Crossroads,” which the author dedicated to the memory of her teacher, musicologist, composer, Honoured Worker of the Armenian SSR, professor Robert Atayan. Lilit Yernjakyán is a leading researcher at the Music Department of the Institute of Arts of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Member of the Scientific Council of the Institute of Arts and the Professional Council of Art Studies 016, Chairwoman of the Management Board of the Yerevan Komitas State Conservatory,

Honoured Worker of Art of the Republic of Armenia.

This work presents the creative activity of Alan Hovhaness (Alan Vaness Chakmakjian, 1911, Somerville – 2000, Seattle), one of the prominent representatives of Diaspora Armenian music, talented American-Armenian composer, conductor, pianist, organist, in the context of East-West cultural interactions. The monograph is based on the author’s MA thesis, which has been supplemented and enriched over the decades with the inclusion of new factual materials and observations. Accordingly, a number of scientific articles have been published in previous years, and in 2015, by the decision of the Scientific Council of the Institute of Art of the NAS RA, the “Science” Publishing House of the NAS RA published the Armenian monograph “The Music of Alan Hovhaness at East-West Crossroads.”

Nevertheless, L. Yernjakyán continued her scientific research, as a result of which important additions were made. In this English monograph, for the first time, valuable materials extracted from the studies of the previously unpublished correspondence of two talented American-Armenians, William Saroyan and Alan Hovhaness, have been put into scientific circulation, which is a proof of friendly and creative relations between the writer and the composer.

"The Musical World of Alan Hovhaness: East-West Crossroads" is written on the basis of rich archival material, foreign language sources and information extracted from the press, in which the author presented the composer's creative path, revealed the principles of perception of the special features of Armenian monodic music and their reproduction, examining the ancient Indian, Japanese and Korean musical manifestations of traditions in his works.

L. Yernjakyan studied the materials of the composer's personal archive kept in Charents Museum of Literature and Arts in Yerevan and also thoroughly examined the research on Alan Hovhaness kept in the libraries of American universities and the reviews and articles published in the periodical press. By the way, L. Yernjakyan acquired the correspondence between Alan Hovhaness and William Saroyan from Saroyan's archive kept in Stanford University's Department of Special Collections and Archives Library in California.

L. Yernjakyan set aim of presenting the foundations of the perception and principles of reflection of the East in the work of a Western composer, which is considered through the revelation of the Armenian identity of the composer. This thesis is emphasized in various sections of the monograph. The author of the work explains the turn of the composer of Armenian-Scottish origin to the East with a conscious perception of Armenian identity: "Armenianness, as is shown in the present research, is not restricted to a particular stage in the composer's life. It was the awareness of his cultural identity and the foundations of Armenian national culture that inspired the composer turn to the East, as evident in many works on the Eastern themes. Armenianness, far from being a mere chronological period in the composer's creative biography, was a revelation of his own self, a key to self-realization, and a firm basis for his musical journey to different Eastern cultures." (p. xii).

Incidentally, L. Yernjakyan's fundamental studies are devoted to the problems of Armenian-Iranian, Armenian-Turkish musical connections between traditional and classical music of the East, Armenian spiritual and ashugh musical art. However, for many years, the musicologist's scientific interests have included the East-West cultural problem and issues related to contemporary compositional art.

The monograph structure is solid and logical. It consists of five chapters.

In the first chapter, "Alan Hovhaness: Creative Pilgrimage", L. Yernjakyan comprehensively and with interest opens the pages of the composer's life and work, acquaints the reader with the general panorama of his life and work as a composer, conductor and performer. The author describes in detail the key stages of the composer's creative activity, emphasizes the importance of the 1940-1950 Armenian period of the creative chronicle, which was a decisive stage both in the composer's further rise and recognition as well as in his acceptance and glorification in world music. As we learn from the materials included in this section, Alan Hovhaness's creative abilities appeared at the age of four. He received his initial education at Taft

School of Music and then continued his studies at New England Conservatory in Boston, in Frederick Converse's professional class. In 1942, Tanglewood University in Boston awarded Alan Hovhaness a scholarship to study under Czech composer Bohuslav Martinu, which he left unfinished.

Alan Hovhannes wrote his first operas, "Lotus Blossom" and "Bluebeard and Daniel", at the age of 14. The prolific composer of many genres authored more than hundreds of musical works, 67 of which were symphonies. As a matter of fact, the composer rejected and destroyed more than 500 works of his first creative period (1930-1940). His works were published and sold for 17 years by "Edition Peters" publishing house.

Alan Hovhaness was awarded honorary doctorates by the University of Rochester (1958), Bates College (1959), Boston Conservatory (1986) and a number of other institutions.

In the second chapter of the book, "The East Illuminated in West Music," the author presents the genealogical origins of the appeal to Eastern musical culture, as well as using descriptive and documentary materials to reveal the influence and continuous presence of the East in various stages of the formation of Western musical culture.

In the third chapter, "Alan Hovhaness -William Saroyan Correspondence: National Identity Manifestations," L. Yernjakyan has selected from the composer's collection of letters and for the first time analyzed the extensive correspondence with William Saroyan that lasted for decades. Accordingly, the author has revealed the awareness of national identity, manifestations and commonalities, underlying the spiritual-creative connection of the two great personalities, their groundbreaking initiatives and enthusiasm for finding unique ways of self-expression and presented a general picture of the songs, musicals, rhapsodies, films, and musical theater performances that were born from creative collaboration. The musical "Girakgi Picnic," created in 1941, has been examined in detail, which describes the traditions depicting the daily life of Western Armenians, emphasizing the idea of a lost home. As the author notes: "The examination reveals that the minds of the two great Armenians were occupied with presenting to the world all the colors of their memories of the once-upon-a-time home, Western Armenia, and trying to identify pillars conducive to maintaining their identity in a foreign environment" (p. 28).

The fourth chapter of the monograph, "Alan Hovhaness's Armenian Works," consists of two subsections. The first one, "The Tragic Pages of Armenian History in Alan Hovhaness's Works", presents one of the first symphonic works dedicated to the Armenian Genocide, the "Exile" Symphony (1937), which was Hovhaness's "first public confession" of his new identity, which clarified his "spiritual state".

The second subsection, "Stylistic and Genre Peculiarities of Armenian-titled Works," is devoted to the examination of the most striking, artistically interesting, and genre-rich works of the Armenian style. Accordingly, the author has singled out

and analyzed the “Ararat” Symphony for brass orchestra (1960), the “Saint Vardan” Symphony for string orchestra (1950), the “Anahid” Fantasy, the 2nd and 3rd “Armenian Rhapsodies” for string orchestra, the “Dawn” for piano and string orchestra (1944), the “Lake of Van” Sonata (1946) and the “Akhtamar” (1948) piece for piano and 12 Armenian folk songs arranged for piano.

In the fifth chapter, “Alan Hovhaness’s “Eastern” Works”, L. Yernjakyan presents Alan Hovhaness’s symphonic and chamber works written on oriental themes, which are based on the ancient traditions of Indian, Japanese, and Korean music. By the way, Alan Hovhaness’s pen includes works written on Chinese, Persian, and Hawaiian themes, as well as a number of small canvases on Ossetian, Kyrgyz, Kurdish, Greek and other Eastern themes. Accordingly, the works selected for study in the monograph typically reveal both the principles of the embodiment of traditional genres in composer’s music, as well as the factor of East-West cultural interaction.

This section examines Symphony No. 8 “Arjuna” for piano, timpani and orchestra (1947), the “Madras” Sonata for piano (1947), the composition “Nagooran” for an orchestra composed of South Indian instruments (1960), the chamber work “Koke No Niwa” (“Mossy Garden”) for English horn, percussion and lyre (1954), the opera-drama “The Burning House,” the composition “Fantasy on Japanese Wood Prints” written for an orchestra with a conventional composition (according to the venue and possibilities of performance and including brass, percussion and string groups, as well as piano and xylophone, 1964), the symphonies No. 15 “Silver Pilgrimage” (1962) and No. 16 (1962). L. Yernjakyan notes that Alan Hovhaness’s Eastern works demonstrate common principles and the presence of an Armenian element.

In the third and fourth sections of the monograph, which are mainly analytical in nature, the author examines the intonation, mode, metrical, and melodic features of each work in a stylistic and structural manner, indicates the general nature of the work, outlines the characteristic features of the Eastern style and draws musicological generalizations.

As a result of studying Alan Hovhaness’s music, L. Yernjakyan concludes: “The music of Alan Hovhaness is unbounded in its genre and thematic diversity and is characterized by a wide range of associations with the East as well as by a profound understanding of the aesthetic and philosophical concepts of various Eastern cultural realities and their musical re-creation and interpretation.” (p. 112), then: “Alan Hovhaness enriched contemporary Western music with Eastern musical idioms and characteristic elements of modal and rhythmic organization of the Armenian monody, and viewed Eastern music as an important inspiration for the development of twentieth-century music, thus, making a significant contribution to the on-going process of cultural interconnections between the East and the West. His music gained its strength from these two powerful trends in music

and, in this sense, the composer can be said to have perfectly accomplished his mission.”(p. 117).

One of the important merits of the work is the inclusion and analysis of interesting works endowed with a variety of artistic trends, which provides an opportunity to form a complete picture of the composer's main Eastern and Armenian preferences, artistic taste and way of thinking in his works.

Lilit Yernjakyan's monograph is probably the first work by an Armenian musicologist to be published by the British “Cambridge Scholars Publishing”.

The work is undoubtedly a valuable contribution to the study of Armenology and Diaspora Armenian music, which I believe will contribute to the popularization of Alan Hovhaness's works in Armenia and abroad.

LILIT ARTEMYAN

PhD in Arts

l.artemyan@mail.ru

**«ԷՊՈՍ, ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ»։ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԷՊՈՍԱԳԻՏԱԿԱՆ 6-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ «ՍԱՍՆԱ ԾՈՒԵՐ»
ԷՊՈՍԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻՆ
(11-12 հոկտեմբերի, 2024 թ., Երևան)**

Հայ ժողովրդական հերոսավեպի հայտնաբերումը (1873 թ.) և առաջին պատումի հրատարակումը (1874 թ.) նորոգեցին մեր անցյալի պետականության, մշակույթի, պատմության կապը XIX դարի իրականության հետ, խթանեցին ազգային արդիական ինքնության սահմանման ընթացքը, որը զարգացման նոր բռնկումներ ունեցավ խորհրդային և նորանկախ հանրապետությունների երկու շրջափուլերում: Միաժամանակ, Գարեգին վարդապետ Սրվանձոյանցի հրատարակած «Սասունցի Դավիթ կամ Միէրի դուռ» պատումը մեծապես նպաստեց արևմտահայ և արևելահայ հատվածների մշակութային փոխճանաչողությանը: Գ. Սրվանձոյանցի գրառած բանահյուսական նյութերը և հատկապես էպոսի առաջին պատումը լայն ընդունելության, թարգմանության, հրատարակության և ուսումնասիրության արժանացան ոչ միայն հայ, այլև օտար բանագիտության մեջ: Այդպիսով, 150 տարի առաջ սկիզբ դրվեց հայ ժողովրդական դյուցազնավեպի գիտական ուսումնասիրությանը:

Ի նշանավորումն այս կարևոր հոբելյանի՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի (ՀԱԻ) նախաձեռնությամբ և «Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ»-ի (ՀՈՒՖՀՀ) աջակցությամբ ընթացիկ տարվա հոկտեմբերի 11-ից 12-ը տեղի ունեցավ էպոսագիտական միջազգային 6-րդ գիտաժողովը, որին մասնակցեցին ոչ միայն Հայաստանի հետազոտողներ, այլև էպոսագետներ, մշակութաբաններ ու արվեստագետներ՝ ժամանած արտերկրից՝ ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Աբխազիայից, Կալմիկիայից, Թուրքիայից, Հոլանդիայից: Ընդհանուր թվով 25 գեկուցումները վերաբերում էին ինչպես հայոց, այնպես էլ կովկասյան, պարսկական, կալմիկական, ռուսական հին ու նոր էպոսներին ու վիպաշարերին, տարածաշրջանային էպոսների հետ դրանց ունեցած առնչություններին:

Հոկտեմբերի 11-ին՝ ուրբաթ օրը, ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում գիտաժողովը հանդիսավորապես բացվեց Գարեգին Սրվանձոյանցի հնատիպ գրքերի և «Սասնա ծռեր» հերոսավեպի տարբեր տարիների հրատարակությունների ցուցադրությամբ, որը պատրաստվել էր ՀՀ ԳԱԱ հիմնարար գրադարանի կողմից: Գիտաժողովի բացման խոսքում ՀԱԻ տնօրեն Արսեն Բոբոխյանը մեծապես կարևորեց էպոսի դերը և դրան նվիրված միջազգային գիտաժողովների կազմակերպումը: Այնուհետև գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը. «Մեր դյու-

ցազներգությանը նվիրված այս գիրաժողովը չափազանց կարևոր է մանավանդ մեր օրերում: Գիրաժողովի թեման շարժարդիական է, ունի ոչ միայն գիտական, մշակութային, մշակութաբանական, այլև՝ գործնական նշանակություն, մեր պարմությունն ու մշակույթն օտար հարձակումներից պաշտպանելու համար»: Ողջույնի խոսքով հանդես եկավ նաև ՀՈՒՖՀՀ տնօրեն, պրոֆեսոր Արման Եղիազարյանը՝ նշելով, որ հիմնադրամը հատկապես կարևորում է հայոց ինքնությանն առնչվող միջոցառումների կազմակերպումը, ու Հնագիտության և ազգագրության ինստիտուտն առաջին անգամ չէ, որ այդ ուղղության միջազգային ծիրում թիրախային գիտաժողով է կազմակերպում՝ միջազգային մակարդակով: Այնուհետև Հայ-ռուսական սլավոնական համալսարանի պրոֆեսոր Ազատ Եղիազարյանն իր ողջույնի խոսքում հիշատակեց նաև էպոսագիտական նախկին գիտաժողովները, որոնց շարքը սկսվել էր 2003 թվականին: Կազմկոմիտեի մեկ այլ անդամ՝ Կալիֆորնիայի Լոս-Անջելեսի համալսարանի (UCLA) պրոֆեսոր Պիտեր Քաուլին նույնպես իր ողջույնի խոսքում շեշտեց նման գիտաժողովների կարևորությունը: Գիտաժողովի բացման հանդիսավոր մասը եզրափակեց Բոննի համալսարանի պրոֆեսոր Կարլ Ռայխլը, որը 2009 թ. Երևանում կայացած Էպոսագիտական 3-րդ գիտաժողովի մասնակիցներից է. նա տեսաուղերձով բարի երթ մաղթեց Էպոսագիտական 6-րդ գիտաժողովի մասնակիցներին: Երկօրյա գիտաժողովն ունեցավ ընդհանուր առմամբ մեկ լիագումար նիստ և հինգ թեմատիկ նիստեր:

Լիագումար նիստը վարում էր ՀԱԻ փոխտնօրեն, Բանագիտության բաժնի վարիչ Տորք Դալալյանը, որը շնորհակալություն հայտնեց բոլոր ողջունողներին և կազմկոմիտեի անդամներին՝ գիտաժողովի կազմակերպմանն իրենց նպաստը բերելու համար: Նիստում զեկուցումներով հանդես եկան արտերկրի երկու մասնակիցներ և գիտաժողովի կազմկոմիտեի երկու ամենահին անդամները: Աբխազիայի գիտությունների ակադեմիայի նախագահ, աբխազական էպոսի հայտնի մասնագետ, բ.գ.դ. Զուրաբ Զապուան խոսեց կովկասյան Նարթյան էպոսի վիպասման եղանակների մասին, ՀԱԻ բանագիտության բաժնի գլխավոր գիտաշխատող, բ.գ.դ. Արմեն Պետրոսյանը ներկայացրեց հնդեվրոպական ավանդության մեջ նոր քաղաքի հիմնման առասպելի տարբերակները, ՌԴ ԳԱ Միկլովիտ-Մակլայի անվան ազգաբանության և մարդաբանության ինստիտուտի (Մոսկվա) առաջատար գիտաշխատող, պ.գ.դ. Սվետլանա Ռիժակովան պատմեց Հարավային Հնդկաստանի ազգագրական շրջաններից մեկում իր կատարած դաշտային աշխատանքների արդյունքի մասին, որը մասնավորապես վերաբերում էր վիպական պատմասմանը: Ի դեպ, գիտաժողովի երկրորդ օրվա ավարտին մասնակիցները հնարավորություն ունեցան դիտելու Ս. Ռիժակովայի հեղինակած վավերագրական բազմամաս ֆիլմից դրվագներ, որոնցում ներկայացվում էր նույն այդ շրջանի ազգագրությունը: Լիագումար նիստը եզրափակեց նշանավոր գրականագետ, «Սասնա ծռեր» էպոսի պոետիկայի մասնագետ, բ.գ.դ. Ազատ Եղիազարյանը՝ խոսելով էպոսի և գրականության փոխառնչութ-

յուններից: Վերջինս մեկ այլ զեկուցմամբ հանդես եկավ գիտաժողովի երկրորդ օրը:

Գիտաժողովի առաջին օրը տեղի ունեցան ևս երկու՝ թեմատիկ նիստեր: «Վիպասում, արխաիկ պատում և տարբերակայնություն» նիստի (նիստավար՝ Հայկ Համբարձումյան) զեկուցողները խոսեցին տարբեր ժողովուրդների վիպասման ավանդույթներում առկա վիպական փոփոխականների և խմբագրությունների, դրանց հիման վրա վերականգնվող վաղնջական թեմաների ու առասպելությունների մասին: Կալմիկիայից ժամանած երկու մասնակիցների (բ.գ.թ. Յագան Սելեևա և բ.գ.թ. Դանարա Ուբուշիևա) զեկուցումները վերաբերում էին կալմիկական ժողովրդական հերոսավեպ «Ջանգար»-ին, մասնավորաբար՝ այն փոխանցող վիպասացների (ջանգարչի) ժամանակակից պրակտիկաներին և էպոսի մոտիվային վերլուծությանը: ԱՄՆ-ից UCLA համալսարանի պրոֆեսոր Պիտեր Քաուին մանրամասնորեն ներկայացրեց հայկական ավանդության մեջ արձանագրված՝ Ալեքսանդր Մակեդոնացու վիպական պատմության չորս խմբագրություններին առնչվող ուսումնասիրությունների ներկայիս վիճակը: Հայաստանից բանագետ, բ.գ.թ. Տորք Դալայանն ընդհանուր գծերով ներկայացրեց «Սասնա ծռեր» էպոսի կազմավորման վերաբերյալ գոյություն ունեցող երկու հակամետ տեսությունները՝ «պատմական» և «առասպելաբանական»:

Հաջորդ նիստը վերնագրված էր «Պատմամշակութային միջավայր և արքե-տիպեր» (նիստավար՝ Սամվել Ռամազյան): Զեկուցողները, որոնք բոլորը Հայաստանից էին, անդրադարձան էպոսին/էպոսներին վերաբերող մշակութաբանական և հոգեբանական տարբեր հիմնախնդիրների: Բանագետներ, բ.գ.դ. Թամար Հայրապետյանը և բ.գ.թ. Թադևոս Թադևոսյանը զուգահեռներ անցկացրեցին հայ բանահյուսական մշակույթի և այլ ժողովուրդների վիպական ավանդույթների միջև, մասնավորապես՝ առաջինը համեմատում էր բյուզանդական «Վասիլ Դիգենիս Ակրիտաս» վիպական պոեմը և «Սասնա ծռեր»-ը, իսկ երկրորդը՝ ռուսական բիլինային էպոսում և հայ ժողովրդական հեքիաթներում նկարագրված սեղանի իրավիճակային-ռազմավարական խաղերի գործառույթները: Գրականագետ-էպոսագետ, բ.գ.թ. Հայկ Համբարձումյանն ուշագրավ քննության ենթարկեց «Սասնա ծռեր» էպոսի հերոսների զենքերը՝ սկսած Կայծակե թրից մինչև ծառեր ու ոսկորներ, իսկ հ.գ.թ. Լուսինե Ղարախանյանը խոսեց էպոսի մշակված տարբերակի արքետիպային համակարգի մասին:

Գիտաժողովի առաջին օրը եզրափակվեց մշակութային ծրագրով: Թուրքիայից ժամանած՝ Սասունցիների հայրենակցական միության նախագահը խորհրդանշական կրծքանշաններ նվիրեց գիտաժողովի մասնակիցներին, իսկ սասունցիներ, պոլսաբնակ Բեսսե Քաբաքը և Բեհչեթ Չիֆթչին տեսանյութի մեկնաբանման միջոցով ներկայացրեցին մերօրյա Սասունում էպոսի «վերջին» օտարալեզու վիպասացին և նրա հաղորդած պատումի բովանդակությունը: Առաջինը խոսեց արևմտահայերեն, իսկ երկրորդի թուրքերեն ելույթի բարձրակարգ թարգմանությունն ապահովեց թուրքագետ Կարոլինա Սահակյանը: Մշակութային ծրագրում ներառված էր նաև «Շողակաթ» հեռուստաընկերության

նկարահանած «Գրոց և Բրոց հետքերով» կարճ տեսաֆիլմի (հեղինակ՝ Հայկ Համբարձումյան, ռեժիսոր՝ Վահե Սուքիասյան, օպերատոր՝ Վահե Աղամյան) ցուցադրությունը:

Էպոսագիտական գիտաժողովը հոկտեմբերի 12-ին՝ շաբաթ օրը, շարունակվեց Հնագիտության և ազգագրության ինստիտուտի նիստերի դահլիճում: Առաջին՝ «Տարածաշրջանային կապեր և վիպական ավանդույթ» նիստը (նիստավար՝ Նվարդ Վարդանյան) քննարկում էր Հայկական լեռնաշխարհի և Իրանի վիպական հերոսներին, նրանց առնչվող սյուժեները, տեղանուններն ու տեղավայրերը: Զեկուցումներից երկուսը ուղղակի կամ անուղղակի կերպով առնչություն ունեին «Սասնա ծռեր»-ին. հնագետ, պ.գ.թ. Սիմոն Հմայակյանը ներկայացրեց Վանի միջնաբերդի ստորոտում գտնվող «Մհերի դռան» ուսումնասիրության յոթ տեսանկյունները, իսկ բանագետ, բ.գ.թ. Սամվել Ռամազյանը քննեց մեր էպոսի համահավաքում «Աղբբեջան» տեղանվան հայտնվելու նախապատմությունն ու գաղափարական դրդապատճառները: Գրականագետներ, բ.գ.դ. Ազատ Եղիազարյանն ու բ.գ.թ. Գառնիկ Գևորգյանը խոսեցին համապատասխանաբար Արշակ թագավորի առասպելի և պարսից միջնադարյան «Հոսեյն Քորդ» ժողովրդական վեպի մասին:

«Վիպական երգ և մոտիվ» նիստին (նիստավար՝ Թամար Հայրապետյան) զեկուցեցին թե՛ բանագետ-գրականագետներ, թե՛ երաժշտագետ-մշակութաբաններ: «Սասնա ծռեր» էպոսի երգային հատվածներին անդրադարձան մշակութային մարդաբան և երաժշտական ֆոլկլորի մասնագետ, պ.գ.թ. Հռիփսիմե Պիկիցյանը և ձեռագրագետ-երաժշտագետ Արփի Վարդումյանը, որոնցից առաջինը ներկայացրեց Սրբուհի Լիսիցյանի հավաքածուից քաղված հատվածների երաժշտաբանագիտական քննությունը, իսկ երկրորդը համեմատականներ տարավ էպոսի երգվող հատվածների և Կոմիտաս վարդապետի ձայնագրած «Քրդական եղանակներ»-ի միջև: Բանագետ, բ.գ.թ. Նվարդ Վարդանյանն իր զեկուցման մեջ վերլուծեց «գրույց հանգուցյալի հետ» մոտիվի զարգացումը ժողովրդական ողբերգերից մինչև էպոս, իսկ գրականագետ-բանագետ, բ.գ.թ. Նաիրա Իսկանդարյանը կենտրոնացավ վիպական պատումներում որբության մոտիվի վրա:

Գիտաժողովի վերջին նիստը՝ «Էպոսը հարակից գիտակարգերի տիրույթում» (նիստավար՝ Նաիրա Իսկանդարյան), նվիրված էր էպոս – արվեստի տեսակներ, էպոս – ամբողջատիրական գաղափարախոսություն, էպոս – բարբառներ, էպոս – պատմահամեմատական լեզվաբանություն փոխառնչություններին: Զեկուցողները ոչ միայն լեզվաբաններ և բարբառագետներ էին, այլև արվեստաբաններ ու բանագետ-մշակութաբաններ: Արվեստաբան, ա.գ.թ. Արմինե Բաղդասարյանը պատկերների և վերլուծական տեքստի միջոցով ներկայացրեց մեր էպոսի նկարազարդումների պատմությունը: Մշակութային մարդաբան Նոնա Շահնազարյանը փորձեց «Սասունցի Դավիթ» էպոսի միջոցով քննել վաղխորհրդային գաղափարախոսությունը: Բարբառագետ, բ.գ.դ. Հայկանուշ Մեսրոպյանի և բանագետ Աննա Պողոսյանի համատեղ զեկույցը կարգաց վերջինս՝

կենտրոնանալով մեկ պատումի լեզվատարածքային և բարբառագիտական նկարագրի վրա, իսկ բարբառագետ, բ.գ.թ. Հասմիկ Խաչատրյանն անդրադարձավ «Սասնա ծռեր»-ի պատումներում բարբառային որոշ իրողությունների: Համեմատական լեզվաբան, հնդեվրոպաբան, բ.գ.թ. Հրաչ Մարտիրոսյանը նոր ստուգաբանություն առաջարկեց «Սասնա ծռեր»-ի բազմաթիվ պատումներում հիշատակվող՝ *Խաչ Պարտրազմի(ն)*, *Խաչ Պարրազի(ն)*, *Խաչ Պարրասսի(ն)*, *Խաչ Պարրարազի(ն)* և այլ անուններով հայտնի հմայիլի անվանման համար:

Գիտաժողովը եզրակակվեց մշակութային ծրագրով, որում ընդգրկված էին Ս. Ռիժակովայի «Աստվածների երկրպագումը և ծիսական թատրոնը Հարավային Հնդկաստանում» վավերագրական ֆիլմից որոշ հատվածների դիտումն ու մենաբանությունը:

Այսպիսով, Հայաստանում անցկացված էպոսագիտական վեց միջազգային գիտաժողովներին մասնակցել են, ընդհանուր առմամբ, ավելի քան 100 հետազոտողներ Հայաստանից, ԱՄՆ-ից, ՌԴ-ից, Հնդկաստանից, Իրանից, Վրաստանից, Աբխազիայից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Մեծ Բրիտանիայից, Հոլանդիայից, Սերբիայից, ինչպես և ՌԴ-ի հանրապետություններից՝ Հյուսիսային Օսիա-Ալանիա, Չեչնիա, Ադրդական Հանրապետություն, Դաղստան, Կալմիկիա, Ուդմուրտիա: Գիտաժողովներն ի սկզբանե կազմակերպվել են Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ու Հնագիտության և ազգագրության ինստիտուտի համատեղ նախաձեռնությամբ, որին որոշ տարիների միացել են Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանն ու Կալիֆորնիայի Լոս-Անջելեսի համալսարանը: Էպոսագիտական 1-ին միջազգային գիտաժողովը տեղի է ունեցել 2003-ին (նոյեմբերի 4-6) Ծաղկաձորում, 2-րդը՝ 2006-ին (հունիսի 23-24) Ծաղկաձորում և Թալինում, 3-րդը՝ Երևանում 2009-ին (նոյեմբերի 12-14), 4-րդը՝ նորից Ծաղկաձորում՝ 2012-ին (հոկտեմբերի 8-10), 5-րդը՝ 2017-ին (հոկտեմբերի 11-13) Երևանում: Յոթնամյա ընդմիջումից հետո կայացած այս գիտաժողովը՝ «Էպոս, ինքնություն և մշակույթ» վերտառությամբ, նվիրված էր էպոսի առաջին հայտնի պատումի հրատարակության 150-ամյակին, որով փաստորեն նշվեց «Սասնա ծռեր»-ի գիտական ուսումնասիրության մեկուկեսդարյա հրեյլանը:

ՏՈՐՔ ԴԱԼԱԼՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու
torqdal@yahoo.com

ՀԱՅԿ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ


Բանասիրական գիտությունների թեկնածու
hayk.hambardzumyan1982@gmail.com

«ԵՐԿՐՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԻՋԵՎ. ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ: ՊԱՏԿԵՐՆԵՐ ԵՎ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ»

Ανάμεσα σε δύο πατρίδες
Οι Αρμένιοι της Ελλάδος κατά τον δεύτερο παγκόσμιο πόλεμο

Երկու հայրենիքի միջև
Չունաստանի հայերը Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում

ΝΟΕΜΒΡΙΟΥ 8-24 2024 **ՆՈՅԵՄԲԵՐ**
Βιβλιοθήκη Σαράκις και Μορί Κιουρίων
Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարան
ձեռ. - 10:00 - 19:00 | Իրգ. - 09:00 - 19:00



Εικόνες και ντοκουμέντα
Պատկերներ և վավերագրեր

Երևանի պետական համալսարանի Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանի սրահում ս.թ. նոյեմբերի 8-ին բացվեց ՀՀ-ում Հունաստանի դեսպանության կազմակերպած լուսանկարչական ցուցահանդեսը՝ նվիրված Երկրորդ համաշխարհային պատերազմին Հունաստանի հայերի մասնակցությանը:

Հունաստանը Երկրորդ համաշխարհային պատերազմում ներքաշվեց 1940 թ. հոկտեմբերի 28-ից, երբ իտալական վերջնագրին, ի պատասխան հունական հայտնի «Ոչ»-ին (հուն.՝ Όχι), հետևեց հույն-իտալական պատերազմը: Հունական բանակին հաջողվեց կարճ ժամակամիջոցում դիմագրավել ֆաշիստական Իտալիայի հարձակմանը, այնուհետև հակահարված հասցնել և անցնել հակահարձակման, որն ավարտվեց ագրեսոր ուժերին ջախջախելով և Հունաստանի տարածքից դուրս շարտելով, իսկ բուն մարտական գործողությունները տեղափոխվեցին Իտալիայի կողմից ռազմակալված Ալբանիայի տարածք: Իտալիայի հետագա հարձակման փորձերը ևս ձախողվեցին, Հունաստանին հաջողվեց վերահսկել իրադրությունը մինչև 1941 թ. ապրիլ: Նշված իրադարձությունը Եվրոպայում հակահիտլերյան դաշինքի առաջին հաղթանակն էր: Իրենց դաշնակցին փրկելու նպատակով 1941 թ. ապրիլի 6-ին Բուլղարիայի տարածքից Հունաստան և Հարավսլավիա ներխուժեցին նացիստական Գերմանիայի ուժերը, որոնք հետագա առաջխաղացման արդյունքում ապրիլի 30-ին կարողացան գրավել մայրցամաքային հունական տարածքը: Մեկ ամիս անց նացիստական ուժերին հաջողվեց գրավել նաև Կրետե կղզին, ինչից հետո մնացած հունական, բրիտանական և դաշնակից ուժերը տեղափոխվեցին Եգիպտոսի տարածք: Հունական հերոսական դիմադրության առթիվ Մեծ Բրիտանիայի վարչապետ Ուինսթոն Չերչիլը նշել է. «Այսօր մենք ասում ենք, թե հույները կռվում են հերոսների պես, այժմվանից մենք պետք է ասենք, թե հերոսներն են կռվում հույների պես»:

Ծողովորությունները տեղափոխվեցին Իտալիայի կողմից ռազմակալված Ալբանիայի տարածք: Իտալիայի հետագա հարձակման փորձերը ևս ձախողվեցին, Հունաստանին հաջողվեց վերահսկել իրադրությունը մինչև 1941 թ. ապրիլ: Նշված իրադարձությունը Եվրոպայում հակահիտլերյան դաշինքի առաջին հաղթանակն էր: Իրենց դաշնակցին փրկելու նպատակով 1941 թ. ապրիլի 6-ին Բուլղարիայի տարածքից Հունաստան և Հարավսլավիա ներխուժեցին նացիստական Գերմանիայի ուժերը, որոնք հետագա առաջխաղացման արդյունքում ապրիլի 30-ին կարողացան գրավել մայրցամաքային հունական տարածքը: Մեկ ամիս անց նացիստական ուժերին հաջողվեց գրավել նաև Կրետե կղզին, ինչից հետո մնացած հունական, բրիտանական և դաշնակից ուժերը տեղափոխվեցին Եգիպտոսի տարածք: Հունական հերոսական դիմադրության առթիվ Մեծ Բրիտանիայի վարչապետ Ուինսթոն Չերչիլը նշել է. «Այսօր մենք ասում ենք, թե հույները կռվում են հերոսների պես, այժմվանից մենք պետք է ասենք, թե հերոսներն են կռվում հույների պես»:

Հունաստանի գրավումից անմիջապես հետո երկրի ողջ տարածքում գերմանա-իտալա-բուլղարական զավթիչ ուժերի դեմ ծավալվեց Ազգային դիմադրության շարժումը, որի կորիզն էին կազմում ձախ ուժերի կազմավորած պար-

տիզանական ջոկատները (ԷԱՄ-ԷԼԱՍ): Բացի այդ, գործում էին հունական վտարանդի կառավարության կողմնակից ջոկատները (ԷԴԵՍ), այլ առանձին ջոկատներ (ԷԿԿԱ): Հունաստանի ռազմածովային ուժերը կարողացան վերաբազավորվել Եգիպտոսում և մարտական գործողությունները շարունակել դաշնակից ուժերի կազմում: Հյուսիսային Աֆրիկայի տարածքում էին գործում նաև Հունական բանակի տարհանված ստորաբաժանումները, ամբողջությամբ հույներն էին ձևավորել բրիտանական ուժերի կազմում գործող «Սրբազան ջոկատը» և 3-րդ հունական լեռնային բրիգադը: Բրիտանական ռազմաօդային ուժերի կազմում ստեղծվեց հույն օդաչուներից բաղկացած 2 էսկադրիլիա, որոնք հետագայում մասնակցեցին Հունաստանի ազատագրմանը: 1944 թ. հոկտեմբերի 8-ին ազատագրվեց Աթենքը, իսկ հոկտեմբերի 30-ին վերջին գերմանացի զինվորը քրեց մայրցամաքային Հունաստանի տարածքը: Կրետեում և այլ կղզիներում տեղակայված նացիստական ուժերը հանձնվեցին 1945 թ. մայիսին, Գերմանիայի կապիտուլյացիայից հետո:

Յեղասպանությունից և մանավանդ 1922 թ. փոքրասիական աղետից հետո Հունաստանում հաստատված հայերն ակտիվերեն մասնակցել են Հունաստանի պաշտպանությանն ու ազատագրությանը: Հասկանալի պատճառներով ԽՍՀՄ-ի օրոք առավել լուսաբանվել է հայերի մասնակցությունը ծախակողմյան ԷԱՄ-ԷԼԱՍ-ի շարքերում, որն, իրոք, բավական տպավորիչ է եղել, սակայն անտեսվել է նրանց մասնակցությունը մարտական գործողություններին Հունական բանակի շարքերում: Ցուցահանդեսը որոշ չափով եկավ լրացնելու նաև տվյալ բացը:

Մեր հաշվարկներով, միայն 1940-1941 թթ. հույն-իտալական և հույն-գերմանական պատերազմների ընթացքում զոհվել են Հունական բանակի 16 հայ զինվոր և ենթասպա, ստացած վիրավորումներից զինվորական հոսպիտալներում մահացել է 4 զինվոր, ևս 4-ն անհետ կորել է մարտական գործողությունների ժամանակ: Ընդհանուր կորուստների մեջ զինծառայողների ոչ վերջնական թիվը 24 հոգի է, ընդսմին, զգալի մասը զոհվել է ալբանական ճակատում:

Հունաստանի հայ բնակչության շրջանում զոհեր են արձանագրվել պատերազմի հենց սկզբից: 1940 թ. օգոստոսի 15-ին՝ Աստվածամոր տոնի օրը, իտալական սուզանավի անակնկալ ռմբակոծման հետևանքով Տինոս կղզում արձանագրված միակ քաղաքացիական զոհն ուխտավոր հայուհի էր: Հունահայերը ևս հունական տարածքի զավթման ընթացքում ենթարկվել են նացիստական և գործակից ուժերի բռնաճնշումներին: Շատ հայեր պատանդ են վերցվել, քշվել համակենտրոնացման ճամբարներ և հարկադիր աշխատանքների տարվել Գերմանիա: Ցուցաբերված դիմադրության պատճառով զավթիչ ուժերն առանձին բնակավայրեր և թաղամասեր ենթարկում էին երկարատև պաշարման, ինչի հետևանքով սովից և բախումներից զոհվում էին քաղաքացիական անձինք: Աթենքի հայկական թաղամասերից կամ հայնոցներից (հուն.՝ «արմենոմահալա») նման ճակատագրի են արժանացել Դուրդութի (ներկայիս Նեսո Կոզմոս) և Կոկինիա (Նիկեա) թաղամասերի հայ համայնքները: 1944 թ. մարտ-

օգոստոսին միայն Կոկինիայի պաշարման ընթացքում 30-ից ավելի հայ զոհվել է և գնդակահարվել զավթիչների հետ տեղի ունեցած բախումների հետևանքով:

Հունաստանի հայերը շրջափելի մասնակցություն են ունեցել Ազգային դիմադրությանը. ոչ լրիվ հաշվարկներով, նրանցից ավելի քան 300-ն իրենց կյանքը զոհել են հանուն ազատության: 1944 թ. հոկտեմբերին պարտիզանական ուժերի կազմում հայերը ևս մասնակցել են Աթենքի ազատագրության մարտերին, ունեցել զգալի կորուստներ: Նրանց պատվին Նիկեայի փողոցներից մեկը մինչ այժմ կրում է Ազգային դիմադրության հայ մարտիկների անունը:

Հունական դիմադրության շարքերում էին մարտնչում նաև գերմանացիների կազմավորած «Հայկական լեգեոնի»՝ Խորհրդային բանակից գերեվարված այն հայ զինվորները, որոնց հաջողվել էր Ալբանիա և Հունաստան տեղափոխվելուց հետո կազմակերպված ձևով անցնել հույն պարտիզանների կողմը: Նրանցից էր ամբողջությամբ կազմավորվել «Ազատություն» ջոկատը՝ հրամանատարությամբ Բաբկեն Ներսիսյանի: Վերջին շրջանում հայտնի է դարձել նաև հույն պարտիզանների կողմն անցած՝ Խորհրդային ռազմագերիներից ձևավորված «Խորհրդային դասակի» մասին, որի շարքերում ևս կային մեծ թվով հայեր, հրամանատարն էր Հայկազ Նահապետյանը: Դեպքերի բերումով Հունաստանում հայտնված հայաստանցի մարտիկները ևս մասնակցել են հունական բնակավայրերի ազատագրմանը և հակառակորդի ջախջախմանը: Մինչ Հունաստանում քաղաքացիական պատերազմի սկիզբը՝ 1944 թ. դեկտեմբերին, նրանք կազմակերպված ձևով հայրենադարձվել են:

Յուգոսլավիայում առաջին անգամ ցուցադրվեցին անձնական արխիվներից ստացված ավելի քան 100 լուսանկար ու փաստաթուղթ, որոնք ներկայացնում էին հունահայ համայնքը մինչպատերազմական և պատերազմական ժամանակահատվածներում, հունահայերի մասնակցությունը երկրի պաշտպանությանը, համակենտրոնացման ճամբարներ քշված հայերի վիճակը, հայ մարտիկների մասնակցությունը Հունաստանի ազատագրությանը: Նյութերը տրամադրել էին Աթենքում հրատարակվող «Արմենիկա» պարբերականը, «Յուշամատեն» կայքը, Սալոնիկում ՀՀ պատվավոր հյուպատոս Սարգիս Դաղազյանը և տողերիս հեղինակը:

Յուգոսլավիայի բացման արարողությունն իրականացվեց ՀՀ-ում Հունաստանի դեսպան Խրիստոս Սոֆիանոպոլոսի և ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանի կողմից՝ ներկայությամբ պրոֆեսորադասախոսական և դիվանագիտական կազմի: Ելույթ ունեցողներն ընդգծեցին հայ-հունական բարեկամության դրվագների ոգեկոչման անհրաժեշտությունը նման միջոցառումների անցկացմամբ: Յուգոսլավիայում տեղի ունեցավ մինչև ս.թ. նոյեմբերի 24-ը:

ՍԱՄՎԵԼ ՌԱՄԱԶՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

sramaz@mail.com

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄ ԵՐԱԺՇՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ. ԿՈՄԻՏԱՍԻ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆՈՐ ՏԱՐԵԳԻՐՔԸ

2023 թ. լույս է տեսել Կոմիտասի թանգարան-ինստիտուտի (ԿԹԻ) տարեգրքի ութերորդ հատորը:

Սույն տարեգրքը, ինչպես և նախորդները, գիտական հոդվածների ժողովածու է, որում տեղ գտած նյութերը հիմնականում թանգարան-ինստիտուտի «Կոմիտաս» ամենամյա միջազգային գիտաժողովի զեկույցներն են: Սովորաբար հոդվածների թեմաներն առնչվում են ոչ միայն Կոմիտաս Վարդապետին, նրա գիտական և ստեղծագործական ժառանգությանը, այլև, հաշվի առնելով Կոմիտասի՝ երաժշտագիտական տարբեր ոլորտների հանդեպ ունեցած հետաքրքրությունները, վերաբերում են հայ երաժշտական ֆոլկլորագիտությանն ու միջնադարագիտությանը, արդի երաժշտագիտական և կոմպոզիտորական ոլորտների լուսաբանմանը, ինչպես նաև դրանց հարակից այլ հարցերի: Սույն՝ ութերորդ հատորը նվիրված է ժամանակակից՝ XX դարավերջի և առավելապես XXI դարի առաջին երկու տասնամյակի հայ երաժշտության խնդիրների քննությանը:

Ե՛վ նախորդ հատորների, և՛ այս ժողովածուի պատասխանատու խմբագիրը ազ.թ., ԿԹԻ գիտական բաժնի ղեկավար **Տաթևիկ Շախկույանն է** (ԿԹԻ, ԵՊԿ, ՀՀ ԳԱԱ ԱԻ): Խմբագրական խորհրդի կազմում են ազ.թ. **Գայանե Ամիրադյանը** (ՀՀ ԳԱԱ ԱԻ, ԿԹԻ), ազ.դ., պրոֆ. **Աննա Ասատրյանը** (ՀՀ ԳԱԱ ԱԻ), ազ.դ., պրոֆ., ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ **Աննա Արևշատյանը** (ՀՀ ԳԱԱ ԱԻ, ԿԹԻ, ԵՊԿ), ազ.դ., պրոֆ., ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ **Լիլիթ Երնջակյանը** (ՀՀ ԳԱԱ ԱԻ, ԵՊԿ), ազ.թ. **Նիկոլայ Կոստանդյանը** (ԿԹԻ) և ազ.դ., պրոֆ., ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ **Միեր Նավոյանը** (ԿԹԻ, ՀՀ ԳԱԱ ԱԻ, ԵՊԿ): Հատորը բաղկացած է 200 էջից, ձևավորումը Գոհար Գրիգորյանինն է: Տպագրված է «Հովսեփյան» ՍՊԸ տպարանում:

Տարեգրքը բաղկացած է առաջաբանից և ութ հոդվածից՝ վեց հայերեն, մեկ ռուսերեն և մեկ անգլերեն լեզուներով: Վերանայված սկզբունքի համաձայն, բոլոր հոդվածներն ունեն հայերեն և անգլերեն ամփոփումներ (տարեգրքի նախորդ՝ Ա-Գ հատորներում առկա են նաև ամփոփումների ռուսերեն տարբերակներ): Հոդվածագիրները կոմպոզիտորներ և երաժշտագետներ են, որոնք ներկայացնում են Հայաստանի և ԱՄՆ-ի տարբեր հեղինակավոր գիտական հաստատություններ: Ժողովածուն հասցեագրված է երաժշտագետներին, երաժիշտ-կատարողներին, արվեստաբաններին, մշակութաբաններին, երաժշտության ոլորտում դասավանդող մասնագետներին:

Հատորն ունի երեք ենթաբաժին, որոնցից առաջին երկուսում կոմպոզիտորական և երաժշտագիտական դիտանկյուններից քննարկվում են ներկա ժամանակի երաժշտական մի շարք միտումներ, մեթոդներ ու կոմպոզիտորա-

կան «ձեռագրեր», իսկ վերջին՝ երրորդ բաժինն ասես միավորում է արդի երաժշտությունն ու Կոմիտասին՝ ներկայացնելով այն ստեղծագործողներին, որոնք անդրադարձել են Վարդապետի բանաստեղծական ժառանգությանը:

Առաջին՝ «Կոմպոզիտորի հայացք» գլխում ընդգրկված հոդվածների հեղինակները կոմպոզիտորներ են:

Կոմպոզիտոր և երաժշտագետ **Միխայիլ Կոկժակի** (ազ.թ., պրոֆ., ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ԵՊԿ) «Зигзаги творческого пути» («Ստեղծագործական ուղու ոլորաններ») զեկուցման առանցքում իր իսկ ստեղծագործական կյանքի արտացոլումն է (էջ 14-57), որտեղ հեղինակը տասը էպիզոդների միջոցով անդրադառնում է ինչպես իր, այնպես էլ այլ կոմպոզիտորների որոշ ստեղծագործությունների ստեղծման շարժառիթներին, պատմությանը, շոշափում ստեղծագործական զանազան հանգամանքներ:

Ամերիկահայ կոմպոզիտոր **Ջոզեֆ Պոհիկյանի** (ԱՄՆ) “The water has found its crack: Finding Armenia through music” («Ջուրը գտել է իր ճեղքը. գտնել Հայաստանը երաժշտության միջոցով») հոդվածում (էջ 58-89) ժամանակի և տարածության մեջ ասես խաչաձևվում են Հայաստանն ու սփյուռքը, 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանությունն ու արքայազն Ժողովրդի «ստեղծահանված երգը»: Պոհիկյանն այս ճանապարհը փորձում է հարթել իր ստեղծած կոմպոզիտորական մեթոդով և իր «ճեղքը» գտնող ջրի գաղափարի միջոցով՝ քաղված հայ ժողովրդական երգերի տեքստերից, որոնք նա ուսումնասիրել է Կոմիտասի թանգարան-ինստիտուտում կատարած հետազոտությունների ընթացքում:

Երկրորդ՝ «Երաժշտագիտական հայացք» գլուխն առավել ընդգրկուն է, պարունակում է հինգ հոդված:

Կոմպոզիտոր, երաժշտագետ և խմբավար **Դանիել Երաժիշտը** (ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆ., ԿԹԻ) անդրադառնում է կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանի երաժշտությանը: «Տիգրան Մանսուրյանի «Հալատով խոստովանիմ» աղոթաշարի ձևակառուցումը և աղերսները հոգևոր և ժողովրդական երգարվեստի հետ» հոդվածում (էջ 92-102) հեղինակը վերլուծում է Ս. Ներսես Շնորհալու խոսքերով կոմպոզիտորի վերոնշյալ աղոթաշարի կառուցվածքը՝ կիրառելով նաև թվերի խորհուրդը, ոսկե հատման կանոնը (ըստ Ադոլֆ Յեյզինգի): Ասենք, որ Շնորհալու բանաստեղծական տեքստը բաղկացած է 24 աղոթքներից, որոնք խորհրդանշում են օրվա 24 ժամերը: Այս աղոթաշարից Տ. Մանսուրյանն իր ստեղծագործության համար ընտրել է առաջին յոթ աղոթքները, որոնք խորքային լուսաբանման են ենթարկվում մոտիվային, դարձվածքային, ինտոնացիոն շերտերի ներքո: Մեկնաբանվում է նաև այլ նվագարանի գործառույթը աղոթաշարում:

Մեծանուն կոմպոզիտորի ստեղծագործական գործունեությանն է նվիրված նաև **Աննա Արևշատյանի** նյութը: «Տիգրան Մանսուրյանի նորօրյա շարականերգությունը» աշխատանքում (էջ 103-115) հոդվածագիրը քննում է Տ. Մանսուրյանի վերջին տասնամյակների այն ստեղծագործությունները, որոնցում դրսևորվել են կոմպոզիտորի ոճական զարգացման ուշագրավ միտումները: Կա-

րևորելով հայ (հատկապես հոգևոր) մոնոֆիայի դերն ու նշանակությունը կոմպոզիտորի երաժշտության մեջ՝ Ա. Արևշատյանը փաստում է «Հաւատով խոստովանիմ» աղոթաշարի և «Օրհներգ - Նաւապետ բարի» երկերի երաժշտական լեզվի արդիական, միևնույն ժամանակ նաև ազգային լինելու ընդհանրությունը: Անդրադարձ է կատարվում ավտի և հարվածայինների համար գրված «Երեք միջնադարյան տաղ»-ին, «Ռեքվիեմ»-ին, «Ես իմ անուշ Հայաստանի» խմբերգին և այլ գործերին:

Լիլիթ Երնջակյանը ներկայացնում է Ռուբեն Սարգսյան կոմպոզիտորի գործունեությունը «երաժշտական նվիրում» ենթաժանրի համատեքստում: «Ռուբեն Սարգսյանի երաժշտական նվիրումները» աշխատանքում (էջ 116-137) արվեստագետի ուսումնասիրության թեման կոմպոզիտորի՝ «Կոմիտասին» դաշնամուրային շարքն է՝ բաղկացած յոթ մանրանվագից: XX դարավերջին բնորոշ երաժշտական մի շարք միջոցների (սերիային, պուանտիլիստական, մինիմալիստական) կիրառումով հարուստ այս շարքը, որպես բջջանյութ, իր միջուկում կրում է կոմիտասյան «Կռունկ»-ի ինտոնացիոն ելևէջները, որով ասես կամուրջ է կառուցվում Կոմիտասից մինչև ժամանակակից կոմպոզիտորական արվեստ՝ ընկած տարածության և ժամանակի միջև:

Աննա Աղամյանի (ագ.թ., դոցենտ, ԿԹԻ) «Մարտին Ուլիխանյանի մանկական դաշնամուրային երաժշտությունը» հոդվածի (էջ 138-151) առանցքում կոմպոզիտորի դաշնամուրային մանկական շարքն է՝ բաղկացած 16 ծրագրային պիեսներից, որոնք հոդվածագիրը հետաքրքիր դասակարգման է ենթարկում՝ ըստ յուրաքանչյուրի ունեցած կերպարայնության և հնչողության: Ըստ դասակարգման՝ շարքում հանդիպում ենք շրջապատող աշխարհի և բնության տեսարաններին նվիրված, հոգեբանական և մարդկային ապրումներ արտահայտող, ինչպես նաև ժանրային, ֆակտուրային հնարների կիրառմամբ պիեսների մի ամբողջ փնջի:

Ի դեպ, հեղինակն իրավացիորեն ընդգծում է, որ հայ երաժշտության մեջ մանուկների համար գրված ստեղծագործությունների արմատները դարձյալ սկսվում են Կոմիտասից, մասնավորապես՝ նրա «Մանկական նվագների» շարքից, որոնցում ընդգրկված են ինչպես հայ ժողովրդական թեմաներով պիեսներ, այնպես էլ փոքրիկ պոլիֆոն գործեր: Այս առումով կապը և կամուրջը Կոմիտասի ստեղծագործական սկզբունքների հետ շարունակում է լինել մշտապես արդիական:

Սոնա Սիմոնյանը (ԿԹԻ) անդրադառնում է երիտասարդ կոմպոզիտորների գործունեությանը: «Դավիթ Պիվագյանի չորրորդ և վեցերորդ լարային կվարտետները (համեմատական վերլուծություն)» հոդվածում (էջ 152-166) հեղինակը, հակիրճ ներկայացնելով հայ երաժշտարվեստում կվարտետի ժանրի զարգացումը, կենտրոնանում է կոմպոզիտոր Դավիթ Պիվագյանի կվարտետների լուսաբանման վրա՝ բովանդակային և կառուցվածքային քննության ենթարկելով կոմպոզիտորի չորրորդ և վեցերորդ («Հրեշտակների նահանջը») կվարտետները: Հոդվածագրի հետազոտությունը ցույց է տալիս, որ Պիվագյանի վեցերորդ

կվարտետը, գրված 2020 թ. Արցախյան պատերազմի ազդեցությամբ, հատկապես հետաքրքրական է հայ ժողովրդական երաժշտությանը բնորոշ ինտոնացիոն կառուցվածքները և հայ հոգևոր երգարվեստի որոշ նմուշները ժամանակակից տեխնիկական միջոցների հետ համադրելու և միահյուսելու տեսանկյունից:

Ժողովածուն եզրափակում է «Կոմիտասյան քնարերգությունը XXI դարի երաժշտարվեստում» գլուխը, որտեղ ընդգրկված է **Տաթևիկ Շախկույանի** «Կոմիտասյան պոեզիայից դեպի կոմպոզիտորական արվեստ» հոդվածը (էջ 168-199): Հեղինակը անդրադարձ է կատարում Կոմիտաս Վարդապետի որոշ բանաստեղծությունների հիման վրա գրված երաժշտական ստեղծագործություններին: Ինչպես փաստում է արվեստագետը, Կոմիտասի մի շարք բանաստեղծություններն ամփոփող ձեռագիր տետրի լուսանցքում կատարված նոտային նշումները խոսում են այն մասին, որ Վարդապետը նպատակ է ունեցել դրանք երաժշտական երկեր դարձնելու, բայց հավանաբար չի իրականացրել: Կոմիտասյան բանաստեղծություններից շատերը գրավել են նաև մերօրյա ստեղծագործողներին: Հոդվածագիրը լուսաբանում է Վահան Արծրունու, Ջեննի Ասատրյանի, Արթուր Ահարոնյանի, Վաչե Շարաֆյանի, Դավիթ Բալասանյանի և Վարդան Հարությունյանի՝ կոմիտասյան բանաստեղծությունների տեքստերով գրված ստեղծագործությունները:

Գրքում տեղ գտած հոդվածները համալրված են լուսանկարների և նոտային օրինակների նմուշներով:

Առանձնապես կարևոր ենք համարում սույն հատորի անդրադարձը XX դարավերջի և առավելապես XXI դարի հայ երաժշտության հարցերին, մերօրյա ստեղծագործողների նախընտրած ժանրային, բովանդակային, հոգեբանական և հոգեհուզական ոլորտների լուսաբանմանը: Վստահաբար, սույն տարեգիրքը ԿԹԻ-ի արժեքավոր ներդրումն է մերօրյա երաժշտագիտական կյանքում: Անխոս, տարեգրքի միջազգային լինելը նպաստում է գիտական մտքի տարածմանն ու հայ երաժշտության հանրահռչակմանը երկրից դուրս՝ կարևոր հարթակ դառնալով նաև արտերկրի մասնագետների համար հաղորդակից լինելու ոչ միայն կոմիտասյան, այլև լայն իմաստով՝ հայ երաժշտության հետ:

ԱՍՏԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
astghik1martirosyan@gmail.com

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆԽՈՆՋ ԶԱՀԱԿԻՐԸ

(ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Միքայելյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)



Բացառիկ երևույթ է, որ մեկ անհատի մեջ միավորվեն մարդու, գիտնականի և քաղաքացու անանց որակները և այս ամենը՝ միասին և միաժամանակ, նրա ողջ երկրային կյանքում: ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վարդգես Ալեքսանի Միքայելյանը, որի ծննդյան 100-ամյակը լրանալու առթիվ են գրված այս տողերը, այդպիսի եզակի անհատներից էր: Եվ մեզ՝ նրա կրտսեր գործընկերների և աշակերտների համար շատ դժվար է այսօր, տարիների հեռավորությունից նախապատվություն տալ նրա գործունեության մեջ սերտաճած այդ որակներից որևէ մեկին, որովհետև նա այդ բոլորը շոայլորեն ի հայտ էր բերում ամենուրեք՝ միայն իրեն հատուկ

շիտակությամբ ու անմիջականությամբ:

Վարդգես Ալեքսանի Միքայելյանը ծնվել է 1924 թ. դեկտեմբերի 5-ին, ՀԽՍՀ Աշոցքի շրջանի Ղազանչի գյուղում: 1941 թ. միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, որպես ուսուցիչ, աշխատել է շրջանի Քեֆլի և Քոռաղբյուր գյուղերում: Ապա զորակոչվում է և 1942-1947 թթ. ծառայում խորհրդային բանակում, մասնակցում Հայրենական մեծ պատերազմին՝ պարգևատրվելով շքանշաններով ու մեդալներով: Զորացրվելուց հետո սովորում է Երևանի պետհամալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում և 1952 թ. ավարտում գերազանցության դիպլոմով: Նույն թվականին ընդունվում է ԵՊՀ-ի ասպիրանտուրան: Այն ավարտում է 1955 թ. և պաշտպանում թեկնածուական ատենախոսություն՝ «Գյուղացիության դրությունը և գյուղացիական ելույթները Հայաստանում 1918-1920 թթ.» թեմայով: Նրա ինքնատիպ գրելաոճի ձևավորման գործում արգասավոր են եղել 1955-1959 թթ. «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագրությունում աշխատանքի տարիները: Պատմաբանի գիտագործնական աշխատանքի օրրան է դառնում Հայաստանի գիտությունների ակադեմիան, որտեղ նա գործունեություն է ծավալում 1960-ական թվականների սկզբից. 1960-1972 թթ. Պատմության ինստիտուտում՝ որպես ավագ գիտական աշխատող, 1988 թ.՝ բաժնի վարիչ: Պատմական գիտությունների դոկտոր է 1965 թ. («Ղրիմի հայկական գաղութի պատմություն» թեմայով), պրոֆեսոր՝ 1978 թ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 1996 թ.: Մահացել է 2005 թ. մարտի 31-ին:

Ակադեմիկոս Միքայելյանի գիտական գործունեությանը բնորոշ են բազմակողմանիությունը, գլխավորն ու էականը տեսնելու, նորն զգալու և նորի հետ քայլելու կարողությունը, պատեհապաշտությունից հեռու մնալու հաստատականությունը:

Վաստակաշատ հայագետի գիտական հետաքրքրությունների շրջանակը լայն և ընդգրկուն է եղել՝ ներառելով հայ ժողովրդի նոր ու նորագույն շրջանների պատմության բազմաթիվ հարցեր: Նա առաջիններից մեկն էր, որ գիտակցելով հայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրության կարևորությունը, հետազոտության թեմա ընտրեց հայկական գաղթավայրերի ուսումնասիրությունը: Վ. Միքայելյանի վաստակը հատկապես անգնահատելի է միջնադարի ամենախոշոր հայ գաղութի՝ Ղրիմի ուսումնասիրման բնագավառում: 1964 թ. լույս տեսավ գիտնականի «Ղրիմի հայկական գաղութի պատմություն» առաջին գիրքը: Այնուհետև իրար հաջորդեցին Ղրիմի հայկական գաղթօջախների պատմության ուսումնասիրությանը նվիրված հաջորդ մենագրությունները. 1970-ին հրատարակեց «Ղրիմի հայկական գաղութի պատմություն (1801-1917)» աշխատության 2-րդ գիրքը, 1974-ին՝ «На крымской земле», 1989-ին՝ «Ղրիմահայոց պատմություն» և 2004-ին՝ «История крымских армян» (Симферополь). Ըստ էության, նույն թեմայի շարունակությունն էր 1979 թ. լույս տեսած՝ պատմաբանի «Ծովակալ Լ.Մ. Սերեբրյակով (Ղազար Մարկոսի Արծաթագործյան: Կյանքն ու գործունեությունը)» աշխատությունը, որտեղ լուսաբանվում է հայ ծովակալի առաջնակարգ տեղն ու դերը ռուսական սևծովյան նավատորմի պատմության մեջ, հատկապես Ղրիմի պատերազմի ընթացքում:

Նկատենք, որ ղրիմահայոց պատմությանը նվիրված գրքերով Վ. Միքայելյանը նաև վերհանել է հայ ժողովրդի միջազգային կապերի պատմությունը: Այս առումով խոշոր արժեք ունեն «Հայ-իտալական առնչություններ, ջենովական փաստաթղթերը ղրիմահայերի մասին» (1974 թ.) ժողովածուն և «Ղրիմահայ գաղութը Արևելք-Արևմուտք հարաբերությունների ոլորտում (13-18-րդ դարեր)» (2000 թ.) մենագրությունը:

Հետագա տարիներին ևս Վ. Միքայելյանը շարունակել է ուշադրության կենտրոնում պահել հայ գաղթավայրի պատմությունը: Նրա նախաձեռնությամբ և խմբագրությամբ նախապատրաստվել ու հրատարակվել է «Հայ գաղթաշխարհի պատմության» եռահատորը:

Անվանի պատմաբանի գիտական ուսումնասիրության մյուս կարևոր ոլորտը, որտեղ նա մեծ ներդրում ունի, Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման ուղղությամբ անգնահատելի ծառայությունն է: 1960-ական թվականների վերջերից Վ. Միքայելյանն Արցախյան հիմնահարցի արդար լուծման գործուն սատարողներից էր, այն սակավաթիվ պատմաբաններից, որոնք խոսքով ու գրչով աշխատում էին հանրությանը ներկայացնել այդ խնդրի սկզբնավորման հանգամանքներն ու հետևանքները: Այս առումով չձավալվելով հանդերձ՝ նկատենք. բոլորին է հայտնի, որ Արցախյան շարժման վերելքի օրերին՝ 1988 թ. մարտի 2-ին, Երևան ժամանած ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարներ Ա. Լուկյանովին և Վ. Դուգինին հանձնված Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ գիտական

միակ փաստաթուղթը Վ. Միքայելյանի շարադրած բովանդակալից ու հիմնավոր տեղեկանքն էր: Պատմագիտական այս խիստ արժեքավոր փաստաթուղթը՝ «Некоторые вопросы истории Нагорного Карабаха» վերնագրով և մասնակի լրացումներով (անվանի պատմաբան Լ. Խուրշուդյանի հեղինակակցությամբ) լույս տեսավ ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի 1988 թ. 4-րդ համարում: 1992 թ. տպագրվեց «Нагорный Карабах в 1918-1923 гг.: Сборник документов и материалов» խորագրով ժողովածուն, որի կազմողների ղեկավարը, պատասխանատու խմբագիրը և ընդարձակ ներածության հեղինակը կրկին այս հիմնահարցի հեղինակավոր գիտակ Վ. Միքայելյանն էր:

Ակադեմիկոսն անուրանալի ավանդ ունի Հայկական հարցի և Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում: Գերմաներենի իմացությունը նրան հնարավորություն տվեց 1989 թ. մեկնել Բոնն՝ գերմանական արխիվներում Հայոց ցեղասպանության վերաբերյալ նյութերի ուսումնասիրության համար: Կարճ ժամանակամիջոցում նա ժողովեց ավելի քան 3500 արխիվային միկրոկադրեր, որոնցից 1000-ից ավելին տեղ են գտել 1995-ին նրա կազմած «Армянский вопрос и Геноцид армян в Турции (1913-1919). Материалы Политического архива м-ва иностранных дел кайзеровской Германии» վերնագրով ժողովածուում՝ իր առաջաբանով, ներածությամբ և հմտալի ծանոթագրություններով: Ինչպես իրավագիտորեն նկատվել է, Վ. Միքայելյանին տքնաջան, պատասխանատու և հայրենասիրական այս գործին մղել է այն իրողությունը, որ թուրքական կառավարող շրջանները, պաշտոնական և ոչ պաշտոնական պատմագրությունը, քարոզչական ողջ մեքենան ջանում էին (այսօր ևս՝ առավել ճիգերով ու ցինիզմի հասնող անդրդվելիությամբ) «ապացուցել», որ Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանություն չի եղել:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը հիշյալ ժողովածուն 2004 թ. հրատարակեց գերմաներեն՝ "Die armenische Frage und der Genozid an den Armeniern in der Türkei (1913-1919). Dokumente aus dem politischen Archiv des Deutschen Auswärtigen Amtes. Zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. Wardges Mikaeljan" վերնագրով (ավելի քան 40 մամուլ):

Նկատենք նաև, որ 1980-ական թվականներից Վ. Միքայելյանը տասնյակ հոդվածներ, գրքեր է հրատարակել, ժողովածուներ կազմել Հայոց ցեղասպանության մասին, այն ժխտողների ու կեղծարարների դեմ: Այսպես, 1991 թ. նա հրատարակեց «Генрих Фирбюхер. Армения, 1915. Уничтожение Турцией культурного народа», 1997-ին՝ «Գերմանացի դիվանագետները հայոց ինքնապաշտպանական մարտերի մասին (1915)» գրքերը և այլն:

Ակադեմիկոս Վ. Միքայելյանը գիտական արդյունավետ աշխատանքը զուգակցել է գիտախմբագրական-գիտակազմակերպչական եռանդուն գործունեությանը: Խմբագրական-հրատարակչական աշխատանքը նրա համար տարերք էր, ինքնարուխ նվիրում: Ինչպես ասվեց, դեռևս 1955-1959 թթ. աշխատել է «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագրությունում: Երկար տարիներ՝ 1972-1987 թթ., եղել է ՀԽՍՀ ԳԱ ավագագույն՝ «Լրաբեր հասարակական գիտու-

յունների» ամսագրի գլխավոր խմբագիրը: Նրա խմբագրության ժամանակաշրջանում էր, որ «Լրաբերը» ձեռք բերեց արդիական ակադեմիական հրատարակության այն լավագույն և մասնագիտական որակները, որոնք այսօր ևս հարատևում և հաջողությամբ զարգացվում են այդ հանդեսի խմբագրության կողմից:

1989-1990 թթ. Վ. Միքայելյանը հիմնադրեց և խմբագրեց «Գոյամարտ» շաբաթաթերթը, որի առաջնահերթ խնդիրը պատմահայրենասիրական բնույթի հարցերի և Արցախյան հիմնախնդրի լուսաբանումն էր:

1999 թ. Վ. Միքայելյանը նշանակվում է հայագիտական ու հասարակագիտական մեծ համբավ ունեցող ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր: Իր համարձակ, նախաձեռնողական քայլերով նա հանդեսի հեղինակությունը մի նոր մակարդակի բարձրացրեց: Այս բոլոր պարբերականներում Վ. Միքայելյանը հանդես է եկել և՛ որպես խմբագիր, և՛ որպես ակտիվ հեղինակ:

ՀՀ ԳԱԱ վերոհիշյալ երկու հանդեսներն էլ առ այսօր շարունակում են ընթանալ այն մնայուն և անկորնչելի արժեքներով, որոնք հարստացրել և իբրև ժառանգություն է փոխանցել Վ. Միքայելյանը՝ թողնելով իր անջնջելի հետքը հայ գիտական լրագրության պատմության մեջ:

Վ. Միքայելյանի գործունեության մեջ նշանակալի տեղ է գրավել նաև մանկավարժական աշխատանքը. շուրջ երկու տասնյակ տարի հատուկ դասընթացներ է վարել Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմաաշխարհագրական ֆակուլտետում: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է ավելի քան մեկ տասնյակ թեկնածուական ատենախոսություն:

Հավելենք, որ վաստակաշատ հայագետը գործուն մասնակցություն է ունեցել նաև «Հայկական Սովետական Հանրագիտարան»-ի ստեղծման գործում, եղել է հանրագիտարանի կազմկոմիտեի անդամ, իսկ հետագայում՝ գիտաճյուղային խորհրդի անդամ:

Իրավամբ, ականավոր պատմաբանը գիտական-խմբագրական տարիների իր տքնաջան և շնորհակալ գործունեությամբ, պատմության ու բանասիրության խոր իմացությամբ և նուրբ դիտողականությամբ միշտ կհիշվի հայագիտության մեջ:

Ակադեմիկոս Վարդգես Միքայելյանը մեր ժողովրդի նվիրյալ այն զավակներից էր, որը ոչ միայն իր գիտական անուրանալի վաստակով, խմբագրական-հրատարակչական, գիտամանկավարժական եռանդուն գործունեությամբ, այլև մարդկային ու քաղաքացիական հարուստ նկարագրով իր ուրույն և մշտամնա տեղն ունի մեր երախտավորների շարքում:

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր
alkhar39@mail.ru

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր
patmhandes@rambler.ru

**ՍՏԵՂՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՆՈՐԱՆՈՐ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԻ,
ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԻ ԿԻՉԱԿԵՏՈՒՄ**
(ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Խառատյանի ծննդյան 85-ամյակի առթիվ)



Հայագիտությունը ոգեկոչում է կարևոր հորեյան, որը հայ իրականության երկար տարիների ու տասնամյակների ազնվաշունչ ոգին է մարմնավորում:

Պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բազմաշնորհ խմբագիր, հրապարակագիր և հետազոտող Ալբերտ Արմենակի Խառատյանը թևակոխում է

իր կյանքի ութ և կես տասնամյակի շեմը: Եվ թևակոխում է վաստակած տարիների արժանապատվությամբ, համաժողովրդական ճանաչումով ու հարգանքով:

Ա. Խառատյանը ծնվել է 1939 թ. օգոստոսի 24-ին Երևան քաղաքում, ծառայողի ընտանիքում: Միջնակարգ կրթությունը ստացել է հայրենի քաղաքում. ավարտել է մայրաքաղաքի թիվ 14-րդ դպրոցը՝ բարձր գնահատականներով: Ապա գալիս են համալսարանական ուսումնառության տքնաջան տարիները: Նա 1959 թ. ընդունվում և 1964 թ. ավարտում է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը՝ «Հայ գրականություն և լեզու», «Հայ մամուլի և հասարակական-քաղաքական մտքի պատմություն» մասնագիտացումներով: Համալսարանական բարձր կրթությամբ երիտասարդ մասնագետը մուտք է գործում դպրոց, մի որոշ ժամանակ մայրենի լեզու և գրականություն է դասավանդում Խորհրդային Հաստատանի հեռավոր շրջանների դպրոցներում:

Այնուհետև տեղափոխվում է աշխատանքի Հայկական Սովետական Հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, վարում մամուլի պատմության սրբագրիչի, ապա՝ խմբագրի պաշտոնները:

Սակայն նրա իրական առաքելությունն ու կոչումը գիտությանը անխոնջ ու անշահախնդիր կերպով ծառայելն էր: Եվ նա ուժերի ներածին չափով ծառայեց հայագիտությանը՝ արդեն տասնամյակներ շարունակ և անընդմեջ: Հայագիտությանը նրա նվիրումն ու մինչև օրս անսակարկ ծառայությունը եղել է ՀՀ ԳԱԱ-ի համակարգում, նրա կամարների ներքո: 1972 թվականին առավել քան մեծ հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը՝ «Զմյուռնիայի հայ պարբերական մամուլը (19-րդ դարի 60-ական թթ.) թեմայով», իսկ 1986 թվականին կայացել է գիտնականի դոկտորական ատենախոսության պաշտպանությունը՝ «Հասարակական միտքը Զմյուռնիայի հայ պարբերական մամուլում (1840-1900 թթ.)» խորագրով:

Հայ պատմագիտության ոլորտում Ալբերտ Խառատյան գիտնական-հետազոտողի ունեցած վիթխարի ներդրումն անսակարկելի է և անուրանալի: Հենց այդ մեծ ներդրման և անկասկածելի վաստակի համար 2010 թ. արժանավորապես ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Նրա անընդմեջ, բազմաբեղուն գործունեության շնորհիվ հայ պատմագիտական և հասարակական-քաղաքական միտքը տասնամյակներ շարունակ հարստացավ գիտական կոթողային, հիմնարար աշխատություններով:

1989 թ. Երևանում լույս է տեսել Ա. Խառատյանի «Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը օսմանյան Թուրքիայում (1857-1908)» մենագրությունը, որը թարմ խոսք էր հայ պատմագիտական մտքի անդաստանում:

Իսկ մինչ այդ դեռևս 1984 թ. հրատարակվել էր գիտնականի մեկ այլ գործ. «Օսմանյան գրաքննությունը և արևմտահայ մամուլը. վավերագրական նյութեր և ծանոթագրություններ» գիտատեղեկատվական բյուլետենը, որտեղ ևս ամփոփված էին վավերագրական եզակի նյութեր: Սակայն պետք է նշել, որ Ա. Խառատյանի անդրանիկ աշխատանքը՝ «Արևմտահայ հասարակական մտքի և հրապարակախոսության պատմությունից» վերնագրով լույս է տեսել 1980 թվականին:

1995-ին Երևանում հրապարակվեց անխոնջ հետազոտողի «Հասարակական միտքը Զմյուռնիայի հայ պարբերական մամուլում (1840-1900)» կարևորագույն աշխատությունը, որը նորություններ և թարմություն էր բերում մի շարք առումներով:

Այնուհետև, 2007 թվականին լույս տեսավ հայագետի նշանակալից գործերից ևս մեկը՝ «Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV-XVII դարեր)» վերնագրով: Այն լայն արձագանք գտավ Հայաստանի և արտերկրի գիտական հասարակայնության շրջանում: Սույն աշխատությունն արժանացավ ՀՀ ԳԱԱ և «Ռուսաստանի հայերի միության» սահմանած՝ «Լավագույն գիտական աշխատանք» մրցանակին: Արևմտահայ մամուլին, հայ հասարակական-քաղաքական հոսանքներին, արևմտահայ լրագրության մտավոր և մշակութային արժեքներին նվիրված նրա նշանավոր աշխատությունը հրատարակվեց Երևանում՝ 2015 թվականին: Այն մեր պատմությանը համահունչ խորհրդանշական վերնագիր է կրում՝ «Արևմտահայ մամուլն իր պատմության ավարտին»: Նույնքան խորհրդանշական են սույն գրքին որպես ընծայական ձոնված տողերը. «Ի հիշատակ ցեղասպանությանը զոհ գնացած հայ սերունդների, ովքեր եղել են այս գրքում ներկայացված մամուլի ընթերցողներն ու հեղինակները»: Այստեղ ներկայացված են արևմտահայկական վերջին պարբերականները՝ «Սուրհանդակ», «Հանրագիտակ», «Բյուզանդիոն», «Արևելյան մամուլ», «Մանզումեի էֆքյար», «Ժամանակ», «Հայրենիք», «Մասիս», «Դաշինք», «Հայ գրականություն», «Մարմնամարզ», «Վերջին լուր», «Արագած»: Աշխատության էջերում արտացոլված են հայոց պատմության բարդ, հակասական, հերոսական ու ողբերգական սույն շրջանին բնորոշ, տիպական դրամատիզմն ու ներքին հուզականությունը:

Ներկա պահին անվանի գիտականի վերջին գիրքը լույս է տեսել 2022 թվականին՝ «Զմյուռնիայի և Էգեյանի առափնյակի հայկական այլ գաղթօջախները» վերնագրով: Գիրքը նկարագարո՞ղ է, սև-սպիտակ, նաև գունավոր լուսանկարներով: Գեղեցիկ ձևավորված և պատշաճ որակով հրատարակությունը իրականացվել է ՀՀ ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի հովանավորությամբ: Բացի այս մենագրություններից, Ա. Խառատյանը հեղինակ և համահեղինակ է այլ գործերի ևս: Կազմել է «Արևելյան մամուլ» և «Մեղու» հանդեսների մատենագիտությունները, որոնցում այնքան դիտարկելի և ուսանելի նյութ կա:

Նրա նշանակալից դերակատարությամբ լույս տեսան «Հայ մամուլի պատմության» երկու հատորները: Ընդ որում, առաջին հատորը լույս ընծայվեց Կահիրեում, 2006 թվականին՝ իր իսկ առաջաբանով և խմբագրությամբ: Իսկ երկրորդ հատորը հրատարակվել է Երևանում՝ 2017 թվականին: Սույն երկհատորյակը՝ իր ժամանակաշրջաններով, ընդգրկումների խորությամբ և գիտական բարձր մակարդակով աննախադեպ երևույթ էր հայ մամուլի ուսումնասիրության տարեգրության մեջ:

Ա. Խառատյանի ուսումնասիրությունները տեղ են գտել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի՝ տարիներով պատրաստած «Հայոց պատմություն» բազմահատորյակի տարբեր հատորներում («Հայ հասարակական-քաղաքական հոսանքներն ու շարժումները», «Զեյթունի 1862 թ. ապստամբությունը և նրա համահայկական արձագանքները» և մի շարք այլ հոդվածներ՝ նվիրված Կ. Պոլսի և Զմյուռնիայի հայոց գաղթօջախներին և արևտահայ մամուլին): Բացի մենագրություններ, ժողովածուներ տպագրելուց, Ա. Խառատյանը Հայաստանի և արտերկրի գիտական հանդեսներում մշտապես հանդես եկող ակտիվ հեղինակներից է: Մինչև օրս գիտական մամուլում հրապարակել է շուրջ երկու հարյուր հոդված, նա գիտական, հասարակական-քաղաքական մի քանի տասնյակ ժողովածուների և մենագրությունների խմբագիր է:

Պետք է նշել, որ մեծանուն գիտնականը մի քանի հեղինակավոր գիտական հանդեսների խմբագիր ու խմբագրապետ է եղել: 1988 թ. ստանձնել է ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ավագագույն հանդեսի գլխավոր խմբագրի պաշտոնն ու պարտականությունները և հաջողությամբ այն վարել մինչև 2017 թվականը (գրեթե երեսուն տարի): 2017-ից ի վեր նա ԳԱԱ «Բանբեր հայագիտության» միջազգային հանդեսի գլխավոր խմբագիրն է:

2005-2024 թթ. ղեկավարել է «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդեսի հասարակագիտական բաժնի աշխատանքները:

Այս ամենին զուգահեռ, Ա. Խառատյանը շուրջ հիսուն տարի ծավալել է մանկավարժական-դասախոսական ծանրաբեռնված գործունեություն՝ դասավանդելով Երևանի պետական համալսարանում, Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում և այլ բուհերում: Տարիներ շարունակ նա եղել է վերոնշյալ բուհերի պատմության ֆակուլտետների ավարտական քննական հանձնաժողովների նախագահ:

Գիտամանկավարժական մեծ հեղինակության և առաքինի վարքագծի շնորհիվ անվանի հայագետը բազմիցս ընտրվել է ՀՀ ԳԱԱ պատմության և արևելագիտության ինստիտուտների և բարձր վարկանիշ ունեցող բուհերի գիտական խորհուրդների անդամ:

Այս ամենից զատ, անհնար է չանդրադառնալ Ալբերտ Խառատյան հայ գիտնականի մարդկային և քաղաքացիական բարձր արժանիքներ կրող կերպարին:

Մեծատառով հայ մարդ և հայ քաղաքացի, որը երբեք չի ընդունում և չի հանդուրժում սուտն ու կեղծիքը, անարդարությունն ու գռեհկությունը, որտեղ էլ դրանք արտահայտվելիս լինեն:

Ալբերտ Խառատյանը, այո՛, բարձր սկզբունքների տեր անձնավորություն է, որոնք դրսևորվում են տանը, ընտանիքում, հարազատների և բարեկամների շրջանում, դրսում՝ ընկերների, աշխատանքային կոլեգաների և բոլորովին անձանոթ մարդկանց հետ հարաբերվելու ընթացքում: Միշտ ու մշտապես ցուցաբերելով բարեկիրթ վարքագծի կանոններ՝ բազմավաստակ հայագետը կենցաղային և աշխատանքային բազմապիսի հարաբերություններում ևս օրինակելի ու առաջնորդող կերպար է հանդիսանում:

Ճիշտ այդպիսին են նաև նրա ընտանիքը և զավակները:

85-ամյա մեծանուն հայագետը իր անցած ճանապարհով, ձեռքբերումներով և սերունդներին որպես հոգևոր ավանդ կտակած գրքերով, ուսումնասիրություններով շարունակում է հարստացնել և իմաստավորել մեր ժողովրդի հոգևոր-բարոյական կենսագրությունը, բազմապատկել հայ ժողովրդի ջերմ և անկեղծ բարեկամների թիվը:

Ազգային և համամարդկային վեհ ու վսեմ գաղափարներով և իդեալներով տոգորված, արժանիորեն բարձունքներ նվաճած հոբելյարին ցանկանք ամուր առողջություն, աշխատանքային նորանոր հաջողություններ, ծանրաբեռ տարիներ և տասնամյակներ՝ ի փառս հայրենի գիտության և հայ ժողովրդի:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու
armenaraqsyana@mail.ru

Հ.Գ. Զերմորեն շնորհավորում ենք մեծավաստակ գիտնականին, բանիմաց ու բազմահմուր խմբագրին արգասավոր գործունեությամբ հարստացած հոբելյանի առթիվ, նրան մաղթում ենք անսպառ ավյուն, հարապև առողջություն, մշտամնա, արժեքավոր նոր գործեր՝ ի նպաստ գիտական մտքի բարգավաճման և մեր ժողովրդի անկասելի ընթացքի:

ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի խմբագրություն

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՀԱՅԱԳԵՏ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ (ծննդյան 75-ամյակի առթիվ)



Հայագիտության մերօրյա ժրգան նվիրյալներից է հմուտ և վաստակաշատ գրականագետ, բանագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի առաջատար գիտաշխատող Արմեն Շավարշի Սարգսյանը: Տասնամյակների իր աշխատանքով նա ուրույն տեղ է գրավել հայ գրականագիտության և բանագիտության պատմության մեջ և այսօր էլ շարունակում է աշխատել նույն նվիրվածությամբ՝ ստեղծագործ ու խորաթափանց մտքի շնորհիվ բացահայտելով հայ բանավոր մշակութային ժառանգության արժեքները և դրանք հասանելի դարձնելով հանրության լայն շրջանակներին:

Բանասիրության մեջ ունեցած իր բազմաթիվ ձեռքբերումներն արտացոլված են գիտական ուսումնասիրություններում, որոնցում միահյուսված է ավանդականի ու արդիականի, մեթոդականի ու գիտահետազոտականի իմացությունը:

Բանասիրության մեջ ունեցած իր բազմաթիվ ձեռքբերումներն արտացոլված են գիտական ուսումնասիրություններում, որոնցում միահյուսված է ավանդականի ու արդիականի, մեթոդականի ու գիտահետազոտականի իմացությունը:

Կյանքի և գիտական գործունեության ընդհանուր գծերը

Արմեն Շավարշի Սարգսյանը ծնվել է 1949 թ. հունվարի 17-ին Լոռու մարզի Շամուտ գյուղում: 1966 թ. ավարտել է Վանաձորի Գ. Սունդուկյանի անվան թիվ 8 միջնակարգ դպրոցը:

1970 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» բաժինը: 1975 թ. ավարտելով համալսարանը՝ հայոց լեզու և գրականություն է դասավանդել Նալբանդյան գյուղի (այժմ՝ Արմավիրի մարզ) միջնակարգ դպրոցում, այնուհետև՝ Երևանի թիվ 2 միջնակարգ պրոֆտեխուսումնարանում և Երևանի ճարտարագիտական համալսարանի Վանաձորի կրթահամալիրի վարժարանում:

1979-1990 թթ. Ա.Շ. Սարգսյանը պաշտոնավարել է Մշակույթի նախարարության հանրապետական գիտամեթոդական կենտրոնի՝ ՀԳՄԿ-ի (նախկին Ժողովրդական ստեղծագործության տուն) բանահյուսության բաժնում, նախ՝ որպես ավագ գիտաշխատող, ապա՝ բաժնի վարիչ, 1990-1992 թթ.՝ տեղեկատվության նախարարության հրատարակչությունների վարչությունում՝ որպես առաջին կարգի խմբագիր, 1993-1994 թթ.՝ ՊՆ Երևանի սպայի տանը՝ գրադարանի վարիչ, 1989-1998 թթ.՝ Կոմիտասի անվան երաժշտանոցի (կոնսերվատորիա) Ժողովրդական երաժշտության ամբիոնում՝ իբրև տեքստաբան:

Ա. Սարգսյանը 2005 թ. աշխատանքի է անցել և առ այսօր աշխատում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանահյուսության տեսության և պատմության (այժմ՝ Բանագիտության) բաժնում, սկզբում իբրև ավագ, այնուհետև՝ առաջատար գիտաշխատող:

Գիտահետազոտական աշխատանքներին զուգընթաց՝ Ա. Սարգսյանը զբաղվել է նաև գիտամանկավարժական գործունեությամբ: Տարիներ շարունակ Մշակույթի նախարարության՝ մշակույթի աշխատողների վերապատրաստման դասընթացներում և հանրապետության տարբեր բուհերում դասավանդել է «բանահյուսություն», «դիցաբանություն», «բարբառագիտություն», «հայոց լեզու և գրականություն», «մանկական գրականություն» առարկաները:

Ա. Սարգսյանի գիտահետազոտական գործունեությունը հիմնականում ընթացել է ընթանում է հայ բանահյուսությանը վերաբերող հետևյալ ուղղություններով.

1. գրականություն – բանահյուսություն առնչություններ,
2. մանկական բանահյուսություն,
3. մանկական զվարճախոսություն,
4. ժողովրդական երգիծական մանրապատումներ, զվարճախոսություններ և զվարճազրույցներ (անեկդոտներ),
5. ստապատում զրույցներ (ստապատումներ),
6. երկխոսական-հարցուպատասխանական ասույթաբանություն:

Ճանաչված բանագետի գիտական հետաքրքրությունների երկու ոլորտները (գրականություն – բանահյուսություն առնչությունների հարցեր, երգիծական մանրապատումներ և զվարճազրույցներ՝ անեկդոտներ) կապված են նրա գիտական աստիճանաշնորհման երկու գլխավոր հանգրվաններին:

Ա. Սարգսյանը 2005 թ. Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի 003 մասնագիտական խորհրդում պաշտպանել է «Պարույր Սևակը և ժողովրդական բանահյուսությունը» թեմայով թեկնածուական ատենախոսություն, իսկ 2018 թ. նույն մասնագիտական խորհրդում պաշտպանած ատենախոսության համար՝ «Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներ և զվարճախոսություններ (անեկդոտներ)», նրան շնորհվել է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Ա. Սարգսյանը զբաղվել է նաև հայագիտության պատմության խնդիրներով. նա կազմել և հրատարակել է (Գ. Յազըճյանի հեղինակակցությամբ) հայագիտության երախտավոր Հակոբ Մարտա-Աբրահամի Չոլաքյանի «Կենսամատենագիտությունը» (2022 թ., 64 էջ), որում ամփոփված են իր վաղեմի դասընկերոջ և գործընկերոջ կյանքի, մանկավարժական և գիտական գործունեության համառոտ բնութագիրը և տպագիր աշխատությունների ցանկը՝ ըստ ոլորտների:

Զուտ գիտական ուսումնասիրություններից բացի՝ Ա. Սարգսյանը ստեղծել է նաև գիտահանրամատչելի մի ժողովածու, որում զետեղել է տարիների ընթացքում՝ «ձեռքի հետ» գրանցած սեղմասույթներից, հումորեսկներից և առած-ասացվածքներից բխած խորհրդածությունները, հոդվածները, գրախոսություն-

ները, հիշողություններն ու հուշագրությունները («Ձեռքի հետ՝ դեսից-դենից», 2020 թ., 184 էջ):

Բանահավաքչական աշխատանքներ և դրանց հանրահռչակում

Ա. Սարգսյանը գիտության ոլորտում առաջին քայլերը սկսել է իր հարագատ ծննդավայրի բանավոր ավանդության նմուշների գրառմամբ: Ավելի քան հինգ տասնամյակ նա անձամբ, ինչպես նաև մտերիմ-բարեկամների, ուսանողների ու մշակույթի ոլորտի աշխատողների միջոցով Հայաստանի տարբեր շրջաններից գրառել և շարունակում է գրի առնել հազարավոր բանահյուսական և ազգագրական նյութեր: Այս դժվարին, բայց միևնույն ժամանակ պատվաբեր աշխատանքի շնորհիվ են ստեղծվել իր անձնական արխիվի բանահյուսական տարածանք և ազգագրական մեծարժեք, մեծաքանակ նյութերը: Վերջիններս աղբյուրագիտական հում նյութ են ժողովրդագիտությամբ զբաղվողների համար, և դրանց լույսընծայումը կարող է նոր էջ բացել ժողովրդական մշակույթի ուսումնասիրման ասպարեզում:

Ա. Սարգսյանի գիտական գործունեության անքակտելի մասն են բանահյուսության հիմնախնդիրների լուսաբանումը, զանգվածայնացումն ու հանրահռչակումը, որոնց շուրջ նա հաճախ է հանդես եկել մամուլում, ռադիոհաղորդումներում, կարդացել է զեկուցումներ միջազգային և հանրապետական գիտաժողովներում:

Դեռևս Մշակույթի նախարարության հանրապետական գիտամեթոդական կենտրոնում պաշտոնավարելու տարիներից նա ակումբային հիմնարկների աշխատակիցներին հղած մեթոդական նամակում առաջ է քաշել բանահավաքչական աշխատանքների կազմակերպման, նյութերի հայտնաբերման, գրառման և դրանք շրջանառության մեջ դնելու հարցեր, իսկ 1982 թ. իր տպագրած ուղեցույցը՝ «Բանահյուսական նյութերի գրառման ձևերն ու մեթոդները (մեթոդական ցուցումներ)», նպատակ է հետապնդում համառոտ ծանոթացնելու բանահյուսական ժանրերին, ինչպես նաև մեթոդական ցուցումներով օգնելու մեր ժողովրդի հոգևոր ոչ-նյութական մշակույթի անգնահատելի արժեքները հայտնաբերելու, գրի առնելու և պահպանելու հարցում:

«Ոչ նյութական մշակութային ժառանգություն. դասակարգումն ու չափորոշիչները» գրքույկում (2009 թ., 128 էջ) Ա. Սարգսյանը համահեղինակությամբ գրել է Հայաստանի ժողովրդական բանարվեստի գրանցմանը, դասակարգմանն ու պահպանմանը վերաբերող բաժինը:

Ա. Սարգսյանի նախաձեռնությամբ Մշակույթի նախարարության ժողատեղծագործության հանրապետական գիտամեթոդական կենտրոնում ստեղծվել է «Միհրան Թումաճան» ազգագրական երգչախումբը, որը հանրապետական փառատոնում դարձել է դափնեկիր:

Շուտով լույս կընծայվի Ա. Սարգսյանի՝ իր ծննդավայրին նվիրված «Շամուտ. պատմաազգագրական և բանահյուսական նյութերի ժողովածու» գիրքը, որում, այդ բնակավայրի հիմնադրման, ժողովրդագրական տեղաշարժերի,

պատմական հուշարձանների մասին տեղեկություններից զատ, ներկայացված են նաև Շամուտում իր գրառած բանահյուսական և ազգագրական նյութերը:

Գրականություն – բանահյուսություն առնչակցություններ

Նշված միջգիտակարգային աղերսներն առաջնակարգ նշանակություն ունեն Ա. Սարգսյանի հետազոտական պրպտումներում, որոնց արդյունքն է նրա «Պարույր Սևակը և ժողովրդական բանահյուսությունը» մենագրությունը (2010 թ., 314 էջ)¹: Մեծանուն բանագետ Սարգիս Հարությունյանը, որ եղել է Ա. Սարգսյանի թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարը, գրախոսականում նշում է. «...նման թեմայով ուսումնասիրություն հայ բանագիտության և գրականության մեջ առաջին անգամ է նման լայնքով և խորությամբ ենթարկվում մենագրական հետազոտության»: «...Արմեն Սարգսյանը առաջինն է մեզանում, որ նախաձեռնել է մենագրական հետազոտության ենթարկել խնդրո առարկան՝ այն էլ ոչ թե մի քանի տարիների, այլ երեք ու ծիգ տասնամյակների ընթացքում, սկեռուն ու քրտնաջան տրնանքով, որ սովորաբար հորջորջվում է «սև աշխատանք»»:

Մենագրության մեջ Ա. Սարգսյանը փաստերի համադրումով ապացուցում է, որ բանարվեստի նմուշների կիրառությունները Սևակի ստեղծագործություններում դառնում են ոչ թե ազգային արժեքներն ու ավանդույթները պահպանելու արտաքին ձևեր ու միջոցներ, այլ գեղարվեստական գրականության զարգացմանն ու առաջընթացին նպաստող գործոններ, և դրանով էլ «...մեկընդմիջ տ և իսպառ հերքվում է տակավին բանաստեղծի կենդանության օրոք մեզանում շրջանառվող այն հոռի կարծիքը, թե իբր Պ. Սևակը մերժում է բանահյուսության արժեքն ու դերը մեր արդի գրականության զարգացման գործընթացում»²:

Ա. Սարգսյանն անդրադառնում է գրողի կողմից հայ և այլ ժողովուրդների դիցաբանությունը, բանարվեստի տարբեր ժանրերը (հեքիաթ, զրույց, առակ, վեպ, առած-ասացվածք ևն) օգտագործելու ձևերին, փորձում է բացահայտել, թե ինչպես են այդ աղբյուրները սնուցել Սևակի գրական մտածողությունը: Ամբողջացնելով ասելիքը՝ հետազոտողն ընդգծում է, որ Սևակը չի ընդօրինակել ժողովրդական նյութերը բառացիորեն, այլ դրանք ստեղծագործաբար վերածնել է՝ հարստացնելով իր անձնական արտահայտչաձևերով:

Պ. Սևակի երկերի՝ բանահյուսությանն ունեցած առնչություններից բացի, Ա. Սարգսյանի ուշադրության կիզակետում են հայտնվել նաև գրողի խոհախրատական հայացքները: Այսպես, Պ. Սևակի երկերից, ձեռագիր նյութերից, ինչպես և ժամանակակիցների հուշերից Ա. Սարգսյանը քաղել և դասակարգել է գրողի իմաստուն մտորումներն ու թևավոր ասույթները (ավելի քան 700 նմուշ) աշխարհի, հայրենիքի, մարդու, նշանավոր գործիչների, մշակույթի և արվեստի, լեզվի, գրականության վերաբերյալ, որոնք ամփոփվել են «Իմաստուն

¹ Այն իբրև թեկնածուական ատենախոսություն՝ ձեռնարկվել է 1975-ին և գրեթե ավարտին է հասցվել 80-ականների վերջերին, սակայն ինչ-ինչ պատճառներով պաշտպանությունը ձգձգվել և իրականացել է միայն 2005-ին:

² Ս.Բ. Հարությունյանի՝ Ա. Սարգսյանի թեկնածուական ատենախոսության գրախոսությունից:

մտքերի աշխարհում» գրքում (2004 թ., 124 էջ, առաջաբանը՝ Ս.Բ. Հարությունյան): Հետագայում լույս տեսած՝ «Ականջդ բեր ասեմ. սևակյան իմաստախոսություններ» (2014 թ., 248 էջ) գրքում Ա. Սարգսյանը գետեղել է սևակյան ավելի քան 1100 նոր աֆորիզմներ, իսկ այդ գրքի լրամշակված հրատարակության մեջ ավելացրել է ևս 70-ը (2021 թ., 302 էջ): *Պարույր Սևակ* բանաստեղծի, մարդու և քաղաքացու կերպարը ներկայացվում է «Դիմանկարի ամբողջացման համար. սևակյան դիմապատկերներ» գրքում (2014 թ., 136 էջ):

«Պարույր Սևակը մանկագիր» աշխատանքը (2004 թ., 74 էջ, գիտական խմբագիր՝ Ս.Բ. Հարությունյան) նվիրված է գրողի երկերի սակավ ուսումնասիրված խմբերից մեկին՝ մանկագրությանը, ինչպես նաև Սևակի մանկապատումների՝ բանահյուսությանն ունեցած աղերսներին:

Երգիծական մանրապատումներ, զվարճազրույցներ և զվարճախոսություններ

Ա. Սարգսյանի բանագիտական պրպտումների կարևոր բնագավառը բանահյուսական առանձին ժանրերի, հատկապես զվարճազրույցների և զվարճալի ասույթների հետազոտությունն է, որի արդյունքը՝ «Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներ և զվարճախոսություններ (անեկդոտներ)» մենագրությունը (2020 թ., 512 էջ), առաջինն է իր տեսակի մեջ: Ա. Սարգսյանը վերջին 170 տարվա տպագիր և անտիպ (արխիվային ու անհատական հավաքածուներում պահվող) նյութերի, ինչպես և հայ և օտար հեղինակների տեսական մի շարք հոդված-ուսումնասիրությունների հիման վրա քննարկում է հայկական անեկդոտները³:

Նշված ուսումնասիրության մեջ մեծ տեղ է հատկացվում նաև անսպասելի ծիծաղ առաջացնող լեզվական տարատեսակ միջոցների ու հնարքների կիրառություններին, որոնք հավելումներով և համակողմանի վերլուծությամբ հրատարակված են նաև առանձին գրքով՝ «Զավեշտի դրսևորման միջոցները հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում» (2017 թ., 300 էջ, գիտական խմբագիր՝ Դավիթ Գյուրջինյան): Ա. Սարգսյանի՝ հայ բանագիտության մեջ բերած նորույթներից մեկն էլ նրա առանձնակի ուշադրությունն է մանկական զվարճախոսությունների նկատմամբ: Գրքում նա ներկայացրել է դրանց թեմատիկ ամենատարբեր դրսևորումները և զավեշտի արտահայտման տարատեսակ միջոցները: Հեղինակն իր իսկ գրառումների և շուրջ 140 տարիների՝ անեկդոտների ժողովածուներից դուրս բերած նյութերի հիման վրա հայ բանագիտության մեջ առաջին անգամ անդրադարձել է մանկահասակ երեխաների խոսքի զավեշտալի արտաբերումներին: Բանագետը ներկայացրել

³ Թեև մենագրության մեջ քննության նյութ են դարձել զուտ ազգային թեմատիկ դրսևորումները, սակայն աշխարհի մի շարք ժողովուրդների բանահյուսության մեջ հաճախակի հանդիպող խելապակասության թեման Ա. Սարգսյանը քննում է տարբեր տարածաշրջաններից գրաված հայ ժողովրդական երգիծանքի նմանօրինակ, բայց ինքնատիպ դրսևորումների համատեքստում:

է նաև արևելահայոց և արևմտահայոց մեջ քիչ թե շատ հայտնի հայ և օտար զվարճախոսներին: Մենագրությունը եզրափակվում է հավելվածներով, որոնցում տեղ են գտել բանահյուսական համապատասխան տեքստերը:

Մանկական բանահյուսություն

Դեռևս 1988 թ. Մշակույթի նախարարության հանրապետական գիտամեթոդական կենտրոնի բանահյուսության բաժնի աշխատակիցներ Ա. Շահնագարյանի և Գ. Առաքելյանի ջանքերով Ա. Սարգսյանը հրատարակել է «Խնկի ծառ» մանկական ազգագրական-ժողովրդական երգերի ժողովածուն: Սակայն Ա. Սարգսյանի՝ որպես մեզանում մանկական բանահյուսության՝ մասնավորապես մանկական զվարճախոսությունների առաջին ուսումնասիրողի աշխատանքներն արտացոլված են նրա մեկ տասնյակից ավելի գիտական հոդվածներում և երկու գրքերում՝ «Մանկական զվարճախոսություններ» (2016 թ., 232 էջ, գիտական խմբագիր՝ Ս.Բ. Հարությունյան) և «Մանկական ծիծաղադարան. աշխարհը երեխաների աչքերով» (2019 թ., 270 էջ):

Ա. Սարգսյանը գրական-գեղարվեստական մշակման է ենթարկել նաև ժողովրդական առակները, որոնք իրենց ուրույն տեղն ունեն մանկապատանեկան տարիքի երեխաների ընթերցանության ցանկում: 2008 թ. նրա խմբագրությամբ լույս է տեսել բանագետ Արտաշես Նազինյանի կազմած և մշակած «Հայ ժողովրդական առակների» ժողովածուն (առաջին հրատարակությունը լույս էր տեսել 1960 թ. Հ. Դանիելյանի խմբագրությամբ), իսկ 2011 թ. հրատարակվել է Ա. Սարգսյանի կազմած և մշակած «Հայ ժողովրդական առակներ» ժողովածուն (176 էջ): 2012 թ. վերջին ժողովածուն վերահրատարակվել է արևմտահայերեն և անգլերեն:

Ա. Սարգսյանը 100-ից ավելի գիտական և հրապարակախոսական հոդվածների հեղինակ է: Գիտական և հանրային կյանքում նա աչքի է ընկնում իր անպաճույճ պարզ, ընդառաջող գործունյա բնավորությամբ, ջանասիրությամբ և ուղղամտությամբ:

Մաղթենք ժրջան հայագետին քաջառողջություն, արևշատություն, անսպառ եռանդ և գիտական նորանոր ձեռքբերումներ:

ՏՈՐՔ ԴԱԼԱԼՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու
torqdal@yahoo.com

ԼՈՒՍԻՆԵ ՂՈԵՋՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու
lgrejyan@yandex.ru

Հայերեն նյութերի բաժնի խմբագիրներ՝ **Մելանիա Միքայելյան**
Սեդա Քուփելյան
Ռուսերեն նյութերի բաժնի խմբագիր՝ **Գայանե Հարությունյան**

Редакторы армянского отдела – **Меланья Микаелян**
Седа Купелян
Редактор русского отдела – **Гаянэ Арутюнян**

Editors of Armenian part **Melania Mikaelyan**
Seda Kupelyan
Editor of Russian part **Gayane Harutyunyan**

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ **Արմինե Պետրոսյանի**
Компьютерный дизайн и пагинация – **Армине Петросян**
Computer design and pagination **Armine Petrosyan**

Հրատ. պատվեր N 1353
Ստորագրված է տպագրության 10.12.2024 թ.:
Տպագրական 25 մամուլ: Տպաքանակը՝ 200:
ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:
Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4:
Հեռ.՝ 581902:

Подписано к печати 10.12.2024 г.
25 печ. л. Тираж – 200. Типография НАН РА,
Ереван, пр. Маршала Баграмяна 24.
Адрес редакции: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4.
Тел. 581902

Signed for printing 10.12.2024
25 print. sheets. Printed copies – 200. NAS RA Press,
Yerevan, Marshal Baghramyan av. 24.
Editorial office address: 0019, Yerevan, Marshal Baghramyan av. 24/4.
Tel. 581902

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ <http://Iraber.sci.am>
Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ Iraber@sci.am
Официальный сайт журнала: <http://Iraber.sci.am>
Электронная почта журнала: Iraber@sci.am
Official site of the Journal: <http://Iraber.sci.am>
E.mail of the Journal: Iraber@sci.am